Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Михаил Шолохов

ТИХИЙ ДОН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ ВТОРОЙ

Перевод
А. Мазманяна

«СОВЕТАКАН ГРОХ»
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАН 1977

Միխայիլ Շոլոխով

ԽԱՂԱՂ ԴՈՆԸ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Թարգմանությունը
Հ. Մազմանյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ — 1977

Р 2
Շ 77

Շ 70302(21)/701 (01) 77 168 77 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1977

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Հազար ինն հարյուր տասնվեց թվական։ Հոկտեմբեր։ Դիշեր։ Անձրև ու քամի։ Ցածրադիր, անտառոտ վայրեր։ Խրամատներ ճահճից վերև, ուր լաստենիներ են բուսած։ Առջևում — լարափակոցներ։ Խրամատներում — սառը, ջրալի ցեխ։ Աղոտ փայլում է դիտողի թաց վահանակը։ Տեղ-տեղ, գետնատներում — լույսեր։ Սպայական գետնատներից մեկի մուտքի առաջ մի բոպե կանգ առավ ցածրահասակ մի սպա. թաց մատները տանելով կոճակներին, նա հապճեպ արձակեց շինելը, օձիքից թափ տվեց ջուրը, արագ սրբեց սապոգները՝ քսելով ցեխի մեջ կոխոտված ծղոտի խուրձին, ու միայն դրանից հետո բացեց դուռը, և կռանալով, մտավ գետնատուն։

Նավթի փոքրիկ լամպի դեղին լուսաշերտը յուղափայլ նետեց ներս մտնողի դեմքին։ Տախտակե մահճակալից մի փոքր բարձրացավ կոճակներն արձակված տուժուրկայով մի սպա, ձեռքով կոկեց գզգզված մազերը, հորանջեց։

— Անձրև՞, հը՞։

— Գալիս է,— պատասխանեց հյուրը ու հանվելով, շինելը և անձրևից լխկած գլխարկը կախեց դռան մոտի մեխից։— Ձեզ մոտ տաք է։ Շնչելով եք տաքացրել։

— Քիչ առաջ վառել էինք։ Վատն այն է, որ դուրս է գալիս գետնի տակի ջուրը։ Այս զահրումար անձրևը մեզ տեղահան է անում... հը՞։ Ի՞նչ եք կարծում, Բունչուկ։

Շփելով խավոտ, թուխ մազերով ծածկված ձեռքերը, Բունչուկը կուզիկացավ, պպզեց փոքրիկ վառարանի մոտ։

— Տախտակներ դրեք։ Մեր գետնատունը հիանալի է. կարելի է բորիկ է՛լ քայլել։ Բա ո՞ւր է Լիստնիցկին։

— Քնած է։

— Վաղո՞ւց։

— Դիրքերը շրջելուց հետո վերադարձավ ու պառկեց։

— Արթնացնելու ժամանակը չի՞։

— Հա՛, էլի։ Շախմատ կխաղանք։

Բունչուկը լայն ու խիտ հոնքերից ցուցամատով սրբեց անձրևի կաթիլները, ու առանց գլուխը բարձրացնելու, կամացուկ ձայն տվեց.

— Եվգենի Նիկոլաևիչ։

— Քնա՛ծ է,— հոգոց հանեց ալեխառն սպան։

— Եվգե՛նի Նիկոլաևիչ։

— Հը՞,— Լիստնիցկին քիչ բարձրացավ արմունկի վրա։

— Շախմատ խաղա՞նք։

Լիստնիցկին մահճակալից կախեց ոտները, ձեռքի ափի վարդագույն, փափլիկ բարձիկով երկար շփեց ուռուցիկ կուրծքը։

Առաջին խաղի վերջում եկան հինգերորդ հարյուրյակի սպաները,— յասավուլ Կալմիկովը և հարյուրապետ Զուբովը։

— Նորությո՛ւն,— դեռ շեմքից գոչեց Կալմիկովը,— ամենայն հավանականությամբ գունդը կտեղափոխեն։

— Այդ ո՞րտեղից գիտես,— թերահավատորեն ժպտաց ալեխառն փոխ-յասավուլ Մերկուլովը։

— Չե՞ս հավատում, քեռի Պետյա։

— Ճիշտն ասած՝ ոչ։

— Մարտկոցի հրամանատարը հաղորդեց հեռախոսով։ Նա որտեղի՞ց գիտի։ Բա ո՞նց, նա հո Երեկ է եկել դիվիզիայի շտաբից։

— Վատ չէր լինի մի լավ լոզանալ բաղնիքում։

Զուբովը երջանկաբար ժպտալով, այնպես ցույց տվեց, որպես թե փոքրիկ ցախավելը խփում է բլթակներին։ Մերկուլովը ծիծաղեց։

— Մնում է միայն, որ մեր գետնատանը կաթսա դնենք. այսքան էլ չո՞ւր։

— Թաց է, թաց, ա՛յ տանտեր,— քրթմնջաց Կալմիկովը՝ դիտելով գերանաշեն պատերը և հողե, ցեխոտ հատակը։

— Ճահիճը մեր կողքին է։

— Շնորհակալ եղեք ամենաբարձրյալից, որ նստել եք ճահճի մոտ, ինչպես Քրիստոսի ծոցում,— խոսակցությանը միջամտեց Բունչուկը։— Չոր տեղերում հարձակման են գնում, իսկ մենք այստեղ շաբաթը մի հինգ գնդակ ենք արձակում։

— Ավելի լավ է հարձակվել, քան այստեղ կենդանի փտել։

— Ա՛յ քեռի Պետյա, կազակներին հո գրոհներում ոչընչացնելու համար չե՞ն պահում։ Դու կեղծավորաբար միամիտ ես ձևանում։

— Ինչի՞ համար, ի՞նչ ես կարծում։

— Կառավարությունը հարկավոր բոպեին կփորձի, ըստ հին սովորության, հենվել կազակի ուսին։

— Դատարկ բաներ ես ասում,— Կալմիկովը թափ տվեց ձեռքը։

— Ինչպե՞ս թե դատարկ բաներ։

— Շա՛տ պարզ։

— Թո՛ղ է՛, Կալմիկով. չպետք է ճշմարտությունը հերքել։

— Ճշմարտությունս ո՞րն է...

— Բայց չէ՞ որ այդ հանրահայտ է։ Էլ ի՞նչ ես կեղծում։

— Ուշադրությո՛ւն, պարոնայք սպաներ,— գոչեց Զուբովը ու արտիստավարի գլուխ տալով բոլորին, մատնացույց արեց Բունչուկին,— խորունժի Բունչուկը հիմա կսկսի ճառել սոցիալ-դեմոկրատական երազագրքից։

— Մասխարությո՞ւն եք անում, հա՞-ա,— բռնելով Զուբովի հայացքը, քմծիծաղ տվեց Բունչուկը։— Սակայն, շարունակեցեք,— ամեն ոք իր կոչումն ունի։ Ես ասում եմ, որ անցյալ տարվա կեսից մենք պատերազմ չենք տեսնում։ Այն ժամանակից, երբ սկսվեց դիրքային պատերազմը, կազակական գնդերը խոթեցին անդորը վայրեր ու առայժմ գրվանի տակ են պահում։

— Իսկ հետո՞,— հարցրեց Լիստնիցկին՝ հավաքելով շախմատը։

— Իսկ հետո, երբ ֆրոնտում կսկսվեն խռովություն-

ները,— իսկ դա անխուսափելի է, պատերազմը սկսում է ձանձրացնել զինվորներին, այդ է վկայում դասալիքների շատանալը,— հետո կազակներին կօգտագործեն խռովությունները ճնշելու, խաղաղացնելու համար։ Կառավարությունը կազակական զորքերը պահում է ինչպես քար իր ծոցում։ Հարկավոր մոմենտին նա կփորձի այդ քարով ջարդել ռևոլյուցիայի գանգը։

— Շա՛տ ես հեռու գնում, բարեկամ։ Քո ենթադրությունները բավական խախուտ են։ Ամենից առաջ չի կարելի կանխորոշել դեպքերի ընթացքը։ Ո՞րտեղից գիտես, որ ապագայում խռովություններ թե ինչեր են լինելու։ Իսկ եթե մենք այսպիսի բան ենթադրենք. դաշնակիցները ջախջախում են գերմանացիներին, պատերազմը ավարտվում է փայլուն վախճանով,— այն ժամանակ դու ի՞նչ դեր ես հատկացնում կազակությանը, հը՞,— առարկեց Լիստնիցկին։

Բունչուկը թույլ ժպտաց։

— Իսկի չի երևում վախճանը, առավել ևս փայլուն վախճանը։

— Պատերազմը ձգձգեցին...

— Դեռ ավելի շատ կձգձգեն,— խոստացավ Բունչուկը։

— Դու ե՞րբ վերադարձար արձակուրդից,— հարցրեց Կալմիկովը։

— Երեկ չէ մյուս օրը։

Բունչուկը կլորացնելով բերանը, լեզվով դուրս փչեց ծխի քուլան, դեն գցեց ծխախոտի մնացորդը։

— Որտե՞ղ եղար։

— Պետրոգրադում։

— Էհ, ի՞նչ կա այնտեղ։ Թնդում է մայրաքաղաքը, հա՞։ է-է՛, գրողը տանի, ինչ ասես կտայի այնտեղ գեթ մի շաբաթ ապրելու համար։

— Ուրախալի քիչ բան կա,— ծանրակշիռ ասաց Բունչուկը,— հացը չի հերիքում։ Բանվորական ռայոններում սով է, դժգոհություն, խուլ բողոք։

— Մենք բարեհաջող կերպով չենք դուրս պրծնի այս պատերազմից։ Ի՞նչ եք կարծում, պարոնայք։— Մերկուլովը հարցական հայացքով նայեց բոլորին։

— Ռուս-ճապոնական պատերազմը առաջացրեց հազար

ինն հարյուր հինգ թվականի ռևոլյուցիան. այս պատերազմը կավարտվի մի նոր ռևոլյուցիայով։ Եվ ոչ միայն ռևոլյուցիայով, այլև քաղաքացիական պատերազմով։

Լսելով Բունչուկին, Լիստնիցկին անորոշ մի շարժում արավ, ասես փորձեց խորունժուն ընդհատել կես ֆրազի վրա, հետո վեր կացավ ու, հոնքերը կիտելով, սկսեց ետ ու առաջ քայլել գետնատանը։ Զուսպ ցասկոտությամբ նա ասաց.

— Ինձ զարմացնում է այն հանգամանքը, որ մեր սպայության միջավայրում կան այդպիսի սուբյեկտներ,— նա մի շարժում արավ կորացած Բունչուկի կողմը։— Զարմացնում է, որովհետև մինչև այժմ ինձ համար պարզ չէ նրա վերաբերմունքը դեպի հայրենիքը, պատերազմը... Մի անգամ, խոսակցության ժամանակ նա մշուշապատ մի միտք արտահայտեց, բայց նրա ասածից բավականաչափ պարզ հասկացվում էր, որ նա կողմնակից է այս պատերազմում մեր պարտության։ Ես քեզ ճի՞շտ եմ հասկացել, Բունչուկ։

— Ես պարտության կողմնակից եմ։

— Բայց ինչո՞ւ։ Իմ կարծիքով, ինչպիսի քաղաքական համոզմունքներ էլ որ դու ունենաս, քո հայրենիքին պարտություն ցանկանալը, դա... ազգային դավաճանություն է։ Դա խայտառակություն է ամեն մի կարգին մարդու համար։

— Հիշո՞ւմ եք, դումայի ՌՍԴԲՊ-ի ֆրակցիան ագիտացիա էր մղում կառավարության դեմ, հենց դրանով էլ աջակցելով պարտության,— մեջ մտավ Մերկուլովը։

— Դու համաձա՞յն ես նրանց տեսակետին, Բունչուկ,— հարց տվեց Լիստնիցկին։

— Եթե ես արտահայտվում եմ հօգուտ պարտության, ապա, հետևաբար, համաձայն եմ, ու ծիծաղելի կլիներ, եթե ես, լինելով ՌՍԴԲՊ-ի անդամ, բոլշևիկ, համաձայն չլինեի մեր պարտիական ֆրակցիայի տեսակետին։ Ինձ ավելի շատ է զարմացնում այն, որ դու, Եվգենի Նիկոլաևիչ, լինելով ինտելիգենտ մարդ, քաղաքականապես անգրագետ ես...

— Ես ամենից առաջ միապետին նվիրված զինվոր եմ։ «Ընկեր սոցիալիստների» հենց միայն տեսքը ինձ տհաճություն է պատճառում։

«Ամենից առաջ դու հայվան ես, հետո արդեն ինքնագոհ, բոի սալդաթ»,— մտածեց Բունչուկը ու մարեց իր ժպիտը։

— Չկա ասված, բացի Ալլահից...

— Զինվորական միջավայրում բացառիկ իրադրություն է եղել,— մենք բոլորս էլ քաղաքականությունից հեռու ենք եղել, դա մեզ չի վերաբերել։

Յասավուլ Կալմիկովը նստել էր ու ճմլում էր կախ ընկած բեղերը, նրա մոնղոլական վառ աչքերը սուր փայլ էին արձակում։ Զուբովը պառկել էր մահճակալին և, ունկնդրելով խոսողների ձայներին, դիտում էր Մերկուլովի նկարը, որ կպցրած էր պատին և դեղնել էր ծխախոտի ծխից. դա Մագթաղինեի դեմքով, կիսամերկ մի կին էր, որ տաղտկալի ու անպարկեշտ ժպտալով, նայում էր իր մերկ կրծքին։ Զախ ձեռքի երկու մատով նա ետ է քաշում կինամոնագույն պտուկը, ճկույթը սեթևեթորեն մի կողմ է ծռված, խոնարհած կոպերի տակին — ստվեր և բիբերի ջերմ լույսը։ Քիչ բարձրացած նրա ուսը պահում է ցած ընկնող շապիկը, անրակների փոսերում — լույսի նրբին մեղմություն։ Այնքա՜ն անբռնադատ նրբագեղություն և անաղարտ ճշմարտություն կար կնոջ պոզայում, այնքա՜ն աննկարագրելի գունագեղ էին դալուկ երանգները, որ Զուբովն ակամա ժպտալով, զմայլվել էր վարպետորեն կերտված նկարով, ու իր ականջին հասնող խոսակցությունն այլևս չէր թափանցում իր գիտակցության մեջ։

— Ի՞նչ լավն է, հա՜-ա,— հայացքը նկարից կտրելով բացականչեց նա, և դա խիստ անպատեհ էր, որովհետև Բունչուկը իր խոսքը հենց նոր վերջացրեց հետևյալ ֆրազով.

— ... ցարիզմը կոչնչացվի, կարող եք հավատացած լինել։

Լիստնիցկին ծխախոտ փաթաթելով, կծու ժպտալով, նայում էր մերթ Բունչուկին, մերթ Զուբովին։

— Բունչո՛ւկ,— ասաց Կալմիկովը,— սպասեցեք, Լիստնիցկի... Բունչուկ, լսո՞ւմ եք... լավ, ասենք թե այս պատերազմը կվերածվի քաղաքացիական պատերազմի... հետո ի՞նչ. է՛հ, դուք կտապալեք միապետությունը... հապա, ձեր կարծիքով, ի՞նչպիսի վարչություն պիտի լինի, ի՞նչպիսի իշխանություն, հը՞։

— Պրոլետարիատի իշխանություն։

— Պառլամենտ թե ինչ։

— Ծանծաղ է դա,— ժպտաց Բունչուկը։

— Հապա ի՞նչ, է՛։

— Պետք է բանվորական դիկտատուրա լինի։

— Ա՜յ թե ինչ... Բա ինտելիգենցիան, գյուղացիությունն ի՞նչ դեր են կատարելու։

— Գյուղացիությունը կգա մեր հետևից, նույնպես և մտածող ինտելիգենցիայի մի մասը, իսկ մնացածներին... մնացածներին ա՜յ թե ինչ կանենք...— Բունչուկն արագ շարժմամբ պինդ կոլոլեց ձեռքին եղած ինչ-որ մի թուղթ, թափահարեց այն, ատամներն իրար սեղմելով ասաց՝ ա՜յ թե ինչ կանենք։

— Բարձրից եք բռնում, հա՜-ա...— քմծիծաղ տվեց Լիստնիցկին։

— Բարձր տեղ է՛լ կնստենք,— վերջացրեց Բունչուկը։

— Վաղորոք պետք է ձեր տակին ծղոտ-մղոտ փռեք...

— Ո՞ր սատանայի համար դուք կամավոր կերպով ֆրոնտ եկաք և նույնիսկ սպայական աստիճանի հասաք։ Ի՞նչպես այդ համատեղել ձեր հայացքների հետ։ Զար-մանա-լի՜ է։ Մարդը դեմ է պատերազմին... հա՜-հա՜-հա՜... դեմ է իր այդ... դասակարգային եղբայրներին ոչնչացնելուն, և հանկարծ... խորունժի՜ է դառնում։

Կալմիկովը ձեռները շրմփացնելով սապոգների ճիտքերին, անկեղծորեն ու փա՜ռ-փառ ծիծաղեց։

— Դուք ձեր գնդացրային խմբով քանի՞ գերմանական բանվոր եք գլորել,— հարցրեց Լիստնիցկին։

Բունչուկը շինելի կողագրպանից հանեց թղթերի մի մեծ ծալոց, երկար քրքրեց այն, մեջքը դարձրած դեպի Լիստնիցկին, ու մոտենալով սեղանին, լայն ու ջլուտ ձեռքով կոկեց հնությունից դեղնած մի լրագիր։

— Թե քանի գերմանական բանվորներ եմ ես գնդակահարել, դա... հարց է։ Կամավոր եմ եկել, որովհետև առանց այդ էլ կբերեին։ Կարծում եմ, որ այստեղ, խրամատներում իմ ձեռք բերած գիտելիքները պետք կգան ապագայում... ապագայում։ Ա՜յ, այստեղ ասված է.

Վերցնենք ժամանակակից զորքը։ Ահա կազմակերպության լավ նմուշներից մեկը։ Եվ այդ կազմակերպությունը լավ է միայն այն պատճառով, որ նա ճկուն է, գրա հետ միասին կարողանալով միասնական կամք տալ միլիոնավոր մարդկանց։ Այսօր այդ միլիոնները նստած են իրենց տնե-

ռում, երկրի այլևայլ ծայրերում։ Վաղը՝ հրաման մոբիլիզացիայի մասին,— ու նրանք հավաքվեցին նշանակված կետերում։ Այսօր նրանք պառկած են խրամատներում, պառկած են երբեմն ամիսներով։ Վաղը նրանք մի այլ կարգով գրոհի են գնում։ Այսօր նրանք հրաշքներ են գործում՝ թաքնվելով գնդակներից ու չրապնելից։ Վաղը նրանք հրաշքներ են գործում բացահայտ մարտում։ Այսօր նրանց առաջապահ շղթաները գետնի տակ ականներ են դնում։ Վաղը նրանք տասնյակ վերստեր են անցնում գետնի վերևից օդաչուների տված ցուցումներով։ Ահա սա կոչվում է կազմակերպություն, երբ հանուն մեկ նպատակի, մեկ կամքով ոգի առած, միլիոնավոր մարդիկ փոխում են իրենց չափան և իրենց գործողության ձևը, փոխում են գործունեության տեղն ու պրիոմները, փոխում են գործիքներն ու զենքերը՝ փոխվող հանգամանքներին ու պայքարի պահանջներին համապատասխան։ Նույնը վերաբերում է բանվոր դասակարգի պայքարին ընդդեմ բուրժուազիայի։ Այսօր առկա չէ ռևոլյուցիոն սիտուացիան...

— Ի՞նչ բան է «սիտուացիան»,— ընդհատեց Ջուբովը։

Բունչուկը շարժվեց, ասես հենց նոր էր արթնացել քնից, ու փորձելով հասկանալ հարցը, մեծ մատի հոդով շփեց ուռուցիկ ճակատը։

— Ես հարցնում եմ՝ ի՞նչ է նշանակում «սիտուացիա» բառը։

— Հասկանալը ես հասկանում եմ, բայց բանիմաց կերպով բացատրել չեմ կարողանա...— Բունչուկը ժպտաց հրստակ, պարզ, մանկական ժպիտով. տարօրինակ էր այդ ժպիտը տեսնել խոշոր, մռայլ դեմքի վրա, ասես անձրևներից թախծոտած, աշնանային դաշտով, աքացելով ու խաշալով, սլացավ նապաստակի բաց-մոխրագույն, կաթնակեր մի ձագ։— Սիտուացիա նշանակում է դրություն, իրադրություն թե ինչ,— այդպիսի մի բան։ Ճի՞շտ եմ ասում։

Լիստնիցկին անորոշ կերպով թափ տվեց գլուխը։

— Շարունակիր կարդալ։

Այսօր չկա ռևոլյուցիոն սիտուացիա, չկան պայմաններ մասսաների մեջ հուզմունքի համար, նրանց ակտիվությունը բարձրացնելու համար, այսօր քեզ տալիս են ընտրական բյուլլետենը,— վերցրու այն, կարողացիր կազմակերպվել, որպեսզի դրանով հարվածես քո թշնամիներին և ոչ թե պաղամենտի մեջ, տաք տեղեր անցկացնես այնպիսի մարդկանց, որոնք բանից վախենալով, աթոռներից են կառչում։ Վաղը քեզանից

խլեցին ընտրական բյուլլետենը, քեզ տվին հրացան ու մեքենայական տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված, հիանալի, արագաձիգ թնդանոթ,— վերցրու մահվան և ավերածության այդ գործիքները, մի՛ լսիր պատերազմից վախեցող, սենտիմենտալ լալկաններին, աշխարհում դեռ շատ այնպիսի բան է մնացել, որ պետք է ոչնչացվի հրով ու երկաթով, բանվոր դասակարգի ազատագրման համար, ու եթե մասսաների մեջ աճում է զայրույթը և հուսալքումը, եթե առկա է ռևոլյուցիոն սիտուացիան, պատրաստվիր նոր կազմակերպություններ ստեղծելու և քո կառավարության ու բուրժուազիայի դեմ գործի դնելու մահվան և ավերածության այդչափ օգտակար գործիքները...

Բունչուկը դեռ չէր վերջացրել կարդալը, երբ դուռը ծեծեց ու գետնատուն մտավ հինգերորդ հարյուրյակի վախմիստրը։

— Ձերդ բարեձննդություն,— դիմեց նա Կալմիկովին,— ցնցի շտաբից հանձնատար է եկել։

Կալմիկովն ու Ջուբովը հագնվեցին ու գնացին։ Մերկուլովը սուլելով՝ նստեց նկարելու։ Լիստնիցկին էլի քայլում էր գետնատանը, տնտղում բեղերը, ինչ-որ բան մտածում։ Շուտով Բունչուկն էլ հրաժեշտ տվեց ու գնաց։ Նա անցնում էր ցեխոտ խրամուղիով, ձախ ձեռքով օձիքը պահած, աջով ծածկելով շինելի փեշերը։ Քամու հոսանքը խփում էր խրամուղու նեղ անցքին, դիպչելով դրա պատերին, սուլում ու պտույտ էր դալիս։ Մթության մեջ քայլող Բունչուկը մի փոքր ժպտում էր ինչ-որ առիթով։ Նա իր գետնատունը հասավ դարձյալ անձրևից ամբողջովին թրջված, իր հետ բերելով լաստենու փտած սաղարթի հոտը։ Գնդացրային խմբի պետը քնած էր։ Նրա թուխ, սևաբեղ դեմքի վրա կապույտին էին տալիս անքնությունից մնացած հետքերը (երեք գիշեր թուղթ էր խաղացել)։ Բունչուկը խառնխտցց առաջվա ժամանակներից մնացած իր զինվորական մաղախը, դռան մոտ այրեց թղթերի մի կույտ, շալվարի գրպանների մեջ դրեց երկու տուփ պահածո և ատրճանակի մի քանի բուռ փամփուշտ, ու դուրս գնաց։ Մի վայրկյան բացված դռնից ներխուժեց քամին, ցրիվ տվեց գորշ մոխիրը, որ մնացել էր շեմքի մոտ այրված թղթերից, հանգցրեց մուր արձակող լամպը։

Բունչուկի գնալուց հետո Լիստնիցկին մի հինգ րոպե լուռ

քայլեց, հետո մոտեցավ սեղանին։ Մերկուլովը գլուխը թեք կախած՝ նկարում էր։ Բարակ սրված մատիտը գորշավուն ստվերներ էր փռում։ Թղթի սպիտակ քառակուսուց նայում էր Բունչուկի դեմքը՝ նրա համար սովորական, ժլատ, ասես հարկադրական ժպիտով։

— Ուժեղ մուրճ է,— նկարը բռնած ձեռքը ետ քաշելով՝ ասաց Մերկուլովը ու նայեց Լիստնիցկուն։

— Հը՞, ո՞նց է,— հարցրեց վերջինը։

— Սատանան գիտե, է՛,— կռահելով հարցի էությունը պատասխանեց Մերկուլովը։— Տարօրինակ տղա է նա, հիմա բացատրվեց ու շատ բան պարզվեց, իսկ առաջ ես չգիտեի, թե ինչպես հասկանայի նրան։ Գիտե՞ս, նա ահագին հաջողություն ունի կազակների, մանավանդ գնդացրորդների մոտ։ Դու այդ չէի՞ր նկատում։

— Այո,— մի տեսակ անորոշ պատասխանեց Լիստնիցկին։

— Գնդացրորդները բոլորն էլ բոլշևիկներ են։ Սա կարողացել է տրամադրել նրանց։ Ես ապշեցի, որ նա այսօր բացեց իր գաղտնիքները։ Ինչի՞ համար։ Զգրու էր ասում, աստված վկա։ Գիտե, որ մեզանից ոչ ոք չի կարող համամիտ լինել այդ հայացքներին, բայց չգիտես ինչու այդպես բացեց լեզուն։ Ախր նա հո տաքարյուն չէ։ Վտանգավոր տիպ է, հա՛-ա։

Դատողություններ անելով Բունչուկի տարօրինակ վարքի մասին, Մերկուլովը մի կողմ դրեց նկարը, սկսեց հանվելը։ Թաց գուլպաները կախեց վառարանից, լարեց ժամացույցը, ու մի պապիրոս ծխելով՝ պառկեց։ Շուտով քնեց։ Լիստնիցկին նստեց տաբուրետին, որի վրա քառորդ ժամ առաջ նրստել էր Մերկուլովը, ու կոտրելով բարակ սրած մատիտի ծայրը, նկարի մյուս կողմում խոշոր ձեռագրով գրեց.

«Ձե՛րդ բարձր բարեծննդություն։

Այն ենթադրությունները, որ ես առաջ հաղորդել էի Ձեզ, այսօր ամբողջովին հաստատվեցին։ Խորունժի Բունչուկը մեր գնդի սպաների հետ ունեցած այսօրվա զրույցի ժամանակ (բացի ինձանից, ներկա էին հինգերորդ հարյուրակի յասավուլ Կալմիկովը, հարյուրապետ Զուբովը, երրորդ հարյուրյակի փոխյասավուլ Մերկուլովը) ինչ-որ նպատակներով, որոնք

խոստովանում եմ, այնքան էլ հասկանալի չեն ինձ համար, պարզաբանեց այն խնդիրները, որ նա կատարում է իր քաղաքական համոզմունքների համաձայն և հավանորեն պարտիական իշխանության առաջադրանքով։ Նրա մոտ կար արդելված բնույթի թղթերի մի փաթեթ։ Այսպես, օրինակ, նա հատվածներ էր կարդում իրենց «Սոցիալ-դեմոկրատ» պարտիական օրգանից, որ հրատարակվում է Ժնևում։ Խորունժի Բունչուկն, անկասկած, ընդհատակյա աշխատանք է կատարում մեր գնդում (կան ենթադրություններ, որ նա հենց դրա համար էլ մտել է գունդը, որպես կամավոր), գնդացրորդները եղել են նրա ագիտացիայի անմիջական օբյեկտը։ Նրանք բարոյալքված են։ Նրա վնասակար ազդեցությունը երևում է գնդի բարոյական վիճակից,— եղել են մարտական խնդիրների կատարումից հրաժարվելու դեպքեր, այդ մասին ես իր ժամանակին տեղեկացրել եմ դիվիզիայի շտաբի օբյեկտիվ բաժնին և այլն։

Խորունժի Բունչուկը մոտ օրերս վերադարձավ արձակուրդից (եղել է Պետրոգրադում), առատորեն մատակարարված լինելով քայքայիչ գրականությամբ. հիմա նա կփորձի մեծ ինտենսիվությամբ աշխատանք ծավալել։

Ամփոփելով վերոհիշյալը, հանգում եմ հետևյալ եզրակացություններին. ա) Խորունժի Բունչուկի մեղավորությունը պարզված է (պ. պ. սպաները, որոնք ներկա էին նրա հետ եղած խոսակցությանը, կարող են երդմամբ հաստատել իմ հաղորդածը). բ) նրա ռևոլյուցիոն գործունեությանը վերջ տալու համար հենց այժմ անհրաժեշտ է ձերբակալել նրան և տալ ռազմա-դաշտային դատարանի. գ) շտապ հարկավոր է ցրել գնդացրային թիմը, հեռացնել առանձնապես վտանգավորներին, իսկ մնացածներին կամ թիկունք ուղարկել, կամ բաժանել գնդերի վրա։

Խնդրում եմ չմոռանալ իմ անկեղծ ձգտումը՝ ծառայել Հոգուս հայրենիքի և Միապետի։ Տվյալ նամակի պատճենն ուղարկում եմ Ս. Տ. Կորպին։

Յասավուլ Եվգ. Լիստնիցկի»։

20 հոկտեմբերի 1916 թ.

Տեղամաս Ն 7

Առավոտը Լիստնիցկին բանբերի հետ զեկուցագիրը ուղարկեց դիվիզիայի շտաբին. նախաճաշելով, դուրս ելավ գետնատնից։ Պատվարի լպրծուն քամակից դենը, ճահճի վերևում սողում էր մշուշը, դրա քուլաները կախվել էին ասես լարափակոցների փշերին մեխված։ Խրամուղիների հատակը կես վերշոկ ջրիկ ցեխով էր պատած։ Հրակնատներից դարշնագույն առվակներ էին հոսում։ Կազակները թաց, ցեխոտ շինելները հագած, վահանների վրա կաթսայիկներով թեյ էին եռացնում, ծխում էին պպզած, հրացանները խրամատի պատին հենած։

— Քանի՞-քանի անգամ է ասված, որ չհամարձակվեք կրակ վառել վահանների վրա։ Չե՞ք հասկանում, ինչ է, սրիկաներ,— չարացած բղավեց Լիստնիցկին՝ հասնելով ծուխ արձակող կրակի շուրջ նստած կազակների առաջին խմբին։

Երկու հոգի դժկամորեն վեր կացան, մնացածները շարունակեցին նստած մնալ՝ հավաքելով շինելների փեշերը, ծխելով։ Թխադեմ, երկարամորուք մի կազակ արծաթե գինդով, որը ճոճվում էր ականջի կնճռոտ բլթակի տակին, մանր ցախի մի կապուկ խոթելով կաթսայիկի տակ, պատասխանեց.

— Սրտանց ուրախ կլինեինք ձեռք չտալ վահաններին, ամա, ձերդ բարեծննդություն, ախր ո՞նց կրակ անենք, է՛։ Տես թե ինչ ցեխ է։ Քիչ է մնում խրվես մինչև ծունկդ։

— Իսկո՛ւյն հանիր վահանը։

— Ուրեմս ինչ, մենք սովա՞ծ մնանք։ Լա-ա՛վ...— մռայլվելով ու մի կողմ նայելով, ասաց լայներես, չեչոտ մի կազակ։

— Ես քեզ ցո՛ւյց կտամ... հանի՛ր վահանը։— Լիստնիցկին սապոգի քթով կաթսայիկի տակից դեն գցեց վառվող ցախը։

Երկարամորուք, ականջին գինդ կրող կազակը շփոթված ու չարացած ժպտալով, կաթսայիկից թափեց տաք ջուրը, շշնջաց.

— Խմեցինք չայը, տղերք...

Կազակներն աչքերով լուռ ուղեկցեցին խրամատների

երկայնքով հեռացող յասավուլին։ Մորուքավորի խոնավ աչքերում հրավառ կայծեր էին դողում։

— Վիրավորեցի՞ր, շո՛ւն։

— Է՛-է-էխ...— ձայնը երկարացնելով հառաչեց մեկը՝ հրացանի փոկը գցելով ուսին։

Չորրորդ դասակի տեղամասում Մերկուլովը հասավ Լիստնիցկուն։ Նա մոտեցավ հևալով, սվսվացնելով բոլորովին նոր, կաշվե տուժուրկան, նրանից մախորկայի ծխի սուր հոտ էր գալիս։ Լիստնիցկուն մի կողմ կանչելով, արագ ասաց.

— Լսե՞լ ես նորությունը։ Բունչուկն այս գիշեր փախել է։

— Բունչո՞ւկը։ Ի-ի-ի՞նչ։

— Փախել է... Հասկանո՞ւմ ես։ Իգնատիչը, գնդացրային խմբի պետը,— նա Բունչուկի հետ մի գետնատան մեջ է տեղավորված,— ասում է, որ Բունչուկը մեր գետնատնից չի վերադարձել։ Ուրեմն հենց որ հեռացել է մեզնից, ճղել է... Ա՜յ թե ինչ։

Լիստնիցկին երկար սրբում էր ակնոցը, կկոցում աչքերը։

— Կարծեմ դու հուզված ես, հը՞,— Մերկուլովը զննողաբար նայեց նրան։

— Ե՞ս։ Խելքդ հո չե՞ս թռցրել։ Ես ինչի՞ց պիտի հուզվեմ։ Դու ուղղակի շշմեցրիր ինձ անակնկալով։

II

Մյուս օրվա աշավոտյան շփոթված վախմիստրը մտավ Լիստնիցկու գետնատունը. կմկմալով՝ հաղորդեց.

— Այսօր առավոտ կազակները, ձերդ բարեծննդություն, խրամատներում գտել են հրես այս թղթերը։ Անհարմար բան է... ես էլ հրես եկել եմ ձեզ զեկուցելու։ Չլինի՞ թե խաթա գա գլխներիս...

— Ի՞նչ թղթեր,— մահճակալից քիչ բարձրանալով, ճարցրեց Լիստնիցկին։

Վախմիստրը տվեց բռունցքի մեջ ճմռթած թերթիկները։

Էժան թղթի քառորդամասի վրա պարզ կարգացվում էին գրամեքենայով բազմացված բառերը։ Լիստնիցկին արագ-արագ կարդաց.

Գրոլնարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք։

Ընկե՛ր զինվորներ,

Երկու տարի շարունակվում է անիծված պատերազմը։ Երկու տարի գուք առաջում եք խրամներում՝ պաշտպանելով ձեզ խորթ շահերը։ Երկու տարի թափվում է բոլոր ազգերի բանվորների ու գյուղացիների արյունը։ Հարյուր հազարավոր ոպանված ներ ու հաշմվածներ, հարյուր հազարավոր որբեր ու այրիներ,— ահա՛ այս ոպանդի հետևանքները։ Ինչի՞ համար եք գուք կռվում։ Ո՞ւմ շահերն եք պաշտպանում։ Ցարական կառավարությունը միլիոնավոր զինվորների կրակի առակ է դրել, որպեսզի նոր հողեր զավթի և այդ հողերի բնակչությանը կեղեքի այնպես, ինչպես կեղեքվում են ստրկացված Լեհաստանը և այլ ազգությունները։ Համաշխարհային արդյունաբերողները չեն կարողանում բաժանել շուկաները, որտեղ նրանք կարողանային վաճառահանել իրենց ֆաբրիկաների ու գործարանների արտադրանքը. չեն կարողանում բաժանել շահույթները,— բաժանումը կատարվում է զինված ուժով,— և դուք, խեղճ ու կրակ մարդիկ, նրանց շահերի համար մղվող պայքարում դեպի մահ եք գնում, սպանում եք հենց այնպիսի աշխատավորներին, ինչպիսիք և դուք եք։

Հերի՞ք է ինչքան թափվել է եղբայրական արյունը։ Ուշքի՛ եկեք, աշխատավորներ։ Ձեր թշնամին ոչ թե ավստրիական ու գերմանական զինվորն է, որ նույնպես խաբված է, ինչպես և դուք,— այլ ձե՛ր իսկ ցարը, ձեր իսկ արդյունաբերողն ու կալվածատերը։ Ձեր հրացանները դարձրեք դրանց դեմ։ Եղբայրացեք գերմանական ու ավստրիական զինվորների հետ։ Լարափակոցների վրայով, որոնցով ձեզ, որպես գազանների, բաժանել են իրարից, ձեռք մեկնեցե՛ք միմյանց։ Դուք աշխատանքի եղբայրներ եք, ձեր ձեռների վրա դեռ չեն սաղացել աշխատանքի արյունոտ կոշտուկների հետքերը, դուք բաժանելու ոչինչ չունեք։ Կորչի՛ ինքնակալությունը։ Կորչի՛ իմպերիալիստական պատերազմը։ Կեցցե՛ ամբողջ աշխարհի աշխատավորների անոռոտան միությունը։

Լիստնիցկին վերջին տողերը կարդաց շնչատագ լինելով։ «Ահա։ Սկսվում է»,— մտածեց նա ատելությամբ հագեցած ու ճնշվելով վերահաս նախազգացումների ծանրության տակ։ Հեռախոսով կապվելով գնդի հրամանատարի հետ, Լիստնիցկին հաղորդեց, ինչ որ պատահել էր։

— Ի՞նչ եք հրամայում անել, ձերդ գերազանցություն,— հարցրեց վերջում։

Հեռախոսի մոծակային բզզոցի ու հեռավոր զանգերի միջից, խոսափողից թավ ձայնով տեղում էին գեներալի խոսքերը.

— Վախմիստրի ու դասակային սպաների հետ անմիջապես խուզարկություն կատարել։ Ընդհանուր խուզարկություն, չբացառելով և սպաներին։ Այսօր կհարցնեմ դիվիզիայի շտաբին, թե երբ են հերթափոխելու գունդը։ Կշտապեցնեմ նրանց։ Եթե խուզարկության ժամանակ որևէ բան գտնեք, անհապաղ հաղորդեցեք։

— Ես կարծում եմ, որ սա գնդացրորդների գործն է։

— Հա՛-ա՛։ Իսկույն կհրամայեմ Իգնատիչին՝ խուզարկել իր կազակներին։ Դեհ, հաջողություն։

Դասակային սպաներին հավաքելով իր գետնատանը, Լիստնիցկին նրանց հաղորդեց գնդի հրամանատարի հրամանը։

— Սա ի՞նչ այլանդակություն է,— վրդովվեց Մերկուլովը,— մենք միմյա՞նց պետք է խուզարկենք, ինչ է։

— Առաջինը ձեզ, Լիստնիցկի,— բղավեց երիտասարդ անքեղ հարյուրապետ Ռազդորցևը։

— Եկեք վիճակ գցենք։

— Այբբենական կարգով։

— Պարոնայք, կատակները մի կողմ թողեք,— խիստ տոնով ընդհատեց Լիստնիցկին։— Մեր ծերուկն, իհարկե, բանը չափազանցության է հասցրել. մեր գնդի սպաները Կեսարի կնոջ պես են[1]։ Կար միայն մեկը, խորունժի Բունչուկը, այն էլ դասալքեց, շայց կազակներին պետք է տնտղել։ Կանչեցեք վախմիստրին։

Եկավ վախմիստրը,— տարեց մի կազակ, երեք աստիճանի գեորգևյան խաչերով։ Թեթև հազալով, նայեց սպաներին։

[1] Լիստնիցկին նկատի ունի ասացվածք դարձած այն խոսքը, որով իբր թե Կեսարը պատասխանել է իր կնոջ վարքի նկատմամբ իր մատուցահայտված կասկածանքներին,— «Կեսարի կինը կասկածանքներից դուրս է»։

— Քեզ մոտ, հարյուրյակում ո՞վ է կասկածելի։ Քո կարծիքով ո՞վ կարող էր ցրել այս կոշերը,— դիմեց նրան Լիստնիցկին։

— Չկան այդպիսիներ, ձերդ բարեծննդություն,— վստահորեն պատասխանեց վախմիստրը։

— Սակայն չէ՞ որ կոշը ցրվել է մեր հարյուրյակի տեղամասում։ Ուրիշներից ո՞վ է եղել խրամատներում։

— Ուրիշներից ոչ ոք չի եղել։ Մյուս հարյուրյակներից չեն եղել։

— Գնանք բոլորին էլ մեկ-մեկ խուզարկելու։— Մերկուլովը ձեռքով արավ՝ քայլելով դեպի դուռը։

Խուզարկությունը սկսվեց։ Կազակների դեմքերն այլևայլ զգացումներ էին արտահայտում. ոմանք մռայլվում, տրտնջում էին, ոմանք վախեցած նայում էին սպաներին, որոնք խառնիստում էին կազակական աղքատիկ իրեղենը, ոմանք էլ քմծիծաղ էին տալիս։ Քաջատես, հետախույզ մի ուրյադնիկ հարցրեց.

— Հլա մի ասացեք, ի՞նչ եք փնտրում։ Թե որ մի բան է գողացված, կարելի է մեկնումեկը տեսած լինի ուրիշի մոտ։

Խուզարկությունը ոչ մի արդյունք չտվեց։ Միայն առաջին դասակի մի կազակի շինելի գրպանում գտան կոշի ճմռթված մի թերթիկ։

— Կարդացե՞լ ես,— հարցրեց Մերկուլովը՝ ծիծաղաշարժ վախով դեն շպրտելով նրա գրպանից հանած թերթիկը։

— Թութուն քաշելու համար եմ վերցրել,— չբարձրացնելով խոնարհած աչքերը, ժպտաց կազակը։

— Այդ ինչո՞ւ ես ժպտում, հը՞,— տաքացած բղավեց Լիստնիցկին, կարմրատակեց, մոտեցավ կազակին. նրա ակնոցի տակին ջղայնորեն թարթում էին կարճ, ոսկեվուն արտևանունքները։

Կազակի դեմքը միանգամից լրջացավ, ասես քամին տարավ ժպիտը։

— Ներողությո՛ւն արեք, ձերդ բարեծննդություն։ Ախր ես համարյա թե անգրագետ եմ, է՛։ Գիրկապ անելով եմ կարդում։ Գետնից վերցրի, որովհետև թութուն փաթթելու թուղթ չկա, թութուն կա, իսկ թուղթս պրծել էր, դրա համար էլ վերցրի։

Կազակը խոսում էր նեղացած, բարձրաձայն, նրա ձայնը ցասում էր արտահայտում։

Լիստնիցկին թքեց ու հեռացավ։ Սպաները գնացին նրա հետևից։

Մեկ օրից հետո գունդը հանեցին դիրքերից ու տարան Թիկունք, դիրքերից տասը վերստ հեռու։ Գնդացրային խմբից երկուսին ձերբակալեցին և հանձնեցին ռազմա-դաշտային դատարանին, մնացածների մի մասն ուղարկեցին պահեստի գնդերը, մի մասն էլ բաժանեցին կազակական 2-րդ դիվիզիայի գնդերի վրա։ Հանգստի մի քանի օրվա ընթացքում գունդը որոշ չափով կարգի բերվեց։ Կազակները լողացան, մաքրվեցին, խնամքով սափրվեցին,— ո՛չ այնպես, ինչպես խրամատներում, որտեղ հաճախ այտերի բուսականությունից ազատվում էին հասարակ, բայց հիվանդագին եղանակով. մազերը վառում էին լուցկիով, ու հենց որ կրակը մազերը վառում, հասնում էր մաշկին, այտերը շփում էին նախապես թրջված երեսսրբիչով։ Սա կոչվում էր «խոզային» եղանակ։

— Քեզ խոզավարի թրաշե՞մ թե ոնց,— հարցնում էր սափրողին դասակային մի որևէ սափրիչ։

Գունդը հանգստանում էր։ Կազակներն իրենց արտաքինով փայլուն էին, ուրախ, բայց Լիստնիցկին ու բոլոր սպաներն էլ գիտեին, որ այդ ուրախությունը նման է նոյեմբերի այնպիսի մի օրվա, երբ եղանակը լավ է. այսօր այն առկա է, իսկ վաղը չկա։ Բավական էր մի խոսք ասել դիրքերը դուրս գալու մասին, և իսկույն փոխվում էր դեմքերի արտահայտությունը, ու նոթոտ կոպերի տակին դժգոհություն, մռայլ տհաճություն էր նկատվում։ Զգացվում էր մահացու հոգնածություն, ջլատվածություն, ու հենց այդ հոգնածությունն էլ բարոյական անկայունություն էր առաջացնում։ Լիստնիցկին հիանալի գիտեր, թե որքան սարսափելի է լինում մարդը, երբ այդպիսի վիճակում մի որևէ նպատակի է ձգտում։

1915 թվականին նրա աչքերի առաջ զինվորների մի վաշտ հինգ անգամ գրոհի էր նետվում, չտեսնված կորուստներ էր տալիս ու էլի հրաման ստանում՝ «Վերսկսել գրոհը»։ Վաշտի մնացորդներն ինքնակամ թողին իրենց տեղամասը ու գնացին Թիկունք։ Լիստնիցկին իր հարյուրյակով հրաման ստացավ կանգնեցնել նրանց, ու երբ նա, հարյուրյակից շղթա կազմե-

լով, փորձեց դադարեցնել դեպի ետ շարժվելը, սկսեցին կրակել նրանց վրա։ Վաշտից մնաց ոչ ավելի, քան վաթսուն մարդ, և նա տեսնում էր, թե այդ մարդիկ ինչպիսի խելահեղ, հանդուգն քաջությամբ էին պաշտպանվում կազակներից, ընկնում էին թրերի հարվածներից, մեռնում էին, բայց առաջ քշում դեպի կործանումը, ոչնչացումը, գտնելով, որ միևնույն է, մի տեղ պիտի մեռնեն։

Այս դեպքը վերականգնվում էր նրա հիշողության մեջ որպես ահեղ մի նախազգուշացում, ու Լիստնիցկին հուզմունքով և նոր ոգով էր դիտում կազակների դեմքերը, ու մտածում էր. «Մի՞թե սրանք էլ երբևէ ետ կդառնան ու կգնան, և բացի մահից, ոչ մի բան չի կարողանա կանգնեցնել սրանց»։ Ու հանդիպելով հոգնած, գազազած հայացքներին, ազնվորեն եզրակացնում էր՝ «Կգնան»։

Անցած տարիների համեմատությամբ կազակներն արմատապես փոխվել էին։ Նույնիսկ երգերը,— դրանք է՛լ նոր էին, պատերազմից ծնված, սև տխրությամբ լցված։ Երեկոներին անցնելով գործարանային մի ընդարձակ սրահի կողքից, ուր տեղավորված էր հարյուրյակը, Լիստնիցկին ամենից հաճախ լսում էր թախծոտ, անչափ տրտում մի երգ։ Դա միշտ երգում էին երեք-չորս ձայնով։ Թավ ձայների միջից, խոյանալով, գեղգեղում էր մի ձայնակցողի հազվագեղ մաքուր և ուժեղ տենորը։

Օ՛յ, հայրենի, սիրված իմ Հող,
Ես այլևս քեզ չեմ տեսնի,
Արշալույսին այգում երգող
Բլբուլի ձենն էլ չեմ լսի։
Դու է՛լ, անուշ, սիրված իմ մայր,
Շատ մի՛ տխրի որդուդ համար,—
Հո բոլորն էլ, ի՛մ թանկագին,
Չո՞ հ չեն գնում պատերազմին։

Լիստնիցկին կանգ առնելով, ականջ էր դնում և զգում էր, որ իրեն է՛լ սաստիկ հուզում է երգի անպաճույճ տխրությունը։ Ինչ-որ մի պիրկ լար էր ձգվում զարկերն արագացնող իր սրտի մեջ, ձայնակցողի ցածր տեմբրը խփում էր այդ լարին, ստիպում էր նրան ցավագին դողդողալ։ Լիստնիցկին

կանգնում էր սրահին մոտիկ որևէ տեղում, դիտում երեկոյի աշնանային մեգ-մշուշը և զգում, որ իր աչքերը թրջվում են արցունքով, կոպերը սուր և քաղցր ցավով են բռնվում։

Ես գնում եմ դաշտով արձակ,
Սիրտս զգում է կրծքիս տակ,
Օ՛յ, զգում է, ասում է նա,
Որ էլ կռվից տուն չեմ դառնա։

Բասերը դեռ չէին վերջացնում վերջին բառերը, իսկ ձայնակցողի ձայնն արդեն ծածկում էր դրանք, ու հնչյունները դողդողում էին ինչպես սպիտակակուրծք արոսի թևերը թռիչքի ժամանակ, հապճեպում, կանչում էին իրենց հետևից, պատմում,—

Սուլեց, թռավ գնդակն արճիճ,
Գնդակն արճիճ կուրծքս խոցեց,
Ու ես ընկա ձիուս վզին,
Հորդ արյունս բաշը թրջեց։

Հանգստանալու օրերին Լիստնիցկին լսեց կազակական հինավուրց մի երգի ոգևորիչ, քաջալերող խոսքերը։ Կատարելով իրիկնային սովորական զբոսանքը, նա անցնում էր սրահի կողքից։ Նրա ականջին հասան կիսահարբած մարդկանց ձայներն ու քրքիջը։ Լիստնիցկին գլխի ընկավ, որ պահեստապետը, վերադառնալով Նեզվիսկու ավանից, մթերքների հետ նաև օղի էր բերել և հյուրասիրել կազակներին։ Հացի օղին խմած կազակները ինչ-որ վիճում էին, ծիծաղում։ Վերադառնալով զբոսանքից, Լիստնիցկին դեռ հեռվից լսեց երգի հուժկու թնդյունները ու վայրի, սուր, բայց համաչափ սուլոցը.

Պատերազմում ով չի եղել,
Երկյուղ, սարսափ նա չի տեսել։
Օր ու գիշեր թրջվում, դողում,
Գիշերն ամբողջ մենք չենք քնում։

«Ֆի-յո-յու-յու-յու, ֆի-յու-յու-յու, ֆյո՛ւ-յո՛ւ-յո՛ւ»,— անընդմեջ թրթռում, հեղվում, պարուրաձև ոլորվում էր սուլոցը, ու ծածկելով այն, որտտում էր ամենաքիչը մի երեսուն ձայն.

Ամեն մի օր, ամեն մի ժամ
Արձակ դաշտում վիշտ ու սարսափ։

Ինչ-որ չարաճճի մեկը, ըստ երևույթին երիտասարդներից խլացուցիչ ու կարճ սուլելով, պպզապար էր գալիս, ոտներ խփում փայտե հատակին։ Հստակ թնդում էին կրունկներ, զարկերը, ու երգը խլացնում էր դրանց ձայնը.

Տես, Սև ծովն է աղմկում,
Կրակ վառվում նավերում։
Մենք կրակը կմարենք,
Թուրքերին էլ կխեղդենք,
Փա՛ռք մեր Դոնի կազակին։

Լիստնիցկին գնում էր ակամա ժպտալով, աշխատում էր քայլել ձայների տակտով։ «Գուցե հետևակ զորամասերում այնքան էլ խիստ կերպով չի զգացվում այդ ձգտումը դեպի տուն,— մտածում էր նա, բայց բանականությունը սառն առարկություններ էր մեջտեղ բերում.— բայց մի՞թե հետևազորում մարդիկ ուրիշ են։ Անկասկած, կազակները ավելի դժվար են տանում խրամատներում հարկադրաբար նստած մնալը. ըստ իրենց ծառայության բնույթի, նրանք սովոր են մշտական շարժման։ Իսկ այստեղ երկու տարվա ընթացքում ստիպված ես նստել ու մնալ կամ թրև գալ հարձակման ապարդյուն փորձերի դեպքում։ Բանակը երբեք այսքան թույլ չի եղել։ Հարկավոր է ուժեղ ձեռք, խոշոր հաջողություն, առաջշարժում,— դա ոգևորություն կառաջացներ։ Թեպետ պատմությունն այնպիսի օրինակներ գիտի, երբ երկարատև պատերազմների ժամանակաշրջանում ամենակայուն ու կարգապահ զորքերն անգամ քայքայվում էին բարոյապես։ Նույնիսկ Սուվորովն է՛լ էր զգացել այդ բանը... բայց կազակները կդիմանան։ Եթե հեռանան է՛լ, վերջին հեռացողները կլինեն։ Այնուամենայնիվ դա հո մի փոքր առանձնակի ազգ է, իր տրադիցիայով ռազմատենչ և ոչ թե այնպիսին է, ինչպես մի որևէ դործարանային կամ մուժիկական խուժան»։

Ասես նրան հերքելու համար սրահում մեկը դողդոջուն, ճռճռան ձայնով սկսեց երգել «Կալինուշկա» երգը։ Մյուսները ձայնակցեցին ու Լիստնիցկին հեռանալիս լսում էր էլի նույն թախիծով հնչող երգը .

Ջահել սպան աղոթում է աստծուն,
Ջահել սպան աղաչում է թողնել տուն.
— Ջահել սպա, դու թող ինձ,
Թող տուն գնամ այստեղից,
Թող տուն գնամ այստեղից,
Հորս մոտ,
Հորս, անուշ մորս մոտ,
Հորս, անուշ մորս մոտ,
Ջահել-շիվան կնկաս մոտ։

Ռազմաճակատից փախչելուց երեք օր անց, երեկոյան Բունչուկը մտավ առևտրական մի մեծ ավան, որ գտնվում էր ռազմաճակատին մոտիկ վայրում։ Տներում արդեն վառել էին լույսերը։ Սառնամանիքը սառույցի բարակ կեղև էր քաշել ջրափոսերի վրա, ու հատուկենտ անցորդների քայլերը դեռ հեռվից էին լսվում։ Բունչուկը գնում էր լսողությունը լարած, խուսափելով լուսավորված փողոցներից, անցնելով դատարկ նրբանցքները։ Ավանը մտնելիս քիչ էր մնացել, որ հանդիպեր պարեկին, ու հիմա քայլում էր գայլի փութկոտությամբ, ցանկապատերի տակից, աջ ձեռքը չհանելով չափազանց կեղտոտ շինելի գրպանից,— ցերեկը պառկել էր մի մարագում, հարդի մեջ թաղված։

Ավանում գտնվում էին կորպուսի բազան, ինչ-որ զորամասեր, առկա էր պարեկին հանդիպելու վտանգը, հենց դրա համար էլ Բունչուկի մազոտ մատները չէին կտրվում շինելի գրպանը դրած նագանի քյարթավոր կոթից։

Ավանի մյուս ծայրում Բունչուկը երկար քայլեց մի դատարկ նրբանցքում՝ դարպասներից ներս նայելով, խորազնին դիտելով յուրաքանչյուր աղքատիկ տնակի ձևը։ Մի քանի բոպեից հետո մոտեցավ փողոցի անկյունում գտնվող անշուք մի տնակի, նայեց փեղկի ճեղքից ու ժպտալով, վճռականորեն ներս մտավ բակի դռնից։ Լաչակը գլխին մի տարեց կին լսելով թխկոցը, բացեց տան դուռը։

— Բորիս Իվանովիչը ձեզ մո՞տ է ապրում,— հարցրեց Բունչուկը։

— Այո։ Մտեք, խնդրե՛մ։

Բունչուկը կողքի անցավ նրա մոտից։ Հետևից լսեց փականի պաղ ճռնչոցը։ Ցածրիկ առաստաղով սենյակում, որ լու-

սավորված էր մի փոքրիկ լամպով, սեղանի առաջ նստել էր զինվորական տարազով, տարեց մի մարդ։ Աչքերը կկոցելով, նա նայեց ու վեր կացավ, զուսպ ուրախությամբ ձեռքը մեկնելով Բունչուկին։

— Ո՞րտեղից։

— Ռազմաճակատից։

— Է՞հ։

— Տեսնում ես, էլի...— ժպտաց Բունչուկը, ու մատի ծայրը դնելով զինվորական տարազ հագած մարդու գոտուն, հազիվ լսելի ձայնով ասաց՝ սենյակ կա՞։

— Այո, այո։ Եկ այստեղ։

Նա Բունչուկին տարավ է՛լ ավելի փոքրիկ մի սենյակ. առանց լույս վառելու նստեցրեց աթոռին ու ծածկելով հարևան սենյակը տանող դուռը, իջեցնելով պատուհանի վարագույրը. ասաց.

— Բոլորովի՞ն եկար։

— Բոլորովին։

— Ո՞նց է այնտեղ։

— Ամեն ինչ պատրաստ է։

— Հուսալի տղե՞րք են։

— Այո՛, այո։

— Ես կարծում եմ, որ դու հիմա կհանվես, հետո կխոսենք։ Տուր շինելդ։ Հիմա ես լվացվելու ջուր կբերեմ։

Մինչդեռ Բունչուկը լվացվում էր ժանգոտած, պղնձե լագանի վրա, զինվորական տարազ հագած մարդը շփելով «ոգնիկ» ձևի սարքած մազերը, հոգնածորեն ու կամացուկ ասում էր.

— Այժմ նրանք մեզնից անհամեմատ ավելի ուժեղ են։ Մեր գործն է՝ աճել, լայնացնել մեր ազդեցությունը, աշխատել առանց ձեռներս ծալելու,— պարզաբանել պատերազմի իսկական պատճառները։ Եվ մենք աճում ենք, կարող ես հավատացած լինել։ Եվ այն, ինչ որ հեռանում է նրանցից, անխուսափելիորեն մեզ մոտ է գալիս։ Չափահաս մարդը տղայի համեմատությամբ անպայման ավելի ուժեղ է, բայց երբ այդ չափահասը ծերանում է, զառամում, ապա հենց այդ տղան էլ կհաղթահարի նրան։ Իսկ այս դեպքում մենք տեսնում ենք

ոչ միայն ծերի զառամություն, այլև ամբողջ օրգանիզմի աճող կաթվածահարություն։

Բունչուկը վերջացրեց լվացվելը ու քաթանե կոշտ սրբիչով երեսը սրբելով ասաց.

— Հեռանալուց առաջ ես սպաների մոտ արտահայտեցի մեր հայացքները... Գիտե՞ս, ծիծաղելի բան դուրս եկավ... Իմ հեռանալուց հետո գնդացրորդներին անկասկած թափ կտան, գուցե տղերքից ամանք դատի տրվեն, բայց քանի որ ապացույցներ չկան, ի՞նչ խոսք կարող է լինել։ Ես հույս ունեմ, որ նրանց կուղարկեն այլևայլ զորամասեր, իսկ մեզ համար դա ձեռնտու է. թող բեղմնավորեն հողը... Ա՛խ, ինչպիսի՜ տղերք կան այնտեղ։ Կրակի կտոր են, հա՛-ա։

— Ես Ստեփանից մի երկտող եմ ստացել։ Խնդրում է ռազմական գործը գիտեցող մի տղա ուղարկել։ Դու կճանապարհվես նրա մոտ, բայց փաստաթղթերի բանը ո՞նց կլինի։ Կհաջողվի՞ արդյոք։

— Ի՞նչ աշխատանք կա նրա մոտ,— հարցրեց Բունչուկը ու բարձրացավ ոտների մատների վրա՝ երեսսրբիչը կախելով մեխից։

— Հրահանգել տղերքին։ Իսկ դու դեռ բոյ չե՞ս քշում,— ժպտաց տանտերը։

— Ի՛նչ կարիք կա,— Բունչուկը թափ տվեց ձեռքը,— մանավանդ իմ այժմյան վիճակում։ Ինձ հարկավոր է սիսեռահատիկի չափ բոյ ունենալ, որ այնքան էլ նկատելի չլինեմ։

Նրանք խոսեցին մինչև առավոտյան աղջամուղջը։ Իսկ մեկ օրից հետո Բունչուկը անճանաչելիության չափ հագուստը փոխած ու դեմքը ներկած, ունենալով փաստաթղթեր 441-րդ Օրշևյան գնդի զինվոր Նիկոլայ Ուխվատովի անվամբ, որը որպես թե կրծքից վիրավորված լինելու պատճառով բոլորովին ազատվել էր ծառայությունից,— դուրս եկավ ավանից ու գնաց կայարան։

III

Վլադիմիր-Վոլինսկի և Կովելի ուղղությամբ, Հատուկ բանակի (դա 13-րդ բանակն էր, բայց որովհետև «13»-ը ձախորդ թիվ է, իսկ սնահավատությամբ տառապում էին նաև

ջոջ գեներալները, ուստի բանակին տվել էին «Հատուկ» անունը) գործողությունների շրջանում, սեպտեմբերի վերջերին սկսվեց հարձակման նախապատրաստությունը։ Հրամանատարությունը Սվինյուխա գյուղի մերձակայքում ընտրել էր մի պլացդարմ, որը հարմար էր հարձակումը ծավալելու համար ու սկսեց հրետանային նախապատրաստությունը։

Չտեսնված քանակությամբ հրետանի էր տարված հիշյա վայրը։ Տարբեր տրամաչափի հարյուր հազարավոր արկեր ինն օրվա ընթացքում քարուքանդ էին անում այն տարածությունը, որ բռնված էր երկու շարք գերմանական խրամատներով։ Առաջին իսկ օրը, հենց որ սկսվեց ինտենսիվ ռմբակոծությունը, գերմանացիները հեռացան խրամատների առաջին գծից՝ թողնելով միայն դիտորդներ։ Մի քանի օրից հետո նրանք երկրորդ գծից էլ հեռացան ու անցան երրորդ գիծը։

Տասներորդ օրը Թուրքեստանյան կորպուսի զորամասերը, հրաձիգները, հարձակման անցան։ Հարձակվում էին ֆրանսիական եղանակով,— ալիք առ ալիք։ Ռուսական խրամատները տասնվեց ալիք շպրտեցին։ Ծածանվելով, նոսրանալով, ճզմված փշալարերի այլանդակ գունդ ու կծիկների մոտ փըրփրալով, հոսում էին մարդկային մակընթացության գորշ ալիքները։ Իսկ գերմանական կողմից, այնտեղից, կապտավուն լաստենուտի ածխացած կոճղերի հետևից, ավազոտ, կորացած բլրալանջերի հետևից թափվում էր կրակը, ցնցում, պատառոտում գետինը, թնդում էր խլացուցիչ, անընդհատ որոտմունքը, ճարճատում կրակոցների հրդեհը։

Ղուուռ՝ուու... բուուռ՝ուու... Բռ՝ւխ, բա՛ք, բուուուռ՝ում։

Երբեմնակի առանձին թնդում էր մի մարտկոցի համազարկը ու նորից ամբողջ կրակը սուլում, վրա հասնում, բրդում էր բազմարվեստ տարածությունը.

Ղուուռ՝ուուու... ղուռ՝ուուու... ղուռ՝ուու...

Տրրրրաաա՝-րա՛աա-տա-տա-տա-տա — խելահեղորեն հապճեպում էին գերմանական գնդացիրները։

Մոտ մի վերստ տարածության վրա, ավազախառն, քարուքանդ եղած գետնից հա՛ վեր էին թռչում պայթյունների սև սյուները, ու հարձակվողների ալիքները փշրվում, փրփրում էին, կաթիլ-կաթիլ դեն թռչում ձագարներից, ու շարունակ սողում, սողում...

Ավելի ու ավելի հաճախ էին գետինը հունցում պայթյունների սև բռնկոցները, ավելի խիտ էին հարձակվողների վրա թափվում շրապնելի խլացուցիչ տրաքտրաքոցը, ավելի դաժանորեն էր տեղում գետնին մոտիկ թռչող գնդացրային կարկուտը։ Հարվածում էին, չթողնելով, որ հարձակվողները մոտենան լարափակոցներին։ Ու մոտ չթողին։ Տասնվեց ալիքներից դրանց հասան վերջին երեքը։ Քարուքանդ եղած լարափակոցներից, որոնք դեպի երկինք էին բարձրացրել հրկիզված, փշալարով փաթաթված գերանները, այդ ալիքները դեպի ետ էին հոսում փոքրիկ առվակներով, կաթիլներով, ասես զարնվել էին նրանց ու փշրվել...

Այդ օրը ավելի քան ինն հազար կյանք ոչնչացավ ավազախառն, անուրախ հողի վրա, Սվինյուխա գյուղի մերձակայքում։

Երկու ժամից հետո հարձակումը վերսկսվեց։ Հարձակվեցին Թուրքեստանյան հրաձիգ կորպուսի 2-րդ և 3-րդ դիվիզիաների զորամասերը։ Ձախ կողմից, խրամուղիներով դեպի խրամատների առաջին գիծն էին մղվում 53-րդ հետևակ դիվիզիայի զորամասերը և 307-րդ Սիբիրյան հրաձիգ բրիգադան, Թուրքեստանցիների աջ թևում հարձակվում էին 3-րդ գրենադերական դիվիզիայի գումարտակները։

Հատուկ բանակի 30-րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գավրիլովը բանակի շտաբից հրաման ստացավ երկու դիվիզիա նետել Սվինյուխիի շրջանը։ Գիշերով դիրքերից հանվեցին 80-րդ դիվիզիայի 320-րդ Զեմբարյան, 319-րդ Բուգուլմինյան և 318-րդ Զերնոյարյան գնդերը։ Նրանց փոխարինեցին լատիշական հրաձիգներով և հենց նոր ժամանած աշխարհազորայիններով։ Գնդերը դիրքերից գիշերով հանեցին, բայց, չնայելով դրան, գնդերից մեկը դեռ երեկոյից դեմոնստրատիվ կերպով ուղարկվեց հակադիր կողմը, ու ռազմաճակատի գծով 12 վերստ անցնելուց հետո՛ միայն հրաման ստացավ ետ դառնալ ու ընթանալ հակառակ ուղղությամբ։ Գնդերը գնում էին մի ուղղությամբ, բայց տարբեր ճանապարհներով։ 80-րդ դիվիզիայի երթուղուց դեպի ձախ շարժվում էին 71-րդ դիվիզիայի 283-րդ Պավլոգրադյան և 284-րդ Վենգրովյան գնդերը։ Նրանց հետևից կրնկակոխ

գնում էին Ուրալի կազակների մի գունդ և 44-րդ պլաստունական գունդը։

318-րդ Չերնոյարյան գունդը մինչև տեղափոխվելը գտնվում էր Ստոխոդի մոտ, Սոկալ ավանի շրջանում, Ռուդկա-Մերինսկոյե կալվածքի մերձակայքում։ Առավոտյան, առաջին իսկ երթից հետո, գունդը տեղավորեցին անտառում, լքած խրամատներում, ու չորս օր սովորեցնում էին հարձակման ֆրանսիական եղանակը. գումարտակների փոխարեն շղթաներով շարժվում էին կիսավաշտերը, ռմբաձիգները սովորում էին որքան հնարավոր է արագ կտրատել լարափակոցները, նորից անցնում էին ձեռքի նռնակներ նետելու կուրսը։ Գունդը հետո էլի առաջ քշեցին։ Երեք օրվա ընթացքում գնում էին անտառներով, բացատներով, լքած միջգյուղյա ճանապարհներով, որոնք հրանոթների անիվների հետքերով էին ծածկված։ Սահում էր քամու քշած բամբականման, նոսր մշուշը, կպչում սոճիների գագաթներին, հոսում բացատների վերևից, ու ինչպես ուրուրը լեշի վրա, պտույտ էր գալիս լաստենիների միջև, գորշ-կանաչավուն, շոգիացող ճահիճների վրա։ Երկնքից հեղվում էր անձրևի մուժը։ Մարդիկ քայլում էին թրջված, գաղազած։ Երեք օրից հետո կանգ առան հարձակման շրջանից ոչ հեռու, Մեծ և Փոքր Պորեկ գյուղում։ Մեկ օր ու գիշեր հանգստացան, պատրաստվելով մահվան ճանապարհն ընկնելու։

Այդ ժամանակ 80-րդ դիվիզիայի շտաբի հետ դեպի մոտակա մարտերի վայրն էր գնում նաև կազակական հատուկ հարյուրյակը։ Վերջինս համալրված էր Տատարսկի խուտորի ծառայության երրորդ հերթի կազակներով։ Երկրորդ դասակը ամբողջովին կազմված էր այդ խուտորի բնակիչներից. այնտեղ էին՝ թևը կտրած Ալեքսեյ Շամիլի երկու եղբայրները՝ Մարտինը և Պրոխորը, Մոխովի շոգեաղացի նախկին մեքենավար Իվան Ալեքսեևիչը, չեչոտ Աֆոնկա Օգերովը, խուտորի նախկին ատաման Մանիցկովը, Շամիլների քյաքուլավոր, ծուռոտանի հարևանը՝ Եվլանտի Կալինինը, անճոռնի կերպով երկարահասակ կազակ Բորշչևը, կարճավիզ ու արջանման Զախար Կսրոլյովը, ամբողջ հարյուրյակի սիրուն ու հոգին, կենսուրախ Գավրիլա Լիխովիդովը,— հազվադեպ գազանային տեսք ունեցող մի կազակ, որը հայտնի էր նրանով,

որ մշտապես ու անորտունջ հանդուրժում էր յոթանասուն տարեկան պառավ մոր ու կնոջ ծեծը,— սա անհրապույր արտաքինով, բայց ազատ բարքի տեր մի կին էր. խուտորից ուրիշ շատերն էլ կային երկրորդ դասակում և հարյուրյակի մյուս դասակներում։ Կազակներից ոմանք հանձնատարներ էին դիվիզիայի շտաբում, բայց հոկտեմբերի 2-ին ալանները փոխարինեցին նրանց, ու դիվիզիայի հրամանատար գեներալ Կիտչենկոյի կարգադրությամբ հարյուրյակն ուղարկվեց դիրքերը։

Հոկտեմբերի 3-ի վաղ առավոտյան հարյուրյակը մտավ Փոքր Պորեկ գյուղը։ Այդ մոմենտին այնտեղից դիրքերն էր մեկնում 318-րդ Չերնոյարյան գնդի առաջին գումարտակը։ Դուրս վազելով լքած, կիսավեր խրճիթներից, զինվորները հենց այնտեղ, փողոցում շարք էին կանգնում։ Գլխային դասակի մոտ դեռ ու դեռ էր ընկնում թխադեմ, երիտասարդ մի պրապորշչիկ։ Նա պլանշետից շոկոլադ էր հանում և ուտում (նրա թաց, վառ-կարմիր շրթունքների եզրերին շոկոլադի հետքեր կային), քայլում էր շարասյան երկայնքով, ու երկար շինելը, որի մի փեշին ցեխ էր կպել, ճոճվում էր ոտների միջև ինչպես ոչխարի դմակը։ Կազակները գնում էին փողոցի ձախ կողմով։ Երկրորդ դասակի շարքերից մեկում, աջ կողմից, ծայրից քայլում էր մեքենավար Իվան Ալեքսեևիչը։ Նա ուշի-ուշով նայում էր ոտների տակ՝ աշխատելով ոտը չդնել ջրափոսերի մեջ։ Զինվորների կողմից ձայն տվին, ու նա գլուխը շուռ տալով՝ հայացքը սահեցրեց հետևակի շարքերի վրայով։

— Իվա՛ն Ալեքսեևիչ, սիրելի բարեկամս...

Դասակից դուրս գալով, մի կարճլիկ զինվոր բաղի վազքով մոտեցավ նրան։ Վազելիս նա ետ էր հրում հրացանը, բայց փոկն ընկնում էր ուսից ու հրացանի կոթը դիպչում էր ջրամանին, խուլ զնգզնգացնում այն։

— Չե՞ս ճանաչում, հը՞, մոռացե՞լ ես։

Իվան Ալեքսեևիչը դժվարությամբ ճանաչեց Վալետին, մոտեցած զինվորին, որի կզակը մինչև այտերը ծածկված էր կոշտ, գորշ մազ ու մորուքով։

— Ո՞րտեղից բուսար, սատանի ճուտ...

— Ծեսնում ես, էլի՛... ծառայում եմ։

— Ո՞ր գնդումն ես։

— Երեք հարյուր տասնութերորդ Ջերնոյարյան գնդում։ Չէի սպասում... չէի սպասում, որ մերոնց կհանդիպեմ։

Իվան Ալեքսեևիչը իր ոսկրոտ ձեռքից բաց չթողնելով Վալետի փոքրիկ, կեղտոտ ձեռքը, ուրախ և հուզված ժպտում էր։ Վալետն էլ, աշխատելով ետ չմնալ լայն-լայն քայլող Իվան Ալեքսեևիչից, գրեթե վազում էր, ներքևից վերև նայում նրա աչքերին, և իր նեղ նստած, չար աչքերի նայվածքը արտասովոր կերպով մեղմ էր, խոնավ։

— Տեսնում ես, էլի... հարձակման ենք գնում...

— Մենք է՛լ ենք գնում։

— Էհ, ո՞նց ես, Իվան Ալեքսեևիչ։

— Հը՛մ, խոսելու տե՞ղ է մնացել։

— Ես է՛լ եմ այդպես։ Տասնչորս թվականից խրամատներից դուրս չեմ գալի։ Ոչ իմ անկյունն եմ ունեցել, ոչ ընտանիք, հիմի էլ չարչարանք եմ քաշում չգիտես ում համար... Ջին գործի է, իսկ քուռակը հենց այնպես, թրևում է, է՛լի։

— Հիշո՞ւմ ես Շտոկմանին։ Մեր աչքի լույս Օսիպ Դավիդովիչին։ Նա հիմի մեզ ամեն բան կբացատրեր։ Ամա մարդ էր, հա՛-ա... Հիանալի էր... հը՞։

— Նա կպարզե՛ր, հա՛,— ցնծագին գոչեց Վալետը՝ թափահարելով բռունցքը ու ժպտալիս կնճռոտելով փոքրիկ դեմքը՝ կոշտ մազ ու մորուքով։— Հիշում եմ նրան։ Ես նրան հորից էլ լավ եմ հասկանում։ Հերս ինձ համար ինչ է արել որ... Բա Շտոկմանից լուր չկա՞։ Ո՞րտեղ է նա։

— Սիբիրումն է,— հոգոց հանեց Իվան Ալեքսեևիչը,— աքսորված է։

— Ո՞նց թե,— հարցրեց Վալետը՝ աքլորի նման ցատկոտելով իր խոշոր ուղեկցի կողքին մոտեցնելով բարակ ականջակոնքը։

— Նստած է բանտում։ Գուցեև հիմի մեռած է։

Վալետը միառժամանակ լուռ էր քայլում, նայում էր մերթ դեպի ետ, ուր շարվում էր վաշտը, մերթ Իվան Ալեքսեևիչի սուր կզակին, խոր, կլոր փոսիկին, որ վերջինիս ստորին շրթունքի բուն իսկ մեջտեղին էր գալիս։

— Գնաս բարով,— ասաց նա՝ ձեռքը դուրս քաշելով Իվան Ալեքսեևիչի պաղ, ոսկրոտ ձեռներից։— Կարելի է էլ չտեսնենք իրար։

Իվան Ալեքսեևիչը ձախ ձեռքով հանեց գլխարկը ու կռացավ՝ գրկելով Վալետի լղարիկ ուսերը։ Պինդ համբուրվեցին, կարծես առմիշտ հրաժեշտ տվին միմյանց, ու Վալետը ետ մնաց։ Սա հանկարծ գլուխն առավ ուսերի մեջ, այնպես, որ ականջների թուխ-կարմրավուն, բարակ կոնքերը ընկան շինելի գորշ օձիքի վրա, ու գնաց՝ կուզիկանալով ու սլկալով հարթ տեղում։

Իվան Ալեքսեևիչը դուրս եկավ շարքերից, դողդոջ ձայնով կանչեց.

— Է՛յ, աղբերացու, հոգի՛դ սիրեմ։ Ախր դու հերսոտ մարդ էիր, պինդ էիր, մի՞տդ է...

Վալետը շուռ տվեց արցունքներից թորշոմած դեմքը, բռունցքը խփեց թուխ, ոսկրոտ կրծքին, որ երևում էր կոճակներն արձակած շինելի ու շապկի պատռված օձիքի տակից, ու բղավեց.

— Հա՛, հա՛, պինդ էի, իսկ հիմի խեղճացրել են... Բուրդս զզել են...

Նա էլի ինչ-որ աղաղակեց, բայց հարյուրյակը շուռ եկավ հետևյալ փողոցը, ու նա չքացավ Իվան Ալեքսեևիչի աչքից։

— Դա Վալետն է, չէ՞,— հարցրեց վերջինիս հետևից քայլող Պրոխոր Շամիլը։

— Մարդ է, էլի,— խուլ ձայնով պատասխանեց Իվան Ալեքսեևիչը՝ դողացնելով շրթունքները, հրացանը սեղմելով ուսին։

Գյուղից դուրս, հարյուրյակի ճանապարհին սկսեցին հանդիպել վիրավորվածները,— սկզբում միավորներով, հետո մի քանի հոգուց բաղկացած խմբերով ու այնուհետև — հոծ բազմություններով։ Մի քանի սայլեր, որոնք լեփ-լեցուն էին ծանր վիրավորվածներով, դժվարությամբ էին ընթանում։ Դրանց լծված յաբուները՝ սարսափելի նիհար էին։ Նրանց սուր մեջքերը մաշկվել էին մտրակների անդադար հարվածներից, բացվել էին կարմիր բծերով ծածկված ոսկորները ու տեղ-տեղ մազերը կպել էին ոսկորներին։ Ձիերը քաշում էին քառանիվ սայլերը, փնչում ու այնքան էին զոռ տալիս, որ քիչ էր մնում նրանց փրփրակալած դնչերը դիպչեին գետնի ցեխին։ Մի որևէ զամբիկ երբեմն կանգ էր առնում, անզոր կերպով ուռցնում ներս ընկած, ոսկրոտ կողերը, կախում լղարություն-

նից մեծ թվացող գլուխը։ Մտրակի հարվածը նրան զոռով շարժում էր տեղից, և նա ճոճվելով սկզբում մեկ, հետո մյուս կողմի վրա, ճիգ էր թափում ու քայլում։ Բոլոր կողմերից կառչելով սայլերի կողերին, քայլում էին ոտով գնացող վիրավորները։

— Ո՞ր զորամասից ես,— բարի դեմք ընդունելով՝ հարցրեց հարյուրյակի հրամանատարը։

— Թուրքեստանյան կորպուսից, երրորդ դիվիզիայից։

— Այսո՞ր ես վիրավորվել։

Զինվորն առանց պատասխանելու շուռ տվեց դեմքը։ Հարյուրյակը ճանապարհից շեղվելով, գնում էր դեպի անտառը, որ երևում էր կես վերստ հեռավորությամբ։ Հետևակային ծանր քայլով հետևից գնում էին գյուղից դուրս եկած՝ 318-րդ Ջերնոյարյան գնդի վաշտերը։ Հեռվում, անձրևներից խունացած, մռայլ երկնքում դեղնագորշ, անշարժ բծի նման կախվել էր գերմանական կապովի մի օդապարիկ։

— Մտի՛կ արեք, կազակներ, թե ինչ հրաշք է կախված։

— Օդապարիկ է, հա՛-ա։

— Նա, անիծվածը, այնտեղից թամաշա է անում, թե ոնց են շարժվում զորքերը։

— Բա կարծում ես զուր տե՞ղն է այդքան բարձրացել։

— Հեռո՛ւ է, հա՛-ա։

— Բա մոտի՞կ է։ Իսկի արկն էլ չի հասնի նրան։

Անտառում Ջերնոյարյան գնդի առաջին վաշտը հասավ կազակներին։ Մինչև երեկո կուչ էին գալիս թաց սոճիների տակ, օձիքների տակից ջուր էր լցվում, դողը բռնում էր մեջքերը. արգելվեց կրակ վառել, և դժվար է՛լ էր այդ անել անձրևի տակ։ Արդեն մթնելու էր, երբ մտան երկար ու նեղ մի խանդակի մեջ։ Ոչ այնքան խորունկ, մարդու հասակից մի քիչ բարձր խանդակը կես քառորդաչափ լցված էր ջրով։ Տիղմի, փտած տերևների հոտ էր գալիս, զգացվում էր նաև անձրևի անալի, մեղմ-թավիշե բույրը։ Կազակները պպզել էին շինելների փեշերը քշտած, ծխում էին, բաց անում խոստակցությունների գորշ, կտրվող թելը։ Երկրորդ դասակը, բաժանելով մեկնելուց առաջ տրված մախորկայի փայտաբաժինը, կուչ էր եկել ճանապարհի ոլորանին, շրջապատել դասակապետ ուրյադնիկին։ Սա նստել էր հայանի չէ ում թողած լապտերների վրա, պատմում էր անցած երկուշաբթի օրը սպանված գեներալ Կոպիլովսկու մասին, որի բրիգադում նա ծառայել էր դեռ խաղաղ ժամանակ։ Նա չվերջացրեց պատմությունը, որովհետև դասակապետ սպան բղավեց՝ «Հրացանի՛», ու կազակները վեր թռան. մատները վառելով՝ ագահությամբ ծխում էին փաթաթված ծխախոտի մնացորդները։ Հարյուրյակը խանդակից դուրս եկավ սոճու մթնող անտառը։ Քայլում, կատակներով սիրտ էին տալիս միմյանց։ Մեկը սուլում էր։

Մի փոքրիկ բացատում դիակների մի երկար շարանի հանդիպեցին։ Դրանք ընկած էին իրար կողքի, ուս-ուսի տված, այլևայլ, տեղ-տեղ անվայել ու սարսափելի պոզաներով։ Հենց այդտեղ էլ ետ ու առաջ էր քայլում հրացանով և կողքից, գոտուց կախած հակագազով մի զինվոր։ Դիակների մոտ ճմռթված էր խիտ, թաց հողը, երևում էին շատ ոտների հետքերը, խոտի վրա — սայլի անիվների թողած խոր սպիները։ Հարյուրյակը քայլում էր դիակներից մի քանի քայլ հեռավորությամբ։ Դրանցից արդեն լեշի ծանր, քաղցրավուն հոտ էր գալիս։ Հարյուրյակի հրամանատարը կանգնեցրեց կազակներին ու դասակապետ սպաների հետ մոտեցավ զինվորին։ Նրանք ինչ-որ խոսում էին։ Այդ ժամանակ կազակները, խախտելով շարքերը, մոտեցան դիակներին, հանեցին գլխարկները, դիտեցին սպանվածների մարմինները թաքուն, դողդոջ վախի և գազանային հետաքրքրության այն զգացումով, որ ապրում է ամեն մի կենդանի արարած մեռածի գաղտնիքի հանդեպ։ Բոլոր սպանվածներն էլ սպաներ էին։ Կազակները հաշվեցին նրանց, դուրս եկավ քառասունյոթ հոգի։ Նրանց մեծամասնությունը երիտասարդներ էին, դատելով նրանց տեսքից, 20-ից մինչև 25 տարեկան, միայն աջ կողմից վերջինն էր տարիքավոր, նա շտաբս-կապիտանի ուսադիրներ ուներ։ Նրա լայն բացված բերանի վրա, որ թաքցրել էր վերջին ճիչի համար հնչյունները, տխուր կախվել էին խիտ, սև բեղերը, մահից սպիտակած դեմքի վրա մռայլվել, ցրիվ էին եկել լայն հոնքերը։ Սպանվածներից ոմանք ամբողջովին ցեխոտված կաշվե տուժուրկաներով էին, մնացածները — շինելներով։ Երկուսի թե երեքի գլուխներին գլխարկներ չկային։ Կազակներն առանձնապես երկար էին դիտում մի պորուչիկի կերպարանքը, որ մահից հետո էլ գեղեցիկ էր։

Նա ընկած էր մեջքի վրա, ձախ ձեռքը պինդ սեղմվել էր կրծքին, աջ ձեռքում, որ մի կողմ էր տարածված, առմիշտ սեղմված էր նագան ատրճանակի կոթը։ Ըստ երևույթին փորձել էին հանել նագանը. ձեռքի դեղին, լայն դաստակի վրա սպիտակին էին տալիս շանգովածքները, բայց երևում էր, որ պողպատը պինդ էր կպել,— չէր անջատվում։ Բացշիկահեր, գանգուր գլուխը մի կողմ ծռված գլխարկով, ասես գգվանքով, թշի վրա ընկել էր գետնին, իսկ նարնջագույն, մի փոքր կապուտակած շուրթերը տարակուսանքով, տխուր ծռռմռվել էին։ Աջ կողմից նրա հարևանը ընկած էր երեսի վրա, մեջքին սուպպատի նման թմբվել էր շինելը՝ մեջքի կտրված գոտիկով, բացել հուժկու, մկաններով պրկված ոտները՝ կանաչ-շագանակագույն շալվարով ու կարճ, խրոմե սապոգներով, որոնց կրունկները ծռված էին։ Նրա գլխին գլխարկ չկար, գանգի վերին մասն է՛լ չկար,— արկի բեկորը մաքուր կտրել էր այդ մասը. մազերի թաց լուլաներով եզերվող՝ գանգի դատարկ տուփի մեջ պլպլում էր վարդագույն ջուրը,— անձրև էր լցրել։ Նրանից դենը ընկած էր բացված տուժուրկայով ու պատռտված բլուզով մի սպա,— ամրակազմ, առանց դեմքի. ստորին ծնոտը շեղակի կոթնել էր մերկ կրծքին, իսկ մազերից ներքև սպիտակին էր տալիս ճակատի մի նեղ շերտ՝ այրված, խողովակաձև ոլորված մաշկով, ծնոտի և ճակատի վերին մասերի միջև — ոսկորների կտորտանքներ, սև-կարմրավուն, հեղուկ զանգված։ Այնուհետև — վերջավորությունների անփույթ կուտակված կտորներ, շինելի պատռտված մասեր, գլխի տեղում — ջարդված, ճզմված մի ոտը. դրանից էլ դենը — բոլորովին ջահել մի տղա ուռուցիկ շուրթերով ու պատանեկական ձվաձև դեմքով. կուրծքը խոցոտված էր գնդացրային գնդակներով, չորս տեղից ծակծկված էր շինելը, ծակերից դուրս էին ընկել խանձված փաթիլները։

— Սա... սա մեռնելիս ո՞ւմ է կանչել, մո՞րը,— կակազելով, ատամներն իրար զարկելով, հարցրեց Իվան Ալեքսեևիչը, կտրուկ շուռ եկավ, գնաց կույրի նման։

Կազակները հեռանում էին հապճեպորեն, խաչակնքելով և առանց ետ նայելու։ Հետո երկար ժամանակ լռություն էին պահպանում՝ անցնելով նեղ բացատներից, շտապելով վանել

խրենց տեսածին վերաբերող հուշերը։ Հարյուրյակը կանգնեցրին հայտնի չէ ում լքած, դատարկ գետնատների մի խիտ շարանի մոտ։ Սպաները Ջերնոյարյան գնդի շտաբից եկած հանձնատարի հետ մտան մի գետնատուն. շեչոտ Աֆոյնկա Օզերովը միայն այդ ժամանակ, վերցնելով Իվան Ալեքսեևիչի ձեռքը, շշնջաց.

— Այն տղան... վերջինը... երևի դեռ կնկա չէր է՛լ պաչել... Ու մորթեցին, այդ ո՞նց կլինի, հը՞։

— Այդ որտեղի՞ց են դրանց բրդել,— մեջ մտավ Զախար Կորոլյովը։

— Հարձակման էին գնացել։ Մեռելներին պահպանող զինվորն էր ասում,— մի փոքր լռելուց հետո պատասխանեց Բորշչևը։

Կազակներն «ազատ» էին կանգնած։ Անտառում խտանում էր մթությունը։ Քամին քշում էր ամպերը, ու ծվատելով դրանք, բաց էր անում հեռավոր աստղերի կարմրակապույտ կայծերը։

Այդ ժամանակ մի գետնատան մեջ, ուր հավաքվել էին հարյուրյակի սպաները, հրամանատարը ճամփեց հանձնատարին, բացեց նրա բերած ծրարը ու մոմի լույսի տակ ծանոթանալով դրա բովանդակությանը, կարդաց.

Հոկտեմբերի 3-ի լուսաբացին գերմանացիները հեղձուցիչ գազեր գործադրելով, թունավորեցին 250-րդ գնդի երեք գումարտակ ու գրավեցին մեր խրամատների առաջին գիծը։ Հրամայում եմ ձեզ շարժվել մինչև խրամատների երկրորդ գիծը, ու կապ հաստատելով 318-րդ Ջերնոյարյան գնդի առաջին գումարտակի հետ, գրավել երկրորդ գծի տեղամասն այն հաշվով, որ հենց այս գիշեր հակառակորդին դուրս քշեք առաջին գծից։ Ձեր աջ թևում կլինեն երկրորդ գումարտակի երկու վաշտը և 3-րդ գրենադերական դիվիզիայի Ֆանագորյան գնդի մի գումարտակը։

Քննարկելով դրությունը և մի-մի ծխախոտ ծխելով, սպաները դուրս եկան։ Հարյուրյակն առաջ շարժվեց։

Մինչդեռ կազակները հանգստանում էին գետնատների մոտ, չերնոյարցիների առաջին գումարտակը կանխեց նրանց և մոտեցավ Ստոխոդի կամրջին։ Կամուրջը պահպանվում էր գրենադերական գնդերից մեկի գնդացրային մի ուժեղ ուղեկալով։ Ֆելդֆեբելը գումարտակի հրամանատարին բացատ-

բեց իրադրությունը, և գումարտակը, անցնելով կամուրջը, բաժանվեց. երկու վաշտ գնացին դեպի աջ, մեկը — դեպի ձախ, վերջինը գումարտակի հրամանատարի հետ մնաց ռեզերվում։ Վաշտերը գնում էին շղթա կազմած։ Նոսր անտառը փոսերով էր պատած։ Զինվորները քայլելիս ոտներով զգուշությամբ շոշափում էին գետինը, երբեմն մեկնումեկն ընկնում էր, կամացուկ ձայնով մայր հայհոյում։ Աջ թևի ծայրի վաշտում, ծայրից վերցերորդը քայլում էր Վալետը։ «Կրակելու պատրա՛ստ» հրամանից հետո նա հրացանի հրահանին կրակելու դիրք տվեց, քայլեց՝ հրացանը դեպի առաջ պարզած, սվինի ծայրը դիպցնելով թփերին ու սոճիների բնէրին։ Նրա կողքից, շղթայի երկայնքով անցան երկու սպա. նրանք խոսակցում էին զուսպ ձայնով։ Վաշտի հրամանատարը հյութեղ, հնչուն բարիտոնով գանգատվում, ասում էր.

— Վաղուցվա վերքս էլ բացվել է։ Անիծված լինի այն կոճը։ Հասկանո՞ւմ եք, Իվան Իվանովիչ, այս մթության մեջ ես դեմ առա մի կոճղի ու ոտս խփեցի դրան։ Հետևանքը այն եղավ, որ վերքս բացվեց ու ես չեմ կարող քայլել, մնում է ետ դառնալ։— Վաշտապետի բարիտոնը մի րոպե լռեց ու հեռանալով, է՛լ ավելի կամաց հնչեց.— Դուք ձեր վրա վերցրեք առաջին կիսավաշտի հրամանատարությունը, Բոգդանովը կվերցնի երկրորդը, իսկ ես, ը՛մմ... ազնիվ խոսք չեմ կարող։ Ես ստիպված եմ վերադառնալ։

Ի պատասխան լսվեց պրապորշչիկ Բելիկովի խռպոտ, բարալիկ ձայնը։

— Զարմանալի է, հենց որ մարտի ենք գնում, ձեր հին վերքերը բացվում են։

— Ես ձեզ կխնդրեի լռե՛լ, պարոն պրապորշչիկ.— վաշտապետը բարձրացրեց ձայնը։

— Թողե՛ք խնդրեմ, կարող եք վերադառնալ։

Ունկնդրելով իր և ուրիշների քայլերին, Վալետը հետևից հապճեպ թփթփոց լսեց, հասկացավ, որ վաշտի հրամանատարը ետ է գնում։ Իսկ մի րոպեից հետո Բելիկովը ֆելդֆեբելի հետ անցնելով վաշտի ձախ թևը, քրթմնջում էր։

— ... Ստահակներ։ Հենց որ մի լուրջ գործ է լինում, նրանք հիվանդանում են կամ նրանց հին վերքերն են բացվում։ Իսկ դու, նոր թխված պրապորշչիկ, բարեհաճիր առաջ-

նորդե՛լ կիսավաշտը... Սրիկանե՛ր։ Ես դրանց... զինվորները...

Ձայները հանկարծակի լռեցին, ու Վալետը լսում էր միայն ցեխի ճլմփոցն իր ոտների տակ ու ականջների հնչուն զրժոցը։

— Է՛յ, հայրենակից,— ձախ կողմից, խռպոտ շշնջյունով ասաց մեկը։

— Հը՞։

— Գնո՞ւմ ես, հա՞։

— Գը-նում եմ, էլի՛,— պատասխանեց Վալետը, ընկավ ու հետույքի վրա սլլալով իջավ ջրով լեցուն ձագարը — արկի պայթյունից առաջացած փոսը։

— Ամա՛ թե մութն է, հա՛-ա...— լսվեց ձախ կողմից։

Մի րոպե քայլում էին առանց իրար տեսնելու, ու անսպասելիորեն Վալետի հենց ականջի տակ նույն խռպոտ ձայնն ասաց.

— Գնա՛նք կողք-կողքի։ Այնքան էլ երկյուղալի չի լինի...

Դարձյալ լռում էին՝ խոնավ գետնի վրա փոխելով ոտները,— ջրից ուռճացած սապոգները։ Հանկարծ ամպի տակից դուրս սահեց բծավոր կիսալուսինը, ու ձկան պես, փայլեցնելով դեղին թեփուկը, մի քանի վայրկյան ընկղմեց ամպերի հոսուն ալիքների մեջ, ու էլի դուրս գալով, մթնշաղային լույս սփռեց. սոճիների թաց ասեղնատերևները ֆոսֆորային փայլ արձակեցին. այնպես թվաց, թե լույսի տակ փշատերևներն ավելի ուժեղ բուրեցին, թաց գետնին է՛լ ավելի ժանտ ցուրտ փչեց։ Վալետը նայեց հարևանին։ Սա հանկարծակի կանգ առավ, թափահարեց գլուխը՝ ասես հարվածից, բացեց շրթունքները։

— Մտի՛կ, է՛,— կմկմաց նա։

Երեք քայլ հեռավորությամբ, սոճու տակ, ոտները լայն դրած, կանգնել էր մի մարդ։

— Մա՛-ա-րդ է,— ասաց թե միայն ուզեց ասել Վալետը։

— Ո՞վ ես, է՛յ,— հանկարծ հրացանը գեմ անելով ուսին, գոչեց Վալետի կողքից քայլող զինվորը։

— Ո՞վ ես, կրակում եմ...

Սոճու տակ կանգնած մարդը լռում էր։ Նրա գլուխը կախվել էր արևածաղկի գլխիկի նման, թեքվել կողքի։

— Նա քնած է,— ճռճռան քրքիջ արձակեց Վալետը, ու ցնցվելով, բռնազբոսիկ ծիծաղով իրեն սիրտ տալով, առաջ քայլեց։

Նրանք մոտեցան կանգնած մարդուն։ Վալետը նայում էր վիզը երկարած։ Նրա ընկերը հրացանի կոթով շոշափեց անշարժ, գորշ կերպարանքը։

— Է՜, աղբերացու, քնե՞լ ես, ինչ է. է՛յ, հայրենակից,— հեգնանքով ասում էր զինվորը։— Ա՛յ սարսաղ, ձե՛ն հանի, է՛...— զինվորի ձայնը խզվեց։— Մեռե՛լ է, հա՛-ա,— ետ քաշվելով գոչեց նա։

Վալետն ատամներն իրար զարկելով՝ ետ ցատկեց, ու այնտեղ, ուր մի վայրկյան առաջ կանգնած էին նրա ոտները, սղոցած ծառի նման ընկավ սոճու տակ կանգնած մարդը։ Նրանք մեռելի դեմքը վերև դարձրին ու միայն այստեղ գլխի ընկան, որ սոճու տակ իր վերջին ապաստանն էր գտել 256-րդ հետևակ գնդի երեք զումարտակներից մեկի այս զինվորը, որ թունավորվել էր գազերով, փախել մահից, որը խցկվել էր նրա թոքերի մեջ։ Երկարահասակ, լայնաթիկունք այդ տղան ընկել էր գլուխը ետ գցած, ընկնելիս կպչուն ցեխով երեսը ցեխոտած, աչքերը գազից այլանդակված, հեղուկացած. նրա սեղմված ատամներից սև, պլպլան ձողիկի պես դուրս էր ցցվել ուռած, մսոտ լեզուն։

— Գնա՛նք, գնանք, ի սեր աստու։ Թող սա պառկի ու մնա,— շշնջաց Վալետի ընկերը՝ քաշելով Վալետի ձեռքից։

Նրանք գնացին ու էլի մի ուրիշ դիակի հանդիպեցին։ Մեռելներն ավելի և ավելի հաճախ էին հանդիպում։ Մի քանի տեղերում մեռելներն իրար գլխի էին թափված, ոմանք քարացել էին պպզած տեղերում, ոմանք էլ չորեքթաթ էին եղել, ասես արածում էին, իսկ խրամատների երկրորդ գիծը տանող խրամուղու մոտ մեկը ընկել էր գունդ ու կծիկ եղած, տանջանքից կծոտած ձեռքը բերանի մեջ պահած։

Անտառով մեկ չպչպացին մոտեցող շղթայի քայլերը։ Առջևից իր սպայի հետ շարժվում էր չեխական հետախույզների խումբը։ Քիչ մնաց, որ նրանք գնդակահարեին գետնատնից դուրս եկող մի զինվորի, որը այնտեղ ուտելիք էր փնտրում։

— Մերոնցից եմ, չե՞ս տեսնում, ինչ է... ես քո...— Վախեցած ճչաց զինվորը՝ տեսնելով իր վրա ուղղված հրացանի սև փողաբերանը։

— Այստեղ մերոնք են,— կրկնեց նա՝ մի մեծ հաց սեղմելով կրծքին, ասես դա երեխա լիներ։

Ենթասպան ճանաչելով Վալետին, թռավ խրամատի վրայից, հրացանի կոթով ուժգին բոթեց նրա մեջքը։

— Մռութդ կչարդեմ, քթիցդ արյուն կբերեմ, հա՛-ա։ Ո՞ր տեղ էիր։

Վալետը քայլում էր հոգեպես մեղմացած, ուժասպառ, նույնիսկ հարվածը պատշաճ ազդեցություն չգործեց նրա վրա։ Ճոճվելով, նա ենթասպային ապշեցրեց իրեն ո՛չ հատուկ բարեսիրտ պատասխանով.

— Առաջ էի գնում։ Իսկ դու խփելուց ձեռ քաշի։

— Իսկ դու մի՛ պտույտ դա շան պոչի նման։ Մեկ ետ ես մնում, մեկ առաջ վազում։ Չգիտե՞ս ծառայությունը, ինչ է։ Առաջին տարի՞ն է, հը՞։— Մի փոքր լռելով՝ հարցրեց.— Թուն-թուն-մութուն կա՞։

— Կա, ամա փշրված է։

— Թափ տուր։

Ենթասպան ծխեց, անցավ դասակի հետևը։

Դեռ լուսաբացից առաջ հետախույզ չեխերը հանդիպեցին գերմանական դիտողական պոստին։ Գերմանացիները համազարկով ճեղքեցին լռությունը։ Հավասար ընդմիջումներով էլի երկու համազարկ տվին։ Խրամատների վերևում դեպի վեր թռավ մի կարմիր հրթիռ, հնչեցին ձայները, օդում դեռ չէին մարել հրթիռի ծիրանագույն կայծերը, երբ գերմանացիների կողմից սկսվեց հրետանային հրակոծությունը։

Բո՞ւ-ում, բո՞ւ-ում,— ու հասնելով առաջին որոտընդոստ հարվածներին, էլի երկու անգամ որոտացին կրակոցները,— բո՞ւ-ում, բո՞ւ-ում։

Քլե-կլե-կլե-կլե-վըզզ-ի-ի՜,— հետզհետե սաստկացող ուժով շառաչեցին արկերը, գայլիկոնի նման ծակելով օդը, աղմկալից թռչելով առաջին կիսավաշտի զինվորների գլխավերևից. մի ակնթարթ լռություն, ու հեռվում, Ստոխոդի գե-

տանցի մոտ պայթյունների թեթևացուցիչ որոտմունք,— տրա՜խկ... տրա՜խկ...

Շղթան, որ գնում էր չեխ հետախույզների հետևից, նրանից մի քառասուն սաժեն հեռավորությամբ, առաջին իսկ համազարկից հետո պառկեց։ Հրթիռը ալ-կարմիր ցոլք նետեց դեպի վեր. նրա լույսի տակ Վալետը տեսնում էր, թե ինչպես զինվորները մրջյունների նման սողում էին թփերի ու ծառերի միջև՝ արդեն էլ չխորշելով ցեխոտ գետնից, այլ սեղմվելով դրան, պաշտպանություն փնտրելով։ Մարդիկ շարժվում էին յուրաքանչյուր փոսի մոտ, տափում երկրի կեղևի յուրաքանչյուր փոքրիկ ծալքի տակ, գլուխները խոթում ամեն մի փոսիկի մեջ։ Եվ այնուամենայնիվ, երբ մայիսյան տարափի նման անտառով մեկ կատաղի տեղաց, աղմկեց գնդացրային ճարճատուն կրակը,— էլ չդիմացան. սողացին դեպի ետ, գլուխները հնարավորին չափ ուսերի մեջ պահած. թրթուրների նման կպչում էին գետնին, շարժվում առանց ոտներն ու ձեռները ծալելու, սողում օձի նման, ցեխի մեջ հետքեր թողնում... Ոմանք վեր էին թռչում ու վազում։ Անտառով մեկ, կտրատելով փշատերևները, տաշտշելով սոճիները, օձի ֆշշոցով գետնի մեջ թաղվում, սլանում, ճպճպում ու տրաքում էին պայթուցիկ գնդակները։

Երբ վերադարձան խրամատների երկրորդ գիծը, առաջին կիսավաշտից պակասել էր տասնյոթ մարդ։ Մոտիկ տեղում շարափոխվում էին հատուկ հարյուրյակի կազակները։ Նրանք գնում էին առաջին կիսավաշտի աջ կողմից, գնում էին զգուշությամբ, ու թերևս գերմանացիներին հանկարծակիի բերին՝ նախապես կոտորելով ժամապահներին,— բայց երբ համազարկ տրվեց հետախույզ չեխերի վրա, գերմանացիները տագնապեցին ամբողջ ճակատամասում։ Աննպատակ կրակելով, սպանեցին երկու կազակ, մեկին էլ վիրավորեցին։ Կազակները վիրավորին ու սպանվածներին բերին իրենց հետ, ու շարք կանգնելով, խոսքեր էին փոխանակում.

— Պետք է թաղել սրանց։

— Առանց մեզ էլ կթաղեն։

— Այստեղ պետք է կենդանի մարդկանց մասին մտածել, իսկ մեռածներին քիչ բան է հարկավոր։

Կես ժամից հետո գնդի շտաբից հրաման ստացվեց՝ «Հրամայում եմ գումարտակին կազակական հատուկ հարյուրյակի հետ միասին հրետանային նախապատրաստությունից հետո գրոհել հակառակորդի վրա և նրան դուրս մղել խրամատների առաջին գծից»։

Թույլ նախապատրաստությունը տևեց մինչև ցերեկվա տասներկուսը։ Կազակներն ու զինվորները պոստեր կարգելով, հանգստանում էին գետնատներում։ Կեսօրին գրոհ տվին։ Ձախ կողմում, գլխավոր ճակատամասում որոտում էր թընդանոթաձգությունը. այնտեղ նորից հարձակվում էին։

Աջ թևի ծայրում գտնվում էին Անդրբայկալյան կազակները, ավելի ձախ՝ Չերնոյարյան գունդը կազակական հատուկ հարյուրյակի հետ, նրանցից դենը՝ Ֆանագորյան գրենադերական գունդը, ավելի հեռու՝ Չեմբարյան, Բուգուլմինյան, 208-րդ հետևակային, 211-րդ հետևակային, Պավլոգրադյան, Վենգրովյան գնդերը. 53-րդ դիվիզիայի գնդերը հարձակվում էին կենտրոնում. ամբողջ ձախ թևը բռնել էր 2-րդ Թուրքեստանյան հրաձիգ դիվիզիան։ Որոտում էր ամբողջ ճակատամասը. ռուսներն ամենուրեք հարձակվում էին։

Հարյուրյակը գնում էր նոսր շղթայով։ Նրա ձախ թևը կից էր չերնոյարցիների աջ թևին։ Հազիվ էր երևացել խրամատների պատվարի թումբը, երբ գերմանացիները մրրկային կրակ բացեցին։ Հարյուրյակը վազում էր առանց աղաղակելու. պառկում էին, դատարկում հրացանների պահեստատուփերը ու նորից վազում։ Վերջնականապես պառկեցին խրամատներից հիսուն քայլ հեռավորությամբ։ Կրակում էին առանց գլուխները բարձրացնելու։ Գերմանացիներն ամբողջ գծի վրա գցեցին ուղեփակ գերաններ՝ ցանցավոր փշալարերով։ Աֆոյնկա Օզեռովի նետած երկու նռնակները պայթեցին ցանցին դիպչելուց ու ետ թռչելուց հետո։ Նա մի փոքր բարձրացավ, ուզում էր նետել երրորդը, բայց գնդակը խփեց նրա ձախ ուսից ներքև, դուրս եկավ հետույքի անցքի կողքից։ Քիչ հեռու պառկած Իվան Ալեքսեևիչը տեսավ, թե ինչպես Աֆոյնկան թեթև դողացրեց ոտները ու սսկեց։ Սպանեցին Պրոխոր Շամիլին,— թևը կտրած Ալեքսեյի եղբորը. երրորդն ընկավ նախկին ատաման Մանիցկովը, ու գնդակն իսկույն խփեց

Շամիլների ծուռոտանի, քյաքուլավոր հարևանին՝ Եվլանտի Կալինինին։

Երկրորդ դասակից կես ժամում ընկավ ութ մարդ։ Սպանեցին յասավուլին,— հարյուրյակի հրամանատարին, երկու դասակապետ սպաներին, ու հարյուրյակն առանց հրամանի դեպի ետ սողաց։ Դուրս գալով կրակի տակից, կազակներն իրար գլխի հավաքվեցին. մարդկանց կես մասը պակասում էր։ Ետ քաշվեցին նաև չերնոյարցիները։ Առաջին գումարտակի կորուստներն է՛լ ավելի մեծ էին, բայց, չնայելով դրան, գնդի շտաբից հրաման եկավ. «Անմիջապես վերսկսել գրոհը, ինչ կերպ էլ լինի հակառակորդին դուրս մղել խրամատների առաջին գծից։ Ելման դիրքը վերականգնելու հաջողությունից է կախված ամբողջ գծի գործողության վերջնական հաջողությունը»։

Հարյուրյակը նոսր շղթա կազմեց։ Էլի գրոհ տվին։ Գերմանացիների ջախջախիչ կրակի տակ պառկեցին խրամատներից հարյուր քայլ հեռավորությամբ։ Դարձյալ սկսեցին հալչել զորամասերի կադրերը, ու խելակորույս մարդիկ կպչում էին գետնին, պառկում առանց գլուխները բարձրացնելու, առանց շարժվելու, մահվան սարսափով բռնված։

Իրիկնադեմին չերնոյարցիների երկրորդ կիսավաշտը ընկրկեց ու փախավ։ «Շրջապատում են»,— այս աղաղակը հասավ կազակներին։ Ոտքի ելան, ետ քաշվեցին՝ ճզմելով թփուտը, ընկնելով, կորցնելով զենքերը։ Վազ տալով անվրտանգ մի տեղ, Իվան Ալեքսեևիչը ընկավ արկից ջարդված մի սոճու տակ, շունչ առավ ու այստեղ տեսավ իրեն մոտեցող Գավրիլա Լիխովիդովին։ Սա քայլում էր ոտները հարբածի նման դես-դեն գցելով, աչքերը գետնին հառած, մի ձեռքով ինչ-որ բան էր բռնում օդի մեջ, մյուսով ասես դեմքից քշում անտեսանելի մի սարդոստայն։ Նրա ձեռքին ոչ հրացան կար, ոչ էլ թուր, քրտնքից թրջված, մուգ-շիկագույն, ուղիղ մազերը կախվել էին աչքերի վրա։ Անցնելով բացատը, նա մոտեցավ Իվան Ալեքսեևիչին։ Կանգ առավ, թափառուն-տարտամ, շլդիկ հայացքը մեխեց գետնին։ Ծնկները մի քիչ դողում էին, ծռվում, ու Իվան Ալեքսեևիչին թվում էր, թե Լիխովիդովը պըպզզում է կարծես վերև թռչելու համար։

— Ահա... տեսնո՞ւմ ես...— սկսեց նա՝ փորձելով մի

բան ասել, բայց Լիխովիդովի դեմքը ցնցվեց ջղաձգությունից։

— Կա՛ց,— ճչաց վերջինը ու պպզեց, չռեց մատները, վախեցած նայեց շուրջը.— լսիր, ես հիմի մի երգ եմ երգելու։ Աստծո թռչնակը թռավ, մոտեցավ բվին, ասաց.

Ասա, իմ բվիկ, Կուպրեյանովնա,
Ո՞վ է քեզնից մեծ, քեզնից էլ խոշոր։
Արծիվն ահա՝ թագավոր,
Ահա և ցինը՝ մայոր,
Մկնաբազեն՝ յասավուլ,
Հավփալները՝ ուրալցիներ,
Դոխերն՝ ատամանցիներ,
Կկունները՝ գծայիններ[1]
Սարյակները՝ կալմիկներ,
Ագռավները՝ գնչուհիներ,
Անծեղները՝ տիկիններ,
Դորշ բադիկը՝ հետևակ,
Այծերը՝ մոլդավ կանայք...

— Սպասիր,— Իվան Ալեքսեևիչը գունատվեց,— Լիխովիդով, ի՞նչ է պատահել քեզ... Դու հիվա՞նդ ես, հը՞։

— Մի՛ խանգարի,— Լիխովիդովը բարկությունից կարմրեց ու դարձյալ շրթունքների վրա սահեցնելով անիմաստ ժպիտը, նույն ահավոր ռեչիտատիվով շարունակեց.

Այծերը՝ մոլդավ կանայք,
Արոսները՝ սարսաղներ,
Գորտերը՝ կովարարներ,
Սերմնաքաղը՝ հրետանի,
Սև ագռավը՝ սև պառավ,
Ձկնորսները՝ ճվողներ...

Իվան Ալեքսեևիչը տեղից վեր թռավ.

— Գնանք, գնանք մերոնց մոտ, թե չէ գերմանացիները կբռնեն մեզ։ Լսո՞ւմ ես։

Նրա ձեռքից պոկելով իր ձեռքը, շտապելով, շրթունքներից տաք լորձունք թափելով, Լիխովիդովը շարունակեց իր ճչոցները.

---

[1] Գծայիններ — գծային զորքեր, որոնք նախանշված են շարքում գործելու համար։

Բլբուլները՝ երաժիշտներ,
Ծիծառները՝ աժդահաներ,
Սևափորիկ՝ տկլոր փորիկ,
Սարավ հավքը՝ հարկահավաք
Ու ճնճղուկը տասնապետ...»

Ու անսպասելի կտրելով ձայնը, երգեց ծորուն, խռպոտ ձայնով։ Ոչ թե երգ, այլ գայլի սաստկացող ոռնոց էր հեղվում նրա բաց բերանից։ Սուր, ժանիքանման ատամների վրա սադափի պես պպզում էր լորձունքը։ Իվան Ալեքսեևիչը սարսափով էր նայում մինչ այդ իր ընկերը եղած մարդու խելագար, շեղադիր աչքերին, նրա գլխին՝ պինդ կպած մազերով ու մոմագույն ականջակոնքերով։ Արդեն մի ինչ-որ կատաղությամբ Լիխովիդովը ոռնում էր.

Ահա փառքի փողն է հնչում,
Դանուբ գետի մյուս կողմում
Մենք հաղթեցինք թուրք-սուլթանին,
Ազատեցինք քրիստոնյային։
Ինչպես մորեխ, մենք անվեհեր
Թռչում էինք սարերն ի վեր,
Դոնի բոլոր կազակները
Գործի դրին բերդանները։
Հավերի պես կկոտորենք,
Փետուրներդ լոկ կթողնենք,
Իսկ ձեր բոլոր պուճուր-մուճուր
Երեխեքին գերի կառնենք։

— Մարտի՛ն, Մարտին, ե՛կ ինձ մոտ,— գոչեց Իվան Ալեքսեևիչը՝ տեսնելով բացատում կաղ-կաղ քայլող Մարտին Շամիլին։

Վերջինս հենվելով հրացանին, մոտ եկավ։

— Օգնիր ինձ, տանենք սրան։ Տեսնո՞ւմ ես,— Իվան Ալեքսեևիչը աչքերով ցույց տվեց խելագարվածին,— տեսնո՞ւմ ես ինչ օրի է հասել։ Արյունը գլուխն է լցվել։

Շամիլը տակի շապիկից կտրած թևքով կապեց իր վիրավորված ոտը. առանց Լիխովիդովին նայելու վերցրեց նրա մի թևը, Իվան Ալեքսեևիչն էլ մյուս թևը, ու գնացին։

Ինչպես մորեխ, մենք անվեհեր
Թռչում էինք սարերն ի վեր...—

Արդեն ավելի կամաց էր բղավում Լիխովիդովը։ Շամիլը հիվանդագին կնճռոտում էր դեմքը, խնդրում նրան.

— Լավ, էլի՛, մի՛ գոռա։ Թո՛ղ, ի սեր Քրիստոսի։ Դու հիմի բոլորովին պրծել ես թռչելուց։ Թո՛ղ, է՛։

Իսկ ձեր բոլոր պուճուր-մուճուր
Երեխեքին գերի կառնենք...

Խելագարը փորձում էր պոկվել կազակների ձեռներից, շարունակում էր երգել ու միայն երբեմն ձեռներով սեղմում էր քունքերը, կրճատացնում ատամները, ու դողացնելով կախ ընկած ծնոտը, ծռում էր խելագարության բուռն մոլուցքով դաղված գլուխը։

IV

Ստոխոդի հոսանքով մի քառասուն վերստ դեպի ներքև մարտեր էին տեղի ունենում։ Երկու շաբաթ անլռելի տնքում էր հրանոթային անընդմեջ դղրդյունը, գիշերները հեռավոր, մանիշակագույն երկինքը տեղ-տեղ լուսավորվում էր լուսարձակների ճառագայթներով, նրանք փայլում էին ծիածանային — աղոտ ցոլքերով. թրթռում, անբացատրելի տագնապով վարակում ա՛յն մարդկանց, ովքեր այստեղից դիտում էին պատերազմի բռնկոցները և հրացոլքերը։

Ճահճոտ ու վայրի մի ճակատամասում տեղավորվել էր 12-րդ կազակական գունդը։ Ցերեկը երբեմն կրակում էին ոչ խորունկ խրամատներում վազվզող ավստրիացիների վրա, գիշերն էլ, ճահճով պաշտպանված, քնում էին կամ թուղթ խաղում. միայն ժամապահներն էին դիտում լույսի նարնջագույն, ահավոր բռնկոցները, որ տեղի էին ունենում այնտեղ, մարտերի վայրերում, Ստոխոդի հոսանքով քառասուն վերստ դեպի ներքև։

Ճքճքան, սառնամանիքային մի գիշեր, երբ հեռավոր ցոլքերն առանձնապես պայծառ էին լուսավորում երկինքը, Գրիգորի Մելեխովը դուրս ելավ գետնատնից, խրամուղիով գնաց անտառը, որ ճերմակած մազերի նման ցցվել էր խրամատների հետևում, ցածր բլուրի ևս գանգի վրա, ու պառկեց լայ-

նարձակ բուրեղ գետնին։ Գետնատունը լցված էր ծխախոտի ծխով, գարշահոտ էր, ծխախոտի մուգ դարչնագույն ծուխը ծոպազարդ սփռոցի նման կախվել էր սեղանի վրա, որի շուրջը ութ հոգի կազակներ թուղթ էին խաղում, իսկ անտառում, բլուրի գագաթին սուրում է զեփյուռը, որ մեղմ է, ասես մի թռչող, անտեսանելի թռչունի թևերից է փչում. անբացատրելիորեն տխուր են բուրում ցրտերի մեռցրած խոտաբույսերը։ Անտառում, որ այլանդակ կերպով խուզել են արկերը, կուտակվում է մթությունը, երկնքում մարմրում է Բազումքի ծխոտ խարույկը, Մեծ Արջը պառկել է Ծիր Կաթինի կողքին ինչպես շուռ ված մի սայլ շեղակի ցցված առեղով, միայն հյուսիսում համաչափ, պսպղուն լույս է արձակում Բևեռային աստղը։

Գրիգորին աչքերը կկոցած նայում էր դրան, ու աստղի պաղ լույսից, որ պայծառ չէր, բայց սուր ծակում էր աչքերը, արտևանունքների տակ նույնպիսի պաղ արցունքներ էին ցոլում։

Այստեղ, բլուրի վրա պառկած, նա չգիտես ինչու վերհիշեց այն գիշերը, երբ Նիժնի-Յաբլոնովսկի խուտորից գնում էր Յագոդնոյե, Ակսինյայի մոտ. խոցող ցավով վերհիշեց նաև Ակսինյային։ Հիշողությունը քանդակեց անպարզ, ժամանակի ձեռքով ջնջված, անսահմանորեն սիրելի և օտար դիմագծերը։ Հանկարծակի ուժգին բաբախող սրտով նա փորձեց վերականգնել այդ դեմքն այնպես, ինչպես տեսել էր վերջին անգամ, ցավից աղճատված, մտրակի կարմիր հետքը թշին,— բայց հիշողությունը համառորեն պատկերում էր մի այլ դեմք, մի փոքր կողքի թեքված, հաղթականորեն ժպտացող։ Ահա նա չարաճճիորեն ու սիրաբար շուռ է տալիս գլուխը, ներքևից խոցում հրաբորբ, սև աչքերի նայվածքով, ինչ-որ անպատմելիորեն փաղաքուշ, ջերմ բան են շշնջում անպարկեշտորեն ագահ, կարմիր շուրթերը, ու դանդաղ մի կողմ է դարձնում հայացքը, շուռ է գալիս, թուխ պարանոցի վրա — երկու խոշոր, ճոխ խոպոպ... Գրիգորին մի ժամանակ այնպե՞ս էր սիրում համբուրել այդ խոպոպները...

Գրիգորին ցնցվում է։ Նրան թվում է, թե մի վայրկյան զգաց Ակսինյայի մազերի փշախնձորային, նրբագույն բուրմունքը. ամբողջովին կորանալով, նա ուռցնում է ռունգները, բայց... ո՛չ, դա երկար մնացած սաղարթի հուզիչ բույրն է։ Մարում, աղոտանում է Ակսինյայի երկարավուն դեմքը։ Գրիգորին փակում է աչքերը, ձեռները դնում գետնի անհարթ մաշկին ու երկար, անթարթ նայում, թե ինչպես ջարդված սոճուց դենը, երկնքի ծայրամասում, կապույտ, շքեղազարդ թիթեռի նման, անշարժ թռիչքով երերվում է Բևեռային աստղը։

Անկապ հուշերի առանձին բեկորները մթագնում էին Ակսինյայի կերպարը։ Գրիգորին հիշեց այն շաբաթները, որ անց էր կացրել Տատարսկի խուտորում, իրենց ընտանիքում, Ակսինյայի հետ իր հարաբերությունները կտրելուց հետո. գիշերները — Նատալյայի ագահ, ավերիչ փայփայանքները. Նատալյան կարծես աշխատում էր հատուցել իր առաջվա աղջկական սառնության համար. ցերեկները — ընտանիքի ուշադիր, համարյա քծնող վերաբերմունքը, պատիվ, որով խուտորցիները դիմավորում էին առաջին գեորգևյան շքանշանակրին։ Ամենուրեք, նույնիսկ ընտանիքում Գրիգորին նկատում էր զարմանքով ու հարգանքով լեցուն, ծածուկ հայացքները. նրան այնպես էին նայում, որ կարծես չէին հավատում, թե նա հենց այն Գրիգորին է, երբեմնի կամակոր և ուրախ տղան։ Հրապարակում ծերունիները զրուցում էին նրա հետ ինչպես իրենց հավասար մարդու հետ, հանդիպելիս ի պատասխան նրա բարևի վերցնում էին գդակները, աղջիկներն ու կնանիքը չթաքցրած հիացմունքով էին դիտում շինել հագած, դրա վրա զոլավոր ժապավենով խաչ կպցրած, քաջատես ու մի փոքր կորացած նրա կերպարանքը։ Նա տեսնում էր, որ Պանտելեյ Պրակոֆևիչը իր հետ քայլելով դեպի եկեղեցին կամ հրապարակ, պարզապես հպարտանում էր իրենով։ Ու շողոքորթության, պատկառանքի, հիացումի այդ ամբողջ բարդ, նրբին թույնը հետզհետե ոչնչացնում, գիտակցությունից դուրս էր մղում այն ճշմարտության սերմերը, որ նրան ներշնչել էր Գարանժան։ Ա՛յն Գրիգորին, որ այժմ գնաց տնից, բոլորովին ա՛յլ մարդ էր, քան ա՛յն Գրիգորին, որ եկել էր ռազմաճակատից։ Յուր սեփականը, կազակականը, որ նա ծծել էր մոր կաթի հետ և որը փայփայվել էր ամբողջ կյանքի ընթացքում, հաղթահարեց մարդկայինին մեծ ճշմարտությանը։

— Ես գիտեի, Գրիշկա,— հրաժեշտի ժամանակ ասում

էր խմած Պանտելեյ Պրակոֆիևիչը, ու հուզվելով՝ շփում էր արծաթե, տեղ-տեղ սև մազերը,— վաղուց գիտեի, որ քեզանից լավ կազակ դուրս կգա։ Երբ որ դու մի տարեկան դարձար, ես, կազակական վաղուցվա սովորության համաձայն, քեզ տարա բակը,— հիշո՞ւմ ես, ա՜ կնիկ,— ու նստեցրի ձիուն։ Դու էլ, շա՜ն տղա, թաթիկներովդ բռնեցիր նրա բաշից... Դեռ այն ժամանակ ես միտք արի, որ դու կարգին մարդ կդառնաս,— և դարձար։

Գրիգորին ռազմաճակատ մեկնեց որպես լավ կազակ. ներքուստ չհաշտվելով պատերազմի անիմաստության հետ, նա ազնվորեն էր պահպանում իր կազակական փառքը...

Հազար ինն հարյուր տասնհինգ թվական։ Մայիս։ Օյլխովչիկ գյուղի մոտ, մարգագետնի վառ-կանաչ գորգի վրայով հետիոտն շարքով հարձակվում է գերմանական 13-րդ Երկաթե գունդը։ Ճպուռների նման ճռճռում են գնդացիրները։ Ծանրակշիռ ճարճատում է գետափին պառկած ռուսական վաշտի հաստոցավոր գնդացիրը։ 12-րդ կազակական գունդը կռվի է բռնվում։ Գրիգորին իր հարյուրյակի կազակների հետ շղթայում վազեվազք է կատարում, ու նայելով շուրջը, կեսօրվա երկնքում տեսնում է արևի թեժ սկավառակը և նույնպիսի մի այլ սկավառակ գետնախորշում, որ խավարակալած է դեղնասպիտակ փրփրալիքներով։ Գետից դենը, կաղամախիների հետևում թաքնված են ձիապահները, իսկ առջևում գերմանական շղթան է, սաղավարտների պղնձե արծիվների դեղին փայլը։ Քամին շարժում է կրակոցների մուգ-կապտավուն, օշինդրային ծուխը։

Գրիգորին կրակում է առանց շտապելու, խնամքով նշան է բռնում, ու մի կրակոցից մինչև մյուսը ականջ դնելով նշանոցի թիվը հայտարարող դասակապետի հրամանին, կարողանում է զգուշությամբ դեն գցել բլուրի թեքի վրա սողացող, խայտաբղետ զատիկ միջատը։ Այնուհետև գրոհ... Գրիգորին հրացանի երկաթած կոթով խփում, գետնին է գլորում բարձրահասակ գերմանական լեյտենանտին, գերի է վերցնում գերմանական երեք զինվոր, ու նրանց գլուխների վերևից կրակելով, ստիպում է վազ տալ դեպի գետը։

Ռավա-Ռուսսկայայի մերձակայքում 1915 թվականի հուլիսին կազակների մի դասակով ետ է վերցնում ավստրիացիների գրաված կազակական մի մարտկոց։ Նույն տեղում կռվի ժամանակ անցնում է հակառակորդի թիկունքը, ձեռքի գընդացրից կրակ է բաց անում, ու հարձակվող ավստրիացիներին ստիպում է փախուստի դիմել։

Անցնելով Բայանեցը, ընդհարման ժամանակ գերի է վերցնում ավստրիական հաստամարմին մի սպայի։ Սրան լայնակի գցում է թամքին ինչպես ոչխար, քշում է ձին՝ ամբողջ ժամանակ զգալով մարդկային կղանքի գարշ հոտը, որ գալիս էր սպայից, ու վախից քրտնակալած, չաղ մարմնի դողը։

Ու Գրիգորին, բլուրի սև, մերկ կատարին պառկած, առանձնապես պարզ կերպով հիշեց այն դեպքը, երբ հանդիպել էր իր դաժան թշնամուն՝ Ստեփան Աստախովին։ Դա եղավ այն ժամանակ, երբ 12-րդ գունդը հանեցին ռազմաճակատից ու նետեցին Արևելյան Պրուսիա։ Կազակական նժույգները սմբակներով կոխոտում էին խնամքով մշակված գերմանական դաշտերը, կազակները վառում էին գերմանական բնակավայրերը։ Նրանց անցած ճանապարհին փովում էր կարմրավուն ծուխը ու մարմրում էին պատերի ածխացած ավերակները և կղմինդրե, ճաքճքված կտուրները։ Ստոլիպին քաղաքի մոտ գունդը հարձակման էր գնում Դոնի 27-րդ կազակական գնդի հետ միասին։ Գրիգորին հարևանցիորեն տեսավ նիհարած եղբորը, մաքուր սափրված Ստեփանին ու իրենց խուտորի մյուս կազակներին։ Մարտում գնդերը պարտություն կրեցին։ Գերմանացիները շրջապատեցին նրանց, ու երբ տասներկու հարյուրյակները իրար հետևից գրոհի նետվեցին թշնամու սեղմվող օղակը ճեղքելու նպատակով, Գրիգորին տեսավ, թե ինչպես Ստեփանը իր տակին սպանված սևաթույր ձիուց թռավ գետին ու պտտվեց ֆռիկի նման։ Գրիգորին հանկարծակի ու ցնծագին վճռականությամբ խարկված, դժվարությամբ կանգնեցրեց իր ձին, ու երբ վերջին հարյուրյակը, հազիվ ոտնատակ չտալով Ստեփանին, սլացավ նրանց կողքից, նա ձին քշեց դեպի Ստեփանը, բղավեց.

— Բռնիր իմ ասպանդակից։

Ստեփանը ասպանդակի փոկն ամուր բռնած, կես վերստի չափ վազում էր Գրիգորիի ձիու կողքից։

— Շատ արագ մի գնա, մի՛ վռազի, ի սեր Հիսուսի Քրիստոսի,— խնդրում էր նա շնչասպառ։

Նրանք հաջողությամբ դուրս եկան ճեղքվածքից։ Մինչև անտառը, ուր ձիերից իջնում էին հակառակորդի օդակից դուրս արծած հարյուրյակները, մնում էր ոչ ավելի, քան հարյուր սաժեն, բայց այստեղ գնդակը խփեց Ստեփանի ոտին, և նա, կտրվելով ասպանդակից, ընկավ մեջքի վրա։ Քամին պոկեց Գրիգորիի գլխարկը, քյաքուլը գցեց աչքերին։ Գրիգորին ետ գցեց մազերը, նայեց շուրջը։ Ստեփանը կաղալով, վազեվազ մոտեցավ մի թփի, կազակական գլխարկը շպրտեց դրա մեջ, նստեց՝ հապճեպ հանելով կարմիր լամպասներով շալվարը։ Բլրակի տակից վազեվազք էին կատարում գերմանական շղթայի օղակները, ու Գրիգորին հասկացավ, որ Ստեփանն ուզում է կենդանի մնալ, հանում է կազակական շալվարը, որ զինվոր ձևանա. այն ժամանակ գերմանացիները կազակներին գերի չէին վերցնում... Ենթարկվելով իր սրտին, Գրիգորին շուռ տվեց ձին ու քշեց դեպի թուփը, դեռ կանգ չառած՝ թռավ գետին։

— Նստի՛ր...

Գրիգորին չի մոռանա Ստեփանի աչքերի կարճ խաղը։ Օգնեց Ստեփանին, նստեցրեց թամքին, ինքն էլ ասպանդակից բռնած, վազ տվեց քրտնաթոր ձիու կողքին։

— Ցյո՜ւուո՜ւուու...— լսվում էր գնդակի տաք սվսվոցը, ու ականջից դուրս թռչելով, խզվում էր,— յուո՜ւուտ։

Գրիգորիի գլխավերևից, Ստեփանի կավճագույն դեմքի վերևից, կողքերից թռչում էին գնդակները՝ արձակելով այդ ահավոր, խոցող սվսվոցը,— ցյուուո՜ւ-ուտ, ցիյուուու-ուտ, իսկ հետևից—կրակոցների ճայթյուններ, ինչպես ակացիայի չորացած կապիճների ճքճքոցը.

Պո՜ւկ-պաք, պո՜ւկ-պաք։ Տա-տա՜խ-ախ-ա՜խ։

Անտառում Ստեփանը իջավ թամքից, դեմքը ցավից ծռմռելով. թողեց սանձը, կաղալով մի կողմ քաշվեց։ Ձախ սապոգի ճտքի միջից արյուն էր հոսում, ու յուրաքանչյուր քայլն անելիս, երբ վիրավորված ոտն էր գետին դնում, ներքանի տակից բալի գույնի, կարմիր արյան բարակ շիթ էր

բխում։ Ստեփանը հենվեց լայնատարած ճյուղերով մի կաղնու բնին, մատով կանչեց Գրիգորիին։ Սա մոտեցավ։

— Սապոգս լիքը լցվել է արյունով,— ասաց Ստեփանը։

Գրիգորին լռում, մի կողմ էր նայում։

— Գրիշկա՜... այսօր, երբ մենք հարձակվում էինք... Լսո՞ւմ ես, Գրիգորի,— ասաց Ստեփանը՝ փոս ընկած աչքերով փնտրելով Գրիգորիի աչքերը,— երբ հարձակվում էինք, ես հետևից մի երեք անգամ կրակեցի քեզ վրա... աստված քեզ պահեց,— չսպանվեցիր։

Նրանց աչքերն իրար հանդիպեցին։ Փոս ընկած ակնակապիճներից անհանդուրժելի փայլում էր Ստեփանի սուր սրված հայացքը։ Ստեփանը խոսում էր, համարյա առանց թուլացնելու իրար սեղմած ատամները.

— Դու ինձ մահից ազատեցիր... Շնորհակալություն... իսկ Ակսինյայի համար ներել չեմ կարող։ Հոգիս չի հաշտվում... Դու ինձ մի՛ նեղիր, Գրիգորի...

— Ես քեզ չեմ նեղում,— այդ ժամանակ պատասխանեց Գրիգորին։

Նրանք բաժանվեցին առաջվա պես միմյանց հետ անհաշտ...

Ու դարձյալ... Մայիս ամսին գունդը Բրուսիլովի բանակի մնացած զորամասերի հետ Լուցկի մոտ ճեղքեց ճակատը, անցավ թշնամու թիկունքը, հարվածներ տվեց և ինքն էլ հարվածների ենթարկվեց։ Լվովի մոտ Գրիգորին ինքնագլուխ կերպով գրոհի տարավ վաշտը, գրավեց ավստրիական հաուբիցային մի մարտկոց՝ անձնակազմի հետ միասին։ Մի ամսից հետո լողալով անցավ Բուգ գետը՝ «լեզու» բերելու։ Խփեց ու գետին գլորեց պոստի կանգնած ժամապահին, իսկ սա, հաղթանդամ, ամրակազմ մի գերմանացի, փորձում էր աղաղակել ու ոչ մի կերպ չէր ուզում, որ իրեն կապեն։

Գրիգորին ժպտալով հիշեց այդ դեպքը։

Ժամանակը քանի՜-քանի հար և նման օրեր էր ցրիվ տվել վերջին շրջանի ու վաղուցվա մարտերի դաշտերում։ Գրիգորին ամուր էր պահում կազակական պատիվը, անձնուրաց քաջություն ցուցաբերելու առիթ էր փնտրում, ռիսկ անում, խենթությամբ դիմում, շորերը փոխելով անցնում ավստրիացիների թիկունքը, անարյուն գերում ուղեկալները,

ջիրիդ էր խաղում այդ կազակը ու զգում էր, որ անդարձ չքացել է այն ցավակցությունը մարդու նկատմամբ, որ իրեն ճընշում էր պատերազմի առաջին օրերին։ Կոպտացել էր սիրտը, կոշտացել ոնց որ աղուտը երաշտի ժամանակ, ու ինչպես որ աղուտը ջուր չի ծծում, այնպես էլ Գրիգորիի սիրտը ցավակցություն չէր ընդունում։ Սառն արհամարհանքով նա խաղ էր խաղում ուրիշի և իր կյանքի հետ. դրա համար էլ քաջ մարդու համբավ ուներ,— գեորգիևյան չորս խաչ և չորս մեդալ էր ստացել։ Հազվադեպ զորահանդեսների ժամանակ կանգնում էր գնդի դրոշակի մոտ, որը շատ պատերազմների վառոդի ծխով էր օծվել. բայց գիտեր, որ այլև առաջվա պես չի ծիծաղելու. գիտեր, որ աչքերը փոս են ընկել և սուր ցցվել են այտոսկրները. գիտեր, որ իր համար դժվար է երեխային համբուրելիս ուղիղ նայել նրա հստակ աչքերին. գիտեր Գրիգորին, թե ինչով է հատուցել խաչերի լրիվ քանակ ու կոչումներ ստանալու համար։

Նա պառկել էր բլուրի վրա՝ շինելի փեշը կողքի տակ փռած, ձախ թևի արմունկին հենված։ Հիշողությունը պատրաստակամորեն վերակենդանացնում էր անցածը, ու պատերազմի ժլատ, կցկտուր հուշերի մեջ Նրրին, կապույտ թելի նման ներհյուսվում էր որևէ հեռավոր մի դեպք մանկությունից։ Գրիգորին իր մտքի հայացքը մի բոպե սիրով ու տխրությամբ հառում էր դրա վրա, հետո նորից անցնում էր վերջին ժամանակների դեպքերին։ Ավստրիական խրամատներում մեկը վարպետորեն մանդոլին էր նվագում։ Նրրին, հողմավար հնչյունները թռչում էին այնտեղից, անցնում Ստոխոդը, մեղմիվ հածում գետնի վրա, որ հաճախակի ողողվել էր մարդկային արյունով։ Ջենիթում պայծառ շողում էին աստղերը, թանձրանում էր մթությունը, ու ճահճի վրա արդեն չոքում էր կեսգիշերվա մշուշը։ Գրիգորին երկու ծխախոտ ծխեց իրար հետևից, կոշտ փաղաքշանքով շոյեց հրացանի փոկը, ու հենվելով ձախ ձեռքի մատներին, վեր կացավ հյուրընկալ գետնից. քայլեց դեպի խրամատները։

Գետնատանը դեռ էլի թուղթ էին խաղում։ Գրիգորին ընկավ տախտակամածին, ուզում էր հուշերով էլի թափառել վաղուց ծանոթ, վաղեմությունից մամռոտած արահետներում, բայց քունը արբեցրեց նրան. նա քնեց անհարմար դիրքով,

որ ընդունել էր պառկելիս, ու երազում տեսավ չոր քամուց ու երաշտից խանձված, անծայրածիր տափաստանը, անմեռուկի կարմրակապույտ մացառուտները, ձիերի չպայտած սմբակների հետքերը քյաքուլավոր, յասամանագույն ծոթորների մեջ... Տափաստանն ամայի էր, սարսափելի հանդարտ։ Նա, Գրիգորին, քայլում էր կոշտ, ավազախառն գետնի վրայով, բայց իր քայլերը չէր լսում, ու դրանից վրա էր հասնում ահը.. Արթնանալով ու գլուխը քիչ բարձրացնելով, Գրիգորին, որի այտերի վրա շեղակի սպիներ էին առաջացել քնելու անհարմար դիրքից, երկար ճպճպացնում էր շրթունքներն ինչպես այն ձին, որը մի բոպե զգացել ու կորցրել է ինչ-որ խոտաբույսերի արտասովոր բուրմունքը։ Հետո քնեց խոր քնով, առանց երազների։

Մյուս օրը Գրիգորին վեր կացավ անբացատրելի, մաշող տխրությամբ։

— Դու այսօր ինչո՞ւ ես թթվել։ Ստանիցա՞ն ես տեսել երազումդ,— հարցրեց Զուբատին։

— Լա՛վ բռնեցիր։ Երազումս տափաստանը տեսա։ Սիրտս տխրել է... Երանի տանը լինեի։ Զզվել եմ ցարին ծառայելուց։

Զուբատին ներողամտությամբ քմծիծաղ տվեց։ Նա Գրիգորիի հետ շարունակ ապրում էր մի գետնատան մեջ, նրան վերաբերվում այն հարգանքով, որ ուժեղ գազանը տածում է դեպի նույնքան ուժեղը. առաջին գժտությունից հետո, 1914 թվականից նրանց միջև բախումներ չէին եղել, և Զուբատիի ազդեցությունը պարզապես անդրադարձել էր Գրիգորիի բնավորության ու հոգեբանության վրա։ Պատերազմը խիստ փոխել էր Զուբատիի աշխարհայացքը։ Նա դժվարությամբ, բայց անշեղորեն հարում էր պատերազմի ժխտման, երկար խոսում դավաճան գեներալների և ցարական պալատում բուն դրած գերմանացիների մասին։ Մի անգամ էլ թոցրեց բերանից. «Լավ բան մի՛ սպասիր, քանի որ թագուհին ինքը գերմանական ծագում ունի։ Հարմար բոպեին նա կարող է մեզ մի գոռոզով ծախել...»

Մի անգամ Գրիգորին նրան բացատրեց Գարանժայի ուսմունքի էությունը, բայց Զուբատին հավանություն չտվեց դրանն։

— Երգը լավն է, ամա երգողի ձայնը խոպոտ է,— ասաց նա, հեգնաբար ժպտաց՝ ձեռքը թփթփացնելով մուգ-գորշավուն, ճաղատ գլխին։— Դրա մասին է ճառում Միշկա Կոշևոյը, ոնց որ աքլորը ցանկապատի վրայից։ Այդ ռևոլյուցիաներից խեր չկա, հենց միայն օյինբազություն է։ Դու հասկացիր, որ մեզ, կազակներիս, հարկավոր է մե՛ր իշխանությունը և ոչ թե մի ուրիշ իշխանություն։ Մեզ հարկավոր է ուժեղ ցար, ոնց որ Միկոլայ Միկոլայիչն[1] է, իսկ մուժիկների հետ մենք չենք գնա,— սագը խոզին ընկեր չէ։ Մուժիկները ուզում են հող խլել, բանվորը ցանկանում է իրեն ռոճիկն ավելացնել, իսկ մե՞զ ինչ կտան։ Մեր հողը հո քիչ չի։ Բա էլ ի՞նչ է հարկավոր։ Հենց բանն էլ այդ է, որ մեր շարշարանքը զուր է։ Մեր ցարը անպետք է,— մեղքներս ի՞նչ թաքցնենք։ Նրա հերը ավելի խիստ էր, իսկ սա բանն այնտեղ կհասցնի, որ կբարձրանա ռևոլյուցիան ոնց որ հինգ թվին, ու ամեն ինչ գրողի ծոցը կգլորվի, ոնց որ կունտը — սարից։ Այդ մեզ համար ձեռնտու չի։ Թե որ, աստված չանի, վռնդեն ցարին, մեզ էլ կհասնեն։ Հին ոխը մեջտեղ կբերեն, կսկսեն կտրել մեր հողը ու տալ մուժիկներին։ Ականջներս պետք է սուր պահենք...

— Դու միշտ էլ միակողմանի ես մտածում,— մռայլվեց Գրիգորին։

— Դատարկ բան ես ասում։ Դու հլա ջահել ես, ընկածելած չես։ Հլա կաց, քեզ ավելի շատ կսխկեն, այն ժամանակ կիմանաս, թե ով է դուզ խոսում։

Խոսակցությունները սովորաբար դրանով էլ վերջանում էին։ Գրիգորին լռում էր, իսկ Զուբատին աշխատում էր որևէ կողմնակի բանի մասին խոսել։

Այն օրը Գրիգորիի համար անախորժ մի դեպք կատարվեց։ Կեսօրին, ինչպես միշտ, ժամանեց դաշտային խոհանոցը ու կանգ առավ բլուրի մյուս կողմում։ Կազակները մեկ-

[1] Նիկոլայ Նիկոլաևիչ (1856—1929) — մեծ իշխան, առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ փախավ արտասահման, ուր պաշտպանություն գտնելով Վրանգելի ու միապետականների մեծ մասի կողմից, ռուսական գահի «հավակնորդներից» մեկն էր։

մեկուց առաջ անցնելով, խրամուղիների միջով շտապեցին դեպի խոհանոց։ Միշկա Կոշևոյը գնաց երրորդ դասակի համար կերակուր բերելու։ Բերեց երկար ձողից քարշ արած, գոլորշի արձակող լիքը կաթսայիկները ու հենց որ մտավ գետնատուն, բղավեց.

— Տղերք, այսպես չի կարելի։ Մենք հո շուն չե՞նք։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Զուբատին։

— Լեշով են մեզ կերակրում,— վրդովված գոչեց Կոշևոյը։

Նա գլխի թափահարումով ետ գցեց ոսկեմազ քյաքուլը, որ նման էր վայրի գայլուկից հյուսած փնջին, ու, կաթսայիկները դնելով տախտակամածի վրա, շեղակի նայելով Զուբատիին, առաջարկեց.

— Հոտ քաշիր, տես ինչ հոտ է գալիս շչիից։

Զուբատին թեքվելով իր կաթսայիկի վրա, շարժում էր պնչները, ծռմռում դեմքը, ու ակամայից նրան նմանվելով, Կոշևոյն է՛լ շարժում էր պնչները, կնճռոտում գունատ դեմքը։

— Միսը հոտած է,— ասաց Զուբատին։

Նա զզվանքով դեն դրեց կաթսայիկը, նայեց Գրիգորիին։

Վերջինս թափով վեր կացավ տախտակամածից, շչիի վրա կախեց առանց այն էլ կախ քիթը, ետ քաշվեց, ու ոտի ծույլ շարժումով գետին գլորեց առջևի կաթսայիկը։

— Ինչո՞ւ այդպես արիր,— անվճռականորեն ասաց Զուբատին։

— Բա չե՞ս տեսնում թե ինչու։ Մտի՛կ արա։ Թե՞ դու քոռ ես։ Սա ի՞նչ է,— Գրիգորին ցույց տվեց գետնին թափված պղտոր հեղուկը։

— Օ՛-հո-ո... ճիճունե՛ր են... Վա՛յ, մերա՛ ջան... Ես ո՛նց չտեսա... Ա՛յ քեզ ճա-ա՛շ։ Սա ոչ թե շչի է, այլ էրիշտով սուպ... էրիշտայի տեղ... ճիճու-միճու։

Հատակի վրա, պղտոր-կարմրավուն մսակտորի կողքին, ճարպաբծերի կլորակներում ընկել էին եփված, սպիտակ, ուռուցիկ-ծնկաձև որդերը։

— Մեկ, երկու, երեք, չորս...— չգիտես ինչու շշնջալով հաշվում էր Կոշևոյը։

Մի բոպեի չափ լուռ էին։ Գրիգորին թքում էր ատամների միջից։ Կոշևոյը մերկացրեց թուրը, ասաց.

— Հիմի եկեք ձերբակալենք այս շչին, որ քարշ տանք հարյուրյակի հրամանատարի մոտ։

— Հը՛մ, լա՛վ ասացիր,— հավանություն տվեց Զուբատին։

Նա հանեց հրացանի սվինը, ասաց.

— Մենք կտանենք շչին, իսկ դու, Գրիշկա, պետք է գաս մեր հետևից։ Հարյուրյակի հրամանատարին զեկույց կտաս։

Զուբատին ու Միշկա Կոշևոյը տանում էին սվինից կախած, շչիով լիքը կաթսայիկը, թրերը պատյաններից հանած։ Հետևից նրանց ուղեկցում էր Գրիգորին, իսկ սրա հետևից էլ զիգզագաձև խրամներով գորշ-կանաչավուն ալիքների նման շարժվում էին գետնատներից դուրս թափված կազակները։

— Ի՞նչ է պատահել։

— Տագնա՞պ է։

— Կարելի է լո՞ւր է եկել հաշտության մասին, հը՞։

— Ի՞նչ հաշտություն, է՛, քո փայը շատ չի՞ լինի։

— Ճիճվոտ շչին ենք ձերբակալել։

Զուբատին ու Կոշևոյը կանգ առան սպաների գետնատան մոտ։ Գրիգորին կռանալով, ձախ ձեռքով գդակը պահած, մտավ «աղվեսի բույնը»։

— Մի՛ բոթի, է՛,— թունդ բարկացավ Զուբատին՝ նայելով հետևից իրեն հրող կազակին։

Հարյուրյակի հրամանատարը դուրս եկավ շինելը կոճկելով, տարակուսանքով ու մի փոքր անհանգստացած նայելով Գրիգորիին, որը գետնատնից վերջինը դուրս եկավ։

— Ի՞նչ է պատահել, տղերք,— հրամանատարի հայացքը սահեց կազակների գլուխների վրայով։

Գրիգորին անցավ նրա առաջը, ընդհանուր լռության մեջ պատասխանեց.

— Ձերբակալվածին ենք բերել։

— Ի՞նչ ձերբակալված։

— Հրե՛ս...— Գրիգորին ցույց տվեց շչիով լեցուն կաթսայիկը, որ դրված էր Զուբատու ոտների մոտ։— Սա՛ է ձերբակալվածը... Հոտ քաշեք, տեսեք ինչով են կերակրում ձեր կազակներին։

Նրա հոնքը ծռմռվեց անհավասար եռանկյունու ձևով ու թեևակի դողալով, շտկվեց։ Հարյուրյակի հրամանատարը

խորազնին հայացքով հետևում էր Գրիգորիի դեմքի արտահայտությանը. մռայլվելով, հայացքը դարձրեց կաթսայիկի վրա։

— Սկսել են լե՛շ ուտեցնել,— տաքացած բղավեց Միշկա Կոշևոյը։

— Փոխե՛լ պահեստապետին։

— Իժի մե՛կը...

— Շան որդին հենց մենակ իրեն փորն է տոզացրել։

— Նա եղան պլոճիկներով շչի է լափում...

— Իսկ մեզ ճիճուներով են տալի,— վրա բերին մոտիկ կանգնածները։

Հարյուրյակի հրամանատարը սպասեց, մինչև որ հանդարտվեր ձայների դժժոցը, ու կտրուկ ասաց.

— Կա-մա-ա՛ց։ Հիմա լռե՛լ։ Ամեն ինչ ասված է։ Հենց այսօր փոխում եմ պահեստապետին։ Կնշանակեմ հանձնաժողով՝ նրա արարքները քննելու համար։ Եթե միսն անորակ է...

— Դատի՛ տալ նրան,— գոչեցին հետևից։

Բղավոցների նոր ալիքը ծածկեց հարյուրյակի հրամանատարի ձայնը։

Պահեստապետին փոխելը կատարվեց ճանապարհին։ Այն պահից, երբ բունտ բարձրացրած կազակները ձերբակալեցին շչին ու բերին հարյուրյակի հրամանատարի մոտ, ընդամենը մի քանի ժամ էր անցել, երբ 12-րդ գնդի շտաբը հրաման ստացավ դուրս գալ դիրքերից և հրամանին կցված մարշրուտի համաձայն երթակարգով գնալ Ռումինիա։ Գիշերը սիբիրյան հրաձիգները փոխարինեցին կազակներին։ Ռինվիչի ավանում գունդը վերցրեց ձիերը ու առավոտյան արագ թափով մեկնեց Ռումինիա։

Զորական խոշոր միավորումներ էին փոխադրվում շարունակ պարտություն կրող ռումիններին օգնելու համար։ Այդ երևում էր թեկուզ հենց նրանից, որ երթի առաջին իսկ օրը ձեռնունայն վերադարձան բնակարաններ գտնելու համար ուղարկված մարդիկ, որոնք գնացել էին մի գյուղ, ուր երթային ցուցակի համաձայն, պետք է գիշերեր գունդը. գյուղը լեփ-լեցուն էր հետևազորով ու հրետանիով, որը նույնպես փոխադրվում էր դեպի ռումինական սահմանը։ Բնակա-

բաններով ապահովելու համար գունդը ստիպված եղավ Էլի ուժ վերստ ճանապարհ անցնել։

Տասնյոթ օր գնում էին։ Ձիերը նիհարում էին կերի պակասությունից։ Պատերազմից ավերված ճակատամերձ գոտում կեր չկար. բնակիչները կամ փախել էին Ռուսաստանի խորքը կամ թաքնվել անտառներում. բաց խրճիթները մռայլ կերպով սևին էին տալիս իրենց մերկ պատերով, ամայացած փողոցում կազակները հազվադեպ էին տեսնում որևէ նոթոտ, սարսափահար բնակիչ, ու սա էլ, տեսնելով սպառազեն մարդկանց, շտապում էր անհայտանալ։ Կազակները, որոնք հոգնած ու տանջված էին անդադար երթից, մրսած ու չարացած իրենց վրա, ձիերի վրա, այն ամենի վրա, ինչ որ ստիպված էին տանել,— քանդում էին շենքերի ծղնոտե կտուրները. ավերածությունից անվնաս մնացած գյուղերում առանց քաշվելու հափշտակում էին եղած աղքատիկ կերը, ու հրամանատարական կազմի ոչ մի սպառնալիք չէր կարող նրանց զրկել, վերջ տալ կամայականության ու գողության։

Արդեն ռումինական տերիտորիայից ոչ հեռու, մի ինչոր ունևոր գյուղում Զուբատին մի ամբարից մի կոտի չափ գարի գողացավ։ Գարու տերը նրան բռնեց հենց գարին ձեռքին, բայց Զուբատին ծեծեց խոնարհ, զառամած այդ բեսարաբցուն և գարին տարավ իր ձիուն կերակրելու։ Դասակապետ սպան նրան հանդիպեց ձիակապարանի մոտ։ Զուբատին տոպրակը կախել էր ձիու դնչին, քայլում էր, դողդոջուն ձեռներով շոյում նրա ներս ընկած լղար կողերը, ինչպես մարդուն, ու նայում էր ձիու աչքերին։

— Ուրյո՛ւպին, ետ տուր գարին, շան որդի։ Ախր դրա համար քեզ կգնդակահարեն, սրիկա...

Զուբատին մշուշոտ, ծուռ հայացքով նայեց սպային ու փափախը գետնին խփելով, գնդում գտնվելու ժամանակվա ընթացքում առաջին անգամ աղիողորմ ճիչ արձակեց.

— Դատեցեք, գնդակահարեցե՛ք։ Թեկուզ այստեղ ինձ սպանեք, գարին չեմ տա... Իմ ձին պետք է սովից սատկի՞, հա՞։ Չե՛մ տա գարին։ Իսկի մի հատիկ է՛լ չեմ տա։

Նա ձեռները տանում էր մերթ գլխին, մերթ ագահությամբ գարին ծամող ձիու բաշին, մերթ էլ թրին...

Սպան լուռ կանգնեց մի քիչ, նայեց ձիու գավակի ոսկորներին, որ հրեշավոր կերպով դուրս էին ցցվել, ու գլուխը շարժելով՝ ասաց.

— Ինչու ես հատիկ ուտեցնում քրտնակալած ձիուն։

Նրա ձայնը պարզապես շփոթություն էր արտահայտում։

— Չէ, քրտինքն արդեն սառել է,— համարյա շշնջալով պատասխանեց Զուբատին՝ տոպրակից թափված հատիկները հավաքելով բռի մեջ ու նորից լցնելով տոպրակը։

Նոյեմբերի սկզբներին գունդն արդեն դիրքերումն էր։ Տրանսիլվանիայի լեռներում սուրում էին քամիները, կիրճերում ցուրտ մշուշ էր կուտակվում, թունդ բուրում էին սոճու ցրտահար անտառները, ու առաջին փուխր ձյան վրա, լեռներում, հաճախ մարդկանց աչքովն էին ընկնում գազանների հետքերը. գայլերը, իշայծյամները, վայրի այծերը պատերազմից վախեցած, թողնելով վայրի տեղերը, գնում էին երկրի խորքը։

Նոյեմբերի 7-ին 12-րդ գունդը գրոհեց «320» բարձունքը։ Նախընթաց օրը խրամատները գրավված էին ավստրիացիներով, իսկ գրոհի օրը, առավոտյան նրանց փոխարինեցին սաքսոնները, որոնք հենց նոր էին փոխադրվել ֆրանսիական ռազմաճակատից։ Կազակները հետիոտն շարքերով արշավում էին քարքարոտ, մի փոքր ձյունած լանջերով։ Ոտների տակից քարերի կտորներ էին գլորվում, ձյան մանր փոշի էր բարձրանում։ Գրիգորին գնում էր Զուբատիի կողքից, ու մեղավորի պես, իր համար արտասովոր ամաչկոտությամբ ասաց նրան.

— Այսօր ես վախում եմ, չգիտեմ ինչու... Ոնց որ թե առաջին անգամն եմ հարձակման գնում։

— Հա՛-ա՞...— զարմացավ Զուբատին։

Նա իր սրբած հրացանը տանում էր փոկից բռնած. ծրծում էր բեղերին կպած սառցի լուլաները։

Կազակները սարն ի վեր էին բարձրանում անհավասար շղթաներով, գնում էին առանց կրակելու։ Թշնամու խրամատների կատարները սպառնալից լռություն էին պահպանում։ Այնտեղ, փոսից դենը, գերմանացիների մոտ, քամուց կարմրած դեմքով ու մաշկված քթով մի սաքսոնացի լեյտենանտ, ամբողջ իրանը ետ գցելով, ժպտալով, չարաճճիաբար բղավում, ասում էր զինվորներին.

—Kameraden! Wir haben die Blaumäntel oft genug gedroschen! Da wollen wir's auch diesen einqfeffern was es heisst mit uns'n Hühnchen zu ruqfen! Ausharren! Schiesst noch nicht[1]

Գրոհում էին կազակական հարյուրյակները։ Ոտների տակից ներքև էր թափվում փխրուն, քարքարոտ ապարը։ Խունացած բաշլուղի ծայրերը խոթելով գոտու տակ, Գրիգորին ջղայնորեն ժպտում էր։ Վաղուց չսափրած մորուքի տակին փոս ընկած նրա այտերը ու կախ քիթը երանգավորվել էին դեղնավուն կապտությամբ, եղյամակալած հոնքերի տակից անտրացիտի բեկորների պես աղոտ փայլում էին աչքերը։ Սովորական հանգստությունը լքել էր նրան։ Աշխատելով իր մեջ հաղթահարել վախի անիծված, հանկարծակի վերադարձած զգացումը, անհաստատ հայացքը հառելով խրամատների ձյունած, սպիտակ թմբին, նա ասաց Ջուբատիին.

— Լռում են։ Սպասում են, որ մոտենանք։ Իսկ ես վախենում եմ ու չեմ ամաչում... Ի՞նչ կլինի, եթե հիմի շուռ գանք ու ետ գնանք։

— Այսօր ի՞նչ ես դուրս տալիս, է՞,— ջղայնացած հարցրեց Ջուբատին։— Այստեղ, սիրելիս, նույնն է, ինչ որ թղթախաղի ժամանակ. չե՛ս հավատում քեզ,— գլուխդ կթոցնեն։ Հա՛, երեսդ դեղնել է, Գրիշկա... Դու կամ հիվանդ ես, կամ... այսօր քեզ շանսատակ կանեն։ Լա՛վ իմացիր, հա՛-ա։

Խրամատների վրա մի վայրկյան ամբողջ հասակով մնկ բարձրացավ ու էլի ընկավ կարճ շինելով, սրածայր սաղավարտով մի գերմանացի։

Գրիգորիի ձախ կողմում Ելանսկայա ստանիցայի գեղեցիկ, խարտյաշ մի կազակ քայլելիս մերթ հանում էր աջ ձեռքի ձեռնոցը, մերթ նորից հագնում։ Նա այդ շարժումը կրկնում էր անընդհատ, արագ-արագ քայլում, դժվարությամբ փոխելով ոտները ու չափից դուրս բարձր հազալով։ «Ոնց որ թե գնում է մենակ, գիշերով... զոռով է հազում,— շուլուխ է անում»,— մտածեց Գրիգորին։ Այդ կազակից դենը երևում էր ուրյադնիկ Մակսաևի պեպենոտ թուշը, մի քիչ էլ դենը քայլում էր Եմելյան Գրոշևը՝ հրացանը պինդ բռնած ու դեպի առաջ պարզած, սվինի ծայրը մի կողմ ծռած։ Գրիգորին հիշեց, որ Եմելյանը մի քանի օր առաջ, երթի ժամանակ հենց այդ սվինով ջարդել էր մի ռումինացու մառանի կողպեքը ու մի պարկ եգիպտացորեն էր գողացել։ Մակսաևի համարյա կողքից քայլում էր Միշկա Կոշևոյը։ Նա ագահությամբ ծխում էր, հաճախ խնչում ու մատները քսում շինելի ձախ փեշի արտաքին կողմին։

— Ծարավ եմ,— ասաց Մակսաևը։

— Կոշիկներս նեղ են, Եմելյան։ Չեմ կարողանում քայլել,— գանգատվեց Միշկա Կոշևոյը։

Գրոշևն ընդհատեց նրա տրտունջը.

— Կոշիկները մի կողմ թողնենք։ Պինդ կաց, հա՛-ա, հիմի գերմանացին կտկտկացնի գնդացիրը։

Հենց առաջին համազարկից հետո Գրիգորին գնդակով խոցվեց ու հառաչելով վայր ընկավ։ Նա ուզում էր կապել վիրավորված թևը, ձեռքը տարավ փամփշտանոցին, ուր գտնվում էր բինտը, բայց թևքի մեջ արմունկից հոսող տաք արյունն զգալը թուլացրեց նրան։ Նա պառկեց մեջքի վրա, ու ծանրացած գլուխը քարի տակ թաքցնելով, շորացած լեզվով խսկույն լիզեց փխրուն ձյունը։ Նա դողդոջուն շուրթերով ագահությամբ վերցնում էր ձյան սորուն փոշին, չտեսնված ահ ու դողով ականջ դնում գնդակների չոր ու հատու ճայթյուններին և կրակոցների համապարփակ որոտմունքին։ Գլուխը մի քիչ բարձրացնելով, տեսավ, որ իր հարյուրյակի կազակները փախչում էին սարն ի վար, սայթաքում, ընկնում, աննպատակ կրակում դեպի ետ ու վերև։ Ոչնչով չբացատրվող և չարգարացվող ահը նրան ոտքի հանեց և նույնպես ստիպեց փախչել ներքև, այնտեղ, նեղ շերտով ձգված, սրագագաթ սոճիների անտառը, որտեղից գունդը սկսել էր հարձակումը։ Գրիգորին անցավ Եմելյան Գրոշևից, որը իր հետ տանում էր վիրավորված դասակապետ սպային։ Գրոշևը սրան վազեվազ իջեցնում էր դիք լանջից. հարյուրապետը հարբածի նման դես ու դեն էր գցում ոտները, ու երբեմն ընկնելով Գրոշևի ուսին, սև, թանձրացած արյան էր

[1] Բարեկամնե՛ր, մենք շատ անգամ ենք չարդել կապույտ վերարկուներ կրողներին։ Եկե՛ք սրանց է՛լ ցույց տանք, թե ինչ է նշանակում գործ ունենալ մեզ հետ։ Ավելի շա՛տ տոկունություն։ Առայժմ մի՛ կրակեք։

փոխում։ Հարյուրյակները ուժգին թափով սրանում էին դեպի անտառը։ Գորշ լանջերի վրա մնացին սպանվածների գորշ դիակները. վիրավորվածները, որոնց վերցնելու ժամանակ չէր եղել, իրենք էին սողում դեպի ներքև։ Հետևից նրանց խփում էին գնդացիրները։

Տա-տա-տա-տ-ռա-ա...— ճարճատում էր կրակոցների անընդմեջ հեղեղը։

Գրիգորին Միշկա Կոշևոյի թևին հենվելով՝ մտնում էր անտառ։ Անտառի մոտ, մի քիչ թեք տարածության վրա ընդոստում էին գնդակները։ Գերմանացիների ձախ թևում տիտկում էր մի գնդացիր։ Կարծես ուժեղ ձեռքով նետած մի քար, թռչելով առաջին բարակ սառույցի վրա, ջարդում, զլնգացնում է այն։

Տա-տա-տա-տար- ա-ա-ա...

— Ա՛մա ջարդեցին մեզ, հա՛-ա,— կարծես ուրախանալով՝ բղավեց Զուբատին։

Մի սոճու գորշ-կարմրավուն բնին հենված, նա ծուլորեն կրակում էր խրամատների մոտ վազեվազք կատարող գերմանացիների վրա։

— Հիմարներին սովորեցնե՛լ է պետք, սովորեցնե՛լ,— ձեռքը Գրիգորիից քաշելով, շնչասպառ լինելով, գոչեց Կոշևոյը։— Շնե՛ր են, շներից է՛լ վատ։ Արյունաքամ կլինեն այն ժամանակ կհասկանան, թե ինչու են իրենց գլխին խփում։

— Այդ ինչո՞ւ ես ասում,— Զուբատին կկոցեց աչքերը։

— Խելքն ինքը կհասկանա, իսկ հիմարը... Հիմարին ի՞նչ ասես։ Նրա գլխի մեջ հո զոռով խելք չե՞ս լցնի։

— Դու երդումդ հիշո՞ւմ ես։ Երդում տվե՞լ ես թե չէ,— ձեռ էր առնում Զուբատին։

Կոշևոյն առանց պատասխանելու ծնկաչոք եղավ, դողդոջուն ձեռներով գետնից ձյուն հավաքեց, ագահությամբ կուլ էր տալիս այն, դողում, հազում։

V

Տատարսկի խուտորի կողքից, ճերմակ, ծվեն-ծվեն ամպերով կնճռոտված երկնքում հածում էր աշնանային արևը։

Այնտեղ, վերևում մեղմ զեփյուռը թեթևակի քշում էր ամպերը, հրում դեպի արևմուտք, իսկ խուտորի վրա, Դոնի մուգկանաչ հարթության, մերկ անտառների վրա ուժգնաթափ սուրում էր քամին, ծռում ուռիների ու բարդիների գագաթները, ալեկոծում Դոնը, փողոցներով քշում դեղնագորշ տերևների երամակները։ Խրիստոնյայի կալում զզզվում էր ցորենի ծղնոտի թույլ դարսված դեզը, քամին խփեց, քանդեց դրա գագաթը, վայր գցեց բարակ ձողը, ու հանկարծ վերցնելով ծղնոտի ոսկեվուն մի խուրձ, ասես եղանի ծայրերին դրած, տարավ բակի վերևից, պտտեց փողոցի վրա, ու շռայլաբար ցրիվ տալով ամայի ճանապարհին, զզզզված խուրձը շպրտեց Ստեփան Աստախովի տան կտուրին։ Խրիստոնյայի գլխաբաց, հերարձակ կինը դուրս վազեց բակը՝ յուրկան սեղմելով ծնկներին, նայեց, թե քամին կալում ինչպիսի կամայականություններ է անում, ու էլի մտավ հաշտը։

Պատերազմի երրորդ տարին զգալիորեն անդրադարձել էր խուտորի տնտեսության վրա։ Այն ծխերում, ուր կազակներ չէին մնացել, մարագները բաց էին, բակերն անխնամ, հետզհետե կատարվող ավերածությունը խղճուկ հետքեր էր թողնում նրանց վրա։ Խրիստոնյայի կինը տնտեսավարում էր իրեն ինն տարեկան տղայի հետ. Անիկուշկայի կինը բոլորովին էլ չէր տնեսավարում, այլ առանց մարդու մնացած, թունդ խնամում էր ինքն իրեն, երեսին կարմիր ներկ քսում, գեղեցկացնում ինքն իրեն ու չափահաս կազակների պակասության պատճառով ընդունում էր տասնչորս տարեկան և ավելի մեծ տղաներին, ա՛յդ էր պերճախոս կերպով վկայում տախտակե դարբասը, որը իր ժամանակին առատորեն ծեփվել էր կուպրով ու մինչև այժմ պահում էր սև, մատնող հետքերը։ Ստեփան Աստախովի խրճիթը դատարկ էր, գնալուց առաջ խրճիթատերը պատուհաններին տախտակներ էր խփել, կտուրը տեղ-տեղ փլվել էր, նրա վրա կռատուկ էր բուսել, դռան կողպեքը ժանգոտել էր, իսկ անանցանելի քոլախոտով ու թայլով ծածկված բակի բաց դարբասից հաճախակի ներս էին մտնում մոլորված անասունները՝ շոգից կամ վատ եղանակից պատսպարվելու համար։ Իվան Տամիլինի խրճիթի պատը փուլ էր գալիս փողոցի վրա, գետնի մեջ թաղված պոզավոր

հենարանը պահում էր այն. երևի բախտը խիզախ հրետանավորից վրեժ էր առնում գերմանական և ռուսական այն տնակների համար, որ նա, լինելով նշանառու, քարուքանդ էր արել։

Այսպես էր խուտորի բոլոր փողոցներում ու նրբանցքներում։ Միայն ստորին ծայրամասում Պանտելեյ Պրակոֆեվիչի բակն էր, որ վայելուչ տեսք ուներ, ամեն ինչ սարքին էր, անվնաս մնացած։ Բայց այստեղ էլ պակասություններ կային։ Ամբարի կտուրի թիթեղյա աքլորները քիչ էր մնում ընկնեին մաշվածությունից, ամբարը ծռված էր տալիս, փորձված աչքը կարող էր որոշ անտնտեսավարություն նկատել։ Մերուկի ձեռները ամեն բանի չէին հասնում, ցանքը պակասել էր, իսկ մնացած բաների մասին խոսելն էլ ավելորդ է. միայն Մելեխովների ընտանիքն էր, որ չէր պակասել իր անդամների թվով. ռազմաճակատներում քարշ եկող Պետրոյի ու Գրիգորիի տեղը անցած տարվա աշնանը Նատալյան երկվորյակ էր բերել։ Բերելով մի տղա ու աղջիկ, գոհացրել էր կեսուր-կեսարին։ Նատալյան հիվանդագին կերպով էր տանում հղիությունը, երբեմն ամբողջ օրերով չէր կարողանում քայլել ոտների տանջող ցավից, ման էր գալի ոտը քարշ տալով, դեմքը կնճռոտելով, բայց տոկունությամբ տանում էր ցավը, որը երբեք չէր անդրադառնում թուխ, նիհարած ու երջանիկ դեմքի վրա։ Այն բոպեներին, երբ առանձնապես ուժեղ էին մրմռում ոտները, քունքերից գուրս էր տալի ուլունքանման քրտինքը. Իլյինիշնան միայն դրանից էր իմանում նրա ցավը. գլուխն օրորելով նախատում էր.

— Պառկիր, էլի, անիծված։ Էլ ի՞նչ ես քեզ շարչարում։

Սեպտեմբերյան պայծառ մի օր Նատալյան, զգալով, որ մոտենում է երկունքը, ելավ փողոց։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց կեսուրը։

— Գետառ։ Կովերին մտիկ տամ։

Նատալյան հապճեպորեն դուրս եկավ խուտորից, ու նայելով շուրջը, տնքալով, ձեռները փորի ստորին մասին պահած, մտավ վայրի սալորենու խիտ մացառուտը և պառկեց։ Արդեն մթնել էր, երբ նա թաքուն տեղերով տուն հասավ. քթանե զոգնոցով բերեց երկվորյակներին։

— Վա՜յ, ցա՜ղդ տանեմ, տո անիծված, բա այդպես կլինի՞... բա դու ո՞րտեղ էիր,— ճղճղաց Իլյինիշնան։

— Ես ամոթից հեռացա... Հայրիկից քաշվում էի... ես մաքուր եմ, մայրիկ ջան, սրանց էլ լողացրել եմ... Վերցրեք...— գունատվելով արդարանում էր Նատալյան։

Դունյաշկան վազ տվեց տատմեր կանչելու։ Դարյան դես-դեն ընկավ, բերեց մի մաղ, Իլյինիշնան էլ, ծիծաղելով ու լալով, ճղճղում էր.

— Դա՜շկա, դեն գցիր մաղը։ Հո կատվի ձագեր չե՞ն, որ մաղի մեջ ես գնում... Ա՜խ, աստված ջան, տեսեք, է՛, երկուսն են։ Օ՜յ, աստված, մեկը տղա է, տղա՜... Նատալի՜կ ջան... Դեհ, տե՜ղ գցեք, է՛...

Պանտելեյ Պրակոֆևիչը բակում լսելով, որ հարսը երկու երեխա է բերել, սկզբում տարածեց ձեռները, հետո ուրախացած, մի փոքր ցնցելով մորուքը, լացեց, ու չգիտես ինչու գոռաց եկող տատմոր վրա.

— Սուտիկ, գետինը մտած,— նա ճիրանանման մատը թափ տվեց պառավի քթի առաջ,— այ ստի տոպրակ։ Հլա դեռ շա՜տ կաճի Մելեխովի ցեղը։ Հարսս համ տղա է բերել, համ աղջիկ։ է՛, ջանիդ մատաղ, հարս, ա՜յ ինչ եմ ասո՜ւ-ում։ Տե՜ր աստված, դրա համար ես ինչո՞վ քվիթ լինեմ նրա հետ։

Բեղմնավոր էր այն տարին. կովը երկու հորթ ծնեց, Միքայել հրեշտակապետի տոնին ոչխարները երկուական գառ ծնեցին, այծերը... Պանտելեյ Պրակոֆևիչը զարմանալով այդ դեպքերի վրա, ինքն իրեն դատողություններ էր անում.

«Բախտավոր, բոլ տարի է, հա՜-ա։ Մի բանը երկուս է դառնում։ Հիմի ինչքա՜ն մատղաշներ կունենանք... օ-օ՜-օ»։

Նատալյան երեխաներին կրծքով կերակրեց մինչև մի տարի։ Սեպտեմբերին ծծից կտրեց, բայց չկազդուրվեց մինչև ուշ աշուն. ատամները կաթի գույն ունեին, ջերմ, մշուշային փայլ էին արձակում աչքերը, որոնք նրա նիհարությունից չափազանց մեծ էին թվում։ Ամբողջ կյանքը տվել էր երեխաներին, իր նկատմամբ գարձել էր անփույթ, տան աշխատանքից ազատ ամբողջ ժամանակը նրանց էր խնամում. լողացնում էր, շորերը լվանում, գործում, կարկատում, ու հաճախ մահճակալի վրա նստելով, մի ոտը մեկնած, օրորոցից վերցնում էր երկվորյակներին, ուսերի թափահարումով լայն

ջապկի տակից դուրս բերում պիրկ, մեծ, սեխերի նման դեղնասպիտակ ստինքները, միաժամանակ կերակրում երկու երեխային։

— Դրանք քեզ քամեցին, էլի՛։ Շատ հաճախ ես կերակրում,— ու Իլյինիշնան շրմփացնում էր թոռնիկների լիքը, ծալավոր տոտիկներին։

— Ուտեցրո՛ւ։ Մի՛ խնայի կաթդ։ Հո դա չպիտի՞ հավաքես ու մածուն մերես,— կտրուկ ու կոշտ տոնով մեջ էր մտնում Պանտելեյ Պրակոֆևիչը։

Այդ տարիներին կյանքը հետզհետե նվազում էր ինչպես Դոնի վարարած ջուրը։ Օրերն անցնում էին տխուր ու տաղտկալի, առանց որևէ ուշագրավ երևույթի, մշտական հոգս ու ցավով, մանր կարիքներով, չնչին բերկրանքներով ու մեծ, անդուլ անհանգստությամբ ա՛յն մարդկանց համար, ովքեր ռազմաճակատում էին։ Գործող բանակից, Պետրոյից ու Գրիգորիից երբեմն նամակներ էին գալիս թքոտվելուց կեղտոտված ու փոստային դրոշմներով պատած ծրարներով։ Գրիգորիի վերջին նամակը եղել էր ինչ-որ մեկի ձեռքում. նամակի կեսը մանրակրկիտորեն ջնջված էր մանիշակագույն թանաքով, իսկ գորշ թղթի լուսանցքում թանաքով մի անհասկանալի նշան էր արված։ Պետրոն Գրիգորիից ավելի հաճախ էր գրում և իր նամակներում, որոնք հասցեագրված էին լինում Դարյային, սպառնում էր վերջինիս և խնդրում էր թողնել իր անպարկեշտ արարքները,— երևի կնոջ ցոփ կյանքի մասին նրան է՛լ էին լուրեր հասնում։ Գրիգորին նամակների հետ նաև փող էր ուղարկում տուն,— ոռճիկը և «խաչերի փողը», խոստանում էր արձակուրդ գալ, բայց չգիտես ինչու չէր գալիս։ Երկու եղբոր ճանապարհները տարբեր էին. պատերազմը մաշում էր Գրիգորիին, դալկացնում դեմքը, ներկում դեղին մաղձով, նա չէր սպասում, որ մինչև պատերազմի վերջը կենդանի կմնա, իսկ Պետրոն արագ ու դյուրին կերպով առաջ էր գնում, տասնվեց թվի աշնանը վախմիստրի կոչում ստացավ, ու քծնելով հարյուրյակի հրամանատարի առաջ, երկու խաչ ստացավ և արդեն նամակներում գրում էր, թե ջանք է թափում, որպեսզի իրեն ուղարկեն սպայական դպրոցում սովորելու։ Ամառը արձակուրդ եկած Անիկուշկայի հետ տուն ուղարկեց գերմանական մի սաղավարտ, մի շինել և իր

լուսանկարը։ Ստվարաթղթի գորշ կտորի վրայից ինքնագոհ նայում էր նրա դեմքը, որ կորցրել էր ջահելության արտահայտությունը, վեր էին ցցվել ոլորած, բաց-շիկավուն բեղերը, կարճլիկ քթի տակին ծանոթ ժպիտով ժպտում էին ուռուցիկ շրթունքները։ Կյանքը ինքն էր ժպտում Պետրոյին, իսկ պատերազմը նրան ուրախացնում էր, որովհետև արտասովոր հեռանկարներ էր բաց անում. մի՞թե նա, հասարակ կազակը, որ փոքր հասակից եղներ էր արածացրել ու բանեցրել, կարող էր մտածել սպայության և այլ քաղցր կյանքի մասին։ Բայց ահա բռնկվել է պատերազմը, ու նրա հրացոլքում պարզ նշմարվում է գալիք ազատ ու լիառատ կյանքը... Միայն մի տխուր կողմ ուներ Պետրոյի կյանքը. խուտորում նրա կնոջ մասին վատ լուրեր էին պտտվում։ Ստեփան Աստախովը այդ տարվա աշնանը եղել էր արձակուրդում և վերադառնալով գունդ, ամբողջ հարյուրյակի առաջ պարծեցել էր, թե Պետրոյի կնկա հետ հիանալի կերպով քեֆ էր քաշել։ Պետրոն չէր հավատում ընկերների ասածին. դեմքը մթնեցնելով, ժպտում էր ու ասում.

— Փչում է Ստյոպկան։ Գրիշկայի համար է ինձ կծում։

Բայց մի անգամ Ստեփանը, դուրս գալով խրամատի գետնատնից, պատահմամբ թե դիտմամբ վայր գցեց ասեղնագործած մի թաշկինակ. նրա հետևից գնում էր Պետրոն, սա բարձրացրեց ժանյակավոր, ճարտարությամբ ասեղնագործած թաշկինակը ու ճանաչեց իր կնոջ ձեռագործը։ Պետրոյի ու Ստեփանի միջև էլի՛ մեջտեղ եկավ քեն ու ոխը։ Պյոտրը ադիթի էր սպասում, մահը հետամուտ էր լինում Ստեփանին,— սա կարող էր ընկնել Դվինայի ափին, Պյոտրի հարվածի նշանը գանգի վրա։ Բայց շուտով այնպես պատահեց, որ Ստեփանը կամավոր կերպով գնաց գերմանական ուղեկալի վրա հարձակվելու և չվերադարձավ։ Նրա հետ գնացած կազակները պատմում էին, որպես թե գերմանական ժամապահը լսել էր, որ նրանք կտրում են լարափակոցները, ու նռնակ էր նետել. կազակները կարողացել էին հասնել նրան, Ստեփանը բռունցքով խփել, գետին էր գլորել գերմանացի ժամապահին, իսկ ժամապահի օգնականը կրակել էր, ու Ստեփանը ընկել։ Կազակները թրատել էին ժամապահի օգնականին, Ստեփանի ծանր բռունցքից գլորված, խելակորույս

գերմանացուն քարշ տվել իրենց հետ, իսկ Ստեփանին ուզում էին բարձրացնել, տանել, բայց ծանր էր այդ կազակը,— ստիպված էին թողնել։ Վիրավորված Ստեփանը խնդրել էր՝ «Տղե՛րք ջան, մի՛ թողնեք, որ ես կորչեմ։ Ընկերնե՛ր, ինչո՞ւ եք ինձ թողնում...» Բայց այստեղ լարափակոցով մեկ գընդացրային կրակ էր թափվել, ու կազակները սողեսող հեռացել էին։ «Հայրենակիցներ, եղբայրնե՛ր»,— նրանց հետևից բղավել էր Ստեփանը, բայց էլ ո՞րտեղից,— ամեն մեկն իր գլխի մասին էր մտածում։ Երբ Պետրոն լսեց Ստեփանի վերաբերյալ այս պատմությունը, սիրտը թեթևացավ, ասես մըրմըռող վերջին արջամկան ճարպ քսեցին, բայց և այնպես, որոշեց՝ «Կգնամ արձակուրդ, արյուն կառնեմ Դաշկայից։ Ես Ստեփանը չեմ, չեմ ների...» Մտածեց սպանել Դարյային, բայց իսկույն հրաժարվեց այդ մտքից. «Արի ու սպանիր խժը, ու նրա պատճառով ամբողջ կյանքդ կկորչի։ Կփտես բանտում, բոլոր շարշարանքներդ իզուր կանցնեն, ամեն բանից կզրկվես...» Որոշեց հենց միայն ծեծել, բայց այնպես, որ կնիկն ամբողջ կյանքում էլ ախորժակ չունենա պոչը թափ տալու. «Կհանեմ նրա, այն օձի աչքը, այն ժամանակ էլ ո՞վ աչք կդնի նրա վրա»։ Այսպիսի մի միտք հղացավ Պետրոն՝ Դվինայի դիք, կավոտ ափից ոչ հեռու գտնվող խրամատներում նստած։

Աշունը ճզմում էր ծառերն ու խոտաբույսերը, առավոտյան ցրտերը խարկում էին դրանց, սառչում էր հողը, մթնանում, երկարում էին աշնանային գիշերները։ Խրամատներում կազակները ծառայության պարտականություններն էին կատարում, կրակում. թշնամու վրա, վախմիստրների հետ գժտվում տաք հագուստեղեն չստանալու համար, կիսաքաղցած էին մնում, բայց բոլորն էլ շարունակ միտք էին անում լեհական անհամբույր հողից հեռու գտնվող Դոնի շրջանի մասին։

Դարյա Մելեխովան էլ այդ աշնանը աշխատում էր հագուրդ տալ առանց ամուսնու ապրած իր սովյալ կյանքին։ Աստվածածնա տոնի առաջին օրը Պանտելեյ Պրակոֆևիչը, ինչպես միշտ, բոլորից շուտ արթնացավ. դուրս եկավ բակը ու շշմեց. դարբասը հանված էր ինչ-որ չարաճճի ձեռքով ու տարված էր փողոցի մեջտեղը, ընկել էր ճանապարհի վրա։

Այդ խայտառակություն էր։ Ներունին անմիջապես տեղը դրեց դարբասը, իսկ նախաճաշից հետո Դարյային կանչեց ամառային խոհանոցը։ Թե ինչի մասին խոսեց նրա հետ, հայտնի չէ, բայց Դունյաշկան տեսավ, թե ինչպես մի քանի բոպեից հետո Դարյան խոհանոցից դուրս թռավ ուսերին ընկած լաչակով, գզգզված մազերով և լալով։ Անցնելով Դունյաշկայի կողքից, նա կուչ եկավ, նրա լացակումած ու շարացած դեմքի վրա դողում էին հոնքերի պարզ գծագրված, սև աղեղները։

— Սպասիր, քոփակ... Ես քո հախիցը կգամ,— ուռուցիկ շրթունքների միջից քրթմնջում էր նա։

Նրա կոֆտան պատռվել էր մեջքի վրա, սպիտակ մարմնի վրա կապույտ-կարմրավուն թարմ ուռուցք էր երևում։ Դարյան փեշը թափահարելով, վազեվազ բարձրացավ խրճիթի արտաքին սանդուղքը, մտավ հաշտը, իսկ խոհանոցից կաղալով դուրս եկավ Պանտելեյ Պրակոֆևիչը՝ զայրացած ինչպես սատանա։ Քայլելիս չորս տակ ծալեց նոր, կաշվե երասանը։

Դունյաշկան լսեց հոր խռպոտ ձայնը.

— ... Քածի մեկը, սա դեռ քիչ է քեզ... Անառա՛կ շուն...

Խրճիթում կարգ ու կանոնը վերականգնվեց։ Դարյան մի քանի օր սուս ու փուս էր, երեկոները բոլորից շուտ էր պառկում քնելու, Նատալյայի համակրական հայացքներին սառն ժպիտով էր պատասխանում, թոթվում ուսերը և խաղացնում հոնքերը. այսինքն թե՝ «ոչի՛նչ, հլա դեռ կտեսնենք», իսկ չորրորդ օրը տեղի ունեցավ հետևյալ դեպքը, որը գիտեին միայն Դարյան ու Պանտելեյ Պրակոֆևիչը։ Դարյան այնուհետև ծիծաղում էր արհամարհանքով, իսկ ծերունին մի ամբողջ շաբաթ շփոթված էր, շվարած, ոնց որ թե մի բան փչացրած կատու լիներ. նա պառավին ոչինչ չասաց պատահած դեպքի մասին և նույնիսկ խոստովանության ժամանակ տեր-Վիսարիոնից թաքցրեց թե այդ դեպքը և թե այնուհետև իր ապրած մեղսոտ մտքերը։

Բանն այսպես եղավ։ Աստվածածնի տոնից հետո Պանտելեյ Պրակոֆևիչը հավատացած լինելով, որ Դարյան վերջնականապես ուղղվել է, ասաց Իլյինիչնային.

— Դու երես մի տա Դաշկային։ Թող շատ աշխատի։

Գործով կզբաղվի, ժամանակ չի ունենա անառակություն անելու, թե չէ աննամուս կնիկ է... Նրա մտքումը հենց միայն երգ ու պարի տեղն է ու փողոցը։

Այդ նպատակով նա Դարյային ստիպեց մաքրել կալը, հետին բակում հավաքել թափթփված հին փայտեղենը, նրա հետ միասին մաքրեց հարդանոցը։ Իրիկնադեմին մտածեց քամիչ մեքենան չարդախի տակից տեղափոխել հարդանոցը, կանչեց հարսին.

— Դարյա՛։

— Ի՞նչ է, ապի,— հարդանոցից հարցրեց Դարյան։

— Արի տեղափոխենք քամիչը։

Շտկելով լաչակը, թափ տալով հարդի մանրուքը, որ լցվել էր կոֆտայի օձիքի տակից, Դարյան դուրս եկավ հարդանոցի դռնից ու կալի դարբասն անցնելով, գնաց դեպի չարդախը։ Նրա առջևից կաղ-կաղ քայլում էր Պանտելեյ Պրակոֆևիչը, որ բամբակած, լույսն, ամենօրյա կուրտկա և պատռված շալվար էր հագել։ Բակում ոչ ոք չկար։ Տանը Դունյաշկան ու մայրը մանում էին աշնանը գզած բուրդը։ Նատալյան խմոր էր հունցում։ Խուտորից դենը մարում էր կարմրավառ վերջալույսը, ղողանջում էին երեկոյան ժամասացության զանգերը։ Ջինջ երկնքում, զենիթում գտնվում էր կարմրավուն, անշարժ մի ամպ, Դոնի մյուս կողմում, սպիտակավուն բարդիների մերկ ոստերին թառել էին ագռավները, որոնք ասես բրդի սև, վառված փաթիլներ լինեին։ Երեկոյի անհաստատ, անդորր լռության մեջ պարզ ու հստակ էր հնչում յուրաքանչյուր ձայնը։ Անասնոցից տարածվում էր թարմ գոմաղբի ու խոտի թունդ հոտը։ Պանտելեյ Պրակոֆևիչը տնքտնքալով, Դարյայի հետ միասին գորշ-կարմիր, խունացած քամիչը տարավ հարդանոց, տեղավորեց մի անկյունում, փոցխով մաքրեց դեզից թափված հարդը և ուզում էր դուրս գալ։

— Ապի՛,— ցածր, շշնջող ձայնով դիմեց նրան Դարյան։

Ներունին անցավ քամիչի հետևը, առանց որևէ կասկածանքի հարցրեց.

— Հը՛, ի՞նչ է։

Դարյան կոճակներն արձակած կոֆտայով կանգնել էր նրա դիմաց. ձեռները գլխի հետին կողմը տարած, շտկում

էր մազերը։ Վերջալույսի բոսորավառ ճառագայթը հարդանոցի պատի ճեղքից ընկել էր նրա վրա։

— Այստեղ, ապի, մի բան... Արի մտիկ տուր,— ասաց Դարյան կողքի թեքվելով ու կեսարի ուսի տակից գողի պես նայելով բաց դռան։ Ներունին հուպ մոտեցավ նրան։ Դարյան հանկարծ բարձրացրեց ձեռները, ու գրկելով կեսարի վիզը, մատներն իրար մեջ անցկացնելով, ետ-ետ գնաց, նրան էլ քարշ տվեց իր հետ, շշնջաց...

— Ա՛յ, այստեղ, ապի... Այստեղ... փափուկ է...

— Դու ի՞նչ ես ուզում,— վախեցած հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Գլուխը դես-դեն պտտելով, նա փորձեց վիզը ազատել Դարյայի ձեռներից, բայց վերջինս նրա գլուխը ավելի ու ավելի ուժով էր քաշում դեպի իր երեսը, տաք շնչում նրա մորուքի մեջ, ծիծաղում, ինչ-որ բառեր շշնջում։

— Թող, փուչ,— ծերունին ուզեց պոկվել ու իր մարմնի վրա զգաց հարսի գիրգ փորը։

Հարսը նրան սեղմվելով, ընկավ մեջքին, նրան էլ գցեց իր վրա։

— Սատանա՛, հո չե՛ս գժվել... Թո՛ղ, է՛։

— Չե՞ս ուզում,— շնչասպառ հարցրեց Դարյան, ու ձեռները իրեն քաշելով, բոթեց կեսարի կուրծքը,— չե՞ս ուզում... թե՞ գուցե չես կարող... Ուրեմս էլ ինձ մի փնովի... Այդպես, հը՛մ։

Վեր թռչելով, նա հապճեպ ուղղեց յուբկան, մեջքից թափ տվեց հարդի քիստերը ու դեմառդեմ բղավեց շշկլված Պանտելեյ Պրակոֆևիչի վրա.

— Դու այն օրը ինչի՞ համար ծեծեցիր ինձ, հը՞։ Ես սյառա՞վ եմ, ինչ է։ Բա որ դու ջահել էիր, այդ տեսակ բաներ չէի՞ր անում, հը՞։ Մի տարի է մարդս չկա... Բա ես ի՞նչ անեմ, որձ շան հե՞տ լինեմ, ինչ է։ Ա՛ռ քեզ, թուփալ, հրե՛ս, անուշ արա։

Դարյան անպարկեշտ շարժում արավ և հոնքերը խաղացնելով, քայլեց դեպի դուռը։ Դռան մոտ նա մի անգամ էլ ուշադրությամբ դիտեց ինքն իրեն, կոֆտայից ու լաչակից թափ տվեց փոշին ու առանց կեսարին նայելու, ասաց.

— Ես առանց դրան չեմ կարող... ինձ տղամարդ է

հարկավոր, իսկ եթե չես ուզում, ես կգտնեմ, դու էլ ձեն չհանես, հա՜-ա։

Նա կոտրատվող, արագ քայլվածքով հասավ կալի դարբասին, չքացավ առանց ետ նայելու, իսկ Պանտելեյ Պրակոֆիևիչը դեռ կանգնել էր քամիչի գորշավուն կողի մոտ, ծամում էր մորուքը ու տարակուսանքով, մեղավորաբար դիտում հարդանոցը և իր կարկատած ոտնամանների ծայրերը։ «Մի՞թե արդարությունը նրա կողմն է. գուցե հարկավոր էր, որ ես նրա հետ մեղքի մե՞ջ ընկնեի»,— մտածում էր նա այդ պահին՝ տեղի ունեցած դեպքից շշմելով, ինքն իրեն կորցրած։

VI

Նոյեմբերին սաստիկ զոռում էին սառնամանիքները։ Ձյունը շուտ էր եկել։ Տատարսկի խուտորի վերին ծայրի դիմաց սառեց Դոնի ծնկաձև մասը։ Հատ ու կենտ մարդիկ փընիրուն, մուգ կապույտ սառցի վրայից ոտով անցնում էին գետի մյուս կողմը, իսկ ավելի ներքև գետը միայն ափերի մոտ էր ծածկվել անհարթ, մերկ սառույցով, մեջտեղում գետը հոսում էր վետ-վետ, կանաչավուն ալիքներով, որոնք զարնվում էին իրար, թափահարում սպիտակ գանգուրները։ Սև յառի դիմաց, տասնմեկ սաժեն խորություն ունեցող ջրի տակին լոքո ձկները վաղուց արդեն կանգ էին առել ձմեռելու, նրանց կողքին ծվարել էին լորձունք հագած ծածանները, միայն ճերմակ ձուկն էր խաղում Դոնի մեջ, տեղ-տեղ էլ թըպրտում էր շիղաձուկը, ընկնելով մանր ձկների հետևից։ Ստեղեսը պառկել էր ավազի վրա։ Ձկնորսները ավելի սաստիկ, ուժեղ սառնամանիքների էին սպասում, որ քլունգներով ջարդոտեին սառույցը, կարմրաձուկ բռնեին։

Մելեխովները նոյեմբերին Գրիգորիից նամակ ստացան։ Կուվինսկիից, Ռումինիայից գրում էր, որ վիրավորվել էր հենց առաջին կռվում, գնդակը ջարդել էր ձախ թևի ոսկորը, այս պատճառով, բուժվելու համար, նրան ուղարկում են իր շրջանը, Կամենսկայա ստանիցան։ Նամակից հետո մի ուրիշ փոքրանք եկավ Մելեխովների գլխին. մեկուկես տարի առաջ Պանտելեյ Պրակոֆիևիչը փողի կարիք ուներ, Սերգեյ Պլատոնովիչ Մոխովից պարտամուրհակով հարյուր ռուբլի

ստացավ փող էր վերցրել։ Այս տարվա ամառը ծերունուն կանչեցին խանութ, ու Ատեպին Ցացան, ոսկե ակնոցը քթին դրած, ապակիների վերևից նայելով Մելեխովի մորուքին, ասաց.

— Հը՜, ի՞նչ ես մտածում, Պանտելեյ Պրակոֆից, վճարե՞ս թե ցե։

Պանտելեյ Պրակոֆիևիչը նայեց դատարկ դարակներին և հնությունից սլսլացող վաճառասեղանին, շշկլվեց։

— Սպասիր, Եմելյան Կոնստանտինովիչ, մի քիչ դզվեմ, կվճարեմ։

Դրանով վերջացավ խոսակցությունը։ Ծերունուն չվիճակվեց դզվել. բերքը վատ էր, իսկ ծախելու համար համապատասխան անասուն չկար։ Եվ ահա հանկարծ ժամանեց դատական պրիստավը, կանչել տվեց պարտքը չվճարողին ու շոքեց բակին.

— Դեհ, ցնծա հարյուր մանեթը։

Իշևանում, պրիստավի սենյակում, սեղանի վրա դրված է երկար գրված մի թուղթ. կարդա,— կարո՞ղ ես առարկել.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ Հրամանով 1916 թվականի հոկտեմբերի 27-ին ես, Դոնեցի օկրուգի 7-րդ շրջանի Հաշտարար դատավորս, լսեցի ուրյադնիկ Պանտելեյմոն Մելեխովի դեմ մեշչան Սերգեյ Մոխովի ըստ պարտամուրհակի 100 ռուբլու հայցի վերաբերյալ քաղաքացիական գործը և դեկավարվելով Քաղ. Դատ. Կանոնադրութ. 81, 100, 129, 133, 145 հոդվածներով, հետևյալ կարգով—

ՈՐՈՇԵՑԻ

Բանազանձել պատասխանատուից, ուրյադնիկ Պանտելեյմոն Պրակոֆի Մելեխովից հօգուտ հայցվորի, մեշչան Սերգեյ Պլատոնովիչ Մոխովի հարյուր ռուբլի ըստ 1915 թվականի հունիսի 21-ի պարտամուրհակի, ինչպես նաև երեք ռուբլի դատական և գործը վարելու ծախքեր։ Վճիռը վերջնական չէ. հայտարարել իրրև հետևյալ վճիռ։

Սույն վճիռը, Քաղ. Դատ. Կանոնադրության 156 հոդվ. 3 կետի հիման վրա ենթակա է անհապաղ կատարման իրրև օրինական ուժի մեջ

մաած։ Դոնեցի օկրուգի 7 շրջանի Հաշտարար Դատավորը ՆՈՐԻՆ ԿԱՅՍԿԻ-ՐԱԿԱՆ ՄԵՆԵՄԻԹՅԱՆ Հրամանով հրամայեց. բոլոր տեղերը և անձինքը, որոնց կարող է սույնը վերաբերել, պետք է ճշտությամբ կատարեն ներկա վճիռը, իսկ տեղական ոստիկանական ու զինվորական իշխանությունները պետք է առանց ամենաչնչին հապաղման ըստ օրենքի պատշաճ օժանդակություն ցույց տան վճիռը գործադրող Պրիստավին։

Պանտելեյ Պրակոֆիևիչը լսելով պրիստավին, թույլտվություն խնդրեց տուն գնալ, խոստանալով հենց այդ օրը մուծել փողը։ Իջևանից նա ուղղակի գնաց իր խնամի Կորշունովի մոտ։ Հրապարակում հանդիպեց թևը կտրած Ալյոշկա Շամիլին։

— Կաղո՞ւմ ես, Պրակոֆիչ,— բարևեց Շամիլը։

— Կամաց-կամաց։

— Աստված հաջողի ո՞ւր։

— Խնամուս մոտ։ Գործ կա։

— Օ՜, նրանց մոտ ուրախություն է։ Չե՞ս լսել։ Միրոն Գրիգորիչի տղան եկել է ֆրոնտից։ Եկել է նրանց Միտկան, այդպես են ասում։

— Դրո՞ւստ, հա՞։

— Այդպիսի մի բան եմ լսել,— ասաց Շամիլը՝ խաղացնելով թուշն ու աչքը, հանելով թութունի պարկը ու մոտենալով Պանտելեյ Պրակոֆևիչին։— Մխենք, հորեղբայր։ Թուղթը ինձանից, թութունը քեզանից։

Պանտելեյ Պրակոֆևիչը ծխում էր ու տատանվում,— գնա՞լ թե ոչ. վերջ ի վերջո որոշեց գնալ, ու հրաժեշտ տալով թևը կտրած Ալեքսեյին, շարունակեց ճանապարհը։

— Միտկան է՛լ խաչ ունի, հա՛-ա։ Ուզում է հասնել քո տղաներին։ Մեր խուտորում հիմի այդ կավալերները այնքան են, ինչքան որ ծտեր են լինում ծառերի վրա,— ծերունու հետևից բղավում էր Շամիլը։

Պանտելեյ Պրակոֆևիչը առանց շտապելու հասավ խուտորի ծայրը. նայելով Կորշունովի տան պատուհաններին, մոտեցավ բակի դռան։ Նրան դիմավորեց ինքը, խնամին։ Ծերունի Կորշունովի պեպենոտ դեմքը ասես լվացված լիներ ուրախությունից, թվում էր և՛ մաքուր, և՛ ոչ այնքան չեչոտ։

— Լսե՞լ ես մեր ուրախության մասին, հա՞,— խնամուն ձեռք տալով՝ հարցրեց Միրոն Գրիգորևիչը։

— Ճանապարհին Ալյոշկա Շամիլից իմացա։ Ամա, խնամի ջան, ես ուրիշ գործով եմ եկել քեզ մոտ...

— Կա՛ց, ի՞նչ գործ, ի՞նչ բան։ Գնանք տուն, կտեսնես զինվոր տղին։ Մենք, դրուստն ասած, ուրախությունից մի քիչ խմել ենք... Այս լավ օրվա համար կնիկս մի շիշ թագավորական արաղ էր պահել։

— Դու ինձ այդ բանը մի՛ ասա,— սապատավոր քթի պինչերը ծռմռելով՝ ժպտաց Պանտելեյ Պրակոֆևիչը,— ես դեռ հեռվից զգացի։

Միրոն Գրիգորևիչը բացեց դուռը, նշան արավ, որ խնամին առաջ անցնի։ Վերջինս անցավ շեմքից ու իսկույն հայացքը հառեց Միտկայի վրա, որ նստած էր սեղանի մոտ, առջևի կողմում։

— Հրե՛ս նա, մեր զինվոր տղան,— լալով բացականչեց Գրիշկա պապին ու ընկավ ոտքի ելած Միտկայի ուսին։

— Էհ, բարո՛վ ես եկել, կազակ տղա։

Պանտելեյ Պրակոֆևիչը Միտկայի երկար ձեռքն իր ձեռքի մեջ պահած, մի քայլ ետ գնաց, զարմանալով ու դիտելով նրան։

— Ի՞նչ եք մտիկ անում, խնամի ջան,— խռպոտ ու թավ ձայնով, ժպտալով ասաց Միտկան։

— Մտիկ եմ անում ու զարմանում. երբ որ քեզ ու Գրիշկային ծառայության էինք ճամփում, երեխաներ էիք, իսկ հիմի, տե՛ս, է՛... կարգին կազակ ես, հենց ատամանյան գնդի խարջ ես։

Լուկինիչնան լացակումած աչքերը Միտկայի վրա հառած, արաղ էր լցնում գավաթի մեջ, ու չտեսնելով այդ, այնքան լցրեց, որ արաղը թափվեց գավաթի պռունգներից։

— Է՛յ, քոսոտ, բա այդ տեսակ բարիքը կթափե՞ն,— նրա վրա բղավեց Միրոն Գրիգորևիչը։

— Շնորհավոր լինի ձեր ուրախությունը, շնորհավոր լինի քո երջանիկ գալուստը, Մի՛տրի Միրոնիչ։

Պանտելեյ Պրակոֆևիչը այս ու այն կողմ ծռեց աչքերի կապտավուն սպիտակուցները, ու շունչը պահելով, թարթիչները խաղացնելով, քամեց հաստափորիկ գավաթը։ Ձեռքով դանդաղորեն սրբելով շրթունքներն ու բեղերը, նա շեշտակի նայեց գավաթի հատակին. հետ տարավ գլուխը, մնացած կա-

Թիլը գցեց լայն բացած, սև ատամներով բերանը և միայն այդ ժամանակ շունչ առավ, ու երջանկաբար, երկար կկոցելով աչքերը, վարունգ կերավ։ Խնամու կնիկը նրան մատուցեց երկրորդ բաժակը, ու ծերունին մի անգամից ծիծաղաշարժ կերպով հարբեց։ Միտկան ժպտալով հետամուտ էր լինում նրան։ Նրա կատվային ակնաբիբերը մերթ նեղանում, ասես բոշխի կտրած կանաչ ճեղքեր էին դառնում, մերթ լայնանում, մթնանում էին։ Այդ տարիների ընթացքում նա անճանաչելիության չափ փոխվել էր։ Այդ հաղթանդամ, սև բեղավոր կազակի մեջ համարյա ոչինչ չէր մնացել այն բարալիկ Միտկայից, որին երեք տարի առաջ ծառայության էին ճամփել։ Նա զգալիորեն աճել էր, դարձել թիկնավետ, կորացել ու չաղացել, երևի մի հինգ փթից պակաս չէր լինի, երեսն ու ձայնը կոշտացել էին, իսկ տարիքից ավելի մեծ էր թվում։ Միայն աչքերն էլի նույնն էին,— հմայուն և անհանգիստ. հենց դրանց էլ ակնապիշ նայում էր մայրը, ծիծաղում ու լաց էր լինում, խորշոմած, դժգույն ձեռքով երբեմն շոշափում որդու ուղիղ, կարճ կտրած մազերը ու սպիտակ, նեղ ճակատը։

— Խաչով ես եկել, հա՞,— հարբած ժպտալով՝ հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Հիմի կազակներից էլ ո՞վ խաչ չունի,— մռայլվեց Միտկան,— Կրյուչկովի դոշից, հրե՞ն, երեք խաչ են կախել նրա համար, որ շտաբում թրև է գալի։

— Սա, խնամի ջան, հպարտ է, հա՜-ա,— վրա բերեց Գրիշկա պապին,— սա, մունդռիկը, ինձ՝ իրեն պապին է քաշել։ Չի կարող մեջք ծռել։

— Խաչերը հո դրա համար չե՞ն տալիս սրանց,— հոնքերը կիտեց Պանտելեյ Պրակոֆևիչը, բայց Միրոն Գրիգորևիչը նրան տարավ օթախը. նստեցնելով սնդուկի վրա, հարցրեց.

— Նատալյան ու թոռներս ո՞նց են, ողջ-առո՞ղջ են։ Էհ, փառք աստծու։ Դու կարծեմ ասացիր, խնամի, որ գործով ես եկել, հա՞։ Այդ ի՞նչ գործ է։ Ասա, թե չէ էլի կխմենք ու կհարբես։

— Փո՛ղ տուր, տուր, ի սեր աստծու։ Ազատիր նեղ տեղից, թե չէ հոգիս դուրս է գալի այդ... փողի պատճառով։

Պանտելեյ Պրակոֆևիչը խնդրեց աղերսադին, հարբածի նվաստությամբ։ Խնամին ընդհատեց նրան։

— Ինչքա՞ն։

— Հարյուր հատ թղթի կտոր։

— Ի՞նչ տեսակ։ Թղթի կտորները տարբեր են լինում։

— Հարյուր մանեթ։

— Այդպես է՛լ ասա։

Միրոն Գրիգորևիչը խառնխտելով սնդուկը, հանեց ու բաց արեց մի կեղտոտված թաշկինակ. թղթադրամները խշշացնելով, հաշվեց ու վերցրեց տասը հատ «կարմիր»,— տասանոց։

— Շնորհակալություն, խնամի ջան... աղատեցիր փորձանքից։

— Դե լավ, էլի՛։ Հո օտար մարդիկ չե՞նք։

Միտկան տանը մնաց հինգ օր. գիշերներն անց էր կացնում Անիկուշկայի կնոջ մոտ,— խղճում էր կանացի դառն կարիքի մեջ գտնվող, չմերժող ու սրտաբաց այդ կնկան։ Ցերեկները հյուր էր գնում ազգականների, ծանոթների մոտ։ Բարձրահասակ այդ տղան, պաշտպանական գույնի մի թեթև տուժուրկա հագած, գլխարկը ծռած, շորորալով շափշփում էր խուտորի փողոցները, պարծենալով, որ ցուրտը իրեն չի կպչի։ Մի անգամ, իրիկնադեմին, Մելեխովների մոտ է՛լ գնաց։ Ծաք վառած խոհանոցը լցրեց իր հետ բերած ցրտով ու ջինվորության անմոռանալի, բարկ հոտով։ Նստեց, խոսեց պատերազմի, խուտորի նորությունների մասին, նայեց Դարյային կկոցված, կանաչ, եղեգնագույն իր աչքերով ու պատրաստվեց գնալու։ Դարյան, որ անընդհատ նայում էր զինվոր տղային, մոմի բոցի պես երերաց, երբ Միտկան գնալիս շրխկալի ծածկեց դուռը. շրթունքները պինդ սեղմելով իրար, շալը գցեց ուսերին, բայց Իլյինիչնան հարցրեց.

— Ո՞ւր, Դաշկա։

— Դուրս... դուրս գնալու։

— Գնանք միասին։

Պանտելեյ Պրակոֆևիչը նստել էր առանց գլուխը բարձրացնելու, կարծես չէր է՛լ լսում խոսակցությունը։ Դարյան խոնարհած կոպերի տակ թաքցնելով խորամանկ ժպիտը, նրա կողքից անցավ դեպի դուռը. կեսուրը տնքտնքալով ու շորո-

բալով քայլեց նրա հետևից։ Բակի դռան մոտ Միտկան քայլելիս ճռճռացնում էր սապոգները, ծխում բռի մեջ ու թեթև հազում։ Լսելով դռան մղլակի ճռնչոցը, ուզեց քայլել դեպի արտաքին սանդուղքը։

— Այդ դո՞ւ ես, Միտրի։ Ուրիշի բակում կորցրե՞լ ես ճամփադ,— խայթեց նրան Իլյինիչնան։— Որ դուրս գաս, սողնակը գցի, թե չէ, քամի է, գիշերը դուռը կթրխկա... Փիա՜, ի՜նչ քամի է, հա՜-ա...

— Իսկի՜ է՛լ չեմ կորցրել ճամփես... Կփակեմ...— մի փոքր լռելուց հետո սրտնեղությամբ ասաց Միտկան, ու հազալով, հենց փողոցի միջով գնաց Անիկուշկայի տունը։

Միտկան թռչունի պես անփույթ էր ապրում. ապրում է այսօր,— լավ է, իսկ վաղն ինչ ուզում է լինի։ Նա մի կերպ քարշ էր տալիս ծառայությունը, ու չնայելով, որ անվախ սիրտ ուներ, ծառայության մեջ բարձրանալու հնարավորություն առանձնապես չէր փնտրում. դրա փոխարեն Միտկայի ծառայության ցուցակը մի փոքր չարաբաստիկ վիճակում էր գտնվում. դրա տերը երկու անգամ դատված էր,— մեղադրվել էր ռուսահպատակ մի լեհուհու բռնաբարելու և կողոպուտի համար, պատերազմի երեք տարվա ընթացքում անթիվ ու անհամար պատիժների և տույժերի էր ենթարկվել. մի անգամ ռազմա-դաշտային դատարանը քիչ մնաց գնդակահարության դատապարտեր նրան, բայց Միտկան կարողացավ այս անգամ էլ դուրս պրծնել փորձանքից, ու թեև գնդում ամենավատ զինվորն էր համարվում, այնուամենայնիվ կազակները սիրում էին նրան իր ուրախ, ժպտալից վարք ու բարքի համար, անպարկեշտ երգերի համար (Միտկան այդպիսի երգերի ճարտար վարպետ էր), ընկերականության ու պարզության համար, իսկ սպաները — ավազակային խիզախության համար։ Միտկան ժպտալով, թեթևաբար, գայլի ոտներով էր անցնում իր ճամփան, նրա մեջ շատ բան կար գազանների այդ ցեղից,— շորորուն քայլվածքի մեջ, կանաչ ու խոշորաբիբ աչքերով խեթ նայելու սովորության մեջ. նույնիսկ գլուխը շուռ տալու մեջ. Միտկան երբեք չէր պտտում կոնտուզիայից վնասված վիզը,— երբ հարկավոր էր ետ նայել, շուռ էր տալիս ամբողջ մարմինը։ Ամբողջովին հյուսված լինելով լայն կմախքին նստած պիրկ մկաններից, նա թեթև

էր ու շարժումներով ժլատ, առողջության և ուժի բարկ բուրը էր զգացվում նրանից. այդպես է բուրում հարոս թողած, խոփելով շուռ տված վարելահողը։ Միտկայի համար կյանքը շիտակ էր, բարդ չէր, ձգվում էր վարած ակոսի նման, և նա ընթանում էր այդ ակոսով որպես լիիրավ տեր։ Պրիմիտիվ կերպով պարզ ու մակերեսային էին նաև նրա մտքերը. քաղցա՞ծ է,— ուրեմն կարելի է և պետք է գողանալ, թեկուզև ընկերոջից, և նա գողանում էր, երբ քաղցած էր. մաշվե՞լ են կոշիկները,— պետք է հանել ու վերցնել գերի գերմանացու կոշիկները, պրծավ գնաց. տո՞ւյժ է ստացել,— ուրեմն պետք է քավել մեղքը, ու Միտկան քավում էր. գնում էր հետախուզության, բերում գերի վերցրած, կիսախեղված գերմանական ժամապահներին, կամավոր կերպով ամենավտանգավոր գործեր էր ձեռնարկում։ 1915 թվականին գերի ընկավ, ծեծվեց ու վիրավորվեց թրերով, իսկ գիշերը եղունգները ջարդոտելով մինչև արմատները, ծակեց մարագի կտուրը ու փախավ՝ վերցնելով գումակի ինչ-որ լծասարք իբրև հիշատակ։ Ահա թե ինչու շատ բան էին ներում Միտկային։

Միրոն Գրիգորևիչը վեցերորդ օրը նրան տարավ Միլլերովո, ուղեկցեց մինչև վագոնը, նայեց, թե ինչպես են աղմկում հեռացող կանաչ վագոնների անիվները, ու մտրակով երկար փորփրեց պլատֆորմի մոտ թափթփված խարամը՝ չբարձրացնելով գետնին հառած, մթնած աչքերը։ Լուկինիչնան լալիս էր որդու համար, Գրիշկա պապին տնքտնքում, հեծկլտում էր օթախում՝ խնչելով բռի մեջ ու բուրը քսելով չեքմենի աղտոտված փեշին։ Լալիս էր նաև Անիկուշկայի կինը, վերհիշում Միտկայի մեծ, փայփայանքների ժամին հրաբորբոք մարմինը ու տանջվում սուսանակից, որով նրան վարակել էր վիրավոր տղան։

Ժամանակը հյուսում էր օրերը, ինչպես քամին — ձիու բաշը։ Ցննդյան տոներից առաջ եղանակը հանկարծ տաքացավ, սկսվեց հալհլոցը. մի օր ու գիշեր անձրև էր գալիս, Դոնի առափնյա սարից ջուրը հոսում էր կարկաչուն առվակներով. ձյունից մերկացած հրվանդաններում կանաչեցին անցած տարվա խոտաբույսերը ու մամռոտ կրաշերտերը. Դոնի ափերի մոտ հորդում, փրփրում էր ջուրը, բարձրանում էր դիակնային կապտություն ունեցող սառույցը։ Մերկացած

սահողը անասելի քաղցր բույր էր տարածում։ Հետմանական ճանապարհով, անցած տարվա աղուրներով փըրփըրալից հոսում էր ջուրը։ Թարմ փլվածքների, կարմիր վերքերի պես բացվել էին խուտորի մերձակայքում գտնվող կավախառն յառերը։ Հարավային քամին Ջիրից բերում էր փտած խոտաբույսերի տամուկ հոտը, ու կեսօրվա ժամերին հորիզոնում լուրթ, նրբահյուս ստվերներ էին երևում։ Խուտորում, ցանկապատերի մոտ թափված մոխրի թմբերի կողքին խայտաբղետ լճակներ էին գոյացել։ Կալեքում, դեզերի մոտ հալչում էր գետինը, փտած ծղոտի անալի նեխահոտը ծակում էր անցորդի քիթը։ Ցերեկները տների քիվերից, ծղնոտածածկ կտուրներից, որոնցից սառցալեզուներ էին կախված, կպրաջուր էր հոսում, ցանկապատերի վրա անդադար ճռվողում էին կաչաղակները ու գարնան անժամանակ գալուց անհանգստացած, մռնչում էր Միրոն Գրիգորևիչի բակում ձմեռող հասարակական ցուլը։ Սա եղջյուրներով քանդում էր ցանկապատերը, քսմսվում որդնակերուքից մաշված կաղնի արորին, թափահարում փափլիկ բուխախը, կոխկրտում բակի փխրուն, կիսահալված ձյունը։

Սննդյան տոնի երկրորդ օրը ջարդվեց Դոնի սառույցը։ Գետի մեջտեղից հուժկու ճայթյուններով ու կրճտոցով ընթանում էր սառցահոսանքը։ Սառցակոշտերը քնեած, հրեշավոր ձկների նման նետվում էին ափ։ Դոնի մյուս կողմում հարավային ուժեղ քամուց տատանվում, երերվում էին բարդիները։

Շշշշշշ՞ուուու...— գալիս էր այնտեղից խռպոտ, խուլ աղմուկը։

Բայց գիշերամտին սարը սկսեց շաչել, հրապարակում կռնչացին ագռավները, Խրիստոնյայի խողը մի կտոր խոտ բերանն առած՝ վազ տվեց Մելեխովի խրճիթի կողքից, ու Պանտելեյ Պրակոֆևիչը մտածեց՝ «Վե՛րջ գարնանը, էգուց կզոռի ցուրտը»։ Գիշերը քամին փչեց արևելքից, թեթև սառնամանիքը բյուրեղյա սառույցով կարկատեց հալհլոցից պատառոտված լճակները։ Առավոտյան արդեն մոսկովյան քամին էր փչում, ծանր ճնշում էր սառնամանիքը։ Նորից հաստատվեց ձմեռը։ Միայն Դոնի մեջտեղում, հիշեցնելով տաք

եղանակի մասին, մեծ, սպիտակ տերևների նման լողում էին սառցարեկորները, ու բլրակի վրա ցուրտ շոգի էր արձակում մերկացած հողը։

Սննդից հետո շուտով ստանիցայի ժողովում գրագիրը Պանտելեյ Պրակոֆևիչին հաղորդեց, որ Կամենսկայայում տեսել է Գրիգորիին և սա խնդրել էր հայտնել իր հարազատներին, որ շուտով ինքը տուն է գալու։

VII

Սերգեյ Պլատոնովիչ Մոխովը փոքրիկ, թուխ ձեռներով, որոնք դրսի կողմից պսպղուն մաղերով էին ծածկված, բոլոր կողմերից շոշափում էր կյանքը։ Երբեմն կյանքը ինքն է՛լ էր խաղ խաղում նրա հետ, երբեմն կախվում էր ինչպես քարը ջրում խեղդվողի վզից։ Սերգեյ Պլատոնովիչը շատ բան էր տեսել իր կյանքում, շատ անգամ էր այլևայլ աղմուկի մեջ ընկել։ Վաղուց, երբ դեռ աշխատում էր ցորենի մթերման վրա, նրան հաջողվել էր կազակներից չնչին գներով հացահատիկ գնել, հետո էլ խուտորից դուրս էր տարել չորս հազար փութ այրված ցորեն ու թափել Դուռնոյ կոչված յառի տակ, գետի մեջ։ Հիշում էր նաև 1905 թվականը, երբ աշնանային մի գիշեր խուտորցիներից մեկը որսորդական հրացանից կրակեց նրա վրա։ Հարստանում էր Մոխովը ու շատ ծախսեր անում, ի վերջո դրստեց վաթսուն հազար, մուծեց Վոլգո-Կամսկի բանկը, բայց հեռատեսությամբ զգում էր, որ անխուսափելիորեն մոտենում է մեծ ցնցման ժամանակը։ Սերգեյ Պլատոնովիչը սև օրեր էր սպասում, ու չսխալվեց. տասնյոթ թվականի հունվարին ուսուցիչ Բալանդան, որ կամաց-կամաց մեռնում էր թոքախտից, գանգատվեց նրան.

— Ռեոլյուցիան քթներիս առաջ է, իսկ ես ամենահիմար ու ամենասենտիմենտալ հիվանդությունից սատկելու վրա եմ։ Վիրավորական է, Սերգեյ Պլատոնովիչ... Վիրավորական է, որ չեմ տեսնելու, թե ինչպես ցաք ու ցրիվ կտան ձեր կապիտալները ու ձեզ կվռնդեն տաքուկ բնից։

— Այստեղ ի՞նչ վիրավորական բան կա։

— Հապա ի՞նչպես։ Այնուամենայնիվ, գիտե՞ք, հաճելի կլինի տեսնել, թե ինչպես ամեն ինչ տակնուվրա կլինի։

— Օ՜ ոչ, սիրելիս։ Դու այսօր մեռիր, իսկ ես՝ վաղը,— թաքուն շարանալով՝ ասաց Սերգեյ Պլատոնովիչը։

Հունվարին խուտորներով ու ստանիցաներով մեկ դեռ արձագանքվում էին մայրաքաղաքի խոսակցությունները Ռասպուտինի ու ցարական ընտանիքի մասին, իսկ մարտի սկզբին ինքնակալության տապալման լուրը ցնցեց Սերգեյ Պլատոնովիչին, ինչպես թակարդը — տափաստանային արոսին։ Կազակները հեղաշրջման լուրը ընդունեցին զուսպ տագնապով և սպասողական վիճակում։ Այդ օրը ծերունիները և ավելի ջահել կազակները մինչև երեկո խմբվում էին Մոխովի փակ խանութի առաջ։ Խուտորի ատաման Կիրյուշկա Սալդատովը (սպանված Մանիցկովի հաջորդը),— բարձրահասակ, շիկարեղ և քիչ շլդիկ մի կազակ,— ճնշված էր, համարյա չէր մասնակցում խանութի առաջ տեղի ունեցող աշխույժ խոսակցությանը, շլդիկ աչքերով նայում էր կազակներին, երբեմն շփոթված բացականչում.

— Միթամ զո՜րծ են արել, էլի... Ա՜յ քեզ բան... Հիմի ո՞նց պիտի ապրել...

Սերգեյ Պլատոնովիչը պատուհանից տեսնելով խանութի առաջ հավաքված ամբոխը, որոշեց գնալ ասուլիս անել ծերուկների հետ։ Հագավ մուշտակը, ու հենվելով արծաթե անշուք սկզբնատառեր ունեցող կինամոնագույն ձեռնափայտին, դուրս եկավ շքադռնից։ Խանութի կողմից գալիս էր խոսակցությունների դժժոցը։

— Էհ, Պլատոնիչ, դու գրագետ մարդ ես, պատմիր մեզ, տգետներիս, թե հիմի ի՞նչ կլինի, ո՞նց կլինի,— վախեցած ժպտալով, մրսած քթի կողքերը կնճռոտելով, հարցրեց Մատվեյ Կաշուլինը։

Պատասխանելով Սերգեյ Պլատոնովիչի բարևին, ծերունիները պատկառանքով հանեցին գդակները, ճանապարհ բացեցին ու տեղ տվին բոլորակում։

— Առանց ցարի ենք ապրելու...— կմկմաց Սերգեյ Պլատոնովիչը։

Բոլոր ծերունիներն էլ խոսեցին միանգամից։

— Բա առանց ցարի ո՞նց կլինի։

— Մեր հայրերն ու պապերը ցարերի օրով են ապրել, իսկ հիմի ցարը հարկավոր չի՞, հը՞։

— Գլուխը որ կտրես, ոտները առանց նրան հո չե՞ն ապրի։

— Բա ի՞նչ իշխանություն է լինելու։

— Դու մի՛ քաշվի, Պլատոնիչ, մեզ հետ պարզ խոսիր, ինչի՞ց ես վախում։

— Կարելի է նա ինքն է՛լ չգիտի,— ժպտաց Փչան Ավդեիչը, ու նրա վարդագույն թշերի փոսիկները է՛լ ավելի խորացան ժպիտից։

Սերգեյ Պլատոնովիչը բութ հայացքով դիտեց իր հին, ռետինե բոտերը, ասաց՝ բերանից ցավով դուրս տալով բառերը։

— Պետական դուման է կառավարելու։ Ռեսպուբլիկա պիտի լինի մեզանում։

— Տե՛ս թե ուր հասան, գրո՛ղը տանի։

— Երբ որ մենք ծառայում էինք լուսահոգի Ալեքսանդր երկրորդի օրով...— սկսեց Ավդեիչը, բայց մռայլադեմ ծերունի Բոգատիրյովը խստորեն ընդհատեց նրան.

— Լսե՛լ ենք, լսե՛լ։ Այստեղ խոսքը դրա մասին չէ։

— Ուրեմն կազակներին վե՞րջ է գալու։

— Մենք այստեղ գործադուլներ ենք սարքում, իսկ գերմանացին այդ ժամանակ մինչև Սանկտ-Պետերբուրգ է՛լ կհասնի։

— Թե որ հավասարություն է, ուրեմն ուզում են մեզ հավասարեցնել մուժիկներին...

— Մեկ էլ տեսար ձեռքները հողերին է՛լ հասավ, հը՞...

Սերգեյ Պլատոնովիչը բռնազբոսիկ ժպտալով դիտեց ծերուկների հուզված դեմքերը, նրա հոգին մթնշաղվեց, վհատվեց։ Նա սովոր շարժումով երկարեց շիկակարմրավուն մորուքը, ու հայտնի չէ ում վրա չարանալով՝ ասաց.

— Ահա թե ուր հասցրին Ռուսաստանը, ծերուկներ։ Ձեզ կհավասարեցնեն մուժիկներին, ձեզ կզրկեն արտոնություններից, ու դեռ կհիշեն է՛լ հին վիրավորանքները։ Ծանր ժամանակներ են գալիս... Նայած թե իշխանությունն ում ձեռքը կընկնի, կարող են գործը վերջնական կործանման է՛լ հասցնել։

— Կապրենք, կտեսնենք։— Բոգատիրյովը օրորեց գլուխը և հոնքերի փրչոտ փաթիլների տակից անվստահորեն նա-

յեց Սերգեյ Պլատոնովիչին։— Դո՛ւ, Պլատոնիչ, քո գիծն ես տանում, իսկ մեր վիճակը գուցեև թեթևանում է դրանից, հը՞...

— Ինչո՞վ է թեթևանում,— խայթող տոնով հարցրեց Սերգեյ Պլատոնովիչը։

— Կարելի է նոր իշխանությունը վերջացնի պատերազմը... Հո կարո՞ղ է այդպիսի բան լինել, հը՞։

Սերգեյ Պլատոնովիչը ձեռքը թափ տվեց ու ծերունական քայլվածքով գնաց դեպի իր տան կապույտ, շքեղ արտասանդուղքը։ Նա քայլում էր տարտամորեն մտածելով փողերի, աղացի և վատացող առևտրի մասին, հիշեց, որ Ելիզավետան հիմա Մոսկվայում է, իսկ Վլադիմիրը շուտով պետք է գա Նովոչերկասկից։ Երեխաների վերաբերյալ անհանգստության բութ ծակոցը չխախտեց մտքերի դեգերող անկապությունը։ Այսպես նա հասավ մուտքի սանդուղքին, զգալով, թե ինչպես այդ օրվա ընթացքում միանգամից մոայլվեց կյանքը և նույնիսկ ինքը ասես ներքուստ խունացավ ցավագին մտքերից։ Թեթանի ժանգային, թթու համը լորձի հոսանք առաջացրեց։ Նայելով խանութի մոտ հավաքված ծերունիներին, Սերգեյ Պլատոնովիչը թքեց մուտքի սանդուղքի քանդակավոր բազրիքի վրայով, ոտները քստքստացնելով բարձրացավ պատշգամբը ու մտավ սենյակները։ Աննա Իվանովնան ամուսնուն դիմավորեց սեղանատանը, դժգույն աչքերի սովորական անտարբեր հայացքը սահեցրեց նրա դեմքով, հարցրեց.

— Թեյ խմելուց առաջ բան կուտե՞ս։

— Է՛-է, չէ՛։ Ի՞նչ ուտել, ի՞նչ բան,— զզվանքով հրաժարվեց Սերգեյ Պլատոնովիչը։

Հանելով վերնահագուստը, նա դեռ էլի զգում էր բերանի ժանգային համը և գլխի անուրախ, խուլ դատարկությունը։

— Լիզայից նամակ կա։

Պարարտ ու լխկլխկան Աննա Իվանովնան շորորուն քայլվածքով անցավ ննջարան (նա միշտ այդպես էր քայլում, ամուսնության առաջին օրերից մեծ տնտեսությամբ ծանրաբեռնված), բերեց պատռված մի ծրար։

«Դատարկ աղջիկ է և կարծես խելքից թեթև է»,— դատեր մասին առաջին անգամ այսպես մտածեց Սերգեյ Պլատոնովիչը՝ քթթը ծռմռելով ամուր ծրարի արձակած օձանելիքի հոտից։ Ծերունին անուշադիր կարդաց նամակը, հայտնի չէ ինչու կանգ առավ «տրամադրություն» բառի վրա ու երկար մտածեց՝ դրա մեջ փնտրելով իրեն համար անհասկանալի իմաստը։ Ելիզավետան նամակի վերջում խնդրել էր փող ուղարկել։ Սերգեյ Պլատոնովիչը դեռ էլի զգալով գլխի ցավագին դատարկությունը, կարդաց վերջին տողերը։ Նա անսպասելիորեն ուզեց կամացուկ լաց լինել։ Ծառս եղած կյանքն այդ ակնթարթում նրան ցույց էր տալիս իր դատարկ ներքինը։

«Նա օտար է ինձ,— մտածում էր հայրը դստեր մասին,— ես էլ օտար եմ նրան։ Ազգակցական զգացումներ է ապրում, երբ իրեն փող է հարկավոր... Կեղտոտ աղջիկ է, սիրեկաններ ունի... իսկ երբ փոքրիկ էր, շեկլիկ էր ու հարազատ... Աստվա՛ծ իմ. ի՛նչպես փոխվում է ամեն ինչ... Մինչև ծերությունս էլ հիմար մնացի, հավատում էի գալիք ինչ-որ մի լավ կյանքի, իսկ իրականում մենակ եմ ինչպես մատուռ... Անմաքուր ճանապարհով էի հարստանում,— մաքուր ճանապարհով չես է՛լ կարող հարստանալ,— ժլատություն էի անում, իսկ հիմա էլ ահա քեզ ռևոլյուցիա, վաղն էլ իմ նոքարները կարող են ինձ տանից դուրս անել... Ամեն ինչ գրողի ծոցը գնա... Իսկ երեխանե՞րս։ Վլադիմիրը հիմար է... Եվ ի՞նչ օգուտ, միևնույն է, իհարկե...»

Ինչ-որ անհեթեթ կապակցությամբ նա վերհիշեց աղացում վաղուց պատահած հետևյալ դեպքը. աղուն բերած մի կազակ սկանդալ սարքեց մեծ աղունավարձի պատճառով և հրաժարվեց այն վճարել. նա, Սերգեյ Պլատոնովիչը, այդ ժամանակ մեքենայական բաժանմունքում էր, աղմուկը լսելով՝ դուրս եկավ, ու իմանալով գործի էությունը, կշռորդին և աղացի աշխատողներին հրամայեց չտալ աղացած ալյուրը։ Կարճահասակ, անբարետես կազակը պարկի ծայրը քաշում էր դեպի իրեն, աղացի աշխատողը, ամրակազմ, լայնակուրծք Զավարն էլ դեպի իրեն էր քաշում։ Այնպես պատահեց, որ կազակը հրեց Զավարին, սա էլ ետ տանելով ու վրա բերելով մեծ, պինդ սեղմած բռունցքը, խփեց նրա քունքին։ Կազակն ընկավ, հետո, օրորվելով ոտքի ելավ. նրա ձախ քունքին երևում էր թաց, արյունոտ քերծվածքը։ Նա հանկարծ քայլեց

գեպի Սերգեյ Պլատոնովիչը, շունչ առավ ու հեծեծալով շշնջաց.

— Վերցրու ալյուրը, լափի՛ր,— և ուսերը դողացնելով դուրս ելավ։

Սերգեյ Պլատոնովիչն առանց որևէ նկատելի կապակցության հիշեց այս դեպքը և դրա հետևանքները. կազակի կինը եկավ խնդրելու, որ վերադարձնեն ալյուրը. զոռով արցունքներ թափելով, աղացի աշխատողներից կարեկցություն սպասելով, նա ասաց.

— Այդ ի՞նչ բան է, բարի մարդիկ, հը՞։ Ի՞նչ իրավունք է դա։ Տո՛ւր ալյուրը։

— Գնա՛, քո՛ւրս, գնա առանց ղալմաղալի, թե չէ մազերդ կպոկեմ,— քմծիծաղ էր տալիս Զավարը։

Անհաճելի ու վրդովեցուցիչ էր, երբ կշռորդ Վալետը,— նույնպես թուլակազմ և կարճահասակ, ինչպես այն կազակը,— կռվի բռնվեց Զավարի հետ ու սրանից դաժան ծեծ ուտելուց հետո եկավ հաշիվը մաքրելու, որ հեռանար։ Այս ամենը արագորեն անցավ Սերգեյ Պլատոնովիչի մտքով, երբ նա շուռումուռ էր անում կարդացած նամակը՝ տարտամ հայացքը հառելով դեպի առաջ։

Այդ օրը ի վերջո թողեց խոցող, անամոք մի ցավ։ Սերգեյ Պլատոնովիչը գիշերը վատ քնեց, շուռ էր գալիս՝ անհեթեթ մտքերով ու անգիտակցական ցանկություններով տարված, կեսգիշերից անց քուն մտավ, իսկ առավոտյան, լսելով, որ Եվգենի Լիստնիցկին ռազմաճակատից եկել է Յագոդնոյե, հոր մոտ, որոշեց գնալ այնտեղ, խոսել, պարզել իսկական գրությունը, ազատվել հոգին մորմոքող դառն նախազգացումներից։ Եմելյանը ծխելով ծխամորճը, փոքրիկ մի ձի լծեց քաղաքային սահնակին, տիրոջը տարավ Յագոդնոյե։

Խուտորի վերևում նարնջագույն ծիրանի նման հասունանում էր արևը, նրա տակին ու ավելի վերև կարծես ծուխ արձակում, մարմրում էին ամպերը։ Ծակող, ցուրտ օդը հագեցված էր հյութեղ պտղաբույրով։ Ձիուկի սմբակների տակ ճքճքում էր ճանապարհի սառույցը, քամին դեպի ետ էր բերում ձիուկի ռունգերից ելնող գոլորշին, որը եղյամնանում, նստում էր նրա բաշին։ Սերգեյ Պլատոնովիչը արագ ընթացքից ու ցրտից հոգեպես անդորրացած, ննջում էր, օրորվում,

մեջքը հենում սահնակի գորգապատ, հետին կողին։ Իսկ խուտորում, հրապարակում սևին էր տալիս քուրքեր հագած կազակների ամբոխը. ոչխարային կարգով խռնվում էին կանայք Դոնի մուշտակներով, որոնց եզրերին ջրաքիսի թուխ մորթիներ էին կարված։

Ամբոխի մեջտեղում ուսուցիչ Բալանդան թաշկինակը կապտած բերանի մոտ պահելով, կիսամուշտակի մերակին կարմիր ժապավեն կպցրած, աչքերը վառ փայլեցնելով, ասում էր.

— ...Տեսնո՞ւմ եք, եկավ անիծված ինքնակալության վերջը։ Հիմա ձեր զավակներին այլևս չեն ուղարկի բանվորներին մտրակներով խաղացնելու, վերջացավ ձեր խայտառակ ծառայությունը արյունախում ցարին։ Սահմանադիր ժողովը կլինի նոր, ազատ Ռուսաստանի տերը։ Նա կկարողանա ուրիշ, այսպես ասած՝ լուսավոր կյանք կառուցել։

Հետևից, կիսամուշտակի փոթերից քաշում էր նրա կենակցուհին, աղերսանքով շշնջում.

— Մի՛տյա, թո՛ղ։ Հասկացիր, որ քեզ համար դա վնասակար է, չի՛ կարելի։ Ախր էլի՛ արյուն կգնա... Մի՛տյա։

Կազակները լսում էին Բալանդային, շփոթված կիտում հոնքերը, տնքտնքում, թաքցնում ժպիտները։ Այնպես էլ չթողին, որ նա վերջացներ ճառը։ Առջևի շարքից թավ. կարեկցող մի ձայն ասաց.

— Դեհ, ոնց որ երևում է, կյանքը լուսավոր կլինի. ամադու, հոգիդ սիրեմ, այդ չես տեսնի։ Գնայիր տուն էլի՛, թե չէ դրսում ցուրտ է...

Բալանդան կիսատ թողեց ֆրազը ու սփրթնած դուրս եկավ ամբոխի միջից։

Սերգեյ Պլատոնովիչը կեսօրին հասավ Յագոդնոյե։ Եմելյանը ձիուկի սանձը բռնած, մոտեցրեց ախոռի կողքին գտնվող, ուռից գործած մսուրին, ու մինչդեռ տերը իջնում էր սահնակից և քուրքի փեշը ետ գցելով՝ հանում թաշկինակը,— կարողացավ հանել ձիուկի սանձը, ձիուկի վրա տապճակ գցել։ Մուտքի սանդուղքի մոտ Սերգեյ Պլատոնովիչին դիմավորեց բարձրամարմին, սպիտակավուն, շիկակարմիր խալեր ունեցող որձ շունը։ Նա կանգնեց օտար մարդու դիմաց, ձգեց երկար, ջլուտ ոտները, հորանջեց. նրա հետևից նույնպիսի

ծույլ շարժումներով ոտքի ելան նաև մնացած շները, որոնք սև հանգույցների նման պառկել էին սանդուղքի կողքին։

«Թյո՛ւ, ինչքան շա՞տ են դրանք...»— Սերգեյ Պլատոնովիչը վախվխելով նայում էր շներին, ընկրկելով բարձրանում սանդուղքը։

Ջոր, լուսավոր նախասենյակում ծանր շնահոտ և քացախի հոտ էր գալիս։ Սանդուկի վերևում, եղջերվի լայնադիր եղջյուրներից կախված էին սպայական, կարակուլե մի փափախ, արծաթափայլ ծոպով մի բաշլուղ ու յափնջի։ Սերգեյ Պլատոնովիչը նայեց այնտեղ. մի ակնթարթ նրան թվաց, թե սանդուկի վրա ինչ-որ փրչոտ, սև մարդ է կանգնած, տարակուսանքով վեր է քշել ուսերը։ Կողքի սենյակից դուրս եկավ չաղ, սևաչյա մի կին։ Նա ուշադրությամբ նայեց մուշտակը հանող Սերգեյ Պլատոնովիչին, ու չփոխելով թխավուն-գեղեցիկ դեմքի լուրջ արտահայտությունը, հարցրեց.

— Դուք Նիկոլայ Ալեքսեևիչի մո՞տ եք եկել։ Ես հիմա կզեկուցեմ։

Առանց դուռը ծեծելու նա մտավ դահլիճ, պինդ ծածկեց դուռը։ Սերգեյ Պլատոնովիչը հանձին այդ չաղացած, սևաչյա, գեղեցիկ կնոջ դժվարությամբ ճանաչեց Ակսինյա Աստախովային։ Վերջինս իսկույն ճանաչեց նրան. բալի գույնի շուրթերը պինդ սեղմեց իրար, քայլեց մարմնի անբնականորեն ուղիղ դիրքով, մի փոքր շարժելով փայլատ, մերկ արմունկները։ Մի րոպեից հետո նրա հետևից դուրս եկավ ինքը, ծերունի Լիստնիցկին։ Չափավոր սիրալիրությամբ ժպտալով, նա նեղոզամտությամբ, թավ ձայնով ասաց.

— Օ՜-օ, արժանապատվություն, այդ ո՞ր քամին բերեց։ Խնդրեմ...— մի կողմ անցավ, ձեռքի շարժմամբ հյուրին հրավիրելով դահլիճ։

Սերգեյ Պլատոնովիչը գլուխ տվեց մեծ մարդկանց նկատմամբ վաղուց յուրացրած պատկառանքով. մտավ դահլիճ։ Նրան դիմավորելու համար մոտեցավ Եվգենի Լիստնիցկին՝ ակնոցի տակ կկոցելով աչքերը։

— Այս հիանալի է, ամենահարգո Սերգեյ Պլատոնովիչ, բարե՛ ձեզ։ Այդ ի՞նչ է, կարծես թե ծերանում եք, հը՞։

— Դեհ յա՛վ, Եվգենի Նիկոլաևիչ, ես մտածում եմ դեռ

ձեզանից ավելի երկար ապրել։ Ի՞նչպես եք դուք, ողջ-առո՞ղջ եք։

Եվգենին ժպտալով, փայլեցնելով ոսկե ատամնապսակները, հյուրին թևանցուկ արած, տարավ դեպի բազկաթոռը։ Նրանք նստեցին մի փոքրիկ սեղանի շուրջը, աննշան ֆրազներ փոխանակեցին՝ միմյանց դեմքերի վրա փնտրելով այն փոփոխությունները, որոնք կատարվել էին վերջին հանդիպումից հետո։ Թեյ մատուցելու կարգադրություն անելով, պանը ներս մտավ։ Բերանին դրած մեծ, ծուռ ծխամորճը ծուխ էր արձակում։ Նա կանգ առավ Սերգեյ Պլատոնովիչի բազկաթոռի մոտ, ու իր ծերունական, ոսկրոտ, երկար ձեռքը գնելով սեղանին, հարցրեց.

— Ի՞նչ կա ձեր խուտորում։ Լսե՞լ եք... այդ լավ լուրերը։

Սերգեյ Պլատոնովիչը ներքևից վերև նայեց գեներալի կզակի ու պարանոցի մաքուր սափրված, կախ ընկած ծալքերին, հոգոց հանեց։

— Ի՞նչպես չլսեինք...

— Ինչպիսի՜ ճակատագրական կանխորոշվածությամբ էր կյանքը ընթանում դեպի այդ բանը...— գեներալը խաղացնելով ադամախնձորը, կուլ տվեց ծուխը։— Ես այդ նախատեսել էի դեռ պատերազմի սկզբին։ Ինչ արած... դինամիտիան դատապարտված էր։ Ես այժմ հիշեցի Մերեժկովսկուն... մի՞տք է, Եվգենի, «Պյոտրը և Ալեքսեյը»։ Այնտեղ, խոշտանգումից հետո, արքայորդի Ալեքսեյն ասում է հորը՝ «Իմ արյունը կթափվի քո հեռանորդների գլխին...»

— Մեզ մոտ ոչինչ էլ պարզ չէ,— հուզվելով ասաց Սերգեյ Պլատոնովիչը. բազկաթոռի վրա անհանգիստ շարժումներ անելով՝ նա ծխեց, շարունակեց.— Մի շաբաթ է, որ լրագիր չենք ստանում։ Ամենատանհավանական լուրեր են պտտվում, շփոթություն է տիրում։ Փորձանք է, աստված վկա։ Լսելով, որ Եվգենի Նիկոլաևիչը արձակուրդ է եկել, ես որոշեցի գալ այստեղ, ձեզ մոտ, հարցնել, թե այնտեղ ինչ է կատարվում, ինչ պետք է սպասել։

Եվգենին, որի մաքուր սափրված, սպիտակավուն դեմքից արդեն չքացել էր ժպիտը, պատմեց.

— Ահավոր իրադարձություններ են... Զինվորները տառացիորեն բոլորն էլ բարոյալքվել են, չեն ցանկանում կրա-

վել,— հոգնած են։ Իսկապես ասած, այս տարի արդեն չկան զինվորներ այդ բառի հանճարեղ իմաստով։ Զինվորները սանձարձակ ու վայրենի հանցագործների բանդաներ են դարձել։ Ա՛յ, օրինակ, հայրիկը... նա չի կարող այդ պատկերացնել։ Նա չի կարող պատկերացնել, թե բարոյալքման ինչ աստիճանի է հասել մեր բանակը... Ինքնակամ հեռանում են դիրքերից, կողոպտում ու սպանում են բնակիչներին, սպանում են սպաներին, մարդասպանություն են անում... Մարտական հրամանը չկատարելը այժմ սովորական բան է։

— Զուկը գլխից է հոտում,— ծերունի Լիստնիցկին բերանից ծխի հետ միասին դուրս փչեց այդ ֆրազը։

— Ես այդ չէի ասի,— Եվգենին կնճռոտեց դեմքը, նրա մի փոքր ճիլոտ կոպը ցնցվեց ջղայնանալուց,— ես այդ չէի ասի... Բանակը ներքևից է նեխվում, նրան բարոյալքում են բոլշևիկները։ Նույնիսկ կազակական զորամասերը, մանավանդ այն զորամասերը, որոնք մոտիկից էին շփվում հետևազորի հետ, բարոյապես անկայուն են։ Ամենասաստիկ հոգնածություն և ձգտում դեպի հայրենի խրճիթները... Եվ ահա բոլշևիկները...

— Ի՞նչ են ուզում նրանք,— չհամբերեց Սերգեյ Պլատոնովիչը։

— Օ՜...— Լիստնիցկին քմծիծաղ տվեց,— նրանք ուզում են... դա խոլերայի բացիլներից է՛լ վատ է։ Վատ է այն տեսակետից, որ ավելի հեշտ է կպչում մարդուն ու արմատանում հենց զինվորների հոգ մասսաների մեջ։ Ես խոսում եմ իդեայի մասին։ Այստեղ արդեն ոչ մի կարանտինով չես փրկվի։ Բոլշևիկների մեջ, անկասկած, կան տաղանդավոր մարդիկ, մի քանիսների հետ ես շփվել եմ, կան ուղղակի ֆանատիկոսներ, բայց գերակշռող մեծամասնությունը սանձարձակ, անբարոյական սուբյեկտներ են։ Նրանց հետաքրքրում է ոչ թե բոլշևիկյան ուսմունքի էությունը, այլ միայն թալանելու, ֆրոնտից հեռանալու հնարավորությունը։ Նրանք ուզում են ամենից առաջ իրենց ձեռքը վերցնել իշխանությունը, ինչ պայմանով էլ լինի՝ վերջացնել, ինչպես իրենք են արտահայտվում, «իմպերիալիստական» պատերազմը,— թեկուզև սեպարատ հաշտության ճանապարհով,— հողերը հանձնել գյուղացիներին, գործարանները՝ բանվորներին։ Հասկանալի է, որ

դա որքան ուտոպիական, նույնքան և անհեթեթ բան է, բայց այդպիսի պրիմիտիվով նրանք նվաճում են զինվորների տրամադրությունը։

Լիստնիցկին խոսում էր իր խուլ՝ ցասումը զսպելով։ Նրա մատների մեջ շարժվում էր փղոսկրե մուշտակը։ Սերգեյ Պլատոնովիչը լսում էր դեպի առաջ թեքված, ասես պատրաստվելով տեղից վեր թռչելու։ Ծերունի Լիստնիցկին դահլիճում ետ ու առաջ էր քայլում՝ քստքստացնելով սև, թավարծի մուճակները, կծոտելով կանաչավուն-սպիտակ բեղը։

Եվգենին պատմեց, թե ինչպես դեռ մինչև հեղաշրջումը ինքը ստիպված էր փախչել գնդից՝ վախենալով կազակների վրեժից. պատմեց Պետրոգրադում տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնց ականատես էր եղել ինքը։

Խոսակցությունը մի բոպե դադարեց։ Ծերունի Լիստնիցկին, նայելով Սերգեյ Պլատոնովիչի քթարմատին, հարցրեց.

— Ջե՞ս գտնի մոխրագույն ձին, որ տեսել էիր աշնանը,— «Բոյարինայի» քուռակը։

— Հիմա մի՞թե դրա ժամանակն է, Նիկոլայ Ալեքսեևիչ,— Մոխովը խղճուկ կերպով կնճռոտեց դեմքը և անհույս թափ տվեց ձեռքը։

Այդ ժամանակ ծառայանոցում Եմելյանը տաքացել էր ու թեյ էր խմում, կարմիր թաշկինակով սրբում կարմիր ճակընդեղի գույն առած դեմքը, պատմում խուտորի ու նորությունների մասին։ Ակսինյան կանգնել էր մահճակալի մոտ, կուրծքը հենել դրա քանդակավոր մեջքին, փաթաթվել փափուկ շալով։

— Երևի մեր տունն արդեն քանդվե՞լ է, հա՞,— հարցրեց նա։

— Չէ՛, ինչո՞ւ պիտի քանդվի, անվնա՛ս է, ո՞վ է ձեռ տվողը որ,— դանդաղորեն արտասանելով բառերը, պատասխանեց Եմելյանը։

— Ո՞նց են ապրում մեր հարևանները,— Մելեխովները։

— Կամաց-կամաց ապրում են, էլի՛։

— Պետրոն արձակուրդ չի՞ եկել։

— Ոնց որ թե չի եկել։

— Բա Գրիգորին... Նրանց Գրիշկա՞ն։

— Գրիշկան եկավ ծննդից հետո։ Նրա կնիկն անցած

տարի երկու երեխա բերեց... Գրիգորին... Ո՞նց չէ, եկել էր վիրավորված լինելու պատճառով։

— Վիրավորվե՞լ էր։

— Բա ո՞նց։ Վիրավորվել էր թևից։ Նրան ամբողջովին քերծել էին. չգիտես դոշի խաչե՞րն են շատ, թե՞ ջանի սպիները։

— Ի՞նչպես է նա, Գրիշկան,— կոկորդի չոր ջղակծկումից ճնշվելով ու թեթև հազալով, կտրվող ձայնը շտկելով, հարցրեց Ակսինյան։

— Էլի այնպես է... քիթը կուզիկ, ինքը սև։ Ոնց որ իսկական թուրք, էլի՛։

— Ես այդ չեմ հարցնում... Հո չի՞ ծերացել։

— Դե ո՞նց ասեմ. կարելի է թե մի քիչ ծերացել է։ Կնիկը երկու երեխա բերեց,— ուրեմն շատ չի ծերացել։

— Այստեղ ցուրտ է...— ուսերը դողացնելով՝ ասաց Ակսինյան ու դուրս ելավ։

Լցնելով թեյի ութերորդ բաժակը, Եմելյանն աչքերով ուղեկցեց Ակսինյային, կույրի քայլվածքի դանդաղությամբ ասաց.

— Զզվելի, հոտած հոպոպ, գեշից է՛լ գեշը։ Վաղո՞ւց էր, որ խուտորում քոշերով էիր ման գալի, իսկ հիմի չի է՛լ ասում «էստի», այլ «այստեղ»... Ցա՛վս բռնի այդ տեսակ կնանոցը։ Ես այդ լրբերին... Ա՛խ դու, օձի շապիկ։ Հը՞մ... «այստեղ ցուրտ է»... Ջիո՛ւ խլինք, թյո՛ւ։

Իրեն վիրավորված զգալով, նա կիսատ թողեց ութերորդ բաժակը, վեր կացավ, խաչակնքեց, գնաց՝ հպարտորեն նայելով շուրջը և սապոգներով գիտակցաբար կեղտոտելով մաքրած հատակը։

Վերադարձի ամբողջ ճանապարհին նա մռայլ էր, ինչպես և Սերգեյ Պլատոնովիչը։ Ակսինյայի պատճառած բարկությունը թափում էր ձիուկի վրա, մտրակի ծայրով դաղում ձիուկի ամոթատեղերը ու խայթող տոնով նրան հորջորջում «ախմախ», «թոփալ» բառերով։ Հակառակ իր սովորության, Եմելյանը մինչև խուտոր հասնելը ոչ մի բառ չփոխանակեց իր տիրոջ հետ։ Երկչոտ լռություն էր պահպանում նաև Սերգեյ Պլատոնովիչը։

VIII

Հետևակ դիվիզիաներից մեկի առաջին բրիգադը, որ գտնվում էր Հարավ-արևմտյան ռազմաճակատի ռեզերվում, Դոնի 27-րդ կազակական գնդի հետ միասին փետրվարյան հեղաշրջման նախօրյակին հանեցին ռազմաճակատից, նպատակ ունենալով փոխադրել մայրաքաղաքի շրջակայքը՝ սկսված անկարգությունները ճնշելու համար։ Բրիգադը տարան թիկունք, ձմեռային նոր հագուստ տվին, մի օր հիանալի կերակրեցին, մյուս օրը նստեցրին վագոնները, ուղարկեցին, բայց իրադարձությունները կանխեցին դեպի Մինսկ շարժվող գնդերին. ուղարկելու օրը արդեն համառ լուրեր էին հաղորդվում, որ գլխավոր հրամանատարի զորակայանում կայսրը ստորագրել է գահից հրաժարվելու ակտը։

Բրիգադը կես-ճանապարհից ետ դարձրին։ Ռազգոն կայարանում 27-րդ գունդը հրաման ստացավ իջնել վագոններից։ Երկաթգծերը բռնված էին գնացքներով։ Պլատֆորմում վխտում էին զինվորները՝ շինելներին կպցրած կարմիր բանտերով, լավ արտադրված, նոր, ռուսական տիպի, բայց անգլիական ծագում ունեցող հրացաններով։ Զինվորներից շատերը հուզված էին, վախվխելով էին նայում հարյուրյակներով շարք կանգնած կազակներին։

Մթնում էր մառախլապատ օրը։ Կայարանի շենքերի կտուրներից կարկաչում էր ջուրը, ու երկաթգծերի լճակները պլպլան նավթափայլով պատած, անդրադարձնում էին երկնքի մոխրագույն, փափլիկ ոչխարենին։ Խուլ, կցկտուր շաչում էր մանևր անող շոգեքարշերի մռնչոցը։ Համբարանոցի հետևում գունդը հեծյալ շարքով դիմավորեց բրիգադի հրամանատարին։ Մինչև կոճակները թրջված՝ ձիերի ոտները գոլորշի էին արձակում։ Ագռավներն առանց վախենալու նստում էին շարքի հետևում, հավաքում ու կտցում էին ձիու թրիքի նարնջագույն խնձորները։

Բրիգադի հրամանատարը սևաթույր, բարեկազմ մի ձի նստած, գնդի հրամանատարի ուղեկցությամբ մոտեցավ կազակներին։ Սանձը քաշքշելով՝ դիտեց հարյուրյակները։ Խոսեց՝ կարծես մերկ ձեռքով իրենից վանելով իր անվստահ, խուլ խոսքերը։

— Կազակնե՛ր, ժողովրդի կամքով մինչ այժմ թագավորող Նիկոլայ երկրորդ կայսրը... ը-ը-ը... գահընկեց է արված։ Իշխանությունն անցել է Պետական դումայի ժամանակավոր կոմիտեին։ Բանակը, այդ թվում նաև դուք, պետք է հանգիստ ընդունեք այս... ը-ը-ը... լուրը... Կազակների գործն է իրենց հայրենիքը պաշտպանել արտաքին և... ը-ը-ը... այսպես ասած, արտաքին թշնամիների ոտնձգություններից։ Մենք հեռու կլինենք սկսված խառնակությունից, կթողնենք, որ քաղաքացիական բնակչությունը ընտրի նոր կառավարություն կազմակերպելու ճանապարհները։ Մենք պետք է հեռո՛ւ լինենք։ Բանակի համար պատերազմն ու քաղաքականությունն անհամատեղելի են... Բոլոր հիմքերի այսպիսի... ը-ը-ը... ցնցումների օրերին մենք պետք է ամուր լինենք ինչպես...— բրիգադի հրամանատարը, ծեր, անշնորհք ու ջանադիր մի գեներալ, ճառ ասելու սովոր չլինելով, շշկլվեց, համեմատություններ փնտրեց. նրա պլպլան դեմքի վրա տանջալից կարկամությամբ դողում էին հոնքերը. հարյուրյակները համբերությամբ սպասում էին.— ը-ը-ը... ինչպես պողպատ։ Ձեր կազակական զինվորական պարտքը ձեզ կոչ է անում ենթարկվել ձեր պետերին։ Մենք թշնամու դեմ կկռվենք նույնպես քաջաբար, ինչպես և առաջ, իսկ այնտեղ...— շեղակի, անհաստատ մի շարժում դեպի ետ,— թող Պետական դուման որոշի երկրի բախտը։ Կվերջացնենք պատերազմը, այն ժամանակ մենք էլ կմասնակցենք ներքին կյանքին, իսկ առայժմ մեզ... ը-ը-ը... չի՛ կարելի։ Մենք չենք կարող բանակը... Բանակում քաղաքականություն չպետք է լինի։

Հենց այստեղ, կայարանում, մի քանի օրից հետո երդում տվին Ժամանակավոր կառավարության, գնում էին միտինգների՝ հայրենակցական մեծ խմբեր կազմած, իրենց հեռու պահելով զինվորներից, որոնք հեղեղում էին կայարանը։ Հետո երկար քննարկում էին լսած ճառերը. վերհիշելով, անվստահորեն տնտղում էին յուրաքանչյուր կասկածելի խոսքը։ Բոլորի մեջ էլ առաջացավ այն համոզմունքը, որ եթե ազատություն է, ուրեմն վե՛րջ պատերազմին, և պինդ արմատացած այդ համոզմունքի դեմ դժվարությամբ էին պայքարում

սպաները, որոնք պնդում էին, թե Ռուսաստանը պարտավոր է պայքարել մինչև վերջ։

Շփոթվածությունը, որ հեղաշրջումից հետո տիրել էր բանակի վերնախավերին, ծանր էր անդրադառնում մասսաների վրա. դիվիզիայի շտաբը ասես մոռացել էր կես ճանապարհին մնացած բրիգադի գոյությունը։ Դնացքից իջնելուց հետո բրիգադն արդեն սպառում էր ութ օրվա համար տրված պարենը, զինվորները խմբերով գնում էին մերձակա գյուղերը, շուկայում որտեղից-որտեղ սպիրտի վաճառք սկսվեց, և արդեն այն օրերին հարբած զինվորներ ու սպաներ տեսնելը սովորական բան էր դարձել։

Փոխադրման պատճառով պարտականությունների սովորական հունից դուրս եկած կազակները ձանձրանում էին վագոններում, սպասում, որ իրենց կուղարկեն Դոն (խիստ համառ լուր էր պտտվում, թե երկրորդ հերթի մոբիլիզացվածներին արձակելու են ծառայությունից), անփույթ կերպով էին խնամում ձիերին, ամբողջ օրերով խնվում էին շուկայի հրապարակում, դիրքերում հավաքած, հեշտությամբ վաճառվող առարկաներ էին ծախում,— գերմանական վերմակներ, սղոցանման սվիններ, շինելներ, կաշվի մաղախներ, ծխախոտ...

Ռազմաճակատ վերադառնալու հրամանը բացահայտ տրտունջով ընդունվեց։ Երկրորդ հարյուրյակը հրաժարվեց մեկնելուց, կազակները թույլ չտվին շոգեքարշ կցել գնացքին, բայց գնդի հրամանատարը սպառնաց զինաթափմամբ, և հուզմունքը իջավ, հարթվեց։ Էշելոնները մեկնեցին ռազմաճակատ։

— Տղերք, սա ի՞նչ բան է. միթամ ազատություն է, ամա էլի՛ պատերազմ, ուրեմս էլի արյո՞ւն պիտի թափենք, հը՞։

— Սկսում են հուպ տալ, ոնց որ հնում։

— Բա էլ ինչի՞ գլորեցին ցարին։

— Մեզ համար ոնց որ նրա ժամանակ ծանր էր, այնպես էլ հիմի է...

— Էլի առաջվա գլխացավանքը։

— Ը՛հը՛մ։

— Բա մինչև ե՞րբ պետք է այսպես լինի...

— Չորրորդ տարին է, որ հրացանը ձեռիցդ վար չես

դնում։— Այսպիսի խոսակցություններ էին տեղի ունենում վագոններում։

Մի ինչ-որ հանգուցային կայարանում կազակները, ասես պայմանավորված լինելով, դուրս թափվեցին վագոններից, ու չլսելով գնդի հրամանատարի հորդորանքները և սպառնալիքները, միտինգ սկսեցին։ Պարետը և զառամյալ կայարանապետը իզո՛ւր էին դես-դեն ընկնում կազակական շինելների գորշ ծովի մեջ ու խնդրում կազակներին, որ սրանք նստեն վագոնները. ազատեն երկաթգծերը։ Կազակները լարված ուշադրությամբ լսում էին երրորդ հարյուրյակի ուրյադնիկի ճառը։ Նրանից հետո խոսեց ցածրահասակ, բարեկազմ կազակ Մանժուլովը։ Նրա սպիտակած, ցասկոտությունից ծռմռվող բերանից դժվարությամբ էին դուրս թռչում բարկացկոտ խոսքերը.

— Կազակներ, այսպես հո չի՞ կարելի։ Մեզ էլի՛ խաթայի մեջ գցեցին։ Ուզում են խաբեբայություն անել։ Եթե որ ռևոլյուցիա է եղել ու ամբողջ ժողովրդին ազատություն տրվել, ուրեմս պետք է վերջացնենք պատերազմը, որովհետև ժողովուրդն ու մենք պատերազմ չենք ուզում։ Լավ չե՞մ ասում, հը՞, ճի՞շտ եմ ասում։

— Ճի՛շտ է։

— Զուր տեղն են շարշարում։

— Բոլորս էլ զզվել ենք, էլի՛։

— Հրես, շալվարս ո...իցս ընկնում է... ի՞նչ պատերազմ, ի՞նչ բան։

— Չե՛նք ուզու-ո՛ւ-ում։

— Գնա՛նք մեր տները։

— Ե՛տ քաշել պարավոզը։ Ֆեդո՛տ, դե՛հ։

— Կազակներ, սպասեցնք, կազակնե՛ր, տղե՛ր, տո՛, սատանե՛ք, ձեր բերանը, պլոճիկը, ձեր հոգին... Եղբայրնե՛ր,— ճիգ էր թափում Մանժուլովը՝ աշխատելով իր ձայնը լսելի դարձնել հազարավոր բղավոցների մեջ,— կացե՛ք, է՛, պարավոզը հլա թողեք, դա մեզ հարկավոր չի, միայն խաբելու համար է... Թող գնդի նորին բարձր բարեծննդություն հրամանատարը մեզ դոկումենտ ցույց տա՝ իսկապե՞ս պահանջում են, որ մենք գնանք ֆրոնտ, թե՞ սա նրա քմահաճույքն է...

Գնդի հուզված, ինքն իրեն կորցրած հրամանատարը, դողացնելով շրթունքները, բարձրաձայն կարդաց դիվիզիայի շտաբից իր ստացած հեռագիրը՝ գունդը ռազմաճակատ փոխադրելու մասին. միայն դրանից հետո գունդը լցվեց վագոնները։

Մի վագոնում գտնվում էին Տատարսկի խուտորից վեց հոգի, որոնք ծառայում էին 27-րդ գնդում,— Պետրո Մելեխովը, Միշկա Կոշևոյը, հարազատ հորեղբայր Նիկոլայ Կոշևոյը, Անիկուշկան, Ֆեդոտ Բոդովսկովը, Մերկուլովը,— գնչուի նման մի կազակ՝ սև, գանգուր մորուքով ու շարաճճի, բաց դարչնագույն աչքերով, ու Մաքսիմկա Գրյազնովը, Կորշունովների հարևանը, ցոփ և ուրախ մի կազակ, որը մինչև պատերազմը ստանիցայի ամբողջ հողում անվախ ձիագողի սև հռչակ էր ստացել։ «Մերկուլովին շատ է՛լ սազում էր ձի թոցնել,— ոնց որ ցիգան լինի ու ես ի՞նչ գիտեմ էլ ինչ... ամա, տեսե՛ք, չի գողանում։ Իսկ դու, Մաքսիմ ձիու պոչը տեսար թե չէ, ջանդ կրակ է ընկնում»,— շարունակ ծիծաղում էին կազակները Գրյազնովի վրա։ Մաքսիմկան կարմրում էր, կկոցում վուշի ծաղկի պես կապույտ աչքերը, անվայել կատակի էր տալիս. «Մերկուլովի մոր հետ գիշերել է ցիգանը, իմ մերն էլ երևի նախանձել է, թե չէ ես մի՞թե... չէ, ախպեր, աստվա՛ծ չանի... այդպիսի բան անողն ո՞վ է որ...»

Վագոնում միջանցիկ քամին էր փչում. ձիերը կանգնած էին հապճեպ սարքված մսուրների մոտ, տապակներով ծածկված. վագոնի մեջտեղում, սառած հողաթմբի վրա ծուխ էին արձակում թաց փայտի կտորները. բարկ ծուխը ելնում էր դռան ճեղքից։ Կազակները նստել էին թամքերի վրա, կրակի շուրջը, շորացնում էին քրտնքից ու թացությունից հոտած ոտնափաթաթանները։ Ֆեդոտ Բոդովսկովը կրակի մոտ տաքացնում էր մերկ, ծուռ ոտները։ Նրա կալմիկական, անկյունավոր այտոսկրներ ունեցող դեմքի վրա խաղում էր գոհ ժպիտը։ Գրյազնովը մոմաթելով հապճեպ կպցնում էր պոկված կոշկատակը, ու հայտնի չէ ում դիմելով, ծխից խռպված ձայնով ասում էր.

— ... Փոքր էի, ձմռանը, մեկ էլ տեսար, ելա վառարանի վրա, ու տատս էլ (նա այն տարիներին հարյուրից է՛լ անց էր) մատներով գլուխս շոշափում, ոջիլ է ման գալի, ասում է.

«Աչքիս լուս, Մ՛քսիմուշկա, հնում խալխը այսպես չէր ապրում, լավ էր ապրում, ոնց որ կարգն է, գլխին փորձանք չէր գալի։ Իսկ դու, զավակս, այնպիսի օրերի կհասնես, որ կտեսնես, թե ինչպես ամբողջ հողի վրա երկաթի լարեր կքաշեն, ու կապույտ երկնքովը երկաթե քթերով թռչուններ կթռչեն, կկտցեն մարդկանց, ոնց որ ագռավը ձմերուկ է կտցում... Ու մարդկանց մեջ ժանտախտ ու սով կլինի, աղբերն աղբոր դեմ կելնի, տղան հոր դեմ... Ինչքան որ հրդեհից խոտ է մնում, այնքան ժողովուրդ կմնա»։ Եվ ի՞նչ, —մի փոքր լռելուց հետո շարունակեց Մաքսիմը,— դրուստ որ հենց այդպես էլ եղավ. հեռագիր հնարեցին,— ահա քեզ և երկաթե լարը։ Իսկ երկաթե թռչունները օդանավերն են։ Դրանք մի՞թե քիչ են կոտորել մեզ նմաններին։ Սով է՛լ կլինի։ Մերոնք այն տարիներին ցանած հացի կեսն են ցանում, այդպես էլ ամեն մի ոանչպար։ Ստանիցաներում ծերերն ու երեխեքն են մնացել, ու հենց որ բերք չեղավ, ահա քեզ և «սովը»։

— Իսկ աղբերն աղբոր դե՞մ, այդ ի՞նչ փչոց է,— հարցրեց Պետրո Մելեխովը՝ խառնելով կրակը։

— Հլա կաց, ժողովուրդը դրան է՛լ կհասնի։

— Իշխանություն չեն հաստատի ու իրար կխառնվեն,— միջամտեց Ֆեդոտ Բոդովսկովը։

— Հարկ կլինի դեռ խաղաղացնել խառնակիչներին։

— Դու նախ՝ գերմանացու հետ վերջացրու բանը,— ծիծաղեց Կոշևոյը։

— Ի՞նչ կա որ, հլա դեռ կկռվենք...

Անիկուշկան շինծու վախից կնճռոտելով անմազ, կանացի դեմքը, բացականչեց.

— Ո՛վ երկնային թագավոր, ախր մինչև ե՞րբ «կկռվենք», է՞։

— Մինչև այն ժամանակ, երբ դու, կոտած մարդ, մազ ու մորուք ունենաս,— խայթեց նրան Կոշևոյը։

Կրակի շուրջ նստածները ծիծաղեցին միասին։ Պետրոն հազաց շնչափողը ընկած ծխից, ու արցունքներով լի աչքերը Անիկուշկային հառած, մատով ցույց էր տալիս նրա կողմը։

— Մազը հիմար բան է...— շփոթվելով մոթմոթաց Անիկուշկան,— բուսնում է այնտեղ, ուր պետք չէ... Դու, Կոշևոյ, ղուր ես ձեռ առնում...

— Չէ՛, հերիք եղավ, արդեն կշտացել ենք,— անսպասելի բռնկվեց Գրյազնովը։— Մենք այստեղ շարշարվում ենք, ոջիլների կերակուր դառնում, իսկ այնտեղ մեր ընտանիքները ծով կարոտության մեջ են, և այն էլ ինչպե՞ս... կտրես — արյուն չի գա։

— Էլ ինչո՞ւ ես շարանում,— կծոտելով ցորնագույն բեղը, հեգնաբար հարցրեց Պետրոն։

— Հայտնի բան է թե ինչու... —Գրյազնովի փոխարեն պատասխանեց Մերկուլովը և խուճուճ, գնչուական մորուքի մեջ հուսալի կերպով թաքցրեց ժպիտը,— հայտնի բան է, կազակը գազազում... դարդ է անում... Ասենք թե նախրապանը հանդ է քշում նախիրը. քանի դեռ արևը չորացնում է շաղը, ոչինչ, տավարը արածում է, իսկ երբ որ արևը բարձրանում է, բոռը վրա է տալի, սկսում է դաղել անասուններին, հենց այստեղ էլ...— Մերկուլովը շարաճճիորեն աչքերը հառեց կազակներին, շարունակեց՝ դառնալով դեպի Պետրոն,— հենց այստեղ էլ, պարոն վախմիստր, խլշկոտում է տավարը։ Դե՛հ, դու է՛լ գիտես, հո ցիլինդր գնողներից չե՞ս, դու էլ ես եղների պոչերը պտտել... Հա՛, մեկ էլ տեսար հորթերից մեկն ու մեկը պոչը տնկեց, բառաչեց, ու հա՛յդա։ Նրա հետևից էլ ամբողջ նախիրը։ Նախրապանը վազ է տալի՝ «է՛յ, հո՛-հո՛...» էլ ո՞րտեղից։ Վազում է նախիրը հեղեղի պես, ոնց որ Նեզվիսկայի մոտ մենք հեղեղի պես էինք վրա տալի գերմանացիներին։ Դեհ արի ու կանգնեցրու նրան։

— Դու այդ ինչի՞ համար ես ասում։

Մերկուլովը միանգամից չպատասխանեց։ Կարագույն մորուքի մի փնջիկ փաթաթելով մատին, քաշքշեց այն, և արդեն լրջությամբ ու առանց ժպիտի ասաց.

— Չորրորդ տարին է, որ կռվում ենք... այդպե՞ս է։ Չորրորդ տարին է անցնում այն օրերից, երբ մեզ քշեցին խրամատները։ Ինչո՞ւ և ինչի՞ համար,— ոչ ոք չի հասկանում... Հենց նրա համար եմ ասում, որ շուտով մի որևէ Գրյազնով կամ Մելեխով կճղի ֆրոնտից, նրա հետևից էլ գունդը, գնդի հետևից էլ բանակը... Հերի՛ք եղավ։

— Ա՛յ թե որտեղից ես բռնեցնում...

— Հենց որտեղից որ պետք է։ Հո քոռ չե՛մ, տեսնում եմ էլի՛, ամեն բան մազից է կախված։ Բավական է միայն բղա-

վել փի՛-շտ»,— ու ամեն բան կընկնի ոնց որ ճղճղված քուրքը ուսիդ վրայից։ Չորրորդ տարում մեզ է՛լ են խլշկոտացրել արևն ու բտերը։

— Դու մի քիչ զգույշ, է՛յ,— խորհուրդ տվեց Բոդովսկովը,— թե չէ Պետրոն... Նա ախր վախմիստր է...

— Ես իսկի է՛լ չեմ նեղացրել ընկերներիս,— ջղայնացավ Պետրոն։

— Մի՛ հեբսոտի, հանաք եմ անում։

Բոդովսկովը շփոթվեց, շարժեց բոբիկ ոտների ծուռտիկ մատները ու վեր կացավ, մոտեցավ մսուրին։

Մի անկյունում, արկղաձև մամլած խոտի մոտ հուշիկ խոսակցում էին ուրիշ խուտորների կազակները։ Նրանցից միայն երկուսը՝ Ֆադեևն ու Կարգինը, Կարգինսկի խուտորից էին, մնացածները,— ութ հոգի,— այլևայլ խուտորներից ու ստանիցաներից էին։

Մի քիչ հետո նրանք երգեցին։ Երգը սկսեց Չիր գետի մերձակայքի կազակ Ալիմովը։ Նա փորձեց երգել մի պարերգ, բայց մեկը շրմփացրեց նրա քամակին, խոպոտ բղավեց.

— Թողնե՛լ...

— է՛յ, ազբեր-տղերք, մոտեցեք կրակին,— հրավիրեց Կոշևոյը։

Խարույկի մեջ տաշեղներ (մի կիսակայարանում ջարդած ցանկապատի կտորտանքը) գցեցին։ Կրակի շուրջը է՛լ ավելի ուրախ էր զնգում երգը.

Մարտական ձին ճամփի բեռով բեռնված,
Սպասում է ժամի կողքին ու փնչում։
Տատն է լալիս թոռան ձեռքը սլինդ բռնած,
Ջահել կինը արտասուքներ է թափում։
Հագած-կապած զենք ու զրահ մարտական,
Ցորը տաճարից դուրս է գալիս մի կազակ,
Մտա է բերում կինը նրա նժույգ-ձին,
Քրոջ որդին մատուցում է սուր նիզակ...

Հարևան վագոնում հարմոնը թավ հնչյուններով «կազաչոկ» էր նվագում։ Տախտակե հատակի վրա անխնայորեն դոփդոփում էին պետական սապոգների կրունկները, մեկը անհաջող ձայնով, բառերն անլսելի արտասանելով, երգում էր.

Ա՛խ դուք դառն հոգս ու ցավեր,
Թագավորի ճնշող լուծ,
Վիզն ես մաշում կազակների,
Շունչ չեն քաշում տանջվելուց։
Պուգաչևը Դոնի ափին
Զեն է տալի ճնշված մարդին,—
«Հե՛յ, կազակներ, ատամանե՛ր...»

Երկրորդը ծածկելով առաջինի ձայնը, վրա էր տալիս անկապ արտահայտություններով, շուտասելուկով.

Հալալ ծառայում ենք ցարին,
Կարոտում ենք թեղած յարին։
Զենք կարոտի, թե կին գտնենք,
Ցարին հիմի... կ՛կլեկենք,
է՛յ, վրա տուր, երգիր, թնդա...
Օ՛ֆ-հա-հա-հա, է՛յ-հա-հա-հա...
Ի-հա-հա-ա, օ՛-հա-հա-հա։

Կազակները արդեն վաղուց ընդհատել էին երգը և ունկնդրում էին հարևան վագոնում սաստկացող մոլի բղավոցներին, աչքով էին անում իրար, համակրանքով ժպտում։ Պետրո Մելեխովը չհամբերեց ու փա՛ռ-փառ ծիծաղեց.

— Վա՛յ սատանի բաժին դառնաք դուք։

Մերկուլովը դարչնագույն, դեղին կայծով ցողված աչքերում ուրախ լուսատիկներ շողացին. նա տեղից վեր թռավ, ու հարմարվելով երգի տակտին, սկսեց սապոգի քթով արագ ու ճարպիկ շարժումներ անել, ու հանկարծ ոտները խփելով հատակին, թեթև, ճկուն, համաչափ պզզապարի անցավ։ Բոլորն էլ հերթով պարում էին,— դրանով տաքանում։ Հարևան վագոնում արդեն վաղուց լռել էր հարմոնը, այնտեղից խրոպոտ ու թունդ հայհոյանքներ էին լսվում։ Իսկ այստեղ պարում էին մոլեգնաբար, անհանգստացնում ձիերին ու վերջացրին միայն այն ժամանակ, երբ ոգևորված Անիկուշկան պարի ամենաարտասովոր մի շարժում կատարելիս հետույքով ընկավ կրակի վրա։ Անիկուշկային ոտքի հանեցին քրքջոցներով, մի կտոր մոմի լույսով երկար դիտեցին բոլորովին նոր, հետևից վառված ու փչացած շալվարը և բամբակած կուրտկայի խանձված ծայրերը։

— Հանիր շալվարդ, տո՛,— ցավակցաբար խորհուրդ տվեց Մերկուլովը։

— Դժվե՞լ ես, ա՛յ գնչու, բա ի՞նչ պիտի հագնեմ։

Մերկուլովը խառնխտեց մախաղը, հանեց կնոջ մի կտավե շապիկ։ Կրակը նորից թեժացրին։ Մերկուլովը բռնել էր շապկի նեղ ուսերից. դեպի ետ թեքվելով, ծիծաղից տնքտընքալով, ասում էր.

— Հրե՛ս... օ՛յ, օֆ. սա գողացել էի կայարանում, ցանկապատի վրայից... Ոտի փաթաթան պիտի անեի... օֆ։ Չե՛մ ճղի... Վերցրո՛։

Շապիկը զոռով հագցնելով հայհոյանք թափող Անիկուշկային, այնքա՛ն սաստիկ ու փա՛ռ-փառ էին ծիծաղում, որ հարևան վագոնների դռներից դուրս էին խցկվում հետաքրքրքրվողների գլուխները, գիշերային մթության մեջ բոռում էին նախանձոտ ձայները.

— Ի՞նչ եք անում այդտեղ, է՛յ։

— Ամա՛ թե խրխնջում են հա՛-ա։

— Տո՛, է՛յ, ի՞նչ է պատահել։

— Այդ ո՞ւմ եք տկլոր տեսնում, էյ, դարձվոր կնկա սիրահարներ։

Հետևյալ կայարանում առջևի վագոնից քարշ տվին հարմոնիստին, մյուս վագոններից եկան ու ներս լցվեցին կազակները, շարդոտեցին մսուրները, խոնվեցին՝ ձիերը սեղմելով վագոնի պատին։ Փոքրիկ բոլորակում պարում էր Անիկուշկան։ Սպիտակ շապիկը, որ ըստ երևույթին պատկանել էր ահագին, երկարահասակ մի կնոջ, նրա վրա երկար էր, ընկնում էր ոտների տակ, բայց աղմուկն ու քրքջոցը խրախուսում էին Անիկուշկային. նա պարեց մինչև ուժասպառ լինելը։

Իսկ արյունով ողողված Բելոռուսիայի վրա տխուր արտասվում էին աստղերը։ Վերևում փռված էր մառախլապատ, սև, անդնդախոր գիշերային երկինքը։ Քամին սողում էր երկրի վրա, որ հագեցված էր դիակնացած տերևների, կավախառն, տամուկ գետնի, մարտի ձյան դառն բույրերով։

IX

Մի օրից հետո գունդը արդեն մոտիկ էր ռազմաճակատին։ Մի հանգուցային կայարանում կանգնեցրին էշելոնները։ Վախմիստրները հաղորդեցին հրամանը՝ «Բեռնաթափվել»։

Կազակները լաստակների վրայով հապճեպորեն իջեցնում էին ձիերը. թամբում, վազում վագոնները՝ շտապելուց մոռացած իրերը վերցնելու, մամլած խոտի խորանարդաձև, զզզված խուրձերը դուրս էին թափում հենց երկաթգծերի թաց, ավազոտ գետնի վրա, իրար էին անցնում։

Գնդի հրամանատարի բանբերը կանչեց Պետրո Մելեխովին։

— Գնա կայարան, հրամանատարը կանչում է։

Շտկելով շինելի վրայից կապած գոտին, Պետրոն առանց շտապելու գնաց դեպի պլատֆորմ։

— Անիկե՛յ, մտիկ արա ձիուս,— խնդրեց նա ձիերի մոտ կանգնած Անիկուշկային։

Վերջինս լուռ նայեց նրա հետևից, նրա անուրախ, նոթոտ դեմքի վրա մտահոգությունը միախառնված էր սովորական ծանձրույթի հետ։ Պետրոն քայլելիս նայում էր իր սապոգներին, որոնք կեղտոտվել էին կավախառն դեղնահողի ցեխով, ու մտածում էր, թե իրեն ինչի համար է կանչել գնդի հրամանատարը։ Նրա ուշադրությունը գրավեց մի փոքրիկ խումբ, որ հավաքվել էր պլատֆորմի ծայրում, եռաջրի բաքի մոտ։ Նա մոտեցավ՝ դեռ հեռվից ականջ դնելով խոսակցությանը։ Քսան հոգի զինվոր շրջապատել էին բարձրահասակ, խարտյաշ մի կազակի, որը կանգնել էր մեջքով դեպի բաքը, անհարմար, հալածված վիճակում։ Պետրոն վիզը երկարացնելով, նայեց Ատամանյան գնդի խարտյաշ այդ կազակի ինչ-որ ծանոթ, մորուքակալած դեմքին, նրա ուրյադնիկական կապույտ ուսադիրների «52» թվանշաններին. մտածեց, որ մի ժամանակ, մի տեղ տեսել էր այդ մարդուն։

— Ո՞նց արեցիր այդ բանը, հը՞։ Դեռ թելեր է՛լ են կարել ուսադիրիդ վրա, ը՛հմ...— շարախնդությամբ հարցրեց խարտյաշ կազակին պեպենոտ, խելացի դեմքով մի կամավոր։

— Ի՞նչ է պատահել,— հետաքրքրվեց Պետրոն՝ շոշափելով աշխարհազորայինի ուսը. վերջինս կանգնած էր մեջքը դեպի Պետրոն։

Աշխարհազորայինը գլուխը շուռ տալով, դժկամ պատասխանեց.

— Բռնել են իրեն դասալիք... Ձեր կազակներից եմ։

Սաստիկ լարելով հիշողությունը, Պետրոն փորձում էր

վերհիշել, թե որտեղ է տեսել ատամանցու այդ լայն դեմքը՝ շեկ բեղերով ու շեկ հոնքերով։ Չպատասխանելով կամավորի ձանձրացուցիչ հարցերին, ատամանցին դանդաղորեն, կումկում եռաջուր էր խմում արկի պարկուճից շինված պղնձե բաժակից, շրով թրջած սև պաքսիմատ էր ուտում։ Նրա լայնադիր, ուռուցիկ աչքերը կկոցվում էին. ծամելով ու կուլ տալով, նա խաղացնում էր հոնքերը, նայում ներքև ու դեպի այս և այն կողմ։ Նրա կողքին, հրացանի սվինից բռնած, կանգնել էր ուղեկցորդը,—տարեց, վայելչակազմ մի զինվոր։ Դասալիք ատամանցին դատարկեց բաժակը, հոգնած աչքերով նայեց առանց քաշվելու իրեն զննող զինվորների դեմքերին, ու նրա կապույտ, մանկականորեն պարզ աչքերում անսպասելիորեն բռնկվեց ցասումը։ Հապճեպ կուլ տալով վերջին կումը, նա լիզեց շրթունքները, կոպիտ, չկերկերող բասով գոռաց.

— Ձեզ համար զարմանալի՞ է, հը՞։ Ձեք թողնում, որ մարդ մի կտոր հաց ուտի, սրիկանե՛ր։ Մարդ չե՞ք տեսել, ինչ է։

Զինվորները ծիծաղեցին, իսկ Պետրոն, հենց որ լսեց դասալիքի ձայնը, միանգամից, ինչպես միշտ լինում է, ապշեցուցիչ պարզությամբ հիշեց, որ այդ ատամանցին Ելանսկայա ստանիցայի Ռուբեժին խուտորից է, ազգանունը Ֆոմին է, և որ պատերազմից առաջ ինքը և հայրը Ելանսկայայի տարեկան տոնավաճառում նրանից երեք տարեկան մի աշառ էին գնել։

— Ֆո՛մին, Յա՛կով,— կանչեց Պետրոն՝ հավաքվածների միջից մոտենալով ատամանցուն։

Վերջինս դանդաղ, տարտամ շարժումով բաժակը դրեց բաքի վրա. ծամելով պաքսիմատը, շփոթված ու ժպտացող աչքերը հառելով Պետրոյի վրա, ասաց...

— Ձե՛մ ճանաչում, աղբեր...

— Դու ռուբեժինցի՞ ես։

— Այնտեղացի եմ։ Դու էլ երևի Ելանսկայայից ես, հը՞։

— Ես Վեշենսկայայից եմ, ու քեզ հիշում եմ։ Հինգ տարի առաջ ես ու հերս քեզանից մի աշառ առանք։

Ֆոմինը էլի նույն շփոթված, մանկական ժպիտը երեսին, քստ երեսիին ջանում էր վերհիշել այդ։

— Չէ, աղբեր... միտս չես գալի,— ակներև ափսոսանքով ասաց նա։

— Դու 52-րդ գնդո՞ւմն էիր։

— Հա՛, 52-րդում։

— Ուրեմն ճղել ես, էլի՛։ Բա այդ ո՞նց է պատահել, աղբերացու։

Այդ ժամանակ Ֆոմինը վերցնելով փափախը, դրա միջից հանեց թուքունի մաշված մի տոպրակ։ Կորանալով, նա փափախը դանդաղ դրեց թևի տակ, կտրեց թղթի անկյունաձև մի կտոր և միայն այդ ժամանակ խիստ, խոնավ-երերուն հայացքով նայեց Պետրոյին։

— Ձկարացի համբերել, աղբերս...— տարտամորեն ասաց նա։

Այդ հայացքը խոցեց Պետրոյին։ Սա հոգոց հանեց, դեղնավուն բեղի ծայրը տարավ բերանը։

— Էհ, հայրենակիցներ, վերջացրեք խոսակցությունները, թե չէ ձեր պատճառով իմ գլխին էլ փորձանք կգա,— հրացանն ուսին գցելով՝ ասաց վայելչակազմ ուղեկցորդ-զինվորը։— Գնա՛նք, հայրիկ։

Ֆոմինը բաժակը հապճեպ խոթեց փամփշտակալի մեջ, մի կողմ նայելով՝ հրաժեշտ տվեց Պետրոյին ու շորորուն, անճոռնի քայլվածքով գնաց դեպի պարետատուն։

Կայարանում, նախկին առաջին կարգի դահլիճում, սեղանի շուրջ նստել էին գնդի հրամանատարը և հարյուրյակների երկու հրամանատար։

— Դո՛ւ, Մելեխով, ստիպում ես սպասել քեզ,— գընդապետը թարթեց հոգնած, բարկացկոտ աչքերը։

Պետրոն տեղեկություն իմացավ, որ իր հարյուրյակը անցնում է դիվիզիայի շտաբի տրամադրության տակ և որ անհրաժեշտ է խիստ հետամուտ լինել կազակներին, նրանց տրամադրության ամեն մի փոփոխության մասին հաղորդել հարյուրյակի հրամանատարին։ Նա անթարթ նայում էր գընդապետի աչքերին, ուշադրությամբ լսում, բայց հիշողության մեջ համառորեն մնում էին, ասես պինդ կպել էին Ֆոմինի երերուն, խոնավ հայացքը և նրա կամացուկ խոսքը՝ «Ձկարացի համբերել, աղբերս»...

Նա դուրս եկավ կայարանի խեղդուկ, տաք շենքից, քայլեց դեպի հարյուրյակը։ Հենց այստեղ կայարանում, կանգնած էր գնդի երկրորդ կարգի գումակը։ Մոտենալով իր վագոնին, Պետրոն տեսավ գումակի կազակներին և հարյուրյակի պայտառին։ Նայելով պայտառին, Պետրոն մոռացավ Ֆոմինին և նրա հետ ունեցած խոսակցությունը, արագացրեց քայլերը՝ նպատակ ունենալով խոսել ձին վերապայտելու մասին (այդ ակնթարթում Պետրոյին արդեն տիրել էին առօրյա հոգսերն ու հուզումները), բայց կարմիր վագոնի հետևից դուրս եկավ մի կին, որը փաթաթված էր սպիտակ, բրդե շարֆով, հագնված էր ո՛չ այնպես, ինչպես հագնվում են լեհբելոռուսական երկրում։ Նրա կերպարանքի խիստ ծանոթ կազմվածքը Պետրոյին ստիպեց ուշադրությամբ նայել այդ կնոջը։ Վերջինս հանկարծ շուռ եկավ դեպի Պետրոն, արագ քայլեց նրա կողմը՝ հազիվ նշմարելի կերպով դողացնելով ուսերը, բարակ, ո՛չ կանացի իրանը։ Ու Պետրոն նրա դեմքը դեռ պարզ չտեսած, այդ շորորուն, թեթև քայլվածքից ճանաչեց իր կնոջը։ Թեթև, հաճելի մի զով հովհարեց նրա սիրտը։ Ուրախությունը որքան անակնկալ, նույնքան ուժեղ էր։ Պետրոն քայլեց ընդառաջ, դիտմամբ հապաղելով, որ իրեն նայող գումակայինները չկարծեն, թե նա առանձնապես ուրախ է։ Նա ծանրաբարո գրկեց կնոջը, համբուրեց երեք անգամ, ուզում էր մի բան հարցնել, բայց ներքին խոր հուզումնքը կասեցրեց նրան. թեթև դողացին շուրթերը ու կարծես պապանձվեց լեզուն։

— Չէի սպասում...— վերջապես, կակազելով ասաց նա։

— Աղունի՛կս, այս ինչքա՞ն ես փոխվել... Դարյան ձեռներն իրար զարկեց։— Դու ոնց որ թե օտար լինես... Եկա քեզ տեսնելու... Մերոնք չէին թողնում. «Ախր ո՞ւր պիտի գնաս»։— Չէ՛,— մտածում եմ,—գնամ տեսնեմ ջանիկիս...— կլկլում էր նա, սեղմվում ամուսնուն, թրջված աչքերը հառում նրա աչքերին։

Կազակները խմբվում էին վագոնների մոտ. նայելով նրանց, հոգոց էին հանում, իրար աչքով անում, տխրում։

— Պետրոյի բախտը բանեց, հա՛-ա...

— Իմ դարձվորը հո չի գա, պինդ նստել է։

— Այնտեղ նա մեկի տեղ տասը կգտնի։

— Ա՜յ թե Մելեխովը կնկանը մի գիշեր զոհեր իրեն դասակի համար... մեր սովածության համար... Քխ-ը՜մ...

— Գնա՛նք, տղերք, տես թե ո՞նց է կպչում մարդուն, գնանք, թե չէ աչքներս կմթնեն։

Այդ պահին Պետրոն չէր հիշում, որ պատրաստվում էր մեռցնելու չափ թակել կնոջը,— նրան փաղաքշում էր մարդկանց աչքի առաջ, ծխախոտից դեղնած, մեծ մատով շոյում նրա գեղեցիկ, կամար հոնքերը, ուրախանում էր։ Դարյան նույնպես մոռացավ, որ ընդամենը երկու օր առաջ վագոնում գիշերը քնել էր դրագունական մի անասնաբուժակի հետ, որը նրա հետ միասին Խարկովից գալիս էր իր գունդը։ Բուժակը չափազանց փարթամ ու սև բեղեր ուներ, բայց հո այդ ամենը եղել էր երկու օր առաջ, իսկ այժմ Դարյան անկեղծ ուրախության արցունքներով գրկում էր ամուսնուն, նայում նրան անմեղ, պայծառ աչքերով։

X

Ցասավուլ Եվգենի Լիստնիցկին արձակուրդից վերադառնալուց հետո նշանակվեց Դոնի 14-րդ կազակական գունդը։ Նա չներկայացավ իր գունդը, ուր ծառայում էր առաջ և որտեղից նա դեռ մինչև փետրվարյան հեղաշրջումը փախել էր խայտառակ կերպով,— այլ ուղղակի գնաց դիվիզիայի շտաբ, ու շտաբի պետը, երիտասարդ մի գեներալ Դոնի ազնվական-կազակական մեծադղորդ ազգանունով, հեշտությամբ հաջողեցրեց նրա տեղափոխությունը։

— Ես գիտեմ, յասավուլ,— ասաց նա Լիստնիցկուն, նրա հետ իր սենյակում առանձնացած,— որ ձեզ համար դժվար կլինի աշխատել հին պարագաներում, որովհետև կազակները տրամադրված են ձեր դեմ, ձեր անունը ատելի է նրանց համար, և, իհարկե, ավելի խելացի բան կլինի, եթե դուք գնաք տասնչորսերորդ գունդ։ Այնտեղ սպաների բացառիկ լավ ընտրություն է կատարված, կազակներն էլ ավելի կայուն են, ավելի անփորձ, մեծամասնությունը Ուստ-Մեդվեդիցկու օկրուգի հարավային ստանիցաներից է։ Այնտեղ ձեզ համար ավելի լավ կլինի։ Դուք կարծեմ Նիկոլայ Ալեքսեևիչ Լիստնից-

կու որդին եք, այո՞,— մի փոքր լռելուց հետո հարցրեց գեներալը, ու դրական պատասխան ստանալով, շարունակեց.— Իմ կողմից կարող եմ հավաստիացնել, որ մենք գնահատում ենք այնպիսի սպաներին, ինչպես դուք եք։ Մեր ժամանակներում նույնիսկ սպայական կաղմի մեջ մեծամասնությունը երկերեսանիներ են։ Չկա ավելի հեշտ բան, քան հավատը փոխելը, մինչև իսկ երկու աստծու աղոթելը...— խոսքը դառնությամբ վերջացրեց շտաբի պետը։

Լիստնիցկին ուրախությամբ ընդունեց այդ նշանակումը։ Այդ նույն օրը նա մեկնեց Դվինսկ, ուր գտնվում էր 14-րդ գունդը, իսկ մեկ օրից հետո արդեն ներկայացավ գնդի հրամանատարին, գնդապետ Բիկադորովին, և հաճույքով գիտակցեց դիվիզիայի շտաբի պետի ասած խոսքերի արդարացիությունը. սպաները մեծ մասամբ միապետականներ էին. կազակները, որոնց մի երրորդ մասը կազմում էին Ուստ-Խոպերսկայա, Կումիլժենսկայա, Գլազունովսկայա և այլ ստանիցաների հնածեսները, բնա՛վ ոչ հեղափոխականորեն էին տրամադրված, դժկամությամբ էին տվել ժամանակավոր կառավարությանը հավատարիմ լինելու երդումը, նրանք չէին ըմբռնում իրենց շուրջը կատարվող իրադարձությունները, և չէին էլ ուզում ըմբռնել. գնդի ու հարյուրյակների կոմիտեների մեջ անցել էին ստորաքարշ և հլու-հնազանդ կազակները... Լիստնիցկին բերկրանքով շունչ առավ նոր պայմաններում։

Նա սպաների մեջ հանդիպեց երկու հոգու, որոնք իր հետ միասին ծառայել էին Ատամանյան գնդում և այստեղ իրենց առանձնացած էին պահում. մնացածները խիստ միահամուռ, համերաշխ էին, բացահայտ կերպով խոսում էին դինաստիայի վերականգնման մասին։

Գունդը մոտ երկու ամիս մնաց Դվինսկում իբրև միասնական մի բոունք, ու հանգստացավ, կազդուրվեց։ Դրանից առաջ հետևակ դիվիզիաներին կցված հարյուրյակները թափառում էին ռազմաճակատում, Ռիգայից մինչև Դվինսկ, բայց ապրիլ ամսին ինչ-որ մեկի հոգատար ձեռքը միացրեց բոլոր հարյուրյակները, ու գունդը պատրաստ էր։ Սպայական խիստ հսկողության տակ գտնվող կազակները դուրս էին գալիս վարժություններին, լավ կերակրում ձիերին, ապրում էին

շփված ու ձևած, խիստ նշային կյանքով, զերծ մնալով դրսի որևէ ազդեցությունից։

Նրանց մեջ կային անորոշ ենթադրություններ գնդի կատարելիք բուն իսկ դերի մասին, բայց սպաներն առանց թաքցնելու ասում էին, որ մոտիկ ապագայում գունդը որևէ մեկի հուսալի ձեռքում դեռ կպտտի պատմության անիվը։

Մոտակայքում ծառս էր լինում ռազմաճակատը։ Բանակները մահվան տենդ էին ապրում, չէր հերիքում ռազմամթերքը, պարենը. բանակներից անթիվ-անհամար ձեռներ էին կարկառվում դեպի «խաղաղություն» երազական բառը. բանակները տարբեր կերպով էին ընդունում հանրապետության ժամանակավոր կառավարիչ Կերենսկուն, ու նրա հիստերիկ ճչոցներից խաբված, սայթաքում էին հունիսյան հարձակման օրերին. բանակներում հասունացած զայրույթը կուտակվում էր ու հորդում ինչպես գետնի խորքից ժայթքող աղբյուրների ջուրը...

Իսկ Դվինսկում կազակները հանգիստ, խաղաղ էին ապրում. ձիերի ստամոքսները մարսում էին վարսակն ու քուսպը, կազակները հետզհետե մոռացության էին տալիս ռազմաճակատում կրած ծանրությունները. սպաները ճշտապահությամբ հաճախում էին սպայական ակումբ, լավ ուտում, տաք-տաք վիճում էին Ռուսաստանի բախտի մասին...

Այսպես էր մինչև հուլիսի սկիզբը։ Հուլիսի երեքին հրաման եկավ՝ «Ճանապարհվել առանց մի րոպե հապաղելու։ Գնդի էշելոնները մեկնեցին դեպի Պետրոգրադ։ Հուլիսի յոթին կազակական ձիերի սմբակները արդեն դոփդոփում էին մայրաքաղաքի սալարկված փողոցներում։

Գունդը տեղավորեցին Նևսկու վրա։ Լիստնիցկու հարյուրյակին հատկացրին առևտրական մի դատարկ շենք։ Կազակներին սպասում էին անհամբերությամբ և ուրախությամբ. այդ էր պերճախոս կերպով վկայում մայրաքաղաքի իշխանությունների այն հոգացողությունը, որով նախօրոք սարքավորվել էին կազակների համար հատկացված շենքերը։ Փայլում էին կրով նոր սպիտակացրած պատերը, մաքուր լվացված հատակները, սոճու փայտի նոր տախտակամածներից կպրահոտ էր գալիս. լուսավոր, մաքուր կիսաներքնահարկը համարյա հարմարավետ էր։ Լիստնիցկին ակնոցի տակ

կնճռոտելով դեմքը, ուշադրությամբ զննեց շենքը, քայլեց կուրացնելու չափ սպիտակ պատերի տակ, գտավ, որ հարմարությունների իմաստով դրանից ավելի լավ շենք չէր կարող հատկացվել։ Զննությունից բավարարված, նա քաղաքային վարչության մի կարճահասակ ներքագեղ հագնված ներկայացուցչի ուղեկցությամբ,— որին վիճակվել էր դիմավորել կազակներին,— դուրս եկավ բակը։

Արևի ճառագայթները ուղղաձիգ ընկել էին բակի խորունկ, լայն ջրհորի մեջ։ Բազմահարկ տների պատուհաններից բնակիչները գլուխները հանած, նայում էին ամբողջ բակը լցրած կազակներին. հարյուրյակը ձիերը տեղավորում էր ախոռում։ Ազատված կազակները խումբ-խումբ կանգնել կամ պպզել էին պատերի տակ, ստվերում։

— Տղերք, ինչո՞ւ չեք ներս գնում,— հարցրեց Լիստնիցկին մոտիկում կանգնածներին։

— Կգնա՛նք, էլի, պարոն յասավուլ։

— Դեռ այնտեղ է՛լ կձանձրանանք...

— Ձիերը տեղավորենք, հետո կգնանք։

Լիստնիցկին զննեց պահեստը, որ ախոռների էր վերածվելու, ու խիստ տոնով ասաց՝ աշխատելով վերստին արտահայտել իր հակակրանքը իրեն ուղեկցող ներկայացուցչի նկատմամբ.

— Համաձայնության եկեք ում հետ որ հարկն է և պայմանավորվեցեք ահա թե ինչի մասին. մեզ համար անհրաժեշտ է էլի մի դուռ բաց անել։ Հո մենք չե՞նք կարող հարյուր քսան ձիու համար երեք դուռ ունենալ։ Տագնապի դեպքում մեզ հարկավոր կլինի կես ժամ՝ ձիերը դուրս տանելու համար... Տարօրինա՛կ է, մի՞թե չէր կարելի իր ժամանակին հաշվի առնել այս հանգամանքը։ Ես ստիպված կլինեմ այս մասին զեկուցել գնդի հրամանատարին։

Անմիջապես հավաստիացում ստանալով, որ հենց այսօր ոչ թե մեկ, այլ երկու դուռ կբացվի, Լիստնիցկին հրաժեշտ տվեց ներկայացուցչին. չոր տոնով շնորհակալություն հայտնելով նրա քաշած նեղության համար, կարգադրություն արեց օրապահներ նշանակելու մասին ու գնաց երկրորդ հարկ. հարյուրյակի սպաներին հատկացված ժամանակավոր բնակարանը։ Քայլելիս արձակելով կիտելի կոճակները, սրբելով

ճակատի քրտինքը, նա բակի կողմի սանդուղքով բարձրացավ իր բնակարանը, բերկրանքով զգաց սենյակների մեղմ, խոնավ զովությունը։ Բնակարանում, բացի փոխ-յասավուլ Ատարշչիկովից, ուրիշ ոչ ոք չկար։

— Որտեղ են մյուսները,— հարցրեց Լիստնիցկին, ընկավ բրեզենտե մահճակալին ու ծանր մեկնեց փոշոտված սապոգներով ոտները։

— Փողոցում են։ Դիտում են Պետրոգրադը։

— Իսկ դո՞ւ։

— Էհ, գիտե՞ս, չարժե։ Տեղ հասան թե չէ, իսկույն վազ տվին քաղաք։ Ես, ահա, կարդում եմ, թե այստեղ ինչ է եղել երկու օր առաջ։ Հետաքրքի՞ր է։

Լիստնիցկին լուռ պառկել էր, զգալով, թե ինչպես մեջքի վրա հաճելի կերպով պաղում էր քրտինքից թաց շապիկը, նա ծուլանում էր վեր կենալ ու լվացվել. դա ճանապարհին հոգնելու հետևանքն էր։ Ինքն իրեն հաղթահարելով, նա վեր կացավ, կանչեց բանբերին։ Փոխեց սպիտակեղենը, երկար լվացվեց, ֆոֆռացրեց, բրդոտ երեսսրբիչով սրբեց արևից գորշացած, լիքը պարանոցը։

— Լվացվիր, Վանյա,— խորհուրդ տվեց նա Ատարշչիկովին,— հիանալի կթարմանաս... է՛, ի՞նչ կա լրագրերում։

— Այո, իսկապես որ պետք է լվացվել։ Ասում ես, վատ չի՞ լինի... Լրագրերո՞ւմ, նկարագրված են բոլշևիկների ելույթները, կառավարական միջոցառումները... Կարդա՛։

Լվացվելուց հետո զվարթացած Լիստնիցկին լրագիրը վերցրեց կարդալու, բայց նրան հրավիրեցին գնդի հրամանատարի մոտ։ Դժկամորեն վեր կենալով, նա հագավ նոր կիտելը, որ օճառի հոտ էր արձակում, խիստ ճխլտվել էր ճանապարհին. կապեց թուրը ու դուրս գնաց պողոտա։ Անցնելով մյուս կողմը, շուռ եկավ, դիտեց այն տունը, ուր տեղավորվել էր հարյուրյակը։ Արտաքին կողմից իր տեսքով տունը ոչնչով չէր տարբերվում մնացած տներից. հինգ հարկանի այդ տունը, գորշ ու ծակոտկեն քարով երեսված, կանգնած էր նույնպիսի տների համաչափ շարքում։ Վառելով ծխախոտը, Լիստնիցկին դանդաղ քայլեց մայթի վրա։ Հոսում էր հոծ բազմությունը տղամարդկանց ծղոտե լայնեզեր գլխարկներով, կաթսայաձև գլխարկներով ու կեպիներով,

նրբորեն պարզ ու շքեղաշուք կանացի գլխարկներով։ Ընդհանուր հոսանքում երբեմնակի երևում էր որևէ զինվորականի հասարակ ձևի գլխարկը ու չքանում խայտաբղետ, երերափայլ գույների մեջ։

Ծովախորշից ալիք-ալիք գալիս էր զվարթացուցիչ, զով քամին, բայց, դիպչելով շենքերի դիք, վիթխարի կառուցվածքներին, ցրիվ էր գալիս թեթև անհամաչափ շիթերով։ Պողպատե, յասամանագույն երանգավորված, գորշ երկնքում ամպերը դեպի հարավ էին սահում։ Ցայտունորեն ու սուր կարկառվել էին նրանց կաթնավուն-սպիտակ կատարները։ Քաղաքի վրա նախաանձրևային շոգ տոթ էր կախված։ Զգացվում էր տաքացած ասֆալտի, բենզինի այրվածքի, մերձակա ծովի, կանանց թունդ, գրգռիչ օծանելիքի հոտը ու էլի ուրիշ հոտերի ինչ-որ տարատեսակ, անբաժանելի մի խառնուրդ, որ հատուկ է յուրաքանչյուր բազմամարդ քաղաքին։

Լիստնիցկին ծխում էր ու դանդաղ քայլում մայթի աջ կողմից, երբեմն նկատում, որ կողքից անցնողները հարգանքով նայում են իրեն։ Նա սկզբում որոշ անհարմարություն էր զգում իր ճխլտված կիտելի ու խունացած գլխարկի համար, բայց հետո որոշեց, որ ճակատային բնա՛վ էլ չպիտի ամաչի իր արտաքինից, մանավանդ ինքը, որ հենց միայն այսօր էր իջել վագոնից։

Մայթերի վրա տարտամ, ձիթենագույն-դեղնավուն ըստվերներ էին ընկել խանութների ու սրճարանների մուտքի վերևում քաշած պարուսինե ծածկոցներից։ Քամին ճոճում, քաշքշում էր խունացած պարուսինը, մայթերի վրա ստվերները դողում էին, պոկվում մարդկանց քստքստացող ոտների տակից։ Զնայելով ճաշին հաջորդող ժամին, պողոտան լեփ-լեցուն էր մարդկանցով։ Լիստնիցկին, որ պատերազմի տարիներին խորթացել էր քաղաքին, բերկրալի գոհունակությամբ էր ունկնդրում բազմաձայն աղմուկին, որին միախառնվում էին քրքիջները, ավտոմոբիլների շաչյունները, լրագրավաճառների աղաղակները, ու զգալով, որ ինքը մոտիկ, հարազատ է վայելուչ հագնված, կուշտ մարդկանց այդ ամբոխին, այնուամենայնիվ մտածում էր.

«Դուք բոլորդ այժմ որքա՛ն գոհ, ուրախ, երջանիկ եք,— բոլո՛ր դ, և՛ վաճառականները, և՛ բորսայական միջնորդները, և՛ տարբեր աստիճաններ ունեցող չինովնիկները, և՛ կալվածատերերը, և՛ արիստոկրատ մարդիկ։ Իսկ ի՞նչ էր կատարվում ձեզ հետ երեք օր առաջ։ Ինչպիսի՞ տեսք ունեիք, երբ խուժանը և սալդաթությունը հրահեղուկ հանքաքարի նման հոսում էին այս պողոտայով, փողոցներով։ Խղճով ասած՝ ես թե ուրախ եմ և թե ուրախ չեմ ձեզնով։ Ու չդիտեմ էլ, թե ինչպես ուրախանամ ձեր բարօրության համար...»

Նա փորձեց վերլուծել իր երկատված զգացումը, գտնել դրա ակունքը, ու առանց դժվարության որոշեց, որ ինքը այդպես է մտածում ու զգում այն պատճառով, որ պատերազմը և ռազմաճակատում իր ապրած կյանքը իրեն հեռացրել են կուշտ ու գոհ մարդկանց այդ ամբոխից։

«Ահա քեզ մի ջահել, կերած-խմած մարդ,— մտածեց Լիստնիցկին, երբ իր աչքերը հանդիպեցին չաղ, կարմրաթուշ և անբեղ մի տղամարդու աչքերին,— ինչո՞ւ նա ֆրոնտում չէ։ Երևի գործարանատիրոջ կամ մի որևէ զորբա առևտրականի որդի է, ծառայությունից խուսափել է սրիկան,— նրա համար ի՞նչ հայրենիք, ի՞նչ բան,— և «աշխատում է պաշտպանության համար», ճարպակալում, հարմարությունների մեջ սիրում կանանց...»

«Բայց վերջ ի վերջո ո՞ւմ հետ ես դուն»,— հարց տվեց նա ինքն իրեն, ու ժպտալով, որոշեց. «Դեհ, իհարկե, հենց սրանց հետ եմ։ Սրանց մեջ է իմ մի մասնիկը, իսկ ես սրանց կոլեկտիվի մասնիկն եմ... ինչ լավ ու վատ բան որ կա իմ դասակարգի մեջ, այս կամ այն չափով կա նաև իմ մեջ։ Թերևս իմ մաշկը մի քիչ ավելի բարակ է, քան այդ պարարտ խոզի մաշկը, թերևս, այդ իսկ պատճառով, ես ավելի հիվանդոտ կերպով եմ վերաբերվում ամեն ինչին, ու երևի այդ պատճառով էլ ես ազնվորեն պատերազմի մեջ եմ և ոչ թե «աշխատում եմ պաշտպանության համար», ու հենց այդ պատճառով էլ այն օրերին, ձմռանը, Մոդիլյովում, երբ ես ավտոմոբիլում տեսա տապալված կայսրին, որը մեկնում էր զորակայանից, տեսա նրա տխուր շրթունքները ու անզոր կերպով ծնկին դրված ձեռքի ցնցող, անարտահայտելի դիրքը, ընկա ձյան վրա ու հեկեկացի երեխայի նման... Ես հո ազնվորեն չեմ ընդունում ռևոլյուցիան, չեմ կարող ընդունել

Սիրաս է՛լ, բանականությունս էլ հակառակում են... Գլուխս վար կդնեմ հնի համար, կյա՛նքս կտամ առանց տատանվելու, առանց դրանով պարծենալու, պարզապես, զինվորի եման։ Բայց արդյո՞ք շատերն այսպես կվարվեն»։

Գունատվելով, նա հիշողության մեջ խորագույն, հուզիչ դյայծառությամբ վերականգնեց փետրվարյան գունազարդ այն երեկոն, նահանգապետի տունը Մոգիլյովում, սառնամանիքից եղյամակալած, շուգունե ցանկապատը և դրանից դենը փռված ձյունը, որ պսպղում էր ցուրտ մուժով շղարշված արեգակի ոսկե շողերի տակ։ Դնեպրի զառիվեր ափից դենը երկինքը գեղազարդված է լազուրով, կինաբարով, դեղին ոսկեջրով. հորիզոնում յուրաքանչյուր գիծը այնպես անանշմարելիորեն օդային է, որ ափսոսում ես հայացքով շոյափել։ Շքադռան առաջ կանգնած զորակայանի պաշտոնյաների, զինվորականների, քաղաքացիական տարազով մարդկանց մի փոքրիկ ամբոխ... Մեկնելու է ծածկված ավտոմեքենան։ Նրա մեջ նստած են կարծես Ֆրեդերիքսը և ցարը, որ թիկնել է նստելատեղի մեջքին։ Սրա նիհարած դեմքը մի ինչ-որ մանիշակագույն երանգավորումով է։ Գունատ ճակատի վրա՝ կազակական ուղևկցորդի պահազորի տարազին համապատասխան փափախի շեղ, սև կիսաբոլորակը։

Լիստնիցկին գրեթե վազում էր իրեն զարմանքով նայող մարդկանց կողքից։ Նրա աչքերում, ևս փափախի եզրից, իջնում էր պատիվ տվող ցարի ձեռքը, ականջներում դժժում էին մեկնող ավտոմեքենայի անաղմուկ, դատարկ ընթացքը և ստորացուցիչ մնջությունը ամբոխի, որը լռությամբ էր ճանապարհում վերջին կայսրին...

Լիստնիցկին դանդաղ բարձրացավ ա՛յն տան սանդուղքով, ուր տեղավորված էր գնդի շտաբը։ Նրա այտերը դեռ շողում էին և արյուն-արցունք էր հեղվում լացակումած աչքերից։ Երկրորդ հարկում, սանդուղքի հարթակում նա իրար հետևից երկու ծխախոտ ծխեց, սրբեց ակնոցը, երկուական աստիճան վազեց վերև, երրորդ հարկ։

Գնդի հրամանատարը Պետրոգրադի քարտեզի վրա նշեց այն շրջանը, ուր Լիստնիցկու հարյուրյակը պետք է պահպաներ կառավարական հիմնարկությունները, թվեց հիմնարկ-

ները, մանրամասն հաղորդեց, թե ինչ ժամանակ և ինչ պահակներ պետք է կարգել ու փոխել, վերջում ասաց.

— Զմեռային պալատ, Կերենսկուն...

— Ո՛չ մի խոսք Կերենսկու մասին...— մահացու կերպով սիրթնած, բարձր շշնջաց Լիստնիցկին։

— Եվգենի Նիկոլաևիչ, պետք է պաղարյուն լինել...

— Գնդապետ, ես խնդրում եմ ձեզ։

— Բայց, սիրելիս...

— Ես խնդրում եմ։

— Ձեր ջղերը...

— Հրամայո՞ւմ եք այժմ պարեկներ ուղարկել Պուտիլովի գործարան,— ծանր շնչելով՝ հարցրեց Լիստնիցկին։

Գնդապետը կծելով շրթունքները, ժպտալով, թոթվեց ուսերը, պատասխանեց.

— Հենց այժմ, և անպայման դասակապետ սպայով։

Լիստնիցկին շտաբից դուրս եկավ բարոյապես ընկճված, իր ապրած օրերի հուշերից և գնդի հրամանատարի հետ ունեցած խոսակցությունից ճզմված։ Գրեթե հենց տան մոտ տեսավ Դոնի 4-րդ գնդի կազակական մի պարեկ,— գունդը տեղավորված էր Պետրոգրադում։ Սպայի բաց շիկակարմիր ձիու սանձից տխուր կախված էին թոշնած, կենդանի ծաղիկներ։ Սպայի սպիտակաբեղ դեմքի վրա սահեց ժպիտը։

— Կեցցե՛ն հայրենիքի փրկիչները...— իջնելով մայթից ու լայնեզր գլխարկը թափահարելով՝ գոչեց մի ինչ-որ խանդավառ, տարիքավոր պարոն։

Սպան սիրալիր կերպով պատիվ տվեց։ Պարեկը սլացավ վագոնով։ Լիստնիցկին նայեց կազակներին ողջունող պարոնի հուզված, խոնավաշուրթ դեմքին, նրա խնամքով կապված, գունագեղ փուլկապին, ու դեմքը կնճռոտելով, կորանալով, ներս ընկավ իրենց տան շքադռնից։

XI

14-րդ գնդի սպայական կազմը մեծ համակրանքով ընդունեց գեներալ Կոռնիլովի նշանակումը իբրև Հարավ-արևմտյան ճակատի գլխավոր հրամանատար։ Նրա մասին սիրով ու հարգանքով էին խոսում, իբրև մի մարդու, որը եր-

կաթե բնավորություն ուներ և անկասկած կարող էր երկիրը դուրս բերել փակուղուց, ուր նրան հասցրել էր Ժամանակավոր կառավարությունը։

Լիստնիցկին առանձնապես ջերմ կերպով ընդունեց այդ նշանակումը։ Նա փորձում էր հարյուրյակների կրտսեր սպաների և իրեն մոտիկ կազակների միջոցով իմանալ, թե կազակներն ինչպես են վերաբերվում դրան, բայց ստացված տեղեկությունները նրան չ՛ուրախացրին. կազակները լռում էին կամ անտարբեր պատասխաններ էին տալիս.

— Մեզ համար մեկ է...

— Ո՞նց է նա, արի ու իմացիր...

— Թե որ նա հաշտության համար աշխատի, այդ դեպքում, իհարկե...

— Նրա բարձրանալուց մեր դրությունը հո չի՞ թեթևանա։

Մի քանի օրից հետո այն սպաների մեջ, որոնք քաղաքացիական բնակչության և զինվորականների ավելի լայն շրջանների հետ էին շփվում, համառ լուրեր էին պտտվում, որ իբր թե Կոռնիլովը հուպ է տալիս Ժամանակավոր կառավարությանը, պահանջելով, որ ռազմաճակատում վերականգնվի մահվան պատիժը և կիրառվեն մի շարք վճռական ձեռնարկումներ, որոնցից կախված է բանակի վիճակը և պատերազմի վախճանը։ Ասում էին, թե Կերենսկին վախենում է Կոռնիլովից և հավանորեն բոլոր ջանքերը կգործադրի, որպեսզի ռազմաճակատում գլխավոր հրամանատարի պաշտոնում նրան փոխարինի ավելի հնազանդ մի գեներալով։ Տալիս էին զինվորական միջավայրում հայտնի գեներալների անունները։

Հուլիսի 19-ին բոլորին զարմացրեց կառավարական հաղորդագրությունը՝ Կոռնիլովին գերագույն գլխավոր հրամանատար նշանակելու մասին։ Շուտով փոխ-յասավուլ Ատարշչիկովը, որ լայն ծանոթություններ ուներ սպայական միության Գլխավոր կոմիտեում, վկայակոչելով միանգամայն հավաստի աղբյուրները, պատմում էր, որ Կոռնիլովը Ժամանակավոր կառավարությանը ներկայացնելու համար պատրաստած իր զեկուցագրում պնդում էր հետևյալ գլխավորագույն ձեռնարկումների անհրաժեշտության վրա. երկրի ամբողջ տերիտորիայում թիկունքային զորքերի ու բնակչության

նկատմամբ մտցնել ռազմա-ռևոլյուցիոն դատարանների իրավասություն, գործադրելով մահվան պատիժ մի շարք ամենածանր, գլխավորապես զինվորական հանցագործությունների համար. վերականգնել ռազմական պետերի կարգապահական իշխանությունը. նեղ շրջանակների մեջ դնել կոմիտեների գործունեությունը և սահմանել նրանց պատասխանատվությունը օրենքի առաջ և այլն։

Այդ նույն օրվա երեկոյան Լիստնիցկին իր հարյուրյակի և ուրիշ հարյուրյակների սպաների հետ ունեցած խոսակցության ժամանակ սուր և ուղղակի կերպով հարց դրեց՝ ո՞ւմ հետ են նրանք։

— Պարոնայք սպաներ,— ասում էր նա զսպված հուզմունքով,— մենք ապրում ենք իբրև միահամուռ մի ընտանիք։ Մենք գիտենք, թե ինչ է ներկայացնում մեզանից յուրաքանչյուրը, բայց մեր միջև շատ ցավոտ հարցեր մինչև այժմ մնացել են չլուծված։ Եվ ահա հենց այժմ, երբ պարզ նշմարվում են գերագույն հրամանատարի և կառավարության տարաձայնությունների հեռանկարները, մենք պետք է ուղղակի հարց դնենք՝ ո՞ւմ հետ ենք և ո՞ւմ ենք կողմնակից։ Եկեք, ուրեմն, խոսենք ընկերաբար, առանց կեղծելու։

Փոխ-յասավուլ Ատարշչիկովն առաջինը պատասխանեց.

— Ես պատրաստ եմ գեներալ Կոռնիլովի համար քվեել թե իմ և թե ուրիշի արյունը։ Նա բյուրեղային ազնվություն ունեցող մարդ է, ու միայն նա է, որ ի վիճակի է ոտքի կանգնեցնելու Ռուսաստանը։ Տեսեք, թե նա ինչ է անում բանակում։ Չէ՞ որ միայն նրա շնորհիվ մասամբ ազատություն տվին զինվորական պետերի ձեռքերին, իսկ մինչև այդ գոյություն ուներ կոմիտեների գերակշռող ազդեցություն, եղբայրացում, դասալքություն։ Ի՞նչ խոսք կարող է լինել։ Ամեն մի կարգին մարդ Կոռնիլովի կողմն է։

Ատարշչիկովը, որ բարակ ոտներ, անչափ լայն կուրծք ու լայն թիկունք ուներ, տաքացած էր խոսում։ Երևում էր, որ բարձրացրած հարցը խիստ հուզում էր նրան։ Վերջացնելով, նայեց սեղանի մոտ խմբված սպաներին, ծխախոտի մուշտուկով սպասողաբար չքչքացրեց ծխախոտատուփին։ Նրա աջ աչքի ստորին կոպի վրա դարչնագույն, ուռուցիկ սիսեռահատիկի նման նստել էր խալը։ Դա խանգարում էր վերին կո-

պին՝ աչքը պինդ ծածկելու, և դրանից էլ, առաջին անգամ Ատրաշչիկովին նայելիս, այնպիսի տպավորություն էր ստացվում, որպես թե նրա աչքերը լեցուն են մշտական ներողամիտ-սպասողական քմծիծաղով։

— Եթե ընտրություն անենք բոլշևիկների, Կերենսկու և Կոռնիլովի մեջ, ապա, իհարկե, մենք Կոռնիլովի կողմն ենք։

— Մեզ համար դժվար է դատել, թե ինչ է ուզում Կոռնիլովը, արդյո՞ք միայն կարգ ու կանոնի վերականգնումը Ռուսաստանում, թե՞ էլի մի որևէ այլ բանի վերականգնում...

— Դա պատասխան չէ սկզբունքային հարցին։

— Ո՛չ, պատասխա՛ն է։

— Եթե պատասխան է՛լ է, ապա, համենայն դեպս, անխելք պատասխան է։

— Իսկ դուք ինչի՞ց եք վախենում, հարյուրապետ. միապետության վերականգնումի՞ց։

— Ես դրանից չեմ վախենում, այլ ընդհակառակը, այդ եմ ցանկանում։

— Ուրեմն էլ բանն ի՞նչ է։

— Պարոննե՛ր,— վճռական, կոշտ ձայնով ասաց Դոլգովը, որ վաղուց չէ վախմիստր էր ու մարտական սխրագործությունների համար խորունժիի աստիճան էր ստացել,— ինչի՞ մասին եք վիճում։ Ավելի լավ է լուրջ ասացեք, որ մենք՝ կազակներս, պետք է կառչենք գեներալ Կոռնիլովից, ոնց որ երեխեն բռնում է մոր փեշից։ Սա պետք է ասել առանց ծուռ մտքի, շիտակ։ Թե որ նրանից պոկվենք, կկորչենք։ Ռուսաստանը մեզ աղբի մեջ կթաղի։ Այստեղ գործը պարզ է. որտեղ որ նա է, այնտեղ էլ մենք ենք։

— Ա՛յ, ինչ եմ ասո՛ւմ, հենց այդպես է։

Ատրաշչիկովը ձեռքով ցնծագին թփթփացրեց Դոլգովի ուսին ու ծիծաղկոտ աչքերը հառեց Լիստնիցկուն։ Վերջինս ժպտալով, հուզվելով, ծնկների վրա հարթում էր շալվարի ծալքերը։

— Ուրեմն ի՞նչպես, պարոնայք, սպաներ, ատամաններ,— մի քիչ բարձրաձայն ձայնով բացականչեց Ատրաշչիկովը,— մենք Կոռնիլովի կո՞ղմն ենք...

— Դեհ, իհարկե։

— Դոլգովը միանգամից քանդեց գորդյան հանգույցը։

— Ամբողջ սպայությունը նրա կո՛ղմն է։

— Մենք չենք ուզում բացառություն կազմել։

— Թանկագին Լավր Գեորգիևիչին, կազակին և հերոսին — ուռա՛։

Ծիծաղելով ու բաժակներն իրար զարկելով, սպաները թեյ էին խմում։ Խոսակցությունը, որ կորցրել էր քիչ առաջվա լարվածությունը, պտտվում էր վերջին օրերի իրադարձությունների շուրջ։

— Մենք հո խմբովին գերագույնի կողմն ենք, բայց կազակները տատանվում են...— անվճռական ասաց Դոլգովը։

— Ի՞նչպես թե «տատանվում են»,— հարցրեց Լիստնիցկին։

— Այնպես, էլի՛։ Տատանվում են, ու պրծավ-գնաց... Նրանք, շան որդենիքը, ուզում են վերադառնալ տուն, կնանոնց մոտ... Զինվորի դժվար կյանքից գազազել են...

— Մեր գործն է կազակներին տանե՛լ մեր հետևից,— հարյուրապետ Ջերնոկուտովը բռունցքը շմփացրեց սեղանին,— այո՛, տանել։ Հենց դրա համար էլ մենք սպայական ուսադիրներ ենք կրում։

— Հարկավոր է համբերատարությամբ բացատրել կազակներին, թե նրանք ում հետ պետք է գնան։

Լիստնիցկին գդալով շխկացրեց բաժակին. հավաքելով սպաների ուշադրությունը, շեշտելով բառերը, ասաց.

— Խնդրում եմ հիշել, պարոններ, որ այժմ մեր աշխատանքը պետք է լինի, ինչպես ասաց Ատրաշչիկովը, բացատրել կազակներին իրերի իսկական դրությունը։ Պետք է կազակին դուրս բերել կոմիտեների ազդեցության տակից։ Այստեղ հարկավոր է բնավորությունների բեկում, եթե ոչ ավելի, գոնե, օրինակ, այնպիսի բեկում, որպիսին մեր մեծամասնությանը վիճակվեց ապրել փետրվարյան հեղաշրջումից հետո։ Առաջվա ժամանակներում,— ասենք տասնվեց թվականին,— ես կարող էի ծեծել կազակին, երկյուղ կրելով, որ մարտում նա գնդակ կարձակի ծոծրակիս, իսկ փետրվարից հետո հարկավոր եղավ զգուշանալ, որովհետև եթե ես խփեի որևէ հիմարի, ինձ կսպանեին հենց այնտեղ, խրամատներում, առանց սպասելու հարմար մոմենտին։ Հիմա բոլորովին ուրիշ է բանը։ Մենք պետք է մտերմանանք կազակի հետ,— Լիստնիցկին

շեշտեց այդ բառը։— Դրանից է կախված ամեն ինչ։ Դուք գիտե՞ք, թե այժմ ինչ է կատարվում առաջին ու չորրորդ գնդերում։

— Կոշմա՛ր է։

— Այո՛, կոշմա՛ր,— շարունակեց Լիստնիցկին։— Սպաները առաջվա նման անջրպետվում էին կազակներից, և դրա հետևանքով բոլոր կազակներն էլ գլխովին ընկան բոլշևիկների ազդեցության տակ և իրենք էլ իննսուն տոկոսով բոլշևիկներ դարձան։ Հո պարզ է, որ մեզ համար անխուսափելի են ահեղ իրադարձությունները... Հուլիսի երեքի և հինգի օրերը լոկ ահեղ նախազգուշացում են անփույթների համար։ Կամ մեզ կվիճակվի հանուն Կոռնիլովի կռվել ռևոլյուցիոն դեմոկրատիայի զորքերի դեմ, կամ բոլշևիկները ուժեր կուտակելով ու լայնացնելով իրենց ազդեցությունը, էլի մի ռևոլյուցիա կկատարեն։ Նրանց մոտ կարճատև դաղար է, ուժերի կենտրոնացում, իսկ մեզ մոտ՝ թափթփվածություն... Եվ մի՞թե կարելի է այդպես... Կազակը հո պե՞տք կգա ապագա տուրուդմբոցի ժամանակ...

— Հա՛րկ է որ, մենք առանց կազակների նույնն ենք, ինչ որ զրոն առանց միավորի,— հոգոց հանեց Դոլգովը։

— Ճի՞շտ է, Լիստնիցկի։

— Նույնիսկ շա՛տ ճիշտ է։

— Ռուսաստանի մի ոտը գերեզմանումն է...

— Դու կարծում ես մենք այդ չե՞նք հասկանում։ Հասկանում ենք, բայց երբեմն անզոր ենք որևէ բան անելու։ «№ 1 հրամանը»[1] և «Օկոպնայա պրավդան»[2] իրենց սերմերն են ցանում։

— Իսկ մենք դիտում ենք ծլերը, փոխանակ դրանք ոտ-

[1] «№ 1 հրաման» — Պետրոգրադի Սովետի Գործադիր Կոմիտեի 1917 թ. մարտի 1-ի հրամանը, որով զորամասերում մտցվում էին ընտրովի կազմակերպություններ և այդ կազմակերպությունների վերահսկողություն հին, ցարական հրամանատարական կազմի գործողությունների վրա։

[2] «Օկոպնայա պրավդա»— օրաթերթ, լատիշական երկրամասի ս. դ. ռազմական կազմակերպության Բյուրոյի և ռուսական սեկցիայի օրգան, հրատարակվում էր 1917 թվականին։ Լայն չափով տարածված թերթ էր, զգալիորեն նպաստեց զինվորների մասսաների բոլշևիկացման։

նատակ անելու և հուր ու մոխիր դարձնելու,— բղավեց Ատարշչիկովը։

— Ոչ, չենք դիտում, մենք անզոր ենք։

— Սա՛ւտ եք ասում, խորունժի։ Մենք միայն անփույթ ենք։

— Ճիշտ չէ՛։

— Ապացուցե՛ք։

— Կամա՛ց, պարոններ։

— «Պրավդան» ջախջախեցին... Կերենսկին հետին խելքով է խելացի...

— Սա ի՞նչ է... Հո բազար չի՞։ Չի՛ կարելի, է՛։

Անհեթեթ ճչոցների ուժեղ աղմուկը հետզհետե հանդարտվեց։ Հարյուրյակներից մեկի հրամանատարը, որ լարված հետաքրքրությամբ լսել էր Լիստնիցկու խոսքերը, ուշադրություն խնդրեց։

— Ես առաջարկում եմ յասավուլ Լիստնիցկուն հնարավորություն տալ վերջացնելու իր խոսքը։

— Խնդրո՛ւմ ենք։

Լիստնիցկին բռունցքներով շփելով ծնկների սուր անկյունները, շարունակեց.

— Ես ասում եմ, որ հենց այն ժամանակ է՛լ, այսինքն գալիք մարտերում, քաղաքացիական պատերազմում,— ես միայն այժմ եմ հասկացել, որ այն անխուսափելի է,— հավատարիմ կազակը պետք կգա։ Հարկավոր է մարտնչել և նրան ետ խլել կոմիտեներից, որոնք ձգտում են դեպի բոլշևիկները։ Դա կենսական անհրաժեշտությո՛ւն է։ Չէ՞ որ նոր ցնցումների դեպքում առաջին ու չորրորդ գնդերի կազակները կգնդակահարեն իրենց սպաներին...

— Պա՛րզ է։

— Չե՛ն խնայելու։

— ... Ու նրանց փորձը,— որ ի դեպ ասած՝ խիստ դառն է,— պետք է դաս լինի մեզ համար։ Առաջին ու չորրորդ գնդերի կազակներին,— ասենք հիմա նրանք ի՞նչ կազակներ են որ,— ապագայում հարկ կլինի կախել, կախել երկուսից մեկին, կամ ուղղակի բոլորին էլ գլորել... Պետք է ոչնչացնել դաշտի մոլախոտը։ Ուրեմն եկե՛ք մեր կազակներին հեռու

պահենք այն սխալներից, որոնց համար հետագայում նրանք ստիպված կլինեն հատուցում տալ։

Լիստնիցկուց հետո խոսք վերցրեց հարյուրյակներից մեկի հենց այն հրամանատարը, որը նրան բացառիկ ուշադրությամբ էր լսում։ Հին, կադրային այդ սպան, որ ինը տարի ծառայել էր գնդում, չորս անգամ վիրավորվել պատերազմի ընթացքում, խոսում էր այն մասին, որ առաջվա ժամանակներում ծանր էր ծառայությունը։ Կազակական սպաները հետին տեղ էին բռնում, նեղվում էին, ծառայության մեջ թույլ չափով էին բարձրացվում, ու սպայական կադրերի գերակշռող մասի համար զորական ավագի աստիճանը վերջինն էր լինում. սպայի ասելով՝ հենց այդ հանգամանքով էլ բացատրվում է կազակական վերնախավերի ներտությունը ինքնակալության տապալման ժամանակ։ Բայց, չնայելով դրան, նա ասում էր, որ հարկավոր է ամեն կերպ աջակցել Կոռնիլովին, կազակական զորքերի միության խորհրդի և սպայական միության Գլխավոր կոմիտեի միջոցով ավելի ամուր կապվել նրա հետ։

— Թող Կոռնիլովը դիկտատոր լինի,— կազակական զորքերի համար դա փրկություն է։ Նրա օրով մենք թերևս ավելի լավ ապրենք, քան ապրում էինք ցարի օրով։

Արդեն կեսգիշերից անց էր։ Քաղաքի վրա չոքել էր պարզ, սպիտակավուն գիշերը՝ գիսախոտի ամպերով։ Պատուհանից երևում էին ծովակալության աշտարակի շուգունե, մթին, սուր ծայրը և դեղին, վարար լույսերը։

Սպաները խոսեցին մինչև լուսաբաց։ Որոշվեց շաբաթը երեք անգամ կազակների հետ զրույցներ անցկացնել քաղաքական թեմաների շուրջ, դասակապետ սպաների վրա պարտականություն դրվեց ամեն օր դասակների հետ պարապել մարմնամարզությամբ և ընթերցումով՝ ազատ ժամանակը օգտագործելու և քաղաքականության քայքայիչ մթնոլորտից կազակների մտքերը հեռացնելու համար։

Ցրվելուց առաջ երգեցին «Ցնցվեց, հուզվեց խաղաղ Դոնը ուղղափառ»-ը, խմեցին տասներորդ անգամ դրված ինքնաեռի թեյը, բաժակներն իրար զարկելով՝ կատակաբար բաժակաճառեր արտասանեցին։ Եվ արդեն բոլորովին վերջացնելու վրա էին, երբ Ատարշչիկովը Դոլգովի հետ փսփսալով, գոչեց.

— Այժմ իրրև դեսերտ մենք ձեզ կհյուրասիրենք կազակական մի հին երգով։ Հապա՛, լռությո՛ւն։ Պատուհանը պետք է բանալ, թե չէ ծխից կխեղդվենք։

Երկու ձայնը,— Դոլգովի թավ, բեկուն բասը և Ատարշչիկովի մեղմ, չափազանց դուրեկան տենորը սկզբում չէին հարմարվում իրար, ամեն մեկն իր տեմպով էր երգում, բայց վերջում ձայները ներդաշնակվեցին, հմայիչ գեղեցկությամբ էին հնչում։

... Բայց և հպարտ է Դոնը մեր խաղաղ, Դոնը հայրենի,—
Անօրենների գլուխ չի տվել, օ՞նց ապրել,— նա չի հարցրել Մոսկովին։
Ու միշտ էլ կտրուկ թրով է զարկել թուրքի ծոծրակին։
Ո՜, տարեցտարի մեր խաղաղ Դոնի մայր-տափաստանը
Իրեն ուղղափառ հավատի համար ու ամենասուրբ տիրամոր համար,
Ազատ, ալեծուփ մեր Դոնի համար մարտի՛ է կոչել ոսոխների դեմ...

Ատարշչիկովը ծնկների վրա մատները խաչմերուկ արած, երգում էր բարձր տոնով, ամբողջ ժամանակվա ընթացքում ոչ մի անգամ չշեղվեց, չնայելով, որ երգելիս շատ առաջ էր անցնում Դոլգովի հուժկու բասից. տեսքով չափազանց մռայլ էր, ու միայն վերջում Լիստնիցկին նկատեց, թե ինչպես նրա աչքի դարշնագույն խալի վրայից արցունքի շողուն մի կայլակ էր գլորվում։

Երբ արդեն մյուս հարյուրյակների սպաները գնացել էին, իսկ մնացածները պառկել քնելու, Ատարշչիկովը նստեց Լիստնիցկու մահճակալին, և ուռուցիկ կրծքի վրա տնտղելով կապույտ, խունացած տարատակալը, շշնջաց.

— Դու հասկանո՞ւմ ես, Եվգենի... ես անչափ սիրում եմ Դոնը, կազակական կյանքի այդ ամբողջ հին, դարերով արմատացած կացութաձևը։ Սիրում եմ մեր կազակներին, կազակուհիներին, սիրում եմ ամեն ինչ։ Տափաստանային օշինդրի բույրից լացս գալիս է... Եվ ահա, երբ ծաղկում է արևածաղիկը ու Դոնի վրա տարածվում անձրևից թրջված խաղողի այգիների բույրը,— այնքա՜ն խորունկ ու ցավոտ եմ սիրում... դու կհասկանաս... Իսկ հիմա մտածում եմ՝ արդյո՞ք մենք չենք եղում հենց այս կազակների գլուխը, արդյո՞ք այս ճամփով ենք մենք ուզում նրանց տանել...

— Ինչի՞ մասին ես խոսում,— ուշադիր հարցրեց Լիստնիցկին։

Ատարշչիկովի սպիտակ շապկի օձիքի տակից նայիվ, պատանեկորեն հուզիչ կերպով սկսին էր տալիս թուխ պարանոցը։ Դարչնագույն խալի վրա ծանր կախված էր կոպի մուգ-կապտավուն շրջանակը, պրոֆիլից երևում էր կիսագոց մի աչքի թրջված լույսը։

— Ես մտածում եմ՝ արդյո՞ք դա հարկավոր է կազակներին։

— Հապա ուրեմն ի՞նչ է հարկավոր նրանց։

— Չգիտեմ... Բայց ինչո՞ւ են նրանք այդպես տարերայնորեն հեռանում մեզնից։ Ռևոլյուցիան ասես ոչխարների ու այծերի է բաժանել մեզ, մեր շահերը կարծես տարբեր են։

— Գիտե՞ս ինչ,— զգուշությամբ սկսեց խոսել Լիստնիցկին,— այստեղ արտահայտվում է իրադարձությունները ըմբռնելու տարբերությունը։ Մենք ավելի շատ կուլտուրա ունենք, մենք կարող ենք քննադատաբար արժեքավորել այս կամ այն փաստը, իսկ նրանց մոտ ամեն ինչ ավելի պրիմիտիվ է, հասարակ։ Բոլշևիկները նրանց համոզում են, թե պետք է վերջացնել պատերազմը, ավելի ճիշտ՝ այն վերածել քաղաքացիական պատերազմի։ Նրանք կազակներին գրգռում են մեր դեմ, և որովհետև կազակները հոգնած են ու նրանց մեջ ավելի շատ է կենդանականը և չկա հայրենիքի առաջ պարտքի ու պատասխանատվության այն բարոյական, ուժեղ գիտակցությունը, որը կա մեր մեջ, ուստի միանգամայն հասկանալի է, որ դա բարենպաստ հող է գտնում։ Նրանց համար ի՞նչ է հայրենիքը։ Մի հասկացողություն, որ, համենայն դեպս, վերացական է. «Դոնի զորաց երկիրը Ֆրոնտից հեռու է ու գերմանացին այնտեղ չի հասնի»,— այսպես են դատում նրանք։ Հենց սա է ամբողջ դժբախտությունը։ Պետք է նրանց ճիշտ բացատրել, թե ինչ հետևանք կունենա այս պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելը։

Լիստնիցկին խոսում էր, ենթագիտակցորեն զգալով, որ իր խոսքը նպատակին չեն հասնում և որ Ատարշչիկովն այժմ նրա առաջ կփակի իր հոգեկան աշխարհի դռները։

Այդպես էլ եղավ. Ատարշչիկովն ինչ-որ անհասկանալի

բան մոմոաց, երկար նստեց առանց խոսելու, և Լիստնիցկին թեպետև փորձեց, բայց չկարողացավ ըմբռնել, թե այժմ ինչ մթության մեջ են թափառում լողող ընկերոջ մտքերը։

«Հարկավոր էր սրան մինչև վերջ արտահայտվելու հնարավորություն տալ...»— ափսոսանքով մտածեց նա։

Ատարշչիկովը բարի գիշեր մաղթեց, այնպես էլ գնաց առանց մի խոսք ասելու։ Մի բոպե բացեց անկնդհատ խոսակցությունը, մի փոքր բարձրացրեց անհայտի ա՛յն սև վարագույրի ծայրը, որով յուրաքանչյուր մեկը թաքնվում է ուրիշներից, ու կրկին իջեցրեց այն։

Լիստնիցկին հուզված էր այն պատճառով, որ չէր կարողացել ըմբռնել ուրիշի խորհրդավոր մտքերը։ Նա ծխեց, մնաց պառկած՝ լարված նայելով գորշ, մեղմ մթությանը, ու անսպասելիորեն հիշեց Ակսինյային, արձակուրդի օրերը, որոնք ծայրեծայր լեցուն էին նրանով։ Քնեց, խաղաղվելով մտորումներից ու պատահական, կցկտուր հուշերից,— ա՛յն կանանց մասին, որոնց ուղիները մի ժամանակ խաչաձևվել էին իր հետ։

XII

Լիստնիցկու հարյուրյակում ծառայում էր Բուկանովսկայա ստանիցայի կազակ Իվան Լագուտինը։ Առաջին ընտրությունների ժամանակ նա ընտրվել էր գնդի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի անդամ, մինչև գնդի Պետրոգրադ ժամանելը առանձնապես աչքի չէր ընկնում, բայց հուլիսի վերջերին դասակապետ սպան Լիստնիցկուն հաղորդեց, որ Լագուտինը լինում է Պետրոգրադի բանվորական ու զինվորական դեպուտատների սովետի ռազմական սեկցիայում, հավանորեն կապված է սովետի հետ, որովհետև նկատվել է, որ նա իր դասակի կազակների հետ հաճախակի զրույցներ է ունենում և բացասական կողմից ազդում նրանց վրա։ Հարյուրյակում երկու դեպք էր եղել, երբ կազակները հրաժարվել էին պահակներ ու պարեկներ նշանակվելուց։ Դասակապետ սպան այդ դեպքերը վերագրում էր կազակների վրա Լագուտինի ունեցած ազդեցության։

Լիստնիցկին որոշեց, որ անհրաժեշտ է մի կերպ ավելի

մոտիկից ճանաչել Լագուտինին, ուսումնասիրել նրան։ Կազակի հետ սրտաբաց խոսակցություն ունենալը հիմարություն և անզգուշություն կլիներ, դրա համար էլ Լիստնիցկին որոշեց հարմար առիթի սպասել։ Առիթը շուտով վրա հասավ։ Հուլիսի վերջին երրորդ դասակը, կարգագրի համաձայն, պետք է գիշերով հսկեր Պուտիլովի գործարանին կից փողոցները։

— Ես կգնամ կազակների հետ,— նախազգուշացրեց Լիստնիցկին դասակապետ սպային,— ասացեք, որ ինձ համար թամբեն սև ձին։

Լիստնիցկին «համենայն դեպս»,— ինչպես ինքն էր ասում, երկու ձի էր պահում։ Բանբերի օգնությամբ հագնվելով՝ նա իջավ բակ։ Դասակը ձի էր նստել։ Մշուշոտ, տեղտեղ լուսավորված մթության մեջ անցան մի քանի փողոց։ Լիստնիցկին դիտմամբ ետ մնաց, հետևից կանչեց Լագուտինին։ Սա շուտ տվեց իր անբարետես ձիուկը, մոտեցավ, կողքից սպասողաբար նայեց յասավուլին։

— Ի՞նչ նորություն կա ձեզ մոտ, կոմիտեում,— հարցրեց Լիստնիցկին։

— Ոչինչ չկա։

— Դու ո՞ր ստանիցայից ես, Լագուտին։

— Բուկանովսկայա ստանիցայից։

— Ո՞ր խուտորից։

— Միտկինից։

Հիմա նրանց ձիերն կողք-կողքի էին գնում։ Լիստնիցկին լապտերների լույսի տակ շեղակի նայում էր կազակի մորուքավոր դեմքին։ Լագուտինի գլխարկի տակից երևում էին կոկիկ սանրված մազերը, փափլիկ թշերի վրա խուճուճված էր անհամաչափ մորուքը, խելացի, մի փոքր խորամանկ աչքերը փոս էին ընկել հոնքավերևի ուռուցիկ աղեղների տակին։

«Տեսքով հասարակ, մոայլ մարդ է, բայց ի՞նչ է թաքնված նրա հոգու մեջ։ Հավանորեն ատում է ինձ, ինչպես և այն ամենը, ինչ-որ կապված է հին ռեժիմի հետ, «օրհնված դագանակի» հետ...— մտածեց Լիստնիցկին և հայտնի չէ ինչու ուզեց իմանալ Լագուտինի անցյալը։

— Ընտանիք ունե՞ս։

— Ճիշտ այդպես։ Կին ու երկու երեխա։

— Տնտեսություն։

— Ի՞նչ տնտեսություն, ի՞նչ բան,— հեգնարար, ափսոսանքի տոնով ասաց Լագուտինը,— ոչ վատ ենք ապրում, ոչ էլ լավ։ Դե, կազակի օրն ի՞նչ պիտի լինի՛ որ, մի կերպ քարշ ենք տալի մեր կյանքը... Մեր հողը ավազահող է,— մտածելով՝ մոայլ տոնով ավելացրեց Լագուտինը։

Լիստնիցկին մի ժամանակ Բուկանովսկայա ստանիցայի միջով գնում էր Սերբյակովո կայարանը։ Նա պարզ վերհիշեց մեծ ճանապարհից մի փոքր հեռու գտնվող այդ խուլ ստանիցան, որ հարավից եզերված է բոլորովին հարթ, լայնատարած մարգագետնով, գոտևորված է խոպեր գետի քմահաճ ծռվածքներով։ Դեռ այն ժամանակ բլուրի կատարից։ Ելանսկայա ստանիցայի սահմանից, տասներկու վերստ տարածությունից տեսել էր ցածրադիր այգիների կանաչ մուժը, սպիտակ, բարձր զանգակատունը, որ ասես բոլորովին կրծած մի մեծ ոսկրակտոր լիներ։

— Մեր հողը ավազախառն է,— հոգոց հանեց Լագուտինը։

— Երևի ուզում ես վերադառնալ տուն, հը՞։

— Բա ո՛նց, պարոն յասավուլ, մարդ ուզում է շուտ գնալ, էլի՛։ Շա՛տ վնաս ենք տեսել պատերազմի ժամանակ։

— Է-է՞, ախպերս, հազիվ թե հնարավոր լինի շուտ վերադառնալ...

— Հնարավոր կլինի։

— Պատերազմը հո չե՞նք վերջացրել։

— Շուտով կվերջացնեն։ Շուտով տուն կգնանք,— համառորեն պնդեց Լագուտինը։

— Դեռ իրար հետ է՛լ պիտի կռվենք։ Ի՞նչ ես կարծում։

Լագուտինը, որ աչքերը հառել էր թամքի դաշին, մի փոքր լռելուց հետո հարցրեց.

— Ո՞ւմ հետ պիտի կռվենք։

— Դեհ, ո՛վ գիտի... Թեկուզ բոլշևիկների հետ։

— Ու Լագուտինը էլի՛ երկար լռեց, ասես ննջեց ձիերի սմբակների քթքթոցից, որ համաչափ էր պարի նման։ Երեք բոպե լուռ գնում էին։ Լագուտինը դանդաղ արտասանելով բառերը, ասաց.

— Մենք ու նրանք բաժանելու ոչինչ չունենք։

— Իսկ հո՞ղը։

— Հողը բոլորին էլ կհերիքի։

— Դու գիտե՞ս, թե ինչի են ձգտում բոլշևիկները։

— Քիչ-միչ լսած կամ...

— Ուրեմն, քո կարծիքով, ի՞նչ պետք է անել, եթե բոլշևիկները գան մեր վրա՝ մեր հողերը զավթելու նպատակով, կազակներին ստրկացնելու նպատակով։ Գերմանացիների դեմ դու հո կռվե՞լ ես, հո պաշտպանե՞լ ես Ռուսաստանը։

— Գերմանացին, այդ ուրիշ բան է։

— Իսկ բոլշևիկնե՞րը։

— Է՛հ, պարոն յասավուլ,— ըստ երևույթին որոշելով արտահայտվել, բարձրացնելով գլուխը ու համառորեն փնտրելով Լիստնիցկու հայացքը, խոսեց Լագուտինը,— բոլշևիկները չեն խլի իմ մի կտոր հողը։ Իմ ունեցածը հենց մի փայաբաժին է, իմ հողը նրանց հարկավոր չէ... Բայց ահա, օրինակի համար,— միայն թե դուք չնեղանաք,— ձեր հայրիկը տասը հազար դեսյատին հող ունի...

— Ոչ թե տասը, այլ չորս հազար։

— Դեհ, թեկուզ չորս հազար, բա այդ քի՞չ է։ Որ ուղիղն ասենք, բա դա կա՞րգ է, հը՞։ Թե որ վերցնենք ամբողջ Ռուսաստանը, ձեր հոր նմանները շա՜տ ու շատ են։ Ուրեմս, միտք արեք, պարոն յասավուլ, որ ամեն մարդ էլ ուտել է ուզում։ Դուք է՛լ եք ուզում ուտել, ուրիշ ամեն տեսակ մարդիկ է՛լ։ Հո մենակ ցիգանն էր, որ իրեն յաբուին սովորեցնում էր չուտել, միթամ առանց կերի է՛լ կապրի, էլի՛։ Իսկ խեղճ յաբուն ծոմ էր պահում, ծոմ էր պահում, ամա մի տասն օրից հետո սատկեց... Ցարի ժամանակ ծուռ կարգեր էին տիրում, խեղճ ժողովրդի համար բոլորովին անարդար կարգեր... Հրե՛ն, ձեր հայրիկին եղոտ գաթա էր բաժին ընկել, չորս հազար, ամա նա հո երկու բկով չի կուլ տալի, նա էլ մեզ պես, հասարակ մարդկանց պես մի բուկ ունի։ Հա՛րկ է որ, ժողովուրդը նեղված է... Բոլշևիկները ճիշտ են նշան բռնում, իսկ դուք ասում եք՝ կռվել...

Լիստնիցկին նրան լսում էր թաքցրած հուզմունքով։ Ի վերջո նա արդեն հոսկանում էր, որ անզոր է մի որևէ ծանրակշիռ փաստարկ բերելու, զգում էր, որ կազակը պարզ, սպանիչ փաստերով իրեն նեղն է լծել, և նա շփոթվեց, չաբացավ, որովհետև ներքուստ, հոգու խորքում գիտակցում էր իր անիրավացիությունը։

— Դու բոլշևի՞կ ես, ինչ է։

— Այստեղ անունը ի՞նչ գործ ունի...— հեգնաբար ու դանդաղ պատասխանեց Լագուտինը,— բանը անունը չի, այլ արդարությունը։ Ժողովրդին արդարություն է հարկավոր, իսկ դա բոլորն էլ ոտքի տակ են տալի, թաղում են։ Ասում են, որ արդարությունը վաղուց է մեռել։

— Ահա թե քո գլխին ինչ են լցնում սովդեպի բոլշևիկները... Ուրեմն, իզուր չէ, որ դու բարեկամանում ես նրանց հետ։

— Է-է՛, պարոն յասավուլ, կյանքը ինքն է մեզ պես համբերողների գլուխը լցրել այդ մտքերը, իսկ բոլշևիկները՝ միայն պատրույգը կվառեն...

— Դու թող այդ հեքիաթ-մեքիաթը։ Հարկ չկա կատակ անելու,— արդեն ցասկոտ վրա բերեց Լիստնիցկին։— Պատասխանիր ինձ, դու խոսեցիր իմ հոր հողի մասին, առհասարակ կալվածատիրական հողի մասին, բայց չէ՞ որ դա սեփականություն է։ Եթե դու երկու շապիկ ունես, իսկ ես մեկն էլ չունեմ, ուրեմն ի՞նչ խոսք, քո կարծիքով ես պետք է խլե՞մ քո շապիկը։

Լիստնիցկին չտեսավ, բայց Լագուտինի ձայնից կռահեց, որ նա ժպտում է։

— Ես ինքս կտամ ավելորդ շապիկը։ Ֆրոնտում ոչ թե ավելորդ, այլ վերջին շապիկս էի տալիս, շինելը տկլոր ջանիս վրա էի հագնում, բայց արի ու տես, որ ոչ ոք էլ չի ուզում մի թիզ հող զիջել...

— Լավ, դու քի՞չ հող ունես, պակասո՞ւմ է, հը՞,— Լիստնիցկին բարձրացրեց ձայնը։

Սփրթնած Լագուտինը հուզմունքից շնչասպառ, համարյա բղավելով, պատասխանեց.

— Դու կարծում ես, ինձ համա՞ր է հոգիս ցավում։ Լեհաստանում էինք,— մարդիկ ո՞նց են ապրում այնտեղ։ Տեսե՞լ ես թե չէ։ Իսկ մեր չորս բոլորը ի՞նչպես են ապրում մուժիկները... Ես հո տեսե՛լ եմ։ Մարդու սիրտը արյունո՛վ է լցվում... Կարծում ես ես նրանց չե՞մ խղճում, հը՞։ Կարելի է

ես շա՛տ ու շատ եմ ցավել թեկուզ այն լեհացու համար, հետաքրքրվել նրա դառն վիճակով։

Լիստնիցկին ուզում էր ինչ-որ խայթող բան ասել, բայց Պուտիլովի գործարանի գորշ, ցցուն կորպուսների կողմից լսվեց մի սուր աղաղակ՝ «բռնեցե՛ք»։ Դղրդաց ձիերի ոտների դոփյունը, ականջ ծակեց կրակոցը։ Մտրակը թափահարելով, Լիստնիցկին բաց թողեց ձիու գլուխը։

Լիստնիցկին ու Լագուտինը միաժամանակ մոտեցան փոդոցների խաչմերուկի մոտ խմբված դասակին։ Կազակները սվսվացնելով թրերը, իջնում էին ձիերից, խմբի մեջտեղում թպրտում էր նրանց բռնած մարդը։

— Ի՞նչ է, ի՞նչ բան է,— որոտաց Լիստնիցկին՝ ձին քշելով ամբոխի մեջ։

— Ինչ-որ մի իժ է, քար գցեց...

— Շպրտեց մեր վրա ու փախավ։

— Հասցրո՛ւ դրան, Արժանով։

— Ա՛խ դու սրիկա՛, քա՛ր ես գցում, հա՛-ա։

Դասակապետ ուրյադնիկ Արժանովը կախվելով ձիուց, բռնել էր կարճահասակ, սև վերնաշապիկով, առանց գոտու մի մարդու օձիքից։ Ձիերից իջած երեք կազակ կապում էին նրա թևերը։

— Ո՞վ ես դու,— ինքն իրեն կորցրած՝ բղավեց Լիստնիցկին։

Բռնվածը բարձրացրեց գլուխը, նրա մռայլ, սփրթնած դեմքի վրա ծռմռվել, պինդ իրար էին հպվել լուռ շրթունքները։

— Ո՞վ ես դու,— Լիստնիցկին կրկնեց հարցը,— քա՞ր ես շպրտում, հա՞, սրիկա՛։ Դե՞հ, լռո՞ւմ ես։ Արժա՛նով...

Արժանովը թռավ ձիուց, բաց թողեց բռնվածի օձիքը, թափ առավ ու խփեց նրա դեմքին։

— Թակեցե՛ք դրան,— միանգամից դարձնելով ձին, հրամայեց Լիստնիցկին։

Ձիերից իջած երեք թե չորս կազակ, գետին գցելով կապված մարդուն, սկսեցին հարվածել մտրակներով։ Լագուտինը թռավ ձիուց, վազեվազ մոտեցավ Լիստնիցկուն։

— Պարո՛ն յասավուլ... Այս ի՞նչ եք անում... Պարո՛ն յասավուլ,— նա դողդոջ, կպչուն մատներով բռնեց յասավուլի ծնկից, աղաղակեց,— այդպես չի՛ կարելի... ախր նա մա՛րդ է, ի՞նչ եք անում, հը՞։

Լիստնիցկին թափահարեց ձիու սանձը, լռեց։ Նետվելով դեպի կազակները, Լագուտինը Արժանովի մեջքն առավ թևերի մեջ, ու սայթաքելով, թուրը ոտների մեջ գցելով, փորձում էր ետ քաշել նրան։ Արժանովը դիմադրում էր, քրթմնջում.

— Դու շատ մի՛ փոթոթվի, է՛յ։ Նա քար գցի, իսկ ես սուս կենամ, հա՞... Թո՛ղ... Թո՛ղ, ասում եմ քեզ...

Կազակներից մեկը կռացավ, ուսից վերցրեց հրացանը ու դրա կոթով խփեց գետնին ընկած մարդու գալարվող մարմնին։ Մի բոպե անց սալահատակով մեկ սողաց ցածր, աղեկտուր ու վայրի աղաղակը։

Հետո էլ մի քանի վայրկյան լռություն,— և նույն ձայնը, բայց արդեն երիտասարդական ճկունությամբ, խեղդվելով, ցավից կերկերուն, հարվածներից հետո տնքալուց խզվելով, կցկտուր ճիչեր էր արձակում.

— Սրիկանե՛ր... Կոնտրռևոլյուցիոներներ... Խփեցե՛ք, օ-օֆ.... ա-ա՛-ա-այ...

Շրը՛մփ, շրը՛մփ, շրը՛մփ,— լսվում էին հարվածները։

Լագուտինը վազեվազ մոտեցավ Լիստնիցկուն. պինդ սեղմվելով նրա ծնկին, չանգռոտելով թամքի կողը, շնչասպառ գոչեց.

— Խի՛ղճ արա։

— Ե՛տ քաշվիր, է՛։

— Յասավո՛ւլ... Լիստնիցկի... Լսո՞ւմ ես, պատասխան կտաս։

— Թքա՛ծ քեզ վրա,— մռմռաց Լիստնիցկին և ձին քշեց Լագուտինի վրա։

— Տղերք,—գոչեց Լագուտինը՝ վազելով մի կողմ կանգնած կազակների մոտ,— ես գնդի ռևկոմի անդամ եմ... Ես ձեզ հրամայում եմ՝ մահից ազատեցեք մարդուն... Պատասխան... պատասխան կտաք, հա՛-ա... Հին ժամանակը չէ...

Անմիտ, կուրացուցիչ ատելությունը թունդ համակեց Լիստնիցկուն։ Նա մտրակով խփեց ձիու ականջների մեջտեղին ու քշեց Լագուտինի վրա։ Նագանի սև, հրացանի քսուկի հոտ արձակող փողը դեմ անելով նրա դեմքին, ճղճղաց.

— Լռի՛-ր, դավաճան, բոլշևի՛կ, թե չէ կգնդակահարեմ։

Կամքի մեծագույն լարումով մատը դեն տարավ ատրճանակի հրահանից, ծառս արեց ձին, սլացավ։

Մի քանի բոպեից հետո նրան հետևեցին երեք կազակները։ Արժանովի և Լապինի ձիերի միջև, առանց ոտները գետին դնելու, քարշ էր գալիս բռնված մարդը՝ մարմնին հուպ կպած, թաց շապկով։ Կազակների թևերից կախված, նա կամացուկ ճոճվում էր, ոտները քսում սալաքարերին։ Դեպի վեր ցցված նրա սուր ուսերի միջև օրորվում էր արյունոտ, պատռված գլուխը, կախվում ծոծրակի վրա՝ բարձրացնելով սպիտակին տվող կզակը։ Մի քիչ հեռվից ընթանում էր երրորդ կազակը։ Լուսավորված նրբանցքի անկյունում նա մի կառք տեսավ. կիսով չափ կանգնելով ասպանդակի վրա, ձին քշեց դեպի կառքը։ Ինչ-որ կարճ խոսք ասելով, մտրակը սպառնագին խփեց սապոգի ճտքին, ու կառապանը հնազանդ շտապողականությամբ կառքը քշեց դեպի Արժանովն ու Լապինը, որոնք կանգ էին առել փողոցում։

Մյուս օրը Լիստնիցկին արթնացավ նախորդ օրը իր կատարած մեծ, անուղղելի սխալի գիտակցությամբ։ Կծոտելով շրթունքները, նա վերհիշեց կազակների վրա քար նետած մարդուն ծեծելու տեսարանը և այն, ինչ որ այնուհետև տեղի էր ունեցել իր և Լագուտինի միջև։ Կնճռոտեց դեմքը։ Մտածկոտ հազաց։ Հագնվելով, մտածեց, որ գնդի կոմիտեի հետ հարաբերությունները սրվելուց խուսափելու համար առայժմ չպետք է ձեռք տալ Լագուտինին, այլ ավելի լավ է սպասել, մինչև որ միջադեպին ներկա եղած կազակների հիշողության մեջ հարթվի Լագուտինի հետ տեղի ունեցած ընդհարումը, և այն ժամանակ ծածուկ կերպով մեջտեղից վերացնել նրան։

«Ա՛մա թե բարեկամացա կազակի հետ...»— ինքն իրեն դառնությամբ հեգնում էր Լիստնիցկին ու հետագա բոլոր օրերին գտնվում էր կատարված դեպքի վատ տպավորության տակ։

Օգոստոսի սկզբներին, պայծառ, արևաշող մի օր Լիստնիցկին Ատարշչիկովի հետ շրջում էր քաղաքում։ Սպաների ժողովի օրը նրանց միջև եղած խոսակցությունից հետո ոչինչ չկար, որ կարողանար վերացնել այն ժամանակ ստեղծված

անորոշությունը։ Ատարշչիկովը ինքնամփոփ էր, թաքցնում էր չարտահայտված մտքերը, և որքան էլ Լիստնիցկին փորձում էր բաց անել նրա լեզուն, նա ծածկում էր այն անթափանցելի վարագույրը, որ սովորաբար կրում է մարդկանց մեծամասնությունը՝ դրանով ուրիշների աչքից թաքցնելով իր իսկական դեմքը։ Լիստնիցկուն միշտ թվում էր, որ մարդը շփվելով ուրիշ մարդկանց հետ, իր արտաքին դեմքի տակ էլի ինչ-որ մի ուրիշ դեմք է պահում, որը երբեմն այնպես էլ մնում է չպարզված։ Նա հաստատապես հավատում էր, որ եթե ուզածդ մարդուց պոկես հենց այդ վերին ծածկոցը, ապա նրա տակից դուրս կգա իսկական, մերկ, ոչ մի կեղծիքով չպճնված միջուկը։ Եվ այս պատճառով էլ նա միշտ հիվանդագին ցանկություն էր ունենում իմանալու, թե ինչ է թաքնված այլևայլ մարդկանց կոպիտ, մռայլ, աներկյուղ, լկտի, հանդիստ, ուրախ արտաքինի տակ։ Տվյալ դեպքում, մտածելով Ատարշչիկովի մասին, նա լոկ մի բան էր կռահում,— վերջինը տանջալից կերպով ելք է փնտրում ստեղծված հակասություններից, կազակականը կապակցում է բոլշևիկականի հետ։ Այս ենթադրությունը նրան ստիպեց դադարեցնել Ատարշչիկովի հետ մերձենալու փորձերը, իրեն ավելի հեռու պահել։

Նրանք քայլում էին Նևսկի պողոտայով, երբեմն անշան ֆրազներ փոխանակում։

— Գնա՞նք մի բան ուտելու,— առաջարկեց Լիստնիցկին ու աչքերով ցույց տվեց մի ռեստորանի դուռ։

— Կարելի է,— համաձայնեց Ատարշչիկովը։

Նրանք ներս մտան ու կանգ առան՝ մի փոքր շփոթված նայելով իրենց շուրջը,— բոլոր սեղանները բռնված էին։ Ատարշչիկովն արդեն շուռ էր գալիս հեռանալու, բայց պատուհանի մոտ դրված սեղանից վեր կացավ ուշադրությամբ նրանց նայող, ուռուցիկ դեմքով, լավ հագնված մի պարոն, որը նստած էր երկու կնոջ հետ, մոտեցավ՝ քաղաքավարությամբ բարձրացնելով կաթսայաձև գլխարկը։

— Ներողություն եմ խնդրում։ Արդյոք չէի՞ք ցանկանա գրավել մեր սեղանը։ Մենք գնում ենք։— Նա ժպտում էր՝ ցույց տալով ծխելուց դեղնած, նոսր ատամները, ձեռքի շարժումով հրավիրելով դեպի սեղանը։— Ես ուրախությամբ ծա-

ությունն կմատուցեմ պարոնայք սպաներին։ Դուք մեր պարծանքն եք։

Սեղանի մոտ նստած կանայք վեր կացան։ Նրանցից մեկը, որ բարձրահասակ էր ու սև, շտկում էր սանրվածքը, մյուսը, որ հասակով ավելի փոքր էր, սպասում էր՝ խաղացնելով հովանոցը։

Սպաները շնորհակալություն հայտնեցին պարոնին, որը սիրալիր կերպով նրանց հնարավորություն էր տվել օգտվելու սեղանից, ու անցան դեպի պատուհանը։ Իջեցրած վարագույրի միջով դեղին ասեղների պես սփռոցի վրա էին ընկել գալուկ ճառագայթները։ Կերակուրների հոտը խեղդել էր սեղանների վրա դրված կենդանի ծաղիկների հուզիչ, նրբին բուրմունքը։

Լիստնիցկին սառույցով բանջարապուր պատվիրեց, ու սպասելով, մտազբաղ տնտղում էր ծաղկամանից պոկած դեղնակարմիր մի ծաղիկ։ Ատարշչիկովը թաշկինակով սրբում էր քրտնած ճակատը, հոգնածորեն խոնարհված նրա աչքերը, հաճախակի թարթելով, հետամուտ էին լինում արևի արտացոլված ճառագայթին, որ երերվում էր հարևան սեղանի ոտի վրա։

Նրանք դեռ ուտում էին, երբ երկու սպա, բարձրաձայն խոսելով, մտան ռեստորան։

Առջևից քայլողը աչքերով ազատ սեղան փնտրելով, արևից թունդ սևացած դեմքը դարձրեց դեպի Լիստնիցկին։ Նրա շեղադիր, սև աչքերում առկայծեց ուրախությունը։

— Լիստնի՛ցկի,— այդ դո՞ւ ես...— մոտենալով, վստահորեն, բոլորովին առանց քաշվելու գոչեց սպան։

Նրա սև բեղերի տակ վառ փայլեցին ատամները։ Լիստնիցկին ճանաչեց յասավուլ Կալմիկովին, սրա հետևից մոտեցավ Զուբովը։ Նրանք պինդ սեղմեցին միմյանց ձեռքերը։ Իր նախկին պաշտոնակիցներին ծանոթացնելով Ատարշչիկովի հետ, Լիստնիցկին հարցրեց.

— Հը՛, այդ ո՞ր քամին բերեց այստեղ։

Ոլորելով բեղերը, Կալմիկովը հարևանցիորեն, շեղակի նայեց այս ու այն կողմ, ասաց.

— Գործուղված ենք։ Հետո կպատմեմ։ Դու քո մասին պատմիր։ Ի՞նչպես ես ապրում տասնչորսերորդ գնդում։

...Նրանք միասին դուրս եկան։ Կալմիկովը և Լիստնիցկին ետ մնացին, շուտ եկան հենց առաջին նրբանցքը, ու կես ժամից հետո, անցնելով քաղաքի աղմկոտ մասից, քայլում էին, խոսում կամացուկ, երկյուղած նայում իրենց շուրջը։

— Մեր երրորդ կորպուսը գտնվում է Ռումինական ֆրոնտի ռեզերվում,— աշխույժ պատմում էր Կալմիկովը։— Մեկ ու կես շաբաթ առաջ գնդի հրամանատարից հրաման եմ ստանում հանձնել հարյուրյակը, հարյուրապետ Զուբովի հետ մեկնել դիվիզիայի շտաբի տնօրինության տակ։ Հրաշալի է։ Հանձնում եմ։ Ժամանում ենք դիվիզիայի շտաբ։ Օպերատիվ բաժանմունքից գնդապետ N...— դու նրան ճանաչում ես,— գաղտնի հաղորդում է ինձ, որ ես պետք է անհապաղ մեկնեմ գեներալ Կրիմովի մոտ։ Զուբովի հետ գնում ենք կորպուս։ Կրիմովն ընդունում է ինձ, և որովհետև նա գիտե, թե սպաներից ում են ուղարկում իր մոտ, ուղղակի հայտարարում է հետևյալը. «Իշխանության գլուխ են կանգնած այնպիսի մարդիկ, որոնք գիտակցաբար դեպի կործանում են տանում երկիրը. անհրաժեշտ է փոխել կառավարական վերնախավը, գուցեև ժամանակավոր կառավարությունը փոխարինել ռազմական դիկտատուրայով»։ Նա տվեց Կոռնիլովի, որպես հավանական թեկնածուի անունը, հետո ինձ առաջարկեց մեկնել Պետրոգրադ, սպայական միության Գլխավոր կոմիտեի տնօրինության տակ։ Հիմա այստեղ մի քանի հարյուր հուսալի սպաներ են հավաքված։ Դու հասկանո՞ւմ ես, թե մենք ինչ դեր ենք խաղալու։ Սպայական միության Գլխավոր կոմիտեն կազակական զորքերի միության Խորհրդի հետ համերաշխ է աշխատում, հանգուցային կայարաններում և դիվիզիաներում հարվածային գումարտակներ է կազմակերպում։ Ահա այն ամենը, ինչ որ պետք է գալու մոտիկ ապագայում...

— Ի՞նչ է դուրս գալու, դու ի՞նչ ես կարծում։

— Ա՛յ քեզ բան։ Ապրելով այստեղ, մի՞թե դուք չեք պարզել իրադրությունը։ Անկասկած, կառավարական հեղաշրջում կլինի, Կոռնիլովը իշխանության գլուխ կանգնի։ Բանակը հո սարի պես կանգնած է նրա կողմը։ Այնտեղ, մեզ մոտ այսպես են մտածում. կա երկու համազոր ուժ,— Կոռնիլովը և բոլշևիկները։ Կերենսկին երկու աղացքարերի արանքումն է. մեկը կամ մյուսը կճզմի նրան։ Առայժմ թող Ալի-

տայի[1] անկողնում։ Նա մի ժամվա խալիֆա է։— Կալմիկովը, մի փոքր լռելուց հետո, մտազբաղ տնտղելով թրափունչը, ասաց.— Մենք, էապես ասած, զինվորներ ենք շախմատի դաշտում, իսկ այդ զինվորները հո չգիտեն, թե խաղացողի ձեռքը իրենց ուր է տանելու... Օրինակ, ես չեմ պատկերացնում այն ամենը, ինչ որ կատարվում է գլխավոր զորակայանում։ Գիտեմ, որ գեներալիտետի,— Կոռնիլովի, Լուկոմսկու, Ռոմանովսկու, Կրիմովի, Դենիկինի, Կալեդինի, Էրդելիի և ուրիշ շատերի միջև ինչ-որ խորհրդավոր կապ, համաձայնություն կա...

— Սակայն բանակը... արդյո՞ք ամբողջ բանակը կգնա Կոռնիլովի հետևից,— հարցրեց Լիստնիցկին՝ հետզհետե արագացնելով քայլերը։

— Զինվորությունն իհարկե չի գնա։ Մենք կտանենք նրան։

— Դու գիտե՞ս, որ Կերենսկին ձախակողմյանների ճընշման տակ ուզում է հեռացնել գերագույն հրամանատարին։

— Չի՛ համարձակվի։ Հետևյալ օրն ևեթ նրան ծունկի կչոքեցնեն։ Սպայական միության Գլխավոր կոմիտեն բավական կատեգորիկ կերպով նրան հայտնել է դրա վերաբերյալ իր հայացքը։

— Երեկ նրա մոտ ներկայացուցիչներ ուղարկվեցին կազակական զորքերի միության խորհրդի կողմից,— ժպտալով ասաց Լիստնիցկին։— Նրանք հայտարարեցին, որ կազակությունը մտքովն էլ չի անցկացնում Կոռնիլովին հեռացնելը։ Դու գիտե՞ս, թե նա ինչ պատասխանեց. «Դա ինսինուացիա է։ Ժամանակավոր կառավարությունը միտք է՛լ չունի այդպիսի բան ձեռնարկելուց։ Հանդստացնում է հասարակայնությանը ու միևնույն ժամանակ բ...-ի նման ժպտում սովդեպի գործկոմին։

Կալմիկովը քայլելիս հանեց սպայական դաշտային տետրը, բարձրաձայն կարդաց.

— «Հասարակական գործիչների խորհրդակցությունը ողջունում է ձեզ, ռուսական բանակի գերագույն առաջնորդին։

[1] Ալիսա — Ալեքսանդրա Ֆյոդորովնա (մինչև ամուսնությունը — իշխանուհի Ալիսա Հեսսենցի), Նիկոլայ II-ի կինը։

Խորհրդակցությունը հայտարարում է, որ բանակում և Ռուսաստանում ձեր հեղինակությունը գցելու ամեն տեսակ փորձերը հանցագործություն է համարում և իր ձայնը միացնում է սպաների, գեորգևյան կավալերների և կազակների ձայնին։ Ձեր փորձության ահեղ ժամին ամբողջ մտածող Ռուսաստանը հույսով ու հավատով է նայում ձեզ։ Թող աստված օգնի ձեզ հզոր բանակի վերաստեղծման և Ռուսաստանը փրկելու ձեր մեծ սխրագործության մեջ։ Ռոձյանկո»[1]։ Կարծեմ պա՞րզ է։ Կոռնիլովին հեռացնելու մասին խոսք էլ չի կարող լինել... Ի դեպ, երեկ դու տեսա՞ր նրա ժամանումը։

— Ես միայն գիշերը եկա Ցարսկոյե Սելոյից։

Կալմիկովը ժպտաց՝ միանգամից ցույց տալով ատամների համաչափ շարքը և վարդագույն, առողջ լնդերը։ Նրա նեղդիր աչքերը կկոցվեցին, աչքերի անկյուններում սարդոստայնի պես բարակ, բազմաթիվ կնճիռներ առաջացան։

— Կլասիկ բա՛ն էր։ Պահազորը — թեքինցիների մի հեծելավաշտ։ Ավտոմոբիլների վրա — գնդացիրներ։ Այս բոլորը շարժվեցին դեպի Ձմեռային պալատ։ Բավական անբերկիմաստ նախազգուշացում... քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Հապա մի տեսնեիր փրշոտ փափախներով այդ սֆաթները։ Օ՜, արժեր տեսնել նրանց։ Ցուրահատուկ տպավորություն են թողնում։

Շրջելով Մոսկովյան-Նարվյան ռայոնում, սպաները բաժանվեցին։

— Մենք, ժենյա, չպետք է աչքից կորցնենք միմյանց,— հրաժեշտ տալու ժամանակ ասաց Կալմիկովը,— վատ ժամանակ է գալիս։ Պինդ կպիր հողից, թե չէ կընկնես։

Հեռացող Լիստնիցկու հետևից, կիսով չափ նրա կողմը դառնալով, Կալմիկովն ասաց.

— Մոռացա քեզ ասել։ Հիշո՞ւմ ես մեր Մերկուլովին՝ նկարչին։

— Է՞։

— Մայիսին սպանվեց։

[1] Ռոձյանկո Մ. Վ. (1859—1924) — խոշոր կալվածատեր, III և IV Պետական դումայի նախագահ։ Կերենսկու օրով — կոնտրռևոլյուցիոն ուժերի գործունյա կազմակերպիչ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո գտնվում էր սպիտակ բանակում, այնուհետև փախավ արտասահման։

— Չի՛ կարող պատահե՛լ։

— Այն էլ ինչպե՞ս սպանվեց,— պատահաբար։ Ավելի անհեթեթ մահ չէր կարող լինել։ Մի հետախույզի ձեռքով պայթեց նռնակը, նրա թևերը կտրվեցին մինչև արմունկները, իսկ Մերկուլովից մենք գտանք միայն ներքին օրգանների մի մասը և ջարդոտված ցեյսը[1]։ Երեք տարի մահը խնայում էր նրան...

Կալմիկովը էլի ինչ-որ բան բղավեց, բայց քամին պտտեց գորշ փոշին, բերեց բառերի միայն կցկտուր վերջավորությունները։ Լիստնիցկին թափահարեց ձեռքը, գնաց՝ մի-երկու անգամ ետ դառնալով ու նայելով նրա կողմը։

XIII

Օգոստոսի 6-ին գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ գեներալ Լուկոմսկին գլխավոր զորակայանի առաջին գեներալ-բնակապետի, գեներալ Ռոմանովսկու միջոցով կարգադրություն ստացավ 3-րդ հեծյալ կորպուսը և Տեղական դիվիզիան Նեվել — Ն. Սոկոլնիկի — Վելիկիե Լուկի շրջանում կենտրոնացնելու մասին։

— Ինչո՞ւ տվյալ շրջանում, չէ՞ որ այդ զորամասերը գտնվում են Ռումինական ֆրոնտի ռեզերվում,— հարցրեց զարմացած Լուկոմսկին։

— Չգիտեմ, Ալեքսանդր Սերգեևիչ։ Ճշտությամբ հաղորդում եմ գերագույն հրամանատարի հրամանը։

— Ե՞րբ ստացաք հրամանը։

— Երեկ։ Գիշերվա ժամը տասնմեկին գերագույնը կանչեց ինձ և հրամայեց այսօր առավոտյան դրա մասին զեկուցել ձեզ։

Ռոմանովսկին ոտնաթաթերի վրա մի փոքր քայլեց պատուհանի մոտ, ու կանգ առնելով Միջին Եվրոպայի ստրատեգիական քարտեզի առաջ, որ Լուկոմսկու կաբինետում բռնել էր պատի կեսը, չափազանցրած ուշադրությամբ դիտելով քարտեզը, մեջքը Լուկոմսկու կողմը դարձրած, ասաց.

— Դուք բացատրվեցիք... Նա այժմ իր կաբինետում է։

[1] Ցեյս — հեռադիտակ (Ցեյսի գործարանի)։

Լուկոմսկին սեղանից թղթեր վերցրեց. բազկաթոռը ետ տարավ, գնաց այն հաստատուն, շեշտված քայլվածքով, որով քայլում են բոլոր շաղացող, տարեց զինվորականները։ Դռան մոտ իրենից առաջ թողնելով Ռոմանովսկուն, ասաց՝ ակնարկաբար հետևելով իր մտքերի ընթացքին։

— Ճիշտ է։ Այո։

Կոռնիլովի կաբինետից այդ պահին դուրս եկավ Լուկոմսկուն անծանոթ, բարձրահասակ, երկարասրունք մի զընդապետ։ Նա քաղաքավարությամբ ճանապարհ տվեց, գնաց միջանցքով, մի փոքր կաղալով, ծիծաղելի ու սարսափելի շարժմամբ ցնցելով կոնտուզիայից վնասված ուսը։

Կոռնիլովը մի փոքր դեպի առաջ թեքված, ձեռները շեղակի դիրքով սեղանին հենած, ասում էր իր առաջ կանգնած հասակավոր մի սպայի.

— ... պետք էր սպասել։ Դուք ինձ հասկացա՞ք։ Խնդրում եմ Պսկով ժամանելուց հետո անհապաղ հաղորդել։ Կարող եք գնալ։

Սպասելով, որ սպան դուրս գնա, Կոռնիլովը աշխույժ, պիրկ շարժմամբ նստեց բազկաթոռին. մյուս բազկաթոռը մոտեցնելով Լուկոմսկուն, հարցրեց.

— Դուք Ռոմանովսկուց ստացա՞ք իմ կարգադրությունը երրորդ կորպուսի տեղափոխման մասին։

— Այո։ Ես եկա այդ առիթով խոսելու։ Ինչո՞ւ եք դուք կորպուսի կենտրոնացման համար ընտրել մատնանշված ռայոնը։

Լուկոմսկին ուշադրությամբ նայում էր Կոռնիլովի թուխ դեմքին։ Այդ դեմքը անթափանցելի էր, ասիականորեն անտարբեր. այտերի վրայից, քթից մինչև կոշտ բերանը, որ ծածկված էր նոսր, կախ բեղերով, իջնում էին ծուռումուռ, ծանոթ կնճիռները։ Դեմքի չոր, խիստ արտահայտությունը խախտվում էր միայն մի մազափնջով, որ մի տեսակ մանկականորեն-հուզիչ դիրքով իջել էր ճակատին։

Բազկաթոռի մեջքին թիկնած, փոքրիկ, չորացած ձեռքով կզակը բռնած ու մյուս ձեռքը Լուկոմսկու ծնկին հպելով, Կոռնիլովը կկոցեց մոնղոլական, առկայծուն աչքերը, պատասխանեց.

— Ես ուզում եմ հեծելազորը կենտրոնացնել ոչ թե հատ-

կապես հյուսիսային ֆրոնտի հետևում, այլ այնպիսի ռայոնում, որտեղից հեշտ լինի հարկավոր դեպքում այն փոխադրել հյուսիսային կամ արևմտյան ֆրոնտները։ Ըստ իս, ընտրված ռայոնը առավելապես բավարարում է այս պահանջին։ Դուք այլ կե՞րպ եք մտածում։ Ի՞նչ։

Լուկոմսկին անորոշ թոթվեց ուսերը։

— Արևմտյան ֆրոնտի համար երկյուղ կրելու ոչ մի հիմք չկա։ Ավելի լավ է հեծելազորը կենտրոնացնել Պսկովի ռայոնում։

— Պսկովի՞,— հարցրեց Կոռնիլովը՝ ամբողջ մարմինը թեքելով դեպի առաջ, ու գեմքը կնճռոտելով, քիչ բանալով բարակ, խամրած շրթունքը, բացասաբար պտտեց գլուխը։

— Ո՛չ։ Պսկովի ռայոնը հարմար չէ։

Լուկոմսկին հոգնած, ծերունական շարժումով ձեռները դրեց բազկաթոռի կողերին, զգուշությամբ ընտրելով բառերը, ասաց.

— Լա՛վ Գյորգիևիչ, ես իսկույն կանեմ անհրաժեշտ կարգադրությունները, բայց այնպիսի տպավորություն եմ ստանում, որ դուք ինչ-որ մի բան չեք ասում... Հեծելազորի կենտրոնացման համար ձեր ընտրած ռայոնը շատ լավ է այն դեպքում, եթե հարկավոր լիներ հեծելազորը նետել դեպի Պետրոգրադ կամ Մոսկվա, բայց հեծելազորի այդպիսի կենտրոնացումը չի ապահովում հյուսիսային ֆրոնտը թեկուզ հենց այն պատճառով, որ դժվար կլինի այն տեղափոխել։ Եթե ես չեմ սխալվում և դուք իսկապես չեք ասում ինչ-որ մի բան, ապա խնդրում եմ՝ կամ ինձ բաց թողեք ֆրոնտ գնալու, կամ ամբողջովին ինձ ասացեք ձեր ենթադրություններ։ Շտաբի պետը կարող է իր տեղում մնալ պետի կողմից միայն լիակատար վստահության դեպքում։

Կոռնիլովը գլուխը թեքած, լարված լսում էր և այնուամենայնիվ մարդկային հասարակ աչքով կարողացավ նկատել, թե ինչպես հուզմունքը հազիվ տեսանելի, ժլատ կարմրություն էր առաջացրել Լուկոմսկու արտաքուստ սառն դեմքի վրա։ Մի քանի վայրկյան մտածելով, նա պատասխանեց.

— Դուք իրավացի եք։ Ես ունեմ որոշ նկատառումներ, որոնց մասին ձեզ հետ դեռ չեմ խոսել... Խնդրում եմ կարգադրություն անել հեծելազորը փոխադրելու մասին և շտապ կարգով այստեղ կանչեցեք երրորդ կորպուսի հրամանատար գեներալ Կրիմովին, իսկ ես ու դուք մանրամասն կխոսենք Պետրոգրադից վերադառնալուց հետո։ Հավատացեք, Ալեքսանդր Սերգեևիչ, ես չեմ ուզում որևէ բան թաքցնել ձեզանից,— Կոռնիլովը շեշտեց վերջին ֆրազը և լսելով դռան թխկոցը, արագ շուռ եկավ.— Մտե՛ք։

Ներս մտան գլխավոր զորակայանի կոմիսարի օգնական ֆոն Վիզինը և ցածրահասակ, սպիտակահեր մի գեներալ։ Լուկոմսկին վեր կացավ. հեռանալիս լսեց, թե ինչպես ֆոն Վիզինի հարցին Կոռնիլովը խիստ տոնով պատասխանեց.

— Հիմա ես ժամանակ չունեմ գեներալ Միլլերի գործը վերանայելու։ Ի՞նչ... Այո՛, ես մեկնում եմ։

Վերադառնալով Կոռնիլովի կաբինետից, Լուկոմսկին երկար կանգնեց լուսամուտի առաջ։ Շփելով ճերմակող, սրածայր մորուքը, մտազբաղ նայում էր, թե ինչպես այգում քամին լիզում է շագանակների խիտ գանգուրները ու ծածանում արևի տակ փայլող, կորացած խոտաբույսերը։

Մի ժամից հետո 3-րդ հեծյալ կորպուսի շտաբը գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետից հրաման ստացավ պատրաստվել տեղափոխվելու։ Նույն օրը կորպուսի հրամանատար գեներալ Կրիմովը, որ իր ժամանակին, Կոռնիլովի ցանկությամբ, հրաժարվել էր 11-րդ բանակի հրամանատարի պաշտոնին նշանակվելուց, ծածկագիր հեռագրով շտապ կանչվեց գլխավոր զորակայան։

Օգոստոսի 9-ին Կոռնիլովը թեքինցիների մի հեծելավաշտի պահպանությամբ հատուկ գնացքով մեկնեց Պետրոգրադ։

Մյուս օրը զորակայանում լուրեր էին պտտվում գերագույնի հեռացման և նույնիսկ ձերբակալման մասին, բայց 11-ի առավոտյան Կոռնիլովը վերադարձավ Մոգիլյով։

Ժամանելուց անմիջապես հետո նա իր մոտ հրավիրեց Լուկոմսկուն։ Կարդալով հեռագիրն ու ամփոփագրերը, նա խնամքով շտկեց սպիտակափայլ թևքածալը, որ հստակորեն ստվերագծված էր ձեռքի նեղ, ձիթենագույն դաստակով, շոշափեց օձիքը։ Հապճեպորեն սահող այդ շարժումներով արտահայտվում էր նրա համար անսովոր հուզմունքը։

— Այժմ մենք կարող ենք ավարտել այն ժամանակ ընդհատված խոսակցությունը,— ասաց նա ցածրաձայն։— Ես ուզում եմ անդրադառնալ այն նկատառումներին, որոնք ինձ դրդեցին երրորդ կորպուսը փոխադրել դեպի Պետրոգրադ և որոնց մասին ես ձեզ հետ դեռ չեմ խոսել։ Դուք գիտեք, որ օգոստոսի երեքին, երբ ես եղա Պետրոգրադում, կառավարության նիստում, Կերենսկին ու Սավինկովը[1] նախազգուշացրին ինձ, որ ես չշոշափեմ պաշտպանության առանձնապես կարևոր հարցերը, որովհետև, նրանց ասելով, մինիստրների մեջ անհուսալի մարդիկ կան։ Ես, գերագույն գլխավոր հրամանատարս, հաշիվ տալով կառավարության առաջ, չե՞մ կարող խոսել օպերատիվ պլանների մասին, որովհետև չկան երաշխիքներ, որ իմ ասածները մի քանի օրից հետո հայտնի չեն լինի գերմանական հրամանատարությանը։ Եվ դա կառավարությո՞ւն է։ Եվ մի՞թե դրանից հետո ես կարող եմ հավատալ, թե նա կփրկի երկիրը։— Կորնիլովը արագ, ամուր քայլերով հասավ մինչև դուռը, փակեց բանալիով, ու վերադառնալով, սեղանի առաջ հուզված քայլելով, ասաց.— Դառն ու վիրավորական է, որ ինչ-որ փսլնքոտներ են կառավարում երկիրը։ Կամքի բացակայություն, բնավորության թուլություն, անճարակություն, անվճռականություն, հաճախ սոսկ ստորություն,— ահա թե ինչն է ղեկավարում այդ, թող ներվի ասել, «կառավարության» գործողությունները։ Բոլշևիկները Կերենսկուն բնաջինջ կանեն այնպիսի պարոնների բարեհաճ մասնակցությամբ, ինչպես Չերնովը[2] և ուրիշները... Ահա թե ինչ դրության մեջ է գտնվում Ռուսաստանը, Ալեքսանդր Սերգեևիչ։ Ղեկավարվելով ձեզ հայտնի սկզբունքներով, ես ուզում եմ հայրենիքը պաշտպանել նոր ցնցումներից։ Երրորդ հեծյալ կորպուսը ես տեղափոխում եմ գլխավորապես նրա համար, որ օգոստոսի վերջին մոտեցնեմ Պետրոգրադին, և եթե բոլշևիկները կռվի դուրս գան, ինչպես հարկն է դատաստան տեսնեմ հայրենիքի դավաճանների հետ։ Օպերացիայի անմիջական ղեկավարությունը հանձնում եմ գեներալ Կրիմովին։ Ես համոզված եմ, որ անհրաժեշտության դեպքում նա առանց երկար մտածելու կկախի բանվորական և զինվորական դեպուտատների ամբողջ Սովետը։ Ժամանակավոր կառավարություն... Հը՛մ, մենք դեռ կտեսնենք... Ես ոչինչ չեմ փնտրում։ Փրկե՛լ Ռուսաստանը... փրկել ինչ կերպ էլ լինի, ամեն գնով...

Կորնիլովը դադարեցրեց քայլելը. կանգ առնելով Լուկոմսկու դիմաց, կտրուկ հարցրեց.

— Ընդունո՞ւմ եք իմ համոզմունքը, որ միայն այսպիսի միջոցառմամբ կարելի է ապահովել երկրի ու բանակի ապագան։ Ինձ հետ դուք կգնա՞ք մինչև վերջ։

Հուզված, ուժգին սեղմելով Կորնիլովի վտիտ, տաք ձեռքը, Լուկոմսկին մի փոքր բարձրացավ տեղից։

— Լիովին ընդունում եմ ձեր հայացքը։ Կգնամ մինչև վերջ։ Պետք է մտածել, կշռադատել և հարվածել։ Հանձնարարեցեք ինձ, Լավր Գյորգիևիչ։

— Ես մշակել եմ պլանը։ Մանրամասնությունները կմշակեն գնդապետ Լեբեդևը և կապիտան Ռոժենկոն։ Չէ՞ որ դուք, Ալեքսանդր Սերգեևիչ, ծանրաբեռնված եք աշխատանքով։ Վստահեցեք ինձ, մենք դեռ ժամանակ կունենանք ամեն ինչ քննարկելու, և եթե անհրաժեշտ լինի, համապատասխան փոփոխություններ մտցնելու։

Այդ օրերին գլխավոր զորակայանը տենդային կյանքով էր ապրում։ Ամեն օր ռազմաճակատներից, այլևայլ զորամասերից պաշտպանական գույնի փոշոտ բլուզներով, արևից սևացած և հողմահար դեմքերով սպաներ էին գալիս Մոգիլյով, նահանգապետի տուն՝ առաջարկելով իրենց ծառայությունը, ժամանում էին սպայական կոմիտեի և կազակական խորհրդի պճնազարդ ներկայացուցիչները, սուրհանդակներ էին գալիս Դոնից. Կալեդինի — Դոնի զորաց երկրի կազակներից առաջին նշանակովի զորական ատամանի կողմից։ Ժամանում էին քաղաքացիական տարազով ինչ-որ մարդիկ։

[1] Սավինկով Բ. Վ. (1879—1925)— Էսէռների կուսակցության պարագլուխներից մեկը։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո մինիստր էր Կերենսկու կաբինետում. նրա առաջարկով ռազմաճակատում մահվան պատիժ սահմանվեց։ Հոկտեմբերից հետո սովետական իշխանության ամենաչար ու համառ թշնամիներից մեկն էր, աշխատակցում էր Կալեդինի, Կորնիլովի, Կոլչակի, Վրանգելի հետ։

[2] Չերնով Վիկտոր (ծնվ. 1876 թ.)— Էսէռների կուսակցության պարագլուխ։ 1918 թ. ամառվա չեխ էսէռական սպիտակ գվարդիական ապրատամբության գործունյա մասնակից։ 1918 թ. աշնանը մեկնեց արտասահման՝ չդադարեցնելով ՍՍՀՄ-ի դեմ ուղղված կոնտրռևոլյուցիոն աշխատանքը։ 1921 թ. փորձեց անցնել Կրոնշտադտի խռովության գլուխը։

Գալիս էին այնպիսի մարդիկ, որոնք անկեղծորեն ուզում էին օգնել Կոռնիլովին՝ ոտքի կանգնեցնելու փետրվարին ընկած հին Ռուսաստանը, բայց կային նաև այնպիսի անգղներ, որոնք սուր հոտառությամբ զգում էին մեծ արյունահեղության հոտը, նախագուշակում էին, թե ում ամուր ձեռքն է երկրից արյուն առնելու, և հավաքվում էին Մոգիլյովում այն հույսով, թե իրենք էլ մի բան կպոկեն։ Դոբրինսկու, Զավոյկոյի, Ալադյինի անունները զորակայանում հոլովվում էին որպես այնպիսի մարդկանց անուններ, որոնք մոտիկ առնչություն ունեին գնրագույնի հետ։ Գլխավոր զորակայանում և Դոնի Զորաց ատամանի շտաբում փսփսում էին, թե Կոռնիլովը չափից դուրս դյուրահավատ է ու դրա հետևանքով ավանտյուրային շրջապատի մեջ է ընկել։ Բայց միևնույն ժամանակ սպայության լայն շրջաններում իշխում էր այն համոզմունքը, թե Կոռնիլովը Ռուսաստանի վերականգնման դրոշն է։ Եվ բոլոր կողմերից այդ դրոշի տակ էին հավաքվում ռեստավրացիայի մոլի ջատագովները։

Օգոստոսի 13-ին Կոռնիլովը մեկնեց Մոսկվա՝ պետական խորհրդակցության։

Տաք, մի քիչ ամպամած օր։ Երկինքն ասես կապտավուն ալյումինից էր ձուլված։ Զենիթում՝ փրչոտ, յասամանագույն փեշերով մի ամպ։ Ամպից շեղակի, ծիածանի ցոլքերում բեկբեկվող, բարեբեր անձրև է գալիս դաշտերի վրա, ռելսերի վրա շաչող գնացքի վրա, թեթև սառնամանեքից հեքիաթայնորեն եղյամակալած անտառի վրա, կեչիների հեռավոր, ջրանկարչական պատկերի նման ցայտուն ուրվագծերի վրա, ամբողջովին դալուկ հագած նախաշնանային հողի վրա։

Գնացքը դեպի ետ է նետում տարածությունը։ Գնացքի հետևից գորշ քղանցաուտի նման ձգվում է ծուխը։ Վագոնի բաց պատուհանի մոտ է պաշտպանական գույնի համազգեստ հագած, փոքրամարմին գեներալը, կրծքին գեորգևյան խաչեր։ Կկոցելով շեղադիր, ածխանման սև աչքերը, նա գլուխը պատուհանից դուրս է հանում, ու անձրևի հորդ կաթիլները առատորեն թրջում են արևից վաղուց սևացած նրա դեմքը ու սև, կախ բեղերը. քամին օրորում, դեպի ետ է սանրում մանկականորեն ճակատին ընկած մազափունջը։

XIV

Կոռնիլովի Մոսկվա ժամանելուց մի օր առաջ յասավուլ Լիստնիցկին կազակական զորքերի միության խորհրդի առանձնապես կարևոր մի հանձնարարությամբ ժամանեց այնտեղ։ Մոսկվայում գտնվող կազակական մի գնդի շտաբին հանձնելով մի ծրար, նա իմացավ, որ հետևյալ օրը սպասվում է Կոռնիլովի ժամանումը։

Լիստնիցկին կեսօրին Ալեքսանդրյան կայարանում էր։ Սպասարանի դահլիճը և առաջին ու երկրորդ կարգերի դահլիճները լեփ-լեցուն են մարդկանցով. գերակշռում են զինվորականները։ Կառամատույցում շարք է կանգնում Ալեքսանդրյան ռազմական դպրոցից[1] նշանակված պատվավոր պահակը, ուղանցույց կամուրջի մոտ կանգ է առել Մոսկվայի կանացի մահվան գումարտակը[2]։ Կեսօրվա ժամը մոտ երեքին ժամանում է գնացքը։ Միանգամից դադարում է խոսակցությունը։ Նվագախմբի հնչեղ, բամբ նվագ ու բազմաթիվ ոտների քստքստան դոփյուն։ Խոնված բազմությունը Լիստնիցկուն հրելով, նետեց կառամատույց։ Դուրս գալով իրար գլխի թափված ամբոխի միջից, նա տեսավ, որ գլխավոր հրամանատարի վագոնի առաջ երկշարք կանգնում են թեքինցիները։ Լաքից փայլող վագոնի պատը պլպլում, արտացոլում է նրանց վառ-կարմիր խալաթները։ Մի քանի զինվորականների ուղեկցությամբ դուրս գալով վագոնից, Կոռնիլովը սկսեց անցնել պատվավոր պահակի, դեպուտացիաների առջևից, որոնք ուղարկված էին գեորգևյան շքանշանակիրների միության, բանակի ու նավատորմի սպա-

---

[1] Ալեքսանդրյան ռազմական դպրոց — ցարական Ռուսաստանում ռազմական ուսուցման հաստատություն, որ իր սաներին՝ յունկերներին պատրաստում էր սպայական կոչման համար։ Ինչպես հայտնի է, քաղաքացիական պատերազմի ժամանակ յունկերները կատաղի զինված պայքար էին մղում կոնտրռևոլյուցիայի կողմից։

[2] Մահվան գումարտակ — Առաջին համաշխարհային պատերազմի վերջում այսպես կոչված՝ ճարվածային զորամասեր էին կազմակերպվում կամավորներից։ Կերենսկու ժամանակ գոյություն ունեին հատուկ հարվածային գնդեր և նույնիսկ կանացի հարվածային «մահվան գումարտակ»։ Հարվածային զորամասերը դարձան կոնտրռևոլյուցիայի գործիք։

ների միության, կազակական զորքերի միության խորհրդի կողմից։

Գերագույն հրամանատարին ներկայացող անձանց թվում Լիստնիցկին ճանաչեց Դոնի ատաման Կալեդինին և գեներալ Զայոնչկովսկուն, մնացածների անունները տալիս էին նրա շրջապատող սպաները.

— Կիսլյակովը,— հաղորդակցության ճանապարհների մինիստրի օգնական։

— Քաղաքագլուխ Ռուզնև։

— Իշխան Տրուբեցկոյ — գլխավոր զորականի դիվանագիտական գրասենյակի պետ։

— Պետական խորհրդի անդամ Մուսին-Պուշկին։

— Ֆրանսիական ռազմական կցորդ, գնդապետ Կայո։

— Իշխան Գոլիցին։

— Իշխան Մանսիրյով... — հնչում էին քծնոտ, հարգալից ձայները։

Լիստնիցկին տեսնում էր, թե ինչպես պլատֆորմի երկարությամբ խիտ կանգնած, նրբագեղ հագնված կանայք ծաղիկներ էին նետում դեպի իրենց կողմը եկող Կոռնիլովի վրա։ Մի վարդագույն ծաղիկ պսակով կպավ Կոռնիլովի համազգեստի ակսելբանտին ու կախ ընկավ։ Կոռնիլովը մի փոքր շփոթված, անվճռական շարժմամբ գցեց այն։ Երկարամորուք մի ծերունի ուրալցի, կակազելով, սկսեց ողջույնի խոսք ասել կազակական տասներկու զորաց անունից։ Լիստնիցկուն չհաջողվեց լսել մինչև վերջ,— նրան ետ մղեցին դեպի պատը։ Քիչ մնաց կտրեին թրի փոկը։ Պետական դումայի անդամ Ռոդիչևի ճառից հետո Կոռնիլովը նորից առաջ շարժվեց՝ ամբոխով խիտ շրջապատված։ Սպաները իրար ձեռքից բռնած, պահպանական շղթա կազմեցին, բայց ամբոխը նրանց դես-դեն գցեց։ Դեպի Կոռնիլովը տասնյակ ձեռքեր էին մեկնվում։ Մի ինչ-որ չաղ, հերարձակ տիկին մանր քայլերով գնում էր նրա կողքից՝ աշխատելով շրթունքները հպել նրա բաց կանաչ համազգեստի թևքին։ Ելքի մոտ ողջույնի խլացուցիչ, որոտընդոստ աղաղակների տակ Կոռնիլովին բարձրացրին ձեռների վրա, տարան։ Լիստնիցկին ուսի ուժգին շարժմամբ մի կողմ հրեց ինչ-որ մեծաշուք պարոնի, կարողացավ կառչել Կոռնիլովի լաքած սապոգից,

որ մի վայրկյան երևաց իր աչքերի առաջ։ Ճարպկորեն բռնելով Կոռնիլովի ոտը, դրեց ուսին, ու չզգալով դրա չնչին ծանրությունը, հուզմունքից շնչասպառ լինելով, աշխատելով միայն պահպանել հավասարակշռությունը և քայլի ռիթմը, առաջ շարժվեց՝ դանդաղորեն տարվելով բազմության հրմշտոցով, աղաղակներից և նվագախմբի նվագից խլացած։ Ելքի մոտ հապճեպ շտկեց վերնաշապկի ծալերը, որ հրմշտոցի մեջ դուրս էր ընկել գոտու տակից։ Բազմությունը սանդուղքի վրայից լցվեց հրապարակը։ Առջևում՝ ամբոխ, շարեշար կանգնած, կանաչ տարազով զորքեր, հեծյալ շարքով կազակական մի հարյուրյակ։ Ձեռքը գլխարկի հովարին տարած, թարթելով թրջված աչքերը, նա փորձեց, բայց չկարողացավ դադարեցնել շրթունքների անզուսպ դողը։ Հետո թույլ հիշում էր, թե ինչպես էին չխկում լուսանկարչական ապարատները, խռնվում բազմությունը, հանդիսավոր քայլվածքով գնում յունկերները ու դրանց իր առջևից անցկացնելով, կանգնել էր բարեկազմ, ձգված, կարճ, մոնղոլի դեմքով գեներալը։

Մեկ օրից հետո Լիստնիցկին մեկնեց Պետրոգրադ։ Տեղավորվելով վերին պառկելատեղի վրա, նա փռեց շինելը, ծխեց՝ մտածելով Կոռնիլովի մասին.

«Կյանքը վտանգի ենթարկելով, փախավ գերությունից, կարծես գիտեր, որ այսպես հարկավոր կլինի հայրենիքին։ Ինչպիսի՞ դեմք, ասես բնածին քարից է կերտված,— ոչ մի ավելորդ, սովորական բան... Նույնպես է և բնավորությունը։ Նրա համար հավանորեն ամեն ինչ պարզ է, հաշվի տակ առնված։ Կգա հարմար մոմենտը, ու նա կա՞ռաջնորդի մեզ։ Տարօրինակ է, ես նույնիսկ չգիտեմ, թե ով է նա,— միապետակա՞ն է։ Կոնստիտուցիոն միապետություն... Ա՛յ, եթե յուրաքանչյուր մեկը այնպես վստահ լիներ իր վրա, ինչպես նա»։

Մոտավորապես այդ նույն ժամին Մոսկվայում, Մեծ թատրոնի կուլուարներում, Մոսկվայի պետական խորհրդակցության անդամների նիստի ընդմիջման ժամանակ երկու

գեներալ,— մեկը վտիտ, մոնղոլի դեմքով, մյուսը ամրակազմ, «ոգնիկ» ձևով մազերը խուզած, քառակուսի գլխով, կարճ պարանոցով, քունքերի կոկիկ սանրված, մի քիչ սպիտակ մազերով և գանգին պինդ սեղմված ականջակոնքերով,— առանձնացած, քայլում էին պարկետահատակի մի կարճ հատվածի վրա, խոսակցում ցածր ձայնով։

— Դեկլարացիայի այդ կետը նախատեսում է զորամասերում վերացնե՞լ կոմիտեները։

— Այո։

— Միասնական ֆրոնտը, համախմբվածությունն անպայման անհրաժեշտ են։ Առանց իմ մատնանշած ձեռնարկումների կենսագործման, չկա փրկություն։ Բանակն օրգանապես անընդունակ է կռվելու։ Այդպիսի բանակը ոչ միայն հաղթանակ չի տա, այլև չի կարողանա դիմանալ որևէ չափով ուժեղ հարձակման։ Զորամասերը լցված են բոլշևիկյան պրոպագանդայով։ Իսկ այստե՞ղ, թիկունքո՞ւմ։ Դուք տեսնում եք, թե բանվորներն ինչպես են վերաբերվում իրենց սանձահարման միջոցները գտնելու ամեն մի փորձին,— գործադուլներ և ցույցեր։ Խորհրդակցության անդամները պետք է ոտով գնան... Խայտառակությո՞ւն։ Թիկունքի ռազմականացում, ահեղ, պատիժ ձեռքի հաստատում, բոլոր բոլշևիկների, այդ քայքայիչների անխնա ոչնչացում,— ահա մեր մերձավորագույն խնդիրները։ Ես կարո՞ղ եմ հետագայում էլ վստահ լինել ձեր աջակցության վրա, Ալեքսեյ Մաքսիմովիչ։

— Ես անվերապահորեն ձեզ հետ եմ։

— Ես հավատացած էի դրանում։ Շնորհակալ եմ։ Դուք տեսնում եք, որ երբ հարկավոր է գործել վճռականապես և հաստատուն կերպով, կառավարությունը սահմանափակվում է կիսամիջոցներով և հնչուն ֆրազներով,— որպես թե «երկաթով ու արյունով կեղմենք այն մարդկանց փորձերը, ովքեր, ինչպես կարճ ժամանակ առաջ, ոտնձգություն կանեն ժողովրդական իշխանության դեմ»։ Ո՛չ, մենք սովոր ենք նախ գործն անել, հետո խոսել։ Նրանք հակառակն են անում։ Դեհ... կգա ժամանակ, նրանք կքաղեն կիսամիջոցների իրենց քաղաքականության պտուղները։ Բայց ես չեմ ցանկանում մասնակցել այդ անպատվաբեր խաղին։ Ես եղել եմ ու կմնամ

բացահայտ կռվի կողմնակից, դատարկախոսությունը հատուկ չէ իմ բնավորության։

Կարճ գեներալը կանգ առնելով խոսակցի դիմաց, տընտղեց վերջինի մուգ-պաշտպանական գույնի ֆրենչի, մետաղե մի կոճակը, հուզմունքից մի փոքր կակազելով՝ ասաց.

— Հանել են դնչկալը, իսկ այժմ իրենք են վախենում իրենց ռևոլյուցիոն դեմոկրատիայից, խնդրում են ֆրոնտից հուսալի զորամասեր ուղարկել դեպի մայրաքաղաքը ու միևնույն ժամանակ, այդ դեմոկրատիային զոհացնելու համար, վախենում են որևէ ռեալ բան ձեռնարկելուց։ Մի քայլ առաջ, մի քայլ ետ... Միայն մեր ուժերի լիակատար կոնսոլիդացիայով, բարոյական ամենաուժեղ ճնշումով մենք կկարողանանք զիջումներ քամել կառավարությունից, իսկ եթե ոչ, այն ժամանակ կտեսնենք։ Ես երկար չեմ մտածի ֆրոնտը բաց անելու վերաբերյալ,— թող գերմանացիները նրանց խելքի բերեն։

— Մենք խոսեցինք Դուտովի[1] հետ։ Կազակությունը ձեզ, Լավր Գյորգիևիչ, ըստ ամենայնի օժանդակություն ցույց կտա։ Մեզ մնում է համաձայնեցնել հետագա համատեղ գործողությունների հարցը։

— Նիստից հետո ինձ մոտ ես սպասում եմ ձեզ և մնացածներին։ Ձեզ մոտ, Դոնում ի՞նչպես է տրամադրությունը։

Ամրակազմ գեներալը քառանկյունաձև, պլպլացնելու չափ մաքուր սափրված կզակը սեղմելով կրծքին, մռայլ, տակևանց հայացքը հառել էր իր առաջ։ Նրա լայն բեղերի տակին դողացին շրթունքների անկյունները, երբ նա պատասխանեց.

— Իմ մեջ չկա նախկին հավատը կազակի նկատմամբ... Հիմա առհասարակ դժվար է դատել տրամադրությունների մասին։ Անհրաժեշտ է կոմպրոմիս. կազակությունը պետք է որոշ զիջումներ անի, որպեսզի իր կողմը պահի ոչ կազակ գյուղացիներին։ Այս ուղղությամբ մենք որոշ միջոցառումներ ենք ձեռնարկում, բայց չի կարելի երաշխավորել հաջո-

[1] Դուտով Ա. Ի. (1864—1922) — կազակական ատաման։ Հոկտեմբերյան օրերին սպիտակ-կազակական նոր կազմակերպված զորամասերի պարագլուխներից մեկն էր։

զությունը։ Վախենում եմ, որ կազակների և ոչ կազակ գյուղացիության շահերի բախումից էլ հենց պառակտում առաջանա... Հո՛ղ... այժմ այդ առանցքի շուրջն են պտտվում թե մեկի և թե մյուսի մտքերը։

— Դուք պետք է ձեր ձեռքի տակ ունենաք կազակական հուսալի զորամասեր, որպեսզի ապահովվեք ամեն տեսակ ներքին պատահականություններից։ Գլխավոր զորակայան վերադառնալուց հետո ես կխոսեմ Լուկոմսկու հետ, և մենք հավանորեն հնարավորություն կգտնենք մի քանի գունդ ուղարկել Դոնի շրջանը։

— Շատ երախտապարտ կլինեմ ձեզ։

— Այսպես ուրեմն, այսօր մենք կհամաձայնեցնենք ապագայում մեր համատեղ գործողությունների հարցը։ Ես ջերմորեն հավատում եմ մեր մտածած գործողությունների բարեհաջող ավարտին, բայց բախտը խարդախ է, գենեբալ... Եթե նա, հակառակ ամեն ինչի, երես դարձնի ինձնից, կարո՞ղ եմ հուսալ, որ Դոնում, ձեզ մոտ ապաստան կգտնեմ։

— Ոչ միայն ապաստան, այլև պաշտպանություն։ Չէ՞ որ կազակները հնուց հայտնի են իրենց հյուրընկալությամբ և աղ ու հացով։

Ամբողջ խոսակցության ընթացքում առաջին անգամ ժրպտաց Կալեդինը՝ մեղմելով տակեմանց հայացքի մռայլ հոգնածությունը։

Մի ժամից հետո Կալեդինը՝ Դոնի ատամանը, լուռ դահլիճում հանդես եկավ կազակական տասներկու զորաց պատմական դեկլարացիայով։

Դոնում, Կուբանում, Թերեքում, Ուրալում, Ուսսուրիում. կազակական հողերում սահմանից մինչև սահման, մի ստանիցայի հողից մինչև մյուսի հողը այն օրվանից սև սարդոստայնի նման տարածվեցին մեծ դավադրության թելերը։

XV

Հունիսյան մարտերի հրանոթային կրակով ավերված մի ավանի ավերակներից մի վերստ հեռավորությամբ, անտառի կողքին ծուռումուռ ձգվել էին խրամատների զիգզագները։

Կազակական հատուկ հարյուրյակը գրավել էր անտառի եզրի մոտ գտնվող ճակատամասը։

Հետևում, անանցանելի լաստենուտի և մատղաշ կեչուտի դալարիքից դենը փոված էր թուխ-կարմրավուն հողածխային ճահիճը, որ մի ժամանակ, դեռ մինչև պատերազմը շահագործման էր ենթարկվում. կարմիր հատապտղի նման ճոխ ծաղկում էր փշավարդենին։ Աջ կողմում, անտառի կարկառուն հրվանդանից դենը ձգվում էր արկերով փորփրված խճուղին, ասես նրա վրայով երթևեկություն չէր էլ եղել, իսկ անտառի եզրին աճել էին վտիտ, գնդակներից ջարդոտված քոլերը, կորացել ածխացած կոճղերը, թուխ կավի նման դեղնին էր տալիս խրամատի պատվարը, մերկ դաշտով մեկ հեռո՛ւ, այս ու այն կողմ էին ձգվել խրամատների կնճիռները։ Հետևում, նույնիսկ շահագործման ժամանակ փորփրված ճահիճը, նույնիսկ ավերված խճուղին կյանքի, լքած աշխատանքի հետքեր էին ցույց տալիս, իսկ անտառի եզրի մոտ մարդկային աչքի հանդեպ հողը դառն ու անուրախ պատկեր էր ներկայացնում։

Այդ օրը Իվան Ալեքսեևիչը, անցյալում Մոխովի աղացի մեքենավարը, գնաց մերձակա ավանը, ուր գտնվում էր առաջին կարգի գումակը, ու վերադարձավ միայն իրիկնադեմին։ Քայլելով դեպի իր գետնատունը, նա հանդիպեց Զախար Կորոլյովին։ Թուրը դիպցնելով իրար վրա ամրացրած, հողով լցված պարկերին, անհեթեթ թափահարելով ձեռքերը, Զախարը համարյա վազում էր։ Իվան Ալեքսեևիչը մի կողմ քաշվեց, ճանապարհ տվեց, բայց Զախարը բռնեց նրա վերնաշապկի կոճակից, ու խաղացնելով աչքերի անառողջ-դեղին սպիտակուցները, փսփսաց.

— Լսե՞լ ես, աջ կողմից հետևազորը հեռանում է։ Գուցե թողնո՞ւմ են ֆրոնտը։

Զախարի մորուքը, որ կարծես անշարժ կանգ առած հեղեղ լիներ, կարծես սև թուջից էր ձուլված,— գտնվում էր հրեշավոր, անկարգ վիճակում, աչքերը սովալլուկ, թախծոտ ագահությամբ էին նայում։

— Այսինքն ո՞նց թե թողնում են։

— Հեռանում են, բայց թե ոնց, ես չգիտեմ։

— Կարելի է հերթափոխվո՞ւմ են, հը՞։ Գնանք դասակապետի մոտ, իմանանք։

Զախարը շուռ եկավ ու քայլեց դեպի դասակապետի գետնատունը՝ սայթաքելով ցեխոտ, թաց գետնի վրա։

Մի ժամից հետո հարյուրյակը, որին հերթափոխել էր հետևազորը, գնում էր ավան։ Առավոտը ձիապահներից վերցրին ձիերը, արագ երթով սլացան դեպի թիկունք։

Մանր անձրև էր գալիս։ Տխուր կորացել էին կեչիները։ Ճանապարհը մտավ անտառ, ու ձիերը զգալով խոնավությունը և նախորդ տարվա սաղարթի նեխված, սուր ու տաղտկալի հոտը, սկսեցին փնչալ, ավելի աշխույժ ընթանալ։ Թփերի վրա վարդագույն ուլունքների նման պլպլում էր վայրի թուզը, չինչ սպիտակությամբ շողում էին անձրևով ողողված հազարտերևուկի փրփրանման գլխիկները։ Քամին ծառերից խոշոր ծանրաքաշ կաթիլներ էր թափում ձիավորների վրա։ Սևին էին տալիս շինելների ու գլխարկների բծերը, ասես որսորդական հրացանի կոտորակի հետքեր լինեին։ Դասակի շարքերի վերևում սահում էր մախորկայի ցնդող ծուխը։

— Վերցրին ու քշում են, սատանան գիտե թե ուր։

— Խրամատներից չե՞ս բեզարել, հը՞։

— Դրուստ, ո՞ւր են քշում մեզ։

— Երևի վերակազմելու համար է։

— Այդ չի երևում։

— Է՛յ, ստանիցա, ծխենք, մոռանանք դարդ ու ցավ։

— Իմ դարդը մախաղիս մեջ է...

— Պարոն յասավուլ, թույլ տվեք երգել։

— Թույլ է տալիս, էլի՛... Արխիպ, սկսիր։

Առջևի շարքերում մեկը հազալով մաքրեց կոկորդը, սկսեց.

Գնում էին բանակից կազակները դեպի տուն,
Պագոնները ուսերին ու խաչերը կրծքերին։

Նամացած ձայները թույլ ձայնակցեցին երգին ու լռեցին։ Զախար Կորոլյովը, որ Իվան Ալեքսեևիչի հետ մի շարքում էր գնում, կիսով չափ կանգնեց ասպանդակների վրա, հեգնանքով բղավեց.

— Է՛յ, քոռ ալևորներ, բա մերոնք այդպե՞ս են երգում։ Ժամի պատի տակին ողորմությո՞ւն եք խնդրում, տո՛, աղքատ Ղազարոսներ։ Ա՛մա երգիչներ եք, հա՛-ա...

— Դեհ, դու սկսիր։

— Նրա վիզը կարճ է, ձենի համար տեղ չկա։

— Պարծեցար, իսկ հիմի պոչդ քաշում ես, հա՞։

Կորոլյովը բռունցքի մեջ առավ ոչլոտած մորուքի սև խուրձը, մի վայրկյան գոցեց աչքերը, և ուժգին թափահարելով սանձը, երգեց առաջին բառերը.

Օ՛յ, խնդացեք, Դոնի խիզախ կազակներ...

Ասես արթնանալով զի՛լ հնչող նրա ձայնից, հարյուրյակը ընդաց.

Իրեն պատվով ու փառքով.—

և թաց անտառով մեկ, բացուտ-ճանապարհով որոտաց երգը.

Օ՛յ, ցույց տվեք ընկերներին մեր բոլոր,—
Հրացանով ո՛նց ենք շարդում թշնամուն։
Շարդում ենք ու մարտակարգը չենք խախտում,
Ու հենց միայն հրամաններն ենք լսում։
Ուր որ տանեն մեր հայրերը — պետերը,
Գնում ենք մենք, զարկում, խոցում, թրատում։

Օրվա ամբողջ ճանապարհն անցան երգերով, ուրախանալով, որ դուրս են պրծել «գայլի գերեզմանոցից»։ Իրիկնադեմին լցվեցին վագոնները։ Գնացքը ընթանում էր դեպի Պսկով։ Եվ միայն երեք կայարան անցնելուց հետո իմացան, որ հարյուրյակը 3-րդ հեծյալ կորպուսի մյուս զորամասերի հետ գնում է Պետրոգրադ՝ սկսվող անկարգությունները ճնշելու համար։ Դրանից հետո խոսակցությունները առժամ դադարեցին։ Կարմիր վագոններում երկար ժամանակ տաղտկալի լռություն էր տիրում։

— Կրակից ելանք բոցի մեջ ընկանք,— ասաց բարակ ու երկար Բորշչևը՝ արտահայտելով մեծամասնության համար ընդհանուր միտքը։

Իվան Ալեքսեևիչը, որ փետրվարից սկսած հարյուրյակի

կոմիտեի նախագահն էր, գնացքը առաջին անգամ կանգառ-նելուն պես գնաց հարյուրյակի հրամանատարի մոտ։

— Կազակները հուզվում են, պարոն յասավուլ։

Ցասավուլը երկար նայեց Իվան Ալեքսեևիչի կզակի խոր փոսիկին, ժպտալով ասաց.

— Ես է՛լ եմ հուզվում, սիրելիս։

— Մեզ ո՞ւր են ուղարկում։

— Պետրոգրադ։

— Խաղաղացնելո՞ւ։

— Իսկ դու կարծում էիր անկարգություններին նպաստելո՞ւ։

— Մենք ոչ մեկն ենք ուզում, ոչ մյուսը։

— Դե՛հ, այդ մեզ չեն է՛լ հարցնում։

— Կազակները...

— Էլի «կազակները»,— արդեն չարացած ընդհատեց նրան հարյուրյակի հրամանատարը,— ես ինքս գիտեմ, թե կազակներն ինչ են մտածում։ Ինձ հաճելի՞ է այս միսիան, հա՛։ Ահա, վերցրու, կարդա հարյուրյակում։ Հետևյալ կայարանում ես կզրուցեմ կազակների հետ։

Հրամանատարը տվեց ծալված մի հեռագիր, ու դեմքը կնճռոտելով, սկսեց նկատելի զզվանքով ծամել պահածո մսի ճարպոտ պատառները։

Իվան Ալեքսեևիչը վերադարձավ իր վագոնը։ Ձեռքում այնպես էր պահել հեռագիրը, որ կարծես դա փայտի վառվող կտոր լիներ։

— Կանչեցեք կազակներին մյուս վագոններից։

Գնացքն արդեն շարժվեց, իսկ կազակները դեռ լցվում էին վագոնը։ Հավաքվեց մի երեսուն մարդ։

— Հրամանատարը հեռագիր է ստացել։ Հիմի կարդաց։

— Հապա՛, ի՞նչ է գրված, տո՛ւր։

— Կարդա, մի՛ խոսա։

— Կռիվը վերջացա՞վ։

— Էլ ո՞նց չէ։

Իվան Ալեքսեևիչը քար լռության մեջ բարձրաձայն կարդաց գերագույն գլխավոր հրամանատար Կոռնիլովի կոչը։ Հետո կազակները քրտնած ձեռքերով վերցնում, նայում էին թերթիկը, որի բառերն աղավաղվել էին հեռագրատանը։

Ես, գերագույն գլխավոր հրամանատար Կոռնիլովս, ամբողջ ժողովրդի առաջ հայտարարում եմ, որ զինվորի պարտքը, ազատ Ռուսաստանի քաղաքացու անձնուրացությունը և հայրենիքի նկատմամբ անսահման սերը, հայրենիքի կեցության այս ծանր րոպեներին ինձ ստիպեցին չենթարկվել ժամանակավոր կառավարության հրամանին և չթողնել բանակի ::: նավատորմի գերագույն հրամանատարությունը։ Այս որոշումն ընդունելիս պաշտպանություն գտնելով ֆրոնտների բոլոր գլխավոր հրամանատարների կողմից, ես հայտարարում եմ ամբողջ ռուս ժողովրդին, որ գերադասում եմ մեռնել, քան թե հեռացվել գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնից։ Ռուս ժողովրդի իսկական զավակը միշտ էլ մեռնում է իր պոստում և հայրենիքին զոհ է բերում այն մեծագույնը, որ ունի — իր կյանքը։

Հայրենիքի գոյության իրոք որ զարհուրելի այս րոպեներին, երբ երկու մայրաքաղաքների մատույցները համարյա բաց են ուրախացող թշնամու հաղթական առաջշարժման համար, ժամանակավոր կառավարությունը, մոռանալով երկրի բուն իսկ անկախ գոյության մեծ հարցը, ժողովրդի մեջ ցնորական երկյուղ է տարածում կոնտրռևոլյուցիայի նկատմամբ, որի ամենաարագ մարմնացմանը նա ինքն է նպաստում կառավարելու իր անկարողությամբ, իր թույլ իշխանությամբ, իր անվճռական գործողություններով։

Ես, իմ ժողովրդի հարազատ զավակը, որ բոլորի աչքի առաջ ամբողջ կյանքս նվիրել եմ նրան անձնուրացությամբ ծառայելուն, չեմ կարող չպաշտպանել իմ ժողովրդի մեծ ապագայի մեծ ազատությունները։ Բայց այժմ այդ ապագան գտնվում է թույլ, անկամ ձեռքերում։ Ամբարտավան թշնամին կաշառքի ու դավաճանության միջոցով մեզ մոտ տեր ու տնօրինություն է անում ինչպես իր տանը, կործանում է բերում ռուս ժողովրդի ոչ միայն ազատությանը, այլև գոյությանը։ Արթնացե՛ք, ռուս մարդիկ, ու տեսեք այն անհատակ անդունդը, դեպի ուր շեշտակիորեն գնում է մեր հայրենիքը։

Խուսափելով ամեն տեսակ ցնցումներից, նախազգուշացնելով որևէ կերպ ռուսական արյուն թափելուց, երկպառակտչական կռվից, ու մոռանալով բոլոր նախատինքներն ու վիրավորանքները, ես ամբողջ ժողովրդի առաջ դիմում եմ ժամանակավոր կառավարության և ասում. եկեք ինձ մոտ, գլխավոր զորակայան, որտեղ ձեր ազատությունն ու անվտանգությունն ապահովված են իմ ազնիվ խոսքով, և ինձ հետ միասին մշակեցեք ու առաջ բերեք ժողովրդական պաշտպանության այնպիսի մի կազմ, որը, ապահովելով ազատությունը, ռուս ժողովրդին տաներ դեպի մեծ ապագան, որը արժանի է հզոր և ազատ ժողովրդին։

Գեներալ Կոռնիլով

Հետևյալ կայարանում գնացքը կանգնեցրին։ Սպասելով առաքման, կազակները հավաքվեցին վագոնների մոտ, քննարկեցին Կոռնիլովի հեռագիրը և Կերենսկու հեռագիրը, որ

հենց նոր կարդաց հարյուրյակի հրամանատարը և որը Կոռնիլովին գավաճան և կոնտրևոլյուցիոներ էր հայտարարում։ Կազակները շփոթված խոսակցում էին։ Հարյուրյակի հրամանատարը և դասակապետ սպաները նույնպես շփոթվել էին։

— Գլխիս մեջ ամեն բան խառնափնթորվել է,— գանգատվում էր Մարտին Շամիլը։— Արի ու հասկացիր, թե նրանցից ով է մեղավորը։

— Իրենք խառնակչություն են անում ու զորքերի մեջ էլ խառնակչություն գցում։

— Մեծավորները չաղությունից կատաղում են։

— Ամեն մեկն ուզում է մեծ լինել։

— Պաները կովում են, կազակների ջանն է դուրս գալիս։

— Ամեն բան տակնուվրա է լինում... Փորձանք է, հա՜-ա։

Մի խումբ կազակներ մոտեցան Իվան Ալեքսեևիչին, պահանջեցին՝

— Գնա հրամանատարի մոտ, իմացիր, թե ինչ պետք է անել։

Խմբով գնացին հարյուրյակի հրամանատարի մոտ։ Սպաները իրենց վագոնում հավաքված, ինչ-որ խորհրդակցում էին։ Իվան Ալեքսեևիչը մտավ վագոն։

— Պարոն հրամանատար, կազակներն ուզում են իմանալ, թե հիմի ինչ պետք է անել։

— Ես հիմա դուրս կգամ։

Հարյուրյակը վերջին վագոնի մոտ հավաքված, սպասում էր։ Հրամանատարը խառնվեց կազակների բազմությանը. անցնելով մեջտեղը, բարձրացրեց ձեռքը։

— Մենք ենթարկվում ենք ոչ թե Կերենսկուն, այլ գերագույն գլխավոր հրամանատարին և մեր անմիջական պետերին։ Ճի՞շտ է։ Դրա համար էլ մենք պետք է առանց առարկության կատարենք մեր պետերի հրամանը և գնանք դեպի Պետրոգրադ։ Ծայրահեղ դեպքում մենք, հասնելով Դոնի կայարանը, Դոնի առաջին դիվիզիայի հրամանատարի մոտ կարող ենք պարզել դրությունը, հետո տեսնենք ինչ կլինի։ Ես կազակներին խնդրում եմ չհուզվել։ Դեհ, այսպիսի ժամանակ ենք ապրում, էլի՜։

Հարյուրյակի հրամանատարը դեռ երկար խոսում էր զինվորական պարտքի, հայրենիքի, հեղափոխության մասին, հանգստացնում էր կազակներին, խուսափողական պատասխաններ էր տալիս հարցերին։ Նա հասավ իր նպատակին. այդ ժամանակ գնացքին շոգեքարշ կցեցին (կազակները չգիտեին, որ իրենց հարյուրյակի երկու սպա, զենքով սպառնալով կայարանապետին, հաջողացրել էին գնացքի արագ առաքումը), ու կազակները գնացին իրենց վագոնները։

Մի օր ու գիշեր գնում էր էշելոնը, մոտենում Դոնը կայարանին։ Գիշերը նորից կանգնեցրին այն, ուղարկեցին Ուսսուրիական և Դաղստանյան գնդերի էշելոնները։ Կազակների գնացքը տեղափոխեցին պահեստի երկաթգծի վրա։ Նրա կողքից, գիշերային թափանցիկ մթության մեջ, լույսեր արձակելով, սլացան Դաղստանյան գնդի վագոնները։ Լսվում էին հետզհետե նվազող կոկորդային խոսակցությունները, զուռնայի նվագը, երգերի օտարոտի եղանակները։

Արդեն կեսգիշերին ուղարկեցին հարյուրյակը։ Սակավազոր շոգեքարշը երկար կանգնեց ջրմուղի մոտ, հնոցի կրակից կայծկլտող լույս էր ընկնում գետնին։ Մեքենավարը ծխում էր, նայում պատուհանից, կարծես ինչ-որ բանի էր սպասում։ Շոգեքարշին մոտիկ վագոնի կազակներից մեկը գլուխը հանեց դռնից, բղավեց.

— Է՛յ, աղբերացու, շարժվիր, թե չէ հիմի կկրակենք։

Մեքենավարը շրթունքներով դեն շպրտեց ծխախոտը, մի փոքր լռեց՝ ըստ երևույթին հետևելով դրա աղեղնաձև թռիչքին, թեթև հազալով ասաց.

— Բոլորին հո չե՞ք գնդակահարի,— ու պատուհանից ներս քաշվեց։

Մի քանի րոպեից հետո շոգեքարշը քաշեց վագոնները, շաչեցին բուֆերները, թքթքացին ցնցումից իրենց հավասարակշռությունը կորցրած ձիերի սմբակները։ Գնացքն անցավ ջրմուղի կողքից, լուսավորված պատուհանների հատուկենտ քառակուսիների ու երկաթգծից դենը գտնվող կեչիների մթին խմբի կողքից։ Կազակները ձիերին կեր տալուց հետո քնեցին, ոմանք արթուն էին, ծխում էին կիսաբաց դռների մոտ՝ նայելով վեհասքանչ երկնքին, մտածելով իրենց դրության մասին։

Իվան Ալեքսեևիչը պառկել էր Կորոլյովի կողքին, դռան

ճեղքից նայում էր հոսանուտ, ցիրուցան աստղերին։ Անցած օրվա ընթացքում, ամեն ինչ կշռադատելով, նա հաստատապես որոշել էր ամեն կերպ դիմադրել հարյուրյակի հետագա առաջշարժմանը դեպի Պետրոգրադ. պառկած մտածում էր, թե կազակներին ինչպես տրամադրի իր որոշման կողմը, ինչպես ազդի նրանց վրա։

Դեռ մինչև Կոռնիլովի կոչը նա պարզ գիտակցում էր, որ կազակները չեն կարող Կոռնիլովի հետ միևնույն ճանապարհով գնալ, բնազդն ասում էր, որ Կերենսկուն էլ չպետք է պաշտպանել. զոռ տվեց մտքին, որոշեց՝ չթողնել, որ հարյուրյակը հասնի Պետրոգրադ, իսկ եթե վիճակվի է՛լ ոմանց հետ զարկվել, ապա այդ թող լինի Կոռնիլովի հետ, բայց ոչ թե Կերենսկու համար, ոչ թե նրա իշխանության, այլ այն իշխանության համար, որը կգա նրանից հետո։ Որ Կերենսկուց հետո ցանկալի, իրոք իրենց իշխանությունն էր լինելու, դրանում նա ավելի քան հավատացած էր։ Դեռ ամառը նա առիթ էր ունեցել լինելու Պետրոգրադում, գործկոմի ռազմական ռեակցիայում, ուր նրան ուղարկել էր հարյուրյակը՝ խորհուրդ հարցնելու հարյուրյակի հրամանատարի հետ ծագած կոնֆլիկտի առթիվ. դիտելով գործկոմի աշխատանքը, բանակցելով մի քանի բոլշևիկ ընկերների հետ, մտածում էր՝ «Այս ոսկե կմախքը կծածկվի մեր բանվորական մսով.— ա՛յ, դա կլինի իշխանությո՛ւն։ Մեռիր, Իվան, բայց կառչիր նրանից, կառչիր, ինչպես երեխան մոր ծծից»։

Այդ գիշեր, ձիու տապճակի վրա պառկած, սովորականից ավելի հաճախ, մեծ, մինչև այդ չապրած ջերմ սիրով էր վերհիշում այն մարդուն, որի ղեկավարությամբ գաղափար էր կազմել իր կոչտ ճանապարհի մասին։ Մտածելով, թե մյուս օրն ինչ պետք է ասեր կազակներին, հիշեց նաև Շտոկմանի խոսքերը կազակների մասին, դրանք կրկնում էր հաճախ, ասես մեխ էր խփում մինչև գլխիկը. «Կազակությունն իր էությամբ պահպանողական է։ Երբ դու կազակին համոզես բոլշևիկյան իդեաների իրավացիությունը, չմոռանաս այս հանգամանքը, գործիր զգուշությամբ, մտածելով, կարողացիր հարմարվել իրադրության։ Սկզբում դեպի քեզ կվերաբերվեն նույն նախապաշարմունքով, որով թե դու և թե Միշկա Կոշևոյը սկզբում վերաբերվում էիք դեպի ինձ, բայց այդ թող

քեզ չշփոթեցնի։ Համառորեն հասկացրու,— վերջնական հաջողությունը մեր կողմը կլինի»։

Իվան Ալեքսեևիչը կարծում էր, որ եթե կազակներին համոզի չգնալ Կոռնիլովի հետ, ոմանց կողմից առարկությունների կհանդիպի, բայց առավոտյան, երբ իր վագոնում զգուշությամբ խոսք բացեց, որ պետք է պահանջել վերադառնալ ռազմաճակատ և ոչ թե գնալ Պետրոգրադ, հենց յուրայինների դեմ կռվելու, կազակները սիրով համաձայնեցին և մեծ պատրաստակամությամբ որոշեցին հրաժարվել Պետրոգրադ գնալուց։ Զախար Կորոլյովը և Զերնիշևսկայա ստանիցայի կազակ Տուրիլինը Իվան Ալեքսեևիչի ամենամոտ համախոհներն էին։ Նրանք ամբողջ օրը վագոնից վագոն անցնելով, խոսում էին կազակների հետ, իսկ երեկոյան, ինչ-որ մի կիսակայարանում, երբ գնացքը դանդաղեցրեց ընթացքը, երրորդ դասակի ուրյադնիկ Պշենիչնիկովը մտավ այն վագոնը, որտեղ գտնվում էր Իվան Ալեքսեևիչը։

— Հենց առաջին կայարանում՝ հարյուրյակը իջնում է գնացքից,— հուզված գոչեց նա, դիմելով Իվան Ալեքսեևիչին։— Դու կոմիտեի ի՞նչ նախագահ ես, եթե չգիտես, թե կազակներն ինչ են ուզում։ Հերի՛ք է մեզ խաբեն։ Էլ չենք գնա... Սպաները մեր վիզը չվան են գցում, իսկ դու սուս ու փուս ես արել։ Դրա համա՞ր ենք ընտրել քեզ։ Էլ ի՞նչ ես ատամներդ ցույց տալի։

— Վաղուց պետք էր այդպես խոսել,— ժպտալով ասաց Իվան Ալեքսեևիչը։

Երբ գնացքը կանգ առավ, նա առաջինը դուրս թռավ վագոնից։ Տուրիլինի ուղեկցությամբ գնաց կայարանապետի մոտ։

— Մեր գնացքը չուղարկես։ Այստեղ իջնելու ենք։

— Ի՞նչպես թե,— շփոթված հարցրեց կայարանապետը,— ես ստացել եմ կարգադրություն... ուղեգիր...

— Ձենդ կտրի՛ր,— բարկությամբ ընդհատեց նրան Տուրիլինը։

Նրանք գտան կայարանի կոմիտեն, դրա նախագահին, ամրակազմ, խարտյաշ հեռագրիչին բացատրեցին գործի էությունը, ու մի քանի րոպեից հետո մեքենավարը գնացքը հաճույքով տարավ փակուղի։

Հապճեպորեն կամրջակներ դնելով վագոնների դռներին, կազակները սկսեցին իջեցնել ձիերը։ Իվան Ալեքսեևիչը կանգնել էր շոգեքարշի մոտ, երկար ոտները լայն դրած, ժպտացող, թուխ դեմքից սրբելով քրտինքը։ Հարյուրյակի սփրթնած հրամանատարը վազեվազ մոտեցավ նրան։

— Ի՞նչ ես անում... Գիտե՞ս, թե...

— Գիտե՛մ,— ընդհատեց նրան Իվան Ալեքսեևիչը։— Իսկ դու, պարոն յասավուլ, ձենդ կտրիր։— Ու գունատվելով, ոունգները շարժելով, կտրուկ ասաց.— Հերիք է ինչքան ձենիդ զոռ տվիր։ Հիմի մենք չենք է՛լ ուզում քեզ լսել։ Այդպե՛ս։

— Գերագույն հրամանատար Կոռնիլովը...— կատաղելով սկսեց յասավուլը, բայց Իվան Ալեքսեևիչը, նայելով փխրուն ավազի մեջ թաղված, հնամաշ սապոգներին, թեթևացած թափահարեց ձեռքը, խորհուրդ տվեց.

— Նրան կախ տուր վզիցդ, խաչի փոխարեն, իսկ մեզ նա հարկավոր չի։

Յասավուլը շուռ եկավ կրունկների վրա, վազեց դեպի իր վագոնը։

Մի ժամից հետո հարյուրյակը առանց սպաների, բայց կանոնավոր մարտակարգով դուրս եկավ կայարանից, ճանապարհվեց դեպի հարավ-արևմուտք։ Առջևի դասակում, գնդացրորդների կողքից գնում էին հարյուրյակի հրամանատարությունը ստանձնած Իվան Ալեքսեևիչը և նրա օգնականը,— ցածրահասակ, երկարականջ Տուրիլինը։

Դժվարությամբ կողմնորոշվելով նախկին հրամանատարից գրաված քարտեզի վրա, հարյուրյակը հասավ Գորելոյե գյուղը, կանգ առավ գիշերելու։ Ընդհանուր ժողովը որոշեց գնալ ռազմաճակատ, իսկ կանգնեցնելու փորձի դեպքում կռվել։

Կապելով ձիերի ոտները և պահպանական հսկողություն կարգելով, կազակները պառկեցին քնելու։ Կրակ չվառեցին։ Զգացվում էր, որ մեծամասնության տրամադրությունը ընկած է, պառկեցին առանց սովորական խոսակցությունների ու կատակների, միմյանցից թաքցնելով իրենց մտքերը։

«Բա որ միտները փոխեն ու մեզա գա՞ն»,— անհանգստությամբ մտածեց Իվան Ալեքսեևիչը՝ շինելը վրան քաշելով։

Ասես նրա միտքը կռահելով, մոտեցավ Տուրիլինը։

— Քնա՞ծ ես, Իվան։

— Դեռ չէ։

Տուրիլինը նստեց նրա ոտների մոտ ու տարուբերելով ծխախոտի կայծը, շշնջաց.

— Կազակները հուզվում են... խառնակչություն գցեցին, հիմի էլ վախում են։ Շիլա-փլավ սարքեցինք... բանը դժվար է, դու ի՞նչ ես կարծում։

— Հետո կերևա՛, էլի՛,— հանգիստ պատասխանեց Իվան Ալեքսեևիչը։— Դու հո չե՞ս վախենում։

Տուրիլինը գլխարկի տակ քորելով գլուխը, ծուռ ժպտաց.

— Դրուստն ասած՝ վախում եմ... Երբ որ սկսեցինք, չէի վախում, իսկ հիմի շշկլված եմ։

— Այդքան վախենո՞ւմ ես պատժից։

— Դեհ, ի՞նչ արած, Իվան, ուժը նրա կողմն է։

Նրանք երկար ժամանակ լուռ էին։ Գյուղում հանգան լույսերը։ Որտեղից-որտեղ, ուռուտով ծածկված, ճահճոտ, փոքրիկ մարգագետնից գալիս էր բադերի կռնչոցը։

— Բադերը կռնչում են,— մտազբաղ ասաց Տուրիլինը ու նորից լռեց։

Գիշերային մեղմ, փաղաքուշ անդորրությունը արածում էր մարգագետնում։ Խոտաբույսերի վրա ցող էր նստում։ Զեփյուռը դեպի կազակական իջևանավայրն էր բերում նեխված ճահճաբույսերի, ճահճոտ գետնի, ցողված խոտի միախառն հոտը։ Երբեմն — ձիերի ոտնակապանքի շրխկոց, դրանց փընչոց և պառկող ձիու ծանր դոփյուն ու տնքոց։ Հետո՝ դարձյալ քնած լռություն, հեռո՞ւ-հեռվում վայրի, սրու բադի հազիվ լսելի, խոպոտ կանչ և ավելի մոտ՝ էգ բադի պատասխան-կռնչյունը։ Մթության մեջ անտեսանելի թևերի շեշտակի, արագ շփշփոց։ Գիշեր։ Անդորր։ Մարգագետնի մշուշոտ թացություն։ Արևմուտքում, երկնքի ստորոտում — բարձրացող, մուգ կապտավուն ամպակույտեր։ Իսկ մեջտեղում, Պրսկովյան հնամենի հողի վերևում, որպես անդուլ հիշեցում, որպես մի լայն, լուսավառ ճանապարհ, ձգված է Ծիր Կաթինը։

Լուսաբացին հարյուրյակը ճանապարհ ընկավ։ Անցան Գորելոյե գյուղը, նրանց հետևից երկար նայում էին կանայք ու երեխաները, որոնք կովերը քշում էին արածելու։ Բարձրացան արևածագից աղյուսե-կարմիր գույն առած մի բլրակ։

Տուրիլինը նայելով շուրջը, ոտով բռնեց Իվան Ալեքսեևիչի ասպանդակը։

— Մտիկ արա, հետևից ձիավորներ են գալի...

Երեք ձիավոր, փոշու վարդերանգ բատիստով պատած, անցնելով գյուղից, գալիս էին լրիվ արագությամբ։

— Հա-արյու-ուրյա-ա՛կ, կանգնի՛ր,— հրաման տվեց Իվան Ալեքսեևիչը։

Կազակները, սովորական արագությամբ շարվեցին, գորշ քառակուսի կազմեցին։ Ձիավորները կես վերստ հեռավորությամբ անցան վարգի։ Նրանցից մեկը, կազակական մի սպա, հանեց թաշկինակը, թափահարեց գլխավերևում։ Կազակները լարված նայում էին մոտեցողներին։ Սպան, որ պաշտպանական գույնի համազգեստով էր, գալիս էր առջևից, մնացած երկուսը չերքեզկաներով էին ու մի քիչ ետ էին մնում։

— Ի՞նչ գործով եք գալիս,— ընդառաջ գնալով՝ հարցրեց Իվան Ալեքսեևիչը։

— Բանակցությունների համար,— ձեռքը գլխարկի հովարին տանելով՝ պատասխանեց սպան։— Ձեզանից ո՞վ է ընդունել հարյուրյակը։

— Ես։

— Ես լիազորված եմ Դոնի առաջին կազակական դիվիզիայից, իսկ սրանք Տեղական դիվիզիայի ներկայացուցիչներն են,— սպան աչքերով ցույց տվեց լեռնցիներին, և ամուր քաշելով սանձը, ձեռքով շոյեց քրտնաթոր ձիու թաց, պսպղուն պարանոցը։— Եթե ցանկանում եք բանակցություններ վարել, հրամայեցեք, որ հարյուրյակն իջնի ձիերից։ Ես պետք է հաղորդեմ դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Գրեկովի բանավոր կարգադրությունը։

Կազակներն իջան ձիերից։ Իջան նաև եկած ներկայացուցիչները։ Մտնելով կազակների բազմության մեջ, նրանք անցան մեջտեղը։ Հարյուրյակը տեղ բաց արեց, մի փոքրիկ բոլորակ կազմեց։

Առաջինը խոսեց կազակ սպան.

— Կազակներ, մենք եկել ենք ձեզ համոզելու, որ լավ մտածեք և կանխեք ձեր վարմունքի ծանր հետևանքները։ Երեկ դիվիզիայի շտաբը իմացավ, որ դուք, ենթարկվելով ինչ-որ մարդկանց հանցավոր հորդորանքներին, ինքնակամ թո-

ղել եք վագոնները, և այսօր մեկ ուղարկել է ձեզ հաղորդելու անմիջապես Դոնը կայարանը վերադառնալու կարգադրությունը։ Տեղական դիվիզիայի զորքերը և հեծելազորի մյուս զորամասերը երեկ գրավել են Պետրոգրադը,— այսօր հեռագիր է ստացված։ Մեր ավանգարդը մտել է մայրաքաղաք, գրավել բոլոր կառավարական հիմնարկությունները, բանկերը, հեռագրատունը, հեռախոսի կայանները և բոլոր կարևոր կետերը։ Ժամանակավոր կառավարությունը փախել է և համարվում է տապալված։ Լա՛վ մտածեք, կազակներ։ Չէ՞ որ դուք դեպի կործանում եք գնում։ Եթե դուք չենթարկվեք դիվիզիայի հրամանատարի կարգադրության, ձեր դեմ զինված ուժեր կուղարկվեն։ Ձեր վարմունքը համարվում է դավաճանություն, մարտական առաջադրանքի չկատարում։ Դուք անվերապահորեն ենթարկվելով միայն կարող եք կանխել եղբայրական արյուն թափելը։

Երբ ներկայացուցիչները մոտեցան, Իվան Ալեքսեևիչը, հաշվի առնելով կազակների տրամադրությունը, հասկացավ, որ բանակցություններից խուսափել չի կարելի, որովհետև բանակցություններից հրաժարվելը անխուսափելիորեն պետք է հակառակ հետևանքների հասցներ։ Մի փոքր մտածելով, նա կարգադրեց. որ հարյուրյակն իջնի ձիերից, ինքը աննկատելիորեն աչքով արավ Տուրիլինին, բազմության միջից մոտեցավ ներկայացուցիչներին։ Սպայի ճառի ժամանակ տեսավ, որ կազակները լսում են գլուխները կախած, մռայլված. ոմանք իրար մեջ փսփսում էին։ Զախար Կորոլյովը ծուռ ժըպտում էր, նրա սև մորուքը փռվել էր ոջլոտած շապկի վրա, ասես չուգունի կանգ առած հոսանք լիներ. Բորշչևը խաղացնում էր մտրակը, շեղակի նայում մի կողմ. Պշենիշնիկովը բաց բերանը կլորացրած, նայում էր խոսող սպայի աչքերին. Մարտին Շամիլը կեղտոտ ձեռքը տանում էր թշերին, հաճախակի թարթում աչքերը, նրա հետևից դեղնին էր տալիս Բագրովի տափակ դեմքը. գնդացրորդ Կրասնիկովը սպասողաբար կկոցել էր աչքերը. Տուրիլինը ֆսսալով էր շնչում. պեպենոտ Օբնիզովը գլխարկը ծոծրակին քաշած, պտտում էր գլուխը ինչպես եզ, որը վզի վրա զգում է լուծը. ամբողջ երկրորդ դասակը կանգնել էր առանց գլուխը բարձրացնելու, ինչպես աղոթքի ժամանակ։ Միաձույլ ամբոխը լռում էր,

մարդիկ հուզված ու ծանր էին շնչում, դեմքի վրա շփոթմունք էր երևում...

Իվան Ալեքսեևիչը հասկացավ, որ կազակների տրամադրության մեջ բեկման մոմենտ է առաջացել. էլի մի քանի րոպե, և Ճոռոմախոս սպային կհաջողվի շուռ տալ հարյուրյակն իր ուզած կողմը։ Հարկավոր էր ինչ կերպ էլ լինի ոչընչացնել սպայի խոսքերի թողած տպավորությունը, սասանել դեռ չարտահայտած, բայց կազակների մտքում արդեն կազմված որոշումը։ Նա բարձրացրեց ձեռքը, լայնացած, տարորեն փայլող աչքերով նայեց ամբոխին։

— Եղբայրնե՛ր,— մի քիչ սպասեցեք,— ու դիմեց սպային.— Հեռագիրը ձեզ մո՞տ է։

— Ի՞նչ հեռագիր,— զարմացավ սպան։

— Պետրոգրադը վերցնելու մասին։

— Հեռագի՞րը... Ո՛չ։ Հեռագիրն այստեղ ի՞նչ գործ ունի։

— Ըհը՛մ, չկա...— թեթևացած շունչ առավ ամբողջ հարյուրյակը։

Ու շատերը բարձրացրին գլուխները, հույս արտահայտող աչքերը հառեցին Իվան Ալեքսեևիչի վրա, իսկ սա, բարձրացնելով խոպոտ ձայնը, արդեն հեգնաբար, վստահորեն ու զայրացած գոչեց՝ տիրաբար իր վրա գրավելով կազակների ուշադրությունը։

— Ասում ես չկա, հա՞։ Իսկ մենք քեզ կհավատա՞նք։ Ուզում ես վնա՞ս հասցնել, հը՞։

— Խարեբայությո՛ւն-ուն,— որոտաց հարյուրյակը։

— Հեռագիրն ինձ չի հասցեագրված։ Կազակնե՛ր,— սպան համոզելու ժեստով ձեռները սեղմում էր կրծքին։

Բայց նրան արդեն չէ՛ին լսում։ Իվան Ալեքսեևիչը զգալով, որ հարյուրյակի համակրանքը և վստահությունը վերջնորեն անցել են իր կողմը, կտրուկ ասում էր,— կարծես ալմասով ապակի էր կտրում.

— Թեկուզև վերցնեիք,— մեր ճամփեն ուրիշ է, ձերը՝ ուրիշ։ Մենք չենք ցանկանում կռվել մերոնց դեմ։ Մենք չենք գնա ժողովրդի դեմ։ Թշնամացնե՞լ եք ուզում։ Չէ՛, այստեղ հիմարներ չկան։ Չենք ուզում ոտքի կանգնեցնել գեներալների իշխանությունը։ Այդպե՛ս։

Կազակները միահամուռ կերպով հավանության բացականչություններ արեցին, բազմությունը ճոճվեց, այս ու այն կողմից գոչեցին.

— Ա՛յ, ինչ եմ ասո՞ւ-ում։

— Ուղիղ կետին խփեց։

— Ճիշտ է-է...

— Ո՞ւ անել այդ բարեծննդություններին։

— Խնամախոսներ են եկել, դրա՞նց մտիկ...

— Պետերբուրգում, հրե՛ն, կազակական երեք գունդ կա, ամա նրանք կասկածում են, թե ո՞նց դուրս գան ժողովրդի դեմ։

— Իվա՛ն, լսում ես, մի լավ կոթիր դրանց, թող իրենց փասա-փուսեն հավաքեն ու գնան։

Իվան Ալեքսեևիչը նայեց ներկայացուցիչներին. կազակական սպան շրթունքներն իրար սեղմելով, համբերությամբ սպասում էր. նրա հետևում, ուս ուսի տված, կանգնել էին լեռնցիները,— վայելչակազմ, երիտասարդ, մի ինքուշ-սպա ձեռները խաչել էր շքեղ չերքեզկայի վրա, սև փափախի տակից փայլում էին նրա շեղադիր, փոքրիկ նշաձև աչքերը. մյուսը,— տարեց, խարտյաշ մի օսեթին,— կանգնել էր մի ոտը անփույթ կերպով մի կողմ դրած. ձեռքը թրի գլխիկին դրած, նա հեգնոտ, զննող աչքերով նայում էր կազակներին։ Իվան Ալեքսեևիչը հենց նոր ուզում էր ընդհատել բանակցությունները, բայց կազակական սպան կանխեց նրան. ինքուշ սպայի հետ փսփսալով, նա հնչեղ ձայնով գոչեց.

— Դոնեցինե՛ր, թույլ տալիս եք, որ մի խոսք ասի Վայրենի դիվիզիայի ներկայացուցիչը։

Ինքուշը առանց համաձայնության սպասելու, անկրունկ սապոգներով թեթևաքայլ անցավ բոլորակի մեջտեղը, ջղայնորեն շտկեց վահանակներով զարդարված գոտին։

— Կաղա՛կ եղբայրներ,— սկսեց նա՝ ռուսերեն կոտրատելով,— ինչի՞ այսպես զալմաղալ անել, հը՞։ Պետք է խոսել առանց չարանալու։ Դուք չե՞ք ուզում գեներալ Կառնիլովին։ Դուք պատերա՞զմ եք ուզում. խնդրե՛մ։ Մենք կկռվենք։ Վախեցող չկա։ Իսկի էլ չկա։ Հենց այսօր մենք ձեզ կսխկենք։ Մեր հետևից լեռնցիների երկու գունդ է գալի։ Վա՛հ, ի՞նչ զալմաղալ կարող է լինել, ինչի՞ համար է դա։— Սկզբում

նա խոսում էր ակներև հանգստությամբ, բայց վերջում արդեն ձայնը բարձրացնելով, կրքոտ, ցասկոտ ֆրազներ էր ասում. նրա կոտրատվող, կոկորդային ձայնով հնչող ճառի մեջ մայրենի լեզվի բառերն էին խցկվում։— Ձեզ շփոթեցնում է հրե՛ս այս կազակը. նա բոլշևիկ է, իսկ դուք գնում եք նրա հետևից։ Վա՛հ, ինչ եմ տեսնում ես։ Ձերբակալեցեք սրան, զինաթափեցե՛ք սրան։

Համարձակ ժեստով նա ցույց էր տալիս Իվան Ալեքսեևիչին, ու գունատված, խոսելիս ձեռները դես ու դեն շարժելով, դարչնավուն կարմրությամբ պատած դեմքով այս ու այն կողմ էր ընկնում նեղ բոլորակի մեջ։ Նրա ընկերը, տարեց խարտյաշ օսեթինը սառն հանգստություն էր պահպանում. կազակական սպան տնտղում էր մաշված թրափունջը։ Կազակները նորից լռեցին, նորից շփոթություն առաջացավ նրանց շարքերում։ Իվան Ալեքսեևիչը անընդհատ նայում էր ինգուշ սպային, զազանավարի սպիտակին տվող նրա ատամներին, ձախ քունքից հոսող քրտնքի գորշ, առատ կաթիլներին, վշտացած մտածում էր, որ իզուր է բաց թողել այն մոմենտը, երբ կարելի էր մի խոսքով վերջացնել բանակցությունները և տանել կազակներին։ Տուրիլինը փրկեց դրությունը։ Նա անցավ բոլորակի մեջտեղը, ցասկոտ թափահարեց ձեռները՝ կտրելով շապկի օձիքի կոճակները, ու կատաղած, փրփրած, բղավեց խռպոտ ձայնով.

— Գարշելի՛ օձեր... Գրողի՛ տարածներ... Սրիկաներ... Ձեր գլուխը եղում են, բ...եր, իսկ դուք ականջներդ եք կախել... Սպաները իրենց ուղածն են փաթաթում ձեր վզին... Ի՞նչ եք անում, ի՞նչ եք անու-ու-ում։ Նրանց թրատել է պետք, իսկ դուք լսում եք նրանց... Նրանց գլուխնե՛րը պետք է թրոցնել, նրանց արյունը պետք է թափել։ Դուք այստեղ մլոլ արեք, մինչև որ մեզ շրջապատեն, հա՞... Գնդացիրներից կրակ թափեն... Տեսնեմ ոնց միտինգ կանեք գնդացիրների կրակի տակ... Ձեր աչքին թոզ են փչում, մինչև որ իրենց զորքը մոտենա... է-է, միթամ կազակներ եք, հա՞-ա։ Ցուրկա՛ հագնողներ։

— Չի՛ նստել...— որոտընդոստ ձայնով գոռաց Իվան Ալեքսեևիչը։

Նրա ճիչը շրապնելի նման պայթեց ամբոխի վրա։ Կազակները նստվեցին դեպի ձիերը։ Ցրիվ եկած հարյուրյակը մի րոպեից հետո արդեն դասակային շարասյուներ կազմեց։

— Լսեք, կազակնե՛ր,— դես-դեն էր ընկնում կազակական սպան։

Իվան Ալեքսեևիչը ուսից իջեցրեց կարաբինը. ուռուցիկ հոդերով մատը պինդ դնելով հրահանին, սանձի բերանոցը քաշելով ցատկոտող ձիու շրթունքների մեջ, բղավեց.

— Վերջացան բանակցությունները։ Հիմի եթե ձեզ հետ խոսելու լինենք, ա՛յ, այս լեզվով կխոսենք։

Եվ նա ազդու կերպով թափահարեց հրացանը։

Դասակներն իրար հետևից դուրս եկան ճանապարհը։ Ետ նայելով, կազակները տեսնում էին, թե ինչպես ներկայացուցիչները, ձի նստելով, ինչ-որ խորհրդակցում են։ Ինգուշն աչքերը կկոցած, տաք-տաք խոսելով, ինչ-որ բան էր ապացուցում, հաճախ բարձրացնում ձեռքը. նրա չերքեզկայի թևածալի մետաքսե աստառը ձյան պես սպիտակին էր տալիս։

Իվան Ալեքսեևիչը վերջին անգամ նայելով, տեսավ կուրացուցիչ կերպով փայլող այդ մետաքսի շերտը, ու նրա աչքերի առաջ հայտնի չէ ինչու պատկերացան՝ չոր քամուց ալեկոծվող Դոնի կուրծքը, կանաչավուն, փրփրաբաշ ալիքները և ձկնորս-որորի ծռված, ալիքի կատարին իր ծայրով զարկվող սպիտակ թևը։

XVI

Արդեն օգոստոսի 29-ին Կրիմովից ստացվող հեռագրերից Կոռնիլովի համար պարզ էր, որ զինված հեղաշրջման գործը կործանվել է։

Կեսօրվա ժամը երկուսին Կրիմովի կողմից գլխավոր զորակայան ժամանեց հանձնատար սպան։ Կոռնիլովը երկար զրուցեց նրա հետ, հետո կանչեց Ռոմանովսկուն. ջղայնորեն ինչ-որ մի թուղթ ճմռթելով, ասաց.

— Ամեն ինչ խորտակվում է։ Մենք տանուլ կտանք... Կրիմովը չի կարողանա իր ժամանակին կորպուսը մոտեցնել Պետրոգրադին, մոմենտը բաց կթողնվի, իսկ հապաղելը հիմա հավասար է կործանման։ Այն, ինչ որ այնպես հեշտ իրագործելի էր թվում, հազարավոր խոչընդոտների է հանդիպում...

Վախճանը կանխորոշված է բացասական իմաստով... Ահա... նայեցեք, թե ինչպես են փոխադրվել զորքերը։— Նա քարտեզը մոտեցրեց Ռոմանովսկուն, քարտեզի վրա նշումներ էին արված, թե վերջին պահին որտեղ էին գտնվում կորպուսի և Տեղական դիվիզիայի էշելոնները. ջղաձգությունը զիգզագաձև անցավ նրա եռանդալից, անքնությունից սփրթնած դեմքով։— Այդ ամբողջ երկաթուղային խուժանը խոշընդոտներ է հարուցում մեր ճանապարհին։ Նրանք չեն մտածում, որ հաջողության դեպքում ես կհրամայեմ կախել տասը երկաթուղայինից մեկին։ Ծանոթացեք Կրիմովի զեկուցագրի հետ։

Մինչդեռ Ռոմանովսկին իր մեծ ձեռքով շփում էր ուռած, յուղոտ դեմքը ու կարդում զեկուցագիրը, Կոռնիլովն արագարագ գրեց.

Նովոչերկասկի, զորաց ատաման Ալեքսեյ Մաքսիմովիչ Կալեդինին։ Ժամանակավոր կառավարությանն ուղարկված ձեր հեռագրի էությունը հաղորդել են ինձ։ Դավաճանների ու մատնիչների դեմ ուղղված ապարդյուն պայքարում մաշելով համբերությունը, տեսնելով հայրենիքի անխուսափելի կործանումը, պանծալի կազակությունը զենքը ձեռքին կպաշտպանի կյանքն ու ազատությունը մեր երկրի, որը աճել ու ընդարձակվել է նրա աշխատանքներով ու արյունով։ Մեր հարաբերությունները որոշ ժամանակվա ընթացքում ճնշված են մնում։ Խնդրում եմ ձեզ գործել ինձ հետ համաձայնեցված կարգով,— այնպես, ինչպես ձեզ կթելադրի հայրենիքի սերը և կազակի պատիվը։ 658.29.8.17։

Գեներալ Կոռնիլով

— Անմիջապես հաղորդեցեք այս հեռագիրը,— վերջացնելով՝ խնդրեց նա Ռոմանովսկուն։

— Կհրամայե՞ք երկրորդ անգամ հեռագիր ուղարկել իշխան Բագրատիոնին, որ հետագա ընթացքը կատարվի երթային կարգով։

— Այո, այո։

Ռոմանովսկին մի փոքր լռելով՝ մտազբաղ ասաց.

— Ըստ իս, Լավր Գյորգիևիչ, առայժմ մենք դեռ պեսիմիստորեն տրամադրված լինելու հիմք չունենք։ Դուք անհաջող եք գուշակում դեպքերի ընթացքը...

Կոռնիլովը աճապարանոք ձեռքը դես-դեն նետելով, փորձում էր բռնել մի փոքրիկ, կապտավուն, ճախրող թիթեռնիկն

Նրա մատները իրար էին սեղմվում, դեմքը մի փոքր լարված, սպասողական արտահայտություն ուներ։ Թիթեռնիկը օդի շարժումից տատանվելով, իջնելով, սավառնում էր թևերը բացած, ձգտում դեպի բաց լուսամուտը։ Կոռնիլովին այնուամենայնիվ հաջողվեց բռնել նրան, ու թեթևացած շունչ առավ, ընկավ բազկաթոռի մեջքին։

Ռոմանովսկին պատասխան էր սպասում իր ռեպլիկային, բայց Կոռնիլովը մտազբաղ ու մռայլ ժպտալով, սկսեց պատմել հետևյալը.

— Այսօր ես երազ տեսա։ Որպես թե ես հրաձիգ դիվիզիաներից մեկի բրիգադի հրամանատար եմ, Կարպատյան լեռներում հարձակում եմ գործում։ Շտաբի հետ միասին ժամանում ենք մի ինչ-որ ֆիրմա։ Մեզ դիմավորում է մի հասակավոր, շքեղ հագնված ռուսին։ Նա ինձ կաթ է հրամցնում, ու հանելով թաղիքե, սպիտակ գլխարկը, մաքուր գերմաներենով ասում է՝ «Կեր, գեներալ. այս կաթը արտասովոր բուժիչ հատկություն ունի»։ Ես որպես թե խմում եմ ու չեմ զարմանում, որ ռուսինը ձեռքը ազատավարի թփթփացնում է ուսիս։ Հետո մենք գնում էինք լեռներով, և արդեն կարծես ոչ թե Կարպատներում, այլ Աֆղանստանում, այծի մի ինչ-որ կածանով... Այո, հենց այծի կածանով. մեր ոտների տակից քարեր ու դարչնագույն խիճ էին թափվում, իսկ ներքևում, կիրճից դենը հարավային մի փարթամ, սպիտակ արևով ողողված լանդշաֆտ էր երևում...

Թեթև, միջանցիկ քամին շարժում էր սեղանի վրա եղած թղթերը, հոսում պատուհանի բաց փեղկերի արանքով։ Կոռնիլովի մշուշված ու հեռավոր հայացքը թափառում էր հեռո՞ւ-հեռվում, Դնեպրից դենը, գոգաշատ լանջերով մեկ, որոնք կտրտված էին բրոնզե-դեղնավուն, փոքրիկ մարգերով։

Ռոմանովսկին հետամուտ եղավ նրա հայացքին և ինքը աննկատելիորեն հոգոց հանելով, աչքերը դարձրեց դեպի Դնեպրը, որ քամու բացակայությամբ ապակու էր նմանվում ու թիթեղնափայլ էր արձակում, դեպի մշուշապատ դաշտերը, որոնք ծածկված էին նրբագույն նախաշնանային ուռուշով։

XVII

Պետրոգրադի վրա ուղարկվող 3-րդ հեծյալ կորպուսի ու Տեղական (Վայրենի) դիվիզիայի զորամասերը փոխադրվում էին հսկայական երկարություն ունեցող ութ երկաթուղիներով, Ռեվել, Վեզենբերգ, Նարվա, Յամբուրգ, Գատչինա Սոմրինո, Վիրիցա, Զուդովո, Գդով, Նովգորոդ, Դնո, Պսկով, Լուգա,— ու մնացած բոլոր միջանկյալ կայարաններն ու կիսակայարանները բռնված էին դանդաղ շարժվող, կանգ առած էշելոններով։ Գնդերը ավագ հրամանատարական կազմի ամեն մի բարոյական ազդեցությունից դուրս էին գտնվում, միմյանցից անջատված հարյուրյակները կորցնում էին փոխադարձ կապը։ Խառնաշփոթությունն ուժեղանում էր նրանով, որ կորպուսը իրեն միացրած Տեղական դիվիզիայի հետ երթի ժամանակ բանակի էր վերածվում. պահանջվում էր որոշ տեղափոխություն և ցրված զորամասերի ի մի հավաքում, էշելոնների վերախմբավորում։ Այս ամենը առաջ էր բերում խառնափնթորություն, անհեթեթ, հաճախ չհամաձայնեցված կարգադրություններ, շիկացնում էր առանց այն էլ լարված-ջղայնոտ մթնոլորտը։

Իրենց ճանապարհին հանդիպելով երկաթուղային բանվորների ու ծառայողների տարերային դիմադրության, հաղթահարելով խոչընդոտները, Կոռնիլովի բանակի էշելոնները կամացուկ մոտենում էին Պետրոգրադին, խմբվում էին հանգույցներում, նորից ցրվում։

Վագոնների կարմիր վանդակներում, թամքերը հանած, կիսաքաղցած ձիերի մոտ խռնվում էին Դոնի, Ուսսուրիի, Օրենբուրգի, Ներչինսկի և Ամուրի կազակները, ինգուշներ, չերքեզներ, կաբարդացիներ, օսեր, դաղստանցիներ։ Սպասելով առաքման, էշելոնները ժամերով կանգնում էին կայարաններում, ձիավորները խմբով դուրս էին թափվում վագոններից, մորեխի նման լցվում կայարանների շենքերը, խռնվում երկաթգծերի վրա, կլանում ամբողջ ուտելեղենը, որ մնացած էր լինում առաջ անցած էշելոններից, ծածուկ կերպով մթերք էին գողանում բնակիչներից, թալանում պարենի պահեստները։

Կազակների դեղին ու կարմիր լամպասներ, դրագունների

պճնագեղ կուրտկաներ, լեռնցիների չերքեզկաներ... Գույներից աղքատ հյուսիսային բնությունը գույների այդպիսի ճոխ խայտաբղետություն երբեք չէր տեսել։

Օգոստոսի 29-ին Պավլովսկի մոտ Վայրենի դիվիզիայի 3-րդ բրիգադը իշխան Գագարինի հրամանատարությամբ արդեն հանդիպեց հակառակորդին։ Դիվիզիայի առջևից ընթացող Ինգուշական և Չերքեզական գնդերը հասնելով մի տեղ, ուր երկաթուղին քանդված էր, իջան վագոններից ու երթական կարգով գնացին Յարսկոյե Սելոյի ուղղությամբ։ Ինգուշների հեծյալ պարեկները հասան մինչև Սոմրինո կայարանը։ Գնդերը դանդաղ տեմպով ծավալում էին հարձակումը, նեղում գվարդիականներին, սպասելով, որ մոտենան դիվիզիայի մնացած զորամասերը։ Իսկ վերջիններս Դնոյում առաքման էին սպասում։ Մի քանիսները դեռ այդ կայարանն էլ չէին հասել։

Վայրենի դիվիզիայի հրամանատար իշխան Բագրատիոնը գտնվում էր կայարանամերձ կալվածքում, սպասում էր, որ կենտրոնական մնացած զորամասերը, ռիսկ չէր անում երթակարգով գնալ մինչև Վիրիցա։

28-ին նա Հյուսիսային ռազմաճակատի շտաբից ստացավ հետևյալ հեռագրի պատճենը.

Խնդրում եմ 3-րդ կորպուսի հրամանատարին և Դոնի 1-ին, Ուսսուրիական և Կովկասյան Տեղական դիվիզիաների պետերին հաղորդել գերագույն գլխավոր հրամանատարի հրամանը, որ եթե որևէ չնախատեսված հանգամանքների հետևանքով դժվարանա էշելոնների ընթացքը երկաթուղով, ապա գերագույն գլխավոր հրամանատարը դիվիզիաներին հրամայեց հետագա առաջշարժումը կատարել երթակարգով։ 1917 թ. օգոստոսի 27, № 6411։

Ռոմանովսկի

Առավոտյան ժամը մոտ 9-ին Բագրատիոնը հեռագրով հաղորդեց Կոռնիլովին, որ առավոտյան ժամը 6-ից 40 րոպե անց Պետրոգրադի օկրուգի շտաբի պետ գնդապետ Բագրատունուց ստացել է Կերենսկու հրամանը՝ ետ դարձնել բոլոր էշելոնները և որ դիվիզիայի էշելոնները կանգնեցրած են ճանապարհին, Գաչկի կիսակայարանից մինչև Օրեդեժ կայարանը, որովհետև, ժամանակավոր կառավարության կարգա-

դրությամբ, երկաթուղին ձողիկներ[1] չի տալիս. բայց չնայելով, որ իր ստացած՝ Կոռնիլովի մակագրությունը ասում էր հետևյալը.

Իշխան Բագրատիոնին։ Շարունակել առաջշարժումը երկաթուղով։ Եթե երկաթուղով հնարավոր չլինի, երթակարգով գնալ մինչև Լուգա, որտեղ ամրոցովին անցնել գեներալ Կրիմովի տրամադրության տակ։

Բագրատիոնն այնուամենայնիվ սիրտ չարեց երթակարգով գնալ և կարգադրեց նստել կորպուսի շտաբի վագոնները։

Այն գունդը, որտեղ մի ժամանակ ծառայել էր Եվգենի Լիստնիցկին, Դոնի 1-ին կազակական դիվիզիայի կազմի մեջ մտնող մնացած գնդերի հետ միասին Պետրոգրադի դեմ էր ուղարկվում Ռեվել—Վեզենբերգ—Նարվա գծով։ Ամսի 28-ին, ցերեկվա ժամը 5-ին գնդի երկու հարյուրյակից բաղկացած մի էշելոն ժամանեց Նարվա։ Էշելոնի հրամանատարն իմացավ, որ գիշերը մեկնել չի կարելի, որովհետև Նարվայի ու Յամբուրգի միջև ճանապարհը փչացրած է, երկաթուղային գումարտակի մի մասը արտակարգ գնացքով ուղարկված է այնտեղ, ու առավոտյան, եթե երկաթգիծը վերականգնված լինի, էշելոնը կուղարկվի։ Էշելոնի հրամանատարը կամա թե ակամա համաձայնվեց։ Նա մոթմոթալով մտավ իր վագոնը, նորությունը հաղորդեց սպաներին, նստեց թեյ խմելու։

Իշավ ամպամած գիշերը։ Ծովածոցից փչում էր խոնավ, խիստ ուժեղ քամին։ Ճանապարհների վրա, վագոնների մեջ կամացուկ խոսակցում էին կազակները, շոգեքարշերի շչակներից անհանգստացող ձիերը ոտները խփում էին փայտե հատակներին։ Էշելոնի պոչում երգում էր երիտասարդական կազակական մի ձայն, մթության մեջ զանգատվում հայտնի չէ ում.

Է՛հ, մնաք բարով, քաղաք ու ավան,
Էհ, մնաս բարով, խուտոր հայրենի,

[1] Երկաթուղային ձողիկներ (жезлы).— գնացքների երթևեկությունը կանոնավորելու միջոցներից մեկը, որով մեքենավարը կայարանից մեկնում է. միայն հատուկ ձողիկ ստանալուց հետո, որը ցույց է տալիս, թե երկաթգիծն ազատ է։

Էհ, մնաս բարով, դու, ալ ու ալվան
Ծաղիկ իմ «իրած, աղջիկ գեղանի։
Առավոտ ծեգից մինչև իրիկուն
Ես պառկում էի գլուխս ձեռքիդ,
Իսկ հիմի ծեգից մինչև իրիկուն
Այս հրացանն եմ պահում իմ ձեռքին...

Համբարանոցի գորշ, ահագին շենքի հետևից դուրս եկավ մի մարդ։ Մի քիչ կանգնեց, ականջ դրեց երգին. դիտեց լուսերի դեղին կետերով նշված երկաթգծերը, վստահորեն քայլեց դեպի էշելոնը։ Նրա քայլերը խուլ դոփում էին շպալների վրա, լռում՝ երբ նա ոտ էր դնում տոփանած, կավախառն հողին։ Նա անցավ վերջին վագոնի կողքից, ու դռան մոտ կանգնած կազակը ընդհատելով երգը, ձայն տվեց նրան.

— Է՛յ, ո՞վ ես։

— Իսկ դու ո՞ւմ ես ուզում,— հեռանալով՝ դժկամ պատասխանեց մարդը։

— Ի՞նչ ես թրև գալի գիշերով։ Ձեզ, ժուլիկներիդ, մենք թրմփացնում ենք։ Թռցնելու բա՞ն ես ման գալի, հա՞։

Մարդը առանց պատասխանելու անցավ մինչև գնացքի մեջտեղը, գլուխը դռան ճեղքից խոթելով՝ հարցրեց.

— Սա ո՞ր հարյուրյակն է։

— Բռնավորների,— քրքջացին մթության միջից։

— Լուրջ եմ հարցնում, ո՞րն է։

— Երկրորդը։

— Բա ո՞րտեղ է չորրորդ դասակը։

— Առջևից վեցերորդ վագոնումն է։

Շոգեքարշի կողմից վեցերորդ վագոնի մոտ երկու կազակ ծխում էին։ Մեկը պպզել էր, երկուսը կանգնած էին։ Նրանք լուռ նայում էին իրենց մոտեցող մարդուն։

— Բարև, կազակներ, ո՞նց եք։

— Փա՛ռք աստծու,— պատասխանեց մեկը՝ զննելով եկվորի դեմքը։

— Նիկիտա Դուգինը սա՞ղ է։ Այստե՞ղ է։

— Ե՛ս եմ որ կամ,— զրնգուն տենորով պատասխանեց պպզած կազակը ու վեր կացավ, կրունկով ճզմեց ծխախոտի մնացորդը։— Ձեմ ճանաչում քեզ։ Ո՞վ ես, ո՞րտեղից։— Նա կարկառեց երկարամորուք դեմքը՝ աշխատելով լավ տեսնել

շինել հագած և զինվորի ճխլտված գլխարկով մարդուն, և հանկարծ զարմանքով գոչեց՝ Ի՛լյա, Բունչուկ, հոգիդ սիրեմ, այդ ո՞ր քամին ու ո՞րտեղից քեզ բերեց։

Կոշտ ձեռքի մեջ Բունչուկի մազոտ ձեռքը պահած, թեքվելով նրա կողմը, ցածր ձայնով ասաց.

— Սրանք մեր տղերքն են, սրանցից չվախենաս։ Ո՞րտեղից ես եկել, հը՞։ Ասա, է՛, տո՛, ա՛յ գլխամեռ։

Բունչուկը ձեռք տալով բարևեց մյուս կազակներին, խոպված, շուգունե-խուլ ձայնով պատասխանեց.

— Պիտերից եմ եկել, դժվարությամբ գտա ձեզ։ Գործ կա։ Պետք է խոսել։ Որքա՛ն ուրախ եմ, որ ողջ-առողջ եմ տեսնում։

Նա ժպտում էր, նրա գորշ, խոշոր, լայնաճակատ դեմքի վրա սպիտակին էին տալիս ատամները, ջերմորեն, զուսպ և ուրախ փայլում էին աչքերը։

— Խոսե՞լ,— զրնգաց մորուքավորի բարակ ձայնը,— դու սպա ես, ամա, ուրեմս, մեզ հետ ընկերություն անելուց չե՞ս փախչում։ Էհ, շնորհակալություն, Իլյուշա, փա՛ռք Քրիստոսին, թե չէ մենք երազներիս մեջ էլ մի անուշ խոսք չենք լսել...— նրա ձայնը բարեսիրտ, անչար ծիծաղի վերածվեց։

Բունչուկը նույնպես կատակեց սիրալիր կերպով.

— Լա՛վ, լա՛վ, հերիք է ջուր պղտորես։ Դու էլի խաղ ես անում, կատակում ես, իսկ քո մորուքը պորտիցդ էլ ցած է իջել։

— Մենք կարող ենք երբ ասես վեր անել մորուքներս, բայց դու ասա, ի՞նչ կա այնտեղ, Պիտերում։ Բունտերը սկսվե՞լ են։

— Գնանք վագոն,— խոստմնալից առաջարկեց Բունչուկը։

Նրանք մտան վագոն։ Դոգինը ոտներով հրեց ոմանց, ցածր ձայնով ասաց.

— Վեր կացեք, տղերք։ Մեզ հյուր է եկել շատ հարկավոր մի մարդ։ Դեհ, շուտ արեք, զինվոր տղերք, վեր կացեք։

Կազակները մշմշալով վեր էին կենում։ Մեկի մեծ, ծխախոտի և ձիու քրտինքի հոտ արձակող ձեռները մթության մեջ զգուշությամբ շոշափեցին թամքի վրա նստած Բունչուկի դեմքը. թավ, մազոտ մի ձայն հարցրեց.

— Բունչո՞ւկն է։

— Ես եմ։ Այդ դո՞ւ ես, Ջիկամասով։

— Ես եմ, ես. բարև, աղբերս։

— Բարև։

— Հիմի վազ կտամ, կանչեմ երրորդ դասակի տղերանց։

— Լա՛վ... Թռիր։

Երրորդ դասակը եկավ համարյա ամբողջովին, միայն երկուսը մնացին ձիերի մոտ։ Կազակները մոտենում էին Բունչուկին, մեկնում կոշտ ձեռները, կռանում, լապտերի լույսի տակ դիտում նրա լայն, մի փոքր մռայլ դեմքը, մերթ Բունչուկ էին անվանում, մերթ Իլյա Միտրիչ, մերթ էլ Իլյուշա, բայց բոլոր ձայների մեջ միևնույն տոնով էր հնչում ընկերական ջերմ ողջույնը։

Վագոնում օդը ծանրացավ։ Տախտակե պատերի վրա դողում էին լույսի ցոլքերը, երերվում ու մեծանում էին այլանդակ ստվերները, ձիթաճրագի թանձր, ծխոտ լույս էր արձակում լապտերը։

Բունչուկին հոգատարությամբ նստեցրին լապտերի մոտ։ Առջևի մարդիկ պպզեցին, մնացածները նեղ բոլորակ կազմեցին նրա շուրջը։ Տենոր ձայն ունեցող Դուգինը հազաց,— մաքրեց կոկորդը։

— Քո նամակը, Իլյա Միտրիչ, մենք ստացանք անցած օրը, ամա ուզում ենք լսել քեզ, որ դու մեզ խորհուրդ տաս, թե հետագայում ինչ պետք է անենք։ Ախր մեզ դեպի Պիտեր են քշում, բա ո՞նց պիտի լինի։

— Գիտե՞ս ինչ, Միտրիչ,— ասաց դռան մոտ կանգնած մի կազակ, որի կնճռոտ ականջից գինդ էր կախված,— հենց այն կազակը, որին մի ժամանակ վիրավորել էր Լիստնիցկին, թույլ չտալով, որ նա թեյ եռացնի խրամատի վահանի վրա,— մեզ մոտ զանազան ագիտատորներ են գալի, համոզում են, թե մի՛ գնաք Պետրոգրադի վրա, թե մենք մերոնց դեմ չպետք է կռվենք, ու այս տեսակ զանազան բաներ են ասում։ Մենք էլ լսում ենք, ամա նրանց այնքան էլ չենք հավատում։ Օտար մարդիկ են։ Կարելի է նրանք մեզ ծուռ ճանապարհով են տանում, ես ի՞նչ գիտեմ։ Թե հրաժարվես, Կոռնիլովը չերքեզներ կուղարկի մեր դեմ, ու էլի արյունահեղություն կլինի։ Իսկ դու մերն ես, կազակ ես, մենք էլ քեզ ավելի շատ ենք հավատում և մինչև իսկ շատ շնորհակալ

ենք, որ մեզ Պիտերից նամակներ էիր գրել ու լրագրեր ղրրկել... այստեղ, դրուստն ասած, թղթի սով էր, իսկ երբ որ լրագիր ենք ստանում...

— Ի՞նչ ես դուրս տալի, է՛, սարսաղ,— զայրացած ընդհատեց մեկը,— դու անգրագետ ես, կարծում ես բոլորն էլ անգե՞տ են քեզ պես։ Միթամ մենք լրագրերը ծխելու թուղթ դարձրինք, հա՞։ Նախ և առաջ, Իլյա Միտրիչ, մենք գլխեգլուխ դրանք կարդում ենք։

— Գլխից դուրս տվեց գրողի տարածը։

— «Ծխելու համա՞ր»,— ա՛յ քեզ պոչով սուտ։

— Խելոքին մեկ ասա, սարսաղին՝ հազար։

— Աղբե՛ր, ես հո այդ մտքով չասի՞,— արդարանում էր ականջին գինդ ունեցող կազակը։— Հարկ է, որ մենք թերթերը նախ և առաջ կարդում էինք...

— Հենց դո՞ւք էիք կարդում։

— Ես գրի սևն ու սպիտակը չեմ իմացել... Նրա համար եմ ասում, որ առհասարակ կարդում էինք, էլի՛, հետո արդեն ծխելու համար գործածում...

Բունչուկը թեթև ժպտալով, նստել էր թամքի վրա, նայում էր կազակներին. նրա համար անհարմար էր նստած խոսել, նա վեր կացավ ու մեջքը դարձնելով դեպի լապտերը, դանդաղ, լարված ու անվստահ սկսեց իր խոսքը.

— Պետրոգրադում դուք անելիք չունեք։ Այնտեղ ոչ մի բունտ չկա։ Գիտե՞ք, թե ինչու են ձեզ այնտեղ ուղարկում. ժամանակավոր կառավարությունը տապալելու համար... Այո՛։ Ո՞վ է ձեզ տանում. ցարական գեներալ Կորնիլովը։ Նրան ինչի՞ համար է հարկավոր մեջտեղից վերացնել Կերենսկուն,— որ ինքը նստի նրա տեղը։ Զգույշ եղեք, կազակներ, ուզում են ձեր վզից հանել փայտե լուծը, իսկ եթե նոր լուծ դնեն, դա պողպատե լուծ կլինի։ Երկու փորձանքից փոքրագույնը պետք է ընտրել։ Այնպես չէ՞։ Ինքներդ դատեցեք. ցարի ժամանակ ձեր քիթ ու մռութն էին ջարդում, ձեր ձեռքով պատերազմից օգուտ էին քաղում։ Կերենսկու օրով էլ օգուտ են քաղում, բայց քիթ ու մռութ չեն ջարդում։ Կերենսկու օրով գոնե մի քիչ ավելի լավ է։ Բայց է՛լ ավելի լավ կլինի Կերենսկուց հետո, երբ իշխանությունը կանցնի բոլշևիկներին։ Բոլշևիկները պատերազմ չեն ուզում։ Երբ իշ-

խանությունը նրանց ձեռքում լինի, իսկական հաշտություն կկնքվի։ Ես Կերենսկու կողմը չեմ, նրա հերն է՛լ անիծած,— նրանք բոլորն էլ միևնույն մեռոնով են օծված։— Բունչուկը ժպտաց, թևքով սրբեց ճակատի քրտինքը, շարունակեց.— բայց ես ձեզ կոչ եմ անում չթափել բանվորների արյունը և առայժմ պաշտպանել ժամանակավոր կառավարությունը։ Ինչո՞ւ պաշտպանել։ Որովհետև եթե լինի Կորնիլովը, Ռուսաստանը կողողվի բանվորների արյունով, նրա օրով ավելի դժվար կլինի խլել իշխանությունը և հանձնել աշխատավոր ժողովրդին։

— Մի քիչ կաց, Իլյա Միտրիչ,— դուրս գալով հետին շարքերից, ասաց միջահասակ մի կազակ, որ նույնպես վայելչակազմ էր, ինչպես Բունչուկը. նա հազաց, մաքրեց կոկորդը, շփեց երկար ձեռները, որոնք նման էին հնամենի կաղնու բացված արմատներին, ու ժպտացող, բաց-կանաչ, մատաղ տերևների պես կպչուն աչքերը հառելով Բունչուկին, հարցրեց.— Դու լծի մասին խոսեցիր... Բա որ բոլշևիկները վերցնեն իշխանությունը, մեր վզին ի՞նչ լուծ կդնեն։

— Ինքդ քեզ վրա՞ պիտի լուծ դնես, ինչ է։

— Ո՞նց թե ինքս։

— Այնպես։ Բոլշևիկների օրով ո՞ւմ ձեռքին պիտի լինի իշխանությունը,— քո ձեռքին, եթե քեզ ընտրեն, կամ Դուգինի և կամ այս մարդու ձեռքին։ Կլինի ընտրովի իշխանություն, սովետ։ Հասկացա՞ր։

— Իսկ վերևից ո՞վ է լինելու։

— Ում որ ընտրեն։ Եթե քեզ ընտրեցին, ուրեմն դու էլ կլինես վերևում։

— Այդպե՞ս է որ։ Հո չե՞ս փչում, Միտրիչ։

Կազակները ծիծաղեցին, բոլորն էլ խոսեցին միանգամից, նույնիսկ դռան մոտ կանգնած ժամապահն էլ մի բոպի ետ քաշվեց տեղից, միջամտեց խոսակցության։

— Բա հողի մասին նրանք ի՞նչ են ասում։

— Ձե՞ն վերցնի մեր հողը։

— Պատերազմը կվերջացնե՞ն։ Թե՞ հիմի միայն խոստումներ են տալի, որ մեզ իրենց կողմը քաշեն։

— Դու մեզ ամեն բան ուղիղ պատմիր։

— Մենք այստեղ խարխափում ենք մթության մեջ։

— Ուրիշներին հավատալը վտանգավոր է։ Շատ են փչում...

— Երեկ մի նավաստի լաց էր լինում Կերենսկու համար, իսկ մենք նրան մազերից քարշ տվինք ու վագոնից դուրս գցեցինք։

— «Դուք,— ասում է,— հականեր եք...» Այ քեզ սարսաղ մարդ։

— Մենք այդ խոսքերը չենք հասկանում. ինչո՞վ կարելի է դրանք ուտել։

Բունչուկը դեպի բոլոր կողմերը դառնալով, ուշադիր նայում էր կազակներին, սպասում, որ նրանք հանդարտվեն։ Արդեն չքացել էր սկզբում եղած նրա անվստահությունը իր ձեռնարկման հաջողության նկատմամբ, և նա, տիրանալով կազակների տրամադրության, արդեն հաստատ գիտեր, որ ինչ կերպ էլ լինի, էշելոնը կկանգնեցնի Նարվայում։ Մի օր առաջ, երբ ներկայացել էր կուսակցության Պետրոգրադի շրջանային կոմիտեին և իրեն առաջարկել իբրև ագիտատոր Պետրոգրադին մոտեցող՝ Դոնի 1-ին դիվիզիայի զորամասերում աշխատելու համար, վստահ էր հաջողության նկատմամբ, բայց երբ հասել էր Նարվա, վստահությունը խախտվել էր։ Նա գիտեր, որ կազակների հետ ինչ-որ ուրիշ խոսքերով պետք է խոսել, երկյուղով զգում էր, որ թերևս ընդհանուր լեզու չգտնի, որովհետև, ինն ամիս առաջ վերադառնալով բանվորական միջավայրը, վերստին սերտորեն միաձուլվել էր նրա հետ,— ելույթներ ունենալիս գիտեր, որ իրեն լավ են ընդունում և հասկանում են կես խոսքից, իսկ այստեղ, իր հայրենակիցների մեջ պահանջվում էր մի ուրիշ, կիսով չափ մոռացված, սևահողի լեզու, մոդեսի ճկունություն, համոզելու ինչ-որ մի մեծ ուժ, որպեսզի ոչ միայն բորբոքիր, այլև վառեր, որպեսզի ոչնչացներ դարերով արմատացած երկյուղն անհնազանդության, ճշմեր քարացածությունը, ներշնչեր իր իրավացիության զգացումը ու նրանց տաներ իր հետևից։

Սկզբում, երբ սկսեց խոսել, հենց իր լսողությամբ իր ձայնի մեջ բռնում էր սայթաքող անվստահությունը, ինչ-որ մի կեղծիք, արհեստականություն, ասես կողմնակի կերպով ունկնդրում էր իր անհյութ բառերին, ու սարսափում էր բեռ-

բած փաստարկների անհամոզիչ բնույթից, տանջալից կերպով զոռ էր տալիս գլխին՝ որոնելով ինչ-որ հատու, ծանր բառեր, որոնցով ջարդեր, խորտակեր... Եվ դրա փոխարեն անասելի դառնությամբ զգում էր, թե ինչպես օճառի պղպջակների նման ցնդում են իր շուրթերից պոկվող թեթևամիտ արտահայտությունները, իսկ գլխի մեջ խճողվում են ամուլ, սայթաքող մտքերը։ Նա կանգնել էր քրտնախաշ վիճակում, ծանր շնչելով։ Խոսում էր միևնույն խոցող մտքով տարված,— «ինձ այսպիսի մեծ գործ են վստահել, և ահա ես իմ սեփական ձեռքով փչացնելու եմ այն... Բառերը չեմ կապակցում... ախր ի՞նչ է պատահել ինձ։ Մի ուրիշը իմ տեղը լիներ, հազար անգամ ավելի լավ կխոսեր ու կհամոզեր... է-է, գրողը տանի, որքա՜ն անշնորհք եմ ես»։

Կանաչ, կպչուն աչքերով կազակը, որ հարց էր տվել լծի մասին, սթափվեց կիսով չափ թմրած վիճակից. դրանից հետո սկսված խոսակցությունը ուշքի գալու, զորանալու հնարավորություն տվեց Բունչուկին, ու այնուհետև, ինքն էլ զարմանալով իր վրա, զգալով ուժերի անսովոր հորդումը և գունագեղ, սուր, հատու խոսքերի ամենաճոխ պաշարը, նա բռնկվեց, ու արտաքին հանգստության տակ թաքցնելով վրա հասած հուզմունքը, արդեն ծանրակշիռ ու ցասկոտ կերպով էր մեկնաբանում նենգամիտ հարցերը, խոսակցությունը տանում ինչպես այն ձիավորը, որը խաղաղացրել է մինչ այն չընտելացած, վազքից փրփրած ձիուն։

— Հապա ասա, ինչո՞վ է վատ Սահմանադիր ժողովը։

— Ձեր Լենինին հո գերմանացիներն են բերել... չէ՞։ Բա ո՞րտեղից է եկել... ծառի գլխի՞ց է իջել, ինչ է։

— Միտրիչ, դու քո ցանկությա՞մբ ես եկել, թե՝ ուղարկել են քեզ։

— Դոնի հողերը ո՞ւմ ձեռքը կընկնեն։

— Ցարի օրով մենք ինչո՞վ էինք վատ ապրում։

— Մենշևիկները հո նո՞ւյնպես ժողովրդի կողմն են։

— Մենք ունենք կազակների ներկայացուցիչների ժողով, իշխանությունը ժողովրդական է, մեր ինչի՞ն են պետք սովետները,— հարցնում էին կազակները։

Կեսգիշերից անց էր, երբ ցրվեցին։ Հետևյալ առավոտյան որոշեցին, որ երկու հարյուրյակներն էլ հավաքվեն մի-

տինգի։ Բունչուկը մնաց վագոնում գիշերելու։ Չիկամասովը նրան առաջարկեց պառկել իր հետ։ Քնելուց առաջ խաչակնքելով, պառկելով, նախազգուշացրեց.

— Իլյա Միտրիչ, կարելի է դու առանց վախենալու ես պառկում, ամա ներող եղիր... Մեր վրա ոջիլներ կան, ազբերս։ Եթե վրադ քաշվեն, չնեղանաս։ Այնպիսի մեծ-մեծ ոջիլներ կան, որ ուղղակի փորձանք է։ Ամեն մեկը խոլմոգորյան հորթի չափ կլինի։— Մի փոքր լռելուց հետո կամացուկ հարցրեց.— Իլյա Միտրիչ, բա Լենինը ի՞նչ ազգից է։ Մի խոսքով, նա ո՞րտեղ է ծնվել ու մեծացել։

— Լենինը։ Ռուս է։

— Մի՞թե։

— Այո, ռուս է։

— Չէ, ազբերս։ Երևում է, որ դու նրա մասին քիչ բան գիտես,— սեփական գերազանցության շեշտով ասաց Չիկամասովը։— Գիտե՞ս, որ նա մերոնցից է։ Դոնի կազակներից է, Սալսկի օկրուգից, Վելիկոկնյաժեսկայա ստանիցայից, հասկացա՞ր։ Ասում են, որ ծառայել էր իբրև հրետանավոր։ Նրա արտաքինն էլ է մերոնց նման, այնպես է, ինչպես ցածի կազակներինը,— թշերը լիքը, աչքերը խոշոր։

— Ո՞րտեղից ես լսել։

— Կազակներն էին խոսում իրար մեջ, ես էլ լսեցի։

— Ո՛չ, Չիկամասով։ Նա ռուս է, Սիմբիրսկի նահանգից։

— Չէ՛, չեմ հավատա։ Մինչև իսկ շատ պարզ է, որ չեմ հավատա։ Պուգաչը (Պուգաչև) հո կազա՞կ էր։ Բա Ստեփան Ռազինը։ Բա Երմակ Տիմոֆեևի՞չը։ Ըհը՛մ։ Բոլորը, ովքեր աղքատ ժողովրդին ցարերի դեմ են հանել,— բոլորն էլ կազակներից են։ Իսկ դու ասում ես՝ Սիմբիրսկի նահանգից է։ Մինչև իսկ, Միտրիչ, մարդ նեղանում է, որ այդպիսի բան է լսում...

Բունչուկը ժպտալով հարցրեց.

— Հենց այդպես էլ ասում են, որ կազա՞կ է։

— Կազակ է, այո, միայն թե հիմի ինքը չի ասում այդ բանը։ Ես մարդու երեսին նայեցի թե չէ, իսկույն ճանաչում եմ։— Չիկամասովը ծխեց, ու մախորկայի սուր հոտը փչելով Բունչուկի դեմքին, մտազբաղ հազաց։— Զարմանում եմ ես, է մենք այստեղ թունդ վիճեցինք. քիչ մնաց կռվեինք. եթե

նա, Վլադիմիր Իլյիչը մեր կազակներից է, հրետանավոր է, ո՞րտեղից կարող էր այդպիսի մեծ գիտություն ստանալ։ Ասում են, թե պատերազմի սկզբին նա գերի է ընկել գերմանացիներին, սովորել այնտեղ, հետո անցել բոլոր գիտությունները ու սկսել էր նրանց բանվորների բունտ առաջ բերել և ուսումնականներին նեղը լծել,— ու դրանք թունդ վախեցան։ «Գնա՛ ուր կուզես, մեծաճակատ,— ասում են,— Քրիստոս քեզ հետ, թե չէ դու այստեղ այնպիսի գործեր կբռնես, որ մեր տունը կքանդես»,— ու նրան ճանապարհ գցեցին Ռուսաստան, վախեցան, որ չլինի՞ թե նա բանվորներին ոտքի հանի։ Օ-օ՞. Նա ուժով մարդ է, հա՛-ա,— Չիկամասովը վերջին ֆրազն արտասանեց ո՛չ առանց պարծենկոտության և ուրախ ծիծաղեց մթության մեջ։— Դու նրան չե՞ս տեսել, Միտրիչ, չէ՞, ափսո՛ս։ Ասում են, թե նա շատ մեծ գլուխ ունի։— Չիկամասովը մի քիչ հազաց, քթածակերից բաց թողեց ծխի գորշ քուլաները ու վերջացնելով ծխելը, շարունակեց.— Ա՛յ թե կնանիքը ինչպիսի մարդիկ պիտի ծնեին, հա՛-ա։ Գլո՛ւխ է, գլո՛ւխ։ Նա հլա դեռ շատ թագավորներ կգցի թախտից...— ու շունչ առավ.— Չէ՛, Միտրիչ, դու ինձ հետ մի վիճի. Իլյիչը կազակ է... Ի՞նչ կարիք կա դա թաքուն պահել։ Սիմբիրսկի նահանգում այդպիսիները երբեք էլ չեն լինում։

Բունչուկը լռեց, երկար պառկեց ժպտալով, առանց աչքերը փակելու։

Շուտ չքնեց. իրոք որ շատ ոջիլներ էին քաշվել նրա վրա, սողում էին շապկի տակ, կծում, դաղում անտանելի քոսի նման. կողքին հոգոց հանում, մարմինն էր քորում Չիկամասովը, մեկի փնչացող, անհանգիստ ձին խախտում էր անդորրությունը։ Նա արդեն քուն էր մտնում, բայց գժտված ձիերը կռվեցին, սկսեցին ոտները խփել հատակին, կատաղի փընչալ։

— Հերիք է կատաղես, անտեր... բը՛ռռ, բը՛ռռ, անիծված...— տեղից վեր թռչելով, քնկոտ, բարակ ձայնով բղավեց Դուգինը ու ինչ-որ ծանր բանով խփեց մոտիկ կանգնած ձիուն։

Բունչուկը ոջիլներից տանջվելով, սրտնեղությամբ գիտակցելով, որ արդեն քունը փախել է, շուռ եկավ մյուս

կողքի վրա, սկսեց մտածել հետևյալ օրվա միտինգի մասին։ Փորձեց պատկերացնել, թե ինչպես կդիմադրեն սպաները, քմծիծաղ տվեց. «Երևի կփախչեն, եթե կազակները միահամուռ կերպով բողոքեն, ասենք, ո՞վ գիտե ինչ կլինի։ Համենայն դեպս կպայմանավորվեմ կայազորի կոմիտեի հետ»։ Մի տեսակ ակամա վերհիշեց պատերազմի մի միջադեպ, 1915 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած մի գրոհ, և ապա հիշողությունը, ասես ուրախանալով, որ իրեն ուղղել են դեպի ծանոթ, տափտափած արահետը, սկսեց համառորեն ու չարախնդությամբ մեջտեղ բերել կցկտուր երևույթներ,— դեմքեր, սպանված ռուս և գերմանացի զինվորների այլանդակ պոզաներ, այլևայլ խոսքեր, երբեմն տեսած պեյզաժների անգունագեղ, ժամանակի ընթացքում աղոտած բեկորներ, չարտահայտված, հայտնի չէ ինչու պահպանված մտքեր, թնդանոթաձգության արձագանքներ՝ ներքուստ հազիվ զգալի, գնդացրի ծանոթ տկտկոց և ժապավենի խշշոց, հոխորտալից մեղեդի, մի ժամանակ սիրած կնոջ բերանի անչափ գեղեցիկ, մի փոքր խամրած տեսքը ու դարձյալ՝ պատերազմի բեկորներ,— սպանվածներ, եղբայրական շիրիմների ցածրանիստ թմբեր...

Բունչուկն անհանգստացավ. ելավ, նստեց, ասաց լսելի ձայնով թե մտածեց՝ «Մինչև մահս չեմ մոռանալու այս հուշերը, և ոչ միայն ես, այլև բոլոր նրանք, ովքեր կենդանի կմնան, չեն մոռանա։ Խեղեցին, անարգեցին կյանքը... Նզովվածներ, նզովվածնե՛ր... Դուք մահով էլ չեք քավի ձեր հանցանքը...»

Վերհիշեց նաև տասներկու տարեկան Լուշային, Պետրոգրադի մետաղագործ բանվորի, իր ա՛յն ընկերոջ աղջկան, որը սպանվել էր պատերազմում և որի հետ ինքը մի ժամանակ աշխատել էր Տուլայում։ Երեկոյան գնում էր Բուլվարով։ Աղջիկը, այդ անբարեկազմ, վտիտ անչափահասը, նստել էր վերջին նստարանին, համարձակ տարածել բարալիկ ոտները, ծխում էր։ Նրա թառամած դեմքի վրա — հոգնած աչքեր, ներկած, անժամանակ հասունությունից երկարած շրթունքների անկյուններում — դառնություն։ «Չե՞ք ճանաչում, քեռի»,— խռպոտ հարցրեց նա, ժպտաց պրոֆեսիոնալ սովորությամբ ու վեր կացավ, մանկականորեն անօգ ու

դառն լացեց կորացած, գլուխը սեղմելով Բունչուկի արմունկներին։

Բունչուկը քիչ մնաց շնչասպառ լիներ իրեն համակած, գազի պես թունավոր ատելությունից. գունատվելով, կրճատացրեց ատամները, հառաչեց։ Հետո երկար շփում էր մազոտ կուրծքը, շրթունքները դողում էին. նրան թվում էր, որ ատելությունը վառվում է կրծքում, կիզվող խարամի մի կտորի նման, ու մարմրելով, խանգարում շնչառությունը ու պատճառում այդ ցավը ձախ կողքին, սրտի տակ։

Նա չքնեց մինչև առավոտ։ Լուսաբացին դեմքը դեղնած, սովորականից ավելի մռայլ գնաց երկաթուղայինների կոմիտե, պայմանավորվեց, որ կազակական էշելոնը Նարվայից դուրս չեն թողնի, ու մի ժամից հետո դուրս եկավ կայազորի կոմիտեի անդամներին որոնելու։

Գնացք վերադարձավ ժամը ութին։ Քայլելիս ամբողջ մարմնով զգում էր առավոտյան թեթև զովությունը՝ տարտամորեն ուրախանալով թե իր ճանապարհորդության հավանական հաջողությունից, թե արևից, որ ընկել էր համբարանոցի ժանգոտ կտուրից և թե որտեղից-որտեղ լսվող կանացի ձայնի զրնգուն, քաղցրահնչուն տեմբրից։ Արշալույսից առաջ ուժեղ, հորդառատ ու կարճատև անձրև էր եկել։ Երկաթգծերի ավազոտ հողը ողողատված էր, պահպանել էր փոքրիկ առվակների հետքերը, անձրևի քաղցրավուն բույր էր արձակում և իր մակերեսին, այնտեղ, ուր թաղվել էին անձրևի կաթիլները, պահպանել էր մի քիչ չորացած, փոքրիկ փոսիկների խիտ ցանքը,— ասես չեչոտվել էր ծաղիկ հիվանդությունից։

Գնացքի կողքից անցնելով, դեպի Բունչուկն էր գալիս շինել հագած, բարձրաճիտք ու ցեխոտ սապոգներով մի սպա։ Բունչուկը ճանաչեց յասավուլ Կալմիկովին, մի քիչ դանդաղեցրեց քայլերը՝ սպասելով նրա մոտենալուն։ Նրանք հանդիպեցին միմյանց։ Կալմիկովը կանգ առավ, նրա շեղադիր, սև աչքերը սառն փայլ արձակեցին։

— Խորունժի Բունչո՞ւկ։ Դու ազատ ե՞ս։ Ներիր, ես քեզ ձեռք չեմ տա...

Նա պինդ սեղմեց շրթունքները, ձեռները դրեց շինելի գրպանները։

— Ես մտադիր էլ չեմ քեզ ձեռք մեկնելու... Դու շտապեցիր,— հեգնանքով պատասխանեց Բունչուկը։

— Դու այստեղ կաշի՞դ ես փրկում, հա՞։ Թե՞... Պետրոգրադից ես եկել։ Գուցե քոսոտ Կերենսկու կողմի՞ց։

— Դա ի՞նչ է, հարցաքննությո՞ւն։

— Օրինական հետաքրքրություն երբեմնի դասալքած մարդու բախտի մասին։

Բունչուկը թաքցնելով քմծիծաղը, թոթվեց ուսերը։

— Կարող եմ հանգստացնել քեզ. ես Կերենսկու կողմից չեմ եկել։

— Բայց դուք հո այժմ, վերահաս վտանգի հանդեպ, սրբտանց միավորվում եք։ Հը՛մ, այդպե՛ս, այնուամենայնիվ ո՞վ ես դու։ Ուսադիրներ չունես, զինվորի շինել ես հագել...— Կալմիկովը ոռնգները ծռմռեց, արհամարհանքով ու ափսոսանքով դիտեց Բունչուկի մի քիչ կորացած կերպարանքը։— Քաղաքական գործակա՞լ ես, հը՞,— ու պատասխանի չսպասելով՝ շուռ եկավ, գնաց ձեռները թափահարելով։

Դուգինը իր վագոնի առաջ դիմավորեց Բունչուկին։

— Ո՞րտեղ ես, է՛, միտինգը արդեն սկսվել է։

— Ի՞նչպես թե սկսվել է։

— Այնպես, էլի՛։ Մեր հարյուրյակի հրամանատար Կալմիկովը բացակա էր, իսկ այսօր շոգեքարշով եկավ Պետերից, հավաքեց կազակներին։ Հենց հիմի գնաց, որ նրանց գլուխը եղի։

Բունչուկը մի քիչ կանգնեց, հարցրեց, թե Կալմիկովը երբվանի՞ց էր գործուղվել Պետրոգրադ։ Դուգինի ասածից իմացավ, որ Կալմիկովը համարյա մի ամիս բացակայել էր։

«Նա մեկն է ռևոլյուցիայի այն դահիճներից, որոնց Կոռնիլովը Պետեր էր ուղարկում ռումբ նետելն ուսումնասիրելու պատրվակով։ Ուրեմն իսկական կոռնիլովական է։ Լա՞վ»,— կցկտուր մտածեց նա՝ Դուգինի հետ գնալով միտինգի վայրը։

Համբարանոցից դենը — կազակական վերնաշապիկների ու շինելների գորշ-կանաչ զանգված։ Մեջտեղում, սպաներով շրջապատված կանգնել էր Կալմիկովը շուռ տված տակառի վրա, հատու ձայնով, բառերը շեշտելով, բղավում էր.

— ...հասցնել հաղթական վախճանի։ Մեզ վստահում են, որ մենք կարդարացնենք այդ վստահությունը։ Այժմ ես

կկարդամ գեներալ Կոռնիլովի հեռագիրը, որ ուղղված է կազակներին։

Նա ավելորդ հապճեպությամբ ֆրենչի կողքի գրպանից հանեց ճմլտված մի թերթիկ, փսփսաց էշելոնի պետի ականջին։

Բունչուկն ու Դուգինը մոտեցան, խառնվեցին կազակներին։

Կազակներ, թանկագին հայրենակիցներ,— ազդու և ոգևորված կարդում էր Կալմիկովը,— մի՞թե ձեր նախնիների կյանքի գնով չէր, որ լայնանում ու ընդարձակվում էին ռուսաստանյան պետության սահմանները, մի՞թե ձեր հզոր առաքինությամբ, ձեր սխրագործություններով, զոհերով ու հերոսությամբ չէր, որ ուժեղ էր մեծ Ռուսաստանը։ Դուք, խաղաղ Դոնի, սքանչագեղ Կուբանի, բուռնաթափ Թերեքի ազատ, անկաշկանդ զավակներ, Ուրալի, Օրենբուրգի, Աստրախանի, Սեմիրեչենսկի տափաստաններից ու լեռներից և հեռավոր Անդրբայկալից, Ամուրից և Ուսսուրիից թռած հզոր արծիվներ, միշտ էլ պահպանել ենք ձեր դրոշակների պատիվն ու փառքը, և ռուս աշխարհը լեցուն է ձեր հայրերի ու պապերի սխրագործությունների վերաբերյալ զրույցներով։ Այժմ հասել է ժամը, երբ դուք պետք է օգնություն հասնեք հայրենիքին։ Ես մեղադրում եմ ժամանակավոր կառավարությանը անվճռական գործողությունների, կառավարելու անճարակության և անընդունակության համար, երկրի ներսում գերմանացիների լիակատար տեր ու տնօրինության համար, որի մասին է վկայում Կազանում եղած պայթյունը,— այնտեղ պայթել է մոտ մեկ միլիոն արկ և ոչնչացել 12000 գնդացիր։ Ավելին։ Ես մեղադրում եմ կառավարության մի քանի անդամներին՝ հայրենիքին ուղղակի դավաճանելու համար և դրա վերաբերմամբ բերում եմ հետևյալ ապացույցը. օգոստոսի 3-ին, երբ ես եղա ժամանակավոր կառավարության նիստում, Ձմեռային պալատում, մինիստր Կերենսկին ու Սավինկովն ինձ ասացին, թե չի կարելի ամեն ինչի մասին խոսել, որովհետև մինիստրների մեջ կան անհավատարիմ մարդիկ։ Պարզ է, որ այդպիսի կառավարությունը երկիրը դեպի կործանում է տանում. որ չի կարելի հավատալ այդպիսի կառավարության և նրա օրով չի կարող փրկություն լինել դժբախտ Ռուսաստանի համար... Այս պատճառով, երեկ, երբ ժամանակավոր կառավարությունը, ի հաճույս թշնամիների, ինձանից պահանջեց թողնել գերագույն զլխավոր հրամանատարի պաշտոնը, ես, որպես կազակ, խղճից ու պատվից դրդված, ստիպված էի հրաժարվել այդ պահանջը կատարելուց, գերադասելով մեռնել կռվի դաշտում, քան թույլ տալ խայտառակություն և դավաճանություն հայրենիքի հանդեպ։ Կազակնե՛ր, ռուս աշխարհի՛ ասպետներ, դուք խոստացել եք ինձ հետ միասին ոտքի ելնել հայրենիքի փրկության համար, երբ ես այդ հարկավոր համարեմ։ Հասել է ժամը,— հայրենիքը մահվան նախօրյակն է ապրում, ես չեմ ենթարկվում ժամանակավոր կառավարության կարգադրություններին և ազատ Ռուսաստանի փրկության համար գնում եմ նրա դեմ և նրա ա՛յն

անպատասխանատու խորհրդականների դեմ, որոնք ծախում են հայրենիքը։ Կազակնե՛ր, պաշտպանեցեք քաջարի կազակության պատիվն ու փառքը, և դրանով դուք կփրկեք հայրենիքը ու ռևոլյուցիայի նվաճած ազատությունը։ Ուրեմն լսեցեք ու կատարեցեք իմ հրամանները։ Եկե՛ք իմ հետևից։ 1917 թվականի օգոստոսի 28։ Գերագույն գլխավոր հրամանատար գեներալ Կոռնիլով։

Կալմիկովը մի փոքր լռեց. ծալելով թերթիկը, բղավեց.

— Բոլշևիկների և Կերենսկու ագենտները խոշընդոտներ են հարուցում մեր զորամասերը երկաթուղով փոխադրելու դեմ։ Ստացված է գերագույն գլխավոր հրամանատարի հրամանը,— եթե հնարավոր չլինի փոխադրությունը կատարել երկաթուղով, ապա պետք է Պետրոգրադի վրա գնալ երթական կարգով։ Հենց այսօր մենք ճանապարհվում ենք։ Պատրաստվեցեք վագոններից իջնելու։

Բունչուկը արմունկներով ոմանց դես-դեն հրելով, անցավ մեջտեղը. առանց մոտենալու սպաների խմբին, հնչեղ ձայնով, միտինգավարի գոռաց.

— Ընկե՛ր կազակներ, ինձ ձեզ մոտ են ուղարկել Պետրոգրադի բանվորներն ու զինվորները։ Ձեզ տանում են եղբայրասպան պատերազմի, ռևոլյուցիան ջախջախելու համար։ Եթե դուք ուզում եք ժողովրդի դեմ գնալ, եթե դուք ուզում եք վերականգնել միապետությունը,— գնացեք... Բայց Պետրոգրադի բանվորները և զինվորները հույս ունեն, որ դուք կայներներ չեք լինի։ Նրանք ձեզ եղբայրական բոցավառ ողջույն են ուղարկում և ուզում են, որ դուք լինեք նրանց ոչ թե թշնամիները, այլ դաշնակիցները...

Նրան թույլ չտվեցին վերջացնել խոսքը։ Անասելի աղմուկ բարձրացավ, աղաղակների մրրիկը ասես Կալմիկովին պոկեց տակառից։ Կռանալով, նա արագ քայլեց դեպի Բունչուկը. մի քանի քայլ հեռավորությամբ շուռ եկավ կրունկների վրա։

— Կազակնե՛ր, խորունժի Բունչուկը անցյալ տարի փախել էր ֆրոնտից, դուք այդ գիտեք։ Եվ ի՞նչ, մի՞թե մենք պիտի լսենք այս վախկոտին և դավաճանին։

Վեցերորդ հարյուրյակի հրամանատարը, զորական ավագ Սուկինը իր հաստ, որոտալից ձայնով խլացրեց Կալմիկովի ձայնը.

— Ձերբակալե՛լ նրան, սրիկային։ Մենք արյուն էինք թափում, իսկ նա իրեն փրկում էր թիկունքում... Բռնեցե՛ք նրան։

— Հլա սպասենք, աղբե՛ր։

— Թող խոսի։

— Տո՛, խելքի եկեք, ուրիշի բերանը մի՛ փակեք։ Թող պարզի՛ իրեն ուղղությունը։

— Ձերբակալե՛լ։

— Դասալիքները մեզ պետք չեն։

— Խոսի՛ր, Բունչուկ։

— Միտրի՛չ, մի լավ սխկի դրանց, է՛։

— Կորչի՛-ի՛-ի։

— Սո՛ւս, շան ծիծ կերած։

— Կոթի՛ր դրանց, կոթի՛ր դրանց։ Բունչուկ։ Մի՛ խնայիր։

Տակառի վրա թռավ բարձրահասակ, առանց գլխարկի մի կազակ, գնդի ռևկոմի անդամը։ Նրա բարակ պարանոցի վրա օձաձև պտտվում էր բոլորովին խուզած, ձմեռվա սեխի պես կոնավոր գլուխը։ Նա կազակներին ջերմորեն կոչ էր անում չենթարկվել ռևոլյուցիայի դավաճան գեներալ Կոռնիլովին, խոսում էր ժողովրդի դեմ կռվելու կործանարար հետևանքի մասին, ու դիմելով Բունչուկին, այսպես վերջացրեց իր խոսքը.

— Իսկ դուք, ընկեր, չկարծեք, թե մենք ձեզ արհամարհում ենք ոնց որ պարոնայք սպաները։ Մենք ձեզ ուրախությամբ ենք ընդունում և հարգում ինչպես ժողովրդի ներկայացուցչին, ու մեկ էլ նրա համար ենք հարգում, որ դուք սպա լինելով, չէիք ճնշում կազակներին, այլ մեզ հետ ոնց որ թե աղբոր պես էիք վարվում։ Մենք ձեզանից կոպիտ խոսք չենք լսել, ու չկարծեք, որ մենք, անուսում մարդիկ, չենք հասկանում վարվեցողությունը,— անուշ խոսքը ոչ թե միայն մարդը, այլ անասունն է՛լ է հասկանում։ Խորունկ գլուխ ենք տալի ձեզ ու խնդրում ենք հայտնել Պիտերի բանվորներին ու զինվորներին, որ մենք նրանց վրա ձեռք չենք բարձրացնի։

Կարծես դափ զարկեցին. հավանության աղաղակների որոտմունքը հասավ լարվածության վերջին աստիճանին ու դանդաղ, մեղմանալով, դադարեց։

Կուռատելով բարեկազմ իրանը, Կալմիկովը վերստին

բարձրացավ տակառի վրա։ Հևալով, մեռելի պես գունատվելով, նա խոսում էր ալեհեր Դոնի փառքի ու պատվի, կազակության պատմական առաքելության մասին, սպաների ու կազակների համատեղ թափած արյան մասին։

Կալմիկովին փոխարինեց ամրակազմ, բաց-շիկամազ մի կազակ։ Բունչուկի դեմ ուղղված նրա չարամիտ ճառը ընդհատեցին, հռետորի թևից բռնեցին ու ներքև քաշեցին։ Տակառի վրա թռավ Չիկամասովը։ Ձեռները թափահարելով այնպես, որ կարծես փայտ էր ջարդում,— գոռաց.

— Ձե՛նք գնա։ Ձե՛նք իշնի վագոններից։ Հեռագրի մեջ գրված է, որ իբր թե կազակները խոստացել են ոգնել Կոռնիլովին, իսկ ո՞վ է մեզ հարցրել։ Մենք նրան խոսք չենք տվել։ Կազակական Միության խորհրդի սպաներն են խոսք տվել։ Գրեկովը պոչ է խաղացրել, թող նա էլ օգնի...

Հետզհետե ավելի հաճախ էին հերթափոխվում խոսողները։ Բունչուկը կանգնել էր լայնաճակատ գլուխը թեքած, դեմքը գորշ-կարմրավուն, մթին գույն էր առել, պարանոցի ու քունքերի վրա, ուռած երակներում շեշտակի խփում էր արյունը։ Խտանում էր էլեկտրականացած մթնոլորտը։ Զգացվում էր, որ եթե էլի մի քիչ այդպես շարունակվի, որևէ անմիտ վարմունքով, արյունո՛վ միայն կխաղաղվի լարվածությունը։

Կայազորի զինվորները խմբով եկան կայարանից, ու սպաները միտինգից հեռացան։

Կես ժամից հետո Դուգինը հևալով վազեց Բունչուկի մոտ։

— Միտրիչ, ի՞նչ անենք... Կալմիկովը ինչ-որ պատրաստություն է տեսնում։ Հիմի վագոններից իջեցնում են գնդացիրները, ու ձիավոր սուրհանդակին ինչ-որ տեղ ուղարկեցին։

— Գնանք այնտեղ։ Հավաքիր մի քսան կազակ։ Շո՛ւտ։

Էշելոնի պետի վագոնի մոտ Կալմիկովը ու երեք սպա գնդացիրները բեռնում էին ձիերին։ Բունչուկն առաջինը մոտեցավ, նայեց կազակներին, ու ձեռքը տանելով շինելի գոբպանը, հանեց բոլորովին նոր, խնամքով մաքրված սպայական «ենագան» ատրճանակը։

— Կալմիկո՛վ, դու ձերբակալված ես։ Ձեռնե՞րդ....

Կալմիկովը ձիուց մի կողմ թռավ, կողքի թեքվեց, ձեռքը

տարավ ատրճանակի պատյանին, բայց այն հանել չկարողացավ. գնդակը վզզալով թռավ նրա գլխավերևից. կանխելով կրակոցի ձայնը, Բունչուկը խուլ, զայրագին գոռաց.

— Ձեռնե՞րդ...

Նրա նագանի հրահանը, բանալով զարկանի փոքրիկ կտուցը, դանդաղ, կիսով չափ բարձրացավ։ Կալմիկովը կկոցած աչքերով հետևում էր նրան, դժվարությամբ բարձրացնում ձեռները, ճքացնում մատները։

Սպաները դժկամ հանձնեցին զենքերը։

— Հրամայում եք թրերս էլ հանենք,— քաղաքավարի հարցրեց մի երիտասարդ խորունժի-գնդացրորդ։

— Այո՛։

Կազակները ձիերից իջեցրին գնդացիրները, տարան վագոն։

— Սրանց հսկելու համար ժամապահներ կարգել,— դիմեց Բունչուկը Դուգինին։— Չիկամասովը կձերբակալի մյուսներին ու այստեղ կբերի։ Լսո՞ւմ ես, Չիկամասով։ Իսկ Կալմիկովին ես ու դու կտանենք կայազորի ռևկոմ։ Ցասավուլ Կալմիկով, բարեհաճիր առաջ անցնել։

— Ա՛յ քեզ ճարպկությո՞ւն,— հիացմունքով ասաց սպաներից մեկը, թռավ վագոն, աչքերով ուղեկցեց հեռացող Բունչուկին, Դուգինին ու Կալմիկովին։

— Պարոններ, ամոթ է, պարոննե՛ր։ Մենք մեզ երեխաների պես պահեցինք։ Ոչ ոք գլխի չընկավ իր ժամանակին խփելու այդ սրիկային։ Երբ նա ատրճանակն ուղղեց Կալմիկովի վրա, այստեղ հարկավոր էր գլորել նրան, ու պրծավ գնաց։— Զորական ավագ Սուկինը վրդովված նայեց սպաներին, դողդոջուն մատներով դանդաղորեն մի սիգար հանեց ծխախոտատուփից։

— Նրանք հո մի ամբողջ դասակ էին... Բոլորիս էլ կգընդակահարեին,— մեղավորի տոնով ասաց խորունժի-գընդացրորդը։

Սպաները լուռ ծխում էին, երբեմն նայում միմյանց։ Դեպքի արագ կատարումը շշմեցրել էր նրանց։

Կալմիկովը, կծոտելով սև բեղի ծայրը, առժամանակ լուռ էր քայլում։ Նրա ձախ, ուռուցիկ թուշն այրված էր, կարծես նա ապտակ էր ստացել։ Հանդիպող բնակիչները նայում էին

զարմացած, կանգ էին առնում, փսփսում։ Նարվայի վերևում մռայլվում էր իրիկնադեմի մառախլապատ երկինքը։ Ճանապարհների վրա թափված էր կեչիների տերևների ոսկին,— օգոստոսը հեռանալիս թափթփել էր այն։ Եկեղեցու կանաչ գմբեթի վերևից ագռավներ էին թռչում։ Հեռո՜ւ-հեռվում, կայարանից, մթնշաղված դաշտերից դենը արդեն փռվել էր գիշերը, իսկ Նարվայից դեպի Պսկով, դեպի Լուգա, երկնքի խոպանով, ամայությունով մեկ դեռևս սահում էին երեկոյի կապարե ներկերով շպարված, պատառոտված ամպերը. անցնելով աննշմար սահմանը, գիշերը նեղում էր մթնշաղը։

Կայարանի մոտ Կալմիկովը կտրուկ շուռ եկավ, թքեց Բունչուկի երեսին։

— Սրիկա՜-ա...

Բունչուկը թքից խույս տալով, զայրացած բարձրացրեց հոնքերը, ձախ ձեռքով երկար սեղմեց դեպի գրպանը սահող աջ ձեռքի դաստակը։

— Գնա՜...— զոռով արտասանեց նա։

Կալմիկովը քայլեց այլանդակ հայհոյելով, բերանից կեղտոտ բառեր թափելով, որոնք առաջացել էին ռազմաճակատում, մահացու թախծից, ահից, հուսալքումից ու ցավից։

— Մատնի՛չ, դավաճա՛ն, դու սրա համար պատասխան կտաս,— բղավում էր նա հաճախ կանգ առնելով, քշելով Բունչուկի վրա։

— Գնա՛, խնդրում եմ...— ամեն անգամ հորդորում էր Բունչուկը։

Ու Կալմիկովը սեղմելով բռունցքները, կրկին պոկվում էր տեղից, քայլում օրորվելով, ինչպես վազքից ուժասպառ եղած ձի։ Նրանք մոտեցան ջրմուղին։ Կալմիկովն ատամները կրճտացնելով՝ բղավում էր.

— Դուք ոչ թե կուսակցություն եք, այլ հասարակության գարշելի տականքների բանդա։ Ո՞վ է ձեզ ղեկավարում,— գերմանական գլխավոր շտաբը։ Բոլշևիկնե՛ր... հա՜-հա՜-հա՜։ Ճիվաղներ։ Ձեր կուսակցությունը, այդ խառնամբոխին գնում են ինչպես բ... գյադա-գյուղաներ... ծախեցեք հայրենիքը... Ես ձեզ բոլորիդ մի կախաղանից կկախեի... Օ-օ՜-օ։ Կգա՜ ժամանակը... Ձեր այդ Լենինը երեսուն մարկով ծախեց

Ռուսաստանը, չէ՞... Կուլ տվեց միլիոնը ու անհայտացավ... տաժանակիրը...

— Կանգնի՛ր պատի տակ,— ձայնը երկարացնելով, կակազելով, բղավեց Բունչուկը։

Դուգինը վախեցավ, անհանգիստ շարժումներ արեց։

— Ի՛լյա Միտրիչ, կաց, ի՞նչ ես անում, սպասի-ի՛ր...

Բունչուկը զայրույթից այլանդակված, մթնած, դեմքով հարձակվեց Կալմիկովի վրա, ուժեղ խփեց նրա քունքին։ Ոտների տակ ճմռթելով Կալմիկովի գլխից ընկած գլխարկը, նրան քարշ տվեց դեպի ջրմուղի մթին պատը։

— Կանգնի-ի՛ր։

— Ի՞նչ ես անում... է՛յ... Չհամարձակվե՛ս... Չհամարձակվես խփել...— դիմադրելով՝ բռռում էր Կալմիկովը։

Մեջքը խուլ զարկելով ջրմուղի սև պատին, նա շտկվեց, հասկացավ.

— Ուզում ես սպանե՞լ։

Բունչուկը կողքի թեքվելով, հապճեպ քաշեց ատրճանակը, որի հրահանը կպել էր գրպանի աստառին։

Կալմիկովը մի քայլ արեց դեպի առաջ՝ արագ կոճկելով շինելի բոլոր կոճակները։

— Կրակիր, շան որդի, կրակիր։ Տես, թե ինչպես են կարողանում մեռնել ռուս սպաները... Ես մեռնելուց առա՜-աջ...

Գնդակը մտավ նրա բերանը։ Ջրմուղի հետևում, սանդղաձև բարձրությամբ մեկ հնչեց խոպոտ արձագանքը. Երկրորդ քայլն անելիս սայթաքելով, Կալմիկովը ձախ ձեռքով բռնեց գլուխը, ընկավ։ Կծկվեց կլոր աղեղի ձևով, արյունից սևացած ատամները բերանից թափեց կրծքին, մշմշալով ճպճպացրեց լեզուն։ Հենց որ նրա մեջքը շտկվեց ու ընկավ թաց խիճի վրա, Բունչուկը մի անգամ էլ կրակեց։ Կալմիկովը գալարվեց, շուռ եկավ կողքի, քուն մտնող թռչունի նման գլուխը տարավ ուսին, կարճ հեծկլտաց։

Ճանապարհների առաջին խաչմերուկում Դուգինը հասավ Բունչուկին։

— Մի՛տրիչ... Ի՞նչ արեցիր, Միտրիչ... Ինչի՞ համար նրան սպանեցիր։

Բունչուկը սեղմեց Դուգինի ուսերը. բորբոքված, աներեր

հայացքը հառելով նրա աչքերին, տարորեն հանգիստ, մաքած ձայնով ասավ.

— Կամ նրանք կչախչախեն մեզ, կամ մենք — նրանց... Միջին ճանապարհ չկա։ Գերիներ չկան։ Արյան դեմ — արյուն։ Ով ում... Ոչնչացման պատերազմ... Հասկացա՞ր։ Այնպիսիներին, ինչպես Կալմիկովն էր, պետք է ոչնչացնել, ճզմել ինչպես իժերին։ Պետք է գնդակահարել նաև նրանց, ովքեր խրդճում են այդպիսիներին... Հասկացա՞ր։ Ի՞նչ ես քիթդ կախել։ Արիացիր, չա՞ր եղիր։ Եթե Կալմիկովը իշխանություն ունենար, մեզ կգնդակահարեր առանց պապիրոսը բերանից հանելու, իսկ դու... է՜հ, փսլնքո՜տ։

Դուգինի գլուխը երկար դողում էր, ատամները իրար էին զարկվում, և նա ինչ-որ անհեթեթ շփոթությամբ էր գետնին դնում խունացած սապոգներով մեծ ոտները։

Լուռ քայլում էին նեղլիկ փողոցի դատարկ հունով։ Բունչուկը երբեմն ետ էր նայում։ Նրանց վերևում, մթության մեջ դեպի արևելք էին սահում սև ու սուգ հագած, ցածր ամպերը։ Դրանց միջից, օգոստոսյան երկնքի մի փոքրիկ կտորից մեռելի կանաչ, ծուռ աչքի նման նայում էր երկկվա անձրևով լվացված կիսալուսինը։ Ճանապարհների մոտիկ խաչմերուկում, միմյանց սեղմվելով, կանգնել էին մի զինվոր և ուսերին սպիտակ շալ գցած մի կին։ Զինվորը գրկում էր կնոջը, քաշում դեպի իրեն, շշնջում, իսկ կինը ձեռները դեմ անելով նրա կրծքին, ետ էր գցում գլուխը, կերկերուն ձայնով մրմնջում՝ «Չեմ հավատում, չե՛մ հավատում»,— և խուլ, չարաճճիորեն ծիծաղում էր։

XVIII

Օգոստոսի 31-ին Պետրոգրադում ինքնասպանություն գործեց Կերենսկու կողմից այնտեղ կանչված գեներալ Կրիմովը։

Մեղայականով դեպի Ձմեռային պալատ գնացին Կրիմովի բանակի դելեգացիաները և զորամասերի հրամանատարները։ Այն մարդիկ, ովքեր կարճ ժամանակ առաջ ժամանակավոր կառավարության դեմ կռվելու էին գնում, հիմա քրծնությամբ գլուխ էին խոնարհում Կերենսկու առաջ, հավատելով նրան իրենց հավատարիմ հպատակության զգացումները։

Բարոյապես ջախջախված լինելով, Կրիմովի բանակը դեռ հոգեվարքի մեջ էր. զորամասերը ինքնագլուխ էին ընթանում դեպի Պետրոգրադ, բայց այդ շարժումն արդեն կորցրել էր ամեն մի իմաստ, որովհետև կոռնիլովյան խռովությունը մոտենում էր իր վախճանին, մարում էր բենգալյան կրակի պես վերև նետված ռեակցիայի կայծը, ու հանրապետության ժամանակավոր կառավարիչը,— ճիշտ է, այդ օրերի ընթացքում կորցրել էր ուռած թշերի մսոտությունը,— նապոլեոնավարի ցնցելով կաշվե սոնապանների մեջ սեղմված սրունքները, կառավարության հերթական նիստում արդեն խոսում էր «քաղաքական լիակատար ստաբիլիզացիայի» մասին։

Կրիմովի մահից մի օր առաջ գեներալ Ալեքսեևը նշանակվեց գերագույն գլխավոր հրամանատար։ Կոռեկտ ու բծախնդիր Ալեքսեևը, հասկանալով իր դրության ամբողջ ողորմելի երկիմաստությունը, սկզբում կտրականապես հրաժարվեց, բայց հետո ընդունեց պաշտոնը՝ ղեկավարվելով լոկ մի ցանկությամբ,— թեթևացնել Կոռնիլովի և ա՛յն մարդկանց վիճակը, ովքեր այսպես թե այնպես մասնակցել էին հակակառավարական խռովությունը կազմակերպելուն։

Օգոստոսի 31-ին ճանապարհից նա ուղիղ հեռագրաթելով բանակցեց գլխավոր զորակայանի հետ՝ փորձելով իր համար պարզել Կոռնիլովի վերաբերմունքը դեպի իր նշանակումը և ժամանումը։ Տաղտկալի բանակցությունները ընդմիջումով տևեցին մինչև ուշ գիշեր։

Նույն օրը Կոռնիլովի մոտ տեղի էր ունենում շտաբի պաշտոնյաների և նրան մոտիկ անձանց խորհրդակցություն։ Նրա դրած ա՛յն հարցի առթիվ, թե արդյո՞ք նպատակահարմար է հետագա պայքարը ժամանակավոր կառավարության դեմ, խորհրդակցությանը ներկա գտնվողների մեծամասնությունը արտահայտվեց պայքարը շարունակելու օգտին։

— Խնդրում եմ ձեզ արտահայտվել, Ալեքսանդր Սերգեևիչ,— դիմեց Կոռնիլովը Լուկոմսկուն, որը լռում էր ամբողջ խորհրդակցության ընթացքում։

Վերջինը զուսպ, բայց վճռական խոսքերով առարկում էր երկպառակտչական կռիվը շարունակելու դեմ։

— Անձնատո՞ւր լինել,— խստորեն ընդհատելով նրան, հարցրեց Կոռնիլովը։

Լուկոմսկին թոթվեց ուսերը։

— Հետևություններն ինքնին են բխում։

Դեռ էլի կես ժամ շարունակվեցին խոսակցությունները։ Կոռնիլովը լռում էր, ըստ երևույթին կամքի հսկայական լարումով էր զսպում ինքն իրեն։ Շուտով նա արձակեց խորհրդակցությունը, իսկ մի ժամից հետո Լուկոմսկուն կանչեց իր մոտ։

— Դուք իրավացի եք, Ալեքսանդր Սերգեևիչ,— նա ճտացրեց մատները ու մարած, դժգույն, ասես մոխրոտած աչքերով մի կողմ նայելով, հոգնածորեն ասաց.— Հետագա գիմադրությունը և՛ հիմարություն, և՛ հանցագործություն կլիներ։

Մատները երկար տկտկացնում էր սեղանին, ունկնդրում ինչ-որ բանի,— գուցե սեփական մտքերի մկնային իրարանցման. մի քիչ լռելուց հետո հարցրեց.

— Միխայիլ Վասիլևիչը ե՞րբ կգա։

— Վաղը։

Սեպտեմբերի 1-ին ժամանեց Ալեքսեևը։ Ժամանակավոր կառավարության հրամանով այդ նույն օրվա երեկոյան նա ձերբակալեց Կոռնիլովին, Լուկոմսկուն և Ռոմանովսկուն։ Նախքան ձերբակալվածներին «Մետրոպոլ» հյուրանոցն ուղարկելը, ուր նրանք պետք է պահվեին հսկողության տակ, Ալեքսեևը քսան րոպե երես առ երես զրուցեց Կոռնիլովի հետ. նրա սենյակից դուրս ելավ խորապես հուզված, գրեթե ինքն իրեն կորցրած։ Ռոմանովսկին փորձեց անցնել Կոռնիլովի մոտ, բայց վերջինիս կինը կանգնեցրեց նրան։

— Ներեցեք, Լավր Գյորգիևիչը խնդրել է ոչ ոքի չթողնել իր մոտ։

Ռոմանովսկին հարևանցիորեն նայեց կնոջ գունատված դեմքին ու ետ քաշվեց. հուզմունքից նրա աչքերը թարթում էին, այտերի վերին մասերը սևին էին տալիս։

Հենց հետևյալ օրը Բերդիչևում ձերբակալվեցին Հարավարևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Դենիկինը, նրա շտաբի պետ գեներալ Մարկովը, գեներալ Վանովսկին և Հատուկ բանակի հրամանատար գեներալ Էրդելին։

Բիխովում, իգական գիմնազիայում անփառունակ կերպով ավարտվեց պատմությամբ դատապարտված Կոռնիլովյան շարժումը։ Ավարտվեց՝ առաջացնելով նոր շարժում. էլ ո՞րտեղ, եթե ոչ այնտեղ ծագեցին գալիք քաղաքացիական պատերազմի և ծավալուն ճակատով հեղափոխության վրա հարձակվելու պլանների սաղմերը։

XIX

Հոկտեմբերի վերջերին, վաղ առավոտյան յասավուլ Լիստնիցկին գնդի հրամանատարից կարգադրություն ստացավ հարյուրյակի հետիոտն շարքերով գնալ Պալատի հրապարակը։

Վախմիստրին կարգադրություն անելով, Լիստնիցկին շտապ հագնվեց։

Սպաները վեր կացան հորանջելով, հայհոյանք թափելով։

— Բանն ի՞նչ է։

— Բանը բոլշևիկների մեջ է։

— Պարոններ, ո՞վ է վերցրել իմ փամփուշտները։

— Ո՞ւր պետք է գնանք։

— Լսո՞ւմ եք. կրակում են։

— Ի՞նչ կրակել, է՛։ Դուք լսողության հալյուցինացիա ունեք։

Սպաները դուրս ելան բակը։ Հարյուրյակը դասակային շարասյուներ էր կազմում։ Լիստնիցկին կազակներին արագ երթով բակից դուրս տարավ։ Նևսկին դատարկ էր։ Որտեղից-որտեղ իսկապես հատուկենտ կրակոցներ էին լսվում։ Պալատի հրապարակով մեկ շարժվում էր զրահապատը, շրջում էին յունկերները։ Փողոցները խոր լռություն էին պահպանում։ Ձմեռային պալատի դարբասի մոտ կազակներին դիմավորեցին մի խումբ յունկերներ և չորրորդ հարյուրյակի կազակ սպաները։ Նրանցից մեկը, հարյուրյակի հրամանատարը, Լիստնիցկուն մի կողմ կանչեց։

— Ամբողջ հարյուրյակը ձեզ հե՞տ է։

— Այո։ Ի՞նչ կա որ։

— Երկրորդ, հինգերորդ ու վեցերորդ հարյուրյակները

չեկան, հրաժարվեցին, բայց գնդացրային խումբը մեզ հետ է։ Ի՞նչպես են տրամադրված կազակները։

Լիստնիցկին կարճ թափ տվեց ձեռքը։

— Վա՛յ է։ Իսկ առաջին ու չորրորդ գնդե՞րը։

— Չկան։ Չեն է՛լ գա։ Գիտե՞ք, որ այսօր բոլշևիկների հարձակում է սպասվում։ Սատանան գիտե, թե ինչ է կատարվում,— ու թախծոտ շունչ առավ։— Լավ չէ՞ր լինի այս ամբողջ խառնաշփոթությունից փախչել դեպի Դոն...

Լիստնիցկին հարյուրյակը տարավ բակ։ Կազակները հրացանները խաչմերուկ դնելով՝ ցրվեցին հրապարակի պես ընդարձակ բակում։ Սպաները հավաքվեցին հեռու կողաշենքում։ Մխում էին։ Խոսքեր էին փոխանակում։

Մի ժամից հետո եկան յունկերների մի գունդ և կանանց դումարտակը։ Յունկերները տեղավորվեցին Պալատի շքամուտքի սրահում, գնդացիրները տարան այնտեղ։ Հարվածայնուհիները[1] խմբվում էին բակում։ Թրևող կազակները մոտենում էին նրանց, կեղտոտ կատակներ էին անում։ Ուրյադնիկ Արժանովը շրմփացրեց ցածրահասակ, կարճ շինել հագած մի կնոջ մեջքին։

— Ա՛յ քիքիր, քո գործը երեխաներ բերելն է, իսկ դու տղամարդու գործ ես բռնում։

— Ինքդ բեր,— հաստ ձայնով, բարկացկոտ պատասխանեց անսիրալիր «քիքիրը»։

— Ջանիկնե՛րս, դուք է՛լ եք մեզ հետ,— կպչում էր հարվածայնուհիներին հնաղավան ու կնամոլ Տյուկովնովը։

— Ձաղկե՛լ դրանց այդ խունջիկ-մունջիկներին։

— Ոտները տնկող քաշեր։

— Նստեիք տանը, էլի՛։ Դա ձեր ինչի՞ն էր պետք, ի՞-ի՞։

— Տանու երկփողանիներ։

— Առջևից — զինվոր, իսկ հետևից — տերտեր թե ինչ, սատանան գիտի... Թյո՛ւ, օյին է, էլի՛։

— Է՛յ, հարվածող, քամակդ քեզ քաշի, թե չէ կհասցնեմ հրացանիս կոթով։

Նայելով կանանց, կազակները քոքում էին, ուրախանում։ Բայց կեսօրին ուրախ տրամադրությունը չքացավ։ Հարվածայնուհիները դասակների բաժանված, հրապարակից սոճու հաստ ձողեր էին բերում, դարբասի առաջ բարիկադներ սարքում։ Նրանց կարգադրություններ էր անում մի չազ, տղամարդու նմանվող կին, որը լավ նստած շինելի վրա Գեորգևյան մեդալ ուներ։ Ջրահապատը սկսեց ավելի հաճախ անցնել հրապարակով, յունկերները ինչ-որ տեղից պալատ տարան ձեռքի արկղեր՝ փամփուշտներով ու գնդացրային ժապավեններով։

— Է՛հ, տղերք, պինդ կացեք, հա՛-ա։

— Դուրս է գալի, որ պիտի կռվե՞նք։

— Բա ի՞նչ էիր կարծում, հարվածայնուհիներին խաղցնելու համա՞ր են քեզ այստեղ բերել։

Լագուտինի մոտ խմբվում էին հայրենակիցները,— Բուկանովսկայա և Սլաշչևսկայա ստանիցաների կազակները։ Նրանք ինչ-որ խորհրդակցում էին, մի տեղից մի այլ տեղ անցնում։ Սպաները անհայտացել էին։ Բակում, բացի կազակներից ու հարվածայնուհիներից, ոչ ոք չկար։ Համարյա հենց դարբասի մոտ մնացել էին գնդացրորդների թողած գնդացիրները, դրանց թաց վահանակները աղոտ, գորշ գույն ունեին։

Իրիկնադեմին մանր ձյուն իջավ։ Կազակները սկսեցին հուզվել։

— Ի՞նչ կարգ է սա, է՛. բերել են այս բակը ու պահում են առանց պարենի։

— Պետք է գտնել Լիստնիցկուն։

— Կգտնե՛ս, ո՞նց չէ։ Նա պալատումն է, իսկ յունկերները մեզ նմաններին այնտեղ չեն թողնում։

— Պետք է մարդ ուղարկել խոհանոցը բերելու։

Խոհանոցը բերելու համար նշանակեցին երկու կազակ։

— Գնացեք առանց հրացանի, թե չէ կբռնեն,— խորհուրդ տվեց Լագուտինը։

Երկու ժամ սպասում էին խոհանոցին։ Ոչ խոհանոցը, ոչ էլ սուրհանդակներն էին գալիս։ Ինչպես պարզվեց, Սեմյոնովյան գնդի զինվորները ետ էին դարձրել բակից դուրս եկած խոհանոցը։ Մթնելուց առաջ դարբասի մոտ հավաքված հարվածայնուհիները խիտ շղթա կազմեցին. ձողերի տակ պառկած, սկսեցին կրակել հրապարակի վրայով։ Կա-

[1] Հարվածայնուհիներ. այստեղ — կանանց հարվածային զումարտակի («մահվան զումարտակի») զինվորներ։

գակները չէին մասնակցում հրաձգության, ծխում էին, ձանձրանում։ Լագուտինը հարյուրյակը հավաքեց պատի մոտ ու երկյուղած նայելով պալատի լուսամուտներին, ասաց.

— Այ թե ինչ, տղերք։ Մենք այստեղ անելիք չունենք։ Պետք է հեռանալ, թե չէ իզուր տեղը կտուժենք։ Կսկսեն հրակոծել պալատը, իսկ մենք ի՞նչ մեղք ունենք։ Սպաների իզն ու թողն էլ չկա... մեզ անիծե՞լ են, ինչ է, որ այստեղ կորչենք։ Հա՛յդա դեպի տուն, այստեղ թրև գալու կարիք չկա։ Իսկ ժամանակավոր կառավարությունը... ախր նա մեր ինչին է պետք, է՛։ Ի՞նչ եք կարծում, տղերք։

— Բակից դուրս գնաս թե չէ, բոլշևիկները կսկսեն հնձել գնդացիրներով։

— Գլուխներս կթոցնեն։

— Չի կարող պատահել...

— Դեհ, զոռ տուր խելքիդ։

— Չէ՛, ադրեր, կմնանք մինչև վերջ։

— Մեր գործը հորթի գործ է,— կեր ու պառկիր։

— Ով ինչ ուզում է անի, իսկ մեր դասակը գնում է։

— Մենք է՞լ ենք գնում։

— Մարդիկ ուղարկենք բոլշևիկների մոտ. թող մեզ ձեռ չտան, մենք էլ նրանց ձեռ չենք տա։

Մոտ եկան առաջին ու չորրորդ հարյուրյակի կազակները։ Խորհրդակցեցին մի քանի րոպե։ Երեք կազակ,— յուրաքանչյուր հարյուրյակից մեկը,— դարբասից դուրս ելան, իսկ մի ժամից հետո վերադարձան երեք նավաստու ուղեկցությամբ։ Նավաստիները ցատկեցին դարբասի մոտ կուտակված ձողերի վրայից, շինծու անհոգության տեսքով անցան բակով. մոտեցան կազակներին, բարևեցին։ Նրանցից մեկը, սև բեղերով, չկոճկած բաճկոնով ու ծոծրակին քաշած գդակով, գեղեցիկ մի երիտասարդ, անցավ կազակների բազմության մեջտեղը։

— Ընկե՛ր կազակներ, մենք, Բալթյան ռևոլյուցիոն նավատորմի ներկայացուցիչներս, եկել ենք ձեզ առաջարկելու, որ հեռանաք Զմեռային պալատից։ Դուք չպետք է պաշտպանեք ձեզ օտար բուրժուական կառավարությունը։ Թող նրան պաշտպանեն բուրժուական լակոտները, յունկերները։ Ոչ մի զինվոր չի դուրս եկել ժամանակավոր կառավարությանը

պաշտպանելու, և ձեր եղբայրները,— առաջին ու չորրորդ գնդերի կազակները,— միացել են մեզ։ Ով ուզում է մեզ հետ գնալ, թող անցնի այնտեղ, ձախ կողմը։

— Հլա կաց, ադբերս,— առաջ անցավ առաջին հարյուրյակի քաջատես մի ուրյադնիկ,— ձեզ հետ գալը մենք կըգանք... բա որ բոլշևիկները մեզ կոտորե՞ն։

— Ընկերնե՛ր, Պետրոգրադի ռազմառևոլյուցիոն կոմիտեի անունից մենք ձեզ լիակատար անվտանգություն ենք իրստանում։ Ոչ ոք ձեզ ձեռ չի տա։

Սևաբեղ նավաստու կողքին կանգնեց մյուսը, վայելչակազմ ու չեչոտ մի նավաստի։ Հաստ, եզան վիզը դես ու դեն դարձնելով՝ նայեց կազակներին, ձեռքը խփեց բաճկոնով պրկված, ուռուցիկ կրծքին։

— Մենք ձեզ կուղեկցենք։ Կասկածելու կարիք չկա, եղբայրներ, մենք ձեր թշնամիները չենք, Պետրոգրադի պրոլետարներն էլ ձեր թշնամիները չեն, այլ թշնամիները հրե՛ն նրանք են։

Նա ցցած մեծ մատը տնկեց պալատի կողմը ու ժպտաց՝ բաց անելով պինդ նստած, սուր ատամները։

Կազակները անվճռականություն էին ցույց տալիս, հարվածայնուհի կանայք մոտենում էին, լսում, նայում կազակներին ու էլի գնում դեպի դարբասը։

— Է՛յ, կնանիք, կգա՞ք մեզ հետ,— բղավեց երկարամորուք, հաղթանդամ մի կազակ։

Պատասխան չստացավ։

— Վերցրեք հրացանները, գնանք,— վճռականապես ասաց Լագուտինը։

Կազակները միահամուռ կերպով վերցրին հրացանները, շարք կանգնեցին։

— Գնդացիրները վերցնե՞նք թե չէ,— հարցրեց սևաբեղ նավաստուն մի գնդացրորդ կազակ։

— Վերցրեք։ Թող չմնան կադետներին։

Կազակների գնալուց առաջ լրիվ կազմով երևացին հարյուրյակների սպաները։ Կանգնեցին իրար գլխի հավաքված, անընդհատ նայում էին նավաստիներին։ Շարք կանգնելուց հետո հարյուրյակները շարժվեցին։ Առջևում գնդացրային խումբը տանում էր գնդացիրները։ Անվակները թեթև ճռճը-

ռում էին, շրխկալով դիպչում մանր քարերին։ Բաճկոնով նավաստին քայլում էր առաջին հարյուրյակի գլխային դասակի կողքից։ Ֆեդոսեևսկայա ստանիցայի բարձրահասակ, բացշիկահեր մի կազակ բռնել էր նրա ձեռքը, մեղավորի տոնով և հուզված ասում էր.

— Սիրելիս, մենք հո չե՞նք ուզում ժողովրդի դեմ գնալ։ Անխելքություն արեցինք, եկանք այստեղ, ամա թե որ գիտենայինք, մի՞թե կգայինք։— Ու տխուր պտտում էր քյաքուլավոր գլուխը։— Հավատա խոսքիս, չէինք գա, ասավա՞ծ վկա։

Չորրորդ հարյուրյակը վերջինն էր գնում։ Դարբասի մոտ, ուր հավաքվել, խոնվել էր ամբողջ կանացի գումարտակը, կանգ առան։ Քաջառողջ մի կազակ, բարձրանալով ձողերի վրա, համոզիչ ու նշանակալից կերպով թափահարեց երկարեղունգ, սև մատը, ասաց.

— Է՛յ, հրաձիգներ, ականջ արեք ինձ։ Ա՛յ, հիմի մենք գնում ենք, իսկ դուք կնկա անխելքություն եք անում, մնում եք։ Հա՛, ինչ եմ ասում, միայն թե սարսաղություն չլինի։ Թե որ կրակեք մեր քամակից, ետ կդառնանք ու բոլորիդ էլ կքրատենք, կտոր-կտոր կանենք։ Լավ չե՞մ ասում, հը՞։ Դեհ, հլա մնաք բարով։

Նա իջնում է ձողերից, վազելով հասնում յուրայիններին, ժամանակ առ ժամանակ ետ է նայում։

Կազակները հասնում են համարյա մինչև հրապարակի մեջտեղը։ Մեկը ետ նայելով՝ հուզված ասում է.

— Տղերք, մտիկ արեք։ Մեր հետևից մի սպա է վազում։

Շատերը քայլելիս շուռ են տալիս գլուխները, նայում են։ Թուրը ձեռքով պահած, հրապարակով վազում է բարձրահասակ մի սպա։

Նա թափ է տալիս ձեռքը։

— Դա Ատարշչիկովն է, երրորդ հարյուրյակից է։

— Այդ ո՞րն է։

— Բոյով է, աչքին խալ կա։

— Ուզում է գալ մեզ հետ։

— Նա լավ տղա է։

Ատարշչիկովն արագ հասնում է հարյուրյակին, հեռվից նշում է, թե ինչպես նրա դեմքին դողում է ժպիտը։ Կազակները ձեռքով են անում, ծիծաղում։

— Հո՛պ տուր, պարոն հարյուրապետ։

— Շո՛ւտ, շո՛ւտ։

Պալատի գարբասից — մի հատ կրակոցի չոր ճայթյուն։ Ատարշչիկովը լայն թափահարում է թևերը ու իրանը ետ գցելով, ընկնում է մեջքի վրա, թեթև ցնցում է ոտները, զարկվում է սալահատակին, փորձում է վեր կենալ։ Հարյուրյակները, կարծես հրաման լսելով, ցրվում, երեսները դարձնում են գնպի պալատը։ Շուռ տված գնդացիրների մոտ ծնկել է անձնակազմը։ Ժապավենների շրշյուն։ Բայց պալատի դարբասի մոտ, սոճու ձողերի հետևում ոչ ոք չկա։ Կրակոցը կարծես կուլ է տվել հարվածայնուհիներին ու սպաներին, որոնք մի րոպե առաջ հավաքվել էին այնտեղ։ Հարյուրյակները դարձյալ հապճեպ շարվում են, գնում, արդեն քայլերն արագացնելով։ Վերջին դասակի երկու կազակ վերադառնում են այն տեղից, ուր ընկել էր Ատարշչիկովը։ Մեկը բղավում է բարձր, այնպես, որ բոլոր հարյուրյակները լսեն.

— Վիրավորվել է ձախ թիակի տակից։ Սաղ է։

Համաչափ քայլքը որոտալից ու հստակ է հնչում։ Բաճկոնավոր նավաստին հրաման է տալիս։

— Ձախ ուսն առա՛ջ... ա՛րշ...

Հարյուրյակները պտտվում են, շուռ են գալիս։ Նրանց լռությամբ է ճանապարհում սսկված, կուզիկացած պալատը։

XX

Տաք աշուն էր։ Անձրևներ էին գալիս։ Բիխովի վրա հազվադեպ էր երևում անդոր արևը։ Հոկտեմբերին սկսեցին չվել վայրի թռչունները։ Նույնիսկ գիշերները պաղ, սև հողի վրա հնչում էր կռունկների գառն, հուզող կանչը։ Շտապում էին չվող երամները՝ փախչելով մոտալուտ ցրտերից, օգի վերին շերտերում մրսեցնող հյուսիսային քամիներից։

Բիխովի կալանավորները, որոնք ձերբակալվել էին Կոռնիլովի գործով, մեկ ու կես ամիս դատի էին սպասում։ Այդ ժամանակվա ընթացքում նրանց կյանքը բանտում մի տեսակ խաղաղվեց ու եթե ոչ բոլորովին սովորական, ապա յուրա-

հատուկ կերպով կայուն ձևեր ընդունեց։ Առավոտները, նախաճաշից հետո, գեներալները զբոսանքի էին գնում. վերադառնալով, ստանում էին փոստը, ընդունում իրենց այցելող հարազատներին ու ծանոթներին, ճաշում, «մեռյալ» ժամից հետո առանձին-առանձին զբաղվում էին իրենց սենյակներում, երեկոները սովորաբար հավաքվում էին Կոռնիլովի մոտ, երկար զրուցում էին ու խորհրդակցում։

Իգական գիմնազիայում, որը բանտի էր վերածված, նրանք այնուամենայնիվ ապրում էին ո՛չ առանց կոմֆորտի։

Արտաքին հսկողությունը կատարում էին գեորգևյան գումարտակի զինվորները, ներքին հսկողությունը — թեքինցիները։ Բայց այդ հսկողությունը թեպետև որոշ չափով սահմանափակում էր կալանավորների ազատությունը, այնուամենայնիվ խիստ էական առավելություն էր ներկայացնում. այնպես էր կազմակերպված, որ կալանավորները ուզած ժամանակ, ցանկության դեպքում, կարող էին փախչել հեշտությամբ և անվտանգ։ Բիխովի բանտում գտնվելու ամբողջ ժամանակվա ընթացքում նրանք անարգել կերպով հարաբերություններ էին պահպանում արտաքին աշխարհի հետ, ճնշում էին գործադրում բուրժուական հասարակության վրա՝ պահանջելով արագացնել քննությունն ու դատը, կորցնում էին խռովության հետքերը, հետամուտ լինում սպաների տրամադրության ու ծայրահեղ դեպքում փախչելու էին պատրաստվում։

Կոռնիլովը իրեն հավատարիմ թեքինցիներին իր մոտ պահելու խնդրով մտահոգված, դիմեց Կալեդինին, և վերջինս նրա թախանձանքով, շտապ կարգով մի քանի վագոն հաց ուղարկեց Թուրքեստան, թեքինցիների սովալլուկ ընտանիքներին։ Սպաների,— կոռնիլովյան խռովության մասնակիցների ընտանիքներին օգնելու համար Կոռնիլովը խիստ կըտրուկ բովանդակությամբ մի նամակով դիմեց Մոսկվայի ու Պետրոգրադի խոշոր բանկիրներին. սրանք առանց հապաղելու ուղարկեցին մի քանի տասնյակ հազար ռուբլի՝ վախենալով իրենց համար անշահավետ մերկացումներից։ Մինչև նոյեմբեր չէր ընդհատվում Կոռնիլովի ու Կալեդինի եռանդուն նամակագրությունը։ Հոկտեմբերի կեսին Կալեդինին ուղարկած մի երկար նամակում Կոռնիլովը հարցնում էր, թե

ինչպես է գործերի դրությունը Դոնում, և կազակներն ինչպես կվերաբերվեն, եթե ինքը ժամանի այնտեղ։ Կալեդինը դրական պատասխան ուղարկեց...

Հոկտեմբերյան հեղաշրջումը տատանեց Բիխովի կալանավորների ոտնատակի հողը։ Հետևյալ օրն ութ, սուրհանդակներ թռան բոլոր կողմերը, ու արդեն մեկ շաբաթից հետո, որպես արձագանք կալանավորների բախտի նկատմամբ ոմանց անհանգստության, հնչեց գերագույն գլխավոր հրամանատար գեներալ Դուխոնինին հասցեագրված՝ Կալեդինի նամակը, որով սա թախանձագին խնդրում էր երաշխավորությամբ ազատել Կոռնիլովին և մյուս ձերբակալվածներին։ Նույնպիսի խնդրանքով գլխավոր զորականին դիմեցին կազակական զորքերի միության խորհուրդը և բանակի ու նավատորմի սպաների միության Գլխավոր կոմիտեն։ Դուխոնինը հապաղում էր։

Նոյեմբերի 1-ին Կոռնիլովը նրան մի նամակ ուղարկեց։ Նամակի լուսանցքներում Դուխոնինի արած դիտողությունները պարզ ապացուցում են, թե որքան անզոր էր գլխավոր զորականը, որը այդ ժամանակ արդեն փաստորեն կորցրել էր ամեն մի իշխանություն բանակի նկատմամբ, ուժասպառ վիճակում իր վերջին օրերն էր ապրում։

•

Հարգելի պարոն,
Նիկոլայ Նիկոլաևիչ,

Բախտը Ձեզ այնպիսի դրության մեջ է դրել, որ Ձեզանից է կախված իրադարձությունների ընթացքը փոխելը, որոնք երկրի համար կործանարար ուղղություն են ընդունել գլխավորապես ավագ հրամանատարական կազմի անվճռականության ու թողտվության շնորհիվ։ Ձեզ համար վրա է հասնում այն րոպեն, երբ մարդիկ պետք է կամ հանդգնեն, կամ հեռանան, այլապես նրանց վրա կընկնի երկրի կործանման պատասխանատվությունը և բանակի վերջնական քայքայման խայտառակությունը։

Ինձ հասնող ոչ լրիվ, կցկտուր տեղեկությունների համաձայն, դրությունը դեռ էլ, բայց դեռ անել չէ։ Բայց այն անել կդառնա, եթե Դուք թույլ տաք, որ բոլշևիկները վերցնեն գլխավոր զորականը կամ եթե կամավոր կերպով ճանաչեք նրանց իշխանությունը։

Ձեր տրամադրության տակ եղած Գեորգևյան գումարտակը, որ կիսով չափ ենթարկվել է պրոպագանդի ազդեցության, և թույլ Թեքինյան գունդը ամենևին էլ բավական չեն։

Նախատեսելով իրադարձությունների հետագա ընթացքը, ես կարծում

եմ, որ Ձեզ անհրաժեշտ է անհապաղ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք հաստատապես ապահովելով գլխավոր զորակայանը, բարենպաստ իրադրություն ստեղծեն վերահաս անարխիայի դեմ հետագա պայքարը կազմակերպելու համար։

Ես այդպիսի միջոցներ եմ համարում—

1. Անմիջապես Մոգիլյով փոխադրել Չեխական գնդերից մեկը և լեհական ուլանական գունդը։

Դուխոնինի դիտողությունը: Զորակայանը դրանց լիովին հուսալի չի համարում։ Այդ զորամասերը առաջիններից մեկը զինադադար արեցին բոլշևիկների հանդեպ։

2. Օրշան, Սմոլենսկը, Ժլոբինը և Գոմելը գրավել լեհական կորպուսի զորամասերով, վերջինիս դիվիզիաներն ուժեղացնել հրետանիով՝ ի հաշիվ Ֆրոնտի կազակական մարտկոցների։

Դիտողություն: Օրշան և Սմոլենսկը գրավելու համար կենտրոնացված են 2-րդ Կուբանյան դիվիզիան և Աստրախանի կազակների մի բրիգադ։ Ներբակալվածների անվտանգության տեսակետից ցանկալի չէ Բիխովից տանել 1-ին լեհական դիվիզիայի գունդը։ 1-ին դիվիզիայի զորամասերը թույլ կադրեր ունեն և այս պատճառով ուժ չեն ներկայացնում։ Կորպուսը որոշակիորեն այնպիսի գիրք է բռնում, որ չխանգարի Ռուսաստանի ներքին գործերին։

3. Օրշա—Մոգիլյով—Ժլոբին գծի վրա կենտրոնացնել Չեխոսլովակյան կորպուսի բոլոր զորամասերը, Կոռնիլովյան գունդը,— դրանք դեպի Պետրոգրադ և Մոսկվա փոխադրելու պատրվակով,— ու առավելապես հուսալի մեկ-երկու կազակական դիվիզիա։

Դիտողություն: Կազակներն անհաշտ դիրք են բռնել՝ չկռվել բոլշևիկների դեմ։

4. Նույն ռայոնում կենտրոնացնել անգլիական ու բելգիական բոլոր զրահամեքենաները, դրանց անձնակազմը փոխարինել բացառապես սպաներով։

5. Մոգիլյովում և դրան ամենամոտ կետերից մեկում, հուսալի հսկողության տակ կենտրոնացնել հրացանների, փամփուշտների, գնդացիրների, ավտոմատ հրացանների և ձեռնանռնակների պաշար՝ դրանք սպաներին ու կամավորներին բաժանելու համար, որոնք անպայման կհավաքվեն հիշյալ ռայոնում։

Դիտողություն: Ես կարող է էջերներ առաջացնել։

6. Ամուր կապ և ճշգրիտ համաձայնություն հաստատել Դոնի, Թերեքի և Կուբանի զորաց ատամանների հետ, այլև լեհական ու չեխոսլովակյան կոմիտեների հետ։ Կազակները որոշակիորեն արտահայտվել են երկրում կարգը վերականգնելու օգտին, իսկ լեհերի ու չեխերի համար Ռուսաստանում կարգը վերականգնելու հարցը նրանց սեփական գոյության հարցն է։

Օրեցօր ավելի տագնապալից լուրեր էին գալիս։ Բիխովում աճում էր անհանգստությունը։ Մոգիլյովի ու Բիխովի միջև երթևեկում էին Կոռնիլովին բարիք ցանկացողների ավտոմոբիլները, նրանք Դուխոնինից պահանջում էին ազատել կալանավորներին։ Կազակական խորհուրդը նույնիսկ ծածուկ սպառնալիքների էր դիմում։

Դուխոնինը, որ ճնշված էր վերահաս իրադարձությունների ծանրության տակ, միայն այժմ էր գիտակցել այն անչափ պատասխանատվությունը, որ ստանձնելով գերագույն հրամանատարությունը, վերցրել էր իր վրա,— տատանվում էր։ Նոյեմբերի 18-ին նա կարգադրեց կալանավորներին ուղարկել Դոն, բայց իսկույն վերացրեց իր կարգադրությունը։

Հետևյալ օրվա առավոտյան խիստ ցեխոտված մի ավտոմոբիլ մոտեցավ Բիխովի գիմնազիա-բանտի գլխավոր դռան։ Վարորդը ստորաքարշ քաղաքավարությամբ բացեց ավտոմոբիլի դռնակը, ու ավտոմոբիլից դուրս եկավ տարեց, բարեկազմ մի սպա։ Նա պահակապետ սպային փաստաթղթեր ներկայացրեց գլխավոր շտաբի գնդապետ Կուսոնսկու անունով։

— Ես եկել եմ գլխավոր զորակայանից։ Ունեմ անձնական հանձնարարություն ձերբակալված գեներալ Կոռնիլովին։ Որտե՞ղ կարող եմ տեսնել պարետին։

Պարետը,— Թեքինյան գնդի փոխ-գնդապետ Էրհարդտը,— եկվորին անմիջապես տարավ Կոռնիլովի մոտ։ Ներկայանալով, Կուսոնսկին շեշտված, հազիվ նկատելի աֆեկտացիայով զեկուցեց.

— Չորս ժամից հետո գլխավոր զորակայանը առանց կռվի կհանձնի Մոգիլյովը։ Գեներալ Դուխոնինը հրամայեց հաղորդել ձեզ, որ բոլոր կալանավորները պետք է անմիջապես հեռանան Բիխովից։

Կուտոնսկուն հարցեր տալով Մոգիլյովում տիրող դրության մասին, Կոռնիլովը հրավիրեց փոխ-գնդապետ Էրհարդտին։ Զախ ձեռքի մատների վրա ծանր հենվելով սեղանի ծայրին, ասաց.

— Անմիջապես ազատեցեք գեներալներին։ Թեքինցիները թող պատրաստվեն գիշերվա ժամը տասներկուսին մեկնելու։ Ես գնում եմ գնդի հետ։

Ամբողջ օրը շրջիկ դարբնոցում հնում, խոխոռում էր փուքսը, կարմրին էր տալիս շիկացած ածուխը, զնգում էին մուրճերը, մսուրների մոտ շարացած փնչում էին ձիերը։ Թեքինցիները լրիվ պայտում էին ձիերը, նորոգում ձիասարքը, մաքրում հրացանները, պատրաստվում։

Գեներալները ցերեկով մեկ-մեկ հեռացան կալանավայրից։ Իսկ խուլ, գայլի գիշերվա կեսին, երբ գավառական փոքրիկ քաղաքը մարել էր լույսերը ու քնել անդորր, խորունկ քնով, Բիխովի գիմնազիայի բակից սկսեցին դուրս գալ ձիավորները,— յուրաքանչյուր շարքում՝ երեքը։ Նրանց սևաթույր, ասես քանդակած կերպարանքները պարզ նշմարվում էին պողպատագույն երկնքի ֆոնի վրա։ Ձիավորները, որ փետուրները ցցած սև թռչունների էին նման, գնում էին բարձր փափախները աչքերին քաշած, ցրտից կծկվում թամքերի վրա, բաշլուղներով ծածկում խոնավ-թուխ դեմքերը։ Գնդի շարասյան մեջտեղում, գնդի հրամանատար գնդապետ Կյուգելգենի կողքին, բարձր, լղար ձիու վրա կորացել ու ճոճվում էր Կոռնիլովը։ Նա դեմքը կնճռոտում էր Բիխովի նեղլիկ փողոցներով սլացող պաղ քամուց, կկոցված, փոքրիկ աչքերով նայում էր ցուրտ, աստղալից երկնքին։

Ձիերի նոր պայտած սմբակների համաչափ դոփյունը հնչեց փողոցներով մեկ ու մեղմանալով, լռեց քաղաքի ծայրամասում։

XXI

Երկրորդ օրն էր, որ նահանջում էր գունդը։ Նահանջում էր դանդաղ, կռվելով։ Գյուղական բարձրադիր ճանապարհներով ձգվում էին ռուսական ու ռումինական բանակների գումակները։ Ավստրո-գերմանական միացյալ զորամասերը անցնում էին նահանջողների խոր թիկունքը, փորձում էին սեղմել օղակը։

Երեկոյան հայտնի դարձավ, որ 12-րդ գնդին ու նրա հարևան ռումինական բրիգադին շրջապատում է սպառնում։ Մայրամուտի ժամանակ հակառակորդը ռումիններին դուրս քշեց Խովինեսկի գյուղից և արդեն առաջ շարժվեց մինչև «480» բարձունքները, որ սահմանակից են Գոլշյան լեռնանցքին։

Գիշերը 12-րդ գունդը, հեծյալ-լեռնային դիվիզիոնի մի մարտկոցով ուժեղացրած, հրաման ստացավ դիրքեր գրավել Գոլշյան հովտի ստորին մասում։ Պահպանական հսկողություն կարգելով, գունդը հանդիպական մարտի պատրաստվեց։

Այդ գիշեր Միշկա Կոշևոյը և նույն խուտորի երկարահասակ Ալեքսեյ Բեշնյակը գաղոնքում էին։ Թաքնվել էին մի յառի տակ, լքած ու փլված մի ջրհորի կողքին, շնչում էին սառնամանիքից նոսրացած օդը։ Ամպամած, բրդոտ երկնքով մեկ երբեմնակի սահում էր վայրի սագերի ուշացած երամը, զգույշ կոնչյուններով նշում իր ընթացքի ուղղությունը։ Կոշևոյը սրտնեղությամբ հիշելով, որ չի կարելի ծխել, կամացուկ փսփսաց.

— Զարմանալի է կյանքը, Ալեքսեյ... մարդիկ կույրերի պես խարխափելով են ման գալի, հանդիպում իրար ու հեռանում, երբեմն էլ մեկը մյուսին ոտնատակ է անում... Կապրես այսպես, մահվան կողքին, ու կզարմանաս, թե ինչի՞ համար է այս ամբողջ գլխացավանքը։ Իմ կարծիքով աշխարհքում մարդու ներսից ավելի ահավոր բան չկա, ոչնչով չես կարող լուսավորել ու տեսնել մինչև հատակը... Ա՛յ, հիմի ես պառկած եմ քեզ հետ, ամա չգիտեմ, թե դու ինչի մասին ես մտածում, ու ամբողջ կյանքումս էլ չեմ իմանա, թե ինչ տեսակ կյանք ես անցկացրել,— չգիտեմ, դու էլ իմ մասին բան չգիտես... Կարելի է ես ուզում եմ սպանել քեզ, իսկ դու հիմի ինձ պաքսիմաթ ես տալի, ոչինչ չես կասկածում... մարդիկ իրենց մասին քիչ բան գիտեն։ Ամառը ես հոսպիտալում էի։ Կողքիս մի զինվոր էր պառկած, Մոսկվայից էր։ Նա շարունակ հետաքրքրվում, հարցուփորձ էր անում, թե ոնց են ապրում կազակները, ինչ են անում, ինչպես են։ Նրանք

կարծում են, թե կազակը հենց միայն մտրակով է, կարծում են, թե կազակը վայրենի է, ոչ սիրտ ունի, ոչ հոգի, բայց չէ՞ որ մենք էլ մարդ ենք. մենք էլ ենք սիրում կնանոնց, գուրգուրում աղջիկներին, լալիս ենք մեր դարդը, ուրիշի ուրախությունով չենք ուրախանում... Ի՞նչ կասես, Ալյոշկա։ Ադա, ես այնպե՛ս եմ ուզում ապրե՛լ. հենց որ միտք եմ անում, թե աշխարհքում ինչքա՞ն սիրուն կնանիք կան, սիրտս կուչ է գալիս։ Գիտեմ, որ երբեք էլ չեմ կարող սիրել նրանց, բոլորին— և ուզում եմ բոռալ դարդից։ Այնպե՛ս եմ քաշում կնանոնց կարոտը, որ ամեն մեկին էլ կխտտեի գրժվածի պես... Ով որ ձեռս ընկներ, կգուրգուրեի, մենակ թե սիրուն լիներ... թե չէ ի՛նչ կյանք են մոգոնել որ,— տալիս են քեզ մեկին, դե արի ու մինչև մեռնելդ գլուխ ցավացրու նրա հետ... Բա այդ ձանձրալի չի՞։ Մյուս կողմից էլ կռիվ-մռիվ են հնարել, ու այսպես...

— Տո, թոկից փախած բուղա, քամակդ այդքան ծակծղկել են, էլի խելքի չե՞ս եկել, հը՞,— բարեսրտությամբ նախատում էր Բեշնյակը։

Կոշևոյը, մեջքին ընկած, լռում էր, երկար դիտում երկընքի ամայությունը, ու երազկոտ ժպտալով, հուզականորեն քնքուշ փայփայում պաղած, անմատչելիորեն անտարբեր հողը։

Հերթափոխությունից առաջ գերմանացիները բռնեցին նրանց։ Բեշնյակը, որ կարողացել էր կրակել, պպզեց առամները կրճտացնելով, կռացավ, ընկավ մահացու զարկից. գերմանական դանականման սվինը բրդեց նրա փորոտիքը, պատռեց միզափամփուշտը և պիրկ դողաց՝ խրվելով ողնաշարի մեջ։ Կոշևոյին վար գցեցին հրացանի կոթի հարվածով։ Ամբակազմ մի լանդշտուրմիստ նրան կես ժամ տարավ շալակին դրած։ Միշկան ուշքի եկավ, զգաց, որ խեղդվում է արյունից, խոր շունչ առավ, ու հավաքելով ուժերը, առանց դժվարության պոկվեց գերմանացու մեջքից։ Նրա վրա համազարկ տվին, բայց գիշերն ու թփուտը փրկեցին,— փախավ։

Երբ նահանջը արդեն դադարել էր, և ռուս-ռումինական զորամասերը դուրս էին եկել օղակից, 12-րդ գունդը դիրքերից հանվեց և ուղարկվեց թիկունք, իր ճակատամասից դեպի ձախ, մի քանի վերստ հեռու։ Հայտարարվեց գնդին տրված հրամանը,— փակոցային սպասարկություն կատարել, ճանապարհների վրա դիրքեր կարգել, հետևել, որ դասալիքները չփախչեն դեպի թիկունք, բռնել դրանց՝ չքաշվելով զենք գործադրելուց, և հսկողության տակ ուղարկել դիվիզիայի շտաբը։

Միշկա Կոշևոյը առաջիններից մեկը նշանակվեց հսկողության համար։ Նա և էլի երեք կազակ առավոտյան դուրս եկան մի փոքրիկ գյուղից ու վախմիստրի ցուցումով տեղավորվեցին եգիպտացորենի արտի ծայրում, ճանապարհից մի քիչ հեռու։ Ճանապարհը անցնում էր ծմակի կողքից ու չքանում բլրաշատ, քառակուսաձև հերկերով շերտատված հարթավայրում։ Կազակները հերթով դիտում էին։ Կեսօրից հետո նկատեցին մի խումբ զինվորներ, տասը հոգի, որոնք գալիս էին կազակների կողմը։ Երևում էր, որ զինվորները մտադիր էին այնտեղից անցնելիս չմտնել տափարակ բլուրի տակին գտնվող գյուղը։ Մոտենալով ծմակին, նրանք կանգ առան, ծխեցին, ակներևաբար խորհրդակցում էին, հետո քայլեցին՝ փոխելով ուղղությունը, շուռ գալով դեպի ձախ։

— Վախեցնե՞մ դրանց,— վեր կենալով եգիպտացորենի ցողունների մացառուտից, հարցրեց Կոշևոյը մյուսներին։

— Կրակիր օդի մեջ։

— Է-հե՛յ, կանգնեցե՛ք։

Զինվորները, որ կազակներից մի քանի տասնյակ սաժեն հեռու էին, լսելով բղավոցը, մի բոպե կանգ առան ու նորից, ասես դժկամորեն, շարունակեցին գնալ։

— Կանգնե՞-ե-ել,— գոռաց կազակներից մեկը,— իրար հետևից հինգ անգամ կրակելով օդի մեջ։

Հրացանները ուսերից կախած, կազակները հասան դանդաղ քայլող զինվորներին։

— Ինչո՞ւ չեք կանգնում, է՞։ Ո՞ր զորամասից եք, ո՞ւր եք գնում։ Տվե՛ք ձեր փաստաթղթերը,— վազեվազ մոտենալով՝ բղավեց ուրյադնիկ Կոլիշևը, պոստի պետը։

Զինվորները կանգ առան։ Երեքը դանդաղ իջեցրին հրացանները։

Հետևից քայլողը կռացավ, մի կտոր հեռախոսալարով կապեց սապոգի պոկված ներբանը։ Նրանք բոլորն էլ չափա-

գանց կեղտոտ, պատառոտված հագուստով էին։ Շինելների փեշերին երկատամնուկի դարչնագույն պատյաններ էին կպել. երևում էր, որ նրանք այդ գիշեր պառկել էին անտառում, մացառուտներում։ Երկուսի գլխներին դրված էին ամառային գլխարկներ, մյուսների գլխներին — գառան մորթու հորշ-կեղտոտ փափախներ՝ արձակած ծալերով ու ճոճվող կապիչներով։ Վերջինը,— ըստ երևույթին ավագը, որ բարձրահասակ էր և ծերունու պես կորացած, դողացնելով այտերի ճլորած տոպրակները, քթից հնչող, բարկացկոտ ձայնով բղավեց.

— Ուզածներդ ի՞նչ է, հը՞։ Մենք ձե՞ռ ենք տալի ձեզ։ Ի՞նչ եք կպել։

— Ձեր փաստաթղթե՛րը,— շինծու խստությամբ նրան ընդհատեց ուրյադնիկը։

Նոր թրծած աղյուսի պես կարմիր դեմքով, կապուտաչյա մի զինվոր գոտու տակից հանեց շշանման մի նոնակ, և դա թափահարելով ուրյադնիկի քթի տակ, առաջ նայելով ընկերներին, յարոսլավյան շուտասելուկով վրա տվեց.

— Ա՛ռ քեզ փաստաթուղթ, աղբերացու։ Ա՛ռ քեզ։ Սա քեզ համար մի ամբողջ տարվա մանդատ է։ Պահպանիր կյանքը դ, թե չէ այնպես կշրմփացնեմ, որ փոր ու փսորդ կթափվի։ Հասկացա՞ր։ Հասկացա՞ր թե չէ, հը՞...

— Դու խելո՞ք կաց, հա՛-ա,— կրծքից հրելով նրան, մռայլվում էր ուրյադնիկը։— Խելոք կաց, չե՛ս վախեցնի մեզ, մենք առանց այն էլ զարկված ենք։ Դուք դասալիքներ եք, դե ուրեմն հա՛յդա դեպի շտաբ։ Այնտեղ ձեզ պես գյադանների հախիցը կգան։

Զինվորները միմյանց նայելով, իջեցրին հրացանները։ Նրանցից մեկը, որ սև բեղերով էր, հյուծված, ըստ երևույթին հանքափոր բանվոր, ցասկոտ աչքերը հառելով մերթ Կոշևոյի ու մերթ մյուս կազակների վրա, շշնջաց.

— Սվիններով կխփենք ձեզ, հա՛-ա... Դեհ, ռադ եղեք, հեռացե՛ք։ Աստված վկա, հիմի գնդակ կուտեցնեմ...

Կապուտաչյա զինվորը գլխավերևում պտտում էր նռնակը. առջևից գնացող բարձրահասակ, կորացած զինվորը սվինի ժանգոտ ծայրով քերծեց ուրյադնիկի շինելի փեշը. հանքափոր բանվորի նմանվողը մայր էր հայհոյում և հրացանի կոթով սպառնում Միշկա Կոշևոյին, իսկ վերջինիս մատը դողում էր հրահանի վրա ու երերվում էր հրացանի ագուստը, որ նա արմունկով սեղմել էր կողքին. կազակներից մեկը կարճլիկ մի զինվորի շինելի ծալերից բռնած, քաշքշում էր երկարած ձեռքով ու երկյուղալի նայում մյուսներին, վախենալով, որ իրեն կխփեն հետևից։

Շրջում էին եգիպտացորենի ցողունների չորացած տերևները։ Բլրաշատ հարթավայրից դենը երփներանգ կապույտին էին տալիս լեռնաճյուղերը։ Գյուղի մոտ, խոզաններում շիկակարմրավուն կովեր էին թափառում։ Ծմակի մերձակայքում քամին պաղ, փոշոտ մշուշ էր բարձրացնում։ Քնած և անդորր էր հոկտեմբերի դժգույն ցերեկը. ժլատ արևով ողողված դաշտանկարի վրա մեղմակի անդորրություն, լռություն էր իջել։ Իսկ ճանապարհից քիչ հեռու հավաքվել էին անհեթեթ ցասումով բռնված մարդիկ, պատրաստվում էին իրենց արյունով ողողել անձրևներից հագեցած, սերմանված, պարարտ հողը։

Կրքերը մի փոքր հանդարտեցին, ու զինվորները և կազակները փոքր-ինչ աղմկելուց հետո սկսեցին ավելի հաշտ խոսակցել։

— Երեք օր է, որ մենք եկել ենք դիրքերից։ Մենք թիկունքում թրև չենք գալի, իսկ դուք փախչում եք, բա ամոթ չի՞։ Թողնում եք ձեր ընկերներին։ Բա ո՞վ պիտի պահի ֆրոնտը, հը՞։ Է-է՛, միթամ մարդիկ եք, էլի՛... Իմ ընկերոջը հենց կողքիս տվին սպանեցին սվինով,— ես ու նա գաղոնքում էինք, իսկ դու ասում ես, թե մենք կռիվներում չենք եղել։ Հապա, մի դու է՛լ կռիվներում այնքա՛ն լինեի՛ր, ինչքան մենք,— ցասկոտ ասում էր Կոշևոյը։

— Հերի՛ք դուրս տաք, է՛,— ընդհատեց նրան կազակներից մեկը,— գնա՛նք շտաբ, պրծավ-գնաց։

— Ճամփա տվեք, կազակներ, թե չէ խաչը վկա կկրակենք,— համոզում էր հանքափորի տեսք ունեցող զինվորը։

Ուրյադնիկը հուզված տարածում էր ձեռները.

— Չենք կարող այդ անել, աղբերս։ Թեկուզ մեզ խփեք, միևնույն է, չեք ազատվի. մեր հարյուրյակը հրե՛ն, գյուղումն է...

Բարձրահասակ, կորացած զինվորը մերթ սպառնում էր,

մերթ հորդորում, մերթ էլ սկսում էր խնդրել նվաստանալով։ Ի վերջո նա կեղտոտ փամփշտակալից հանեց ծղնոտով փաթաթած մի շիշ, ու քծնաբար աչքով անելով Կոշևոյին, շշընչաց.

— Մենք ձեզ, կազակներ, փող-մող էլ կտանք, ա՛յ, սա էլ... գերմանական արաղ է... էլի ուրիշ բաներ կհավաքենք ու կտանք... բաց թողեք մեզ, ի սեր Քրիստոսի... Մի տուն լիքը երեխաներ կան, ինքդ ես հասկանում... Հոգիներս դուրս են եկել, դարդ ու ցավից մեռնում ենք... Բա մինչև ե՞րբ, է՞... Տե՛ր աստված, մի՞թե չեք բաց թողնի։— Նա կոշիկի ճիտքի տակից արագ հանեց ծխախոտի տոպրակը, դրա միջից թափ տվեց Կերենսկու երկու ճխլտված թղթադրամ, սկսեց համառորեն խոթել Կոշևոյի բուռը։— Վերցրո՛ւ, վերցրու։ Փո՛ւ, տեր աստված... Մի՛ կասկածի... մենք առանց դրան էլ կծըլկենք... փողն ի՞նչ է որ... առանց դրան է՛լ կարելի է... Վերցրո՛ւ։ Էլի՛ կհավաքենք-կտանք...

Ամոթից կարմրած Կոշևոյը նրանից հեռու քաշվեց՝ ձեռները քամակին տարած, պտտելով գլուխը։ Արյունը թափով խփեց դեմքին, աչքերից արցունքներ քամեց. «Բեշնյակի պատճառով եմ չարացել... Ի՞նչ եմ անում... ինքս դեմ եմ պատերազմին, իսկ սրանց բռնել եմ. ի՞նչ իրավունք ունեմ, է՞... Զահրումար ըլի, միթամ գործ եմ բռնել, էլի՛։ Բա սա շանորդություն չի՞»։

Նա մոտեցավ ուրյադնիկին ու նրան մի կողմ տարավ. առանց աչքերին նայելու ասաց.

— Արի դրանց բաց թողնենք, էլի՛։ Ի՞նչ կասես, Կոլիչև։ Թող գնան, խալչը վկա...

Ուրյադնիկը նույնպես մի կողմ նայելով, կարծես այդ ակնթարթում ինչ-որ ամոթալի բան կատարելով, ասաց.

— Թող գնան... Ի՞նչ գործ ունենք դրանց հետ։ Մենք կլ շուտով այդ տեսակ գրության մեջ ենք լինելու... Մեղքներս ի՞նչ թաքցնենք։

Ու դառնալով դեպի զինվորները, վրդովված բղավեց.

— Անիրավնե՛ր, ձեզ հետ մարդավարի, կարգին են վարվում, իսկ դուք փող եք դեմ անում։ Մենք փող չունե՞նք, ինչ է։— Ու բարկությունից կարմրատակեց։— Դադ արեք քամվեր, թե չէ կգնեմ շտաբ...

Կազակները մի կողմ քաշվեցին։ Նայելով գյուղի դատարկ, հեռու փողոցներին, Կոշևոյը բղավեց հեռացող զինվորների հետևից.

— Է՛յ, դմբոներ, ո՞ւր եք քշում բաց տեղերով։ Հրե՛ն ծմակը, ծլկեցեք այնտեղ, իսկ գիշերը կճղեք, թե չէ մյուս պոստին կհանդիպեք, կբռնեն։

Զինվորներն այս ու այն կողմ նայեցին, տատանվելով իրար գլխի հավաքվեցին ու գայլերի պես իրար հետևից, գորշ-պղտոր գույնի շղթա կազմած, քայլեցին կաղամախիներով փրշոտված ձորահովտի ուղղությամբ։

Նոյեմբերի սկզբում կազակներին այլևայլ լուրեր էին հասնում Պետրոգրադում եղած հեղաշրջման մասին։ Շտաբների սուրհանդակները, որ սովորաբար բոլորից ավելի իրազեկ են լինում, պնդում էին, թե ժամանակավոր կառավարությունը փախել է Ամերիկա, իսկ Կերենսկուն բռնել են նավաստիները, կնդել գլուխը, կուպր են քսել, ինչպես անառակ կնոջ, երկու օր ման ածել Պետրոգրադի փողոցներում։

Ավելի ուշ, երբ պաշտոնական հաղորդագրություն ստացվեց ժամանակավոր կառավարությունը տապալելու և իշխանությունը բոլշևիկներին անցնելու մասին, կազակները լարեցին իրենց ուշադրությունը, սկսվեցին։ Շատերն ուրախանում էին՝ սպասելով պատերազմը վերջանալուն, բայց անհանգստություն էին պատճառում այն լուրերի խուլ արձագանքները, թե 3-րդ հեծյալ կորպուսը Կերենսկու հետ միասին գնում է Պետրոգրադի վրա, իսկ հարավից զորում է Կալեդինը, որը կարողացել է կազակական գնդերը նախօրոք կենտրոնացնել Դոնում։

Թազմաճակատը քայքայվում էր։ Թթե հոկտեմբերին զինվորները հեռանում էին առանձին-առանձին, անկազմակերպ խմբերով, ապա նոյեմբերի վերջին դիրքերից հեռանում էին վաշտերը, գումարտակները, գնդերը. ոմանք հեռանում էին առանց բեռների, բայց մյուսները վերցնում էին գնդերի գույքը, ավերում պահեստները, գնդակահարում սպաներին, ճանապարհին կողոպտում իրենց ուղած բաները և անկաշկանդ կատաղի, վարար հեղեղի պես հոսում դեպի հայրենիք։

Այդ պայմաններում անիմաստ էր 12-րդ գնդի խնդիրը,—

գասալիքներ բռնել,— և գունդը նորից դիրքերը գնալուց հեռու, ապարդյուն փորձեր անելով ծածկել այն ծակերն ու ճեղքվածքները, որ առաջացնում էր իր ճակատամասերը լքող հետևազորը,— դեկտեմբերին դուրս եկավ դիրքերից, երթական կարգով հասավ ամենամոտ կայարանը, ու գնդի ամբողջ գույքը, գնդացիրները, փամփուշտների պաշարը և ձիերը բեռնելով, ուղևորվեց մարտերով բռնկած Ռուսաստանի խորքը...

12-րդ գնդի էշելոնները Ուկրաինայի միջով դեպի Դոն էին գնում։ Զնամենկայի մերձակայքում բոլշևիկները փորձեցին զինաթափել գունդը։ Բանակցությունները կես ժամ տևեցին։ Կոշևոյը ու էլի հինգ կազակ, հարյուրյակների ուսկոմների նախագահները, խնդրեցին իրենց ճանապարհ տալ առանց զինաթափելու։

— Ձենքերը ձեր ինչի՞ն են պետք,— հարցնում էին կայարանի սովդեպի անդամները։

— Մեր բուրժույներին ու գեներալներին ջարդելու, Կալեդինի պոչը կտրելու համար են,— բոլորի փոխարեն պատասխանեց Կոշևոյը։

— Ձենքերը պատկանում են մեզ, մեր զորամասին, չե՞նք տա,— հուզվում էին կազակները։

Էշելոններին ճանապարհ տվին։ Կրեմենչուգում նորից զինաթափման փորձ եղավ։ Համաձայնեցին ճանապարհ տալ միայն այն ժամանակ, երբ գնդացրորդ կազակները վագոնների բաց դռների մոտ տեղավորելով գնդացիրները, պատրաստվեցին կայարանը գնդակոծելու, իսկ հարյուրյակներից մեկը շղթա կազմեց, պառկեց երկաթգծի կողքին։ Եկատերինոսլավի մոտ կարմիր գվարդիական մի ջոկատի հետ տեղի ունեցած փոխ-հրաձգությունն էլ չօգնեց,— գունդը մասամբ զինաթափեցին, վերցրին գնդացիրները, ավելի քան հարյուր արկղ փամփուշտ, դաշտային հեռախոսի ապարատները ու մի քանի փաթեթ փշալար։ Կազակները մերժումով պատասխանեցին սպաներին ձերբակալելու առաջարկին։ Ամբողջ ճանապարհին կորցրին միայն մի սպա,— գնդի ադյուտանտ Ջիրկովսկուն, որին մահվան դատապարտեցին իրենք, կազակները, իսկ դատավճիռն ի կատար ածեցին Զուբատին ու մի ինչ-որ կարմիրգվարդիական նավաստի։

Դեկտեմբերի 17-ի երեկոյան Սինելնիկովո կայարանում կազակները վագոնից դուրս քաշեցին ադյուտանտին։

— Հենց սա՞ էր հալածում կազակներին,— ուրախ հարցրեց Սևծովյան նավատորմի չեչոտ մի նավաստի, որը զինված էր մաուզերով և ճապոնական հրացանով։

— Դու կարծում էիր, թե մենք սխա՞լ ենք ճանաչել։ Ո՛չ, մենք չենք վրիպել, լավ ենք բռնել սրան,— հևալով ասաց Զուբատին։

Ադյուտանտը, մի երիտասարդ փոխ-յասավուլ, խլշկոտած նայում էր շուրջը, քրտնած ձեռքով շփում էր մազերը ու չէր գդում ոչ դեմքը ծակող ցուրտը, ոչ էլ հրացանի կոթի պատճառած ցավը։ Զուբատին ու նավաստին նրան մի քիչ հեռացրին վագոնից։

— Հենց այս տեսակ սատանաների դեմ են ապստամբում մարդիկ, ու ռևոլյուցիան էլ հենց սրա նմանների դեմ է բարձրացել... Ու-ո՞ւ-ու, երես առած, մի դողա, թե չէ կփշրրվես,— շշնջում էր Զուբատին, ու գլխարկը հանելով, խաչակնքեց։

— Պինդ կաց, պարոն փոխ-յասավուլ։

— Պատրաստվեցի՞ր,— մաուզերը ճոճելով ու չարաճճիորեն ժպտալուց սպիտակափայլ ատամները բանալով՝ հարցրեց նավաստին Զուբատիին։

— Պատրա-ա՞-աստ եմ։

Զուբատին մեկ անգամ էլ խաչակնքեց, շեղակի նայեց, թե ինչպես նավաստին, մի ոտը ետ դրած, բարձրացնում է մաուզերը ու լարված կկոցում աչքերը,— ու մռայլ ժպտալով առաջինը կրակեց։

Զապլինի մերձակայքում գունդը պատահաբար մասնակից եղավ անարխիստների և ուկրաինացիների միջև տեղի ունեցած կռվին, կորցրեց երեք կազակ, որոնք սպանվեցին, ու ղոռով առաջ անցավ, մեծ դժվարությամբ մաքրելով ճանապարհը, որ բռնված էր մի ինչ-որ հրաձիգ դիվիզիայի էշելոններով։

Երեք օրից հետո գնդի առջևի էշելոնը արդեն բեռնաթափվեց Միլլերովո կայարանում։

Մնացածները խրվեցին Լուգանսկում։

Գունդը կիսով չափ պակաս կազմով (մյուսները դեռ կա-

յաքանից ցրվել-գնացել էին իրենց տները) հասավ Կարգին խուտորը։ Մյուս օրը անուրդով ծախեցին ռազմական ավարը,— ավստրիացիներից գրաված, ռազմաճակատից բերած ձիերը. բաժանեցին գնդի դրամական գումարները, հագուստեղենը։

Կոշևոյը և Տատարսկի խուտորի մյուս կազակները երեկոյան մեկնեցին իրենց տները։ Բարձրացան սարը։ Ներքևում, Ձիրի սպիտակավուն, սառցապատ ոլորանի մոտ, որ ամենագեղեցիկն է Դոնի վերին ավազանում, փռված էր Կարգին խուտորը։ Շոգեաղացի ծխնելույզից սորուն գնդիկներով դուրս էր թռչում ծուխը. հրապարակում սևին էին տալիս մարդկանց ամբոխները. երեկոյան ժամասացության զանգերն էին զարկում։ Կարգինի բլրակից դենը հազիվ երևում էին Կլիմովսկի խուտորի ուռենիների կատարները, դրանցից, ձյունած հորիզոնի մուգ-կապտավուն մուժից էլ դենը առկայծում ու բոսորափայլում էր մշուշված, երկնքի կեսը բռնած վերջալույսը։

Տասնութ ձիավոր անցան կուրգանը, որին կոթնել էին երեք կորացած, վայրի խնձորենիներ, ու թեթև վարգով, թամքերի ճռճռոցով սլացան դեպի հյուսիս-արևելք։ Բլրաշարքից դենը գողավարի թաքնվել էր ցուրտ գիշերը։ Կազակները բաշլուղներով փաթաթված, երբեմն դաշտային քառատրոփի էին անցնում։ Հատու, հնչեղ շրխկում էին պայտերը։ Ձիերի սմբակների տակից դեպի հարավ էր հոսում տրորված ճանապարհը. ճանապարհի երկու կողմում սառցակալել էր կարճ ժամանակ առաջ տաքությունից քիչ հալված ձյունաշերտը, կառչել խոտաբույսերի ցողուններից, լուսնի լույսի տակ փայլում էր կարճագույն, երերուն ցոլքերով։

Կազակները լուռ խթանում էին ձիերը։ Ճանապարհը դեպի հարավ էր հոսում։ Արևելքում, Դուբովենկի ձորակում պտտվում էր անտառը։ Ձիերի ոտների կողքից երևում ու չքանում էին նապաստակների ցանցակերպ, օղաձև հետքերը։ Տափաստանի վերևում կազակական վահանակավոր գոտու նման ձգվել էր երկինքը գոտևորած Մեր Կաթինը։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

1917 թվականի ուշ աշնանը կազակները սկսեցին վերադառնալ ռազմաճակատից։ Եկավ ծերացած Խրիստոնյան երեք կազակների հետ, որոնք նրա հետ ծառայում էին 52-րդ գնդում։ Վերադարձան ծառայությունից բոլորովին դուրս եկածները,— առաջվա պես անմորուք-անբեղ Անիկուշկան, հրետանավորներ Իվան Տամիլինը ու Յակով Պոդկովան, սրանցից հետո՝ Մարտին Շամիլը, Իվան Ալեքսեևիչը, Զախար Կորոլյովը, անճոռնի կերպով երկարահասակ Բորշչևը. դեկտեմբերին անսպասելի երևաց Միտկա Կորշունովը, մի շաբաթից հետո — 12-րդ գնդում եղած կազակների մի ամբողջ խումբ՝ Միշկա Կոշևոյը, Պրոխոր Ձիկովը, ծերունի Կաշուլինի որդին՝ Անդրեյ Կաշուլինը, Եպիֆան Մակսաևը, Եգոր Սինիլինը։

Ավստրիական ռազմից գրաված գեղեցիկ, բաց դեղնավուն ձիով ուղղակի Վորոնեժից եկավ իր գնդից կտրված, կալմիկանման Ֆեդոտ Բոդովսկովը, որը հետո երկար պատմում էր, թե ինչպես էր անցել Վորոնեժի նահանգի գյուղերով, որոնք ոտքի էին ելել հեղափոխության շնորհիվ, և թե ինչպես էր ծլկել կարմիրգվարդիական չոկատների քթի տակից՝ ապավինելով իր ձիու կայտառությանը։

Նրանից հետո արդեն Կամենսկայայից եկան բոլշևիկացած 27-րդ գնդից փախած Մերկուլովը, Պետրո Մելեխովը և Նիկոլայ Կոշևոյը։ Հենց նրանք էլ խուտորում լուր տարածեցին, որ Գրիգորի Մելեխովը, որը վերջին ժամանակներում ծառայում էր պահեստի 2-րդ գնդում, անցել էր բոլշևիկների

կողմը, մնացել Կամենսկայայում։ Նույն 27-րդ գնդում տեղ էր գտել անցյալում անկարգ ու անհոգ, ձիագող Մաքսիմկա Գրյազնովը, որը վերահաս խառնակ ժամանակների նորույթով և իր քեֆին ապրելու հնարավորությամբ գրավված, հարել էր բոլշևիկներին։ Մաքսիմկայի մասին ասում էին, թե նա չտեսնված այլանդակությամբ և նույնքան չտեսնված վայրագ կայտառությամբ աչքի ընկնող մի ձի է ձեռք բերել. ասում էին, թե Մաքսիմկայի ձիու ամբողջ մեջքի վրայով ձգված է բնական արծաթափայլ բրդի մի շերտ, թե ձին բարձր չէ, բայց երկար է ու հենց եզան կարմիր գույն ունի։ Գրիգորիի մասին քիչ էին խոսում,— չէին ուզում խոսել, գիտենալով, որ նրա և խուտորցիների ճանապարհները բաժանվել են, իսկ թե կմիանա՞ն նորից,— այդ չի երևում։

Խրճիթները, ուր կազակները վերադարձան իբրև տերեր կամ սպասված հյուրեր,— լցվեցին բերկրանքով։ Հենց այդ բերկրանքն էլ ավելի կտրուկ, ավելի անագորույն կերպով էր ընդգծում ա՛յն մարդկանց խուլ, անանց վիշտը, ովքեր առմիշտ կորցրել էին հարազատներին ու մերձավորներին։ Չէին վերադարձել շատ կազակներ,— ընկել էին Գալիցիայի, Բուկովինայի, Արևելյան Պրուսիայի, Մերձկարպատյան, Ռումինիայի դաշտերում, նրանց դիակները ընկել ու փտել էին հրանոթային հոգեհանգստի ներքո, և հիմա քոլախոտերով էին ծածկվել եղբայրական շիրիմների բարձր թմբերը, դրանք նստել էին անձրևներից, պատել փխրուն ձյունով։ Ու որքան էլ հերարձակ կազակուհիները վազ տան փողոց և ձեռները ճակատներին դրած նայեն, չեն վերադառնա իրենց սիրելիները։ Որքան էլ արցունքներ թափվեն ուռած ու գունատ աչքերից, չի՛ ամոքվի դարդը։ Որքան էլ լաց լինեն տարեդարձերի ու մեռելոցների օրերին, արևելյան քամին նրանց ճիչերը չի՛ հասցնի մինչև Գալիցիա և Արևելյան Պրուսիա, մինչև եղբայրական շիրիմների կուչ եկած թմբերը...

Խոտաբույսերով են ծածկվում գերեզմանները, վաղեմությամբ է պարուրվում վիշտը։ Քամին կորցնում էր մեռածների հետքերը, ժամանակն էլ կկորցնի ա՛յն մարդկանց արյուն-արցունքն ու հուշերը, ովքեր չտեսան ու չեն տեսնի հարազատներին, որովհետև կարճ է մարդկային կյանքը և մեղ բոլորիս էլ վիճակված չէ երկար քայլել գետնի վրա։

Գլուխը չոր գետնին էր խփում Պրոխոր Շամիլի կինը, ատամներով կրծում հողե հատակը, նայելով, թե ինչպես հանկուցյալ ամուսնու վերադարձած եղբայրը, Մարտին Շամիլը փայփայում է իր հղի կնոջը, գուրգուրում երեխաներին ու նրանց ընծաներ բաժանում։ Ծեծկվում էր հեգ կինը ու ջղաձգված սողում գետնի վրա, իսկ շուրջը ոչխարների խմբի նման հավաքվում էին երեխաները, լալիս էին, սարսափահար աչքերով նայում իրենց մորը։

Պոկի՛ր հագիդ վերջին շապկի օձիքը, անբա՛խտ կին, պոկի՛ր անուրախ, ծանր կյանքից նոսրացած մազերդ, կծի՛ր կծոտված, արյունլվիկ դարձած, շուրթերդ, կոտրի՛ր աշխատանքից այլանդակված ձեռներդ ու ծեծկվի՛ր գետնի վրա, դատարկ խրճիթի շեմքին։ Չկա՛ քո խրճիթի տերը, չկա՛ քո ամուսինը, քո երեխաների հայրը, ու հիշիր, որ ոչ ոք չի փայփայելու ոչ քեզ, ոչ էլ քո որբերին, ոչ ոք քեզ չի փրկի ուժից վեր աշխատանքից և աղքատությունից, ոչ ոք գիշերը քո գլուխը չի սեղմի իր կրծքին, երբ դու կընկնես հոգնատանջ, ու ոչ ոք քեզ չի ասի այն, ինչ որ նա մի ժամանակ ասում էր. «Դարդ մի՛ անի, Անիսկա, կապրենք, էլի»։ Ամուսին չե՛ս ունենա դու, որովհետև քեզ չորացրել, տգեղացրել են աշխատանքը, կարիքը, երեխաները. հայր չեն ունենա քո կիսատկլոր, խլնքոտ երեխաները. ինքդ պիտի անես վար ու ցանքը, և ուժից վեր լարվածությունից շնչասպառ լինելով, օրանը թափես հնձիչից, կիտես սայլի վրա, եղանով բարձրացնես ցորենի ծանր խրձերը և զգաս, թե ոնց ինչ-որ բան է պոկվում փորիդ տակին, հետո էլ, ցնցոտիներով ծածկված, պիտի ջղաձգվես, արյունաքամ լինես։

Տնտղելով Ալեքսեյ Բեշնյակի հին սպիտակեղենը, լալիս էր նրա մայրը, դառն, ժլատ արցունք էր թափում, հոտ էր քաշում, բայց որդու քրտնքի հոտը միայն վերջին շապիկից էր առնում, որ բերել էր Միշկա Կոշևոյը, ու գլուխը դնելով այդ շապկին, օրորվում էր պառավը, աղիողորմ հեծկլտում, դրոշմված, կեղտոտ, բյազե շապիկը նախշում արցունքներով։

Որբացան Մանիցկովի, Աֆոյնկա Օզերովի, Եվլանդի Կալինինի, Լիխովիդովի, Երմակովի և ուրիշ կազակների ընտանիքները։

Միայն Ստեփան Աստախովի վրա ոչ ոք չէր լալիս, լացող չկար։ Դատարկ էր նրա փակ տունը, նույնիսկ ամառ ժամանակ կիսավեր էր ու մռայլ։ Ակսինյան ապրում էր Յագոդնոյում, խուտորում նրա մասին առաջվա պես քիչ բան էին լսում, իսկ նա խուտոր չէր գալիս. երևի դրա կարոտը չէր քաշում։

Դոնեցի օկրուգի վերին ստանիցաների կազակները հայրենակցական խմբերով էին տուն գալիս։ Դեկտեմբերին վերադարձան Վեշենսկայա ստանիցայի խուտորների համարյա բոլոր ճակատայինները։

Տատարսկի խուտորի միջով գիշեր-ցերեկ անցնում էին տասը — քառասուն ձիավորներից բաղկացած խմբեր՝ ուղևորվելով Դոնի ձախ կողմը։

— Ո՞րտեղացի եք, աղբեր-տղերք,— տնից դուրս գալով՝ հարցնում էին ծերունիները։

— Զյորնայա ռեչկայից։

— Զիմովնայայից։

— Դուբրովկայից։

— Ռեշետովսկից։

— Դուդարևսկից։

— Գորոխովսկից։

— Ալիմովսկից,— լսվում էին պատասխանները։

— Կովեցիք-պրծա՞ք, ինչ է,— ննջգաբար հարցնում էին ծերունիները։

Ճակատայիններից ոմանք, խղճով ու հեզ մարդիկ,— ժպտում էին։

— Հերի՛ք է, հայրեր։ Հա՛, կովեցինք էլ, պրծանք էլ։

— Հոգիներս ելան, տուն ենք գնում։

Իսկ ովքեր ավելի հանդուգն էին, ավելի բարկացկոտ, մայր էին հայհոյում, այսպիսի խորհուրդ էին տալիս։

— Գնա, ա՛յ բիձա, պոչդ քաշիր։

— Ի՞նչ ես հարց ու փորձ անում, ուզածդ ի՞նչ է, հը՞։

— Քեզ պես փսփսանները շատ են այստեղ։

Զմռան վերջում Նովոչերկասկի մերձակայքում արդեն սկզբնավորվում էին քաղաքացիական պատերազմի սաղմերը, իսկ Դոնի վերին ավազանում, խուտորներում և ստանիցաներում գերեզմանային լռություն էր տիրում։ Միայն խրճիթ-

ներում թաքուն, երբեմն էլ ակնհայտնի ընտանեկան երկպառակություն էր տեղի ունենում. ծերունիները գժտվում էին ճակատայինների հետ։

Պատերազմի մասին, որ բռնկվել էր Դոնի Զորաց մարզի մայրաքաղաքի մոտ, միայն լուրեր լսելով գիտեին. անորոշ կերպով հասկանալով առաջացած քաղաքական հոսանքները, սպասում էին դեպքերին, ականջ դնում։

Մինչև հունվար Տատարսկի խուտորում էլ հանգիստ էին ապրում։ Ռազմաճակատից վերադարձած կազակները հանգստանում էին իրենց կանանց մոտ, լավ սնվում, չէին զգում, որ խրճիթների շեմքերին իրենց ավելի դառն փորձանքներ ու ծանրություններ են սպասում, քան իրենք ապրել էին անցած պատերազմում։

II

Գրիգորի Մելեխովը 1917 թվականի հունվարին մարտական սխրագործությունների համար խորունժիի աստիճան էր ստացել, նշանակվել 2-րդ պահեստի գունդը իբրև դասակապետ սպա։

Սեպտեմբերին, թոքերի բորբոքումից ապաքինվելուց հետո, նա արձակուրդ ստացավ. մեկ ու կես ամիս ապրեց տանը, հիվանդությունից հետո կազդուրվեց, քննվեց օկրուգային բժշկական հանձնաժողովում և նորից ուղարկվեց գունդ։ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հարյուրյակի հրամանատարի պաշտոն ստացավ։ Հենց այդ ժամանակ էլ նրա տրամադրության մեջ բեկում առաջացավ, որ շուրջը տեղի ունեցող իրադարձությունների ու գնդի սպաներից մեկի,— հարյուրապետ Եֆիմ Իզվարինի հետ ծանոթանալու հետևանքն էր։

Իզվարինի հետ Գրիգորին ծանոթացավ արձակուրդից գալու առաջին օրը, հետո նրա հետ մշտապես շփվում էր ծառայության մեջ և ծառայությունից դուրս, ու իրեն համար աննկատելի կերպով ընկնում էր նրա ազդեցության տակ։

Եֆիմ Իզվարինը Գունդորովսկայա ստանիցայի մի ունևոր կազակի որդի էր, կրթություն էր ստացել Նովոչերկասկի յունկերական ուսումնարանում, ավարտելուց հետո մեկնել էր

ուղմաճակատ, Դոնի 10-րդ կազակական գունդը, այնտեղ ծառայել մոտ մի տարի, ստացել, ինչպես ինքն էր ասում, «սպայական գեորգևյան խաչ կրծքի վրա և ձեռքի նոնակի տասնչորս բեկոր մարմնի բոլոր հարմար և անհարմար տեղերում» ու ընկել էր պահեստի 2-րդ գունդը՝ իր ծառայության կարճատև կարիերան ավարտելու համար։

Լինելով արտասովոր ընդունակությունների տեր, անկասկած շնորհալի մարդ, ունենալով այնպիսի կրթություն, որը զգալիորեն բարձր էր կազակ սպայության կրթության սովորական նորմայից, Իզվարինը մոլեռանդ կազակ-ավտոնոմիստ էր։ Փետրվարյան հեղափոխությունը ցնցեց նրան, իր մտքերը տարածելու հնարավորություն տվեց, և նա, կապվելով անկախություն տենչող կազակական շրջանների հետ, սկսեց հմուտ կերպով ագիտացիա մղել Դոնի Զորաց մարզի լիակատար ավտոնոմիայի օգտին, կառավարման ա՛յն կարգը հաստատելու համար, որը Դոնի մարզում գոյություն ուներ դեռ նախքան կազակության ստրկացումը Վելիկոռուսիայի կողմից։ Նա գերազանցորեն գիտեր պատմությունը, դյուրաբորբոք էր, միտքը պայծառ էր և զգաստ. գերող ու գեղեցիկ կերպով՝ էր նկարագրում գալիք ազատ կյանքը հայրենի Դոնում,— երբ կկառավարի կազակական ներկայացուցիչների պետական ժողովը, երբ ոչ մի ռուս չի լինի մարզի սահմաններում, ու կազակությունը իր կառավարական սահմանների վրա ունենալով սահմանապահ պոստեր, առանց գլուխ ծռելու կխոսի Ուկրաինայի ու Վելիկոռուսիայի, որպես հավասարների հետ ու նրանց հետ առևտուր և փոխանակություն կանի։ Իզվարինը պատեցնում էր պարզամիտ կազակների ու սակավ կրթված սպայության գլուխները։ Գրիգորին էլ ընկավ նրա ազդեցության տակ։ Սկզբում նրանց միջև տաք վեճեր էին տեղի ունենում, բայց կիսագրագետ Գրիգորին անզեն էր իր հակառակորդի համեմատությամբ, ու Իզվարինը նրան հեշտությամբ էր ջախջախում բանավոր մարտերում։ Վիճում էին սովորաբար զորանոցի մի որևէ անկյունում, իսկ ունկընդիրների համակրանքը միշտ թեքվում էր Իզվարինի կողմը։ Նա իր դատողություններով, ապագա անկախ կյանքի նկարագրությամբ տպավորություն էր թողնում կազակների

վրա,— շոշափում էր ունևոր, ստորին կազակության մեծ մասի փայփայած, առավելապես գաղտնի իղձերը։

— Բա մենք առանց Ռուսաստանի ո՞նց պիտի ապրենք, եթե ոչինչ չունենք բացի ցորենից,— հարցնում էր Գրիգորին։

Իզվարինը համբերատարությամբ բացատրում էր.

— Ես հնարավոր չեմ համարում միայն Դոնի մարզի անկախ ու մեկուսացած գոյությունը։ Ֆեդերացիայի, այսինքն միավորման հիմունքներով մենք համատեղ կապրենք Կուբանի, Թերեքի ու կովկասյան լեռնցիների հետ։ Կովկասը հարուստ է հանքերով, այնտեղ մենք ամեն ինչ կգտնենք։

— Բա քարածո՞ւխ։

— Դոնեցի ավազանը մեր ձեռքի տակ է։

— Բայց չէ՞ որ դա Ռուսաստանին է պատկանում։

— Թե այն ում է պատկանում և ում տերիտորիայում է գտնվում, այդ դեռ վիճելի հարց է։ Բայց նույնիսկ այն դեպքում, եթե Դոնեցի ավազանը մնա Ռուսաստանին, մենք շատ քիչ բան ենք կորցնում։ Մեր Ֆեդերատիվ միությունը արդյունաբերության վրա չի հենվելու։ Մեր երկիրը իր բնույթով ագրարային է, ու քանի որ այդպես է, ուրեմն մեր փոքրիկ արդյունաբերությունը ածուխով ապահովելու համար մենք դա կգտնենք Ռուսաստանում։ Եվ ոչ միայն ածուխ, այլև ուրիշ շատ բան կգտնենք Ռուսաստանից,— փայտեղեն, մետաղի արդյունաբերության արտադրանք և այլն, իսկ փոխարենը կմատակարարենք բարձր տեսակի ցորեն, նավթ։

— Իսկ անջատվելը մեզ ի՞նչ օգուտ կտա։

— Մեծ օգուտ։ Ամենից առաջ կազատվենք քաղաքական խնամակալությունից, կվերականգնենք ռուսական ցարերի ոչնչացրած մեր կարգերը, կարտաքսենք կազակական դասին չպատկանող եկվոր գյուղացիներին։ Տասը տարվա ընթացքում, արտասահմանից մեքենաներ ներմուծելու միջոցով այնպե՛ս կբարձրացնենք մեր տնտեսությունը, որ տասն անգամ ավելի կհարստանանք։ Հողը մերն է, մեր նախնիների արյունով է ողողված, նրանց ոսկորներով է պատրաստված, իսկ մենք, Ռուսաստանի կողմից նվաճված, չորս հարյուր տարի պաշտպանում էինք նրա շահերը ու մեր մասին չէինք մտածում։ Մենք դեպի ծով ելքեր ունենք։ Մենք կունենանք ամե-

նաուժեղ ու ամենամարտունակ բանակ, ու ոչ միայն Ուկրաինան, այլև Ռուսաստանն էլ չի համարձակվի ոտնձգություն անել մեր անկախության դեմ։

Իզվարինը տիպիկ կազակ էր,— միջահասակ, վայելչակազմ, լայնաթիկունք. չհասունացած վարսակի գույնի, դեղնավուն, խուճուճ մազեր, թուխ դեմք, թեք, սպիտակ ճակատ, թխությունը պատել էր միայն այտերը՝ մինչև խարտյաշ հոնքերի մակարդակը։ Նա խոսում էր բարձր, հլու տենորով, սովորություն ուներ խոսելիս սուր ցնցել ձախ հոնքը ու մի տեսակ յուրովի շարժել փոքր, սապատավոր քիթը. դրանից էլ թվում էր, թե նա միշտ ինչ-որ հոտ է քաշում։ Կորովի քայլվածքը, շազանակագույն աչքերի շիտակ հայացքում ու իր կեցվածքում արտահայտվող ինքնավստահությունը նրան տարբերում էին գնդի մյուս սպաներից։ Կազակները նրան բացահայտ, թերևս ավելի մեծ հարգանք էին տածում, քան գնդի հրամանատարին։

Իզվարինը երկար զրուցում էր Գրիգորիի հետ, ու վերջինս, զգալով, որ իր ոտների տակ երերվում է մինչ այդ կայուն հողը. մոտավորապես նույն հոգեվիճակն էր ապրում, ինչ որ մի ժամանակ ապրել էր Մոսկվայում, Սենգիրյովի ակնարժարանում հանդիպելով Գարանժային։

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո շուտով նրա և Իզվարինի միջև տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը.

Ընկնելով հակասությունների մեջ, Գրիգորին զգուշությամբ հարցեր էր տալիս բոլշևիկների մասին.

— Հապա՛, Եֆիմ Իվանիչ, ասա, քո կարծիքով բոլշևիկները ո՞նց են, ճի՞շտ են դատում թե ոչ։

Անկյունաձև ծռելով հոնքը, քմծիծաղից կնճռոտելով քիթը, Իզվարինն ասաց.

— Ոնց են դատո՞ւմ։ Հա՛-հա՛-հա... Սիրելիս, դու կարծես նորածին երեխա ես... Բոլշևիկներն ունեն իրենց ծրագիրը, իրենց հեռանկարներն ու ակնկալությունները։ Բոլշևիկներն իրավացի են իրենց տեսակետով, մենք էլ՝ մեր տեսակետով։ Գիտե՞ս ինչպես է անվանվում բոլշևիկների պարտիան։ Չգիտե՞ս է՛, ո՛նց թե չգիտես. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիա։ Հասկացա՞ր։ Բան-վո-րա-կա՛ն։ Այժմ նրանք շողոքորթում են թե գյուղացիների

և թե կազակների հանդեպ, բայց նրանց մոտ հիմնականը բանվոր դասակարգն է։ Նրանք վերջինիս ազատագրություն են բերում, իսկ գյուղացիությանը՝ մի նոր, գուցե սվելի վատթար ստրկացում։ Կյանքում այնպես չի լինում, որ բոլորն էլ հավասար ապրեն։ Եթե բոլշևիկները հաղթանակեն, բանվորների դրությունը լավ կլինի, մնացածներինը՝ վատ։ Եթե միապետությունը վերադառնա, կալվածատերերի և այլոց դրությունը լավ կլինի, մնացածներինը՝ վատ։ Մեզ ոչ առաջիններն են հարկավոր, ոչ էլ երկրորդը։ Մեզ անհրաժեշտ է ունենալ մերը, և ամենից առաջ ազատվել բոլոր խնամակալներից, լինի դա Կոռնիլովը, Կերենսկին թե Լենինը։ Առանց դրանց էլ կապրենք մեր տանը։ Աստված ազատի բարեկամներից, իսկ թշնամիներից մենք ինքներս կազատվենք։

— Բայց կազակների մեծամասնությունը բոլշևիկների կողմն է... գիտե՞ս

— Գրիշա, բարեկամս, հասկացիր ա՛յ թե ինչ,— սա հիմնականն է. այժմ կազակն ու գյուղացին բոլշևիկների հետ են գնում։ Գիտե՞ս ինչու։

— Ինչո՞ւ։

— Որովհետև...— Իզվարինը ծռմռեց քիթը, կլորացնելով այն՝ ծիծաղեց.— Որովհետև բոլշևիկները կողմնակից են հաշտության, անհապաղ հաշտության, իսկ պատերազմը կազակների ա՛յ թե որ տեղին է նստել։

Նա ուժգին շրմփացրեց իր պիրկ, թուխ վզին, ու շոկելով զարմանքից բարձրացած հոնքը, գոչեց.

— Դրա համար էլ կազակներից բոլշևիզմի հոտ է գալիս և նրանք բոլշևիկների հետ համաքայլ են ընթանում։ Բա՛-յց, հենց որ կվերջա-անա պա-տե-բազմը և բոլշևիկները ձեռք կգցեն կազակական տիրություններին, կազակության ու բոլշևիկների ճանապարհները կբաժանվեն։ Սա հիմնավորված է և պատմականորեն անխուսափելի։ Կազակական կյանքի այսօրվա կառուցվածքի և սոցիալիզմի-բոլշևիկյան ռևոլյուցիայի վերջնական արդյունքի միջև անանցանելի անդունդ կա...

— Ես ասում եմ...— խուլ քրթմնջաց Գրիգորին,— որ ոչինչ չեմ հասկանում... Ինձ համար դժվար է դրանից գլուխ

հանել... Մոլորվում եմ, ոնց որ թե տափաստանում, թիփիբորանի մեջ լինեմ...

— Դու դրանով չես պրծնի։ Կյանքը կստիպի հասկանալ, ու ոչ միայն կստիպի, այլև քեզ ուժով որևէ կողմ կքշի։

Այս խոսակցությունը տեղի ունեցավ հոկտեմբերի վերջերին։ Իսկ նոյեմբերին Գրիգորին պատահմամբ հանդիպեց մի ուրիշ կազակի, որը խոշոր դեր խաղաց Դոնի մարզում հեղափոխության պատմության մեջ,— Գրիգորին հանդիպեց Ֆյոդոր Պոդտյոլկովին, ու կարճատև տատանումներից հետո նրա հոգու մեջ վերստին գերակշռեց առաջվա ճշմարտությունը։

Այդ օրը կեսօրից ձյունախառն մանր անձրև էր մաղում։ Իրիկնադեմին եղանակը պարզեց, ու Գրիգորին որոշեց գնալ 28-րդ գնդի փոխ-խորունժիի, կազակ Դրոզդովի բնակարանը։ Կես ժամից հետո նա արդեն Դրոզդովի բնակարանի դռան առաջ սապոգներն էր սրբում փռոցին քսելով, ծեծում էր դուռը։ Սենյակում, ուր լղարիկ ֆիկուսներ ու հնամաշ կարասիներ էին դրված, բացի տանտիրոջից, սպայական ծալովի մահճակալի վրա, մեջքը դեպի պատուհանը դարձրած, նստել էր ամրակազմ մի կազակ՝ գվարդիական մարտկոցի վախմիստրի ուսադիրներով։ Մեջքը կորացած, նա լայն տարածել էր ոտները սև մահուդե շալվարով, կլոր ու լայն ծնկների վրա դրել նույնպես լայն, շիկամազ ձեռները։ Վերնաշապիկը քիպ նստել էր նրա կողերին, փոթել թևատակերին, քիչ էր մնում պատռվեր լայն և ուռուցիկ կրծքի վրա։ Լսելով դռան ճռռոցը, նա շուռ տվեց կարճ, պարարտ վիզը, սառն հայացքով նայեց Գրիգորիին և մի փոքր ուռած կոպերի տակ, նեղ ակնակապիճներում թաղեց բիբերի պաղ լույսը։

— Ծանոթվեցեք։ Սա, Գրիշա, համարյա մեր դրկիցն է, ուստխոպերցի է, Պոդտյոլկովը։

Գրիգորին ու Պոդտյոլկովը լուռ սեղմեցին միմյանց ձեռները։ Գրիգորին նստեց, ժպտաց տանտիրոջը։

— Ես կեղտոտեցի հատակը, հո չե՞ս բարկանա։

— Չէ՛, մի վախենա։ Տանտիրուհին կսրբի... Թեյ կխմե՞ս։

Տանտերը, որ ցածրահասակ էր, ձկան պես արագաշարժ, ծխելուց դեղնած, օխրայի գույնի մատով թեթև շոշափեց ինքնաեռը, ափսոսանքով ասաց.

— Սառն պիտի խմես։

— Ես չեմ ուզում։ Մի՛ անհանգստանա։

Գրիգորին ծխախոտ առաջարկեց Պոդտյոլկովին։ Սա իր հաստլիկ, կարմիր մատներով երկար փորձեց հանել պինդ դարսված սիգարներից մեկը. շփոթմունքից կարմրելով, սրտնեղությամբ ասաց.

— Չեմ կարողանում վերցնել... փո՛ւ, անիծված։

Վերջապես, նա սիգարը գլորելով դուրս բերեց ծխախոտատուփի կափարիչի վրա, ժպտալուց կկոցված և դրանից է՛լ ավելի փոքրացած աչքերը դարձրեց Գրիգորիի վրա։ Գրիգորիին դուր եկավ նրա անբռնադատ վարվելաձևը, նա հարցրեց.

— Ո՞ր խուտորից եք։

— Ծնվել եմ Կրուտովսկում,— հաճույքով խոսել սկսեց Պոդտյոլկովը,— այնտեղ եմ մեծացել, իսկ վերջին ժամանակներս ապրում էի Ուստ-Կլինովսկում։ Կրուտովսկին դուք հո գիտեք, երևի լսած կլինես, չէ՞։ Համարյա Ելանսկայայի սահմանի կողքին է։ Պլեշակովսկի խուտորը գիտե՞ս։ Նրանից դենը Մատվեևն է ու մեր ստանիցայի կողքին Տյուկովնովսկի խուտորն է, հետո էլ մեր խուտորներն են, որտեղ ես ծնվել եմ,— Վերին և Ներքին Կրուտովսկին։

Խոսակցության ժամանակ նա Գրիգորիին մերթ «դու» էր ասում, մերթ «դուք», խոսում էր ազատ, ու մի անգամ, արդեն իրեն ընտելացած զգալով նույնիսկ շոշափեց Գրիգորիի ուսն իր ծանր ձեռքով։ Նրա մեծ, մի քիչ շեշտ, մաքուր սափրված դեմքի վրա պլպլում էին խնամքով ոլորված բեղերը, թաց մազերը սանրված էին, փոքրիկ ականջների մոտ խճճված, ձախ կողմից մի քիչ խոպոպված։ Նա հաճելի տպավորություն կթողներ, եթե քիթը մեծ և մի փոքր տնկված չլիներ։ Առաջին հայացքից նրա աչքերում ոչ մի արտասովոր բան չկար, բայց Գրիգորին, մոտիկից դիտելով, համարյա զգաց դրանց կապարե ծանրությունը։ Լինելով մանր, նմանվելով կարտեշի, դրանք փայլում էին նեղ խոռոչներից՝ ինչպես հրակնատներից, գետնին խոնարհեցնում հանդիպական հայացքը, ծանրը տաղտուկ համառությամբ կենտրոնանում մի կետի վրա։

Գրիգորին հետաքրքրությամբ նայում էր նրան, նշում բնորոշ մի գիծ. Պոդտյոլկովը համարյա չէր թարթում աչքե-

ը, խոսելիս իր մռայլ հայացքը հառում էր խոսակցի վրա, նայում մերթ այս ու մերթ այն առարկային, ըստ որում, նրա կարճլիկ, արևավառ արտևանունքները շարունակ իջած ու անշարժ էին լինում։ Միայն երբեմն նա իջեցնում էր ուռած կոպերը ու նորից թափով բարձրացնում, նշան բռնում աչքերի նետերով, հարևանցիորեն դիտում ամբողջ շրջապատը։

— Հետաքրքիր բան է, տղերք,— ասաց Գրիգորին՝ դիմելով տանտիրոջը և Պոդտյոլկովին,— պատերազմը կվերջանա, ու մենք կապրենք նոր կյանքով։ Ուկրաինայում կկառավարի Ռադան[1], մեզ մոտ — կազակ ներկայացուցիչների ժողովը։

— Ատաման Կալեդինը,— ցածր ձայնով ուղղեց Պոդտյոլկովը։

— Միևնույն է։ Ի՞նչ տարբերություն։

— Տարբերություն չկա,— համաձայնեց Պոդտյոլկովը։

— Մենք հիմի խոնարհաբար մնաս բարով ենք ասում մայր-Ռուսաստանին,— կրկնում էր Գրիգորին Իզվարինի ասածները՝ ցանկանալով իմանալ, թե դրան ինչպես կվերաբերվեն Դրոզդովը և գվարդիական մարտկոցի այդ հսկան,— կլինեն մեր կարգերը, մեր իշխանությունը։ Խախոլներին կքշենք կազակական հողից, կտարածենք մեր սահմանները, ու ոչ ոք չի համարձակվի մոտենալ։ Կապրենք այնպես, ինչպես հնում ապրել են մեր պապերը։ Ես կարծում եմ, որ ռևոլյուցիան ձեռնտու է մեզ համար։ Դու ի՞նչ ես ասում, Դրոզդով։

Տանտերը ժպտաց, մարմնի աշխույժ շարժումներ կատարեց։

— Իհարկե, ավելի լավ կլինի։ Մուժիկները տարան մեր ուժը, մեզ օր չեն տալիս։ Հեչ չես հասկանա, թե ինչ բան է,— նշանակված բոլոր ատամանները ինչ-որ գերմանացիներ

1 Ռադա — Ուկրաինական (կենտրոնական) ռադա — Ուկրաինայի նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն բուրժուազիայի գործադիր օրգան, որը կազմվեց 1917 թ. ապրիլի 6-ին։ 1918 թ. հունվարի վերջին ապստամբած բանվորներն ու գյուղացիները արտաքսեցին Ռադան, որը օկուպանտների կինված ուժերի օգնությամբ վերադարձավ Ուկրաինա և հենց կալվածատերերը, կուլակները և օկուպանտները այն լիկվիդացրին 1918 թ. ապրիլի 29-ին, այն պահին, երբ կոնտրռևոլյուցիային ավելի հաստատուն իշխանություն էր հարկավոր։

են,— էլ ֆոն Թաուբե, էլ ֆոն Գրաբբե ու դրանց նմանները։ Բոլոր հողերը կտրեցին-տվին այդ շտաբ-օֆիցերներին... Հիմի գոնե շունչ կքաշենք։

— Բա Ռուսաստանը կհաշտվի՞ դրա հետ,— ոչ ոքի չդիմելով՝ կամացուկ հարցրեց Պոդտյոլկովը։

— Իհարկե կհաշտվի,— հավատացրեց Գրիգորին։

— Ու միևնույն բանը կլինի... Նույն բորշը, ամա ավելի ջրիկ։

— Ո՞նց թե։

— Շա՛տ պարզ։— Պոդտյոլկովը արագորեն խաղացրեց աչքերը, ուղիղ, ծանր մի հայացք նետեց Գրիգորիի վրա։— Ատամանները էլի կդաղեն աշխատավոր ժողովրդին։ Արի ու գլուխ ծռի ամեն մի նորին բարեծննդության առաջ, իսկ նա կտա ու կշարդի քիթ ու մռութդ։ Էլի նույնը... Հիանալի կյանք... Քարը կախիր վզիցդ ու ընկիր յառից։

Գրիգորին վեր կացավ։ Փոքրիկ սենյակում ետ ու առաջ քայլելով, մի քանի անգամ դիպավ Պոդտյոլկովի չռված ծնկներին. կանգ առավ նրա դիմաց, հարցրեց.

— Բա ո՞նց։

— Մինչև վերջ։

— Այսի՞նքն։

— Քանի որ գործը սկսել ենք, ուրեմն պետք է տանել մինչև վերջ։ Քանի որ ռադ արեցինք ցարին ու կոնտրռևոլյուցիան, ուրեմն պետք է աշխատենք, որ իշխանությունն անցնի ժողովրդին։ Իսկ քո ասածները հեքիաթ են, երեխաների համար են։ Հնում մեզ ցարերն էին ճնշում, հիմի էլ կճնշեն ուրիշները, թե փորձես ձեն հանել...

— Իսկ քո կարծիքով ո՞նց պիտի լինի, Պոդտյոլկով։

Ու Պոդտյոլկովի ծանր հայացքը, նեղլիկ սենյակում ելք փնտրելով, դարձյալ սահեց դես ու դեն։

— Հարկավոր է ժողովրդական... ընտրովի իշխանություն։ Թե որ գեներալների թաթի տակ ընկնես, էլի պատերազմ կլինի, իսկ դա մեզ հարկավոր չի։ Չորս բոլորդ, աշխարհքով մեկ այնպիսի իշխանություն պիտի հաստատվի, որ ժողովրդին չճնշեն, պատերազմի չհանեն։ Թե չէ ի՞նչ դուրս կգա։ Ճղված շալվարդ ինչքան կուզես շուռ տուր, դրանով ծակերը չեն ծածկվի։— Ձեռները ուժգին զարկելով ծնկներին, Պոդ-

տյոլկովը ցասկոտ ժպտաց, բացեց մանը, պինդ նստած ատամները։— Մենք պետք է հեռու փախչենք հնից, թե չէ վզներիս այնպիսի լուծ կդնեն, որ ցարական լծից էլ վատ կլինի։

Գրիգորին ձեռքով օդի մեջ ասես ինչ-որ անորոշ բան բռնելով լարված հարցրեց.

— Հողը կտանք, հա՞։ Բոլորին էլ մի-մի կտոր բաժի՞ն կհանենք։

— Չէ՛... ինչի՞ համար,— ինքն իրեն կորցրեց ու կարծես շփոթվեց Պոդտյոլկովը։— Հողից մենք չենք զիջի։ Հողը կբաժանենք մեր, կազակների մեջ, կալվածատերերի հողն է՛լ կվերցնենք, իսկ մուժիկներին չի կարելի տալ։ Շատը նրանցն է, քիչը՝ մերը։ Որ բաժանեցիր, մեկ սովի ճանկը կգցեն։

— Բա մեզ ո՞վ է կառավարելու։

— Ինքներս,— աշխուժացավ Պոդտյոլկովը։— Կհաստատենք մեր իշխանությունը, ու պրծավ-գնաց։ Միայն թե հիմի մեր փորքաշը մի քիչ թուլացնեն, ու մենք կկարողանանք դեն գցել Կալեդիններին։

Կանգ առնելով քրտնակալած պատուհանի առաջ, Գրիգորին երկար դիտում էր փողոցը, երեխաներին, որոնք ինչ-որ սրամիտ խաղ էին խաղում, դիմացի տների թաց կտուրները, նախապարտեզի մերկ կաղամախու գորշ, դալուկ ճյուղերը, ու չէր լսում, թե ինչի մասին էին վիճում Դրոզդովն ու Պոդտյոլկովը. տանջալից կերպով ջանում էր ըմբռնել խառնափնթոր մտքերը, ինչ-որ բան մտածել, որոշել։

Տասն բոպեի չափ կանգնել էր նա, լուռ էր, ապակու վրա անունների սկզբնատառեր էր գծում։ Դրսում, ցածրիկ տան կտուրի վրա մարմրում էր նախաձմեռային, թորշոմած, մայր մտնող արևը. կտուրի ժանգոտ կատարին ասես կողքի դրված, նա բոսորագույն, տամուկ փայլ էր արձակում, թվում էր, թե հենց հիմա պոկ կգա ու կգլորվի կտուրի այս կամ մյուս կողմը։ Քաղաքային այգուց թափվում էին անձրևով ծեծկված, չորացած տերևները, ու թռչելով Ուկրաինայից, Լուգանսկից, կայարանով մեկ սրարշավում էր ժամ առ ժամ սաստկացող քամին։

III

Նովոչերկասկը ձգողության կենտրոն էր դարձել այն բոլոր մարդկանց համար, որոնք փախչում էին բոլշևիկյան հեղափոխությունից։ Դոնի ստորին ավազանն էին գալիս ջոջ գեներալները, ռուսական քայքայված բանակի նախկին բախտատնօրենները՝ հույս դնելով ռեակցիոն կազակների օժանդակության վրա, մտադրվելով այդ պլացդարմից սկսել ու ծավալել հարձակումը սովետականացած Ռուսաստանի դեմ։

Նոյեմբերի 2-ին գեներալ Ալեքսեևը ռոտմիստր Շապրոնի ուղեկցությամբ ժամանեց Նովոչերկասկ։ Բանակցելով Կալեդինի հետ, նա ձեռնամուխ եղավ կամավորական ջոկատների կազմակերպման։ Հյուսիսից փախած սպաները, յունկերները, հարվածայինները, ուսանողները, զինվորների զորամասերի ապադասակարգայնացած տարրերը, կազակների թվին պատկանող ամենաակտիվ հակահեղափոխականներն ու հենց սուր արկածներ և թեկուզ Կերենսկու դրամանիշներով բարձր ռոճիկ փնտրողները կազմեցին ապագա Կամավորական բանակի կմախքը։

Նոյեմբերի վերջերին ժամանեցին գեներալներ Դենիկինը, Լուկոմսկին, Մարկովը, Էրդելին։ Այն ժամանակ Ալեքսեևի ջոկատներում արդեն կար ավելի քան հազար մարդ։

Դեկտեմբերի 6-ին Նովոչերկասկում երևաց Կոռնիլովը, որը ճանապարհին թողել էր իրեն ուղեկցող թեքինցիներին ու հագուստը փոխած՝ հասել Դոնի սահմանները։

Կալեդինը, որ այն ժամանակ կարողացել էր դեպի Դոն բերել Ռումինական և Ավստրո-գերմանական ռազմաճակատներում եղած համարյա բոլոր կազակական գնդերը, դրանք դասավորեց Նովոչերկասկ — Ջերտկովո — Ռոստով — Տիխորեցկայա երկաթուղու վրա։ Բայց կազակները, որոնք հոգնել էին եռամյա պատերազմից և հեղափոխական տրամադրությամբ էին վերադարձել ռազմաճակատից, առանձնապես ցանկություն չունեին բոլշևիկների դեմ կռվելու։ Գնդերի կազմում մնացել էր հեծյալների նորմալ քանակության համարյա մի երրորդ մասը։ Առավելապես լրիվ պահպանված գնդերը,— 27-ը, 44-ը և 2-րդ պահեստի գունդը,— գտնվում էին Կամենսկայա ստանիցայում։ Իր ժամանակին Պետրո-

գրադից այնտեղ էին ուղարկվել նաև լեյբ-գվարդիայի Ատամանյան և լեյբ-գվարդիայի Կազակական գնդերը։ Ռազմաճակատից եկած 58-րդ, 52-րդ, 43-րդ, 28-րդ, 12-րդ, 29-րդ, 35-րդ, 10-րդ, 39-րդ, 23-րդ, 8-րդ և 14-րդ գնդերը և 6-րդ, 32-րդ, 28-րդ, 12-րդ և 13-րդ մարտկոցները տեղավորվել էին Չերտկովոյում, Միլլերովոյում, Լիխայայում, Գլուբոկայայում, Զվերևում, ինչպես նաև հանքարանների շրջանում։ Խոպերի և Ուստ-Մեդվեդիցկու օկրուգների կազակներից բաղկացած գնդերը ժամանում էին Ֆիլոնովո, Ուրյուպինսկայա, Սերբյակովո կայարանները, միառժամանակ մնում էին այդ վայրերում, հետո ցրիվ էին գալիս։

Տիրաբար դեպի իրենց էին քաշում հայրենի խրճիթները, ու չկար մի այնպիսի ուժ, որը կարողանար կանգնեցնել կազակների տարերային հոսանքը դեպի տուն։ Դոնի գնդերից միայն 1-ը, 4-ը և 14-ն էին գտնվում Պետրոգրադում, այն էլ երկար չմնացին այնտեղ։

Կալեդինը փորձում էր մի քանի, առանձնապես անհուսալի զորամասերը ցրել կամ մեկուսացնել առավելապես կայուն զորամասերով շրջապատելու միջոցով։

Նոյեմբերի վերջին, երբ նա առաջին անգամ փորձեց ճակատային զորամասերը տանել ռևոլյուցիոն Ռոստովի վրա, կազակները, մոտենալով Ակսայսկայային, հրաժարվեցին հարձակման գնալուց, ետ դարձան։ «Կարկատանային» ջոկատների լայն ծավալված կազմակերպումը տվեց իր հետևանքները. նոյեմբերի 27-ին Կալեդինը արդեն ի վիճակի էր գործելու կայուն, կամավորական ջոկատներով, ուժեր փոխառելով նաև Ալեքսեևից, որը այդ ժամանակ մի-երկու գումարտակ էր հավաքել։

Դեկտեմբերի 2-ին կամավորական զորամասերը կռվով գրավեցին Ռոստովը։ Կոռնիլովի ժամանելուց հետո կամավորական բանակի կազմակերպման կենտրոնը փոխադրվեց այնտեղ։ Կալեդինը մենակ մնաց։ Կազակական զորամասերը նա դասավորեց մարզի սահմանների վրա, շարժեց դեպի Ցարիցին և Սարատովի նահանգի սահմանը, բայց շուտափույթ լուծում պահանջող, ակտուալ խնդիրների համար գործի էր դնում միայն սպայական-պարտիզանական ջոկատները.

միայն դրանց վրա կարող էին հենվել օրեցօր խարխլվող, անզոր կազակական իշխանությունը։

Դոնեցի հանքափորներին խաղաղացնելու համար նոր հավաքագրված ջոկատներ ուղարկվեցին։ Մակեևկայի շրջանում շահատակում էր յասավուլ Չերնեցովը, այնտեղ էին գտնվում նաև 58-րդ կազակական կանոնավոր գնդի զորամասերը։ Նովոչերկասկում հապճեպ կազմվեցին Սեմիլետովի, Գրեկովի ջոկատները, այլևայլ գուգազներ. հյուսիսում, Խոպերի օկրուգում սպաներից ու պարտիզաններից կազմվեց այսպես կոչված՝ «Ստենկա Ռազինի» ջոկատը։ Բայց կարմիրգվարդիականների զորասյուները արդեն երեք կողմից մոտենում էին մարզին։ Խարկովում, Վորոնեժում արդեն ուժեր էին կուտակվում հարված տալու համար։ Դոնի վրա սև ամպեր էին հավաքվում, խտանում։ Քամիները Ուկրաինայից արդեն բերում էին առաջին մարտերի թնդանոթային որոտմունքը։ Ահավոր օրեր էին սպասում մարզին։ Վրա էր հասնում շոնդալից ժամանակը։

IV

Նովոչերկասկի վրա դանդաղ սահում էին դեղնավունսպիտակ, մակույկների պես ուռուցիկ ամպերը։ Բարձր, ամպերից վեր, լազուրում, հենց եկեղեցու շողուն գմբեթի վերևում անշարժ կախվել էր փետրավոր մի ամպի գանգուր կարակուլը, նրա երկար պոչը իջնում էր ալեձև ու վարդագույն-արծաթավուն ցոլք էր սփռել հեռու-հեռվում, Կրիվյանսկայա կայարանի վրա։

Ծագել էր դալուկ արևը, բայց ատամանի պալատի լուսամուտները արտացոլելով այն, վառ առկայծում էին։ Փայլում էին տների երկաթե թեք կտուրները, նախորդ օրվա անձրևի թացությունը դեռ իր վրա պահում էր բրոնզե Ծրմակը, որը դեպի հյուսիս էր պարզել սիբիրյան թագը։

Կրեշչենսկի վերելքով բարձրանում էր հետիոտն կազակների մի դասակ։ Արևը թույլ անդրադառնում էր նրանց հրացանների սվինների վրա։ Առավոտի անդորր լռության մեջ, որը խախտում էին հատուկենտ հետիոտն անցորդները և

կառքերի թկթկոցները, հաղիվ էր լսվում կազակների համաչափ քայլվածքը։

Այդ առավոտ Իլյա Բունչուկը Մոսկվայի գնացքով ժամանեց Նովոչերկասկ։ Նա վերջինը դուրս եկավ վագոնից՝ ծածկելով աշնանային, հնամաշ վերարկուի փեշերը, քաղաքացիական հագուստի մեջ իրեն զգալով անհարմար ու անընտել։

Կառամատույցում քայլում էին մի ժանդարմ և ինչ-որ առիթով քրքջացող երկու ջահել աղջիկ։ Բունչուկը մտավ քաղաք. էժան, քրքրված ճամպրուկը պահել էր թևատակին։ Ամբողջ ճանապարհին, մինչև ծայրամասի փողոցը մարդիկ համարյա չէին հանդիպում։ Բունչուկը շեղակի ճանապարհներով անցավ քաղաքը, կես ժամից հետո կանգ առավ մի փոքրիկ, կիսավեր տնակի առաջ։ Վաղուց չնորոգված այդ տնակը ողորմելի տեսք ուներ։ Ժամանակն իր թաթն էր դրել նրա վրա, ու այդ թաթի ծանրությունից նստել, փոս էր ընկել կտուրը, ծռվել էին պատերը, կախ էին ընկել փեղկերը, անճոռնի կերպով ծռմռվել պատուհանները։ Բանալով բակի դուռը, Բունչուկը անհանգստությամբ դիտեց տնակը և նեղ բակը, քայլեց դեպի տան մուտքը։

Փոքրիկ, նեղ միջանցքի կեսը բռնել էր զանազան ջուլ ու փալասով լցված մի սնդուկ։ Բունչուկը մթության մեջ ծունկը խփեց սնդուկի անկյան, առանց ցավ զգալու բացեց դուռը։ Առջևի ցածրիկ սենյակում ոչ ոք չկար։ Նա անցավ երկրորդ սենյակը, ու այնտեղ էլ ոչ ոքի չգտնելով, կանգնեց շեմքի վրա։ Նրա գլուխը շշմեց չափազանց ծանոթ հոտից, որ հատուկ էր միայն այդ տանը։ Մի հայացքով ընդգրկեց ամբողջ կահավորությունը. ծանրանիստ սրբապատկերներ օթախի առջևի անկյունում, մի մահճակալ, մի սեղան, դրա վերևում՝ հնությունից բծավորված մի հայելի, լուսանկարներ, մի քանի հնամաշ, վիեննական աթոռ, կարի մեքենա, թախտի վրա՝ երկար գործածությունից գույնը թափած մի ինքնաեռ։ Հանկարծակի և արագ բաբախող սրտով, բերանով օդ ներշնչելով,— ասես խեղդվելիս լիներ,— Բունչուկը շուռ եկավ, վար գցեց ճամպրուկը, դիտեց խոհանոցը. առաջվա պես հաճելիորեն կանաչին էր տալիս ֆուքսինով ներկված, ուռուցիկ վառարանը, կապույտ, չթե վարագույրի տակից նայում էր

քավթառ, խայտաբղետ կատուն. նրա աչքերը իմաստավորված, գրեթե մարդկային հետաքրքրություն էին արտահայտում. երևում էր, որ հազվադեպ էին այցելությունները։ Սեղանի վրա խառնիխուռն ընկած էին անլվա ամանները, դրա կողքին, տաբուրետի վրա դրված էր բրդից մանած թելի մի կծիկ, պսպղում էին գործելու ճաղերը, որոնք չորս տեղից խրված էին կիսատ թողած գուլպայի ճիտքի մեջ։

Ութ տարվա ընթացքում այստեղ ոչինչ չէր փոխվել։ Բունչուկը ասես երեկ էր գնացել այստեղից։ Նա դուրս վազեց։ Բակի ծայրում գտնվող մարագի դռնից դուրս եկավ կուզիկ, կյանքից ու ապրումներից կորացած մի պառավ։ «Մայրի՛կ... Օ՜, մի՞թե նա է...» Բունչուկը դողդոջ շուրթերով նետվեց դեպի պառավը։ Գլխից պոկեց փափախը, ճխլտեց բռունցքով։

— Դուք ո՞ւմ եք ուզում, ո՞ւմ,— անհանգիստ հարցրեց պառավը՝ ձեռքը տանելով խամրած հոնքերին, անշարժ կանգնած։

— Մայրի՛կ...— խուլ հեծկլտաց Բունչուկը,— մի՞թե չես ճանաչում, հը՞...

Սայթաքելով, նա քայլեց դեպի մայրը, տեսավ, թե ինչպես վերջինս ցնցվեց նրա կանչից, ասես հարվածից,— ըստ երևույթին ուզում էր վազել, բայց ուժերը դավաճանեցին, և պառավը քայլեց օրորվելով, կարծես հաղթահարելով քամու դիմադրությունը։ Բունչուկը նրան գրկեց, երբ պառավն արդեն ընկնում էր, սկսեց համբուրել նրա փոքրիկ, խորշոմած դեմքը, վախից ու անհուն բերկրանքից մթնած աչքերը, հաճախակի ու շվարած թարթեց իր աչքերը։

— Իլյո՛ւշա... Իլյո՛ւշենկա... Ջավա՛կս, չճանաչեցի... Տեր աստված, ո՞րտեղից եկար...— շշնջում էր պառավը՝ փորձելով շտկվել ու կանգնել թուլացած ոտների վրա։

Նրանք մտան տուն։ Եվ միայն այստեղ, իր ապրած խոր հուզման բոպեներից հետո, Բունչուկը վերստին զգաց, որ նեղվում է ուրիշի վերարկուից. վերարկուն նեղ էր, սեղմում էր թևատակերը. դժվարացնում յուրաքանչյուր շարժումը։ Նա հանեց վերարկուն, թեթևացած նստեց սեղանի մոտ։

— Կարծում էի, թե քեզ Լ։ կենդանի չեմ տեսնի.... Քանի՞

տարի է, որ չկայիր։ Ագի՛զ բալա։ Ո՞նց ճանաչեի քեզ, երբ դու այդքան մեծացել ես, ծերացել։

— Դե ասա, ի՞նչպես ես ապրում, մայրիկ,— ժպտալով հարցրեց Բունչուկը։

Շփոթությամբ պատմելով իր կյանքի մասին, պառավը դես-դեն էր ընկնում. սեղան էր գցում, ինքնաեռի մեջ ածուխ լցնում, և արցունքներն ու ածխամրուրը քսելով լացակումած դեմքին, հաճախակի մոտենում էր որդուն, շոյում նրա ձեռները, դողում, սեղմվում նրա ուսին։ Պառավը ջուր տաքացրեց, լվաց որդու գլուխը, սնդուկի հատակից հանեց հնությունից դեղնած մաքուր սպիտակեղենը, կերակրեց հարազատ հյուրին ու նստեց մինչև կեսգիշեր, աչքերը հառել էր որդու վրա, հարցեր տալիս, տխրությամբ օրորում գլուխը։

Մոտակա զանգակատան վրա խփեց ժամի երկուսը՝ երբ Բունչուկը պառկեց քնելու։ Նա միանգամից քուն մտավ, մոռացավ ներկան. նրան թվում էր, թե ինքը, արհեստավորական դպրոցի փոքրիկ, չարաճճի մի աշակերտ, երկար վազվզելուց հետո պառկել է, քուն է մտնում, իսկ մայրը ահա բաց է անում խոհանոցի դուռը, խիստ տոնով հարցնում՝ «Իլյուշա, սովորե՞լ ես վաղվա դասերդ». այդպես էլ քնեց լարված-բերկրալի ժպիտը դեմքին։

Մինչև լուսաբաց մայրը մի քանի անգամ մոտենում էր նրան, շտկում վերմակը, բարձը, համբուրում լայն ճակատը, որի վրա շեղակի ընկել էր շեկ մազերի մի փունջ, և ապա հեռանում անլսելի քայլերով։

Մեկ օրից հետո Բունչուկը մեկնեց։ Առավոտյան նրա մոտ եկավ զինվորի շինել հագած և բոլորովին նոր ու պաշտպանական գույնի գլխարկ դրած ընկերը, ցածր ձայնով ինչ-որ բան ասաց նրան, ու Բունչուկն անհանգստացավ, արագ հավաքեց ճամպրուկը, մոր լվացած մի զույգ սպիտակեղենը դրեց դրա մեջ եղած իրերի վրա, հագավ վերարկուն՝ հիվանդագին կնճռոտելով դեմքը։ Հուզված, հապճեպորեն հրաժեշտ տվեց մորը, խոստացավ գալ մի ամսից հետո։

— Ո՞ւր ես գնում, Իլյուշա։

— Ռոստով, մայրիկ, Ռոստով։ Շուտով կգամ... Դու... դու դարդ մի՛ արա, մայրիկ,— սիրտ էր տալիս նա պառավին։

Վերջինս շտապելով հանեց կրծքի փոքրիկ խաչը, ու

համբուրելով որդուն, խաչակնքելով նրան, խաչը կախեց նրա պարանոցից, անցկացրեց օձիքի տակ, իսկ մատները դողում էին, մատները սառն էին։

— Պահիր կրծքիդ, Իլյուշա, սա սուրբ Նիկոլայ Միլիկեցունն է։ Ո՛վ սուրբ, զթառատ, պաշտպանիր ու փրկիր որդուս... Սա իմ միակ զավակն է...— շշնջում էր պառավը, լացակումած աչքերը սեղմում խաչին։

Բուռն հուզմամբ գրկելով որդուն, մայրը կորցրեց ինքն իրեն, շուրթերի անկյունները դողացին, գառնորեն ներքև սահեցին։ Գարնան անձրևի կաթիլների պես մեկիկ-մեկիկ արցունքներ ընկան Բունչուկի մազոտ ձեռքին։ Նա իր պարանոցից անջատեց մոր ձեռքերը, պոկվեց նրանից ու մոայլադեմ դուրս վազեց։

Ռոստովի կայարանի շենքը լեփ-լեցուն է մարդկանցով։ Հատակը ծածկված է ծխախոտի մնացորդների, արևածաղկի կճեպի հատ շերտով։ Կայարանի հրապարակում կայազորի զինվորները պետական հագուստեղեն, ծխախոտ, գողացված իրեր են ծախում։ Դանդաղ շարժվում, դժժում է բազմացող ամբոխը, որ սովորական է հարավային առևտրային քաղաքների մեծամասնության համար։

— Ասմոլովի-ի՜-ի, Ասմոլովի բաց պապիրո-ո՜-ոս,— ճվում է ծխախոտ վաճառող մի տղա։

— Էժա՛ն կտամ, պարոն քաղաքացի...— Բունչուկի հենց ականջին թաքուն շշնջաց կասկածելի տեսք ունեցող ինչ-որ արևելյան տիպի մի մարդ ու աչքով ցույց տվեց իր շինելի ուռած փեշը։

— Բոված սեմիչկա՛, ա՛յ լավ սեմիչկա,— կչկչան ձայներով կանչում են շենքի մուտքի առջև կանգնած աղջիկներն ու կանայք։

Սևածվյան վեց նավաստի բարձր խոսակցելով, քրքջալով, անցան ամբոխի միջից։ Նրանց վրա — տոնական տարազ, ժապավեններ, ոսկեփայլ կոճակներ, լայնատուտ, ցեխոտված շալվարներ։ Մարդիկ հարգանքով ճանապարհ էին բաց անում նրանց առաջ։

Բունչուկը քայլում էր, դանդաղորեն ճեղքելով ամբոխը։

— Ոսկի՞ է, հա՞։ Զահրումար է։ Կե՛ղծ է քո ոսկին... բա

ես չե՞մ տեսնում, ինչ է,— ծաղրանքով ասում էր ռադիոհեռագրիչների խմբի մի զինվոր։

Թափահարելով կասկածելի, ծանրաքաշ ոսկե մի շղթա, վաճառողը ցասկոտ բոռում էր նրա վրա։

— Ի՞նչ ես տեսնում, է՞... Ոսկի է, մաքուր ոսկի, լա՛վ իմանաս, մի հաշտարար դատավորից եմ առել... Դե կորի գնա, է՛, քրջոտի մեկը։ Ուզում ես իմանալ, թե ինչ հանգի ոսկի է, հա՞-ա... ա՛ռ քեզ...

— Նավատորմիղը չի գնա... Ինչո՞ւ հիմարություններ դուրս տալ,— լսվեց մոտիկից։

— Ինչո՞ւ չի գնա։

— Թերթերում, այնտեղ...

— Է՛յ, ճուտիկ, բեր այստեղ։

— Մենք հինգերորդ համարին ձայն տվինք։ Ուրիշ կերպ չի կարելի. հաշիվ չէ...

— Համով մամալիգա[1]։ Գնա՞ց-չմնաց։ Ինչքա՞ն տամ։

— Էշելոնի պետը խոսք տվեց, որ էգուց կգնանք։

Բունչուկը գտավ կուսակցության կոմիտեի շենքը, սանդուղքով բարձրացավ երկրորդ հարկ։ Նրա դեմը կտրեց մի բանվոր-կարմիրգվարդիական, որ զինված էր ճապոնական հրացանով, ծայրին դաշույնի պես սվին։

— Ո՞ւմ եք ուզում, ընկեր։

— Ընկեր Աբրամսոնին։ Այստե՞ղ է նա։

— Ձախ կողմից երրորդ սենյակը։

Ցածրահասակ, քթեղ, բզեզի սևությամբ մի մարդ, ձախ ձեռքի մատները սերթուկի ծոցը դրած, աջը մեթոդիկորեն թափահարելով, կշտամբում էր խոսակցին,— տարեց մի երկաթուղայինի։

— Այդպես չի՛ կարելի։ Եվ դա կազմակերպություն չէ։ Ագիտացիայի այդպիսի ձևերով դուք հակառակ հետևանքների կհասնեք։

Դատելով երկաթուղայինի դեմքի շփոթված, մեղավոր արտահայտությունից, նա ուզում էր ինչ-որ բան ասել, արդարանալ, բայց բզեզի պես սև գլխով մարդը չէր թողնում, որ նա բերանը բաց անի. այդ մարդը, ըստ երևույթին չափազանց ջղայնացած լինելով, բղավում էր՝ չցանկանալով լսել խոսակցին ու խուսափելով նրա հայացքից.

— Անմիջապես աշխատանքից հեռացրեք Միտչենկոյին։ Մենք չենք կարող անտարբեր դիտել այն, ինչ որ կատարվում է ձեզ մոտ։ Վերխոցկին պատասխանատու կլինի ռևոլյուցիոն դատարանի առաջ։ Նա ձերբակալվա՞ծ է, հա՞... Ես պետք է պնդեմ, որ նրան գնդակահարեն,— խոսքը կտրուկ վերջացրեց նա և բորբոքված դեմքը դարձրեց դեպի Բունչուկը. դեռ վերջնականապես չհանգստացած, խիստ տոնով հարցրեց.— դուք ի՞նչ էիք ուզում։

— Աբրամսոնը դո՞ւք եք։

— Այո։

Բունչուկը նրան տվեց իր փաստաթղթերը և Պետրոգրադի ամենապատասխանատու ընկերներից մեկի նամակը, նստեց մոտակա լուսամուտի գոգին։

Աբրամսոնը ուշադրությամբ կարդաց նամակը, մռայլ ժպտալով (նա իրեն անհարմար զգաց իր ցասկոտ բղավոցի համար), խնդրեց.

— Մի քիչ սպասեք, հիմա կխոսենք։

Նա բաց թողեց շվարած երկաթուղայինին, դուրս ելավ, մի բոպեից հետո բերեց սափրված մի զինվորականի, որի ստորին ծնոտի վրա թրով կտրած վերքի կապտավուն հետք էր երևում և որը կադրային սպայի կեցվածք ուներ։

— Սա մեր ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի անդամ է։ Ծանոթացեք։ Դուք, ընկեր... Ներեցեք, ես մոռացա ձեր ազգանունը։

— Բունչուկ։

— ... ընկեր Բունչուկ... դուք կարծես մասնագիտությամբ գնդացրո՞ղ եք։

— Այո՛։

— Մեզ էլ հենց այդ է հարկավոր,— ժպտաց զինվորականը։

Ժպիտից մի փոքր կարմրեց նրա ամբողջ սպին, ականջի ծայրից մինչև կզակը։

— Դուք կարո՞ղ եք հնարավորին չափ կարճ ժամկետում կարմիրգվարդիական բանվորներից գնդացրային խումբ կազմակերպել,— հարցրեց Աբրամսոնը։

[1] Մամալիգա — եգիպտացորենի շիլա։ (Ս. Թ.)։

— Կաշխատեմ։ Ժամանակի խնդիր է։

— Լավ, որքա՞ն ժամանակ է հարկավոր ձեզ։ Մի շաբա՞թ, երկո՞ւ, երե՞ք,— թեքվելով դեպի Բունչուկը, հարցրեց զինվորականը ու պարզ, սպասողաբար ժպտաց։

— Մի քանի օր։

— Հրաշալի՜։

Աբրամսոնը սրբեց ճակատը, մի քիչ ջղայնոտ տոնով ասաց.

— Կայազորի զորամասերը չափազանց բարոյալքված են, նրանք ռեալ արժեք չունեն։ Կարծում եմ, ընկեր Բունչուկ, որ մեզ մոտ, ինչպես և ամենուրեք, մեր հույսը բանվորների վրա է։ Սովայինները հուսալի են, իսկ զինվորները... Դրա համար էլ, գիտե՞ք, ուզում էինք ունենալ մեր գնդացրորդները։— Նրա մորուքի սև-կապտավուն օղակները շարժվեցին, նա մտահոգված հարցրեց.— Նյութական ապահովության կողմից ո՞նց եք. լա՜վ, մենք այդ մասին կհոգանք։ Այսօր ճաշե՞լ եք։ Դեհ, իհարկե ոչ։

«Այդ որքա՞ն ես դու քաղցած մնացել, բարեկամ, որ կուշտին մի հայացքով տարբերում ես քաղցածից, և որքան վիշտ կամ սարսափ ես ապրել, որ այդպես ճերմակել է մազերիդ մի փունջը»,— հուզումնալի փաղաքշանքով մտածեց Բունչուկը՝ նայելով Աբրամսոնի սևահեր գլխին, որի աջ կողմում կար բոլորովին սպիտակած մի մազափունջ։ Եվ արդեն իրեն ուղեկցող մի մարդու հետ Աբրամսոնի բնակարանը գնալիս Բունչուկը նրա մասին շարունակ մտածում էր. «Ի՜նչ լավ մարդ է, իսկական բոլշևիկ է։ Նրա մեջ կա անողորմ խստություն, ու միևնույն ժամանակ պահպանվել է լավը, մարդկայինը։ Նա առանց վարանելու մահվան պատիժ է տալիս ինչ-որ սաբոտաժնիկ Վերխոցկուն, ու միևնույն ժամանակ գիտե պահպանել ընկերոջը և հոգալ նրա մասին»։

Ամբողջովին գտնվելով Աբրամսոնի հետ ունեցած հանդիպումի ջերմ տպավորության տակ, հասավ նրա բնակարանը, որ գտնվում էր Տագանրոգսկի պողոտայի ծայրում, հանգրստացավ մի փոքրիկ, գրքերով լեցուն սենյակում, ճաշեց, Աբրամսոնի երկտողը տվեց տանտիրուհուն, պառկեց մահճակալի վրա։ Հետո չէր հիշում, թե ինչպես քնեց։

V

Չորս օրվա ընթացքում, առավոտից մինչև երեկո Բունչուկը պարապում էր բանվորների հետ, որոնք պարտիայի կոմիտեի կողմից ուղարկված էին նրա տրամադրության տակ։ Նրանք տասնվեց հոգի էին։ Տարբեր պրոֆեսիաների, տարբեր հասակի և նույնիսկ տարբեր ազգությունների մարդիկ էին. երկու բեռնող բանվոր, ուկրաինացի-պոլտավացի Խվիլիչկոն և ռուսացած հույն Միխալիդին, գրաշար Ստեփանովը, ութ մետաղագործ, Պարամոնովի հանքարանի բրիչ Զելենկովը, լղար հացթուխ հայ Գևորգյանցը, ռուսական գերմանացիներից որակյալ փականագործ Իոհանն Ռերինդերը, դեպոյի երկու բանվոր, ու տասնութերորդ ուղեգիրն էլ բերեց մի կին՝ զինվորի բամբակաբաճկոնով ու ոտներին անհամապատասխան, մեծ սապոգներով։

Նրանից ընդունելով մի փակ ծրար, չկոահելով նրա գալու նպատակը, Բունչուկը հարցրեց.

— Դուք վերադառնալիս կարո՞ղ եք մտնել շտաբ։

Կինը ժպտաց, շփոթվելով ուղղեց լայն փված մազերը, որոնք լաչակի տակից դուրս էին թափվել, ու անհամարձակ ասաց.

— Ես ուղարկված եմ ձեզ մոտ...— և հաղթահարելով բոպեական շփոթմունքը, կակազելով, ավելացրեց.— իբրև գնդացրորդ։

Բունչուկը թունդ կարմրեց։

— Դժվե՞լ են նրանք, ինչ է։ Իմ խումբը հո կանանց գումարտակ չի՞... Դուք ներեցեք, բայց ձեզ համար անհարմար է այս գործը. ծանր աշխատանք է, տղամարդու ուժ է հարկավոր... Սա ի՞նչ բան է... Ոչ, ես չեմ կարող ձեզ ընդունել։

Հոնքերը կիտելով, Բունչուկը բացեց ծրարը, արագ կարդաց ուղեգիրը, որի մեջ կարճ ասված էր, թե նրա տրամադրության տակ է ուղարկվում պարտիայի անդամ ընկ. Աննա Պոգուդկոն, ու մի քանի անգամ կարդաց Աբրամսոնի գրությունը, որ կցված էր ուղեգրին։

Թանկագին ընկ. Բունչուկ.

Ձեզ մոտ ենք ուղարկում լավ ընկեր Աննա Պոգուդկոյին։

Մենք զիջեցինք նրա ջերմ թախանձանքներին և ուղարկելով նրան, հուսով ենք, որ Դուք նրան մարտական գնդացրորդ կդարձնեք։ Ես ճանաչում եմ այդ աղջկան։ Նրան ջերմորեն հանձնարարելով Ձեզ, խնդրում եմ մի բան. նա արժեքավոր աշխատող է, բայց տաքարյուն է, մի քիչ խանդավառ (դեռ տարված է ջահելության հովերով), չթողնեք, որ նա անմիտ քայլեր անի, պահպանեցեք նրան։

Ձեզ մոտ ցեմենտող կազմը, կորիզը, անկասկած, այդ ութ հոգի մետաղագործներն են. նրանցից առանձնապես ուշագրավ է ընկ. Բոգովոյը։ Շատ գործունյա և ռևոլյուցիային նվիրված ընկեր է։ Ձեր գնդացրային ջոկատն իր կազմով ինտերնացիոնալ է,— այդ լավ է. մարտունակ կլինի։

Արագացրեք ուսուցումը։ Տեղեկություններ կան, որ իբր թե Կալեդինը մեր դեմ արշավանքի է պատրաստվում։

Ընկ. ողջույնով՝ Ս. Աբրամսոն

Բունչուկը նայեց իր առջև կանգնած աղջկան (նրանք գտնվում էին Մոսկովսկայա փողոցի տներից մեկի գետնահարկում, որտեղ տեղի էր ունենում ուսուցումը)։ Ժլատ լույսը ստվերել էր կնոջ դեմքը, պարզ չէր ցույց տալիս դիմագծերը։

— Էհ, ի՞նչ արած,— անսիրալիր ասաց Բունչուկը,— եթե այդ ձե՛ր իսկ ցանկությունն է... Աբրամսոնն էլ ահա խնդրում է... Մնացեք։

Բոլոր կողմերից խիստ շրջապատում էին երախը բաց «մաքսիմ» գնդացիրը, ողկույզների նման կախվում դրա վրա, հենվում առջևինների մեջքերին, ագահ հետաքրքրությամբ վառվող աչքերով հետևում, թե ինչպես Բունչուկի հմուտ ձեռներով գնդացիրը հեշտությամբ մասերի էր բաժանվում։ Բունչուկը վարժ, դիտմամբ դանդաղ շարժումներով նորից հավաքում էր այն, բացատրում առանձին մասերի կառուցվածքը և դերը, սովորեցնում գնդացրի հետ վարվելու եղանակները, ցույց էր տալիս նշանառության, նշանոցի կանոնները, բացատրում, թե ինչ չափով է գնդակը խոտորվում

հետագծից, բացատրում գնդակի թռիչքի առավելագույն հասողությունը։ Սովորեցնում էր, թե ինչպես պետք է տեղավորվել կովի ժամանակ, հակառակորդի կրակի տակ հարվածի չենթարկվելու համար. ինքը պառկում էր վահանակի տակ, որի պաշտպանական ներկը տեղ-տեղ թափվել էր, ասում էր, թե ինչ առավելություն ունի տեղի հաջող ընտրությունը, ինչպես պետք է տեղավորել ժապավենների արկղերը։

Բոլորն էլ հեշտությամբ էին յուրացնում, բացի հացթուխ Գևորգյանցից։ Սրա գործը գլուխ չէր գալիս. որքան էլ Բունչուկը ցույց էր տալիս գնդացիրը քանդելու կանոնները, Գևորգյանցը ոչ մի կերպ չէր կարողանում դրանք պահել հիշողության մեջ, շփոթում էր, կորցնում ինքն իրեն ու ասում.

— Ինչո՞ւ բան չի դուրս գալի։ Է-է՛, չեղավ... ես եմ մեղավոր... հարկավոր էր սա այստեղ դնել։ Էլի չեղա՛վ...— հուսահատությամբ բացականչում էր նա։— Ինչո՞ւ, է։

— «Ինչու» հա «ինչու»,— նրա տնազն էր անում թխադեմ, ճակատի ու այտերի վրա վառոդի մուգ-կապտավուն բծեր ունեցող Բոգովոյը։— Բան չի դուրս գալի, որովհետև դու դդում ես։ Ա՛յ թե ոնց պիտի անել,— ցույց էր տալիս նա՝ տվյալ մասը վստահությամբ դնելով իր տեղը։— Ես մանկությունից հետաքրքրվում էի ռազմական գործով.— ընդհանուր քրքիջի տակ նա մատը տանում էր դեմքի մուգ-կապտավուն բծերին.— թնդանոթ էի շինում, թնդանոթը տրաքեց, ու ես վնասվեցի։ Հիմի արի ու տես, որ ընդունակություն եմ ցույց տալի։

Նա իրոք որ բոլորից ավելի արագ և հեշտությամբ յուրացրեց գնդացրային գործը։ Միայն Գևորգյանցն էր ետ մնում, հաճախակի լսվում էր նրա կերկերուն, ջղայնոտ ձայնը.

— Էլի՛ չեղավ։ Ինչո՞ւ, չգիտեմ։

— Ա՛յ քեզ ավանակ, ա՛յ քեզ ավանակ։ Ամբողջ Նախքջևանում մի հատ է,— վրդովվում էր խոնավ շրթունքներով և բարկացկոտ հույն Միխալիդին։

— Այդքան էլ մարդ դմբո՞ լինի,— ավելացնում էր զուսպ Ռեբինդերը։

— Այստեղ քեզ համար բուբլիկ թխելու տեղ չի,—

փինչում էր Խվիլիչկոն, ու բոլորն էլ բարեսրտությամբ ծիծաղում էին։

Միայն Ստեփանովը, կարմրելով, ջղայնացած բղավում էր.

— Հարկավոր է ցույց տալ ընկերոջը և ոչ թե ծիծաղել։

Նրան պաշտպանում էր Կրուտորոգովը,— դեպոյի բարձրահասակ, մեծ ձեռներով, դուրս ընկած աչքերով, տարեց մի բանվոր, որը կարգալույծ տերտերի էր նման։

— Ծիծաղում եք, սարսաղներ, իսկ գործը կանգ է առել։ Ընկե՛ր Բունչուկ, սաստիր այդ գժերին կամ ռադ արա գնան գրողի ծոցը։ Ռևոլյուցիան վտանգի մեջ է, իսկ սրանք հա՛ ծիծաղում են։ Կուսակցության անդամների՞ս մտիկ... Ձեր տո՛ւնը շինվի, հո անբան կենդանիներ չե՞ք,— բաս ձայնով գոչում էր Կրուտորոգովը՝ թափահարելով մուրճի պես ծանր բռունցքը։

Աննա Պոգուդկոն սուր հետաքրքրությամբ խորամուխ էր լինում ամեն ինչին։ Նա անվերջ հարցեր էր տալիս Բունչուկին, բռնում նրա անճոռնի աշնանային վերարկուի թևքից, շարունակ լինում էր գնդացրի մոտ։

— Բա որ պատյանի ջուրը սառի, ի՞նչ կլինի։ Իսկ ուժեղ քամու դեպքում գնդակն ի՞նչ չափով կխոտորվի։ Բա սա ի՞նչպես պիտի անել,— հարցեր էր թափում նա և մեծ, սև, երերուն փայլ նետող աչքերը սպասողաբար հառում Բունչուկի վրա։

Բունչուկը նրա ներկայությամբ իրեն մի տեսակ անհարմար էր զգում. ասես վրեժ առնելով այդ անհարմարության համար, նրա նկատմամբ լինում էր խստապահանջ, դիտավորյալ կերպով սառն, բայց մի ինչ-որ հուզիչ, արտասովոր բան էր զգում, երբ առավոտները Պոգուդկոն ճշտապահությամբ, ժամը ուղիղ յոթին մտնում էր գետնահարկ՝ ձեռները կանաչ կուրտկայի թևքերի մեջ պահած, քստքստացնելով զինվորի մեծ սապոգների ներբանները։ Նա հասակով մի քիչ ցածր էր Բունչուկից, գեր էր այն պիրկ շաղությամբ, որը հատուկ է ֆիզիկական աշխատանք կատարող բոլոր առողջ աղջիկներին. թերևս մի քիչ կորացած էր, գուցե նույնիսկ տգեղ երևար, եթե չլինեին մեծ, ճառագայթող աչքերը, որոնք արտասովոր կերպով ամբողջովին գեղեցկացնում էին նրան։

Չորս օրվա ընթացքում Բունչուկը նույնիսկ չկարողացավ լավ տեսնել նրան։ Գետնահարկը կիսախավար էր, ու հարմար է՛լ չէր. ժամանակ է՛լ չկար պննել նրա դեմքը։ Հինգերորդ օրվա երեկոյան նրանք միասին դուրս եկան։ Պոգուդկոն առջևից էր քայլում. բարձրանալով սանդուղքի վերջին աստիճանի վրա, շուռ եկավ ու ինչ-որ հարց տվեց, ու Բունչուկը ներքուստ ախ արավ՝ իրիկնային լույսի տակ նայելով նրան։ Սովոր շարժմամբ ուղղելով մազերը, Պոգուդկոն պատասխան էր սպասում, գլուխը մի քիչ ետ գցած, շեղակի նայելով Բունչուկի կողմը։ Բայց Բունչուկը չլսեց հարցը. դանդաղ բարձրանում էր աստիճաններով, ճնշվում քաղցր-հիվանդագին զգացումից։ Պոգուդկոյի կարմրավուն ոտնները, մայր մտնող արևով լուսավորված, հագիվ շարժվում էին լարվածությունից (անհարմար էր առանց լաչակը հանելու շտկել մազերը)։ Բերանի գծերը առնական էին ու միևնույն ժամանակ մանկականորեն քնքուշ։ Մի քիչ բարձրացած վերին շրթունքի վրա սևին էր տալիս մի փոքրիկ խալ, որը ավելի պարզ էր երանդավորում մաշկի դալուկ սպիտակությունը։

Բունչուկը թեքեց գլուխը, ասես հարված էր սպասում, ու կատակի տալով ասաց.

— Աննա Պոգուդկո... համար երկրորդ գնդացրորդ, դու գեղեցիկ ես ինչպես ուրիշի երջանկությունը։

— Դատարկ բան է,— վստահորեն ասաց ու ժպտաց Աննան,— այդ դատարկ բան է, ընկեր Բունչուկ... Ես հարցնում եմ՝ ե՞րբ պետք է գնանք հրաձգարան։

Ժպտալուց նա կարծես դարձավ ավելի պարզ, մատչելի, երկրային։ Բունչուկը կանգ առավ նրա կողքին. շշմած դիտելով փողոցի ծայրը, ուր նստել էր արևը և բոսորավառ փայլով ողողել ամեն ինչ,— կամացուկ պատասխանեց.

— Հրաձգարա՞ն։ Վաղը։ Ո՞ւր պիտի գնաս։ Ո՞րտեղ ես ապրում։

Աննան ասաց ծայրամասի ինչ-որ նրբանցքի անունը։ Քայլեցին միասին։ Փողոցի մի անկյունում Բոգովոյը հասավ նրանց։

— Բունչուկ, լսիր. էգուց ի՞նչպես պիտի հավաքվենք։

Ճանապարհին Բունչուկը բացատրեց, որ պետք է հավաքվել Տիխայա պուրակի մոտ, Կրուտոգորովը և Խվիլիչկոն

գնդացիրը կառքով կբերեն այնտեղ. պետք է հավաքվել առավոտյան ութին։ Բոգովոյը նրանց հետ անցավ երկու թաղ, հրաժեշտ տվեց։ Բունչուկը և Աննա Պոգուդկոն մի քանի րոպե լուռ էին քայլում։ Աննան շեղակի, հարևանցիորեն նայելով Բունչուկին, հարցրեց.

— Դուք կազա՞կ եք։

— Այո՛։

— Անցյալում սպա՞։

— Դեհ, ես ի՞նչ սպա եմ որ։

— Ո՞րտեղացի եք։

— Նովոչերկասկից։

— Վաղո՞ւց եք Ռոստովում։

— Մի քանի օր է։

— Իսկ դրանից առա՞ջ։

— Պետրոգրադում էի։

— Ո՞ր թվականից եք կուսակցության մեջ։

— Հազար ինն հարյուր տասներեք թվականից։

— Իսկ ձեր ընտանիքը ո՞րտեղ է։

— Նովոչերկասկում,— արագ վրա բերեց Բունչուկը և աղերսագին պարզեց ձեռքը.— Սպասիր, թող ե՛ս հարցնեմ. դու ռոստովցի՞ ես։

— Ոչ, ես ծնվել եմ Եկատերինոսլավում, բայց վերջին ժամանակներս այստեղ եմ ապրել։

— Հիմա ես պիտի հարցնեմ... Ուկրաինուհի՞ ես։

— Աննան մի վայրկյան տատանվեց, կտրուկ պատասխանեց.

— Ո՛չ։

— Հրեուհի՞ ես։

— Այո։ Ի՞նչ կա որ։ Մի՞թե լեզուս մատնում է ինձ։

— Ոչ։

— Իսկ ի՞նչպես իմացար, որ ես հրեուհի եմ։

Աշխատելով Աննայի հետ համաքայլ գնալ, փոքր քայլեր անելով, Բունչուկը պատասխանեց.

— Ականջդ, ականջիդ ձևը և աչքերդ։ Իսկ առհասարակ քո մեջ այնքա՛ն քիչ բան կա քո ազգից...— Ու մտածելով՝ ավելացրեց.— Լա՛վ է, որ դու մեզ մոտ ես։

— Ինչո՞ւ,— հետաքրքրվեց Աննան։

— Ա՛յ թե ինչու. հրեաների մասին այնպիսի կարծիք կա, թե հրեաները միայն ուրիշներին են կրակի տակ ուղարկում, իսկ իրենք չեն գնում. ես գիտեմ, որ շատ բանվորներ այդպես են մտածում, ես ինքս էլ բանվոր եմ,— ավելացրեց Բունչուկը։— Այդ սխալ է, և դու ահա փայլուն կերպով հերքում ես այդ սխալ կարծիքը։ Դու կրթություն ստացե՞լ ես։

— Այո, անցյալ տարի ավարտեցի գիմնազիան։ Իսկ դուք ի՞նչ կրթություն ունեք։ Ես այս նրա համար եմ հարցնում, որ ձեր լեզուն մատնում է ձեր ո՛չ բանվորական ծագումը։

— Ես շատ եմ կարդացել։

Դանդաղ քայլում էին։ Աննան դիտմամբ պտտվում էր փողոցներում, ու իր մասին կարճ պատմելով, շարունակում էր հարցեր տալ Կոռնիլովի խռովության, Պիտերի բանվորների տրամադրության Հոկտեմբերյան հեղաշրջման մասին։

Հեռվում, Դոնի ափերի մոտ հրացանային կրակոցներ ճայթեցին, գնդացիրը իր ճարճատյունով ճեղքեց անդորրությունը։ Աննան չմոռացավ հարցնել.

— Ի՞նչ սիստեմի գնդացիր է։

— Լյուիս։

— Ժապավենի ո՞ր մասն է կրակված։

Բունչուկը չպատասխանեց, նա հիացմունքով դիտում էր լուսարձակի նարնջագույն, զմրուխտե եղյամով ցողված շոշափուկը, որ խարխսխ գցած նավից երկար ձգվել էր դեպի երկինքը՝ վերջալույսի ցոլքերով վառված։

Երեք ժամ շրջելով քաղաքի դատարկ փողոցներում, նրանք բաժանվեցին մի տան դարբասի առաջ, ուր ապրում էր Աննան։

Բունչուկը տուն վերադարձավ ներքին անգիտակցական գոհունակությամբ ջերմացած։ «Լա՛վ ընկեր է, խելացի աղջիկ է։ Հաճելի զրույց արեցինք, և ահա թեթևացավ հոգիս։ Կոպտացել եմ ես այս ժամանակվա ընթացքում, իսկ մարդկանց հետ ընկերական շփումն անհրաժեշտ է, այլապես կկոշտանաս ինչպես զինվորի պաքսիմատը...»— մտածում էր նա ինքն իրեն խաբելով և գիտակցելով, որ խաբում է։

Աբրամսոնը, որ հենց նոր էր եկել ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նիստից, սկսեց հարցուփորձ անել գնդացրորդների

պատրաստության մասին. ի միջի այլոց Աննա Պոգուդկոյի մասին էլ հարցրեց.

— Ի՞նչպես է նա։ Եթե հարմար չէ, մենք կարող ենք նրան ուրիշ աշխատանքի ուղարկել, փոխարինել մեկ ուրիշով։

— Ո՛չ, ի՞նչ ես ասում,— վախեցավ Բունչուկը,— շատ ընդունակ աղջիկ է։

Նա աղջկա մասին խոսելու գրեթե անհաղթահարելի ցանկություն էր զգում և իրեն զսպեց միայն կամքը մեծ չափով լարելու շնորհիվ։

VI

Նոյեմբերի 25-ի կեսօրին Կալեդինի զորքերը Նովոչերկասկից շարժվեցին դեպի Ռոստով։ Սկսվեց հարձակումը։ Երկաթուղագծի երկարությամբ, թմբի երկու կողմից գալիս էին Ալեքսեևի սպայական ջոկատի նոսր շղթաները։ Աջ թևից ավելի խիտ շղթայով շարժվում էին յունկերների զորշ կերպարանքները։ Պոպովի ջոկատի կամավորները շրջանցում էին ձախ թևում գտնվող առուփնյա կարմրակավ մի յառ։ Մի քանիսները, որոնք հեռվից փոքրիկ, զորշ գնդիկներ էին թվում, թռչում էին յառից. անցնելով Դոնը, հավաքվում էին, կանգ առնում նորից, առաջ շարժվում։

Կարմիրգվարդիական շղթայում, որ դիրքեր էր բռնել Նախիջևանի ծայրամասերում, անհանգիստ դրություն էր տիրում։ Բանվորներից շատերը, որոնք առաջին անգամ էին հրացան վերցրել, վախ էին զգում, դեպի առաջ սողում, նրանց սև վերարկուները կեղտոտվում էին աշնանային ցեխից. ոմանք բարձրացնում էին գլուխները. դիտում էին տարածությունից փոքրացած՝ սպիտակների կերպարանքները։

Շղթայում, գնդացրի մոտ Բունչուկը ծնկած դիտում էր հեռադիտակով։ Նախորդ օրը նա իր անհարմար աշնանային վերարկուն փոխարինել էր շինելով, որի մեջ իրեն սովորական, հանգիստ վիճակում էր զգում։

Առանց հրամանի կրակ բացեցին։ Զդիմացան լարված լռության։ Հենց որ ճայթեց առաջին կրակոցը, Բունչուկը կանգնեց հասակով մեկ, հայհոյանք թափեց, բղավեց.

— Դա-դա-բեցնե՛լ...

Կրակոցների բազմաթիվ ճայթյունները խլացրին նրա բղավոցը, ու Բունչուկը ձեռք քաշեց դրանից. աշխատելով հրաձգության մեջ լսելի դարձնել իր ձայնը, Բոգովոյին հրաման տվեց՝ «Կրակ»։ Վերջինս ժպտացող, բայց գունատված դեմքով ընկավ փակաղակին, մատները դրեց ծոծրակալի բռնակներին։ Գնդացրի ծանոթ ճարճատյունը ծակծկեց Բունչուկի ականջները։ Մի բոպե նա նայեց հակառակորդի պառկած շղթայի կողմը՝ աշխատելով որոշել, թե արդյոք ճի՞շտ է խփում գնդացիրը, հետո վեր թռավ, շղթայի երկայնքով վազեց դեպի մյուս գնդացիրները։

— Կրա՛կ։

— Ծոռ՛ում է... օ՛-հո-հո-հո,— բոռաց Խվիլիչկոն՝ վախեցած և ուրախ դեմքը դարձնելով Բունչուկի կողմը։

Կենտրոնից հաշված երրորդ գնդացրից կրակող տղերքը այնքան էլ հուսալի չէին։ Բունչուկը վազում էր նրանց մոտ։ Ճանապարհի կեսին, կռանալով, հեռադիտակը դրեց աչքերին. ապակիների քրտնակալած կլորակների միջից երևում էին շարժվող, զորշ գնդիկները։ Հակառակորդի կողմից խփում էին ճշգրիտ, կենտրոնացված համազարկով։ Բունչուկն ընկավ գետնին և արդեն պառկած որոշեց, որ երրորդ գնդացրի նշանառությունը ճիշտ չէ։

— Ավելի ցա՛ծր, հիմարնե՛ր...— գոռում էր նա գալարվելով, սողալով շղթայի երկարությամբ։

Նրա գլխավերևում, մոտիկից լսվում էր գնդակների մահաբեր սվսվոցը։ Ալեքսեևականները, ինչպես վարժությունների ժամանակ, ճիշտ էին կրակում։

Գնդացրի մոտ, որ անհեթեթ կերպով վեր էր ցցել քիթը, տափել էին գնդացրորդները. նշանառու հույն Միխալիդին չափից դուրս բարձր նշան բռնած, գնդակների տարափ էր թափում, առանց դադար առնելու, վատնելով ժապավենների պաշարը. նրա կողքին պառկել էր վախով բռնված, սփրթնած Ստեպանովը. նրանց հետևում երկաթուղայինը, Կրուտոգորովի ընկերը, գլուխը դրել էր գետնին, կուչ եկել կրիայի նման, լայն տարածել ոտները։

Միխալիդին մի կողմ հրելով, աչքերը կկոցած, Բունչուկը երկար ճշտում էր նշանոցը, իսկ երբ իր ձեռքի տակ

գնդացիրը խփեց ու ցնցվելով, ճարճատեց համաչափ, դա իր հետևանքները տվեց. վազեվազքով առաջացող յունկերների փոքրիկ խումբը բլրակից ետ շպրտվեց, նրանցից մեկն ընկավ բլրակի կավախառն, մերկ կատարին։

Բունչուկը վերադարձավ իր գնդացրի մոտ։ Սփրթնած Բոգովոյը (նրա այտերի վառոդանման բծերը ավելի պարզ էին կապույտին տալիս) պառկել էր կողքի վրա, ու հայհոյանք թափելով, կապում էր փափուկ տեղից վիրավորված ոտը։

— Կրակիր, տո, անիծված...— չորեքթաթ լինելով, գոռում էր նրա կողքին պառկած վառ-շիկահեր մի կարմիրգվարդիական.— կրակիր, է՛։ Չե՞ս տեսնում, որ հարձակվում են։

Սպայական ջոկատի շղթաները հանդիսավոր վազեվազքով հոսում էին երկաթգծի թմբի երկարությամբ։

Բոգովոյին փոխարինեց Ռեբինդերը։ Հմուտ կերպով, խնայողաբար, առանց տաքանալու կրակում էր գնդացրից։

Իսկ ձախ թևից նապաստակի ցատկումներով մոտենում էր Գևորգյանցը, ընկնում իր վերևից թռչող յուրաքանչյուր գնդակից, ախ ու վախով դիմում Բունչուկին.

— Բան չի դուրս գալի... Չեմ կարողանում կրակել։

Բունչուկը համարյա առանց կռանալու, վազեվազ անցնում էր ծուռումուռ պառկած շղթայի կողքից։

Դեռ հեռվից տեսավ, որ Աննան ծունկ է չոքել գնդացրի կողքին, ու ետ տանելով դեմքին թափված մազերը, ձեռքի տակից նայում է թշնամու շղթային։

— Պառկի՛ր...— նրա համար վախենալով ու սփրթնելով, զայրացած գոչեց Բունչուկը,— պառկի՛ր, ասում եմ քեզ...

Աննան նայեց նրա կողմը ու շարունակեց ծնկաչոք մնալ։ Քիչ էր մնում, որ Բունչուկի բերանից քարի պես ծանր մի հայհոյանք թռչեր։ Նա վազեց դեպի Աննան, զոռով նրան տափեց գետնին։

Գնդացրի վահանակի հետևում ֆսֆսում էր Կրուտոգորովը։

— Խափանվել է, չի գործում,— դողալով, կամացուկ ասաց նա Բունչուկին,— աչքերով փնտրեց Գևորգյանցին, հազալով աղաղակեց.— փախել է անիծվածը, փախել է քո գարշելի խլեզը... Նա իր ախ ու վախով հոգիս բերանս բերեց... Չի թողնում, որ մարդ աշխատի...

Գևորգյանցը մոտեցավ սողալով, օձավարի գալարվելով։ Նրա սև, չսափրված մորուքին ցեխ էր կպել ու չորացել։ Կրուտոգորովը շուռ տալով իր քրտնակալած, եզան վիզը, մի վայրկյան նայեց նրան, հրաձգության որոտմունքից էլ բարձր ձայնով բղավեց.

— Ժապավենները ո՞րտեղ ես ճխտել... Անասո՛ւն... ցեխո՛տ փալաս... Բունչուկ, Բունչուկ, ռա՛դ արա դրան, թե չէ կսատկացնեմ։

Բունչուկը տնտղում էր գնդացիրը։ Մի գնդակ ուժգին խփեց վահանակին, ու նա ձեռքը ետ քաշեց, ասես վառվող առարկայի էր դիպցրել։

Կարգավորելով գնդացիրը, ինքը սկսեց կրակել։ Աներկյուղ առաջացող ալեքսեևականներին ստիպեց պառկել ու թաքստոց փնտրելով, դեպի ետ սողաց։

Հակառակորդի շղթաները մոտենում էին։ Հեռադիտակով երևում էր, թե ինչպես էին գալիս կամավորները,— հրացանները փոկի առած, հազվադեպ պառկելով։ Նրանց կրակը ավելի սաստկացավ։ Կարմիրգվարդիականների շղթայում ընկան երեքը, ընկերները սողալով մոտեցան, վերցրին նրանց հրացաններն ու փամփուշտները,— մեռածներին զենքը հարկավոր չէ... Կրուտոգորովի գնդացրի կողքին պառկած Բունչուկի և Աննայի աչքերի առաջ, շղթայում գնդակը խփեց բոլորովին ջահել մի կարմիրգվարդիական տղայի։ Սա երկար թպրտաց ու խոխռաց, փաթաթաններով ոտները խփեց գետնին և ի վերջո, հենվելով տարած ձեռների վրա, մի քիչ բարձրացավ, տնքաց, ընկավ երեսի վրա՝ վերջին անգամ արտաշնչելով օդը։ Բունչուկը կողքից նայում էր Աննային։ Աղջկա մեծ, լայնացած աչքերից սարսափ էր կաթում։ Նա անթարթ նայում էր զինվորի հնամաշ փաթաթաններով փաթաթված՝ տղայի ոտներին, չէր լսում, թե ինչպես Կրուտոգորովը դեմառդեմ գոռում էր.

— Ժապավեն... ժապավեն... տուր, է՛... Աղջիկ, ժապավեն տուր։

Կալեդինականները թևային խոր շրջանցումով ետ մղեցին կարմիրգվարդիական շղթան։ Նախիջևանի արվարձանի փողոցներում երևում ու չքանում էին նահանջող կարմիրգվարդիականների սև վերարկուներն ու շինելները։ Աջ թևի

ծայրի գնդացիրն ընկավ սպիտակների ձեռքը։ Ինչ-որ ավագ յունկեր դեմառդեմ գնդակահարեց հույն Միխալիդիին, երկրորդ գնդացրորդին խոցոտեցին սվիններով, ինչպես վարժական խրտվիլակ. գնդացրորդներից միայն գրաշար Ստեպանովը փախավ։

Նահանջը կանգ առավ, երբ նավերից թոան առաջին արկերը։

— Շղթա՛ կազմել... Իմ հետևի՛ց...— առաջ վազելով գոռաց ռեկոմի մի անդամը, որ ծանոթ էր Բունչուկին։

Կարմիրգվարդիական շղթան ճոճվեց, ու բեկվելով՝ հարձակման նետվեց։ Երեքը գրեթե կողք-կողքի սլացան Բունչուկի և նրանից չհեռացող Կրուտոգորովի, Աննայի ու Գևորգյանցի կողքից։ Մեկը ծխում էր, մյուսը քայլելիս հրացանի փականակը խփում ծնկին, երրորդն ուշադրությամբ դիտում էր իր վերարկուի ցեխոտված փեշերը։ Նրա դեմքին, բեղերի ծայրերին մեղավորի քմծիծաղ էր նշմարվում. կարծես նա ոչ թե դեպի մահ էր գնում, այլ ընկերական քեֆից տուն էր վերադառնում, ու դիտելով ցեխոտված վերարկուն, որոշում էր, թե իրեն ինչ պատժի է ենթարկելու դարձվոր կնիկը։

— Հրե՛ն նրանք,— գոչեց Կրուտոգորովը՝ ցույց տալով հեռավոր մի ցանկապատ և դրանից դենը վխտացող գորշ մարդուկներին։

— Տեղակայե՛լ.— Բունչուկը անճոռնի կերպով շուռ տվեց գնդացիրը։

Գնդացրի ահարկու տրաքոցները Աննային ստիպեցին փակել ականջները։ Նա պպզեց, տեսավ, թե ինչպես ցանկապատից դենը դադարեց շարժումը, իսկ մի րոպեից հետո այնտեղից համաչափ խփեցին համազարկերը, ու գնդակները թոան վերևից՝ անտեսանելի ճեղքեր բանալով երկնքի գորշ պարուսինի մեջ։

Ճայթում էին հապճեպ հրաձգության հատու զարկերը, անընդ խանձվում գնդացիրների մոտ օձի նման ջալարվող ժապավենները։ Պարզ ու լիահունչ տրաքվում էին հատհատ կրակոցները։ Կրճտում, կաղկանձում, ոռնում էին կարմիրգվարդիականների գլխավերևից թռչող արկերը, որ արձակում էին նավերից սևծովյան նավաստիները։ Աննան տեսավ, թե ինչպես կարմիրգվարդիականներից մեկը, որ բարձրահասակ էր, գառան մորթու փափախով, անգլիական ձևով կտրած բեղերով, դիմավորում, ակամա գլուխ տալով էր ուղեկցում վերևից թռչող ամեն մի արկ, գոռում էր.

— Ջա՛ն, ձեզ մատաղ, շա՛տ թափվեցեք, ջարդեք նրանց։

Իրոք որ հետզհետե ավելի շատ արկեր էին թափվում։ Սովայինները ճշտելով հրաձգությունը, կոմբինացված կրակ էին տեղում։ Շրապնելները հաճախակի պայթում էին դանդաղ նահանջող կալեդինականների առանձին խմբերի վրա։ Ճիշտ նպատակին խփող մի հրանոթի արկերից մեկը պայթեց թշնամու նահանջող շղթայի մեջ։ Պայթյունի սև սյունը դես ու դեն շպրտեց մարդկանց, ծուխը չոքեց ձագարի վրա, ցրիվ եկավ։ Աննան գցեց հեռադիտակը, հառաչեց, կեղտոտված ձեռներով ծածկեց սարսափահար աչքերը. նա հեռադիտակի ապակե կլորակների մեջ տեսավ պայթյունի մրրկաձյունը և ուրիշների ոչնչացումը։ Նրա կոկորդը բռնվեց դառն ջղակծկումով։

— Ի՞նչ պատահեց,— թեքվելով նրա կողմը, հարցրեց Բունչուկը։

Աննան ատամներն իրար սեղմեց, նրա լայնացած բիբերը գունատվել, մշուշվել էին։

— Ջեմ կարող...

— Արիացիր, Աննա... լսո՞ւմ ես, հը՞, լսո՞ւմ ես... Այդպես չի կարելի... չի-չի՛ կարելի...— հնչում էր Աննայի ականջին հրամանի ազդու ձայնը։

Աջ թևում, մի փոքրիկ բլուրի տակին, ձորակում հավաքվում էր հակառակորդի հետևակը։ Բունչուկը նկատեց այդ. գնդացիրը ավելի հարմար մի տեղ տանելով, բլուրը և ձորակը առավ կրակի տակ։

Տա-տա-տա-տա՛-տա... տա-տա-տա-տա՛,— անհամաչափ, ընդհատումներով աշխատում էր Ռեբինդերի գնդացիրը։

Քսան քայլ հեռավորությամբ մեկը խոպոտված, բարկացկոտ ձայնով գոռում էր.

— Պատգարակնե՛ր բերեք... չկա՞ն... Պատգարակնե՛ր...

— Նշանո-ո-ցը-ը...— ծոր էր տալիս գասակապետի,— ճակատային զինվորներից մեկի ձայնը,— տասնո՛ւթ... գասա՛կ, կրա՛կ։

Իրիկնադեմին մոայլ երկրի վրա, պտույտ գալով, իջան ձյան առաջին փաթիլները։ Մի ժամից հետո թաց, կպչուն ձյունը բարակ, սպիտակ շերտով ծածկեց դաշտը ու սպանվածների դորշ և սև դիակները,— դրանք ընկած էին ամենուրեք, ուր հարձակվել ու նահանջել էին կռվողները։

Իրիկնադեմին կալեդինականները ետ քաշվեցին։

Առաջին ձյունով մի փոքր սպիտակին տվող այդ գիշերը Բունչուկը գտնվում էր գնդացրային ուղեկալում։ Կրուտոգորովը որտեղից որտեղ ձեռք բերած մի շքեղ տապճակ գլխին գցած, թել-թել, թրջված միս էր ուտում, թքում, հայհոյում ցածր ձայնով։ Գեորգյանցը հենց այդտեղ, ծայրամասի մի տան դարբասի մոտ իր փաթթած թութունի կրակով տաքացնում էր կապտած, ցրտից կծկված մատները, իսկ Բունչուկը նստել էր փամփուշտի ցինկե արկղի վրա, շինելի փեշով փաթաթել ցրտից դողացող Աննային, ու նրա աչքերից վերցնելով նրա ամուր սեղմված, խոնավ ձեռները, երբեմնակի համբուրում էր դրանք։ Քնքշության խոսքերը, որոնց սովոր չէր Բունչուկը, դժվարությամբ էին պոկվում նրա շուրթերից։

— Լավ, այդ ի՞նչպես կարելի է... Դու հո պինդ էիր... Ա՛նյա, լսիր, հավաքիր ուժերդ... Անյա... Սիրելիս... բարեկամս... Ոչինչ, կընտելանաս... Եթե հայարտությունը քեզ թույլ չի տալիս հեռանալ, ապա ուրիշ տեսակ եղիր։ Այդպես չի կարելի նայել սպանվածներին... Անցիր անտարբեր, և ուրիշ ոչինչ։ Մտքերիդ ազատություն չտաս, սանձահարիր դրանք։ Ա՛յ, տեսնո՞ւմ ես, դու ուրիշ բան էիր ասում, բայց էլի կնոջ բնությունը հաղթահարում է քեզ։

Աննան լուռ էր։ Նրա ձեռներից աշնանային հողի և կնոջ ջերմության բույր էր զգացվում։

Իջնող ձյունը երկինքը ծածկում էր մթին, նուրբ քողով։ Թմրեցուցիչ նինջն էր շոքել բակի, մոտակա դաշտի, գազանաբար դարանակալած քաղաքի վրա։

VII

Ռոստովի մոտ և հենց Ռոստովում վեց օր մարտեր էին տեղի ունենում։

Կռվում էին փողոցներում ու ճանապարհների խաչմերուկներում։ Կարմիրգվարդիականները երկու անգամ թողին Ռոստովի կայարանը ու երկու անգամն էլ այնտեղից դուրս քշեցին հակառակորդին։ Վեց օրվա ընթացքում գերիներ չեղան որևէ կողմից։

Նոյեմբերի 26-ի իրիկնադեմին Բունչուկն ու Աննան ապրանքային կայարանի կողքից անցնելիս տեսան, որ երկու կարմիրգվարդիական գնդակահարում են գերի վերցրած մի սպայի. Բունչուկը մի փոքր կոշտ տոնով ասաց Աննային, որը դեմքը շուռ էր տվել այդ տեսարանից.

— Ա՛յ, դա խելոք բան է։ Պետք է սպանել նրանց, ոչընչացնել առանց խնայելու. նրանք մեզ չեն խնայի ու մենք դրա կարիքը չենք էլ զգում, հարկ չկա նրանց ներելու։ Թող կորչեն։ Պետք է երկրի երեսից ջնջել այդ գարշանքը։ Եվ առհասարակ ո՛չ մի ներողամտություն, երբ գործը վերաբերում է ռևոլյուցիայի բախտին։ Իրավացի են դրանք, այդ բանվորները։

Երրորդ օրը նա հիվանդացավ։ Մի օր մնաց ոտի վրա, հետզհետե աճող սրտխառնուք և ամբողջ մարմնի թուլություն էր զգում, գլուխը լցվում էր թույլի դնգդնգոցով և անհաղթահարելի ծանրությամբ։

Դեկտեմբերի 2-ի լուսաբացին կարմիրգվարդիական նոսրացած, փոքրիկ ջոկատները հեռանում էին քաղաքից։ Բունչուկը Աննայի ու Կրուտոգորովի օգնությամբ քայլում էր սայլի հետևից, որը բարձած էր գնդացրով ու վիրավորներով։ Նա մեծագույն դժվարությամբ էր տանում իր նվաղած, անուժ մարմինը, ասես երազի մեջ էր փոխում երկաթի պես ծանրացած ոտները, հանդիպում Աննայի հեռավոր, գորովագին ու տագնապալից հայացքին, ու կարծես հեռվից էր լսում նրա խոսքերը։

— Նստիր սայլին, Իլյա։ Լսո՞ւմ ես։ Դու ինձ հասկանո՞ւմ ես, Իլյուշա։ Խնդրում եմ քեզ, նստիր, ախր դու հիվանդ ես։

Սակայն Բունչուկը չէր հասկանում Աննայի խոսքերը, չէր հասկանում նաև այն, որ տիֆը ուժասպառ է արել և արդեն հաղթահարել է իրեն։ Որտեղից որտեղ, չթափանցելով նրա գիտակցության մեջ, լսվում էին օտարոտի և տարորեն ծանոթ ձայները, որտեղից որտեղ, հեռվում մոլեգնող, տագնապա-

լից հրով էին վառվում Աննայի սև աչքերը, հրեշավոր կերպով ճոճվում, ծածանվում էր Կրուտոգորովի մորուքը։

Բունչուկը իր լայն ձեռները տանում էր գլխին, սեղմում վառվող, կարմրած դեմքին։ Նրան թվում էր, թե իր աչքերից արյուն է կաթում, իսկ անեզր ու երերուն, իրենից ինչ-որ անտեսանելի վարագույրով կտրված ամբողջ աշխարհը ծառս է լինում, պոկվում իր ոտների տակից։ Նրա զառանցող երևակայությունը անասելի կերպարներ էր պատկերում։ Նա հաճախ կանգ էր առնում, դիմադրում Կրուտոգորովին, որը ուզում էր նրան սայլ նստեցնել։

— Հարկավոր չէ, սպասիր։ Դու ո՞վ ես... Ո՞րտեղ է Աննան... Ինձ մի կտոր հող տուր... Իսկ նրանց ոչնչացրու,— իմ հրամանով գնդացրի կրակի տակ առ։ Ուղիղ նշանառությո՛ւն... Կաց, որքա՛ն տաք է...— խոխոռում էր նա՝ ձեռքը դուրս քաշելով Աննայի ձեռքերից։

Նրան ուժով նստեցրին սայլին։ Նա մի բոպե դեռ զգում էր ինչ-որ այլատեսակ հոտերի սուր խառնուրդը, վախով փորձում էր վերադարձնել գիտակցությունը, հաղթահարել իրեն, ու չհաղթահարեց։ Փակվեց նրա վերևում սև, անունչ դատարկությունը։ Միայն հեռո՛ւ բարձունքում անկյունակերպ վառվում էին մի ինչ-որ արևակնային, լազուրե կապտությամբ գեղազարդված փնջիկ ու խաչաձևվում էին ոսկեպայծառ կայծակների զիգզագներն ու օղերը։

VIII

Կտուրներից ընկնում էին ծղնոտից մի փոքր դեղնած սառցալեզվակները, ապակու պես զրնգալով փշրվում։ Խուտորում տաքությունից ջրափոսեր ու հալուտներ էին առաջացել, փողոցներում հոտ քաշելով թափառում էին չմազաթափված կովերը։ Ծտերը, ինչպես գարնանը, ծլվլում էին, վխտում բակերի ցախակույտերի մեջ։ Հրապարակում Մարտին Շամիլը ընկել էր բակից փախած մի գեր, շիկակարմիր ձիու հետևից։ Զին դիք բարձրացնելով Դոնի նժույգներին հատուկ թել-թել պոչը, քամուց փոփոխացնելով չսանրված բաշը, վազում էր ցատկոտելով, սմբակներով դեն շպրտում կիսահալ ձյան կտորները, հրապարակում պտույտներ էր կատարում, կանգ առնում եկեղեցու ցանկապատի մոտ, հոտոտում աղյուսը. սպասում էր տիրոջ մոտենալուն, մանուշակագույն աչքը ծռում նրա ձեռքի սանձի վրա ու նորից թռչում կատաղի քառատրոփով։

Հունվարը ամպամած, տաք օրեր էր շնորհում երկրին։ Նայելով Դոնին, կազակներն անժամանակ վարարում էին սպասում։ Միրոն Գրիգորևիչն այդ օրը երկար կանգնել էր հետին բակում, գիտում էր ձյունով ուռճացած մարգագետինը, Դոնի կապույտ-կանաչավուն սառույցը, ու մտածում էր. «Մտիկ, է՛, այս տարի էլ թունդ վարարելու է, ոնց որ անցած տարին էր։ Ա՛մա թե ձյուն է եկել, հա՞-ա։ Ծանր է նստել ձյունը, գետինը ո՞նց շունչ քաշի»։

Միտկան պաշտպանական գույնի հենց մի շապիկ հագած՝ մաքրում էր կովանոցը։ Սպիտակ փափախը քշել էր ծոծրակի վրա։ Քրտինքի մեջ կորած, ուղիղ մազերը թափվել էին ճակատին։ Միտկան դրանք ետ էր տանում կեղտոտ, գոմաղբի հոտ արձակող ձեռքի արտաքին մասով։ Բակի դարբասի մոտ թափված էին անասունների թրիքի սառած կտորները, դրանց վրա թրևում էր բրդոտ, արու մի այծ։ Ոչխարները ցանկապատի տակ իրար գլխի էին հավաքվել։ Մի թոխլի, որ մորից էլ բարձր էր, փորձում էր ծծել նրան, մայրը թոխլուն քշում էր գլխի հարվածներով։ Մի կողմում օղանման պոզերով սև ղոչը քսվում էր արորին։

Ամբարի մոտ, որի դուռը ներկված էր կավով ու դեղին գույն ուներ, փռվել էր կախ ընկած թշերով, դեղին հոնքերով մի որձ շուն։ Դրսի կողմից, ծածկի տակ, ամբարի պատերից կախված էին ձկնորսական պիտույքները. Գրիշկա պապին հենակին կոթնած, դիտում էր դրանք. երևի մտածում էր մոտալուտ գարնան և ձկնորսական պիտույքները նորոգելու մասին։

Միրոն Գրիգորևիչը անցավ կալը, հոգատար աչքով զննեց խոտի դեզերը, ուզում էր փոցխով հավաքել այծերի թափթփած՝ կորեկի ծղնոտը, բայց նրա ականջին օտար ձայներ հասան։ Նա փոցխը գցեց դեզի վրա, գնաց բակ։

Միտկան մի ոտը հեռու դրած, թութուն էր փաթաթում, սիրածի ասեղնագործած շքեղ թութունի տոպրակը պահել էր երկու մատների արանքում։ Նրա կողքին կանգնել էին Խրիս-

տոնյան ու Իվան Ալեքսեևիչը։ Խրիստոնյան ատամանական կապույտ գլխարկի միջից հանեց ծխելու կեղտոտված թուղթը։ Իվան Ալեքսեևիչը բակի հյուսկեն դարբասին հենված, շինելը բացած, խառնիտում էր զինվորական բամբակած շալվարի գրպանները։ Կզակի վրա սևին էր տալիս խորունկ մի ծակ։ Սափրված, պլպլան դեմքի վրա ստվերվում էր վրդովմունքը. ըստ երևույթին նա մի բան էր մոռացել։

— Բարև, Միրոն Գրիգորևիչ, քեֆդ ո՞նց է,— հարցրեց Խրիստոնյան։

— Փա՜ռք աստծո, բարով հազար բարի։

— Առ, թուքուն փաթթիր։

— Շնորհակալ ենք։ Նոր եմ ծխել։

Ձեռք տալով կազակներին, Միրոն Գրիգորևիչը հանեց կարմրակատար փափախը, շփեց բիզ-բիզ կանգնած, սպիտակավուն մազերը և ժպտաց։

— Հը՛, խեր ըլի ձեր գալը, աղբերացու ատամանցիներ։

Խրիստոնյան վերևից ներքև նայեց նրան, միանգամից չպատասխանեց. նախ՝ երկար թքոտեց թուղթը,— եզան լեզվի պես անհարթ, մեծ լեզուն քսեց դրան, ու արդեն փաթաթելով թուքունը, ասաց բամբ ձայնով.

— Միտրիի հետ, ուրեմս, գործ կա։

Ոտները քստքստացնելով, նրանց կողքից անցավ Գրիշակա պապին։ Նա տարավ ձկնորսական պարագայքը, որ բռնել էր երկարած ձեռքին։ Իվան Ալեքսեևիչը և Խրիստոնյան հանեցին փափախները, բարևեցին նրան։ Գրիշակա պապին ուկանները դրեց արտաքին սանդուղքի մոտ, վերադարձավ։

— Հը՛, այդ ո՞նց է որ նստել եք տանը, ռազմիկներ. քեֆ եք քաշում ձեր կնանոնց կողքին, հա՞-ա,— դիմեց նա կազակներին։

— Ի՞նչ կա որ,— հարցրեց Խրիստոնյան։

— Դեհ, Խրիստուշկա, սո՛ւս արա։ Միթամ չգիտե՛ս, էլի՛։

— Աստված վկա, չգիտեմ,— երդվեց Խրիստոնյան։— Այն խաչը վկա, չգիտեմ, պապո։

— Անցած օրը մի մարդ էր եկել Վորոնեժից, վաճառական էր, Սերգեյ Պլատոնիչ Մոխովի ծանոթը թե բարեկամազգականը,— չգիտեմ։ Հա՛, եկել է ու ասում է, թե Ջյորտկովում ուրիշ զորք է կանգնած,— հենց այդ բոլշևիկները։

Ռուսաստանը կովով գալիս է մեր վրա, իսկ դուք մտել եք ձեր տները։ Դու էլ, մունդռիկ... լսո՞ւմ ես, Միտկա։ Ի՞նչ ես սսկել, հը՞։ Ի՞նչ եք մտածում դուք։

— Մենք ոչինչ էլ չենք մտածում,— ժպտաց Իվան Ալեքսեևիչը։

— Հենց այդ է փորձանքը, որ ոչինչ չեք մտածում,— տաքացավ Գրիշակա պապին։— Ձեզ վանդակի մեջ կդնեն ոնց որ կաքավներին։ Մուժիկները ձեզ գերի կդարձնեն, քիթ ու մռութներդ կչարդեն...

Միրոն Գրիգորևիչը զուսպ ժպտում էր. Խրիստոնյան ձեռքով շփում, սվսվացնում էր վաղուց չսափրած կոշտ մորուքը. Իվան Ալեքսեևիչը ծխում, նայում էր Միտկային, իսկ վերջինիս կատվի ակնարբիբերը կայծկլտում էին, ու չէր կարելի հասկանալ,— ծիծաղո՞ւմ են նրա կանաչ աչքերը, թե՞ մշուշվում անկուշտ բարկությամբ։

Մի քիչ խոսելով, Իվան Ալեքսեևիչը և Խրիստոնյան հրաժեշտ տվին, Միտկային կանչեցին բակի դռան մոտ։

— Դու երեկ ինչո՞ւ չեկար ժողով,— խստորեն հարցրեց Իվան Ալեքսեևիչը։

— Ժամանակ չունեի։

— Իսկ Մելեխովների մոտ գնալու ժամանակ կա՞ր, հա՞։

Միտկան գլխի շարժմամբ փափախը իջեցրեց ճակատին, ծածուկ շարանալով ասաց.

— Ձե՛կա, ու պրծավ գնաց։ Ինչի՞ մասին պիտի խոսենք։

— Եկել էին խուտորի բոլոր ճակատայինները, Պետրո Մելեխովը չկար։ Գիտե՞ս... որոշեցինք խուտորի կողմից դելեգատներ ուղարկել Կամենսկայա։ Հունվարի տասին այնտեղ ճակատայինների համագումար է լինելու։ Վիճակ գցեցինք, թե ով պիտի գնա. վիճակն ընկավ այս երեքիս,— ինձ, Խրիստոնյային և քեզ։

— Ես չեմ գնա,— վճռականապես հայտարարեց Միտկան։

— Ի՞նչ ես ասում։— Խրիստոնյան մռայլվեց ու բռնեց Միտկայի վերնաշապկի կոճակից։— Կտրվո՞ւմ ես մերոնցից, հը՞։ Ձեռ չի՞ տալի։

— Սա Պետկա Մելեխովի հետ է...— Իվան Ալեքսեևիչը

շոշափեց Խրիստոնյայի շինելի թևքը, նկատելիորեն գունատվելով ասաց.— Դե՛հ, գնանք։ Երևում է, որ այստեղ մենք գործ չունենք... Չե՞ս գնա, Միտրի։

— Չէ՛... Ասի «չէ», ուրեմս չեմ գնա։

— Բարո՛վ մնաս,— Խրիստոնյան թեքեց գլուխը։

— Հաջողությո՛ւն։

Միտկան հայացքը մի կողմ դարձնելով, իր տաք ձեռքը մեկնեց նրան, գնաց տուն։

— Ի՛ժ,— ցածրաձայն ասաց Իվան Ալեքսեևիչը ու մի վայրկյան դողացին նրա ոունգները։— Ի՛ժ,— ավելի հնչեղ կրկնեց նա՝ նայելով հեռացող Միտկայի լայն մեջքին։

Ճանապարհին մտնելով մի քանի տուն, հայտնեցին ճակատայիններից ոմանց, որ Կորշունովը հրաժարվել է գնալուց և որ իրենք երկուսով վաղը մեկնում են համագումար։

Հունվարի 8-ի լուսաբացին Խրիստոնյան և Իվան Ալեքսեևիչը մեկնեցին խուտորից։ Իր ցանկությամբ նրանց տարավ Յակով Պոդկովան։ Մի զույգ հիանալի ձիեր սահնակի միակ առեղին լծված, արագությամբ անցան խուտորը, դուրս եկան բլրակը։ Հալչլոցը մերկացրել էր ճանապարհը։ Տեղ-տեղ, ուր հալվել էր ձյունը, սահնակը կպչում էր հողին, ընթանում ցնցումներով, ձիերը զոռ էին տալիս, պիրկ ձգում փոկերը։

Կազակները գնում էին սահնակի հետևից։ Պոդկովան առավոտյան թեթև սառնամանիքից կարմրած, քայլում էր, սապոգներով ջարդոտում զրնգուն սառույցը։ Նրա դեմքին պլպլում էր կարմրությունը, միայն ձվաձև սպին դիակնային կապտություն ուներ։

Ճանապարհի կողմից, հատիկավոր, նստած ձյան վրայով Խրիստոնյան դժվարությամբ բարձրանում էր բլուրը, կլանում օդը, շնչասպառ լինում, որովհետև 1916 թվականին Դուբնոյի մերձակայքում հոտ էր քաշել գերմանական հեղձուցիչ գազերից։

Բլրակի վրա ուժեղ քամի էր փչում։ Ավելի ցուրտ էր։ Կազակները լուռ էին։ Իվան Ալեքսեևիչը դեմքը ծածկում էր քուրքի օձիքով։ Հեռվից մոտենում էր մի փոքրիկ անտառ։ Ճանապարհը դրա միջից անցնելով, դուրս էր գալիս բլրաշարքի կատարը, ուր շատ կուրգաններ կային։ Անտառում վտակի նման վշշում էր քամին։ Ճյուղաշատ կաղնիների

բների վրա ոսկեվուն նախշեր էին առաջացրել ժանդի թեփուկապատ շերտերը։ Հեռվում ճռվողում էր կաչաղակը։ Նա պոչը ծռած, թռչում էր ճանապարհի վերևից։ Քամին քշում էր նրան, ու նա թռչում էր շեշտակի թափով, խայտաբղետ թևերը փռած։

Պոդկովան, որ խուտորից մինչև այդտեղ լուռ էր, շուռ եկավ դեպի Իվան Ալեքսեևիչը, բառերը պարզ արտասանելով ասաց (հավանորեն մտքում վաղուց պատրաստել էր այդ արտահայտությունը).

— Համագումարում աշխատեցեք, որ գործը լինի առանց պատերազմի։ Կովողներ չեն գտնվի։

— Հասկանալի է,— համաձայնեց Խրիստոնյան, որ նախանձելով դիտում էր կաչաղակի ազատ թռիչքը, ու թռչունի անհոգ, երջանիկ կյանքը մտքում համեմատեց մարդկային կյանքի հետ։

Նրանք Կամենկայա հասան հունվարի 10-ի իրիկնադեմին։ Կազակների բազմությունները մեծ ստանիցայի փողոցներով գնում էին դեպի կենտրոնը։ Զգալի աշխուժություն էր նկատվում։ Գտնելով Գրիգորի Մելեխովի բնակարանը, Իվան Ալեքսեևիչն ու Խրիստոնյան իմացան, որ նա տանը չէ։ Տանտիրուհին, որ չաղ և խարտյաշ մի կին էր, ասաց, որ նա գնացել է համագումար։

— Որտե՞ղ է դա, հենց այդ համագումարը,— հարցրեց Խրիստոնյան։

— Երևի օկրուգային վարչությունում կամ փոշտում,— պատասխանեց տանտիրուհին ու Խրիստոնյայի քթի առաջ անտարբերությամբ ծածկեց դուռը։

Համագումարը լիովին եռուն վիճակում էր։ Մեծ, բազմապատուհան սենյակը հաղիվ էր տեղավորել պատգամավորներին։ Շատ կազակներ էին խմբվել սանդուղքի վրա, միջանցքներում, հարևան սենյակներում։

— Արի՛ իմ հետևից,— տնքաց Խրիստոնյան՝ գործի դնելով արմունկները։

Իվան Ալեքսեևիչը անցավ նրա հետևից բացված նեղ ճեղքով։ Համարյա հենց այն սենյակի դռան մոտ, ուր տեղի էր ունենում համագումարը, Խրիստոնյային կանգնեցրեց մի

կազակ, որի առոգանությունից երևում էր, որ նա Դոնի ստորին ավազանի կազակներից էր։

— Կամաց հրեիր լավ կլիներ, գոմեշ,— խայթող տոնով ասաց նա։

— Թո՛ղ, է՛։

— Այստեղ էլ կկանգնես։ Հո տեսնում ես, որ տեղ չկա։

— Թող, մոծակ, թե չէ կսխկեմ։ Կջնջեմ, հա՛-ա,— խոստացավ Խրիստոնյան, ու հեշտությամբ բարձրացնելով ցածրահասակ կազակին, դեն քշեց նրան, առաջ անցավ։

— Ա՛յ քեզ ա՞րջ։

— Աժդահա ատամանցի է, հա՛-ա։

— Ուժով է մարդը։ Չորս դյույմանոց թնդանոթ կշալակիչ։

— Ո՛նց դեն գցեց նրան, հա՛-ա։

Հոծ բազմությամբ կանգնած կազակները ժպտում էին, ակամա հարգանքով նայում Խրիստոնյային, որը մի գլխաչափ բարձր էր բոլորից։

Գրիգորիին գտան հետին պատի մոտ։ Նա պպզել էր, ծխում էր, զրուցում մի ինչ-որ կազակի՝ 35-րդ գնդի պատգամավորի հետ։ Նա տեսավ իրենց խուտորի բնակիչներին, ու նրա կախ ընկած, սևաթույր բեղերը շարժվեցին ժպտալուց։

— Օ՜-օ... այդ ո՞ր քամին բերեց ձեզ։ Բարև, Իվան Ալեքսեևիչ, բարև, Խրիստոնյա ապեր, ո՞նց ես։

— Դեհ, ուրեմս, սաղ ենք, էլի՛,— քմծիծաղ տվեց Խրիստոնյան՝ Գրիգորիի ամբողջ ձեռքը տեղավորելով իր կես արշինանոց ձեռքի մեջ։

— Մերոնք ո՞նց են։

— Փա՛ռք աստծուն։ Բարև ղրկեցին։ Հերըդ ասաց, որ գնաս տեսության։

— Պետրոն ո՞նց է։

— Պետրոն...— Իվան Ալեքսեևիչը ակամա ժպտաց,— Պետրոն մեզ նմանների հետ գլուխ չի դնում։

— Գիտեմ։ է՛, բա Նատալյա՞ն, երեխանե՞րս։ Տեսե՞լ եք։

— Բոլորն էլ ողջ-առողջ են, բարևում են։ Հերըդ նեղացած է...

Խրիստոնյան գլուխը շարժելով դիտում էր սեղանի

շուրջ նստած նախագահությունը։ Նա մյուսներին հետևելով էլ էր տեսնում բոլորին։ Օգտվելով նիստի մի փոքրիկ ընդմիջումից, Գրիգորին շարունակում էր հարցափորձը։ Խուտորի, այնտեղ եղած նորությունների մասին պատմելիս Իվան Ալեքսեևիչը կարճ հաղորդեց ճակատայինների ժողովի մասին, որոնք իրեն ու Խրիստոնյային ուղարկել էին այստեղ։ Նա սկսեց հարցափորձ անել, թե ինչ է կատարվում Կամենսկայայում, բայց այդ ժամանակ սեղանի շուրջ նստածներից մեկը հայտարարեց.

— Հիմի, ժողովականներ, պիտի խոսի հանքափոր բանվորների պատգամավորը։ Խնդրվում է ուշադրությամբ լսել, ինչպես նաև կարգ պաշտպանել։

Հաստ շրթունքներով, միջահասակ մի մարդ շտկեց դեպի վեր սանրված շեկ մազերը, սկսեց խոսել։ Մեղուների դժժոց հիշեցնող ձայները միանգամից կտրվեցին։

Նրա տաք, կրքոտ ճառի առաջին իսկ բառերից Գրիգորին և մյուսները զգացին ուրիշի համոզմունքի ուժը։ Նա ասում էր, թե ինչպիսի դավաճանական քաղաքականություն է վարում Կալեդինը, որը կազակությանը դրդում է պայքարել Ռուսաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դեմ, խոսում էր կազակների ու բանվորների շահերի ընդհանրության մասին, այն նպատակների մասին, որ հետապնդում են բոլշևիկները՝ պայքար մղելով կազակական կոնտրռևոլյուցիայի դեմ։

— Մենք եղբայրական ձեռք ենք մեկնում աշխատավոր կազակության և հույս ունենք, որ ի դեմս ճակատային կազակության հավատարիմ զինակիցներ կգտնենք սպիտակգվարդիական բանդայի դեմ մղվող պայքարում։ Ցարական պատերազմի ֆրոնտներում բանվորներն ու կազակները միասին էին արյուն թափում, ու բուրժուազիայի տականքների դեմ ուղղված պատերազմում,— որոնց հովանավորում է Կալեդինը,— մենք պետք է միասին լինենք, ու միասին կլինենք։ Ձեռք-ձեռքի տված մենք կգնանք կռվելու նրա՞նց դեմ, ովքեր ամբողջ հարյուրամյակների ընթացքում ստրկացրել են աշխատավորներին,— թնդում էր հանքափորի շեփորային ձայնը։

— Շա՜-ա՜-ան որդի, թափի՛ր նրա փոր ու փսորը...—

ցնծությամբ շշնջում էր Խրիստոնյան ու այնպես էր սեղմում Գրիգորիի արմունկը, որ Գրիգորին կնճռոտում էր դեմքը։

Իվան Ալեքսեևիչը լսում էր բերանը մի քիչ բացած, լարվածությունից հաճախակի թարթում էր աչքերը, մռմռում.

— Ճիշտ է, ա՛յ, դա ճիշտ է։

Պատգամավորից հետո, օրորվելով ինչպես հացենին քամուց, խոսեց մի ինչ-որ բարձրահասակ հանքափոր։ Վեր կացավ նա, շտկվեց, կարծես ծալված լիներ, նայեց բազմաշյա ամբոխին ու երկար սպասեց՝ մինչև որ դադարեր դժժոցը։ Այդ հանքափորը բեռնանավի պարանի էր նման. հանգուցավոր էր, հուսալի կերպով պինդ, կոշտ պլպլում էր կանաչ գույնով, ասես արջասպած լիներ։ Նրա դեմքի ծակոտիներում սևին էին տալիս ածխափոշու փոքրիկ, շմաքրվող կետերը, ու նույնպիսի ածխային փայլ ունեին դեղնավուն աչքերը, որոնք իրենց գույնը գցել էին մշտական մթությունից ու երկրի ընդերքի սև շերտերից։ Նա թափահարեց կարճ մազերը, բռունցքները սեղմած ձեռները,— ասես քլունգ էր զարկում։

— Զինվորների համար ո՞վ մահվան պատիժ մտցրեց ֆրոնտում. Կոռնիլովը։ Ո՞վ է Կալեդինի հետ մեզ խեղդում. նա՛.— ու վրա տվեց, մոլեգնաբար աղաղակեց.— Կազակնե՛ր, եղբայրնե՛ր, եղբայրնե՛ր, եղբայրնե՛ր, ո՞ւմ կողմը պիտի լինեք։ Կալեդինն ուզում է, որ մենք եղբայրական արյուն թափենք։ Ո՛չ, ո՛չ, նրանց գործը գլուխ չի գա։ Կսխկենք, ջարդ ու փշուր կանենք նրանց։ Այդ հիդրաներին ծովը կթափենք։

— Շա-ա՛-ան որդի...— Խրիստոնյան ժպտալուց բերանը լայն բացած, ձեռներն իրար զարկեց, ու չզսպեց իրեն, գոռաց.— Ճի՛-իշտ է-է... ձաղկիր նրանց։

— Սո՛ւս արա, Խրիստան, ի՞նչ ես անում։ Քեզ դուրս կդցեն,— վախեցավ Իվան Ալեքսեևիչը։

Լագուտինը,— Բուկանովսկայայի կազակը և երկրորդ դումարման Համառուսական Կենտգործկոմի կազակական բաժնի առաջին նախագահը,— կազակներին խանդավառեց իր բոցաշունչ, ո՛չ սահուն, բայց նրանց սրտից բխող խոսքերով։ Խոսեց նախագահող Պոդտյոլկովը, նրանից հետո՝ անգլիական ձևով կտրած բեղերով, գեղեցիկ Շչադենկոն։

— Ո՞վ է դա,— պարզելով փոխանցման ձեռքը, հարցրեց Խրիստոնյան Գրիգորիին։

— Շչադենկոն է։ Բոլշևիկների մոտ հրամանատար է։

— Իսկ այն մե՞կը։

— Մանդելշտամն է։

— Ո՞րտեղից։

— Մոսկվայից։

— Իսկ նրանք ովքե՞ր են,— Խրիստոնյան մատնացույց արեց Վորոնեժի՝ համագումարի մի խումբ պատգամավորներին։

— Դոնե մի քիչ լռիր, Խրիստան։

— Տե՛ր աստված, ախր, ուրեմս, հետաքրքիր է, է՛... Դու ինձ ասա, հրե՛ն այն մեկը, որ Պոդտյոլկովի կողքին է նստել, այն երկար մարդը, ո՞վ է նա։

— Կրիվոշլիկովն է, Ելանսկայա ստանիցայի Գորբատով խուտորից։ Նրանից դենը մերոնք են,— Կուդինովը, Դոնեցկովը։

— Մի բան էլ հարցնեմ... հրե՛ն, այն մեկը... չէ՛, չէ՛... ա՛յ, ծայրից նատածը, որ քյաքուլով է։

— Ելիսեև... չգիտեմ որ ստանիցայից է։

Խրիստոնյան բավարարված լինելով լռեց, առաջվա լարված ուշադրությամբ լսում էր նոր հռետորին և իր հուժկու ձայնով առաջինն էր բոլորից բարձր գոռում՝ «ճի-ի-իշտ է-է՛...»

Ստյոխինից, բոլշևիկ մի կազակից հետո ելույթ ունեցավ 44-րդ գնդի պատգամավորը։ Նա դժվարությամբ, կցկտուր կերպով էր արտասանում նախադասությունները. ասում է մի բան, կարծես դրոշմ է դնում օդի մեջ, ու լռում է, քիթը վեր քաշում. բայց կազակները մեծ համակրանքով էին լսում նրան, միայն երբեմն ընդհատում հավանության ձայներով։ Ըստ երևույթին նրա ասածները ջերմ արձագանք էին գտնում ունկնդիրների մեջ։

— Եղբայրներ, մեր համագումարը պետք է այնպես մոտենա այս լուրջ գործին, որ ժողովուրդը վնաս չքաշի, որ ամեն բան էլ հանգիստ ու լավ վերջանա,— կմկմալով ասում էր նա։— Ես սա նրա համար եմ ասում, որ մենք արյունահեղ կռվի մեջ չընկնենք։ Առանց այն էլ երեք ու կես տարի

հալումաշ եղանք խրամատներումը, ու թե որ, խոսքի օրինակ, էլի բանը կովի հասնի, ուրեմս չէ, կազակները բեզարած են...

— Ճի-ի՜-շտ է՜-է...

— Բոլորովին ճիշտ է։

— Կռիվ չենք ուզում...

— Պետք է համաձայնության գալ թե բոլշևիկների և թե կազակական նեբկայացուցիչների ժողովի հետ։

— Պետք է հաշտությամբ գործ բռնել և ոչ թե... բռունցք թափ տալ։

Պոդտյոլկովը բռունցքով ծեծում էր սեղանը, ու դժժոցը դադարում էր։ Ու նորից շփելով կարճլիկ մորուքը, 44-րդ գնդի պատգամավորը կմկմում էր.

— Մենք պետք է համագումարից մեր դեպուտատներն ուղարկենք Նովոչերկասկ ու հաշտ կերպով խնդրենք, որ կամավորները ու դաշնազան պարտիզանները այստեղից հեռանան։ Բոլշևիկներն էլ նույնպես գործ չունեն մեզ մոտ։ Բանվոր ժողովրդի թշնամիների հետ մենք ինքներս հաշիվ կտեսնենք։ Ուրիշի օգնությունը հլա դեռ մեզ պետք չի, իսկ երբ որ պետք լինի, մենք այն ժամանակ կխնդրենք օգնել մեզ։

— Այդ խոսքը տեղին չէ։

— Ճի-ի՜շտ է-է։

— Կա՜ց, է՜. ի՞նչն է «ճիշտ»։ Բա որ նրանք մեր վզին չոքե՞ն, այն ժամանակ արի ու օգնություն ուզի։ Չէ՜, ախպեր, մինչև առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա։

— Պետք է մեր իշխանությունը կազմենք։

— Թուխսը հլա չնստած, ուզում ես տակիցը ձագ հանել... մեղա քեզ, աստված։ Այս տեսակ էլ անխելք մարդի՞կ։

44-րդ գնդի պատգամավորից հետո ոգևորիչ ու ջերմ խոսքեր ասաց Լագուտինը։ Նրան ընդհատում էին ճչոցներով։ Առաջարկ ստացվեց՝ տասը բոպե ընդմիջում անել, բայց հենց որ լռություն տիրեց, Պոդտյոլկովը անմիջապես հայտարարեց ջերմորեն խանդավառված բազմությանը.

— Կազա՜կ եղբայրներ, մենք այստեղ խորհրդակցում ենք, իսկ աշխատավոր ժողովրդի թշնամիները քնած չենք։ Մենք հենց ուզում ենք, որ համ գելերը կուշտ լինեն, համ էլ ոչխարները սաղ մնան, իսկ Կալեդինը հո այդպես չի մտածում։ Մենք բռնել ենք նրա հրամանը՝ հենց այս համագումարի բոլոր մասնակիցներին ձերբակալելու մասին։ Հիմի կկարդացվի այդ հրամանը։

Համագումարի անդամներին ձերբակալելու վերաբերյալ Կալեդինի հրամանը կարդալուց հետո պատգամավորների բազմության մեջ հուզմունք առաջացավ։ Այնպիսի աղմուկ բարձրացավ, որը հարյուրապատիկ ավելի ուժեղ էր, քան լինում է որևէ ստանիցայի ժողովատեղում։

— Պետք է գործ անել և ոչ թե խոսակցություններով զբաղվել։

— Տո կամա՜ց, է՜... Սո՜ւսսս...

— Էլ ի՞նչ «կամաց». գա՜րկ, պրծավ-գնաց...

— Լոբո՜վ, Լոբո՜վ... Դրանց մի խոսք ասա...

— Մի քիչ սպասենք...

— Կալեդինը հո հիմար չի։

Գրիգորին լուռ լսում էր, դիտում դելեգատների ճոճվող գլուխներն ու ձեռները ու չհամբերեց. կանգնելով ոտների մատների վրա, գոռաց.

— Լռեցեք, տո, սատանաներ... Այստեղ հո բազար չի։ Թողեք Պոդտյոլկովը մի խոսք ասի...

Իվան Ալեքսեևիչը վեճի բռնվեց 8-րդ գնդի պատգամավորներից մեկի հետ։

Խրիստոնյան մռնչում էր՝ պաշտպանվելով իր հետ միևնույն գնդում ծառայած մի կազակի հարձակումից.

— Այստեղ, ուրեմս, պետք է պահակ ունենալ։ Դու ինձ... է-է՜, ի՞նչ ես դուրս տալի... խելքի կարաս, տո, հոգի՜դ սիրեմ. մեր թուրը կտրուկ է, ինքներս գործ կտեսնենք։

Ձայների որոտմունքը հանդարտվեց (այդպես ուժասպառ քամին փչում է ծածանվող ցորենի վրա և այն թեքում գետնին), Կրիվոշլիկովի աղջկական-բարակ ձայնը ճեղքեց դեռ չհանդարտված լռությունը.

— Կորչի՜ Կալեդինը։ Կեցցե՜ կազակական Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն։

Բազմությունը դժժաց։ Ականջներին զարնվող, ծանր կեմի պես ոլորվեցին հավանության միաձույլ որոտընդոստ ճիչերը։ Կրիվոշլիկովը կանգնել էր ձեռքը բարձրացրած։ Դրա վրա կամացուկ դողում էին մատները, ինչպես տերևները շի-

վերի վրա։ Հազիվ էր հանդարտվել խլացուցիչ աղմուկը, երբ նույնպիսի բարակ, զրնգուն ու հնչեղ ձայնով, որով հետապնդում են գայլին, Կրիվոշլիկովը աղաղակեց.

— Առաջարկում եմ մեզանից ընտրել կազակական Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե։ Նրան հանձնարարել պայքար մղել Կալեդինի դեմ և կազմակեր...

— Հա-ա-ա-ա՜-ա...— արկի նման պայթեց ճիչը, առաստաղից թափվեցին պոկված սվաղի կտորները։

Սկսվեց ռևկոմի անդամների ընտրությունը։ Կազակների մի աննշան մասը, որին ղեկավարում էին 44-րդ գնդի ելույթ ունեցած պատգամավորը և ուրիշները, շարունակում էր պնդել, թե հարկավոր է կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով հարթել Դոնի կառավարության հետ, բայց համագումարում ներկա գտնվողների մեծամասնությունը այլևս չէր պաշտպանում նրանց. կազակները զայրացած՝ լսելով Կալեդինի հրամանը իրենց ձերբակալելու մասին. նրանք պնդում էին ակտիվորեն դիմադրել Նովոչերկասկին։

Գրիգորին չմնաց մինչև ընտրությունների վերջը. նրան շտապ կանչեցին գնդի շտաբ։ Գնալուց առաջ դիմեց Խրիստոնյային և Իվան Ալեքսեևիչին.

— Հենց որ վերջանա, եկեք ինձ մոտ, տուն։ Հետաքրքիր է, թե ովքեր անդամ կընտրվեն։

Իվան Ալեքսեևիչը վերադարձավ գիշերով։

— Պոդտյոլկովը,— նախագահ, Կրիվոշլիկովը,— քարտուղար,— շեմքից հայտարարեց նա։

— Անդամնե՞րը։

— Իվան Լագուտինը, Գոլովաչևը, Մինաևը, Կուդինովը, էլի ինչ-որ ուրիշները։

— Բա ո՞ւր է Խրիստանը,— հարցրեց Գրիգորին։

— Նա կազակների հետ գնաց Կամենսկայայի իշխանությունները ձերբակալելու։ Տաքացել-թեժացել է կազակը, թքես վրեն, թուքդ կպճակա։ Փորձանք է, էլի՛։

Խրիստոնյան վերադարձավ լուսաբացին։ Ֆսֆսալով հանեց ոտնամանները, քթի տակին ինչ-որ փնթփնթաց։ Գրիգորին վառեց լամպը. նրա սևացած դեմքի վրա տեսավ արյուն ու ճակատի վերևում — հրազենի զարկից առաջացած քերծվածք։

— Այդ ո՞վ է խփել քեզ... Կապե՞մ։ Հիմի... սպասիր բինտ գտնեմ.— վեր թռավ մահճակալից, մաղլյա ու բինտ գտավ։

— Կլավանա, ոնց որ թե շան կծած լինի,— փնթփնթում էր Խրիստոնյան։— Սա, ուրեմս, զինվորական պետի արածն է,— քերեց նագանի զարկով։ Ոնց որ հյուրեր, շքամուտքից մտանք նրա մոտ, իսկ նա սկսեց պաշտպանվել։ Մի կազակի է՛լ վիրավորեց։ Ուզում էի, ուրեմս, նրա հոգին հանել, որ տեսնեի, թե ինչ տեսակ բան է դա, սպայի հոգին, ամա կազակները չթողին, թե չէ ես կկմշտեի... այնպես կկմշտեի, որ շունչը կփչեր։

IX

Մյուս օրը, Կալեդինի հրամանով, Դոնի 10-րդ կազակական գունդը ժամանեց Կամենսկայա՝ նպատակ ունենալով ձերբակալել համագումարի բոլոր մասնակիցներին և զինաթափել առավելապես ռևոլյուցիոն կազակական զորամասերը։

Այդ ժամանակ կայարանում միտինգ էր։ Կազակների հսկայական բազմությունը դժժում էր, տարբեր կերպով արձագանքում մի ինչ-որ լատիշ հռետորի ճառին։

Բեռնաթափվելով, գունդը հարեց միտինգին։ Ջոկովի բարձրահասակ, կոկիկ հագնված գունդորովցիները, որոնք գնդի կադրերի կեսն էին կազմում, խառնվեցին մյուս գնդերի կազակների հետ։ Նրանց տրամադրության մեջ անմիջապես կտրուկ բեկում առաջացավ։ Կալեդինի կարգադրությունը կատարելու վերաբերյալ գնդի հրամանատարի հրամանին կազակները մերժումով պատասխանեցին։ Նրանց մեջ հուզմունք սկսվեց, իբրև հետեանք ուժեղ ագիտացիայի, որ ծավալել էին բոլշևիկների կողմնակիցները։

Իսկ այդ ժամանակ Կամենսկայան բռնված էր ճակատամերձ տենդով. հապճեպ կազմված կազակական ջոկատները ուղարկվում էին գրավելու և իրենց ձեռքում պահելու վերցրած կայարանները, հաճախակի էշելոններ էին մեկնում Զվերևո — Լիխայա ուղղությամբ։ Զորամասերում հրամանատարական կազմի վերընտրություններ էին կատարվում։ Կամենսկայայից թաքուն մեկնում էին պատերազմ չցանկացող

կազակները։ Ուշացած ժամանեցին խուտորների ու ստանիցաների պատգամավորները։ Փողոցներում չտեսնված աշխույժ երթևեկություն էր տեղի ունենում։

Հունվարի 13-ին բանակցությունների համար Կամենսկայա ժամանեց Դոնի կառավարության պատգամավորությունը, որի մեջ մտնում էին կազակական ներկայացուցիչների ժողովի նախագահ Ագեևը, ժողովի անդամներ Սվետոզարովը, Ուլանովը, Կարևը, Բաժելովը և յասավուլ Կուշնարյովը։

Կայարանում նրանց դիմավորեց ժողովրդի հոծ բազմությունը։ Լեյբ-գվարդիայի Ատամանյան գնդի կազակներից բաղկացած պահակախումբը եկվորներին ուղեկցեց մինչև փոստ-հեռագրական գրասենյակի շենքը։ Ամբողջ գիշեր տեղի ունեցավ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի անդամների ու կառավարության կողմից ժամանած պատգամավորության համատեղ նիստը։

Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեից ներկա էր տասնյոթ մարդ։ Պոդտյոլկովն առաջինը, պատասխանելով Ագեևի ճառին, որը Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին մեղադրում էր Դոնին դավաճանելու և բոլշևիկների հետ համաձայնության գալու մեջ,— խիստ հակահարված տվեց նրան։ Պոդտյոլկովից հետո ելույթ ունեցան Կրիվոշլիկովը, Լագուտինը։ Յասավուլ Կուշնարյովի ճառը հաճախակի ընդհատվում էր միջանցքում խմբված կազակների աղաղակներով։ Գնդացրորդներից մեկը ռևոլյուցիոն կազակների անունից պահանջում էր ձերբակալել պատգամավորությանը։

Խորհրդակցությունը ոչ մի հետևանքի չհանգեց։ Արդեն գիշերվա ժամը մոտ երկուսին, երբ պարզվեց, որ անկարելի է համաձայնության գալ, ընդունվեց կազակական ներկայացուցիչների ժողովի անդամ Կարևի առաջարկը, որ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի պատգամավորություն գնա Նովոչերկասկ՝ իշխանության հարցերը վերջնականապես լուծելու համար։

Դոնի կառավարության պատգամավորության մեկնելուց հետո Նովոչերկասկ մեկնեցին նաև Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի ներկայացուցիչները՝ Պոդտյոլկովի գլխավորությամբ։ Մեկնելու համար ընտրվել էին Պոդտյոլկովը, Կուդինովը,

Կրիվոշլիկովը, Լագուտինը, Սկաչկովը, Գոլովաչևը և Մինաևը։ Իբրև պատանդներ, մնացին Ատամանյան գնդի սպաները, որոնք ձերբակալվել էին Կամենսկայայում։

X

Վագոնի պատուհանից երևում էր, թե ինչպես էր գալարվում բուքը։ Կիսաքանդված ցցապատնեշի կողքերին երևում էին քամու հավաքած ձյան կուտակները։ Դրանց ծուռումուռ կատարները գծված էին թռչունների ոտների խայտաճամուկ հետքերով։

Դեպի հյուսիս էին սահում կիսակայարանները, հեռագրասյուները և ամբողջ անծայրածիր, ձյան միապաղաղ ծածկոցով տաղտկալի տափաստանը։

Պոդտյոլկովը նոր, կաշվե տուժուրկա հագած, նստել էր պատուհանի մոտ։ Նրա դեմուդեմ, փոքրիկ սեղանին կոթնած, պատուհանից դուրս էր նայում նեղ թիկունքով, անչափահասի նման վտիտ Կրիվոշլիկովը։ Մանկականորեն պայծառ նրա աչքերը ակնկալություն և անհանգստություն էին արտահայտում։ Լագուտինը սանրով կոկում էր փոքրիկ, շեկլիկ մորուքը։ Հաղթանդամ կազակ Մինաևը ձեռներն էր տաքացնում շոգեջեռուցման խողովակի վրա, հանգիստ չէր նստում նստարանին։

Գոլովաչևն ու Սկաչկովը վերևի տեղերում պառկած, կամացուկ զրուցում էին։

Վագոնում ծխախոտի ծուխ էր լցված, ցուրտ էր։ Պատգամավորության անդամները, գնալով Նովոչերկասկ, իրենց զգում էին անհաստատ վիճակում։ Խոսակցությունները կրցկրտուր էին։ Տաղտկալի լռություն էր տիրում։ Անցան Լիխայա կայարանից։ Պոդտյոլկովը արտահայտեց ընդհանուր միտքը.

— Բան չի դուրս գա։ Չենք համաձայնվի։

— Իզուր ենք գնում,— նրան պաշտպանեց Լագուտինը։

Նորից երկար լռեցին։ Պոդտյոլկովը համաչափ շարժում էր ձեռքի դաստակը, ասես մակույկ էր անցկացնում ուռկանի օղերի միջով։ Նա երբեմն դիտում էր մի փոքրիկ պսպղուն իր տուժուրկան, հիանում նրանով։

Մոտենում էր Նովոչերկասկը։ Քարտեզի վրա դիտելով

Դոնը, որ քաղաքից ձգվում էր դեպի հեռուն, Մինաևը սկսեց ցածրաձայն պատմել.

— Մեկ էլ տեսար, կազակները առամանյան գնդում վերջացրին իրենց ծառայության ժամանակը, պատրաստվեցին տուն գնալու։ Իրենց ունեցածը, սնդուկները, ձիերը բեռնում են վագոններին։ Էշելոնը գնում է, և ահա Վորոնեժի մոտ, որտեղ առաջին անգամ պետք է անցնել Դոնը, գնացքը առնող մեքենավարը դանդաղեցնում է ընթացքը, շատ է դանդաղեցնում... Նա գիտե, թե ինչումն է բանը։ Հենց որ գնացքը սկսում է անցնել կամուրջի վրայից, օ-օ՜... ինչե՞ր են կատարվում։ Կազակներն ուղղակի դիվոտում են. «Դո՜նը, մեր Դո՜նը, մարմանդ Դո՜նը, մեր հերն ու մե՜րը, մեր հարազա՜տը, ուռա՜-ա-ա,— ու կամրջից, երկաթե բազրիքի վրայով, պատուհաններից գլխարկներ, հին շինելներ, շալվարներ, բարձի երեսներ, շապիկներ, զանազան մանր-մունր բաներ են շպրտում հենց ջրի մեջ։ Ծառայությունից վերադառնալով, ընծաներ են տալի Դոնին։ Մտիկ ես անում,— ջրի երեսին լողում են ատամանական կապույտ գլխարկները, ոնց որ կարապներ կամ ծաղիկներ... Վաղուց գոյություն ուներ այդ սովորությունը։

Գնացքը դանդաղեցրեց ընթացքը, կանգ առավ։ Կազակները վեր կացան։ Կրիվոշլիկովը շինելի վրայից կապելով գոտին, ծուռ ժպտաց.

— Ահա և տեղ հասանք։

— Սա ի՞նչ է, աղ ու հաց չեն բերում,— փորձեց կատակել Սկաչկովը։

Առանց դուռը ծեծելու ներս մտավ բարձրահասակ, կորովի տեսքով մի յասավուլ։ Նա գննող, ցպակոտ աչքերով նայեց պատգամավորության անդամներին, դիտավորյալ կոպտությամբ ասաց.

— Ինձ հանձնարարված է ուղեկցել ձեզ։ Նեղություն քաշեցեք, պարոնայք բոլշևիկներ, շուտ թողնել վագոնը։ Ես չեմ երաշխավորում ամբոխի վարմունքը և... ձեր ողջ-առողջ մնալը։

Նա առանձնապես ավելի երկար նայեց Պոդտյոլկովին, ավելի ճիշտ՝ նրա սպայական տուժուրկային. արդեն ակնհայտ թշնամությամբ հրաման տվեց.

— Դուրս եկեք վագոնից, շո՜ւտ։

— Ահա նրանք, սրիկաները, կազակության դավաճանները,— ամբոխով լեցուն կառամատույցից բղավեց ինչ-որ մի երկարաբեղ սպա։

Պոդտյոլկովը գունատվեց, նա մի փոքր շփոթված, շեղակի հայացքով նայեց Կրիվոշլիկովին։ Սա դուրս էր գալիս Պոդտյոլկովի հետևից. ժպտալով՝ շշնջաց.

— «Մենք հավանության ձայներ ենք լսում, ոչ թե գովեստի քաղցր թնդյունների մեջ, այլ կատաղության վայրենի աղաղակներում...» Լսո՞ւմ ես, Ֆյոդոր։

Պոդտյոլկովը թեպետև չլսեց վերջին բառերը, այնուամենայնիվ ժպտաց։

Նրանց ուղեկցում էր սպայական ուժեղ մի կարգախումբ։ Մինչև մարզային վարչություն հասնելը վայրագություններ էր անում նրանց ուղեկցող, ինքնագատաստանի ծարավի ամբոխը։ Պատգամավորներին վիրավորում, անկարգություն էին անում ոչ միայն սպաներն ու յունկերները, այլև ինչ-որ կազակներ, վայելուչ հագնված կանայք և աշակերտներ։

— Ի՜նչ այլանդակություն եք թույլ տալիս,— դիմեց վրդովված Լագուտինը իրենց ուղեկցող սպաներից մեկին։

Վերջինս ատելությամբ լեցուն աչքերով ոտից-գլուխ չափեց նրան, շշնջաց.

— Շնորհակալ եղիր աստծուց, որ կենդանի կմնաս... Եթե իմ իշխանությունը լիներ, ես քեզ նման զյադային... ի-ի-ի՜հ, գարշելի՜։

Մի ուրիշ, ավելի շահել սպա, կշտամբող հայացքով ղրկեց նրան։

— Ա՜յ քեզ օյի՜ն,— հարմար պահ գտնելով՝ շշնջաց Գոլովաչևը Սկաչկովի ականջին։

— Կարծես մահվան պատժի են տանում...

Մարզային վարչության դահլիճը չտեղավորեց հավաքված ժողովրդին։ Մինչդեռ ժամանած պատգամավորները տեղավորվում էին սեղանի մի կողմում, հետևելով ինչ-որ կարգադրիչ հարյուրապետի ցուցումներին,— մոտեցան կառավարության անդամները։

Բուգաևսկու ուղեկցությամբ ամուր, ամբողջ ոտնաթաթերով մեկ, գայլի քայլերով եկավ մի փոքր կորացած Կալե-

գինը»։ Նա ետ քաշեց իր աթոռը, նստեց, հանգիստ շարժումով սեղանին դրեց պաշտպանական գույնի գլխարկը, որի վրա սպիտակին էր տալիս սպայական գդականիշը, կոկեց մազերը, ու ձախ ձեռքի մատներով ֆրենչի կողքի մեծ գրպանը կոճկելով, մի քիչ թեքվեց Բոգաևսկու կողմը, որը նրան ինչ-որ բան էր ասում։ Կալեդինի յուրաքանչյուր շարժումը լեցուն էր հաստատուն, հանգիստ ինքնավստահությամբ, հասուն ուժով. սովորաբար իրենց այդպես են պահում այն մարդիկ, ովքեր իշխանության տեր են եղել, մի շարք տարիների ընթացքում մշակել մի առանձին կեցվածք ու քայլվածք, գլխի առանձնահատուկ դիրք, որով տարբերվել են ուրիշներից։ Նրա և Պոդտյոլկովի միջև շատ բան նույնանման էր։ Իսկ Բոգաևսկին, որը վայելչատես Կալեդինի կողքին շատ ավելի անբարետես էր թվում, հուզվում էր սկսվելիք բանակցություններից։

Բոգաևսկին ինչ-որ բան էր ասում՝ շարժելով կախ բեզերի խարտյաշ քիվերով ծածկված շրթունքները, ակնոցի տակից փայլում էին նրա սուր, շեղադիր աչքերը։ Ջղայնությունը արտահայտվում էր նրանով, որ նա հապճեպորեն էր շտկում օձիքը, դողդոջուն, անհաստատ շարժումներով ձեռքը տանում կորնթարդ, լիքը կզակին, խաղացնում լայն ակնակապիճների վերևում թևավորված հոնքերը։

Կենտրոնում նստած Կալեդինի երկու կողմից տեղավորվեցին Դոնի կառավարության անդամները։ Նրանցից ոմանք՝ Կարևը, Սվետոզարովը, Ուլանովը, Ագեևը, եղել էին Կամենսկայայում. մի քիչ հեռու նստեցին Ելատոնցևը, Մելնիկովը, Բոսսեն, Շոշնիկովը, Պոլյակովը։

Պոդտյոլկովը լսեց, թե ինչպես Միտրոֆան Բոգաևսկին ցածր ձայնով ինչ-որ բան ասաց Կալեդինին։

Վերջինս կկոցած աչքերով մի ակնթարթում նայեց Պոդտյոլկովին, որը տեղ էր գրավում նրա դեմուդեմ, ու ասաց.

— Ես կարծում եմ, որ կարելի է սկսել։

Պոդտյոլկովը ժպտաց, հաղորդեց պատգամավորության գալու նպատակը։ Կրիվոշլիկովը սեղանի վրայով մեկնեց Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի վաղօրոք պատրաստված ուլտիմատումը, բայց Կալեդինը սպիտակ ձեռքի շարժումով ետ տալով թուղթը, կտրուկ ասաց.

— Միտք չունի ժամանակ կորցնել կառավարության յուրաքանչյուր անդամին այդ փաստաթղթի հետ ծանոթացնելու վրա։ Նեղություն քաշեցեք բարձրաձայն կարդալու ձեր ուլտիմատումը։ Հետո կքննարկենք։

— Կարդա՛,— հրամայեց Պոդտյոլկովը։

Նա իրեն արժանավայել կերպով էր պահում, բայց, ըստ երևույթին, ինչպես և պատգամավորության բոլոր անդամները, իրեն այնքան էլ հանգիստ չէր զգում։ Կրիվոշլիկովը վեր կացավ։ Մարդկանցով լեփ-լեցուն դահլիճով մեկ հնչեց աղջկականորեն զրնգուն և միևնույն ժամանակ անգունագեղ նրա ձայնը.

Դոնի զորաց մարզում ռազմական գործողությունների կատարման գործում զորամասերի վրա ամբողջ իշխանությունը սույն 1918 թվականի հունվարի 10-ից զորաց ատամանից անցնում է Դոնի կազակական ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին։

Սույն թվականի հունվարի 15-ին ետ են կանչվում ու զինաթափվում են ռևոլյուցիոն զորքերի դեմ գործող բոլոր ջոկատները, ինչպես նաև կամավորական գուգազները, յունկերների ուսումնարանները և պրապորշչիկների դպրոցները։ Այդ կազմակերպությունների բոլոր մասնակիցները, որոնք Դոնի մարզում չէին ապրում, Դոնի մարզի սահմաններից աքսորվում են իրենց բնակության վայրերը։

Սանոթագրություն։ Զենքերը, հանդերձանքը և հագուստեղենը պետք է հանձնվեն Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի կոմիսարին։ Նովոչերկասկից մեկնելու համար անցաթուղթ է տալիս Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի կոմիսարը։

Նովոչերկասկ քաղաքը պետք է գրավեն Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նշանակած կազակական գնդերը։

Կազակական ներկայացուցիչների ժողովի անդամները սույն հունվարի 25-ից անիրավազոր են հայտարարվում։

Դոնի մարզի հանքարաններից և գործարաններից ետ է կանչվում զորաց կառավարության նշանակած ամբողջ ոստիկանությունը։

Արյունահեղությունից խուսափելու համար Դոնի ամբողջ մարզում, ստանիցաներում ու խուտորներում հայտարարվում է, որ զորաց կառավարությունը կամավոր կերպով հրաժարվում է իր լիազորություններից և իշխանությունը անհապաղ հանձնվում է Մարզային կազակական ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին՝ մինչև որ մարզում ամբողջ բնակչության մշտական աշխատավորական իշխանություն կկազմվի։

Հազիվ էր լռել Կրիվոշլիկովի ձայնը, երբ Կալեդինը բարձրաձայն հարցրեց.

— Ո՞ր զորամասերն են ձեզ լիազորել։

Պոդտյոլկովը մի հայացք փոխանակեց Կրիվոշլիկովի հետ. սկսեց թվել.

— Լեյբ-գվարդիայի Ատամանյան գունդը, լեյբ-գվարդիայի Կազակական գունդը, վեցերորդ մարտկոցը, քառասունչորսերորդ գունդը, երեսուներկուերորդ մարտկոցը, տասնչորսերորդ առանձին հարյուրյակը...— թվելիս նա սեղմում էր ձախ ձեռքի մատները. դահլիճում սկսեցին փսփրոալ, նենգավոր քմծիծաղ լսվեց, ու Պոդտյոլկովը մոայլվելով, շիկամազ ձեռները դրեց սեղանին, բարձրացրեց ձայնը,— քսանութերորդ գունդը, քսանութերորդ մարտկոցը, տասներկուերորդ մարտկոցը, տասներկուերորդ գունդը...

— Քսանիններորդ գունդը,— կամացուկ հուշեց Լագուտինը։

— ... Քսանիններորդ գունդը,— արդեն ավելի վստահ. ու բարձրաձայն շարունակեց Պոդտյոլկովը,— քսաներեքերորդ մարտկոցը, Կամենսկայայի տեղական զորախումբը, տասներորդ գունդը, քսանյոթերորդ գունդը, երկրորդ հետևակ գումարտակը, երկրորդ պահեստի գունդը, ութերորդ գունդը, տասնչորսերորդ գունդը։

Մանր հարցերից և մտքերի կարճ փոխանակությունից հետո Կալեդինը կուրծքը հենելով սեղանի եզրին, հայացքը սևեռելով Պոդտյոլկովի վրա, հարցրեց.

— Դուք ճանաչո՞ւմ եք ժողովրդական կոմիսարների Սովետի իշխանությունը։

Մի բաժակ ջուր խմելով, Պոդտյոլկովը ջրամանը դրեց ափսեի մեջ, թևքով սրբեց բեղերը, խուսափողաբար պատասխանեց.

— Այդ կարող է ասել միայն ամբողջ ժողովուրդը։

Մեջ մտավ Կրիվոշլիկովը, վախենալով, որ պարզամիտ Պոդտյոլկովը կարող է բերանից ավելորդ խոսք թռցնել.

— Կազակները չեն հանդուրժում մի այնպիսի օրգան, որի մեջ մտնում են «ժողովրդական ազատության պարտիայի»[1] ներկայացուցիչները։ Մենք կազակներ ենք, ու մեզ մոտ պետք է լինի մեր, կազակական կառավարությունը։

[1] «ժողովրդական ազատության պարտիա» — այդպես էր կոչվում կադետների կոնստիտուցիոն կուսակցությունը։

— Ինչպես հասկանալ ձեզ, երբ Սովետի գլուխ են կանգնած Նախամկեսները և դրանց նմանները։

— Նրանց վստահել է Ռուսաստանը, վստահում ենք և մենք։

— Նրանց հետ հարաբերություններ ունենալո՞ւ եք։

— Այո՛։

— Պոդտյոլկովը հավանություն տալով «ըհը՛մ» արեց, պաշտպանեց այդ հայտարարությունը.

— Մենք հաշվի ենք առնում ոչ թե անձանց, այլ իդեան։

Զորաց կառավարության անդամներից մեկը պարզամտությամբ հարցրեց. «Արդյո՞ք ժողովրդի օգտին է աշխատում ժողովրդական կոմիսարների Սովետը»։

Պոդտյոլկովի զննող հայացքը սահեց նրա կողմը։ Ժրպտալով, Պոդտյոլկովը լուռ մնաց, ձեռքը տարավ դեպի ջրամանը, ջուր լցրեց բաժակի մեջ և ագահությամբ խմեց։ Տարավը նեղում էր նրան,— ասես նրա մեջ թեժ կրակ կար և նա հստակ ջուր էր լցնում այդ կրակի վրա։

Կալեդինը մատներով թփթփացնում էր սեղանին, հետաքրքրությամբ հարցեր էր տալիս.

— Դուք բոլշևիկների հետ ինչ առնչություն ունեք։

— Մենք ուզում ենք՝ մեզ մոտ, Դոնի մարզում կազակական ինքնավարություն հաստատել։

— Այո, բայց ձեզ հավանորեն հայտնի է, որ փետրվարի չորսին հրավիրվելու է կազակական ներկայացուցիչների ժողովը։ Անդամները վերընտրվելու են։ Դուք համաձա՞յն եք փոխադարձ վստահություն սահմանել։

— Ո՛չ,— Պոդտյոլկովը բարձրացրեց դեպի ներքև ուղղված հայացքը, կտրուկ պատասխանեց.— Եթե դուք փոքրամասնություն կազմեք, մենք ձեզ թելադրում ենք մեր կամքը։

— Բայց չէ՞ որ դա բռնությո՛ւն է։

— Այո՛։

Միխրոֆան Բոգաևսկին հայացքը Պոդտյոլկովից փոխադրելով Կրիվոշլիկովի վրա, հարցրեց.

— Դուք ճանաչո՞ւմ եք կազակական ներկայացուցիչների ժողովը։

— Այնքան, որքան...— Պոդտյոլկովը թոթվեց լայն ուսերը։— Մարզային ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն կհրավիրի... ըմ՛մ... բնակչության ներկայացուցիչների համագումար։ Սա կաշխատի բոլոր զորամասերի վերահսկողության տակ։ Եթե համագումարը մեզ չբավարարի, մենք նրան չենք ճանաչի։

— Ապա ո՞վ պետք է դատավոր լինի։— Կալեդինը վեր քշեց հոնքերը։

— Ժողովո՛ւրդը։— Պոդտյոլկովը հպարտորեն ետ տարավ գլուխը. խշշացնելով տուժուրկայի կաշին, ընկավ քանգակավոր աթոռի մեջքին։

Կարճ ընդմիջումից հետո խոսեց Կալեդինը։ Դահլիճում դադարեց աղմուկը, լռության մեջ հստակ հնչում էր ատամանի ձայնի ցածր, աշնանային դալկությամբ երանգավորված տեմբրը։

— Կառավարությունը չի կարող իր լիազորություններից հրաժարվել Մարզային Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի պահանջով։ Ներկա կառավարությունը ընտրվել է Դոնի ամբողջ բնակչության կողմից, և ոչ թե առանձին զորամասերը, այլ միայն այդ բնակչությունը կարող է պահանջել, որ մենք հրաժարվենք լիազորություններից։ Բոլշևիկների հանցավոր ագիտացիայի ներգործությամբ,— իսկ նրանք ձգտում են իրենց կարգերը փաթաթել մարզի վզին,— դուք պահանջում եք իշխանությունը հանձնել ձեզ։ Դուք կույր գործիք եք բոլշևիկների ձեռքին։ Դուք կատարում եք գերմանական վարձկանների կամքը՝ չգիտակցելով այն հսկայական պատասխանատվությունը, որ ամբողջ կազակության հանդեպ վերցնում եք ձեր վրա։ Խորհուրդ եմ տալիս փոխել ձեր մտադրությունը, որովհետև չտեսնված փորձություններ եք բերում հայրենի երկրին, գժտվելով կառավարության հետ, որը արտահայտում է ամբողջ բնակչության կամքը։ Ես չեմ կառչում իշխանությունից։ Կհավաքվի զորաց ներկայացուցիչների Մեծ ժողովը, ու նա էլ կտնօրինի երկրի բախտը, բայց մինչև նրա գումարվելը ես պետք է մնամ իմ պոստում։ Վերջին անգամ խորհուրդ եմ տալիս փոխել ձեր մտադրությունը։

Կալեդինից հետո խոսեցին կազակական և այլ բնակչության կառավարության անդամները։ Ռևկոմի անդամների

գլխին քաղցր-մեղցր հորդորանքներով լեցուն ճառ թափեց էսէռ Բոսսեն։

Ընդհատելով նրան, Լագուտինը գոչեց.

— Մեր պահանջն է՝ հանձնեցե՛ք իշխանությունը Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին։ Կարիք չկա սպասելու, եթե զորաց կառավարությունը կողմնակից է հարցի խաղաղ լուծման...

Բոգաևսկին ժպտաց.

— Ուրեմն ի՞նչ...

— ...Պետք է ի գիտություն ընդհանուրի հայտարարել, որ իշխանությունն անցել է Ռևկոմին։ Չի՛ կարելի սպասել երկու և կես շաբաթ, մինչև որ հավաքվի ձեր Ժողովը։ Ժողովուրդը առանց այն էլ սարսափելի զայրացած է։

Իր ճառը երկար ծամծմում էր Կարևը, անիրագործելի կոմպրոմիս էր փնտրում Սվետոզարովը։

Պոդտյոլկովը ջղայնությամբ էր լսում նրանց։ Նա հարեվանցիորեն դիտեց յուրայինների դեմքերը, նկատեց, որ Լագուտինը մռայլվում է ու գունատվում, Կրիվոշլիկովը աչքերը հառել է սեղանին, Գոլովաչևը անհամբերությամբ ուզում է մի բան ասել։ Սպասելով հարմար պահին, Կրիվոշլիկովը կամացուկ շշնջաց՝ «Ասա»։

Պոդտյոլկովը կարծես այդ էր սպասում։ Աթոռը ետ քաշելով, նա սկսեց խոսել լարվածությամբ, հուզմունքից կրմկրմալով, որոնելով համոզման ինչ-որ ուժեղ, ջախջախիչ խոսքեր։

— Ձեր ասածը ճիշտ չէ։ Եթե զորաց կառավարությանը հավատային, ես հաճույքով կհրաժարվեի մեր պահանջներից... բայց չէ՞ որ ժողովուրդը չի հավատում։ Ոչ թե մենք, այլ դուք եք քաղաքացիական պատերազմ սկսում։ Ինչո՞ւ եք կազակական հողումը ապաստան տվել զանազան փախած գեներալներին։ Հենց դրա համար էլ բոլշևիկները կովով գալիս են մեր խաղաղ Դոնի վրա։ Ես ձեզ չե՛մ ենթարկվի։ Չեմ թույլ տա։ Թող իմ դիակի վրայով անցնեն։ Մենք ձեր առաջ փաստեր ենք դնում։ Ես չեմ հավատում, որ զորաց կառավարությունը փրկի Դոնը։ Ի՞նչ միջոցներ են կիրառվում այն զորամասերի դեմ, որոնք չեն ցանկանում ձեզ ենթարկվել... Ը-հը՛մ, հենց այդ է բանը։ Ինչո՞ւ եք ձեր կամավորներին

ուղարկում հանքափոր բանվորների դեմ։ Դրանով ձեր շուրջը դայրույթ եք առաջացնում։ Ասացեք ինձ, ո՞վ կերաշխավորի, թե զորաց կառավարությունը բանը քաղաքացիական պատերազմի չի հասցնի... Ինչո՞վ պիտի կռվեք։ Ժողովուրդն ու ճակատային կազակները մեր կողմն են։

Դահլիճում քամու սոսափյունի նման սահեց ծիծաղը. լսվեցին ցասկոտ բացականչություններ Պոդտյոլկովի հասցեին։ Նա բորբոքված-կարմրած դեմքը դարձրեց դեպի դահլիճը, ու այլևս չթաքցնելով դառն զայրույթը, գոռաց.

— Ծիծաղում եք հիմի, իսկ հետո լաց կլինեք,— ու շուռ եկավ Կալեդինի կողմը, հրացայտ աչքերը հառեց նրա վրա.— Մենք պահանջում ենք իշխանությունը հանձնել մեզ, աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներիս, ու հեռացնել բոլոր բուրժույներին և Կամավորական բանակը... Ներկա կառավարությունը նույնպես պետք է հեռանա։

Կալեդինը հոգնածորեն կախեց գլուխը։

— Ես միտք էլ չունեմ Նովոչերկասկից հեռանալու և չեմ հեռանա։

Փոքրիկ ընդմիջումից հետո նիստը վերսկսվեց Մելնիկովի տաք ճառով.

— Կարմիրգվարդիական ջոկատները դեպի Դոն են ճապարում, որպեսզի ոչնչացնեն կազակությունը։ Նրանք իրենց խելահեղ կարգերով կործանեցին Ռուսաստանը և ուզում են մեր մարդն էլ կործանել։ Պատմությունը չգիտի այնպիսի օրինակներ, որ մի խումբ ինքնակոչներ ու ստահակներ խելացիորեն և ժողովրդի օգտին երկիր կառավարեն։ Ռուսաստանը կզարթնի ու դուրս կշպրտի այդ Օտրեպևներին։ Իսկ դուք, ուրիշի խելահեղությամբ կուրացած, ուզում եք մեր ձեռքից խլել իշխանությունը, որ գուռ բաց անեք բոլշևիկների համար։ Ո՛չ։

— Իշխանությունը հանձնեցեք Ռևկոմին, ու բոլշևիկները կդադարեցնեն հարձակումը...— ասաց Պոդտյոլկովը։

Կալեդինի թույլտվությամբ հասարակության միջից հանդես եկավ փոխյասավուլ Շեհինը, որը շարքային կազակից հասել էր փոխյասավուլի աստիճանին և ուներ գեորգևյան բոլոր չորս խաչերը։ Նա շտկեց վերնաշապկի փոթերը, ասես սառուցատեսի էր ներկայանալու, և միանգամից հարձակման անցավ.

— Ինչո՞ւ լսել դրանց, կազակներ,— բղավեց նա բարձր, հրամանի ձայնով, ձեռքը թրի պես թափահարելով.— մեր բոլշևիկների ճանապարհները տարբեր են։ Միայն Դոնին և կազակությանը դավաճանողները կարող են խոսել իշխանությունը սովետներին հանձնելու մասին և կոչ անել կազակներին՝ բոլշևիկների հետ ընթանալու։— Եվ արդեն ուղղակի մատնացույց անելով Պոդտյոլկովին, անմիջականորեն նրան դիմելով, Շեհինը կռացավ, բղավեց.— Մի՞թե դուք կարծում եք, Պոդտյոլկով, որ Դոնը կգնա ձեզ նման թերուսի ու անգրագետ կազակի հետևից։ Եթե գնացողներ էլ լինեն, ապա դրանք կլինեն մի փոքրիկ խումբ գազազած կազակներ, որոնք կտրվել են տանից։ Բայց նրանք կզարթնեն, բարեկամ, ու հենց քեզ էլ կկախեն։

Դահլիճում սկսեցին շարժվել գլուխները, ինչպես քամուց օրորվող արևածաղկի գլխիկները. լսվեց հավանության ձայների դժժոցը։ Շեհինը նստեց։ Ծալավոր կիսամուշտակով, գորական ավագի ուսադիրներով մի ինչ-որ սպա, զգացվելով, հետևից ձեռքը թփթփացնում էր նրա ուսին։ Կողքին խրոնվում էին սպաները։ Կանացի հիստերիկ մի ձայն հուզմունքով կչկչաց.

— Շնորհակալություն, Շեհին, շնորհակալություն։

— Կեցցես, յասավուլ Շեհին, շա՛տ ապրես,— գիմնազիական աքլորային տկար, բաս ձայնով կանչեց վերնասրահի մշտական հաճախորդներից մեկը, միանգամից մի ավելորդ աստիճան շնորհելով փոխ-յասավուլ Շեհինին։

Ճոռոմախոսները, Դոնի կառավարության մունետիկները դեռ երկար հորդորում էին կազակներին — Կամենսկայայում կազմված Ռևկոմի անդամներին։ Դահլիճը լցվել էր ծխախոտի կապտավուն ծխով, օդը ծանր էր։ Երկնքում իր ցերեկային երթն էր ավարտում արևը։ Սառնամանիքային, եղևնման ոստիկներ էին կպչում պատուհանների արտաքին ապակիներին։ Պատուհանների գոգերին նստածները լսեցին եկեղեցիների իրիկնային զանգահարությունը ու քամու ոռնոցի միջից՝ շոգեքարշի խռպոտ շչյունները։

Լագուտինը չհամբերեց. ընդհատելով զորաց հռետորներից մեկը, դիմեց Կալեդինին.

— Վճռեցեք գործը, ժամանակն է վերջացնել։

Նրան ցածր ձայնով լռեցրեց Բոգաևսկին.

— Մի՛ հուզվեք, Լագուտին։ Ահա ջուրը։ Ընտանիքավորների և կաթվածահարության նախահակում ունեցողների համար հուզվելը վտանգավոր է։ Եվ հետո, առհասարակ, ընդունված չէ ընդհատել հռետորներին, այստեղ հո մի որևէ սովդեպ չէ։

Լագուտինն է՛լ կծու պատասխանեց նրան, բայց բոլորի ուշադրությունը վերստին դարձավ դեպի Կալեդինը։ Ինչպես և սկզբում, նա դարձյալ քաղաքական խաղ էր խաղում, ու դարձյալ զարնվում Պոդտյոլկովի պատասխանների հասարակ, գեղջկական զրահին։

— Դուք ասացիք, որ եթե մենք իշխանությունը ձեզ հանձնենք, ապա բոլշևիկները կդադարեցնեն իրենց հարձակումը Դոնի վրա։ Բայց դո՛ւք եք այդպես մտածում։ Իսկ թե ինչպես կվարվեն բոլշևիկները, գալով այստեղ,— դա մեզ հայտնի չէ։

— Կոմիտեն հավատացած է, որ բոլշևիկները կհաստատեն իմ ասածները։ Փորձեցեք,— իշխանությունը հանձնեցեք մեզ, Դոնից վռնդեցեք կամավորներին,— և դուք կտեսնեք, որ բոլշևիկները կվերջացնեն պատերազմը։

Մի քիչ հետո Կալեդինը վեր կացավ։ Նրա պատասխանը վաղօրոք պատրաստված էր. Ձերնեցովը արդեն հրաման էր ստացել ջոկատ հավաքել Լիխայա կայարանի վրա հարձակվելու համար։ Բայց, ժամանակ շահելու համար, Կալեդինը խորհրդակցությունն ավարտեց գործը ձգձգելու դիտավորությամբ.

— Դոնի կառավարությունը կքննարկի Ռևկոմի առաջարկը և վաղը ժամի տասին գրավոր պատասխան կտա։

XI

Դոնի կառավարության պատասխանը, որ հետևյալ օրվա առավոտյան հանձնվեց Ռևկոմի պատգամավորությանը, ասում էր հետևյալը.

Դոնի Զորաց կառավարությունը, քննարկելով Կազակական Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի պահանջները, որ ներկայացրել է կոմիտեի դեպուտացիան Ատամանյան, Լեյբ-կազակական, 44-րդ, 28-րդ, 29-րդ, 10-րդ, 27-րդ, 23-րդ, 8-րդ, 2-րդ պահեստի և 43-րդ գնդերի, 14-րդ առանձին հարյուրյակի, 6-րդ գվարդիական, 32-րդ, 28-րդ, 12-րդ և 13-րդ մարտկոցների, 2-րդ հետևակ գումարտակի և Կամենսկայայի տեղական զորախմբի անունից, հայտարարում է, որ կառավարությունը հանդիսանում է մարզի ամբողջ կազակ բնակչության ներկայացուցիչը։ Բնակչության կողմից ընտրված կառավարությունը իրավունք չունի մինչև ներկայացուցիչների նոր ժողովի հրավիրումը հրաժարվել իր լիազորություններից։

Դոնի Զորաց կառավարությունը անհրաժեշտ էր գտել ժողովի նախկին կազմը արձակել և թե՛ ստանիցաների, թե՛ զորամասերի դեպուտատների վերընտրություններ կատարել։ Ժողովն իր նոր կազմով, ազատորեն ընտրվելով (ագիտացիայի լիակատար ազատությամբ) կազակական ամբողջ բնակչության կողմից, ուղիղ, հավասար և գաղտնի քվեարկության հիմունքով, կհավաքվի Նովոչերկասկ քաղաքում, հին տոմարով սույն թվականի փետրվարի 4-ին, ամբողջ ոչ-կազակ բնակչության համագումարի հետ միաժամանակ։ Միայն կազակական ներկայացուցիչների ժողովը, ռևոլյուցիայով վերականգնված օրինական օրգանը, որը ներկայացնում է մարզի կազակ բնակչությունը,— իրավունք ունի արձակելու զորաց կառավարությունը և ընտրելու նորը։ Այդ ժողովը միաժամանակ կքննարկի զորամասերի կառավարման և այն հարցը, թե արդյոք պե՞տք է լինեն կամ չլինեն իշխանությունը պաշտպանող ջոկատներն ու կամավորական գուգաշները։ Ինչ վերաբերում է Կամավորական բանակի կազմակերպման և գործունեության, ապա միավորված կառավարությունը դեռ առաջ որոշում էր ընդունել նրանց առնել կառավարության վերահսկողության տակ՝ Մարզային ռազմական կոմիտեի մասնակցությամբ։

Որպես թե զորաց կառավարության կարգած ոստիկանությունը հանքա-գործարանային ռայոնից ետ կանչելու հարցի վերաբերմամբ կառավարությունը հայտարարում է, որ ոստիկանության հարցը փետրվարի 4-ին կդրվի Ժողովի քննարկման։

Կառավարությունը հայտարարում է, որ տեղական կյանքի կառուցմանը կարող է մասնակցել միայն տեղական բնակչությունը, այս պատճառով էլ նա, կատարելով Ժողովի կամքը, անհրաժեշտ է գտնում բոլոր միջոցներով պայքարել, որպեսզի բոլշևիկյան զինված ջոկատները, որոնք ձգտում են մարզի վզին փաթաթել իրենց կարգերը, չմտնեն մարզը։ Բնակչությունն ինքը, և միայն նա պետք է տնօրինի իր կյանքը։

Կառավարությունը քաղաքացիական պատերազմ չի ցանկանում, նա բոլոր միջոցներով ձգտում է գործը վերջացնել խաղաղ ճանապարհով, որի համար Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն առաջարկում է մասնակցել բոլշևիկյան ջոկատներն ուղարկվելիք դեպուտացիային։

Կառավարությունը գտնում է, որ եթե մարզի նկատմամբ կողմնակի ջոկատները չմտնեն մարզի սահմանները, քաղաքացիական պատերազմ էլ չի լինի, որովհետև կառավարությունը միայն պաշտպանում է Դոնի

երկրամասը, ոչ մի հարձակողական գործողություն չի ձեռնարկում, իր կամքը չի փաթաթում մնացած Ռուսաստանի վրին, ուստիև չի ցանկանում, որ կողմնակի որևէ մեկն էլ իր կամքը փաթաթի Դոնի վրին։

Կառավարությունն ապահովում է ընտրությունների լիակատար ազատությունը ստանիցաներում և զորամասերում, և յուրաքանչյուր քաղաքացի կկարողանա ծավալել իր ագիտացիան և իր տեսակետը պաշտպանել ներկայացուցիչների Ժողովի նշանակված ընտրությունների ժամանակ։

Կազակների կարիքները հետազոտելու համար բոլոր դիվիզիաներում այժմ ևեթ պետք է զորամասերի ներկայացուցիչներից հանձնաժողովներ նշանակվեն։

Դոնի Զորաց կառավարությունը առաջարկում է այն բոլոր զորամասերին, որոնք իրենց դելեգատներն են ուղարկել Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, վերադառնալ Դոնի երկրամասը պաշտպանելու իրենց նորմալ աշխատանքին։

Զորաց կառավարությունը իր մտքովն էլ չի անցկացնում, որ Դոնի մեր զորամասերը դուրս գան կառավարության դեմ և դրանով երկպառակտչական պատերազմ սկսեն խաղաղ Դոնի մարզում։

Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն պետք է արձակվի նրան ընտրող զորամասերի կողմից և բոլոր զորամասերը դրա փոխարեն պետք է իրենց ներկայացուցիչներն ուղարկեն գոյություն ունեցող մարզային ռազմական կոմիտե, որը միավորում է մարզի բոլոր զորամասերը։

Զորաց կառավարությունը պահանջում է, որ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի ձերբակալած բոլոր անձինք անհապաղ ազատվեն, իսկ ադմինիստրացիան, մարզում նորմալ կյանքը վերականգնելու նպատակով, պետք է վերադարձվի իր պարտականությունների կատարման։

Հանդիսանալով միայն անհրաժեշտ թվով կազակական զորամասերի ներկայացուցիչ, Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն իրավունք չունի պահանջներ ներկայացնել բոլոր զորամասերի անունից, առավել ևս՝ ամբողջ կազակության անունից։

Զորաց կառավարությունը բոլորովին անթույլատրելի է համարում կոմիտեի հարաբերությունները Ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ և նրա դրամական օժանդակությունից օգտվելը, որովհետև այդ կնշանակեր Ժողովրդական Կոմիսարների Սովետի ազդեցությունը տարածել Դոնի մարզի վրա, մինչդեռ կազակական ներկայացուցիչների Ժողովը և ամբողջ մարզի ոչ-կազակ բնակչության համագումարը, ինչպես նաև Ուկրաինան, Սիբիրը, Կովկասը և առանց բացառության բոլոր կազակական զորքերը անընդունելի են համարել Սովետների իշխանությունը։

Զորաց կառավարության նախագահ, Զորաց ատամանի օգնական՝ Մ. Բոգաևսկի։
Դոնի Զորաց ավագներ՝ Օլատոնցև, Գուլյակով, Մելնիկով։

Ա՛յն դելեգացիայի կազմում, որ Դոնի կառավարությունն ուղարկեց դեպի Տագանրոգ, բոլշևիկների հետ բանակցություններ մղելու համար, մեկնեցին նաև Կամենսկայայի ռևկոմի անդամներ Լագուտինը և Սկաչկովը։ Պոդտյոլկովը և մնացածները առժամ պահվեցին Նովոչերկասկում, իսկ այդ ժամանակ Ջերնեցովի ջոկատը մի քանի հարյուր հոգով, մի ծանր մարտկոցով ու երկու թեթև թնդանոթով կատաղի հարձակում գործեց ու գրավեց Զվերևո — Լիխայա կայարանները, և այնտեղ մեկ վաշտից ու երկու հրանոթից բաղկացած առաջակալ թողնելով, հիմնական ուժերով հարձակում գործեց Կամենսկայայի վրա։ Հյուսիսային Դոնեց կիսակայարանի մոտ կոտրելով ռևոլյուցիոն կազակական զորամասերի դիմադրությունը, Ջերնեցովը հունվարի 17-ին գրավեց Կամենսկայան։ Բայց արդեն մի քանի ժամից հետո տեղեկություն ստացվեց, որ Սաբլինի կարմիրգվարդիական ջոկատները Զվերևոյից, հետո էլ Լիխայայից դուրս են քշել այնտեղ մնացած չերնեցովականների առաջակալը։ Ջերնեցովը աճապարեց դեպի այնտեղ։ Ճակատային կարճատև հարվածով նա ետ շպրտեց 3-րդ Մոսկովյան ջոկատը, մարտում խիստ քայքայեց Խարկովյան ջոկատը և խուճապահար նահանջող կարմիրգվարդիականներին ետ շպրտեց դեպի ելման դիրքը։

Երբ արդեն Լիխայայի ուղղությամբ դրությունը վերականգնված էր, Ջերնեցովը իր ձեռքը վերցնելով նախաձեռնությունը, վերադարձավ Կամենսկայա։ Հունվարի 19-ին Նովոչերկասկից մի ջոկատ եկավ նրան օժանդակելու համար։ Հետևյալ օրը Ջերնեցովը որոշեց հարձակվել Գլուբոկայայի վրա։

Ռազմական խորհրդում հարյուրապետ Լինկովի առաջարկով որոշվեց Գլուբոկայան գրավել շրջանցելու միջոցով։ Ջերնեցովը վտանգավոր էր համարում երկաթուղու գծով հարձակվելը, որովհետև վախենում էր, որ այդ ուղղությամբ կհանդիպի Կամենսկայայի ռևկոմի զորամասերի և Ջերտկովոյից նրանց օգնության եկած կարմիրգվարդիական ջոկատների համառ դիմադրության։

Գիշերն սկսվեց խոր շրջանցումը։ Ջերնեցովն ինքն էր տանում զորասյունը։

Արդեն լուսանալու էր, երբ մոտեցան Գլուբոկայային։

Ճշտությամբ վերադասավորվեցին, շղթա կազմեցին։ Տալով վերջին կարգադրությունները, Չերնեցովն իջավ ձիուց, ու տրորելով թմրած ոտները, խոպոտ հրամայեց վաշտերից մեկի հրամանատարին.

— Առանց ցերեմոնիաների, յասավուլ։ Դուք ինձ հասկացա՞ք։

Նա տաքանալու համար քայլեց տեղում, ձյան պինդ շերտի վրա, ճռճռացնելով սապոգները. ծռեց սպիտակ կարակուլե փափախը, ձեռնոցով շփեց կարմրած ականջը։ Նրա փայլուն, հանդուգն աչքերի տակ անքնությունից կապույտ կլորակներ էին առաջացել։ Շրթունքները ցրտից կնճռոտվել էին։ Կարճ կտրած բեղերի վրա եղյամի խավ էր նստել։

Տաքանալով, նա թռավ ձիու վրա, շտկեց պաշտպանական գույնի սպայական կիսամուշտակի ծալերը, ու թամքի դաշից վերցնելով սանձը, խթանեց Դոնի հերաթափ, շիկակարմրավուն նժույգը, սրտանց ու վստահորեն ժպտաց.

— Սկսե՛նք։

XII

Կամենսկայայում ճակատային կազակության համագումար հրավիրվելուց առաջ փոխյասավուլ Իզվարինը փախավ գնդից։ Նախորդ օրը նա եղավ Գրիգորիի մոտ ու, ակնարկելով իր հեռանալու մասին, ասաց.

— Ստեղծված պայմաններում դժվար է ծառայել գընդում։ Կազակները դեգերում են երկու ծայրահեղությունների միջև,— բոլշևիկներ և առաջվա միապետական կարգերը։ Ոչ ոք չի ուզում պաշտպանել Կալեդինի կառավարությունը, մասամբ նույնիսկ այն պատճառով, որ նա ձեռ չի քաշում իր պարիտետից, ոնց որ խեղկատակը՝ չխկչխկաններից։ Իսկ մեզ հարկավոր է վճռական, ուժեղ կամքի տեր մարդ, որը կարողանա ոչ-կազակ բնակչությանն իր պատշաճ տեղը տալ... Բայց ես գտնում եմ, որ ավելի լավ է ներկա մոմենտում պաշտպանել Կալեդինին՝ գործը վերջնականապես տանուլ չտալու համար։— Մի քիչ լռելուց հետո, ծխախոտը վառելով, հարցրեց.— Դու... կարծեմ կարմիրների հավա՞տն ես ընդունել։

— Համարյա թե,— համաձայնեց Գրիգորին։

— Անկեղծորե՞ն թե՞ Գոլուբովի նման փորձում ես համակրանք ձեռք բերել կազակների մեջ։

— Ինձ համակրանք հարկավոր չէ։ Ինքս եմ ելք փընտրում։

— Դու դեմ ես առել պատին, և ոչ թե ելք գտել։

— Տեսնե՛նք...

— Վախենում եմ, Գրիգորի, որ մենք հանդիպենք իբրև թշնամիներ։

— Կովի դաշտում բարեկամներին չեն ճանաչում, Եֆիմ Իվանիչ,— ժպտաց Գրիգորին։

Իզվարինը մի քիչ նստեց ու գնաց, իսկ առավոտյան չքացավ, ասես գետնի տակ անցավ։

Համագումարի օրը Վեշենսկայա ստանիցայի Լեբյաժի խուտորի մի կազակ-ատամանցի հկավ Գրիգորիի մոտ։ Գրիգորին մաքրում և հրացանի յուղով յուղում էր նագանը։ Ատամանցին մի քիչ նստեց և գնալուց առաջ որպես թե ի միջի այլոց ասաց, մինչդեռ բացառապես դրա համար էր եկել (նա գիտեր, որ Գրիգորիի կնկանը խլել էր Լիստնիցկին, Ատամանյան գնդի նախկին սպան, ու վերջինիս պատահմամբ տեսնելով կայարանում, եկել էր նախազգուշացնելու).

— Գրիգորի Պանտելևիչ, այսօր ես կայարանում տեսա քո բարեկամին։

— Ո՞ւմ։

— Լիստնիցկուն։ Ճանաչո՞ւմ ես նրան։

— Ե՞րբ տեսար, արագ հարցրեց Գրիգորին։

— Մոտ մի ժամ առաջ։

Գրիգորին նստեց։ Վաղեմի վիրավորանքը գայլ խեղդող գամփռի նման բռնեց նրա սիրտը։ Թշնամու նկատմամբ նա առաջվա պես ուժեղ թափով ոխ չէր զգում, բայց գիտեր, որ եթե նրան հանդիպի այժմ, սկսվող քաղաքացիական պատերազմի պայմաններում, երկուսի միջև արյունահեղություն կլինի։ Անսպասելիորեն լսելով Լիստնիցկու մասին, հասկացավ, որ հին վերքը չի մոռացվել վաղեմությունից. անզգույշ խոսքով շոշափիր այն,— ու արյուն կգա։ Գրիգորին հաճույքով վրեժ կառներ անցածի համար, այն բանի համար, որ գարշելի մարդու մեղքով խամրել էր կյանքը և առաջվա լիա-

րյուն, մեծ բերկրանքի տեղում հոշոտող, անհաղթ թախիծ ու թոշնած դալկություն էր մնացել։

Մի փոքր լռելով, զգալով, թե ինչպես է դեմքից անցնում ոչ այնքան թունդ կարմրությունը, հարցրեց.

— Այստե՞ղ է եկել, չգիտե՞ս։

— Հազիվ թե։ Երևի Չերկասկ է գնում։

— Հը՛մ...

Ատամանցին խոսեց համագումարի, գնդի նորություններ մասին ու գնաց։ Հետագա բոլոր օրերում Գրիգորին, որքան էլ ջանք թափեց, չկարողացավ ամոքել սիրտը ճմլող ցավը։ Քայլում էր շշմած, սովորականից ավելի հաճախ էր վերհիշում Ակսինյային, բերանում դառնություն էր զգում, սիրտը թուլանում էր։ Մտածում էր Նատալյայի, երեխաների մասին, բայց ժամանակը մարել էր դրանից սպասվելիք ուրախությունը, վաղեմությունը մոռացնել էր տվել այն։ Սիրտը Ակսինյայի հետ էր, վերջինս նրան քաշում էր ծանր ու տիրաբար։

Երբ Չերնեցովը վրա տվեց, հարկավոր եղավ շտապ նահանջել Կամենսկայայից։ Դոնի ռևկոմի ջլատված ջոկատները, կիսով չափ պակասած կազակական հարյուրյակները անկարգ կերպով բեռնվում էին գնացքներին, հեռանում երթական կարգով, թողնում այն ամենը, ինչ որ չէր կարելի ձեռքով տանել, ինչ որ ծանր էր։ Պարզ երևում էր, որ չկա կազմակերպվածություն, չկա կայուն մարդ, որը հավաքեր ու դասավորեր իրոք խոշոր այդ բոլոր ուժերը։

Ընտրովի հրամանատարներից աչքի ընկավ վերջին օրերում որտեղից-որտեղ հայտնված զորական ավագ Գոլուբովը։ Նա ընդունեց կազակական ամենամարտական 27-րդ գնդի հրամանատարությունը և միանգամից, խստություններ բանեցնելով, գործը գլուխ բերեց։ Կազակներն անվերապահորեն ենթարկվում էին նրան, տեսնելով նրա մեջ այն, ինչ որ պակասում էր գնդին,— գունդը համախմբելու, պարտականությունները բաշխելու, առաջնորդելու կարողություն։ Այդ նա էր, Գոլուբովը, հաստ, ուռուցիկ թշերով, լկտի աչքերով սպան, որ կայարանում թափահարելով թուրը, գոռում էր բեռնումը ուշացնող կազակների վրա.

— Ի՞նչ եք անում, հը՞։ Օյի՞ն եք խաղում... ձեր այսինչը,

ձեր մերը... Բեռնեցեք, է՛։ Ռևոլյուցիայի անունից հրամայում եմ անմիջապես ենթարկվել... Ի-ի-ի՞նչ... Այդ ո՞վ է դեմագոգը։ Կգնդակահարեմ, սրիկա... Լռե՛լ... Սաբոտաժնիկներին և ծածուկ կոնտրռևոլյուցիոներներին ես ընկեր չե՛մ։

Ու կազակները ենթարկվում էին։ Ըստ հին սովորության շատերին այդ նույնիսկ դուր էր գալիս. դեռ հնից ձեռ չէին քաշել։ Իսկ առաջվա ժամանակներում ով կաշի պլոկող էր, նա էլ լավագույն հրամանատարն էր կազակների աչքում։ Այնպիսիների մասին, ինչպես Գոլուբովն էր, ասում էին՝ «նա մեղավորի կաշին է քերթում, իսկ արդարի հետ խղճով է վարվում»։

Գոնռևկոմի զորամասերը ետ քաշվեցին ու հեղեղեցին Գլուբոկայան։ Բոլոր ուժերի հրամանատարությունն ըստ էության անցավ Գոլուբովին։ Երկու օրից էլ պակաս ժամանակամիջոցում նա ի մի հավաքեց քայքայված զորամասերը, պատշաճ միջոցներ ձեռք առավ Գլուբոկայան իր ձեռքում պահելու համար։ Նրա պահանջով Գրիգորի Մելեխովը 2-րդ պահեստի գնդի երկու հարյուրյակից և ատամանցիների մի հարյուրյակից կազմված դիվիզիոնի հրամանատար էր դարձել։

Հունվարի 20-ի երեկոյան Գրիգորին դուրս եկավ իր բնակարանից, ատամանցիներից կարգած ուղեկալները ստուգելու համար, ու հենց դարբասի մոտ հանդիպեց Պոդտյոլկովին։ Վերջինս ճանաչեց նրան։

— Դո՞ւ ես, Մելեխով։

— Ես եմ։

— Ո՞ւր ես գնում։

— Ուղեկալները նայելու։ Վաղո՞ւց ես եկել Չերկասկից։ է՛, ո՞նց եղավ։

Պոդտյոլկովը մռայլվեց։

— Ժողովրդի երդվյալ թշնամիների հետ գործը հաշտությամբ գլուխ չես բերի։ Տեսա՞ր, թե ինչ օյին խաղացին։ Բանակցությունն է՛ր... իսկ իրենք Չերնեցովին մեջտեղ բերին։ Կալեդինը ինչպիսի՛ իժ է, հա՛-ա։ Էհ, ես իսկի ժամանակ չունեմ, շուտ պետք է գնամ շտաբ։

Նա արագ հրաժեշտ տվեց Գրիգորիին, լայն քայլերով գնաց դեպի կենտրոնը։

Դեռ մինչև Ռևկոմի նախագահ ընտրվելը նա բավական փոխվել էր Գրիգորիի և մյուս, ծանոթ կազակների նկատմամբ, նրա ձայնի մեջ գերազանցության ու որոշ մեծամտության նշաններ էին արտահայտվում։ Իշխանությունը գինովության պես շշմեցրել էր բնությունից հասարակ կազակի գլուխը։

Գրիգորին բարձրացրեց շինելի օձիքը, գնաց՝ արագացնելով քայլերը։ Գիշերն ըստ երևույթին խիստ ցուրտ էր լինելու։ Կիրգիզիայի կողմից քամի էր փչում։ Երկինքը պայծառանում էր։ Զգալիորեն ցուրտ էր։ Խոպոտ ճռճռում էր ձյունը։ Լուսինը սահում էր մեղմակի և կողքի ծռված, ինչպես հաշմանդամը սանդուղքով բարձրանալիս։ Տներից դենը փռվել էր մթնշաղային գորշ կապտությամբ սքողված տափաստանը։ Գիշերամուտի այն ժամն էր, երբ ջնջվում են ուրվագծերը, գույները, տարածությունը, երբ ցերեկվա լույսը դեռ մաքառում է գիշերային մթության դեմ ու ամեն ինչ թվում է անիրական, հեքիաթային, երերուն. ու նույնիսկ բույրերն էլ այդ ժամին, կորցնելով իրենց թնդությունը, ունենում են իրենց առանձնահատուկ, սքողված երանգները։

Ստուգելով ուղեկալները, Գրիգորին վերադարձավ իր բնակարանը։ Տանտերը, որ երկաթուղային ծառայող էր, պեպենոտ և խարդախ դեմքով,— ինքնաեռ գցեց, նստեց սեղանի մոտ։

— Հարձակվելո՞ւ եք։

— Հայտնի չէ։

— Թե՞ մտածում եք սպասել նրանց։

— Հետո կերևա։

— Միանգամից ճիշտ է։ Դեհ, դուք ինչո՞վ պիտի հարձակվեք որ. իհարկե, ավելի լավ է սպասել։ Պաշտպանվելը ավելի ձեռնտու է։ Ես ինքս գերմանական պատերազմում ծառայում էի իբրև սակրավոր, տակտիկական ստրատեգիայից կարգին գլուխ էի հանում... Ուժերդ քիչ են, քիչ։

— Բավական է,— Գրիգորին խուսափեց իրեն ճնշող խոսակցությունից։

Բայց տանտերը պնդերեսությամբ հարցուփորձ էր անում, պտտվում սեղանի շուրջ, մահուդե բաճկոնակի տակից քորում արբամիկ ձկան փորի պես լղար փորը.

— Հրետանի շա՞տ կա։ Թնդանոթներ, թնդանոթներ, էլի՞։

— Ծառայել ես, բայց ծառայությունը չգիտես,— ասաց Գրիգորին ու այնպես չռեց աչքերը, որ տանտերը մի կողմ նետվեց՝ ասես ուշաթափությունից.— ծառայել ես, բայց չգիտես... Ի՞նչ իրավունք ունես ինձ հարցուփորձ անելու մեր զորքերի քանակի և մեր պլանների մասին։ Քեզ պիտի տանեմ հարցաքննության...

— Պարո... սպա... Աղավ... աղավնյակ...— ամրողջովին կուլ տալով բառերի վերջավորությունները, կմկմաց գույնը գցած տանտերը, սևին էին տալիս նրա կիսաբաց բերանի շեշերը. Հիմարու.... հիմարություն էր, ներեցեք...

Թեյի ժամանակ Գրիգորին պատահմամբ բարձրացրեց գլուխն ու նայեց նրան, նկատեց, որ նրա աչքերը արագ թարթեցին ինչպես կայծակի հարվածի պահին, իսկ երբ թարթիչները բացեցին աչքերը, դրանց արտահայտությունն այլ էր, փաղաքշական և գրեթե պաշտող։ Տանտիրոջ ընտանիքը,— կինն ու երկու չափահաս աղջիկները,— շշնջալով խոսքեր էր փոխանակում։ Գրիգորին կիսատ թողեց երկրորդ բաժակը, գնաց իր սենյակը։

Շուտով որտեղից որտեղ եկան 2-րդ պահեստի գնդի չորրորդ հարյուրյակի վեց կազակներ, որոնք տեղավորված էին նույն բնակարանում, Գրիգորիի հետ միասին։ Նրանք բարձրաձայն խոսում, ծիծաղում, թեյ էին խմում։ Գրիգորին արդեն քուն մտնելիս լսում էր նրանց հատուկենտ խոսքերը։ Մեկը պատմում էր (Գրիգորին ձայնից ճանաչեց դասակապետ Բախմաչևին, Լագունսկայա ստանիցայի կազակին), մնացածները երբեմն դիտողություններ էին անում։

— Այդ կատարվեց իմ ներկայությամբ։ Գորլովկայի շրջանից, համար տասնմեկ հանքարանից գալիս են երեք բանվոր, ասում են՝ մեզ մոտ կայազոր է հավաքվել, զենքի կարիք կա, դեհ, բաժին հանեք, ինչ որ կարող եք։ Իսկ Պոդտյոլկովը... Ես հո ինքս լսեցի,— նա բարձրացրեց ձայնը՝ պատասխանելով մեկի ռեպլիկին,— ասում է՝ «Դիմեցեք Սաբլինին, ընկեր, իսկ մեզ մոտ ոչինչ չկա»։ Ո՞նց թե ոչինչ չկա։ Ես գիտեմ, որ ավելորդ հրացաններ կային։ Այստեղ ուրիշ բան կար... Խանդոտություն արտահայտվեց, որ մուժիկներն են խառնվում գործին։

— Եվ ճիշտ է,— ասաց մեկ ուրիշը,— արի ու նրանց զենք տուր, իսկ նրանք կկռվեն թե ոչ, հայտնի չի։ Իսկ երբ հարցը վերաբերի հողին, ձեռք կմեկնեն։

— Մենք լա՛վ ենք ճանաչում նրանց,— ասաց երրորդը։

Բախմաչևը թեյի գդալը մտաբաղ զնգզնգացրեց բաժակին. զարկելով այն իր խոսքերի տակտով, բառերը շեշտելով, ասաց.

— Չէ, սա ոչ մի բանի նման չի։ Բոլշևիկները ամբողջ ժողովրդի համար զիջումներ են անում, իսկ մենք վատ բոլշևիկներ ենք... Միայն թե Կալեդինին դեն գցենք, հետո արդեն հուպ կտանք...

— Բայց հոգիդ սիրեմ,— հորդորանքով հնչեց մեկի ճկուն, համարյա երեխայական ձայնը,— հասկացիր, որ մենք ոչինչ չունենք տալու։ Ամեն մի տանը մեկ ու կես դեսյատին հարմար հող է ընկնում, մնացածը կավ է, ձորակներ, արոտատեղեր։ Է՛լ ի՞նչ կա տալու։

— Քեզանից չեն է՛լ վերցնում, բայց կան այնպիսիները, որոնք հարուստ են հողով։

— Բա զորաց հո՞ղը։

— Խոնարհաբար շնորհակալ ենք։ Քո հողը տուր, հետո ուրիշից մուրա... Միթամ բա՛ն ասացիր, էլի՛։

— Զորաց հողը մեզ պետք կգա։

— Էլ ի՞նչ ասել կուզի։

— Ագահությունը լավ բան չի։

— Ի՞նչ, ագահություն, է՞։

— Գուցե պետք լինի տեղափոխել վերի[1] մեր կազակներին։ Գիտե՛նք մենք նրանց հողերը. դեղին ավազ և ուրիշ ոչինչ։

— Հենց ա՛յդ է բանը։

— Մենք ոչ ձևելու ենք, ոչ էլ կարելու։

— Առանց արաղի դրանից գլուխ չես հանի։

— Է՛խ, տղերք ջան։ Անցած օրը այստեղ թալանեցին գինու պահեստը։ Մեկը լողաց սպիրտի մեջ, խեղդվեց։

— Կարգին խմե՛ր, էլի։ Այնպես, որ ջանը ճնկճնկար։

[1] Վերի — Դոնի վերին ավազանի (Ս. Թ.)։

Գրիգորին կես քնի մեջ լսում էր, թե ինչպես կազակները տեղ էին գցում հատակի վրա, հորանջում, քորվում, էլի՛ ու էլի խոսում հողի, հողաբաժանության մասին։

Լուսաբացից առաջ պատուհանի տակ ճայթեց մի կրակոց։ Կազակները վեր թռան։ Գրիգորին վերնաշապիկը հագնելիս չէր գտնում թևքը։ Ոտքի վրա հագավ կոշիկները, վերցրեց շինելը։ Դրսում ճթճթում, ճայթում էին կրակոցները։ Գրոգրոալով անցավ մի սայլ։ Մեկը դռան մոտ գոռում էր հնչեղ, վախեցած ձայնով.

— Վերցնե՛լ հրացանները... հրացանն ե՛ր...

Չերնեցովի շղթաները ետ մղելով ուղեկալները, մտնում էին Գլուբոկայա։ Գորշ, մռայլ մթության մեջ ձիավորներն այս ու այն կողմ էին նետվում։ Սապոգները թփթփացնելով, վազում էին հետևակները։ Փողոցների խաչմերուկում գնդացիր էին դնում։ Մի երեսուն հոգի կազակ, շղթա կազմած, առաջ անցան։ Մի օղակ ևս վազեվազ անցավ նրանցքը։ Շրջխկում էին փակաղակները՝ փամփուշտները մղելով հրացանների փողերի մեջ։ Հետևյալ թաղում մեկը բղավում էր հրամանի բարձր, հնչեղ ձայնով.

— Երկրորդ հարյուրյակ, շո՛ւտ։ Ո՞վ է այնտեղ խախտում շարքը... Զգա-ա՛ստ։ Գնդացրորդները՝ աջ թևը։ Պատրա՞ստ է։ Հարյուրյա՛-ակ...

Դղրդալով անցավ մարտկոցային մի դասակ։ Ձիերը քառատրոփ էին սլանում։ Ձիավորները թափահարում էին մտրակները։ Ռմբարկղների շաչյունը, անիվների որոտը, լաֆետների դղրդոցը միախառնվում էին ծայրամասում սաստկացող հրաձգությանը։ Մոտիկ տեղում միանգամից որոտացին գնդացիրները։ Փողոցի մյուս անկյունում, կպչելով նախապարտեզի մոտ գտնվող ծածկված դեղին, շրջվեց հայտնի չէ ուր սլացող դաշտային խոհանոցը։

— Տո՛, սատանա, քո՞ռ ես, ինչ է... Բա չե՞ս տեսնում։ Ո՞ւր ես քշում։— Այնտեղից բղավեց մեկը ծանր մահացու վախեցածի ձայնով։

Գրիգորին դժվարությամբ հավաքեց հարյուրյակը, վարգելով տարավ կայարանի ծայրը։ Այնտեղից արդեն հոծ խմբերով գալիս էին նահանջող կազակները։

— Ո՞ւր է, է՞...— Գրիգորին բռնեց առջևից եկողի հրացանը։

— Թո՛-ող...— կազակը քաշեց հրացանը։— Թո՛ղ, սրիկա... Ինչո՞ւ ես բռնում։ Չե՞ս տեսնում,— նահանջում են...

— Ուժը նրանն է...

— Քշո՛ւմ է սարսաղի պես...

— Ո՞ւր ենք գնալու... Ո՞ր երկիրը,— Միլլերովոյի կո՞ղմը,— հևալով բղավում էին ոմանք։

Գրիգորին փորձեց իր հարյուրյակով շղթա կազմել ծայրամասում, մի ինչ-որ երկար մարագի մոտ, բայց փախչողների նոր բազմությունը նրանց ոտնատակ արավ։ Գրիգորիի հարյուրյակի կազակները խառնվելով փախչողներին, իրենք էլ ետ փախան դեպի փողոցները։

— Կանգնե՛լ... Չփախչե՛լ... Կրակում եմ...— կատաղությունից գոռալով՝ գոռում էր Գրիգորին։

Նրան չէին հնազանդվում։ Փողոցի երկարությամբ գընդացրային կրակ թափվեց. կազակները մի վայրկյան խումբ-խումբ ընկան գետնին, սողալով մոտեցան պատերին ու սլացան դեպի խոտորնակի փողոցները։

— Հիմի դրանք չես կանգնեցնի, Մելեխով,— բղավեց գասակապետ Բախմաչևը՝ վազեվազ անցնելով նրա կողքից ու մոտիկից նայելով նրա աչքերին։

Գրիգորին գնաց կազակների հետևից, նա կրճտացնում էր ատամները, թափահարում հրացանը։

Խուճապը, որով բռնվել էին զորամասերը, վերջացավ նրանով, որ զորամասերն անկարգ վիճակում փախան Գլուբոկայայից։ Նահանջեցին, թողնելով ջոկատի համարյա ամբողջ նյութական մասը։ Միայն լույսը բացվելիս հաջողվեց հավաքել հարյուրյակները և նրանց նետել հակահարձակման։

Կարմրատակած, քրտնած Գոլուբովը, որ արձակած կիսամուշտակով էր, սլանում էր իր 27-րդ գնդի շարժվող շղթաների առջևից. մետաղե, լարված ձայնով գոռում էր.

— Քայլո՛վ գնալ... Չպառկե՛լ... Մարշ, մա՛րշ...

14-րդ մարտկոցը դիրք բռնեց. հրանոթները հանեց քարշակներից. մարտկոցի ավագ սպան ոմբարկղի վրա կանգնած, նայում էր հեռադիտակով։

Մարտը սկսվեց ժամը վեցին։ Կազակների ու Պետրովի Վորոնեժյան ջոկատի կարմիրգվարդիականների խառն շղթաները հոծ բազմությամբ առաջ նետվեցին, ֆիգուրների սև շարաններով ուրվագծվեցին ձյունե ֆոնի վրա։

Արևելքից ցուրտ քամի էր փչում։ Քամու ծվատած ամպի տակից արշալույսը ցուցադրել էր իր արյունաներկ եզրը։

Գրիգորին ատամանյան հարյուրյակի կեսը ուղարկեց 14-րդ մարտկոցը պաշտպանելու, մնացածների հետ հարձակման անցավ։

Հրաձգության ճշտման առաջին արկը ընկավ չերնեցովյանների շղթայից հեռու, նրա առջևի կողմում։ Պայթյունի փրշոտ, նարնջագույն-կապույտ դրոշը դեպի վեր թռավ։ Դղրդալով պայթեց երկրորդ կրակոցը։ Հրանոթները մեկ-մեկ ճշտում էին հրաձգությունը։

Վը՛զ-վըզ-վը՛զ...— թռավ-սլացավ արկը։

Մի վայրկյան լարված լռություն, հրացանային համազարկեր, ու արկի հեռավոր, որոտալից պայթյուն։ Թշնամու շղթայից դենը թռչելուց հետո արկերը հետզհետե ընկնում էին շղթայի մոտ։ Քամուց աչքերը կկոցելով, Գրիգորին գոհունակության զգացմամբ մտածեց՝ «Գտան տեղը»։

Աջ թևից հարձակվում էին 44-րդ գնդի հարյուրյակները։ Գոլուբովն իր գունդը տանում էր կենտրոնից։ Գրիգորին նրա ձախ կողմում էր։ Նրանից դենը, ձախ թևից հարձակվում էին կարմիրգվարդիական ջոկատները։ Գրիգորիի հարյուրյակներին երեք գնդացիր էր տրված։ Դրանց հրամանատարը, որ կարճահասակ մի կարմիրգվարդիական էր մռայլ դեմքով և խիստ մազոտ, լայն ձեռքերով, ճարտարությամբ էր վարում հրաձգությունը՝ կասեցնելով հակառակորդի հարձակողական մանևրները։ Նա շարունակ գտնվում էր այն գնդացրի մոտ, որը առաջ էր շարժվում ատամանցիների շղթայի հետ։ Նրա հետ կար ամրակազմ, շինել հագած մի կին-կարմիրգվարդիական։ Գրիգորին անցնելով շղթայի երկարությամբ, շարացած մտածեց՝ «Ա՛յ քեզ կնամո՛ւ. եկել է դիրքերը, ու էլի կնկանից ձեռ չի քաշել։ Արի ու կռվիր այդ տեսակների կողքին... Մնում է, որ վերցրած լիներ յորդան-դոշակն ու բոլոր լակոտ-լուկուտներին...» Գնդացրային զորախմբի պետը մոտեցավ Գրիգորիին, կրծքի վրա շտկեց նագանի քուղը։

— Դո՞ք եք այս ջոկատի հրամանատարը։

— Այո, ես եմ։

— Ես խափանիչ կրակ կբանամ ատամանյան կիսահարյուրյակի ճակատամարտում։ Տեսնո՞ւմ եք, մեզ ճամփա չեն տալի։

— Լա՛վ,— համաձայնեց Գրիգորին և շուռ եկավ, լսելով հրաձգությունը դադարեցրած գնդացրի կողմից եկող աղաղակը։

Երկարամորուք, հաղթանդամ մի գնդացրորդ վայրագությամբ գոռում էր.

— Բունչուկ... ախր մեքենան կհալվի... Տո՛, գարշելի սատանա, մի՞թե կարելի է այդպես։

Նրա կողքին ծնկել էր շինել հագած կինը։ Վերջինիս սև աչքերը, որ վառվում էին բրդե լաչակի տակից, Գրիգորիին հիշեցրին Ակսինյային, և նա կարոտ աչքերով մի պահ անթարթ նայեց կնոջը՝ պահելով շնչառությունը։

Կեսօրին Գոլուբովի հանձնատարը մի գրություն բերեց Գրիգորիին։ Դաշտային տետրից անհավասար կտրված թերթիկի վրա խոշոր, ծուռումուռ տառերով գրված էր.

Դոնի Ռևկոմի անունից ձեզ հրամայում եմ ձեր հրամանատարությանը հանձնված երկու հարյուրյակներով դուրս գալ դիրքից և արագ ընթացքով գնալ հակառակորդի աջ թևն անցնելու, ուղղություն վերցնելով դեպի այն տեղամասը, որ երևում է այստեղից, հողմաղացից ձախ, ձորակի ուղղությամբ... Քողարկեցեք ձեր ընթացքը (մի քանի անընթեռնելի բառ...) խփել թևից, հենց որ մենք վճռական գրոհի անցնենք։

Գոլուբով։

Գրիգորին մի կողմ տարավ երկու հարյուրյակը ու նստեցրեց ձիերին, ետ քաշվեց, աշխատելով, որ հակառակորդը չտրոշի հարյուրյակների ընթացքի ուղղությունը։

Քսան վերստ շուրջանակի ճանապարհ անցան։ Ձիերը գնում էին խոր ձյան մեջ թաղվելով։ Ձորակը, որով գնում էին հակառակորդին շրջանցելու, լցված էր ձյունով։ Տեղ-տեղ ձյունը մինչև ձիերի փորն էր հասնում։ Գրիգորին ականջ դնելով հրանոթների որոտմունքին, անհանգստությամբ նայում էր ժամացույցին, որ հանված էր Ռումինիայում սպանված գերմանական մի սպայի ձեռքից. նա վախենում էր, որ կուշանա։ Կողմնացույցով ստուգում էր ուղղությունը, և այնուամենայնիվ մի քիչ ավելի ծռվեց դեպի ձախ, քան հարկավոր էր։ Ձորակի մի լայն ճյուղով դուրս եկան բաց դաշտը։ Ձիերից քրտինքի գոլորշի էր բարձրանում, նրանց աճուկները թրջվել էին։ Ձիերից իջնելու հրաման տալով, Գրիգորին առաջինը վազեվազ բարձրացավ մի բլրակ։ Ձիերը մնացին ձորակում, ձիապահների հետ։ Կազակները մի քիչ թեք լանջով գնացին Գրիգորիի հետևից։ Նա ետ նայեց, իր հետևում տեսավ ձիերից իջած ձորակի ձյունապատ լանջի վրա ցրիվ շարժվող ավելի քան հարյուր մարտիկներին, ու իրեն ավելի վստահ, ավելի ուժեղ զգաց։ Նրան, ինչպես և ամեն մեկին, մարտում միշտ էլ սաստիկ համակում էր յուրայինների հետ լինելու զգացմունքը։ Արագորեն որոշելով իրադրությունը, Գրիգորին հասկացավ, որ առնվազն մի կես ժամ ուշացել էր,— հաշվի չէր առել ճանապարհի դժվարությունը։

Գոլուբովը ստրատեգիական համարձակ մանևրով համարյա կտրեց չերնեցովյանների նահանջի ճանապարհը, կողքերից առաջակալներ կարգեց և ճակատային գրոհով գնում էր կիսով չափ օղակված հակառակորդի վրա։ Որոտում էին մարտկոցային համազարկերը։ Ճայթում էին հրացանների կրակոցները, կարծես արճճե մանր գնդիկներ էին զարկվում երկաթե անոթին. շրապնելը թափվում էր չերնեցովյանների ջախջախվող շղթաների վրա, խիտ ընկնում ու պայթում էին արկերը։

— Շղթա՛ կազմել...

Գրիգորին իր հարյուրյակով հարձակվեց թևից։ Ասես վարժական հրաձգություն էին կատարում,— առաջ էին նետվում առանց պառկելու, բայց մի ինչ-որ ճարպիկ չերնեցովական, որ աշխատում էր «մաքսիմկա» գնդացրի վրա, այնպես վարպետորեն գնդակոծեց շղթան, որ կազակները իսկույն պառկեցին՝ շարքից կորցնելով երեք մարդ։

Կեսօրվա ժամը երեքին գնդակը խփեց Գրիգորիին։ Արճճի շիկացած գնդիկը, նիկելե պատյան հագած, ծակեց նրա ոտի մսե հյուսվածքը, ծնկից վերև։ Զգալով տաք հարվածը և արյան նողկալի, ծանոթ կորուստը, Գրիգորին կրճատացրեց ատամները։ Շղթայից դուրս սողաց, ցասկոտ վեր թռավ տեղից, խիստ թափահարեց գնդակի կոնտուզիայից վնասված

գլուխը։ Ոտի ցավը ուժեղանում էր նաև այն պատճառով, որ գնդակը դուրս չէր եկել։ Խփելով Գրիգորիին, ծակելով շինելը, շալվարը և մաշկը, մնացել էր մկանների մեջ սառելու։ Այրող, սուր ցավը խանգարում էր շարժվելուն։ Պառկած մնալով, Գրիգորին հիշեց 12-րդ գնդի հարձակումը Տրանսիլվանիայի լեռներում, Ռումինիայում, երբ վիրավորվեց ձեռքից։ Նրա աչքերի առաջ պարզ պատկերացավ այն գրոհի տեսարանը. Զուբատին, Միշկա Կոշևոյի զայրացած դեմքը, Եմելյան Գրոշևը, որ աճապարում էր սարն ի վար՝ տանելով վիրավորված հարյուրապետին։

Հարյուրյակների հրամանատարությունն ընդունեց սպա Պավել Լյուբիշկինը, Գրիգորիի օգնականը։ Նրա հրամանով երկու կազակ Գրիգորիին տարան ձիապահների մոտ։ Վերջինիս ձի նստեցնելով, կազակները կարեկցաբար խորհուրդ տվին.

— Կապեցնք վերքը։

— Բինտ կա՞։

Գրիգորին արդեն նստել էր թամքին, բայց, մտածելով, իջավ ձիուց, ցած գցեց շալվարը, ու քրտնած մեջքի, փորի ու ոտների սարսուռից դեմքը կնճռոտելով՝ հապճեպ կապեց դաղված, արյունահոս, փոքրիկ վերքը, որ ասես փոքրիկ դանակի հարվածից էր առաջացել։

Իր հանձնատարի ուղեկցությամբ, նույն շուրջանակի ճանապարհով նա ճանապարհվեց դեպի այն վայրը, որտեղից սկսել էին հակահարձակումը։ Դիտեց ձիերի խոր հետքերը ձյան մեջ, ծանոթ ուրվագծերն այն ձորակի, որով մի քանի ժամ առաջ տարել էր իր հարյուրյակները։ Նրա քունը տանում էր, ու արդեն չգիտես ինչու հեռավոր և ավելորդ էր թվում այն, ինչ որ տեղի էր ունենում բլուրի վրա։

Իսկ այնտեղ ձյան փոշու բազմաքանակ, ցաք ու ցրիվ քուլաներ էին բարձրացնում հրացանային կրակոցները, որոտում էր հակառակորդի ծանր մարտկոցը՝ փրկելով յուրայիններին, երբեմն էլ ճարճատող գնդացիրները կետաշար էին թակչում, ասես անտեսանելի գիծ էին քաշում մարտի հանգամանքների տակ։

Գրիգորին երեք վերստ գնում էր ձորակով։ Ձիերը թաղվում էին ձյան մեջ։

— Քշիր դեպի բաց դաշտը...— փնթփնթալով ասաց նա հանձնատարին՝ դուրս գալով ձորակի ձյունապատ ափը։

Հեռվում, դաշտում, ինչպես գետնին նստած ագռավներ, տեղ-տեղ սևին էին տալիս սպանվածների դիակները։ Հորիզոնի հենց ծայրում առանց ձիավորի մի նժույգ էր թռչում, որը այստեղից շատ փոքրիկ էր թվում։

Գրիգորին տեսավ, թե ինչպես չերնեցովյանների հիմնական զորախումբը, ջարդված ու նոսրացած, կռվից դուրս գալով ու ետ դառնալով, նահանջում է դեպի Գոլուբոկայա։ Նա իր շիկակարմրավուն ձին քշեց քառատրոփով։ Հեռվում երևում էին կազակների առանձին խմբերը։ Մոտենալով դրանցից մեկին, Գրիգորին տեսավ Գոլուբովին։ Գոլուբովը իրանը ետ գցած, նստել էր ձիու վրա։ Դեղնած, կարակուլե բոլորքով կիսամուշտակի կոճակներն արձակված էին, փափախը ծռված էր, ճակատը քրտնակալած։ Ոլորելով իր վախմիստրական, ծայրերը վերև ցցված բեղերը, Գոլուբովը խռպոտ ձայնով գոչեց.

— Մե՛լեխով, կեցցես։ Այդ ի՞նչ է, վիրավորվե՞լ ես։ Սատանան տանի։ Ոսկորը չի՞ վնասվել։— Ու պատասխանի չսպասելով, թունդ ժպտաց։— Գլխովին, գլխովին ջարդեցինք... Սպայական ջոկատն այնպես ցրիվ տվինք, որ էլ չհավաքվի։ Կտրեցինք նրանց պոչը։

Գրիգորին ծխախոտ խնդրեց։ Ամբողջ դաշտից հավաքվում էին կազակները։ Հեռվում սևին տվող բազմության միջից ձին արագ քշելով, գալիս էր մի կազակ։

— Քառասուն գերի ենք վերցրել, Գոլուբով...— հեռվից բղավեց նա,— քառասուն սպա և հենց Չերնեցովին։

— Սուտ չե՞ս ասում։— Գոլուբովը վախեցած վեր-վեր թռավ թամքի վրա ու սլացավ՝ անխնա մտրակելով բարձր, սպիտակ ոտներով ձին։

Գրիգորին մի քիչ սպասելուց հետո ձին քշեց նրա հետևից։

Գերի բռնված սպաների հոծ բազմությանը, բոլոր կողմերից շրջապատած, ուղեկցում էին երեսուն կազակներ, որոնք 44-րդ գնդից և 27-րդ գնդի մի հարյուրյակից էին։ Գերիների առջևից գալիս էր Չերնեցովը։ Հետապնդումից փախչելիս նա դեն էր գցել կիսամուշտակը և այժմ գալիս էր

միայն թեթև, կաշվե կուրտկայով։ Նրա ձախ ուսադիրը պոկված էր։ Երեսին, ձախ աչքի մոտ արյունոտ քերծվածք էր երևում։ Նա գալիս էր արագ, համաչափ քայլերով։ Փափախը ծռել էր, և դա անհոգության ու կտրիճության տեսք էր տալիս նրան։ Վախի նշույլ անգամ չկար նրա կարմրած դեմքին. երևում էր, որ մի քանի օր չէր սափրվել. այտերն ու կզակը ծածկված էին շեկ, ոսկեվուն մորուքով։ Չերնեցովը մռայլ և արագ հայացքներ էր նետում դեպի իրեն վազող կազակների վրա. հոնքերի արանքում դառն, ատելություն արտահայտող կնճիռ էր ստվերվում։ Քայլելիս նա վառեց լուցկին, ծխեց, սիգարետը սեղմեց վարդագույն, պիրկ շրթունքների անկյունով։

Սպաները մեծ մասամբ երիտասարդներ էին, միայն մի քանիսի մազերը սպիտակին էին տալիս եղյամի նման։ Մեկը, որ վիրավորվել էր ոտքից, ետ էր մնում, հետևից հրացանի կոթով նրան հրում էր կարճահասակ, մեծագլուխ ու չեչոտ մի կազակ։ Համարյա Չերնեցովի կողքից քայլում էր բարձրահասակ, կորովի մի յասավուլ։ Երկուսը (մեկը՝ խորունժի, մյուսը՝ հարյուրապետ) գալիս էին թևանցուկ արած, ժպտալով. սրանց հետևից՝ առանց գլխարկի, գանգրահեր ու թիկնեղ մի յունկեր։ Մեկը վրան գցել էր զինվորի շինել՝ եզրերը կարով կպցրած ուսադիրներով։ Մեկն էլ նույնպես առանց գլխարկի էր, սպայական կարմիր բաշլուղը քաշել էր սև, կանացիորեն գեղեցիկ աչքերին. քամին բաշլուղի ծայրերը գցում էր նրա ուսերին։

Գոլուբովը ձիով գալիս էր նրանց հետևից։ Մի քիչ ետ մնալով, նա բղավեց կազակների վրա։

— Լսեցե՛ք... Գերիների ողջամտացության համար դուք պատասխանատու եք ռազմա-ռևոլյուցիոն ժամանակվա ամենայն խստությամբ։ Անվնաս կհասցնեք շտաբ։

Նա կանչեց հեծյալ կազակներից մեկին, թամքին նստած, մի երկտող գրեց, ծալեց ու տվեց կազակին։

— Թռի՛ր։ Սա տուր Պոդտյոլկովին։

Դիմելով Գրիգորիին, հարցրեց.

— Դու կգնա՞ս այնտեղ, Մելեխով։

Դրական պատասխան ստանալով, Գոլուբովը ձին քշեց Գրիգորիի կողքից, ասաց.

— Հայտնիր Պոդտյոլկովին, որ ես Չերնեցովին վերցնում եմ երաշխավորությամբ։ Հասկացա՞ր... Դեհ, այդպես էլ ասա։ Գնա։

Գրիգորին գերիների խմբից առաջ անցնելով, հասավ Ռևկոմի շտաբը, որ գտնվում էր դաշտում, ինչ-որ խուտորի մերձակայքում։ Ուկրաինական մի լայն սայլի կողքին, որի անիվները սառցակալել էին և որի վրա կանաչ պատյանով մի գնդացիր էր դրված, ետ ու առաջ էր քայլում Պոդտյոլկովը։ Հենց այնտեղ էլ, կրունկներն իրար խփելով, թրևում էին շտաբի աշխատողները, բանբերները, մի քանի սպա և հանձնատար կազակները։ Մինաևը, ինչպես և Պոդտյոլկովը, կովի տեղից նոր էր վերադարձել։ Սայլին նստած, նա մշմշալով կծոտում էր սպիտակ, սառած հացը, ծամում կռճկռճացնելով։

— Պոդտյոլկով,— Գրիգորին մի կողմ անցավ,— հիմի կբերեն գերիներին։ Կարդացի՞ր Գոլուբովի գրությունը։

Պոդտյոլկովն ուժով թափահարեց մտրակը. գլուխը կախելով ու աչքերն արյունով լցված՝ բղավեց.

— Թքել եմ Գոլուբովի վրա... Շատ էլ շատ բան է ուզում նա։ Արի ու երաշխավորությամբ տուր նրան Չերնեցովին, այդ ավազակին ու կոնտրռևոլյուցիոներին... Չե՛մ տա... Պետք է դրանց բոլորին գնդակահարել և ուրիշ ոչինչ։

— Գոլուբովն ասաց, որ նրան երաշխավորությամբ է վերցնում։

— Չեմ տա... Ասացի, որ չեմ տա, պրծավ-գնաց։ Նրան պետք է դատել ռևոլյուցիոն դատով և խսկույն պատժել, որ ուրիշներին էլ խրատ լինի... Գիտե՞ս,— արդեն հանգիստ ասաց Պոդտյոլկովը՝ ակնապիշ նայելով գերիների մոտեցող խմբին,— գիտե՞ս թե նա որքան արյուն է խմել,— ծո՛վ արյուն... Քանի՞-քանի հանքափոր բանվորի գլուխ է կտրել...— ու դարձյալ, կատաղությամբ լեցուն, մոլեգնաբար շռեց աչքերը.— Չե՛մ տա։

— Այստեղ բղավելու կարիք չկա,— Գրիգորին էլ բարձրացրեց ձայնը. նա դողում էր ամբողջ մարմնով։ Պոդտյոլկովի կատաղությունն ասես նրան է՛լ էր տիրել։— Այստեղ ո՛վ ասես, որ դատավոր չի։ Հապա՛, մի այնտեղ գնայիր,— Գրիգորին պնչերը դողացնելով, ցույց տվեց մարտի դաշտը։—

Իմ գերիների գլխին կարգադրություն անողներդ շատ-շատ եք։

Պոդտյոլկովը ետ քաշվեց՝ ձեռքում սեղմելով մտրակը։ Հեռվից գոռաց.

— Ես այնտեղ եղել եմ, չկարծես թե սայլ եմ նստել ու ճղել։ Իսկ դու, Մելեխով, լոիր, խելքդ գլուխդ հավաքիր... Հասկացա՞ր... Դու ո՞ւմ հետ ես խոսում... այդպե՛ս... Սպայական սովորություններդ թո՛ղ։ Ռևկոմն է դատում և ոչ թե ամեն տեսակ...

Գրիգորին ձին քշեց նրա վրա, ու մոռանալով վերքը, թռավ գետին, սուր ցավից ընկավ մեջքի վրա։ Կսկծող վերքից հոսեց արյունը։ Առանց կողմնակի օգնության նա վեր կացավ, մի կերպ հասավ սայլին, կողքով հենվեց հետին զսպանակին։

Գերիները մոտեցան։ Հետիոտն ուղեկցորդների մի մասը խառնվեց հանձնատարներին և շտաբը պահպանող կազակներին։ Կազակները դեռ կռվի ազդեցության տակ էին, լարվածությունից ու ցասումից փայլում էին նրանց աչքերը, նրանք դիտողություններ էին փոխանակում կռվի մանրամասնությունների ու վախճանի մասին։

Պոդտյոլկովը ծանր քայլելով փլվող ձյան վրա, մոտեցավ գերիներին։ Դրանց բոլորի առջև կանգնած Չերնեցովը նայեց նրան՝ փայլուն, հանդուգն աչքերը արհամարհանքով կկոցած. ձախ ոտը ազատորեն ետ դրած և ճոճելով այն, վերին ատամների սպիտակ պայտիկը սեղմել էր դեպի ներս տարած կարմիր շրթունքին։ Պոդտյոլկովը դեմառդեմ մոտեցավ նրան։ Նա ամբողջովին դողում էր, նրա չթարթող աչքերը սևեռված էին փորփրված ձյան վրա, ու բարձրանալով՝ հանդիպեցին Չերնեցովի անվախ, արհամարհական հայացքին, և այն բեկեցին ատելության ծանրությամբ։

— Բռնվեցի՛ր... իժ,— զայրագին, ցածր ձայնով ասաց Պոդտյոլկովը և մի քայլ ետ քաշվեց. ծուռ, սև ժպիտը սրի հարվածի նման շերտատեց նրա այտերը։

— Կազակությա՛ն դավաճան,— սրիկա, մատնիչ,— ատամները կրճտացնելով՝ հնչեղ ասաց Չերնեցովը։

Պոդտյոլկովը տմբտմբացրեց գլուխը՝ ասես ապտակներից

խուսափելու համար. նա մթնեցրեց դեմքը, բաց բերանով հևիհև կլանում էր օդը։

Այնուհետև ամեն ինչ կատարվեց ապշեցուցիչ արագությամբ։ Ատամները բացած, գունատ Չերնեցովը բռունցքները կրծքին սեղմելով, ամբողջովին դեպի առաջ թեքված, հարձակվեց Պոդտյոլկովի վրա։ Ջղաձգությունից սեղմվող նրա շրթունքներից անհասկանալի բառեր էին թռչում՝ մայր հայհոյելու բառերի հետ խառնված։ Նրա ասածը լսում էր միայն դանդաղորեն ետ-ետ գնացող Պոդտյոլկովը։

— Մնում է քեզ... գիտե՞ս թե չէ,— Չերնեցովը խիստ բարձրացրեց ձայնը։

Այդ բառերը լսեցին թե՛ գերի սպաները, թե՛ նրանց ուղեկցողները և թե շտաբի աշխատողները։

— Հա՛-ա-ա՞-ա...— խեղդվողի նման խռպոտ մռնչաց Պոդտյոլկովը ձեռքը տանելով թրի կոթին։

Միանգամից լռություն տիրեց։ Պարզ լսվեց ձյան ղըռղըռոցը, երբ Մինաևը, Կրիվոշլիկովը ու էլի մի քանի մարդ նետվեցին դեպի Պոդտյոլկովը։ Բայց վերջինս կանխեց նրանց. ամբողջ մարմնով շուռ գալով դեպի աջ, պպզելով, պատյանից դուրս քաշեց թուրը, առաջ նետվեց և սարսափելի ուժով խփեց Չերնեցովի գլխին։

Գրիգորին տեսավ, թե ինչպես Չերնեցովը ցնցվեց, ձախ ձեռքը բարձրացրեց գլխի վրա, կարողացավ պաշտպանվել հարվածից. տեսավ, թե ինչպես ջարդվեց Չերնեցովի թրատված դաստակը և թուրը անձայն խփվեց նրա ետ տարած գլխին։ Սկզբում գլորվեց փափախը, հետո էլ ցողունը կոտրված հասկի նման դանդաղ ընկավ Չերնեցովը՝ տարօրինակ կերպով ծռմռված բերանով ու տանջանքից կկոցված, ասես կայծակից կնճռոտված աչքերով։

Պոդտյոլկովը մի անգամ էլ թրով խփեց արդեն ընկած Չերնեցովին, դանդաղ, ծանր քայլերով ետ քաշվեց, միաժամանակ սրբելով թրի արյունոտված, թեք փորակները։

Հենվելով սայլին, նա դարձավ դեպի ուղեկցողները, շնչահեղձ, խռպոտ ձայնով գոռաց.

— Թրատե՛լ դրանց... Բոլորին... Ես դրանց... Գերիներ չկան... Կտոր-կտոր անել...

Տենդորեն ճայթել սկսեցին կրակոցները։ Սպաներն իրար

դիպչելով, դես ու դեն նետվեցին։ Կանացի գեղեցիկ աչքերով ու սպայական կարմիր բաշլուղով պորուչիկը փախավ՝ ձեռները գլխին դրած։ Գնդակը նրան ստիպեց բարձր ցատկում կատարել,— ասես արգելապատի վրայից։ Պորուչիկն ընկավ ու էլ ոտքի չելավ։ Երկուսը թրատեցին կորովի տեսք ունեցող, բարձրահասակ յասավուլին։ Նա բռնում էր թրերի սայրերից, նրա կտրատված ձեռներից արյունը թափվում էր թևքերի վրա. նա ճչում էր երեխայի նման, ընկնում ծնկների, մեջքի վրա, գլուխը թավալում ձյան մեջ. երեսին երևում էին միայն արյունով ողողված աչքերը ու սև բերանը, որտեղից թռչում էր անընդմեջ ճիչը։ Թրերը կտրատում էին նրա դեմքը, սև բերանը, իսկ նա դեռ էլի ճչում էր սարսափից ու ցավից բարակած ձայնով։ Գոտին պոկված շինելով մի կազակ ոտները նրա երկու կողմից դնելով, կրակեց ու սպանեց նրան։ Գանգրահեր յունկերը քիչ մնաց ճեղքեր ուղեկցողների շղթան և փախչեր. ինչ-որ մի ատամանցի վրա հասավ և խփեց ծոծրակին ու սպանեց։ Այդ նույն ատամանցին գընդակով խփեց հարյուրապետի թիակների արանքին. վերջինը փախչում էր քամուց ծածանվող շինելով։ Հարյուրապետը պպզեց ու մատներով այնքան քրքրեց կուրծքը, մինչև որ մեռավ։ Ալեխաոն փոխ-յասավուլին սպանեցին հենց կանգնած տեղում. հրաժեշտ տալով կյանքին, նա ձյան մեջ ոտներով խորունկ փոս փորեց, ու կապած ձիու նման էլի ոտները կխփեր գետնին, եթե կազակները չխոցեին ու չսպանեին նրան։

Գրիգորին առաջին պահին, հենց որ սկսվեց կոտորածը, պոկվեց սայլից, ու պղտորված աչքերից չփախցնելով Պոդտյոլկովին, կաղալով, արագ քայլեց նրա կողմը։ Հետևից նրան բռնեց Մինաևը, կոտրեց, ոլորեց նրա թևերն ու խլեց նագանը. մթնած աչքերը հառելով նրա աչքերին, հևալով հարցրեց.

— Բա դու ի՞նչ էիր կարծում։

XIII

Կուրացուցիչ-պայծառ, ձյունապատ բլրալանջը, արեգակի շնաբակով ու անամպ օրվա լուրթ երանգով ողողված,

-ապիտակին էր տալիս, շաքարաշող կայծկլտում։ Նրա տակին գույնզգույն լաթերից կարված վերմակի նման փռվել էր Օյլոխովի Ռոգ ավանը։ Ձախ կողմում կապույտին էր տալիս Ցվինյուխան, աջ կողմում միգամած բծերի նման փռվել էին փոքրիկ խուտորներն ու գերմանական գաղութները, հեռվում կապտել էր Տերնովսկայան։ Արևելքում, ավանից դենը պպզել ու դեպի վերև էր սողում հեղեղատներով կտրատված, տափարակ ու փոքրիկ մի բլրակ։ Դրա վրա շարեշար ցցվել էին դեպի Կաշար ձգված հեռագրասյուները։

Օրը հազվադեպ պայծառ էր և ցուրտ։ Արևի շուրջը ծիածանանման շերտեր էին մշուշվել։ Քամին սուրում էր հյուսիսից։ Տափաստանում թափառում էր բուքը։ Բայց ձյունապատ, լայնարձակ տարածությունները պայծառ էին հորիզոնից հորիզոն, միայն արևելքում, հորիզոնի բուն իսկ սայրի տակ տափաստանը սքողված էր բաց-մանուշակագույն մուժով։

Պանտելեյ Պրակոֆևիչը, որ Միլլերովոյից տանում էր Գրիգորիին, որոշեց կանգ չառնել Օյլոխովի Ռոգում, այլ հասնել Կաշարի և այնտեղ գիշերել։ Նա տանից մեկնել էր Գրիգորիի հեռագրով, հունվարի 28-ի երեկոյան ժամանել էր Միլլերովո։ Գրիգորին նրան սպասում էր իջևանում։ Առավոտյան նրանք մեկնեցին և ժամը մոտ տասնմեկին արդեն անցան Օյլոխովի Ռոգից։

Գլուբոկայայի մոտ մարտում վիրավորվելուց հետո Գրիգորին մի շաբաթ պառկեց Միլլերովոյում, շրջիկ լազարեթում. մի քիչ բուժելով ոտը, որոշեց տուն մեկնել։ Իրենց ստանիցայի կազակները նրա համար ձի բերին։ Գրիգորին գնում էր դժգոհության և ուրախության խառն զգացումով. դժգոհ էր, որովհետև իր զորամասը թողնում էր Դոնում իշխանության համար մղվող պայքարի հենց եռուն շրջանում. ուրախ էր հենց միայն այն մտքից, որ կտեսնի հարազատներին, խուտորը. ինքն իրենից թաքցնում էր Ակսինյային տեսնելու ցանկությունը, բայց նրա մասին է՛լ էր մտածում։

Հայրը և նա հանդիպելիս մի տեսակ օտար թվացին միմյանց։ Պանտելեյ Պրակոֆևիչը (Պետրոն ինչ-որ փսփսացել էր նրա ականջին) մռայլ աչքերով էր նայում Գրիգորիին, նրա կարճ, լորձնոտ հայացքներում դժգոհություն, սպասողական տագնապ էր արտահայտվում։ Կայարանում երեկոյան

Նա Գրիգորիին երկար հարցուփորձ էր անում մարզում բոցավառված իրադարձությունների մասին, որդու պատասխաններն ըստ երևույթին նրան չէին բավարարում։ Նա կծոտում էր ճերմակած մորուքը, նայում իր թաղիքե, կաշվե տակերով ոտնամաններին, քիթը վեր էր քաշում։ Վեճի բռնվեց դժկամորեն, բայց, պաշտպանելով Կալեդինին, տաքացավ, առաջվա պես բղավեց Գրիգորիի վրա և նույնսկ կաղ ոտը խփեց հատակին։

— Գլուխս մի՛ տանի, է՛։ Աշնանը Կալեդինը եղավ մեր խուտորում։ Հավաքվեցինք ժողովատեղում, նա ելավ սեղանի վրա, խոսեց մեծամեծների հետ և ոնց որ թե աստվածաշնչից խոսեր,— ասավ, որ կգան մուժիկները, կռիվ կլինի, ու եթե որ մենք դես-դեն թրև գանք, ամեն բան կվերցնեն ու կսկսեն բնակություն հաստատել մեր մարզում։ Նա դեռ այն ժամանակ գիտեր, որ կռիվ կլինի։ Բա դուք ի՞նչ եք մտածում, շան տղերք, հը՞։ Թե՞ նա ձեզանից քիչ բան գիտի։ Ուսումով գեներալ է, բանակ է կառավարել, ու քեզանից քի՞չ բան գիտի, հը՞։ Կամենկում էլ հենց քեզ պես դատարկ-մատարկ խոսողներ, անուսում մարդիկ են նստել, ու խառնակում են ժողովրդին։ Քո այդ Պոդտյոլկովն ո՞վ է որ. վախմիստր է, չէ՞... Օ-օ՜, իմ աստիճանի մարդ։ Ա՛յ քեզ բա-ա՛ն... տես թե ինչ օրի հասանք... Դրանից հեռու գնալ չի կարելի։

Գրիգորին ակամա էր վիճում հոր հետ։ Դեռ նրան չտեսած, գիտեր, թե նա ինչ խելքի տեր է։ Իսկ այստեղ մի նոր բան մեջտեղ ընկավ. Գրիգորին ոչ կարող էր ներել, ոչ էլ մոռանալ Ջերնեցովի սպանությունը և գերի սպաներին առանց դատի գնդակահարելը։

Միակ առեղին լծված ձիերը հեշտությամբ էին քաշում փոքրիկ սահնակը։ Գրիգորիի թամբած ձին վազում էր հետևից, երկար սանձով սահնակին կապված։ Ճանապարհին երևում էին մանկությունից ծանոթ ավաններն ու խուտորները,— Կաշարի, Պապովկա, Կամենկա, Նիժնե-Յաբլոնովսկի, Գրաչև, Յասենովկա։ Մինչև իրենց խուտորը հասնելը Գրիգորին ամբողջ ճանապարհին մի տեսակ անկապ ու անհեթեթ կերպով մտածում էր վերջին իրադարձությունների մասին, փորձում էր գեթ հարևանցիորեն նշել ապագան, բայց միտքը հասնում էր մինչև տանը սպասվելիք հանգիստը ու այնու-

հետև փակուղու էր դեմ առնում։ «Տուն կհասնեմ, մի քիչ կհանգստանամ, կբուժեմ վերքս, իսկ հետո...— մտածում էր նա ու մտքում ձեռք քաշում ամեն ինչից.— հետո տեսնենք ինչ կլինի։ Գործն ինքը ցույց կտա...»

Նրան նեղում էր նաև պատերազմից առաջացած հոգնածությունը։ Նա ուզում էր երես դարձնել ատելությամբ բռնկված, թշնամի ու անհասկանալի ամբողջ աշխարհից։ Այնտեղ, հետևում ամեն ինչ խճողված էր, հակասական։ Դժվարությամբ էր ուրվագծվում ճիշտ ճանապարհը. ինչպես բարակ ցախե կամուրջ, նրա ոտների տակ երերվում էր հողը, ճանապարհը ճյուղավորվում էր, և նա վստահ չէր, թե արդյո՞ք այն ճյուղով պիտի գնա, որով գնում է։ Նա գրավվում էր բոլշևիկներով — գնում էր այդ ճամփով, ուրիշներին էլ տանում իր հետևից, հետո էլ մտածմունքների մեջ էր ընկնում, սիրտը սառչում էր։ «Մի՞թե իրավացի է Իզվարինը։ Բա ո՞ւմ կողմը բռնել»։ Այդ մասին էր տարտամորեն մտածում Գրիգորին՝ թիկնելով սահնակի մեջքին։ Բայց երբ պատկերացնում էր, թե ինչպես գարնան համար կպատրաստի ցանքարանները, սայլերը, կարմիր ուռից մսուր կգործի, իսկ երբ մերկանա ու չորանա հողը, կգնա վար անելու, և աշխատանքին կարոտած ձեռներով մաճը բռնած, կքայլի գութանի հետևից՝ զգալով դրա կենդանի տրոփյունը և ցնցումները, ու երբ պատկերացնում էր, թե ինչպես է կլանելու մատղաշ կանաչի ու ձյան խոնավության զմայլական բույրը դեռ չկորցրած, խոփերով շուռ տված սևահողի քաղցր շունչը,— հոգին ցնծությամբ էր լցվում։ Ուզում էր խնամել անասուններին, խոտ դիզել, շընչել թառամած իշառվույտի, սեզի բույրը, գոմաղբի բարկ հոտը։ Խաղաղություն և անդորրություն էր ուզում Գրիգորին. հենց դրա համար էլ ամոթխած բերկրանք էր թաքցնում մռայլ աչքերում՝ նայելով շուրջը,— ձիերին, հոր պինդ մեջքին, որի վրա քիպ նստել էր քուրքը։ Ամեն ինչ՝ թե քուրքի ոչխարենու հոտը, թե չմաքրված ձիերի տնավարի տեսքը, թե ավանում, հավանոցից կանչող մի որևէ աքաղաղ,— նրան հիշեցնում էր կիսամոռացված նախկին կյանքը։ Այստեղ, խուլ վայրերում այդ ժամանակ կյանքը նրան քաղցր ու արբեցուցիչ էր թվում ինչպես գայլուկի ոգելից խմիչքը։

Մյուս օրվա իրիկնադեմին մոտեցան խուտորին։ Գրիգո-

րին բլրակից նայեց Դոնին. հրե՞ն Կնկա ճահճուտները՝ եղեգնի սամույր մուշտակով պատած. հրե՞ն չոր բարդին, իսկ գետանցը արդեն առաջվա տեղում չէ։ Խուտորը, թաղերի ծանոթ քառակուսիները, եկեղեցին, հրապարակը... Գրիգորիի արյունը խփեց գլխին, երբ տեսավ իրենց տունը։ Հուշերը պաշարեցին նրան։ Ջրհորի բարձրացրած կռունկը ուռենու փայտից շինված ձեռքը դեպի վեր ցցած, ասես կանչում էր նրան։

— Հը՛, աչքերդ հո չե՞ն թրջվում,— ետ նայելով ժպտաց Պանտելեյ Պրակոֆևիչը, ու Գրիգորին առանց խորամանկելու և կեղծելու ասաց.

— Թրջվում են... այն էլ ինչպե՞ս...

— Այ թե ինչ է նշանակում հայրենիք,— գոհունակությամբ հոգոց հանեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Նա սահնակը քշեց խուտորի մեջտեղը։ Ձիերը աշխույժ վազում էին բլուրն ի վար, սահնակը թափ առած՝ ներքև էր սլանում։ Գրիգորին կռահեց հոր միտքը, բայց և այնպես, հարցրեց.

— Էլ ինչո՞ւ ես քշում խուտորի մեջտեղը։ Գնա մեր փողոցը, էլի՛։

Պանտելեյ Պրակոֆևիչը շուռ գալով ու ժպտալով եղյամակալած մորուքի տակին, աչքով արեց.

— Տղաներիս կովի էի ճամփել իբրև շարքային կազակներ, իսկ հիմի սպաներ են դարձել։ Բա ո՞նց, տղայիս չտանե՞մ խուտորի միջով, որ հպարտանամ։ Թող մտիկ անեն ու նախանձեն։ Ի՞նչ ասեմ, աղբերս, սիրտս ուրախությունից պար է գալի։

Գլխավոր փողոցում նա զուսպ ձայնով բղավեց ձիերի վրա. կողքի թեքվելով խաղացրեց ծոպավոր մտրակը, ու ձիերը տան մոտիկությունը զգալով (ասես չէին էլ անցել հարյուր քառասուն վերստ ճանապարհը), ավելի աշխույժ, արագ վազեցին։ Հանդիպող կազակները բարևում էին, բակերից ու խրճիթների պատուհաններից, ձեռների տակից նայում էին կնանիքը. հավերը կչկչում, թռվռալով անցնում էին փողոցը։ Ամեն ինչ լավ էր գնում։ Անցան հրապարակը։ Գրիգորիի ձին աչքը ծռեց Մոխովի ցանկապատին կապված մի ինչ-որ ձիու վրա, խրխնջաց ու բարձրացրեց գլուխը։ Երևաց խուտորի

ծայրը, Աստախովի տան կտուրը... Բայց հենց այստեղ էլ, փողոցների առաջին խաչմերուկում, մի ցավալի բան եղավ. փողոցի միջով վազ տվող մի խոճկոր շշկլվեց, ընկավ ձիերի սմբակների տակ, խոխռաց ու դեն գլորվեց ճղմված, ճվճվալով, աշխատելով բարձրացնել ջարդոտված մեջքը։

— Թյո՛ւ, գրողը տանի քեզ...— ցասկոտեց Պանտելեյ Պրակոֆևիչը, կարողացավ մտրակով շրմփացնել ճղմված խոճկորին։

Թարսի պես դա պատկանում էր Անյուտկային, Աֆոնկա Օզերովի այրուն, որը մի շար և չափից դուրս լեզվանի կնիկ էր։ Նա անմիջապես դուրս թռավ բակը, լաչակը գցելով գլխին, այնպիսի յուղալի հայհոյանքներ թափեց, որ Պանտելեյ Պրակոֆևիչը մինչև անգամ կանգնեցրեց ձիերը, ետ դարձավ։

— Ձենդ կտրի, է՛, դմբո։ Ի՞նչ ես բղավում։ Կվճարենք քոսոտ գոճուդ համար։

— Սադայե՛լ... Գրողը բկիցդ բռնի... քոսոտ է՛լ, մի բան էլ ավելի, թոփա՛լ շուն... Ա՛յ, հիմի քեզ քարշ կտամ ատամանի մոտ...— աղաղակում էր կինը, թափահարում ձեռները։— Քո մերը, քո մեռելը, ես քեզ ցույց կտամ, թե ոնց պիտի ոտնատակ անես որբի անասունը...

Պանտելեյ Պրակոֆևիչը ցասկոտեց, կարմրելով բղավեց.

— Լիրբ, անզգամ։

— Անիծված թուրք...— արագ վրա բերեց Օզերովան։

— Շա՛ն քած, շնից ծնված,— Պանտելեյ Պրակոֆևիչը բարձրացրեց հաստ ձայնը։

Բայց ե՞րբ էր եղել, որ Անյուտկա Օզերովան խոսքի տակ մնար։

— Քոփակ, քավթառ բ...ղ, ախմախի մեկը։ Ուրիշի տափանի գող... կնանոնց հետևից ընկնող...— կաչաղակի ճրթվրթոցով վրա տվեց Անյուտկան։

— Ռեխդ փակիր, շուն... թե չէ կդաղեմ մտրակով։

Բայց այստեղ Անյուտկան այնպիսի մի բան ասաց, որ նույնիսկ Պանտելեյ Պրակոֆևիչը, շատ բան տեսած, ընկածելած մարդ,— շփոթմունքից կաս-կարմիր գույն առավ ու նրա քրտինքը իսկույն դուրս տվեց։

— Քշի՛ր սահնակը, է՛... Ի՞նչ ես կպել,— բարկությամբ ասաց Գրիգորին, տեսնելով, որ մարդիկ հետզհետե դուրս են գալիս տներից և ուշադրությամբ ականջ դնում ծերուկ Մելեխովի ու նամուսով այրի կին Օզերովայի կարծիքների պատահական փոխանակության։

— Ամա՛ թե լեզու է, հա՛-ա... երասանի չափ երկար.— Պանտելեյ Պրակոֆիևիչը վրդովված թքեց ու այնպես քշեց ձիերը, որ կարծես ուզում էր հենց Անյուտկային գցել սահնակի տակ։

Մի թաղ անցնելով, նա վախեցած ետ նայեց։

— Ո՞նց է կատաղել-փրփրել... Թյո՛ւ, դարձվորի մեկը... Քիչ էր մնում շաղությունից տրաքվի,— փափագով ասաց նա.— Հարկավոր էր քեզ էլ քո խոզի ձագի հետ ոտնատակ անել։ Արի ու այդ տեսակ լեզվանի անզգամի ձեռքն ընկիր. քեզ սաղ-սաղ կուլ կտա։

Անցան խրճիթի կապույտ փեղկերի կողքից։ Պետրոն առանց գլխարկի, առանց գոտու, միայն վերնաշապիկ հագած, բացեց դարբասը։ Մուտքի սանդուղքից երևացին Դունյաշկայի ճերմակ լաչակը և ծիծաղկոտ դեմքը՝ փայլող, սև աչքերով։

Համբուրելով եղբորը, Պետրոն հարևանցիորեն նայեց նրա աչքերին։

— Ողջ-առո՞ղջ ես։

— Վերք եմ ստացել։

— Որտե՞ղ։

— Գլուբոկայայի մոտ։

— Ախր ի՞նչ գործ ունեիր այնտեղ։ Վաղուց պետք է տուն գայիր։

Նա գուրգուրանքով ու բարեկամաբար թափահարեց Գրիգորիին, ձեռքից-ձեռք հանձնեց Դունյաշկային։ Գրկելով քրոջ պիրկ, հասունացած ուսերը, Գրիգորին համբուրեց նրա շրթունքներն ու աչքերը, ետ ընկավ, զարմանալով ասաց.

— Օ-հո-ո՛, այս ի՞նչ ես դառել, Դունյախա... Ի՞նչ հիանալի աղջի՛կ, իսկ ես կարծում էի, թե տգեղ, անպետք դուրս կգաս։

— Է՛, ի՞նչ ես ասում, աղբերս...— Դունյաշկան խույս տվեց կսմթելուց ու Գրիգորիի նման թունդ ժպտալով, ցույց

տալով սպիտակափայլ ատամները, մի կողմ անցավ։

Իլյինիչնան գրկած բերեց երեխաներին. Նատալյան վազելով կանխեց նրան։ Նա զարմանալիորեն փարթամացել էր ու գեղեցկացել։ Կոկիկ սանրված, սև ու փայլուն մազերը, ճոխ հանգույցով ծոծրակին նստած, ստվերագծել էին ուրախությունից կաս-կարմիր կտրած դեմքը։ Նա փարվեց Գրիգորիին, մի քանի անգամ արագորեն ու անպատեհաբար շուրթերը հպեց նրա այտերին, բեղերին, ու Իլյինիչնայի ձեռքից պոկելով որդուն, վերջինիս մեկնեց Գրիգորիին։

— Տե՛ս թե ինչ տղա ունես, է՛,— հպարտ բերկրանքով զրնգաց նրա ձայնը։

— Թող մի մտիկ տամ իմ որդուն, է՛,— Իլյինիչնան հուզվելով ետ մղեց Նատալյային։

Մայրը թեքեց Գրիգորիի գլուխը, համբուրեց նրա ճակատը և կոշտ ձեռքով հարևանցիորեն շոյելով նրա դեմքը, հուզմունքից և ուրախությունից լաց եղավ։

— Բա աղջիկդ, Գրի-իշա-ա... Դեհ, գրկիր, է՛...

Նատալյան շալով փաթաթած փոքրիկ աղջկան նստեցրեց Գրիգորիի մյուս թևին ու վերջինս շփոթվելով, չգիտեր ում նայել.— Նատալյայի՞ն, մո՞ր, թե երեխաներին։ Մոայլ աչքերով, նոթոտ տղան իսկական Մելեխովյան ցեղից էր. սև, մի փոքր ցասկոտ աչքերի նույն երկարավուն ձևը, նույն լայնադիր հոնքերը, աչքերի կապտավուն, ուռուցիկ սպիտակուցները և թուխ մաշկը։ Նա կեղտոտ թաթիկը տանում էր բերանը, ու կողքի ծռված, անմատչելիորեն, համառությամբ նայում էր հորը։ Գրիգորին տեսնում էր դստրիկի միայն փոքրիկ, ուշադիր ու նույնպես սև աչիկները,— երեսը ծածկված էր շալով։

Գրիգորին երկու երեխային գրկած, փորձեց քայլել դեպի արտաքին սանդուղքը, բայց ոտի սուր ցավ զգաց։

— Վերցրու սրանց, Նատաշա...— Գրիգորին քմծիծաղ տվեց բերանի մի կողմով, մեղավորի նման.— Թե չէ ես չեմ կարողանա բարձրանալ սանդուղքով...

Խոհանոցի մեջտեղում, մազերը շտկելով, կանգնել էր Դարյան։ Ժպտալով, նա ազատորեն մոտեցավ Գրիգորիին, գոցեց ծիծաղկոտ աչքերը, խոնավ ու տաք շուրթերը հպեց նրա շուրթերին։

— Թուքունի հոտ է փչում,— և ուրախ խաղացրեց ներկած, ասես տուշով նկարված հոնքերի ազեղները։

— Թող մի անգամ էլ մոտիկ տամ քեզ։ Ինունիդ մեռնեմ, զավակս, որդի՛ս։

Գրիգորին ժպտում էր, քաղցր հուզմունքով էր լցվում նրա սիրտը, երբ նա դեմքը սեղմում էր մոր ուսին։

Պանտելեյ Պրակոֆևիչը բակում արձակեց ձիերը, կաղկաղ պտույտ եկավ սահնակի շուրջը, նրա լայն լաթագոտին և ականջավոր փափախի կարկաջը ալ-կարմրին էին տալիս։ Պետրոն Գրիգորիի ձին արդեն տարավ ախոռ, թամքն էլ տարավ հաշտը ու քայլելիս ինչ-որ բան ասաց Դունյաշկային, որը սահնակից իջեցնում էր նավթով լիքը մի փոքրիկ տակառ։

Գրիգորին հանեց քուրքը և շինելը, կախեց մահճակալի մեջքից, տանրեց մազերը։ Նստելով նստարանին, նա կանչեց որդուն.

— Արի ինձ մոտ, Միշատկա։ Արի, արի, բա չե՞ս ճանաչում ինձ։

Առանց թաթիկը բերանից հանելու, երեխան մոտեցավ կողքով, անհամարձակ կանգ առավ սեղանի մոտ։ Մայրը վառարանի կողմից սիրագորով ու հպարտ նայում էր նրան։ Նա ինչ-որ շշնջաց աղջկա ականջին, իջեցրեց գրկից, կամաքուկ հրեց։

— Դեհ, գնա՛։

Գրիգորին գրկեց երկու երեխային. նստեցնելով ծնկներին հարցրեց.

— Չե՞ք ճանաչում ինձ, պուճուրիկներս։ Դու է՞լ չես ճանաչում հայրիկիդ, Պոլյուշկա։

— Դու հայրիկը չես,— շշնջաց տղան (քրոջ կողքին նա իրեն ավելի համարձակ էր զգում)։

— Բա ո՞վ եմ ես։

— Ուրիշ կազակ ես։

— Ա՛յ քեզ բա՛ն...— Գրիգորին քրքջաց։— Բա քո հայրիկը ո՞րտեղ է։

— Նա ծալայության մեջ է,— գլուխը կախելով, համոզիչ տոնով ասաց աղջիկը (նա ավելի ժիր էր)։

— Այդպես էլ հարկավոր է դրան, բալիկներս։ Թող գիտենա իր տունը։ Թե չէ մի ամբողջ տարի ով գիտի ուր է մանգալի, արի ու ճանաչիր դրան,— շինծու խստությամբ վրա բերեց Իլյինիչնան ու ժպտալով պատասխանեց Գրիգորիի ժպտին։— Քեզնից քո կնիկն էլ շուտով ձեռ կքաշի։ Մենք արդեն ուզում էինք նրա համար փեսացու ճարել։

— Հա՛-ա՞, այդպե՞ս, Նատալյա,— կատակով դիմեց Գրիգորին կնոջը։

Նատալյան կարմրեց ու, հաղթահարելով յուրայինների հանդեպ առաջացած շփոթմունքը, մոտեցավ Գրիգորիին, նստեց կողքին, անսահմանորեն երջանիկ աչքերով երկար, ոտից-գլուխ դիտեց նրան, տաք, կոշտ ձեռքով շոյեց նրա շոր, դարչնագույն ձեռքը։

— Դարյա, սեղան գցիր։

— Բա նա կնիկ չունի՞,— ծիծաղեց Դարյան, ու էլի նույն շորորուն, թեթև քայլվածքով գնաց դեպի վառարանը։

Դարյան առաջվա պես բարակ էր, պճնված։ Բրդե, մանուշակագույն գուլպաները պիրկ պատել էին նրա վտիտ, գեղեցիկ ոտները, քոշերը կանոնավոր, քիպ նստել էին ոտներին. մուգ-կարմիր, ծալ-ծալ շրջազգեստը պիրկ կոճկված էր մեջքին, շուրջը ասեղնագործած գոգնոցը փայլում էր մաքուր սպիտակությամբ։ Գրիգորին հայացքը դարձրեց իր կնոջ վրա. վերջինիս արտաքինի մեջ էլ որոշ փոփոխություն նկատեց։ Նատալյան նրա գալու առիթով լավ էր հագնվել. սատինե կապույտ կոֆտան, որը նեղ, ծայրերը ժանյակավոր թևքերով էր, ծածկել էր նրա բարեկազմ իրանը, ուռել փափլիկ, մեծ կրծքի վրա. ասեղնագործած, ծալավոր փեշերով կապույտ շրջազգեստը ներքևում լայն էր, վերևում քիպ նստել էր մարմնին։ Գրիգորին շեղակի դիտեց նրա չաղ, համաչափ ոտները, գրգռիչ, պիրկ փորը ու չաղացած զամբիկ ձիու գավակի պես լայն կոնքը ու մտածեց. «Կազակուհուն կճանաչես բոլոր կանանց մեջ։ Այնպես են հագնվում, որ ամեն բան աչքի ընկնի. կուզես մտիկ արա, կուզես՝ ոչ։ Իսկ մուժիկ կանայք առջևից էլ, հետևից էլ միատեսակ են, ասես մեշոկ հագած են մանգալի...»

Իլյինիչնան բռնեց նրա հայացքը, դիտավորյալ պարծենկոտությամբ ասաց.

— Այ թե մեզ մոտ օֆիցերների կնանիքը ոնց են ման գալի։ Քաղաքի կնանիքն էլ գլուխները քարովն են տվել։

— Ի՞նչ եք ասում, է՛, մայրիկ,— Դարյան ընդհատեց նրան,— մենք ո՞նց կհասնենք քաղաքի կանանց։ Հրե՛ս, ականջիս օղը կոտրվել է, ու մի գոռոզ էլ չարժի,— վերջացրեց նա տրտունջով։

Գրիգորին ձեռքը դրեց կնոջ լայն, աշխատանքից պնդացած մեջքին, առաջին անգամ մտածեց. «Սիրուն կնիկ է, աչքի խնդում... Բա ո՞նց է ապրել առանց ինձ։ Երևի կազակները աչք էին դնում վրան, ու ինքն էլ, ո՛վ գիտե, աչք է դրել մեկնումեկին։ Բա որ ուրիշների հետ քմսված լինի՞»։ Այս անակընկալ մտքից նրա սիրտը ճմլվեց, հոգու մեջ դառնություն առաջացավ։ Նա զննողաբար նայեց Նատալյայի վարդագեղ, պլպլան և օծանելիքով բուրող դեմքին։ Նատալյան շիկնեց նրա ուշադիր հայացքից, ու հաղթահարելով շփոթմունքը, շշնջաց.

— Ի՞նչ ես այդպես նայում։ Կարոտե՞լ ես, հա՞։

— Դեհ, բա ո՞նց։

Գրիգորին վանեց վատ մտքերը, բայց այդ րոպեին ինչոր թշնամական, անդիտակցական զգացում էր տածում դեպի իր կինը։

Պանտելեյ Պրակոֆևիչը տնքտնքալով ներս մտավ։ Նա խաչակնքեց սրբապատկերների առաջ, ասաց.

— Է՛հ, մի անգամ էլ բարով տեսանք։

— Հազար բարի, ալևորս... հը՛, մրսե՞լ ես։ Քեզ էինք սպասում. շլին տաք է, հենց եռում է,— դես ու դեն ընկավ Իլյինիչնան՝ շրխկացնելով գդալները։

Արձակելով վզի կարմիր աղլուխը, Պանտելեյ Պրակոֆևիչը սկսեց կաշվե տակերով թաղիքե ոտնամանները խփել հատակին, որ տաքացնի ոտները։ Հանեց քուրքը, պոկեց բեղ ու մորուքին կպած սառցալեզվակները, ու նստելով Գրիգորիի կողքին, ասաց.

— Մրսել էի, ամա խուտորում տաքացա... Անյուտկայի գոճին սահնակի տակ գցեցինք...

— Ո՞ր Անյուտկայի,— հետաքրքրությամբ հարցրեց Դարյան ու դանդաղեցրեց մեծ, սպիտակ հացը կտրելը։

— Օզերովայի։ Ո՛նց դուրս թռավ անզգամը, ի՞նչ ասես,

որ չթափեց բերանից։ Է՛լ այսպես, է՛լ այնպես, է՛լ ժուլիկ, է՛լ ցաքանի գող։ Ի՞նչ ցաքան, սատանան գիտե։

Պանտելեյ Պրակոֆևիչը մանրամասն թվեց այն բոլոր մականունները, որ նրան շնորհել էր Անյուտկան. չասաց միայն, որ Անյուտկան երիտասարդական մեղք էր վերագրել նրան՝ անվանելով կանանց հետևից ընկնող։ Գրիգորին քըմծիծաղ տվեց, սեղան նստեց։ Ցանկանալով արդարանալ նրա աչքում, Պանտելեյ Պրակոֆևիչը տաքացած վերջացրեց խոսքը.

— Այնպիսի ախմախ բաներ դուրս տվեց, որ իսկի չես մարսի։ Ուզում էի ետ դառնալ, մտրակով դաղել նրան, ամա Գրիգորին հետս էր, սրա մոտ ոնց որ թե անհարմար էր։

Պետրոն բացեց դուռը, ու Դունյաշկան լաթագոտիով ներս բերեց կարմիր, ճակատը շալտիկ մի հորթ։

— Բարեկենդանին կաթի սերով բիշի ենք ուտելու, հա՛-ա,— ուրախ գոչեց Պետրոն, ոտով բոթեց հորթին։

Ճաշից հետո Գրիգորին բացեց պարկը, նվերներ բաժանեց ընտանիքին։

— Սա քեզ, մայրիկ...— նա մեկնեց մի տաք շալ։

Իլյինիչնան ընդունեց նվերը, հոնքերը կիտեց ու շիկնեց ջահել կնոջ նման։

Շալը գցեց ուսերին, ու այնպես պտույտ եկավ և ուսերը խաղացրեց հայելու առաջ, որ Պանտելեյ Պրակոֆևիչը նույնիսկ զայրացավ.

— Տո՛, քավթառ ագռավ, հենց հայելի՞ն էր քեզ պակաս։ Թյո՛։...

— Սա էլ քեզ, հայրիկ...— Արագ վրա բերեց Գրիգորին, բոլորի աչքի առաջ բաց անելով կազակական մի նոր գլխարկ՝ բարձր կանգնած կարկաջով ու ալ-կարմիր բոլորքով։

— Ապրես դու, որդիս։ Ինձ էլ հենց այս տեսակ գլխարկ էր հարկավոր։ Խանութներում այս տարի չէր ճարվում... Ամառը գլխիս ի՞նչ պետք է դնեի... Հին գլխարկով ամոթ էր եկեղեցի գնալ։ Այդ հին գլխարկը խրտվիլակի գլխին պետք էր դնել, ամա ե՛ս էի գլխիս դնում...— Բարկացկոտ ձայնով ասում էր Պանտելեյ Պրակոֆևիչը, նայում շուրջը, ասես վախենալով, որ մեկնումեկը կմոտենա ու կխլի որդու նվերը։

Ուզում էր գլխարկը ծածկել հայելու առաջ, բայց Իլյինիչնան հայացքով հետևում էր նրան։ Մերոնին հասկացավ նրա

հայացքը, խկուլն շուռ եկավ, կաղ-կաղ մոտեցավ ինքնաեռին։ Հենց դրա առաջ էլ գլխին դրեց ու ծռեց գլխարկը։

— Այդ ի՞նչ ես անում, հը՞, ա՛յ քոփակ,— կշտամբեց Իլյինիչնան։

— Տե՛ր աստված, այդքան էլ անխելք կնի՞կ։ Ախր սա ինքնաեռ է և ոչ թե հայելի։ Բա՞ս։

Գրիգորին կնոջը բրդե յուրկացու նվիրեց. երեխաներին մի ֆունտ մեղրակարկանդակ բաժանեց. Դարյային տվեց ակնազարդ գինդեր, Դունյաշկային՝ մի կոֆտացու, Պետրոյին՝ պապիրոս և մի ֆունտ ծխախոտ։

Մինչդեռ կանայք, դիտելով նվերները, բլբլացնում էին, Պանտելեյ Պրակոֆևիչը, «ագռավ» խաղաթղթի թագավորի տեսք ընդունած, անցավ խոհանոցով և նույնիսկ դուրս ցցեց կուրծքը.

— Ա՛յ թե ով եմ ես,— լեյբ-գվարդիայի կազակական գնդի կաղա՛կ։ Մրցանակներ էի ստանում. կայսերական ստուգատեսի ժամանակ առաջին մրցանակը ստացա. թամք ու լրիվ հանդերձանք։ Այդպե՛ս էի...

Պետրոն կրծոտելով ցորնագույն բեղը, հիացած նայում էր հորը. Գրիգորին ծիծաղում էր։ Ծխեցին, ու Պանտելեյ Պրակոֆևիչը զգուշության համար նայելով պատուհաններին, ասաց.

— Քանի դեռ չեն եկել զանազան ազգականներն ու հարևանները... պատմիր Պետրոյին, թե այնտեղ ինչ է կատարվում։

Գրիգորին ձեռքը թափ տվեց.

— Կռվում են, էլի՛։

— Բոլշևիկները հիմի ո՞րտեղ են,— նստած տեղում ավելի հարմար դիրք ընդունելով՝ հարցրեց Պետրոն։

— Գալիս են երեք կողմից. Տիխորեցկայայից, Տագանրոգից, Վորոնեժից։

— Լավ, բա ձեր Ռևկոմը ի՞նչ է մտածում։ Ինչո՞ւ է նրանց թողնում մեր հողերը։ Խրիստոնյան ու Իվան Ալեքսեևիչը եկան, էլ ի՞նչ ասես, որ դուրս չտվին, բայց ես նրանց չեմ հավատում։ Չէ, այնտեղ բանը ուրիշ տեսակ է...

— Ռևկոմը,— նա անզոր է։ Կազակները փախչում են իրենց տները։

— Ուրեմն դրա համար էլ Սովետների կողմն է բռնում։ Հա՞։

— Իհարկե, դրա համար։

Պետրոն մի փոքր լռեց. նորից վառեց ծխախոտը, շիտակ նայեց եղբորը.

— Բա դու ո՞ւմ կողմն ես բռնել։

— Ես սովետական իշխանության կողմն եմ։

— Հիմա՛ր,— վառոդի պես ֆշտաց Պանտելեյ Պրակոֆևիչը,— Պետրո, գոնե դու խելքի բեր սրան։

Պետրոն ժպտաց, թփթփացրեց Գրիգորիի ուսին։

— Տաքարյուն է սա, ոնց որ թե չհեծած ձի լինի։ Ո՞նց խրատես սրան, ապի։

— Ինձ խրատելու կարիք չկա՛,— տաքացավ Գրիգորին,— ես ինքս հո կույր չե՞մ... Ճակատայիններն այստեղ ի՞նչ են ասում։

— Ախր մենք ի՞նչ գործ ունենք ճակատայինների հետ։ Թե՞ դու այդ սարսաղ Խրիստանին չես ճանաչում։ Նա ի՞նչ կարող է հասկանալ։ Ամբողջ ժողովուրդը մոլորվել է, չգիտի ո՛ր կողմը գնա... փորձանք է, էլի՛։— Պետրոն կծեց բեղը։— Տե՛ս թե ինչ կլինի գարնանը, արի ու գլուխ հանի... Մենք էլ ֆրոնտում բոլշևիկների խաղ խաղացինք, իսկ հիմի ժամանակն է խելքի գալ։ «Մենք ուրիշի ունեցածից ոչինչ չենք ուզում, մերն էլ մի՛ վերցնեք»— ա՛յ թե կազակներն ինչ պիտի ասեն բոլորին, ովքեր լրբությամբ քշում են մեր վրա։ Իսկ Կամենսկայայում, ձեզ մոտ կեղտոտ գործ է կատարվում։ Խնամիացել եք բոլշևիկների հետ, նրանք էլ իրենց կարգերն են հաստատում։

— Դու, Գրիշկա, լա՛վ մտածիր։ Դու խելոք տղա ես. պետք է հասկանաս, որ կազակը ոնց որ կազակ է եղել, այնպես էլ կազակ կմնա։ Հոտած Ռուսիան չպետք է մեզ կառավարի։ Իսկ դու գիտե՞ս, թե հիմի ինչ են ասում ոչ կազակ գյուղացիք,— ամբողջ հողը բաժանել շնչերի վրա։ Այդ ո՞նց կլինի։

— Բնիկ գյուղացիներին, որոնք վաղուց են ապրում Դոնի մարզում, հող կտանք։

— Ջահրումար կտանք, թող գնան անուշ անեն...— Պանտելեյ Պրակոֆևիչը մատներով հայհոյանշան ցույց տվեց.

մեծ, ճանկավոր մատը երկար պտտեց Գրիգորիի սապատավոր քթի շուրջը։

Դրսի սանդուղքի վրա ինչ-որ քայլեր դմբդմբացին։ Ճոճռացին սառնամանիքից ճաքած աստիճանները։ Ներս մտան Անիկուշկան, Խրիստոնյան, Տամիլին Իվանը՝ նապաստակի մորթու չափազանց բարձր փափախով։

— Բարև, զինվոր տղա։ Պանտելեյ Պրակոֆևիչ, բե՛ր մաղարիչը,— ահարկու ձայնով բղավեց Խրիստոնյան։

Նրա բղավոցից վախենալով, մնաց հորթը, որ ննջել էր տաք վառարանի մոտ։ Հորթը սայթաքելով վեր թռավ, կանգնեց դեռ թույլ ոտների վրա, կլոր, ագատե աչքերով նայեց եկածներին, ու երևի վախենալուց էլ բարակ մի շիթ բաց թողեց հատակի վրա։ Դունյաշկան բղավեց նրա վրա, թեթևակի շրմփացրեց մեջքին. սրբելով հեղուկը, բերեց մի կեղտոտ ման ու դրեց հորթի տակ։

— Վախեցրիր հորթին, ա՛յ ճվճվան,— բարկությամբ ասաց Իլյինիչնան։

Գրիգորին սեղմեց կազակների ձեռները, հրավիրեց նստել։ Շուտով խուտորի այդ ծայրից էլի կազակներ եկան։ Խոսակցության ժամանակ այնքան ծխեցին, որ լամպի բոցը սկսեց թրթռալ ու հորթն էլ թունդ հազաց։

— Սադայելը տանի ձեզ, հա՛,— նախատում էր Իլյինիչնան՝ արդեն կեսգիշերին դուրս անելով հյուրերին,— հրե՛ն, գնացեք բակը, այնտեղ էլ փստացրեք ծուխը, թութունակերնե՛ր։ Գնացե՛ք, գնացե՛ք. մեր տղան ճանապարհ գալուց դեռ չի հանգստացել։ Գնացեք, աստված ձեզ հետ։

XIV

Առավոտյան Գրիգորին բոլորից ուշ արթնացավ։ Նրան արթնացրեց կտուրի տակին ու պատուհանների փեղկերի հետևում ճախրող ծտերի ճռվողյունը, որ բարձր էր ինչպես գարնանը։ Փեղկերի խոռոչներից ընկել էին արևի ոսկեհուր ճառագայթները։ Ղողանջում էին պատարագի զանգերը, Գրիգորին հիշեց, որ այդ օրը կիրակի էր։ Նատալյան չկար նրա կողքին, բայց փետուրե դոշակը պահել էր նրա մարմնի ջերմությունը։ Նատալյան, ըստ երևույթին, նոր էր վեր կացել։

— Նատա՛շա,— կանչեց Գրիգորին։

Ներս մտավ Դունյաշկան։

— Ի՞նչ ես ուզում, աղբերս։

— Բաց արա լուսամուտները և կանչիր Նատալյային։ Նա ի՞նչ է անում։

— Մայրիկի հետ կերակուր է եփում։ Հիմի կգա։

Նատալյան ներս մտավ, մթությունից կկոցեց աչքերը։

— Զարթեցի՞ր։

Նրա ձեռներից թարմ խմորի հոտ էր գալիս։ Գրիգորին պառկած տեղում գրկեց նրան, հիշեց այդ գիշերը, ծիծաղեց։

— Լավ քնեցի՞ր։

— Հա՛, էլի։ Մի քիչ ինձ չարչարեց... գիշերը,— Նատալյան ժպտաց, կարմրեց, գլուխը թաղեց Գրիգորիի մազոտ կրծքին։

Գրիգորիին օգնեց վերքը կապելու, սնդուկից հանեց նրա տոնական շալվարը, հարցրեց.

— Կհագնե՞ս համազգեստդ, խաչերն էլ վրեն։

— Է՛հ, չէ՛,— Գրիգորին վախեցած թափ տվեց ձեռքը։

Բայց Նատալյան համառորեն խնդրում էր.

— Հագիր, էլի՛։ Հայրիկը գոհ կլինի։ Բա էլ ինչի՞ համար ես ստացել դրանք, որ սնդուկներո՞ւմ մնան։

Զիջելով նրա թախանձանքներին, Գրիգորին համաձայնվեց։ Նա վեր կացավ, Պետրոյից վերցրեց ածելին, սափրվեց, լվաց երեսն ու վիզը։

— Ծոծրակդ թրաշեցի՞ր,— հարցրեց Պետրոն։

— Թյո՛ւ, մոռացա։

— Նստիր, ես կթրաշեմ։

Պաղ վրձինը սարսռեցրեց Գրիգորիի վիզը։ Հայելու մեջ նա տեսնում էր, թե ինչպես Պետրոն, երեխայի պես լեզվի ծայրը հանած, բանեցնում է ածելին։

— Վիզդ բարակել է ոնց որ եզան վիզը վար անելուց հետո,— ժպտաց Պետրոն։

— Դեհ, պետական ուտելիքից հո չե՞ս հաստանա։

Գրիգորին հագավ համազգեստը՝ խորունկիի ուսադիրներով, խաչերի խիտ շարքով, ու երբ նայեց քրտնակալած հայելուն, ինքն իրեն համարյա չճանաչեց. բարձրահասակ, նի-

հար, գնչուի պես սև մի սպա հայելու միջից նայում էր նրան։

— Դու ոնց որ գնդապետ լինես,— ուրախ ասաց Պետրոն՝ աննախանձ ու հրճվալից նայելով եղբորը։

Այս խոսքերը, Գրիգորիի կամքին հակառակ, նրան հաճույք պատճառեցին։ Նա դուրս ելավ ու մտավ խոհանոց։ Դարյան զմայլված նայեց նրան։ Դունյաշկան հիացավ.

— Օ-օ՜-օ, շախով-շուխո՛վ տղա...

Իլյինիչնան այստեղ էլ չկարողացավ պահել արցունքները։ Կեղտոտ գոգնոցով դրանք սրբելով, պատասխանեց Դունյաշկայի հեգնանքին.

— Դու է՛լ ունեցիր սրանց նմանները, չաչանակ։ Երկու տղա եմ ունեցել, հա՜-ա, ու երկուսն էլ մարդ են դարձել։

Նատալյան ամուսնուց չէր կտրում տարփալից, սիրաշեղ ու մշուշված աչքերը։

Գրիգորին շինելը գցեց վրեն ու դուրս եկավ բակ։ Նա դժվարությամբ էր իջնում արտաքին սանդուղքից,— ոտի վերքը խանգարում էր նրան։ «Առանց հենակի բան չի դուրս գա»,— մտածեց նա՝ հենվելով բազրիքին։

Նրա ոտից գնդակը հանել էին Միլլերովոյում, վերքը ծածկվել էր կինամոնագույն կեղևով. հենց այդ կեղևն էլ, ձգելով մաշկը, խանգարում էր ոտի ազատ շարժումներին։

Տան պատի տակ, հողաթմբի վրա պառկել էր մի կատու։ Արտաքին սանդուղքի մոտ, արևկող տեղում ձյունը հալվել, լճակ էր առաջացրել։ Գրիգորին ուշադրությամբ և ուրախացած դիտում էր բակը։ Նույնպես արտասանդուղքի մոտ կանգնած էր մի սյուն՝ գլխին ամրացված անիվով։ Գրիգորին մանկությունից հիշում էր այդ անիվը, որ սարքված էր կանանց կարիքների համար. առանց սանդուղքից իջնելու, դրա վրա կճուճներով կաթ էին դնում գիշերը պահելու համար, ցերեկը դրա վրա շորանում էին ամանները, արևի տակ թրծվում էին կավե անոթները։ Բակում աչքի էին ընկնում մի քանի փոփոխություններ. ամբարի դուռը թափված ներկի փոխարեն ներկված էր դեղին կավով, շարդախը նոր ծածկված էր հացաբույսերի ծղնոտով, որը դեռ չէր կորցրել գույնը. գերանների շեղջը ավելի փոքր էր թվում,— երևի դրանց մի մասը օգտագործել էին ցանկապատը նորոգելու համար։ Մառանի

հողածածկ սապատի վրա գորշ-կապտավուն մոխիր էր լցված. մոխրի վրա, ցրտից ոտն իրեն քաշած, կանգնել էր ագռավի պես սև մի աքաղաղ, որին շրջապատել էին աճեցման համար պահվող տասնյակ խայտաբղետ հավեր։ Զարդախի տակ զետեղված էր գյուղատնտեսական ինվենտարը՝ ձմեռային վատ եղանակներից պաշտպանելու համար. կողքի ցցված էին սայլերի թափքերը, կտուրի ճեղքից ընկած արևի լույսի տակ առկայծում էր հնձիչի մի ինչ-որ մետաղե մասը։ Ախոռի մոտ, տաք գոմաղբի վրա նստել էին սագերը։ Հոլանդական քյաքուլավոր, արու սագը գոռոզաբար, շեղակի նայեց իր կողքից կաղալով անցնող Գրիգորիին։

Դիտելով ամբողջ տնտեսությունը, Գրիգորին վերադարձավ խրճիթ։

Խոհանոցում քաղցր բուրում էին կովի հալած յուղը, նոր թխված, տաք հացը։ Դունյաշկան թրջած խնձորներ էր լվանում նախշավոր ափսեի մեջ։ Նայելով դրանց, Գրիգորին հետաքրքրությամբ հարցրեց.

— Աղը դրած ձմերուկ կա՞։

— Նատալյա, հանիր բեր,— արձագանքեց Իլյինիչնան։

Պանտելեյ Պրակոֆևիչը եկավ եկեղեցուց։ Իր հետ բերած նշխարը ընտանիքի անդամների թվով բաժանեց ինն մասի, տվեց նրանց։ Նստեցին նախաճաշելու։ Պետրոն, որ նույնպես զուգվել էր, նույնիսկ բեղերին ինչ-որ օծանելիք քսել, նստեց Գրիգորիի կողքին։ Նրանց դեմուդեմ, տաբուրետի ծայրին տեղավորվեց Դարյան։ Արևի ճառագայթների մի սյուն ընկել էր նրա վարդագեղ, ճարպաքսուքով օծված գեմքին։ Նա կկոցում էր աչքերը, դժգոհությամբ իջեցնում արևի տակ փայլող հոնքերի սև աղեղները։ Նատալյան եփած դդում էր ուտեցնում երեխաներին. ժպտալով, երբեմնակի նայում էր Գրիգորիին։ Դունյաշկան նստել էր հոր կողքին։ Իլյինիչնան տեղավորվել էր սեղանի ծայրին, վառարանին ավելի մոտիկ։

Կուշտ և շատ էին ուտում, ինչպես բոլոր տոներին։ Ոչխարի մսով շչին հաջորդեց էրիշտան, հետո՝ ոչխարի եփած միսը, հավի միսը, ոչխարի ոտներից պատրաստված սառնախաշը, տապակած կարտոֆիլը, կորեկի շիլան՝ կովի յուղով (արդար յուղով), չորացրած բալով էրիշտան, կաթի

սերով բիշին, աղը դրած ձմերուկը։ Գրիգորին փորը տոզացնելով, ծանր վեր կացավ, հարբած խաչակնքեց. հևալով ընկավ մահճակալին։ Պանտելեյ Պրակոֆևիչը դեռ շիլա էր խպշտում. գդալով պինդ տափտափելով այն, մեջտեղում փոս արեց, սաթի պես դեղին յուղը լցրեց փոսի մեջ ու սկսեց գդալով անուշ անել յուղալի շիլան։ Երեխաներին թունդ սիրող Պետրոն կերակրում էր Միշատկային. չարաճճիաբար մածուն էր քսում նրա թշերին ու քթին։

— Հոլեղբայր, հիմարություն մի՛ անի։

— Ի՞նչ է որ։

— Ինչո՞ւ ես քսում։

— Ի՞նչ կա որ։

— Մայրիկին կասեմ։

— Ի՞նչ։

Միշատկայի մելեխովյան մռայլ աչիկները բարկացկոտ կայծկլտում էին, դրանց մեջ դողում էին վիրավորանքի արցունքները. թաթիկով քիթը սրբելով, տեսնելով, որ Պետրոն ձեռ չի քաշում իր արարքից, նա ճվաց.

— Մի՛ քսիր, էլի... Դմբո... սարսաղ։

Պետրոն զոհունակությամբ քրքջում էր ու էլի կերակրում եղբորորդուն. մի գդալը տանում էր նրա բերանը, մյուսը՝ քթին։

— Ա՛յ քեզ պստիկ տղա... հերիք է, էլի,— փնթփնթաց Իլյինիչնան։

Դունյաշկան Գրիգորիի մոտ նստելով, պատմում էր.

— Պետրոն հիմար է, մեկ էլ տեսար գլխին մի օյին հանեց։ Անցած օրը Միշատկայի հետ ելավ բակը. Միշատկան ուզեց այնպես բան անել, հարցրեց՝ «հորեղբայր, կարելի՞ է սանդուղքի մոտ»։ Պետրոն է՛լ, թե՝ «Ոչ, չի կարելի։ Մի քիչ դենը գնա»։ Միշատկան մի քիչ հեռու գնաց։ «Բա այստե՞ղ»։— «Ոչ, ոչ, վազ տուր ամբարի մոտ»։ Երեխին ամբարից տարավ ախոռը, ախոռից էլ կալը։ Այնքան դես ու դեն քշեց, մինչև որ երեխան հենց ուղղակի փոխանի մեջ... Մի տեսնեի՛ր, թե Նատալյան ո՛նց էր հայհոյո՛ւմ։

— Տո՛ւր, ես ինքս կուտեմ,— զրնգուն ձայնով խնդրեց Միշատկան։

Պետրոն չհամաձայնեց, ծիծաղաշարժ կերպով շարժեց բեղերը.

— Չէ՛, տղաս։ Ե՛ս պիտի կերակրեմ քեզ։

— Ե՛ս, իմ ձեռքովը։

— Եղն ու կովը հրե՛ն գոմումն են, գիտե՞ս։ Տատիկդ նրանց պղտոր-մղտոր ջուր է տալի։

Գրիգորին ժպտալով լսում էր նրան խոսակցությունը, ծխախոտ էր փաթաթում։ Պանտելեյ Պրակոֆևիչը մոտեցավ նրան։

— Միտք ունեմ այսօր գնալ Վեշկի։

— Ինչի՞ համար։

Պանտելեյ Պրակոֆևիչը թունդ զկռտաց էրիշտայից, շփեց մորուքը։

— Այնտեղ գործ կա թամբագործի հետ. երկու անուր է սարքել։

— Մի օրում պիտի գնաս ու գա՞ս։

— Ի՞նչ կա որ։ Իրիկունը ետ կգամ։

Հանգստանալով, նա քավթառ, այդ տարի կուրացած մատակ ձին լծեց սահնակին, մեկնեց։ Ճանապարհն անցնում էր մարգագետնի միջով։ Երկու ժամից հետո հասավ Վեշենսկայա։ Գնաց փոստ, կոոպերատիվ խանութ, վերցրեց անուրները ու այցելեց իր վաղուցվա ծանոթին ու քավորին, որ ապրում էր նոր եկեղեցու մոտ։ Տանտերը, որ խիստ հյուրասեր մարդ էր, նրան նստեցրեց ճաշելու։

— Փոշտում եղա՞ր,— հարցրեց նա՝ ինչ-որ խմիչք լցնելով գավաթի մեջ։

— Եղա՛,— ձայնը երկարացնելով պատասխանեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ աչալուրջ ու զարմացած նայելով փոքրիկ գրաֆինին, հոտոտելով օդը, ինչպես շունը — գազանի հետքը։

— Ոչ մի նոր բան չլսեցի՞ր։

— Նոր բա՞ն։ Չէ, չլսեցի։ Ի՞նչ կա որ։

— Կալեդինը, Ալեքսեյ Մաքսիմովիչը, վերջ է տվել իր կյանքին։

— Ի՞նչ ես ասու-ո՞ւ-ո՞ւմ։

Պանտելեյ Պրակոֆևիչը նկատելիորեն սփրթնեց, մոռացավ կասկածելի գրաֆինն ու հոտը, ընկավ աթոռի մեջքին։ Տանտերը մռայլ թարթելով աչքերը, ասաց.

— Հեռագրով հաղորդեցին, որ այսօր Նովոչերկասկում գնդակով խփել է իրեն։ Ամբողջ մարզում մի հատ խելոք գեներալ էր։ Կավալերիստ էր, բանակի հրամանատար էր եղել։ Եվ ինչպիսի՜ հոգու տեր մարդ էր։ Նա հո կպաշտպաներ կազակության իրավունքները։

— Կա՛ց, քավոր, բա հիմի ո՞նց կլինի,— շփոթված հարցրեց Պանտելեյ Պրակոֆիևիչը՝ ետ տանելով գավաթը։

— Սատանան գիտե։ Ծանր ժամանակ է գալիս։ Դեհ, լավ ապրող մարդը հո ինքն իրեն չի՞ խփի։

— Բա ի՞նչ պատճառով է նա այդ արել։

Քավորը, որ ամրակազմ մի կազակ էր ու հնից ձեռք չքաշող, չարացած թափահարեց ձեռքը։

— Ճակատայինները նրանից երես դարձրին, բոլշևիկներին բերին մեր մարզը, դրա համար էլ ատամանը ինքնասպան եղավ։ Էլ կգտնվե՞ն նրա պես մարդիկ։ Ո՞վ կպաշտպանի մեզ։ Կամենսկում ինչ-որ ռիվկոմ է կազմվել, նրա մեջ ճակատային կազակներ կան... Մեզ մոտ էլ... կարելի է լսած լինես, նրանցից հրաման է եկել, թե պետք է ատամաններին վռնդել ու այդ տեսակ ռիվկոմներ ընտրել։ Մուժիկներն այդպես են գլուխ բարձրացրել, հա՛-ա,— բոլոր այն հյուսները, նալբանդները, զանազան գուփիչները. դրանք հո այնքան են վեշենսկում, որքան ճանճ ու մժեղ կա մարգագետնում։

Երկար լռեց Պանտելեյ Պրակոֆիևիչը՝ ալեհեր գլուխը կախած. իսկ երբ բարձրացրեց այն, նրա նայվածքը խիստ էր ու դաժան։

— Այդ ի՞նչ է գրաֆինի մեջ։

— Սպիրտ է։ Քրոջորդիս Կովկասից է բերել։

— Էհ, քավոր ջան, արի խմենք Կալեդինի, հանգուցյալ ատամանի հիշատակին։ Երկնային արքայությո՛ւն նրան։

Խմեցին։ Տանտիրոջ աղջիկը, բարձրահասակ, պեպենոտ մի աղջիկ, ուտելիք մատուցեց։ Պանտելեյ Պրակոֆիևիչը սկզբում նայում էր իր ձիուն, որ գլուխը քաշ արած կանգնել էր տանտիրոջ սահնակի կողքին, բայց վերջինս նրան ասաց.

— Ձիու մասին մի անհանգստանա։ Կասեմ, որ կեր ու ջուր տան։

Ու Պանտելեյ Պրակոֆիևիչը տաք խոսակցության ու սպիրտի շնորհիվ շուտով մոռացավ թե ձին և թե ամբողջ աշխարհը։ Նա անկապ պատմում էր Գրիգորիի մասին, ինչ-որ վիճում էր խմած քավորի հետ, վիճում էր ու հետո չէր հիշում, թե ինչի մասին էր վեճը։ Զգաստացավ միայն երեկոյան։ Որոշեց մեկնել, թեպետև տանտերը խնդրում էր, որ մնա գիշերելու։ Քավորի տղան լծեց ձին, քավորն էլ օգնեց սահնակ նստելու։ Նա որոշեց ուղեկցել հյուրին. երկուսով պառկեցին սահնակի վրա, գրկվեցին։ Սահնակը դեմ առավ դարբասին, հետո էլի դեմ էր առնում յուրաքանչյուր անկյան, մինչև որ դուրս եկավ մարգագետին։ Այստեղ քավորը լացեց ու կամավոր կերպով ընկավ սահնակից։ Երկար մնաց չորեքթաթ եղած, հետույքը տնկած, ու չկարողանալով ոտքի ելնել, հայհոյանք էր թափում։ Պանտելեյ Պրակոֆիևիչը յորդա քշեց ձին, չտեսավ, թե ինչպես իրեն ուղեկցող քավորը չորեքթաթ սողում է ձյան մեջ, քիթը դրա մեջ թաղած, երջանկաբար քրքջալով, ու խոպոտ մոթմոթում է.

— Խտուտ չտաս, հա՛-ա... խտուտ չտաս, խնդրու-ում եմ։

Պանտելեյ Պրակոֆիևիչի ձին մի քանի անգամ մտրակ ուտելով, վազում էր արագ, բայց անվստահ ու կուրորեն։ Շուտով նրա տերը, արբեցման թմրությամբ հաղթահարված, գլուխը դրեց սահնակի կողին, սկսեց։ Երասանները պատահմամբ ընկել էին նրա տակ, և ձին, մնալով անսանձ ու մոլոր, դանդաղեցրեց քայլերը։ Հենց առաջին ճամփաբաժնում խոտորվեց, ընկավ Մալիյ Գրոմչյոնոկ խուտորի ճանապարհը ու գնաց։ Մի քանի րոպեից հետո այդ ճանապարհն էլ կորցրեց։ Քայլում էր խոպան, ճանապարհազուրկ տեղերով, անտառի մոտ թաղվում խոր ձյան մեջ. փնչալով իջնում էր ձորահովիտները։ Սահնակը դեմ առավ մի թփի ու կանգնեց։ Ցնցումը մի վայրկյան արթնացրեց ծերունուն։ Պանտելեյ Պրակոֆիևիչը մի քիչ բարձրացրեց գլուխը, խոպոտ բղավեց.

— Դե՛հ, սատանա...— ու էլի վար գցեց գլուխը։

Ձին առանց փորձանքի անցավ անտառի կողքից, հաջողությամբ իջավ Դոն, ու առնելով տարթի ծխի հոտը, որ քամին բերում էր արևելքից, ճանապարհվեց դեպի Սեմյոնովսկի խուտորը։

Խուտորից կես վերստ հեռու, Դոնի ձախ կողմում կա մի խորխորատ։ Գարնանը հալվող ձյան ջուրը գնում լցվում է

դրա մեջ։ Խորխորատի մոտ, ավազոտ ափից աղբյուրներ են բխում. այնտեղ ամբողջ ձմռանը սառույցի կտորները չեն կպչում իրար, բաց ջուրը կանաչ, լայն կիսաբոլորակ է կազմել, և Դոնի վրայով անցնող ճանապարհը զգուշությամբ շրջանցում է այն, մի կողմ է շուռ գալիս։ Գարնանը, երբ բարձրացող ջուրը խորխորատից հորդառատ հոսում է դեպի Դոն, այդտեղ ջրապտույտ է առաջանում, վշշում է ջուրը, քերքերում հատակը, իրար են զարկվում աղմկոտ ալիքները. ամբողջ ամառը ծածան ձկներ են լինում մի քանի սաժեն խորություն ունեցող ջրի մեջ, ափից թափվող, հողմի բերած ցախի կուտակներին մոտիկ։

Մելեխովի ձին իր կույր քայլերը ուղղեց հենց դեպի բաց ջուրը, դեպի նրա ձախ եզրը։ Մնում էր մի քսան սաժեն, երբ Պանտելեյ Պրակոֆևիչը շուռ եկավ, մի փոքր բացեց աչքերը։ Սև երկնքից, նրա օձիքի տակից նայում էին աստղերի դեղնականաչ, չհասունացած բալերը։ «Գիշեր է...»— մշուշապատ կերպով գլխի ընկավ Պանտելեյ Պրակոֆևիչը և ուժով քաշեց երասանները.

— Դեհ, հե՛յ... Ես քեզ ցույց կտամ, քավթառ յաբու։

Ձին սլացավ վարգելով։ Մոտիկ ջրի հոտը խփեց նրա քթին։ Նա տնկեց ականջները, կույր, տարակուսող աչքերը մի փոքր ծռեց տիրոջ կողմը։ Հանկարծ նրա ականջին հասավ իրար զարնվող ալիքների ծփյունը։ Կատաղաբար փնչալով, նա մի կողմ նետվեց, ետ-ետ գնաց։ Նրա ոտների տակ մեղմ ճքաց ջարդվող, բարակած սառույցը, փլվեց դրա ձյունապատ եզրը։ Ձին մահվան զարհուրելի փնչոց արձակեց։ Ամբողջ ուժով հենվեց ետին ոտներին, բայց առջևի ոտներն արդեն ընկան ջուրը, թպրտացող ետին ոտների տակ ջարդվում էին սառցաբեկորները։ Խշշալով ու ճղփալով, սառույցը ճեղքվեց։ Ջուրը կլանեց ձիուն, և սա ջղաձգաբար ցնցեց ետին մի ոտը, խփեց քաշանին։ Այդ նույն ակնթարթում Պանտելեյ Պրակոֆևիչը վատ բան զգալով, թռավ սահնակից, ետ-ետ գնաց։ Նա տեսավ, թե ինչպես սահնակը ձիու ծանրությունից դեպի ջուրը սահելով, ծռաս եղավ, աստղերի լույսի տակ փայլեցին հիմնաձողերի տակերը, ընկավ սև-կանաչավուն անդունդը, ու մեղմ վշշաց սառցակտորներով լեցուն ջուրը. քիչ մնաց ալիքները թրջեին Պանտելեյ Պրակոֆևիչին։ Անասելի

արագությամբ նա դեպի ետ սողաց և միայն այդ ժամանակ ոտքի ելավ, բղավեց.

— Օգնեցե-ե-ք, բարի մարդի-ի՛-կ... խեղդվու-ու-ո՛ւմ ե-ենք...

Նրա հարբածության հետքն էլ չմնաց։ Նա նետվեց դեպի բաց ջուրը։ Պսպղում էր հենց նոր ջարդված սառույցը։ Քամին և հորձանքը բաց ջրի լայն բոլորակով մեկ քշում էին սառույցի կտորները, ալիքները ծփում էին, թափահարում կանաչ գանգուրները։ Շուրջը մեռելային լռություն էր տիրում։ Հեռավոր խուտորում լույսերը դեղնացնում էին մթությունը։ Թավիշե երկնքում վառ առկայծում էին հատիկանման, ասես նոր զտված աստղերը։ Քամին պտտում էր ձյան բուքը, որը խոպոտ վայում էր, ալրափոշու նման թռչում բաց ջրի երախը։ Իսկ բաց ջուրը աղոտ մշուշվում էր, գրկաբաց ու ահավոր կերպով սևին էր տալիս։

Պանտելեյ Պրակոֆևիչը հասկացավ, որ հիմի բղավելը հիմարություն է, անօգուտ։ Նայեց շուրջը, հասկացավ, թե ուր է հասել հարբած վիճակում, ու ցնցվեց՝ իր իսկ դեմ, պատահած դեպքի դեմ կատաղելուց։ Նրա ձեռքում մնացել էր մտրակը, որով նա կարողացել էր թռչել սահնակից։ Մայր հայհոյելով, նա մտրակը երկար խփում էր մեջքին, բայց ցավ չէր զգում,— դարաղած մորթու քուրքը պաշտպանում էր նրա մարմինը, իսկ ծեծկվելու համար քուրքը հանելն անիմաստ էր թվում։ Մորուքից պտղունցով մաղ պոկեց, ու մտքում թվելով կորած գնումները, ձիու, սահնակի և անուրի արժեքը, կատաղաբար հայհոյանք թափեց, է՛լ ավելի մոտեցավ բաց ջրին։

— Տո քավթառ, տո քոռ...— դողդոջուն, հեծեծագին ձայնով ասաց նա՝ դիմելով ջրասույզ եղած ձիուն,— տո անառակ, քիչ մնաց ինձ էլ ջուրը գցեիր։ Ախր ո՞ր սատանան քեզ բերեց այստեղ, է՞... Դեհ գնա, անտեր, սատանաները այդտեղ քեզ կլծեն ու կքշեն, միայն թե մտրակ չունեն... Հրե՛ս, մըտրակն է՛լ ձեզ...— նա մոլեգնաբար թափ առավ, մուգ-կարմրավուն մտրակը շպրտեց բաց ջրի մեջտեղը։

Մտրակը թռավ սվսվալով, ընկավ այնտեղ ու ջրասույզ եղավ։

XV

Երբ կալեդինականներն արդեն զզզել էին հեղափոխական կազակական զորամասերը, Դոնի ռևկոմը, ստիպված լինելով փախչել Միլլերովո, շտապեց պարզել իր քաղաքական դեմքը։ Նա հետևյալ բովանդակությամբ մի դեկլարացիա ուղարկեց Կալեդինի ու կոնտրռևոլյուցիոն Ուկրաինական ռադայի դեմ ուղղված մարտական գործողությունների ղեկավարի անունով.

Խարկով, 1918 թվականի հունվարի 19։ Լուգանսկից, № 449, ժ. 18-ից 20 ր. անց։— Դոնի կազակական ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն խնդրում է ձեզ հաղորդել Պետրոգրադ, Ժողովրդական Կոմիսարների Սովետին Դոնի մարզի հետևյալ բանաձևը.

Կազակական ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն Կամենսկայա ստանիցայում կայացած ճակատային համագումարի որոշման հիման վրա որոշեց.

1. Ճանաչել Ռուսաստանի Սովետական Ռեսպուբլիկայի կենտրոնական պետական իշխանությունը, կազակական, գյուղացիական, զինվորական և բանվորական դեպուտատների սովետների համագումարի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և նրա ընտրած Ժողովրդական Կոմիսարների Սովետը։

2. Կազակական, գյուղացիական ու բանվորական դեպուտատների սովետների համագումարում ընտրել Դոնի մարզի երկրային իշխանություն։

Սանդարգրություն։ Նույն մարզային համագումարը լուծում է Դոնի մարզի հողային հարցը։

Այս դեկլարացիան ստացվելուց հետո Ռևկոմի զորքերին օգնության հասան կարմիրգվարդիական զորամասերը, որոնց օգնությամբ էլ շախշախվեց գնդապետ Ջերնեցովի ջոկատն ու վերականգնվեց դրությունը։ Նախաձեռնությունն անցավ Ռևկոմի ձեռքը։ Սաբլինի ու Պետրովի կարմիրգվարդիական ջոկատները Զվերևոն ու Լիխայան գրավելուց հետո, Ռևկոմի կազակական զորամասերով ուժեղացած, ծավալում են հարձակումը և հակառակորդին քշում դեպի Նովոչերկասկ։

Աջ թևում, Տագանրոգի ուղղությամբ, Նեկլինովկայի մոտ պարտություն կրելով գնդապետ Կուտեպովի կամավորական ջոկատից, Սիվերսը ետ քաշվեց ու ընկավ Ամվրոսիևկա, կորցրեց մի հրանոթ, 24 գնդացիր և մի զրահապատ ավտոմոբիլ։ Բայց Սիվերսի պարտության ու նահանջի օրը Տագանրոգում, Բալթյան գործարանում ապստամբություն բռնկվեց։ Բանվորները յունկերներին քաղաքից դուրս քշեցին։ Սիվերսը հավաքեց ուժերը, անցավ հարձակման, ու ծավալելով այն, կամավորներին ետ մղեց մինչև Տագանրոգ։

Հաջողությունը բացահայտորեն հակվում էր սովետական զորքերի կողմը։ Նրանք երեք կողմից շրջապատում էին Կամավորական բանակը և Կալեդինի «կարկատանային» ջոկատների մնացորդները։ Հունվարի 28-ին Կոռնիլովը Կալեդինին մի հեռագիր ուղարկեց, որով հաղորդում էր, թե Կամավորական բանակը թողնում է Ռոստովը ու գնում դեպի Կուբան։

29-ին, առավոտյան ժամը 9-ին ատամանի պալատում Դոնի կառավարության անդամների արտակարգ խորհրդակցություն հրավիրվեց։ Կալեդինը բոլորից ուշ եկավ իր բնակարանից։ Նա ծանր նստեց սեղանի մոտ, թղթերը մոտեցրեց իրեն։ Նրա այտերի վերին մասերը գեղնել էին անքնությունից, գունատ ու մռայլ աչքերի տակ կապույտ բծեր էին առաջացել. կարծես ինչ-որ մի ախտ դեղնացրել էր նրա նիհարած դեմքը։ Նա դանդաղ կարդաց Կոռնիլովի հեռագիրը, Նովոչերկասկի հյուսիսային կողմում կարմիրգվարդիականների գրոհին դեմ կանգնած զորամասերի հրամանատարների ամփոփագրերը։ Լայն, սպիտակ ձեռնափով մանրակրկիտորեն կոկելով հեռագրերի կույտը, չբարձրացնելով ուռած, կապտած կոպերը, խուլ ձայնով ասաց.

— Կամավորական բանակը հեռանում է։ Մարդը և Նովոչերկասկը պաշտպանելու համար մնացել է հարյուր քառասունյոթ զինվոր...

Աչքի խաղը ցնցեց նրա ձախ կոպը, ջղաձգությունը սահեց սեղմված շրթունքների անկյունից. բարձրացնելով ձայնը, նա շարունակեց.

— Մեր դրությունն անհուսալի է։ Բնակչությունը ոչ միայն չի օժանդակում մեզ, այլև մեր նկատմամբ թշնամաբար է տրամադրված։ Մենք ուժ չունենք, և դիմադրելն էլ անօգուտ է։ Ես չեմ ուզում ավելորդ զոհեր, ավելորդ արյունահեղություն։ Առաջարկում եմ հրաժարվել ձեր լիազորություններից և իշխանությունը հանձնել ուրիշներին։ Ես հրաժարվում եմ զորաց ատամանի իմ լիազորություններից։

Միտրոֆան Պետրովիչ Բոգանսկին, որ լայն լուսամուտից գուրս էր նայում, շտկեց ակնոցը, առանց գլուխը շուռ տալու ասաց.

— Ես նույնպես հրաժարվում եմ իմ լիազորություններից։

— Իհարկե ամբողջ կառավարությունն էլ հրաժարվում է իր լիազորություններից։ Հարց է ծագում՝ մենք ո՞ւմ պիտի հանձնենք իշխանությունը։

— Քաղաքային դումային,— շոր պատասխանեց Կալեդինը։

— Պետք է դա ձևակերպել,— տատանվելով ասաց կառավարության անդամ Կարևը։

Մի բոպե ծանր ու անհարմար լռություն տիրեց։ Քրտնակալած պատուհաններից թափանցում էր հունվարյան մռայլ առավոտի աղոտ լույսը։ Լուռ էր, ննջում էր մշուշով ու եղյամով սքողված քաղաքը։ Չէր զգացվում կյանքի սովորական երակազարկը։ Թնդանոթային որոտմունքը (հեռվում, Սուլին կայարանի մոտ տեղի ունեցող մարտերի արձագանքները) մեռցնում էր շարժումը, կախվել էր քաղաքի վրա իբրև խուլ, շարտահայտված սպառնալիք։

Դրսում շոր ու պարզ կոնչում էին թռչող ագռավները։ Նրանք ճախրում էին սպիտակ զանգակատան, ասես լեշի վերևում։ Սաբրոնայա հրապարակը բաց-մանուշակագույն, թարմ ձյունով էր պատած։ Հրապարակով անցնում էին հատուկենտ, հետիոտն մարդիկ, երբեմն էլ — կառապանների սահնակներ, որոնք ձյան վրա հետքեր էին թողնում։

Խախտելով սառն լռությունը, Բոգանսկին առաջարկեց ակտ կազմել իշխանությունը քաղաքային դումային հանձնելու մասին։

— Հարկավոր է հավաքվել նրանց հետ՝ իշխանությունը հանձնելու համար։

— Ո՞ր ժամն է ամենից հարմար։

— Ավելի ուշ, ժամը շորսին։

Կառավարության անդամները կարծես ուրախանալով, որ քար լռությունը, վերջապես, խախտվեց, սկսեցին քննարկել իշխանությունը հանձնելու, հավաքվելու ժամանակի հարցը։ Կալեդինը լռում էր, ուռուցիկ եղունգներով հուշիկ ու համա-

չափ թփթփացնում սեղանին։ Կիտած հոնքերի տակին թիթեղոնի փայլով մշուշվում էին աչքերը։ Անչափ հոգնությունը, նողկանքը, լարվածությունը ծանր ու վանողական էին դարձրել նրա նայվածքը։

Կառավարության անդամներից մեկը, առարկելով մի ուրիշին, խոսում էր երկար ու տաղտկալի։ Կալեդինը զուսպ բարկությամբ ընդհատեց նրան.

— Պարոններ, կարճ խոսեք։ Ժամանակը չի սպասում։ Ախր Ռուսաստանը շատախոսությունից կործանվեց։ Հայտարարում եմ կես ժամով ընդմիջում։ Քննարկեցեք և... հետո, պետք է սա շուտ վերջացնել։

Նա գնաց իր բնակարանը։ Կառավարության անդամները, փոքրիկ խմբերի բաժանված, կամացուկ խոսում էին։ Մեկն ասաց, թե Կալեդինը վատ տեսք ունի։ Բոգանսկին կանգնել էր լուսամուտի մոտ, նրա ականջին հասավ ցածրաձայն ասված հետևյալ արտահայտությունը։

— Այնպիսի մարդու համար, ինչպես Ալեքսեյ Մաքսիմովիչն է, ինքնասպանությունը միակ ընդունելի ելքն է։

Բոգանսկին ցնցվեց, արագ քայլերով գնաց Կալեդինի բնակարանը։ Շուտով նա վերադարձավ ատամանի ուղեկցությամբ։

Որոշվեց հավաքել ժամը 4-ին, քաղաքային դումայի հետ միասին, իշխանությունը նրան հանձնելու և ակտ կազմելու համար։ Կալեդինը վեր կացավ, նրանից հետո մյուսներն էլ վեր կացան։ Հրաժեշտ տալով կառավարության մոլեռանդ անդամներից մեկին, Կալեդինը աչքերով հետևում էր Յանովին, որը քչփչում էր Կարևի հետ։

— Բանն ի՞նչ է,— հարցրեց նա։

Յանովը մոտեցավ մի փոքր շփոթված։

— Կառավարության անդամները,— ո՛չ կազակական մասը,— խնդրում են իրենց փող տալ ճանապարհի համար։

Կալեդինը կնճռոտեց դեմքը, կոշտ ասաց.

— Ես փող չունեմ... Ձանձրացրին, էլի՛։

Սկսեցին ցրվել։ Բոգանսկին, որ լսել էր այդ խոսակցությունը, Յանովին մի կողմ կանչեց։

— Գնանք ինձ մոտ։ Ասացեք Սվետոզարովին, որ սպասի նախասրահում։

Նրանք դուրս եկան արագ քայլող, կորացած Կալեդինի հետևից։ Բոգաևսկին իր սենյակում մի կապ փող հանձնեց Ցանովին։

— Տասնչորս հազար է։ Մյուսներին էլ տվեք։

Սվետոզարովը, որ նախասրահում սպասում էր Ցանովին, ընդունեց փողը, շնորհակալություն հայտնեց ու, հրաժեշտ տալով, քայլեց դեպի դուրս։ Բարապանի ձեռքից ընդունելով շինելը, սանդուղքից աղմուկ լսելով, ետ նայեց։ Սանդուղքից ցատկումներով իջնում էր Կալեդինի ադյուտանտը՝ Մոլդավսկին։

— Բժի՛շկ բերել, շո՛ւտ։

Դեն գցելով շինելը, Ցանովը նետվեց նրա կողմը։ Հերթապահ ադյուտանտը և հանձնատարները, որոնք խմբվել էին նախասրահում, շրջապատեցին Մոլդավսկուն։

— Բանն ի՞նչ է,— սփրթնելով բղավեց Ցանովը։

— Ալեքսեյ Մաքսիմովիչը ինքնասպանություն գործեց.— Մոլդավսկին հեկեկաց, կրծքի վրա ընկավ սանդուղքի բազրիքին։

Վազեվազ մոտեցավ Բոգաևսկին. նրա շրթունքները դողում էին ասես սարսափելի ցրտից, նա կմկմում էր։

— Ի՞նչ է, ի՞նչ է։

Սանդուղքի վրայով խմբովին, իրարից առաջ անցնելով, վազեցին վերև։ Դոփում, դմբդմբում էին նրանց քայլերը։ Բոգաևսկին խոխոռալով էր շնչում, բաց բերանով կլանում օդը։ Նա առաջինը շրխկալի բացեց դուռը, նախասենյակի միջով վազեց կաբինետ։ Կաբինետից կողքի փոքրիկ սենյակը տանող դուռը լայն բացված էր։ Այնտեղից սողում ու մշուշվում էր դառնահամ, կապտավուն ծուխը, գալիս էր այրված վառոդի հոտը։

— Օ-օ՛խ, օ՛խ, ա-ա՛-ա-ա՛խ-ա... Ալյո՛-շա-ա-ա... սիրելի-ի-խս... —լսվում էր Մարիա Պետրովնա Կալեդինայի անճանաչելիորեն-սարսափելի, ճզմված ձայնը։

Բոգաևսկին ասես խեղդվելիս պատառոտելով շապկի օձիքը, ներս վազեց։ Պատուհանի մոտ կորացել, կանգնել էր Կարեը, կառչել փեղկի դժգույն, ոսկեջրած բռնակից։ Նրա մեջքին, սերթուկի տակ ջղաձգաբար իրար էին մոտենում ու հեռանում թիակները, նա սաստիկ, բայց դանդաղ դողում էր։

Ջափահաս մարդու խուլ, գազանի ոռնոցին նմանվող հեկեկանքը քիչ մնաց ուշաթափության հասցներ Բոգաևսկուն։

Սպայական երթական մահճակալի վրա, ձեռները կրծքին խաչած, մեկնված, մեջքի վրա պառկել էր Կալեդինը։ Գլուխը մի քիչ շրջվել էր կողքի, դեպի պատը, բարձի սպիտակ երեսը ստվերել էր կապտավուն, խոնավ ճակատը ու բարձին սեղմված այտը։ Աչքերը քնեած-կիսախուփ էին, կոշտ բերանի անկյունները տանջալից կերպով ծռմռված։ Նրա ոտների մոտ ծեծկվում էր ծունկ չոքած կինը։ Վերջինիս աղիողորմ, օտարոտի ձայնը սուր էր ու կտրող։ Մահճակալի վրա ընկած էր «կոյլտ» ատրճանակը։ Դրա կողքին, շապիկի վրայով ծուռումուռ հոսում էր արյան սև-կարմավուն, բարակ շիթը։

Մահճակալի կողքին, աթոռի մեջքին կանոնավոր կախված էր ֆրենչը, փոքրիկ սեղանին դրված էր ապարանջանժամացույցը։

Բոգաևսկին ծուռ օրորվելով, ծունկի իջավ, ականջը դեմ արեց Կալեդինի տաք և փափուկ կրծքին։ Քացախի հոտի նման թունդ հոտ էր գալիս տղամարդու քրտնքից։ Կալեդինի սիրտը չէր բաբախում։ Բոգաևսկին,— նրա ամբողջ կյանքն այդ պահին լսողություն էր դարձել,— անասելի լարվածությամբ ականջ էր դնում, բայց լսում էր միայն սեղանին դրված ձեռնաժամացույցի չկչկոցը, արդեն մեռած ատամանի կնոջ խրոպոտ, խեղդվող ձայնը ու պատուհանի միջից,— ագռավների շարաբաստիկ, ծանր ու հնչեղ կռնչոցը։

XVI

Բունչուկը հենց որ առաջին անգամ բացեց աչքերը, տեսավ Աննայի սև աչքերը, որոնք փայլում էին արցունքներով ու ժպիտով։

Երեք շաբաթ Բունչուկը զառանցանքի մեջ էր, կորցրել էր գիտակցությունը։ Երեք շաբաթ դեգերում էր մի ուրիշ, անշոշափելի ու երևակայական աշխարհում։ Գիտակցությունը վերադարձավ դեկտեմբերի 24-ի երեկոյան։ Նա լուրջ, մշուշված հայացքով երկար նայում էր Աննային, փորձում էր հիշողության մեջ վերականգնել այն ամենը, ինչ կապված էր Աննայի հետ. սա լոկ մասամբ հաջողվեց նրան,— հիշո-

զությունը թույլ էր, ժլատ, շատ բան դեռևս ինչ-որ խոր տեղ էր պահում։

— Ծարավ եմ...— առաջվա պես հեռվից Բունչուկի ականջին հասավ ի՛ր իսկ ձայնը, ու դրանից նա ուրախացավ, ժպտաց։

Աննան շեշտակի մոտեցավ նրան. նա ամբողջովին փայլում էր ժլատ, զուսպ ժպիտով։

— Խմիր իմ ձեռքից,— նա ետ տարավ Բունչուկի ձեռքը, որ թույլ պարզվել էր դեպի բաժակը։

Գլուխը բարձրացնելու ճիգերից դողալով, Բունչուկը խմեց ջուրը ու հոգնածորեն ընկավ բարձին։ Երկար նայում էր մի կողմ, ուզում էր մի բան ասել, բայց թուլությունը հաղթահարեց,— նա քնեց։

Ու էլի, ինչպես և առաջին անգամ, արթնանալով, ամենից առաջ տեսավ իրեն նայող Աննայի տագնապալից աչքերը, հետո՝ լամպի շաֆրանե լույսը, դրանից առաջացած սպիտակ կլորակը տախտակե, չներկած առաստաղի վրա։

— Ա՛նյա, եկ ինձ մոտ։

Աննան մոտեցավ, վերցրեց նրա ձեռքը։ Բունչուկը պատասխանեց նրա ձեռքի թույլ սեղմումով։

— Ի՞նչպես ես զգում քեզ։

— Լեզուս, գլուխս, ոտներս կարծես իմը չեն, ես էլ ասես երկու հարյուր տարեկան եմ,— Բունչուկը դժվարությամբ արտասանեց յուրաքանչյուր բառը, մի փոքր լռելով, հարցրեց.— Տի՞ֆ է սա։

— Տիֆ է։

Աչք ածեց սենյակով մեկ, անհասկանալի ասաց.

— Ո՞րտեղ է սա։

Աննան հասկացավ հարցը, ժպտաց։

— Մենք Ցարիցինում ենք։

— Բա դու... ո՞նց եղավ։

— Միայն ես մնացի քեզ հետ,— ու՝ կարծես արդարանալով կամ աշխատելով Վանել Բունչուկի չարտահայտած ինչ-որ միտքը, հապճեպ վրա բերեց.— Չէր կարելի քեզ թողնել կողմնակի մարդկանց մոտ։ Աբրամսոնը և բյուրոյի ընկերներն ինձ խնդրեցին, որ պահպանեմ քեզ... Տեսնո՞ւմ ես, հարկ եղավ անսպասելիորեն քեզ խնամել։

Բունչուկը հայացքով, մազոտ ձեռքի թույլ շարժումով շնորհակալություն հայտնեց։

— Բա Կրուտոգորո՞վը։

— Վորոնեժի վրայով ծեկնեց Լուգանսկ։

— Գևորգյա՞նը։

— Նա... գիտե՞ս... մեռավ տիֆից։

— Օ՜-օ...

Մի փոքր լռեցին՝ ասես հարգելով հանգուցյալի հիշատակը։

— Ես վախենում էի քեզ համար։ Դու շատ վատ դրության մեջ էիր,— կամացուկ ասաց Աննան։

— Բա Բոգովո՞յը։

— Բոլորին կորցրի աչքիցս։— Ոմանք մեկնեցին Կամենսկայա։ Բայց, լսիր, խոսելը վնասակար չի՞ քեզ համար։ Հա, գուցե կա՞թ ես ուզում։

Բունչուկը գլխով բացասական նշան արեց. դժվարությամբ շարժելով լեզուն, շարունակեց հարցուփորձը։

— Աբրամսո՞նը։

— Մի շաբաթ առաջ մեկնեց Վորոնեժ։

Բունչուկը ծանր շուռ եկավ. գլուխը պտտվեց, արյունը ցավագին խփեց աչքերին։ Ճակատի վրա զգալով Աննայի պաղ ձեռքը, բացեց աչքերը։ Նրան տանջում էր մի հարց. նա կորցրել էր գիտակցությունը, հապա ո՞վ էր կատարում իր կեղտոտ խնամքը, մի՞թե Աննան։ Բունչուկի այտերը մի քիչ կարմրեցին. նա հարցրեց.

— Դու մենա՞կ էիր ինձ խնամում։

— Այո, մենակ։

Բունչուկը դարձավ դեպի պատը, շշնջաց.

— Ամո՛թ նրանց... Սրիկանե՛ր։ Ինձ թողին քո խնամքին...

Տիֆից հետո առաջացած բարդությունը անդրադարձավ լսողության վրա. Բունչուկը վատ էր լսում։ Կուսակցության Ցարիցինի կոմիտեի ուղարկած բժիշկը Աննային ասաց, որ բուժումը կարելի է սկսել միայն այն ժամանակից, երբ հիվանդը վերջնականապես կկազդուրվի։ Բունչուկը դանդաղ էր ապաքինվում։ Նա հիանալի ախորժակ ուներ, բայց Աննան

խոտորեն դիտում էր պահպանում։ Այս հողի վրա նրանց միջև վեճեր էին լինում։

— Էլի՛ կաթ տուր ինձ,— խնդրում էր Բունչուկը։

— Էլ չի՛ կարելի։

— Խնդրում եմ, տո՛ւր, էլի՛։ Հո չե՞ս ուզում, որ ես սովից մեռնեմ։

— Ի՛լյա, դու հո գիտես, որ ես չեմ կարող չափից ավելի ուտելիք տալ քեզ։

Բունչուկը նեղացած լսում էր, դառնում դեպի պատը, հոգոց էր հանում, երկար ժամանակ չէր խոսում։ Տանջվելով նրան տածած կարեկցությունից, Աննան հաստատ էր մնում իր վճռին։ Կարճ ժամանակից հետո Բունչուկը մոայլված և այդ պատճառով է՛լ ավելի ողորմելի տեսքով շուռ էր գալիս, աղերսանքով խնդրում.

— Կաղամբի թթու չի՞ կարելի։ Դե լա՛վ, էլի, Աննյա, խնդրում եմ... Բե՛ր, էլի՛... Վնասակա՞ր է... Դրանք բժշկի հեքիաթներ են։

Վճռական մերժում ստանալով, Բունչուկը երբեմն ծանր խոսքերով վիրավորում էր Աննային։

— Դու իրավունք չունես ինձ հետ այդպես վարվելու։ Ես ինքս կկանչեմ տանտիրուհուն ու կխնդրեմ նրանից։ Դու անսիրտ ու զզվելի կին ես... Այո, ես սկսում եմ ատել քեզ։

— Դա լավագույն հատուցումն է այն շարչարանքի համար, որ ես կրեցի՝ լինելով քո դայակը,— պատասխանում էր նույնպես նեղացած Աննան։

— Ես քեզ չէի խնդրել, որ մնայիր ինձ մոտ։ Դրանով ինձ կշտամբելն անազնվություն է։ Դու օգտվում ես քո առավելությունից։ Դե լավ, ի՞նչ արած... Ոչինչ էլ մի տուր ինձ։ Թող ես սատկեմ... Ի՞նչ մեծ բան է։

Աննայի շուրթերը դողում էին, բայց նա զսպում էր իրեն, լռում էր. ներելով Բունչուկին, հոմբերությամբ տանում էր ամեն ինչ։

Միայն մի անգամ, առանձնապես խիստ փոխադարձ նախատինքից հետո, երբ նա հրաժարվեց կարկանդակների մի ավելորդ բաժին տալ Բունչուկին, վերջինս դեմքը շուռ տվեց, և Աննան կծկվող սրտով արցունքների կայլակներ տեսավ նրա աչքերում։

— Դու ուղղակի երեխա ես,— բացականչեց նա։

Վաղեց խոհանոց, ափսեով լիքը կարկանդակներ բերեց։

— Կե՛ր, կե՛ր, Իլյուշա, սիրելիս։ Դե լավ, էլի՛, մի՛ բարկանա։ Ա՛յ, վերցրու սա, լավ տապակված է,— ու դողդոջուն ձեռներով կարկանդակը ճխտում էր Բունչուկի ձեռքը։

Բունչուկը, որ խորապես տանջվում էր, փորձեց հրաժարվել, բայց չկարողացավ. սրբելով արցունքները, նստեց ու վերցրեց կարկանդակը։ Խուճուճ, խիտ մորուքով ծածկված նրա նիհար դեմքով սահեց մեղավոր ժպիտը, աչքերով ներողություն խնդրելով՝ նա ասաց.

— Ես երեխայից էլ վատ եմ... Տեսնո՞ւմ ես, քիչ մնաց լաց լինեի...

Աննան նայում էր նրա խիստ բարակ վզին, ներս ընկած, շապկի բաց օձիքի տակից երևացող լղար կրծքին, ոսկրոտ ձեռքերին. հուզվելով խորունկ, դեռ չապրած սիրուց ու կարեկցությունից, առաջին անգամ սրտագին ու քնքշորեն համբուրեց նրա չոր, դեղին ճակատը։

Բունչուկը միայն երկու շաբաթից հետո ի վիճակի էր առանց կողմնակի օգնության քայլել սենյակում։ Ցողունի պես բարակած ոտները ծալվում էին. նա նորից քայլել էր սովորում։

— Տե՛ս, Աննա, ո՛նց եմ գնո՛ւմ,— փորձում էր քայլել առանց օգնության և արագ, բայց ոտները չէին դիմանում մարմնի ծանրության, ներբանների տակից փախչում էր հատակը։

Ստիպված լինելով հենվել առաջին հանդիպած հենարանին, Բունչուկը ծերունու պես թույլ ժպտում էր, դալուկ այտերի մաշկը սիրկ ձգվում էր, կնճռոտվում։ Նա ծիծաղում էր ծերունու կերկերուն, տկար ծիծաղով, ու լարվածությունից, ծիծաղից թուլացած, կրկին ընկնում էր մահճակալի վրա։

Նրանց բնակարանը մոտիկ էր նավակայանին։ Պատուհանից երևում էին Վոլգայի ձյունապատ, լայն գոտին, նրանից դենը՝ լայն, գորշ կիսաղեղով փռված անտառները, հեռավոր դաշտերի մեղմ, ալեձև ուրվագծերը։ Աննան երկար կանգնում էր պատուհանի մոտ, մտածում իր օտարոտի, անըսպասելիորեն փոխված կյանքի մասին։ Բունչուկի հիվանդու-

թյունը նրանց միջև տարօրինակ մտերմություն էր առաջացրել։

Սկզբում, երկար, տանջալից ճանապարհ անցնելուց հետո, երբ Բունչուկի հետ ժամանեց Ցարիցին, ծանր ու դառն բոպեներ էր ապրում։ Աննային առաջին անգամ վիճակվեց այնքա՛ն մոտիկից և այնքա՛ն մտերմորեն շփում ունենալ սիրած մարդու հետ։ Ատամներն իրար սեղմելով, փոխում էր նրա սպիտակեղենը, նրա ոչլոտած, կեղտոտ գլխից սանրելով թափում էր պարազիտները, շուռ էր տալիս քարի պես ծանր նրա մարմինը, ու ցնցվելով, գարշելով, գաղտագողի նայում էր նրա, տղամարդու մերկ, նիհարած մարմնին, այն պատյանին, որի տակ հազիվ բաբախում էր իր համար թանկագին կյանքը։ Նրա մեջ ծառսում, հակառակվում էր ամեն ինչ, բայց արտաքինի կեղտը չէր բծավորում խորունկ և հուսալի պահված զգացումը։ Դրա հրամայական ցուցմամբ սովորեց հաղթահարել ցավն ու տարակուսանքը։ Եվ հաղթահարեց։ Ի վերջո կար միայն կարեկցություն, ու դուրս թափանցելով, հորդում էր սիրո խորունկ աղբյուրը։

— Մի անգամ Բունչուկն ասաց.

— Այս բոլորից հետո ես քեզ համար զզվելի եմ... այնպես չէ՞։

— Դա մի ստուգում էր։

— Ինչի՞, տոկունությա՞ն։

— Ո՛չ, զգացմունքի։

Բունչուկը շուտ եկավ ու երկար ժամանակ չէր կարողանում զսպել շուրթերի դողը։ Հետո նրանք էլ չէին խոսում այդ թեմայից։ Խոսքերն ավելորդ ու անգույն կլինեին...

Հունվարի կեսին նրանք Ցարիցինից մեկնեցին Վորոնեժ։

XVII

Հունվարի 16-ի երեկոյան Բունչուկը և Աննան ժամանեցին Վորոնեժ։ Երկու օր մնացին այնտեղ ու մեկնեցին Միլլերովո, որովհետև մեկնելու օրը լուրեր էին ստացվել, որ Դոնի ռևկոմը և նրան հավատարիմ զորամասերը, կալեդինականների ճնշման տակ ստիպված լինելով թողնել Կամենսկայանչ տեղափոխվել էին Միլլերովո։

Միլլերովոն բազմամարդ էր, այնտեղ իրարանցում էր տիրում։ Բունչուկը մի քանի ժամ մնաց այնտեղ և հետևյալ քնացքով մեկնեց Գլուբոկայա։ Մյուս օրը նա ընդունեց գնդացրային խումբը, իսկ հաջորդ օրվա առավոտյան արդեն մասնակցում էր Չերնեցովի ջոկատի դեմ մղված պայքարին։

Երբ Չերնեցովին արդեն ջարդել էին, նրանց անսպասելիորեն վիճակվեց բաժանվել։ Աննան առավոտյան վազեվազ եկավ շտաբից, նա աշխույժ էր ու մի քիչ տխուր։

— Գիտե՞ս, Աբրամսոնն այստեղ է։ Նա շատ է ուզում քեզ տեսնել։ Հետո, մի նորություն է՛լ, այսօր մեկնում եմ։

— Ո՞ւր,— զարմացավ Բունչուկը։

— Աբրամսոնը, ես ու էլի մի քանի ընկերներ գնում ենք Ղուգանսկ՝ ագիտացիոն աշխատանքի համար։

— Դու թողնո՞ւմ ես ջոկատը,— մի փոքր սառն հարցրեց Բունչուկը։

Աննան ծիծաղեց՝ շիկնած դեմքը սեղմելով նրան։

— Խոստովանիր, քեզ տխրեցնում է ոչ թե այն, որ ես թողնում եմ ջոկատը, այլ այն, որ քեզ եմ թողնում։ Բայց չէ՞ որ դա ժամանակավոր է։ Ես հավատացած եմ, որ այն աշխատանքով ավելի շատ օգուտ կբերեմ, քան քեզ մոտ։ Ագիտացիայի մեջ ես անշուշտ ավելի մասնագետ եմ, քան գնդացրային գործի մեջ...— և չարաճճիորեն խաղացրեց աչքերը,— թեև այդ գործը ուսումնասիրել եմ մի այնպիսի փորձված հրամանատարի ղեկավարությամբ, ինչպիսին Բունչուկն է։

Շուտով եկավ Աբրամսոնը։ Առաջվա պես նա եռանդոտ էր, գործունյա, հանգիստ չնստող, ու էլի բզեզային, ասես կպրած գլխին փայլում էր սպիտակ բիծը։ Տեսնելով Բունչուկին, անկեղծորեն ուրախացավ։

— Ոտքի ելար, հա՞։ Շա-ա՞տ լավ է։ Աննային մենք տանում ենք,— և ինչ-որ բանի մասին գլխի ընկնելով ու այդ ակնարկելով՝ կկոցեց աչքերը.— Դու չի՞ս առարկում, չե՞ս առարկում։ Այո... Այո-այո, շա՛տ լավ է։ Ես այդ հարցը նրա համար եմ տալիս, որ դուք, հավանորեն, Ցարիցինում ընտելացել եք միմյանց։

— Չե՛մ թաքցնում, որ նրանից բաժանվելն ինձ համար ցավալի է,— Բունչուկը նոթոտ ու բռնազբոսիկ ժպտաց։

— Ցավալի՞ է, հա՞... Արգեն այդ է՛լ մեծ բան է... Անն-նա, լսո՞ւմ ես։

Աբրամսոնը մի քիչ քայլեց սենյակում, քայլելիս սնդուկի հետևից վերցրեց Գարին-Միխայլովսկու փոշոտած հատորյակը ու շտապելով սկսեց հրաժեշտ տալ։

— Շո՞ւտ կվերջացնես, Աննա։

— Գնա։ Ես հիմի կգամ,— պատասխանեց Աննան մինչ-նորմի հետևից։

Փոխելով սպիտակեղենը, նա դուրս եկավ։ Հագել էր զինվորի գորշ վերնաշապիկ, վրայից կապել կաշվե գոտի։ Կուրծքը մի փոքր դուրս էր ցցել վերնաշապկի գրպանները. էլի նույն սև յուրկան տեղ-տեղ կարկատած էր, բայց բոլորովին մաքուր։ Փարթամ, նոր լվացած մազերը խուճուճվել, հանգույցից դուրս էին թափվել։ Նա հագավ շինելը. գոտին կապելով՝ հարցրեց (քիչ առաջ եղած նրա աշխուժությունը չքացել էր ու ձայնն էլ կերկերուն էր, աղերսալի).

— Դու այսօր մասնակցելո՞ւ ես հարձակման։

— Դե ի՞նչ։ Հո ձեռներս ծալած չե՞մ նստելու։

— Ես քեզ խնդրում եմ... Լսիր, զգույշ եղիր։ Դու այդ կանես ինձ համար, այո՞։ Ես քեզ համար մի ավելորդ զույգ բրդե գուլպա կթողնեմ։ Ջմրսե՛ս, հա՛-ա, աշխատիր չթրջել ոտներդ, Լուգանսկից կգրեմ քեզ։

Աննայի աչքերը մթանգամից դալկացան. հրաժեշտ տալով, նա խոստովանեց.

— Տեսնո՞ւմ ես, քեզանից հեռանալը շատ ցավալի է ինձ համար։ Սկզբում, երբ Աբրամսոնն՝ առաջարկեց մեկնել Լուգանսկ, ես ոգևորվեցի, իսկ այժմ զգում եմ, որ առանց քեզ այնտեղ դատարկություն կլինի։ Մի ավելորդ ապացույց, որ զգացմունքն այժմ տեղին չէ, կկոշկանդի... Էհ, ինչևիցե, մնաս բարով...

Ջուսպ, սառն հրաժեշտ տվին միմյանց, սակայն Բունչուկն այդ այնպես հասկացավ, ինչպես և պետք էր հասկանալ,— Աննան վախենում էր կորցնել իր վճռականության պաշարը։

Բունչուկը դուրս եկավ ճանապարհ դնելու։ Աննան գնաց անհանգստությամբ ուսերը ճոճելով, առանց ետ նայելու։ Բունչուկն ուզում էր կանչել նրան, բայց հրաժեշտի պահին մի

քիչ շեղ, մշուշված նրա հայացքում արտասովոր ու խոնավ փայլ նկատեց. բռնանալով իր կամքի վրա, շինծու զվարթությամբ գոչեց.

— Հուսով եմ, որ Ռոստովում կտեսնվենք։ Բարի ճանապարհ, Անյա։

Աննան ետ նայեց, արագացրեց քայլերը։

Նրա գնալուց հետո Բունչուկը սոսկալի թափով զգաց իր մենակությունը։ Նա փողոցից վերադարձավ սենյակ, բայց այնտեղից իսկույն դուրս թռավ,— կարծես վառվելու էր սենյակում... Այնտեղ յուրաքանչյուր առարկա հիշեցնում էր Աննայի ներկայությունը, նրա բույրն էր պահել ամեն մի իր,— և՛ Աննայի մոռացած թաշկինակը, և՛ զինվորի փամփշտակալը, և՛ պղնձե բաժակը,— այն ամենը, ինչին որ դիպել էին Աննայի ձեռքերը։

Բունչուկը մինչև երեկո թափառում էր ստանիցայում՝ ապրելով չտեսնված անհանգստություն և այնպիսի՛ մի զգացում, որ ասես իրենից ինչ-որ բան էին կտրել և ինքը ոչ մի կերպ չի ընտելանա իր նոր դրությանը։ Նա շփոթված նայում էր անծանոթ կարմիրգվարդիականների ու կազակների դեմքերին, ոմանց ճանաչում էր, շատերն էլ իրեն էին ճանաչում։

Մի տեղ նրան կանգնեցրեց մի կազակ, որի հետ ինքը ծառայել էր գերմանական ռազմաճակատում։ Նա Բունչուկին տարավ իր բնակարանը, հրավիրեց մասնակցել խաղին։ Սեղանի վրա «քսանմեկ» էին խաղում Պետրովի ջոկատի կարմիրգվարդիականները և նոր ժամանած մոկրոուսովյան նավաստիները։ Մխախոտի ծխի մեջ կորած, նրանք խաղաթղթերը շրմփացնում էին սեղանին, խշխշացնում Կերենսկու դրամանիշները, հայհոյանք թափում, գոռում մոլեգնաբար։ Բունչուկին քաշեց մաքուր օդը,— նա դուրս գնաց։

Նրան փրկեց այն, որ մի ժամից հետո հարկ եղավ մասնակցել հարձակման։

XVIII

Կալեդինի մահից հետո Նովոչերկասկ ստանիցան իշխանությունը հանձնեց Դոնի զորաց ռազմերթի ատաման գեներալ Նազարովին։ Փետրվարի 4-ին կազակական ներկայա-

ցուցիչների Ժողովին հավաքված դելեգատները նրան ընտրեցին զորաց փոխ-ատաման։ Ժողովին հավաքվել էր դելեգատների մի աննշան մասը, գլխավորապես հարավային օկրուգների,— Դոնի ստորին ավազանի ստանիցաների ներկայացուցիչները։ Ժողովը անվանվում էր Փոքր ժողով։ Նա իր աշխատանքը սկսեց փետրվարի 4-ին։ Նազարովը Ժողովի կողմից պաշտպանություն գտնելով, հայտարարեց 17-ից մինչև 55 տարեկանների մոբիլիզացիա, բայց կազակները դժկամությամբ էին զենք վերցնում, չնայելով, որ նրանց վրա սպառնալիքներ էին թափվում և զինված ջոկատներ էին ուղարկվում ստանիցաները՝ մոբիլիզացիա կատարելու համար։

Փոքր Ժողովի աշխատանքները սկսվելու օրը Ռումինական ռազմաճակատից, վորական ավագ Տացինի հրամանատարությամբ Նովոչերկասկ ժամանեց Դոնի 6-րդ, գեներալ Կրասնոշչյոկովի կազակական գունդը։ Եկատերինոսլավից սկսած՝ գունդը եկել էր կովելով, բոլշևիկյան օղակը ճեղքելով։ Նրան զգզել էին Պյատիխատկայի, Մեժևայի, Մատվեև Կուրգանի մոտ և ուրիշ շատ տեղերում, բայց, չնայելով դրան, նա ժամանեց համարյա լրիվ կազմով, բոլոր սպաների առկայությամբ։

Գնդի հանդիսավոր դիմավորում կազմակերպվեց։ Սարորնայա հրապարակում կայացած մաղթանքից հետո Նազարովը կազակներին շնորհակալություն հայտնեց, որ նրանք պահպանել էին դիսցիպլինան, փայլուն կարգ ու կանոնը, ու զենքով եկել էին Դոնը պաշտպանելու։

Ամսի 6-ին գունդը ուղարկվեց ռազմաճակատ, Սուլին կայարանի մերձակայքը, իսկ 8-ին Նովոչերկասկում սև լուրեր ստացվեցին. բոլշևիկյան ագիտացիայի ազդեցությամբ գունդը ինքնակամ հեռացել էր դիրքերից ու հրաժարվել զորաց կառավարությունը պաշտպանելուց։

Ժողովի աշխատանքը թույլ էր ընթանում։ Բոլորն էլ զգում էին, որ բոլշևիկների դեմ ուղղված պայքարը անհաջողությամբ է վերջանալու։ Նազարովը, այդ եռանդուն, դյուրարորբոք գեներալը նիստերի ժամանակ նստում էր գլուխը ձեռքին հենած, ափով ճակատը ծածկած, ասես տանջալից կերպով ինչ-որ մի բանի մասին էր մտածում։

Խորտակվում, ցնդում էին վերջին հույսերը։ Բոլշևիկյան

օղակը ճնշում, սեղմում էր մարդի կոկորդը։ Տիխորեցկայայի մոտ արդեն որոտում էին հրանոթները։ Լուրեր էին գալիս, որ Ցարիցինից դեպի Ռոստով է շարժվում այնտեղի բոլշևիկյան հրամանատար, խորունժի Ավտոնոմովը։

Ամսի 9-ի առավոտյան Ռոստով մտավ կապիտան Ջերնովի ջոկատը, որին նեղում էր Սիվերսը, թիկունքից նրան գնդակոծում էին Գնիլովսկայա ստանիցայի կազակները։ Խախուտ էր նրա դրությունը, ու Կոռնիլովը հասկացավ, որ Ռոստովում մնալն անվտանգ չէ, հենց այդ օրն էլ հրաման տվեց, որ իր ուժերը նահանջեն դեպի Օլգինսկայա ստանիցան։

Բանվորները ամբողջ օրը Տեմերնիկից կրակում էին կայարանի և սպայական պարեկների վրա։ Իրիկնադեմին Ռոստովից դուրս եկավ զորքերի խիտ շարասյունը։ Պարարտ, սև իժի նման այն ձգվեց Դոնի կամուրջի վրայով, գալարվելով սողաց դեպի Աքսայ։ Կիսատ-պռատ վաշտերը ծանր քայլում էին փխրուն, թաց ձյան վրա։ Երևում էին գիմնազիստների վերարկուները՝ պսպղուն կոճակներով ու ռեալիստների[1] կանաչավուն վերարկուները, բայց գերակշռում էին զինվորա-սպայական շինելները։ Դասակների հրամանատարները գնդապետներ ու կապիտաններ էին։ Շարքերում կային յունկերներ ու սպաներ,— պրապորշչիկներից սկսած մինչև գնդապետները։ Գումակի բազմաթիվ սայլերի հետևից գնում էին փախստականները,— տարեց, սոլիդ մարդիկ՝ քաղաքային վերարկուներով, կրկնակոշիկներով։ Կանայք փոքրիկ, արագ քայլերով գնում էին սայլերի կողքից, խրվում խորունկ ձյան մեջ, ճոճվում բարձր կրունկների վրա։

Կոռնիլովյան գնդի վաշտերից մեկի հետ գնում էր Եվգենի Լիստնիցկին։ Նրա կողքից՝ քսցած շարային սպա, շտաբս-կապիտան Ստարոբելսկին, Սուվորովյան Ֆանագորիական գրենադերական գնդի պորուչիկ Բոչագովը ու փոխգնդապետ Լովիշևը,— զառամյալ, անատամ, մարտական մի սպա, որ ամբողջովին ծածկված էր շիկակարմրավուն-ալեխառն մազերով, ասես նա մի ահագին աղվես լիներ։

Թանձրանում էր մթնշաղը։ Ցուրտը գոռում էր։ Դոնի

[1] Ռեալիստ — այստեղ՝ մինչռևոլյուցիոն ռեալական դպրոցի աշակերտ։ (Ս. Բ.)։

գնտաբերանից մի քիչ շոռ ու խոնավ քամի էր փչում։ Լիստնիցկին ըստ իր սովորության չխախտելով քայլերի համաչափությունը, ոտներով հունցում էր փխրուն ձյունը, զննում վաշտի կողքից անցնող մարդկանց դեմքերը։ Ճանապարհի կողքից անցան Կոռնիլովյան գնդի հրամանատար կապիտան Նեժենցևը և Պրեոբրաժենսկի գվարդիական գնդի նախկին հրամանատար գնդապետ Կուտեպովը կոճակներն արձակած շինելով և պիրկ ծոծրակին քաշած գլխարկով։

— Պարոն հրամանատար,— դիմեց Նեժենցևին փոխ-գնդապետ Լովիչևը՝ ճարպկությամբ խաղացնելով հրացանը։

Կուտեպովը շուռ տվեց լայնաճակատ, եզան դեմքը՝ լայնադիր, սև աչքերով ու ծայրատած, բահաձև մորուքով. նրա ուսի հետևից Նեժենցևը նայեց Լովիչևի կողմը։

— Հրամայեցեք, որ առաջին վաշտը արագացնի քայլերը։ Ախր այսպես գնալով կսառչենք, է՛։ Մեր ոտները թրջվել են, իսկ երթի ժամանակ այսպես քայլելը...

— Այլանդակությո՛ւն է,— շեփորեց ուժգնաձայն ու ճվճվան Ստարոբելսկին։

Նեժենցևն առանց պատասխանելու անցավ նրանց կողքից։ Նա ինչ-որ վիճում էր Կուտեպովի հետ։ Մի քիչ հետո նրանից առաջ անցավ Ալեքսեևը։ Կառապանը արագ քշում էր պարարտ, սևաթույր, պոչերը կապած ձիերը. սմբակների տակից ձյան փաթիլներ էին թռչում։ Սպիտակ, վերցից բեղերով ու բիզ-բիզ, նույնպես սպիտակ հոնքերով Ալեքսեևը, քամուց կարմրած, գլխարկը քաշել էր մինչև ականջները, նստել էր կառքի մեջքին կողքի ընկած, ցրտից պաշտպանվելու համար վերարկուի օձիքը թշին սեղմած։ Սպաները ժպտալով էին նայում բոլորին ծանոթ նրա դեմքին։

Բազմաթիվ ոտներից փխրունացած ճանապարհին տեղ-տեղ դեղին ջրափոսեր էին առաջանում։ Քայլերը ծանր էր, մարդկանց ոտները թուլանում էին, թացությունը թափանցում էր սապոգների մեջ։ Լիստնիցկին քայլելիս ականջ էր դնում առջևում տեղի ունեցող խոսակցություններին։ Մորթե բաճկոնով ու կազակական հասարակ փափախով մի սպա թավ ձայնով ասաց.

— Դուք տեսա՞ք, պորուչիկ. Պետական դումայի նախագահ Ռոձնյակոն, այդ ծերունին, ոտով է գնում։

— Ռուսաստանը Գողգոթա է բարձրանում...

Մեկը հաղալով ու խոխռալի խորխելով, փորձեց հեգնել.

— Գողգոթա... միայն այն տարբերությամբ, որ քարքարոտ ճանապարհի փոխարեն ձյուն է, այն էլ թաց, պլյուս գարշելի ցուրտը։

— Գիտե՞ք, պարոններ, թե որտեղ ենք գիշերելու։

— Եկատերինոդարում։

— Պրուսիայում մենք մի անգամ այսպիսի ճանապարհ անցանք...

— Մեզ ինչպե՞ս կընդունի Կուբանը... Ի՞նչ... Դե իհարկե, այստեղ ուրիշ է բանը։

— Նախախոտ ունե՞ք,— հարցրեց Լիստնիցկուն պորուչիկ Գոլովաչևը։

Նա հանեց կոշտ ձեռնոցը, սիգարեթ վերցրեց, շնորհակալություն հայտնեց, ու զինվորավարի խնչելով, շինելի փեշով սրբեց մատները։

— Դեմոկրատական շարժումնե՞ր եք յուրացնում, պորուչիկ... —թեթև ժպտաց փոխ-գնդապետ Լովիչևը։

— Ուզես-չուզես պիտի յուրացնես։ Հապա դուք... գուցե մի դյուժին թաշկինա՞կ եք վերցրել։

Լովիչևը չպատասխանեց։ Նրա կարմրավուն-ալեխառն բեղերից կանաչավուն սառցալեզվակներ էին կախվել։ Նա երբեմն քիթը վեր էր քաշում. դեմքը կնճռոտում ցրտից, որը քամուց բարձրացող շինելի տակից թափանցում էր նրա մարմնի մեջ։

«Ա՛յ քեզ Ռուսաստանի սերուցքը»,— մտածում էր Լիստնիցկին՝ թունդ կարեկցությամբ դիտելով զորասյան շարքերն ու գլուխը, որ ծուռումուռ շարժվում էր ճանապարհով։

Սրարշավ անցան մի քանի ձիավորներ, նրանց մեջ, Դոնի բարձրամարմին մի նժույգի վրա — Կոռնիլովը։ Նրա բացկանաչ, կողքի շեղադիր գրպաններով կիսամուշտակը ու սպիտակ փափախը երկար ժամանակ երևում էին ու չքանում։ Սպայական գումարտակները բարձրաձայն, թնդալից ուռայով էին ուղեկցում նրան։

— Այս բոլորը ոչի՛նչ, միայն թե ընտանիքս...— Լովիչևը ծերունու պես տնքաց, կողքից նայեց Լիստնիցկու աչքերին, ասես համակրանք փնտրելով.— Ընտանիքս մնացել է

Սմոլենսկում...— կրկնեց նա.— կինս ու աղջիկս։ Մենդյան տոներին լրացավ աղջկաս տասնյոթ տարին... Ի՞նչ կասեք, հը՞, յասավուլ։

— Հը՛-ը՛-մ...

— Դուք է՞լ եք ընտանիքավոր։ Նովոչերկասկի՞ց եք։

— Ո՛չ, ես Դոնեցի օկրուգից եմ։ Հայրս է մնացել այնտեղ։

— Չգիտեմ նրանց ինչ կպատահի... Առանց ինձ ի՞նչպես պիտի ապրեն,— շարունակեց Լովիչևը։

Ստարոբելսկին ջղայնորեն ընդհատեց նրան.

— Բոլորն էլ ընտանիքներ են թողել։ Չեմ հասկանում, թե ինչու եք տրտնջում, փոխ-գնդապետ։ Ջարմանալի՞ մարդիկ։ Ռոստովից դուրս եկան թե չէ...

— Ստարոբե՛լսկի, Պյոտր Պետրովիչ, դուք եղե՞լ եք Տագանրոգի մարտում,— հետևից, շարքի վրայից հարցրեց մեկը։

Ստարոբելսկին շուռ տվեց բարկացած դեմքը, մռայլ ժպտաց։

— Ա՛-ա-ա... Վլադիմիր Գյորգիևիչ, դո՞ւք ինչպես եք ընկել մեր դասակը։ Տեղափոխվե՞լ եք։ Ո՞ւմ հետ եք գժտվել։ Ըհը՛մ... դե, այդ հասկանալի է... Դուք Տագանրոգի մասի՞ն եք հարցնում։ Այո, եղել եմ... ի՞նչ կա որ։ Միանգամայն ճիշտ է... սպանեցին նրան։

Լիստնիցկին անուշադիր ականջ դնելով խոսակցությանը, հիշեց իր մեկնումը Ցագոդնոյից, հիշեց հորը, Ակսինյային։ Նրան նեղում էր սրտում մշուշված թախիծը։ Նա թույլ էր քայլում, նայում էր առջևում ճոճվող՝ հրացանների փողերին, որոնց ծայրերին սվիններ էին ամրացված, նայում էր փափախներով, հովարավոր գլխարկներով ու բաշլուղներով ծածկված գլուխներին, որոնք օրորվում էին քայլերի ռիթմով, ու մտածում էր.

«Ինչպես ես, այնպես էլ արտաքսման ենթարկված այս հինգ հազարից յուրաքանչյուր մեկը այժմ ատելությամբ և անսահման ցասումով է լցված։ Սրիկաները Ռուսաստանից դուրս շպրտեցին, ու մտածում են այստեղ էլ մեզ ոտնատակ անել։ Տեսնե՛նք... Կոռնիլովը մեզ Մոսկվա կհասցնի»։

Այդ րոպեին նա վերհիշեց Կոռնիլովի ժամանումը Մոսկվա ու բերկրանքով անցավ այն օրվա հուշերին։

Մոտիկ տեղից, հետևից, հավանորեն վաշտի թիկունքից գալիս էր մարտկոցը։ Փնչում էին ձիերը, գոգռում հրետասայլերը, գալիս էր նույնիսկ ձիերի քրտնքի հոտը։ Լիստնիցկին իսկույն զգաց այդ ծանոթ, հուզիչ հոտը, շուռ տվեց գլուխը. առջևի ձիավարը, երիտասարդ մի պրապորշչիկ, նայեց նրան ու ժպտաց՝ ինչպես ժպտում են ծանոթին։

Մինչև մարտի 11-ը Կամավորական բանակը կենտրոնացվեց Օլգինսկայա ստանիցայի շրջանում։ Կոռնիլովը չէր շտապում այնտեղից դուրս գալ,— սպասում էր, որ Դոնի Զորաց ռազմերթի ատաման գեներալ Պոպովը ժամանի Օլգինսկայա։ Պոպովը Նովոչերկասկից գնացել էր անդրդոնյան տափաստաններն իր ջոկատով, որն ուներ մոտ 1600 հեծյալ, 5 հրանոթ և 40 գնդացիր։

13-ի առավոտյան Պոպովը իր շտաբի պետ գնդապետ Սիդորինի և ուղեկցորդ մի քանի կազակ սպաների ուղեկցությամբ ժամանեց Օլգինսկայա։

Հրապարակում, Կոռնիլովի գրաված տան մոտ նա կանգնեցրեց ձին. բռնելով դաշից, ոտը դժվարությամբ անցկացրեց թամքի վրայից։ Նրան օգնեց վրա հասած բանբերը,— սև քյաքուլավոր, երիտասարդ մի կազակ թուխ դեմքով և կիվիվի աչքերի նման սուր աչքերով։ Պոպովը սանձը գցեց նրան, ծանրաքայլ գնաց դեպի արտաքին սանդուղքը։ Սիդորինը և սպաները իջան ձիերից ու հետևեցին նրան։ Բանբերները ձիերը տարան բակ։ Մինչդեռ բանբերներից մեկը, տարեց, ծուռոտանի մի մարդ, կերի տոպրակներ էր կախում ձիերի գլուխներից, մյուսը, սև քյաքուլավորը, որ կիվիվի էր նման, արդեն ծանոթացավ տանտիրոջ սպասուհու հետ։ Նա ինչ-որ անհեթեթ բան ասաց սպասուհուն. վերջինս, որ կարմրաթուշ մի աղջիկ էր կոկետաբար կապած լաչակով ու բոբիկ ոտներին հագած խոր կրկնակոշիկներով, ծիծաղեց ու նրա կողքից սայթաքելով անցավ հալված ձյան միջից դեպի մարագը։

Վեհատեսիլ, տարեց Պոպովը մտավ տուն։ Նախասենյակում շինելը գցեց ժիր բանբերի թևերին, մտրակը կախեց կախարանից, երկար ու զիլ խնչեց։ Բանբերը դեպի դահլիճ

ուղեկցեց նրան ու Սիդորինին, որը քայլելիս կոկում էր մազերը։

Խորհրդակցության հրավիրված գեներալներն արդեն հավաքվել էին։ Կոռնիլովը նստել էր սեղանի մոտ, կռթնել փռված քարտեզին. նրա աջ կողմում տեղավորվել էր ալեհեր, նիհար, ուղղադիր իրանով ու նոր սափրված Ալեքսեևը։ Դենիկինը փայլեցնելով խելացի, ծակող աչքերը, խոսում էր Ռոմանովսկու հետ։ Լուկոմսկին, որ հեռավոր նմանություն ուներ Դենիկինի հետ, դանդաղ քայլում էր սենյակում, տնտղում մորուքը։ Մարկովը կանգնել էր բակի պատուհանի մոտ՝ դիտելով, թե ինչպես բանբեր կազակները ձիերի մոտ դես ու դեն են քայլում ու ծիծաղելով քչփչում սպասուհի աղջկա հետ։

Եկվորները բարևեցին ու մոտեցան սեղանին։ Ալեքսեևը մի քանի աննշան հարցեր տվեց ճանապարհի և Նովոչերկասկը դատարկելու մասին։ Ներս մտավ Կուտեպովը, նրա հետ՝ մի քանի շարային սպաներ, որոնք Կոռնիլովի կողմից հրավիրված էին խորհրդակցության։

Դեմառդեմ նայելով Պոպովին, որ նստել էր հանգիստ և ինքնավստահ, Կոռնիլովը հարցրեց.

— Ասացեք, գեներալ, ի՞նչ քանակի է ձեր ջոկատը։

— Հազար հինգ հարյուր հեծյալ, մի մարտկոց, քառասուն գնդացիր՝ դրանց անձնակազմով։

— Այն հանգամանքները, որոնք Կամավորական բանակին ստիպեցին հեռանալ Ռոստովից, հայտնի են ձեզ։ Երեկ մեզ մոտ խորհրդակցություն եղավ։ Որոշվեց գնալ Կուբան, դեպի Եկատերինոդար, որի շրջակայքում գործում են կամավորական ջոկատները։ Մենք կշարժվենք այս երթուղով...— Կոռնիլովը մատիտի չսրած ծայրը տարավ քարտեզի վրայով, ավելի արագ խոսեց.— Ճանապարհին մեր կողմը կգրավենք Կուբանի կազակությանը, կկոտրենք այն փոքրաթիվ, անկազմակերպ ու անմարտունակ կարմիրգվարդիական ջոկատները, որոնք կփորձեն մեր շարժման դեմ խոչընդոտներ հարուցել։— Կոռնիլովը նկատեց, որ Պոպովը կկոցված աչքերով մի կողմ է նայում, ու այսպես վերջացրեց իր խոսքը.— Մենք ձեզ առաջարկում ենք ձեր ջոկատով միանալ Կամավորական բանակին և մեզ հետ միասին գնալ դեպի Եկատերինոդար։ Ուժերի մասնատումը հակառակ է մեր շահերին։

— Ես չեմ կարող այդ անել,— վճռականորեն ու կտրուկ հայտարարեց Պոպովը։

Ալեքսեևը մի քիչ թեքվեց նրա կողմը։

— Ինչո՞ւ, թույլ տվեք հարցնել։

— Որովհետև ես չեմ կարող թողնել Դոնի մարզի տերիտորիան ու գնալ ինչ-որ վայրեր, դեպի Կուբան։ Հյուսիսից Դոնով պաշտպանված, մենք ձմեռանոցների[1] շրջանում հետամուտ կլինենք իրադարձություններին։ Հազիվ թե հակառակորդը ակտիվ գործողությունների դիմի, որովհետև վաղը-մյուս օրը կսկսվի հալչոցը և ոչ միայն հրետանին, այլև հեծելազորն էլ չի կարողանա անցնել Դոնը, իսկ ձմեռանոցների շրջանից, որը միանգամայն ապահովված է կերով և հացով, մենք ամեն ժամանակ և ամեն մի ուղղությամբ կարող ենք պարտիզանական գործողություններ ծավալել։

Պոպովը ծանրակշիռ համոզվածությամբ այնպիսի փաստարկներ էր բերում, որոնք անընդունելի էին դարձնում Կոռնիլովի առաջարկը։ Նա շունչ առավ, ու տեսնելով, որ Կոռնիլովն ուզում է ինչ-որ բան ասել, կամակորությամբ թափահարեց գլուխը.

— Թույլ տվեք վերջացնել... Բացի դրանից, կա նաև խիստ կարևոր մի գործոն, և մեր հրամանատարությունը դա հաշվի է առնում. այդ մեր կազակների տրամադրությունն է.— Պոպովը պարզեց մսակալած, սպիտակ ձեռքը, որի ցուցամատի փափկության մեջ թաղվել էր ոսկե մատանին. ձայնը մի քիչ բարձրացնելով, նայելով բոլորին, շարունակեց.— Եթե մենք գնանք Կուբան, ջոկատի քայքայման վտանգ կրստեղծվի։ Կազակները կարող են չգնալ։ Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ իմ ջոկատի մշտական և առավելապես հաստատուն կոնտինգենտը կազակներն են, իսկ նրանք բարոյապես ամենևին էլ այնպես կայուն չեն, ինչպես... թեկուզ հենց ձեր զորամասերը։ Նրանք ուղղակի անգիտակից են։ Չեն գնա, պրծավ գնաց։ Իսկ ես չեմ կարող ամբողջ ջոկատը կորց-

[1] Ձմեռանոցներ — ձիաբուծական շրջանների այն խուտորները, որտեղ ձմեռում էին ձիերի հետ միասին։ (Ս. Թ.)։

նելու ռիսկ անել.— կտրուկ ասաց Պոպովը ու նորից ընդհատեց Կոռնիլովին.— ներողություն եմ խնդրում, ես ձեզ հայտնեցի մեր որոշումը և համարձակվում եմ հավատացնել ձեզ, որ մենք անկարող ենք այն փոխել։ Հասկանալի է, որ ուժերի մասնատումը հակառակ է մեր շահերին, բայց ստեղծված դրությունից մի ելք կա։ Ես կարծում եմ, որ ելնելով իմ արտահայտած այս նկատառումներից, ավելի խելացի բան կլիներ, եթե Կամավորական բանակը գնար ոչ թե Կուբան,— Կուբանի կազակության տրամադրությունները քիչ անհանգստություն չեն պատճառում ինձ,— այլ Դոնի ջոկատի հետ գնար Անդրդոնյան տափաստանները։ Այնտեղ նա, օգտվելով դաղարից, կկազդուրվի, գարնանը կհամալրվի Ռուսաստանից եկած կամավորների նոր կադրերով...

— Ո՛չ,— բացականչեց Կոռնիլովը, որ դեռ երեկ կողմնակից էր Անդրդոնյան տափաստանները գնալուն և համառորեն վիճում էր Ալեքսեևի հակառակ կարծիքի դեմ,— անիմաստ է գնալ ձմեռանոցները։ Մենք մոտ վեց հազար մարդ ենք...

— Եթե հարցը վերաբերում է պարենին, ապա համարձակվում եմ հավատացնել ձեզ, ձերդ բարձր գերազանցություն, որ ձմեռանոցների շրջանը ամենացանկալի վայրն է։ Այնուհանդերձ դուք այնտեղ կարող եք ձիեր վերցնել մասնավոր ձիաբուծներից և բանակի մի մասը ձի նստեցնել։ Դաշտային մանևրային պատերազմ մղելու համար դուք նոր շանսեր կունենաք։ Հեծելազորն անհրաժեշտ է ձեզ, իսկ Կամավորական բանակը դրանով հարուստ չէ։

Կոռնիլովը, որ այդ օրը առանձնապես սիրալիր էր Ալեքսեևի նկատմամբ, նայեց նրան։ Հավանորեն նա տատանվում էր մեկ կամ մյուս ուղղությունն ընտրելու մեջ, պաշտպանություն էր սպասում ուրիշի հեղինակությունից։ Ալեքսեևին լսեցին մեծ ուշադրությամբ։ Ներ գեներալը, որ սովոր էր խնդիրները լուծել կարճ խոսքով, սպառիչ կերպով, մի քանի սեղմ ֆրազներով արտահայտվեց դեպի Եկատերինոդար արշավելու օգտին։

— Տվյալ ուղղությամբ մեզ համար առավելապես հեշտ կլինի ճեղքել բոլշևիկյան օղակը ու միանալ Եկատերինոդարի մոտ գործող ջոկատին,— վերջացրեց նա։

— Իսկ եթե այդ չհաջողվի՞, Միխայիլ Վասիլևիչ,— զգուշությամբ հարցրեց Լուկոմսկին։

Ալեքսեևը ծամծմեց շրթունքները, ձեռքը տարավ քարտեզի վրայով։

— Նույնիսկ եթե անհաջողություն լինի, մենք հնարավորություն կունենանք հասնել մինչև Կովկասյան լեռները և ցրել բանակը։

Նրան պաշտպանեց Ռոմանովսկին։ Մարկովը մի քանի տաք խոսք ասաց։ Կարծես թե ոչինչ էլ չկար հակադրելու Ալեքսեևի ծանրակշիռ փաստարկներին, բայց Լուկոմսկին խոսք վերցրեց, հավաստարեցրեց կշեռքը.

— Ես պաշտպանում եմ գեներալ Պոպովի առաջարկը,— հայտարարեց նա՝ դանդաղ արտասանելով բառերը,— Կուբան գնալը կապված է մեծ դժվարությունների հետ, որոնք այստեղ հաշվի առնել հնարավոր չէ։ Ամենից առաջ մենք երկու անգամ անցնելու ենք երկաթուղին...

Խորհրդակցության բոլոր մասնակիցների հայացքները սահեցին քարտեզի վրա, նրա մատի ուղղությամբ։ Լուկոմսկին կտրուկ տոնով շարունակեց.

Բոլշևիկները չեն զլանա պատշաճապես դիմավորել մեզ,— նրանք գործի կդնեն զրահապատ գնացքները։ Մեզ մոտ կան ծանր զումակ և բազմաթիվ վիրավորներ. մենք չենք կարող դրանց թողնել։ Այդ ամենը չափազանց կծանրաբեռնի բանակը և խոչընդոտ կհանդիսանա նրա ամենաարագ ընթացքին։ Այնուհետև, ինձ համար անհասկանալի է, թե որտեղի՞ց է առաջացել այն վստահությունը, որ Կուբանի կազակությունը դեպի մեզ բարեկամաբար է տրամադրված։ Բոլշևիկների իշխանությունից իբր թե նեղվող Դոնի կազակության օրինակով մենք պետք է մեծագույն զգուշությամբ և առողջ հոռետեսության խոշոր դոզայով վերաբերվենք այդպիսի լուրերին։ Կուբանցիները տառապում են բոլշևիկյան նույն տրախոմայով, որը բերել են առաջվա ռուսական բանակից... նրանք կարող են թշնամաբար տրամադրված լինել։ Ի վերջո պետք է կրկնեմ, որ իմ կարծիքով պետք է գնալ դեպի արևելք, տափաստանները, և ուժեր կուտակելով, այնտեղից սպառնալ բոլշևիկներին։

Իր գեներալների մեծամասնության կողմից պաշտպա-

նությունն գտնելով, Կոռնիլովը որոշեց գնալ Վելիկոկնյաժեսկայայի արևմտյան կողմից, երթի ժամանակ բանակի ապաշարքային մասը համալրել ձիերով և արդեն այնտեղից շուռ գալ դեպի Կուբան։ Վերջացնելով խորհրդակցությունը, նա մի քանի ֆրազներ փոխանակեց Պոպովի հետ, սառն հրաժեշտ տվեց նրան ու գնաց իր սենյակը։ Նրան հետևեց Ալեքսեևը։

Դոնի ջոկատի շտաբապետ գնդապետ Սիդորինը, զնգացնելով շպորները, դուրս ելավ, հյութալի, ուրախ ձայն տվեց բանբերներին.

— Բերե՛լ ձիերը։

Երիտասարդ, շիկաբեղ կազակական մի հարյուրապետ թուրը վեր պահած ու անցնելով ջրափոսերի միջով, մոտեցավ մուտքի սանդուղքին։ Նա կանգ առավ ստորին աստիճանի մոտ, շշնջալով հարցրեց.

— Ի՞նչ եղավ, պարոն գնդապետ։

— Վատ չէ՛,— աշխույժ ու կամացուկ պատասխանեց Սիդորինը,— մեր գեներալը հրաժարվեց Կուբան գնալուց։ Հիմա մեկնում ենք։ Դուք պատրա՞ստ եք, Իզվարին։

— Այո, բերում են ձիերը։

Բանբերները ձիերին նստած, բերում էին դրանք։ Սև քյաքուլավոր, կիվիվի նման բանբերը նայում էր իր ընկերոջը։

— Հը՛, սիրո՞ն է,— փոթկալով հարցրեց նա։

Տարիքավորը զուսպ ժպտաց։

— Ոնց որ ձիու քոսը։

— Բա որ ժամանակ լիներ, կկանչե՞ր, հը՞։

— Չե՛ռ քաշի, տո, սարսաղ։ Հիմի հո մեծ պասն է։

Իզվարինը, Գրիգորի Մելեխովի նախկին պաշտոնակիցը, թառավ գավակը կախ, ամբողջ ճակատը և ռունգները սպիտակ իր ձիու վրա, հրամայեց բանբերներին.

— Դուրս եկեք փողոց։

Պոպովն ու Սիդորինը գեներալներից ոմանց հրաժեշտ տալով, իջան սանդուղքից։ Բանբերներից մեկը բռնեց ձիուց, գեներալի ոտը դրեց ասպանդակին։ Թափահարելով կազակական սովորական մտրակը, Պոպովը ձին յորդա տվեց, նրա հետևից, ասպանդակների վրա կիսականգնած ու մի քիչ առաջ թեքված, սլացան բանբեր կազակները, Սիդորինն ու ստաները։

Մելեխինսկայա ստանիցայում, ուր ժամանեց Կամավորական բանակը երկու օրվա ճանապարհ անցնելուց հետո, Կոռնիլովը լրացուցիչ տեղեկություններ ստացավ ձմեռանոցների շրջանի մասին։ Տեղեկությունները բացասական բնույթ ունեին։ Հավաքելով շարային զորամասերի հրամանատարներին, Կոռնիլովը հայտարարեց Կուբան գնալու մասին ընդունված որոշումը։

Պոպովի մոտ սուրհանդակ ուղարկվեց, որի միջոցով երկրորդ առաջարկն էր արվում միանալու մասին։ Սուրհանդակապան Ստարո-Իվանովսկի մերձակայքում հասավ բանակին։ Պոպովից նրա բերած պատասխանը նույնն էր. Պոպովը քաղաքավարի ու սառն տոնով հրաժարվում էր առաջարկն ընդունելուց, գրում էր, որ իր որոշումը չի կարող փոխվել, և ինքն առայժմ մնում է Սալսկի օկրուգում։

XIX

Գոլուբևի ջոկատի հետ, որը շուրջանակի ճանապարհով գնում էր Նովոչերկասկը գրավելու, մեկնեց նաև Բունչուկը։ Փետրվարի 10-ին նրանք դուրս եկան Շախտնայայից, անցան Ռազդորսկայա ստանիցան, գիշերամտին արդեն հասան Մելիխովսկայա։ Հետևյալ օրվա լուսաբացին մեկնեցին ստանիցայից։

Գոլուբևն արագ երթով էր տանում ջոկատը։ Առջևում երևում էր նրա վայելչակազմ կերպարանքը. նա անհամբերությամբ մտրակում էր ձիու գավակը։ Գիշերով անցան Բեսսերգենևսկայան, ձիերին մի քիչ հանգիստ տվին, ու նորից անաստղ գիշերվա մթնում շարժվեցին ձիավորները, ձիերի սմբակների տակ ճքճքում էր սայլուղու բարակ սառույցը։

Կրիվյանսկու մոտ խոտորվեցին ճանապարհից, բայց խկույն գտան այն։ Երբ մտան Կրիվյանսկայա, արշալույսը բացվեց։ Ստանիցայի փողոցները դեռ դատարկ էին։ Փոքրիկ հրապարակի, ջրհորի մոտ մի ծերունի կազակ տաշտի մեջ սառույց էր շարդում։ Գոլուբևը ձին քշեց-մոտեցավ նրան, ջոկատը կանգ առավ։

— Բարև, ծերուկ։

Կազակը թաթման հագած ձեռքը դանդաղ տարավ փափախին, անբարյացակամ պատասխանեց։

— Բարև ձեզ։

— Էհ, ի՞նչ կա, պապի, ձեր ստանիցայի կազակները Նովոչերկա՞սկ են գնացել, հա՞։ Ձեզ մոտ մոբիլիզացիա՞ է եղել։

Մերունին շտապ բարձրացրեց կացինը, առանց պատասխանելու գնաց դեպի դարբասը։

— Մեկնե՛լ,— ետ դառնալով ու հայհոյելով բղավեց Գոլուբևը։

Այդ օրը զորաց Փոքր ժողովը պատրաստվում էր տեղափոխվել Կոնստանտինովսկայա ստանիցան։ Դոնի զորաց ռազմերթի նոր ատամանը՝ գեներալ Պոպովը, մայրաքաղաքից արդեն դուրս էր տարել զինված ուժերը, փոխադրել զորական արժեքավոր գույքը։ Առավոտյան տեղեկություններ էին ստացվել, որ Գոլուբևը Մելիխովսկայայից դալիս է դեպի Բեսսերգենևսկայա։ Ժողովը յասավուլ Սիվոլորովին ուղարկեց Նովոչերկասկի հանձնման պայմանների մասին Գոլուբևի հետ բանակցություններ վարելու։ Այնուհետև Գոլուբևի հեծյալները դիմադրության չհանդիպելով, ներխուժեցին Նովոչերկասկ։ Գոլուբովն ինքը քրտնած — փրփրակալած ձիով, կազակների հոծ խմբի ուղեկցությամբ մոտեցավ Ժողովի շենքին։ Շքադռան մոտ խմբվել էին մի քանի պարապ-սարապ մարդիկ, կանգնել էր բանները, որը թամբած ձիով սպասում էր Նազարովին։

Բունչուկը թռավ ձիուց, վերցրեց ձեռքի գնդացիրը։ Գոլուբևի ու մյուս կազակների բազմության հետ մտավ ժողովի շենքը։ Լսելով բացվող դռան ձայնը, դելեգատները ընդարձակ դահլիճից շուռ տվին գլուխները, թունդ սփրթնեցին նրանց դեմքերը։

— Կանգնե՛ք,— լարվածորեն, ասես զորատեսի պահին հրամայեց Գոլուբևը, ու կազակներով շրջապատված, շտապելուց սայթաքելով, քայլեց դեպի նախագահության սեղանը։

Ժողովի անդամները լսելով այդ հրամայական ձայնը, գռացնելով աթոռները, ոտքի ելան. միայն Նազարովը մնաց իր տեղում նստած։

— Ի՞նչպես եք համարձակվում ընդհատել ժողովի նիստը,— զրնգաց նրա ցասկոտ ձայնը։

— Դուք ձերբակալված եք. լռե՛լ։— Գոլուբևը կարմրատակեց, վազելավազ մոտեցավ Նազարովին, սրա գեներալական համազգեստի ուսից պոկեց ուսադիրը, խռպոտ ձայնով գոռաց.— Կանգնի՛ր, ասում եմ քեզ։ Վերցրե՛ք սրան... է՛յ... քեզ չե՞մ ասում... Տխմա՛ր...

Բունչուկը դռան մոտ տեղավորում էր գնդացիրը։ Ժողովի անդամները խռնվում էին ոչխարի հոտի նման։ Կազակները Բունչուկի կողքից քարշ տալով տարան Նազարովին, ժողովի նախագահ, վախից բոլորովին սփրթնած Վոլոշինովին ու էլի մի քանի մարդկանց։

Թուրը շրխկացնելով, նրանց հետևից գնում էր Գոլուբևը՝ մթնած, կարմիր բծերով պատած դեմքով։ Ժողովի մի ինչոր անդամ բռնեց նրա թևքից։

— Պարոն գնդապետ, ձերդ ողորմածություն, հապա մենք ի՞նչ պիտի անենք։

— Մենք ազա՞տ ենք,— նրա ուսի հետևից դուրս ցցվեց մի այլ անդամի դողդոջուն, արագաշարժ գլուխը։

— Ռա՛դ եղեք, է՛,— խուսափելով բղավեց Գոլուբևը, ու Բունչուկի կողքից անցնելիս դարձավ ժողովի անդամների կողմը, ոտը խփեց հատակին.— Ջքվեցեք, ես ձեր... գլուխ չունեմ ձեզ հետ։ Դեհ...

Նրա խռպոտ, հողմահար ձայնը դեռ երկար դմբդմբում էր դահլիճում։

Բունչուկը գիշերեց մոր մոտ, իսկ մյուս օրը, երբ Նովոչերկասկում լուր ստացվեց, թե Սիվերսը գրավել է Ռոստովը, նա Գոլուբևից թույլտվություն ստացավ ու առավոտյան ձիով մեկնեց այնտեղ։

Երկու օր աշխատեց շտաբում, Սիվերսի մոտ, որը նրան ճանաչում էր դեռ «Օկոպնայա պրավդայի» խմբագիր լինելու ժամանակից, հետո գնաց Ռևկոմ, ուր չկար ոչ Աբրամսոնը, ոչ էլ Աննան։ Սիվերսի շտաբին կից կազմվել էր հեղափոխական տրիբունալ, որը խիստ դատ ու դատաստան էր տեսնում բռնված սպիտակգվարդիականների դեմ։ Բունչուկը աշխատեց մի օր, սպասարկելով դատարանի կարիքներին, մասնակցելով շուրջկալներին, իսկ հետևյալ օրը, էլ հույս չունենալով

Աննային տեսնելու, վազ տվեց Ռևկոմ և դեռ սանդուղքից լսեց Աննայի ծանոթ ձայնը։ Սիրտը ուժգին բաբախեց, երբ նա, քայլերը դանդաղեցնելով, մտավ երկրորդ սենյակը, որտեղից լսվում էին ինչ-որ մարդկանց ձայներ և Աննայի ծիծաղը։

Սենյակում, ուր առաջ տեղավորված էր պարետությունը, մշուշվել էր ծխախոտի ծուխը։ Մի անկյունում, կանացի արդուզարդի մի փոքրիկ սեղանի վրա ինչ-որ բան էր գրում առանց կոճակների շինել հագած մի մարդ՝ ականջակալներն արձակած զինվորական փափախով, նրա շուրջը հավաքվել էին զինվորներ ու քաղաքացիներ՝ կիսամուշտակներով և վերարկուներով։ Նրանք փոքրիկ խմբերի բաժանված՝ ծխում, խոսում էին։ Պատուհանի մոտ, մեջքը դեպի դուռը կանգնել էր Աննան, պատուհանի գոգին, խաչմերուկ արած մատներով ծռված ոտի ծունկը բռնած, նստել էր Աբրամսոնը, նրա կողքին, գլուխը թեքած, կանգնել էր լատիշական կերպարանքով մի կարմիրգվարդիական։ Նա ծխում էր ու ինչ-որ բան պատմում,— ըստ երևույթին ծիծաղաշարժ բան. Աննան զրնգալի ծիծաղում էր գլուխը ետ տանելով, Աբրամսոնի դեմքը կնճռոտվում էր ժպտալուց, մոտիկ կանգնածները լսում էին, ժպտում, իսկ կարմիրգվարդիականի լայն դեմքի վրա, ասես կացնով խազած յուրաքանչյուր դիմագծի մեջ գաղտուկ ապրում էր այն, ինչ որ խելացի է, սուր և մի փոքր ցասկոտ։

Բունչուկը ձեռքը դրեց Աննայի ուսին։

— Բարև, Անյա։

Աննան ետ նայեց։ Նա շառագունեց մինչև պարանոցը, մինչև անրակները, աչքերում արցունքներ երևացին։

— Պա՜հ, այդ ո՞րտեղից։ Աբրամսոն, տես, է՛։ Ահա, կարծես նոր արծաթադրամ լինի, իսկ դու սրա համար անհանգստանում էիր,— վրա տվեց Աննան առանց աչքերը բարձրացնելու, և չկարողանալով հաղթահարել շփոթմունքը, գնաց դեպի դուռը։

Բունչուկը սեղմեց Աբրամսոնի տաք ձեռքը, նրա հետ մի քանի ֆրազ փոխանակեց, ու զգալով իր դեմքի հիմար, անսահմանորեն երջանիկ ժպիտը, չպատասխանելով Աբրամսոնի ինչ-որ հարցին (նա մինչև իսկ չհասկացավ հարցի իմաստը), մոտեցավ Աննային։ Վերջինս ուշքի եկավ, նրան

դիմավորեց ժպտալով և իր շփոթմունքի վրա մի քիչ բարկացած։

— է՛, նորից բարև։ Ի՞նչպես ես, առո՞ղջ ես։ Ե՞րբ ես եկել։ Նովոչերկասկի՞ց ես եկել։ Գոլուբևի ջոկատո՞ւմն էիր։ Ահա՛ թե ինչ... է՛, հետո՞։

Բունչուկը պատասխանում էր հարցերին, անթարթ, ծանր հայացքով զննում Աննային։ Վերջինիս պատասխան-նայվածքը բեկվում, մի կողմ էր սահում։

— Եկ մի բոպե դուրս գանք շենքից,— առաջարկեց Աննան։

Աբրամսոնը դիմեց նրանց։

— Շո՞ւտ կգաք։ Ես քեզ հետ գործ ունեմ, ընկեր Բունչուկ։ Մենք մտածում ենք քեզ օգտագործել մի աշխատանքի համար։

— Ես կգամ մի ժամից հետո։

Փողոցում Աննան ուղիղ ու մեղմակի նայեց Բունչուկի աչքերին, սրտնեղությամբ թափահարեց ձեռքը։

— Ի՛լյա, Իլյա, ի՛նչ վատ էր, որ ես շփոթվեցի... Կարծես փոքրիկ աղջիկ լինեի։ Այդ բացատրվում է, նախ, անակնկալով, երկրորդ, մեր անորոշ դրությամբ։ Էապես ասած՝ ովքե՞ր ենք ես ու դու։ Հովվերգական «հարս ու փեսա՞»։ Գիտե՞ս, մի անգամ Լուգանսկում Աբրամսոնն ինձ հարցնում է՝ «Դու ապրո՞ւմ ես Բունչուկի հետ»։ Ես հերքեցի, բայց նա խիստ դիտող տղա է ու չէր կարող չտեսնել այն, ինչ որ աչքի էր ընկնում։ Նա ոչինչ չասաց, բայց ես իր աչքերից հասկացա, որ ինձ չի հավատում։

— Պատմիր քո մասին, ի՞նչպես ես և ի՞նչ ես անում։

— Օ՜, մենք այնտեղ առաջ մղեցինք գործը։ Հավաքեցինք մի ամբողջ ջոկատ,— երկու հարյուր տասնմեկ մարդ։ Կազմակերպական ու քաղաքական աշխատանք կատարեցինք... է՛, մի՞թե կարելի է այդ բոլորը պատմել երկու խոսքով։ Ես դեռ չեմ կարողանում ուշքի գալ քեզ հանդիպելուց։ Դու ո՞րտեղ... ո՞րտեղ ես գիշերում,— ընդհատելով խոսակցությունը, հարցրեց Աննան։

— Այստեղ... ընկերոջս մոտ։

Բունչուկը շփոթվեց ստելուց. այդ գիշերները նա անց էր կացնում Սիվերսի շտաբի շենքում։

— Դու հենց այսօր կտեղափոխվես մեզ մոտ։ Հիշո՞ւմ ես, թե ես որտեղ էի ապրում։ Մի ժամանակ դու ինձ ճանապարհ էիր դնում։

— Կգտնեմ։ Բայց... չե՞մ նեղի քո ընտանիքին։

— Թո՛ղ, է՛, դու ոչ ոքի էլ չես նեղի և առհասարակ չխոսես այդ մասին։

Բունչուկը երեկոյան զինվորի լայն մախաղի մեջ հավաքելով իրերը, գնաց ծայրամասի այն փողոցը, որտեղ ապրում էր Աննան։ Աղյուսե մի փոքրիկ տան շեմքին նրան դիմավորեց մի պառավ։ Վերջինիս դեմքը մի քիչ հիշեցնում էր Աննային. աչքերի նույն կապտավուն-սև փայլը, մի քիչ ծուռ քիթը, միայն մաշկը կնճռոտ է ու հողագույն և փոս ընկած բերանը պառավություն է արտահայտում։

— Դո՞ւք եք Բունչուկը,— հարցրեց պառավը։

— Այո։

— Խնդրեմ, անցեք ներս։ Աղջիկս ինձ ասել է ձեր մասին։

Նա Բունչուկին տարավ մի փոքրիկ սենյակ, ցույց տվեց, թե որտեղ պիտի դնի իրերը, ռևմատիկորեն կծկված մատով մի շրջան գծեց.

— Դուք արդեն կապրեք այստեղ։ Այս մահճակալը ձերն է։

Նա խոսում էր հրեական յուրահատուկ ակցենտով։ Բացի նրանից, տանը կար անչափահաս մի աղջիկ,— նիհար, աչքերը խորունկ, ինչպես Աննայի աչքերը։

Մի քիչ հետո եկավ Աննան։ Նա իր հետ աղմուկ ու աշխուժություն բերեց։

— Մեզ մոտ ոչ ոք չի՞ եղել։ Բունչուկը չեկա՞վ։

Մայրը նրան ինչ-որ պատասխան տվեց մայրենի լեզվով, և Աննան ամուր, սահուն քայլվածքով մոտեցավ դռանը։

— Կարելի՞ է քեզ մոտ։

— Այո, այո՛։

Բունչուկը աթոռից վեր կենալով, գնաց ընդառաջ։

— Հը՛, ո՞նց է, տեղավորվեցի՞ր։

Աննան զոհ, ծիծաղկոտ հայացքով նայեց նրան, հարցրեց.

— Դու բան կերե՞լ ես։ Գնանք այնտեղ։

Վերնաշապկի թևքից բռնած, նրան տարավ առաջին սենյակը, ասաց.

— Սա իմ ընկերն է, մայրիկ,— ու ժպտաց,— դուք սրան չնեղացնեք։

— Է՛, ի՞նչ ես ասում, ո՞նց կարող է այդպիսի բան լինել... Նա մեր հյուրն է։

Գիշերը Ռոստովում հասունացած ակացիայի պատիճների նման ճքճքում էին կրակոցները։ Երբեմնակի տկտկում էր գնդացիրը, հետո ամեն ինչ լռում էր։ Ու, գիշերը, փետրվարյան վեհապանծ, սև գիշերը նորից լռությամբ էր պարուրում փողոցները։ Բունչուկն ու Աննան երկար նստեցին հյուրին հատկացված, խիստ մաքուր սենյակում։

— Այստեղ ես ու քույրիկս էինք քնում,— ասաց Աննան։— Տեսնո՞ւմ ես որքան համեստ է մեր բնակարանը, ասես այստեղ միանձնուհիներ են ապրում։ Ոչ էժան նկարներ, ոչ լուսանկարներ, ոչ մի բան, որը վայել կլիներ ինձ, իբրև գիմնազիստուհու։

— Ինչո՞վ էիք ապրում,— խոսակցության ժամանակ հարցրեց Բունչուկը։

Եվ Աննան ո՛չ առանց ներքին հպարտության պատասխանեց.

— Ես աշխատում էի Ասմոլովի ծխախոտագործարանում և դասեր էի տալիս։

— Իսկ հիմա՞։

— Մայրիկս կար է անում։ Նրանց երկուսին քիչ բան է հարկավոր։

Բունչուկը պատմեց Նովոչերկասկի գրավման, Զվերևոյի ու Կամենսկայայի մոտ եղած մարտերի մանրամասնությունները։ Աննան հաղորդեց իր տպավորությունները Լուգանսկում և Տագանրոգում կատարված աշխատանքի մասին։

Ժամի տասնմեկին, հենց որ մայրը հանգցրեց մյուս սենյակի լույսը, Աննան գնաց։

XX

Մարտ ամսին Բունչուկին ուղարկեցին Դոնի ռևկոմին կից հեղափոխական տրիբունալում աշխատելու։ Աշխատանքից ու անքուն գիշերներից հյուծված, դալուկ աչքերով, բարձրահասակ նախագահը նրան տարավ իր սենյակի պատուհանի

մոտ, ու մատներով ձեռքի ժամացույցը սրբելով (նա շապում էր նիստի), ասաց.

— Ո՞ր թվականից ես կուսակցության մեջ։ Հը՞մ, լավ է։ Դու, ուրեմն, մեզ մոտ պարետ կլինես։ Անցած գիշերը մենք մեր պարետին... կաշառակերության համար ուղարկեցինք «Դուխոնինի շտաբը»։ Իսկական սադիստ էր, այլանդակի մեկը, սրիկա,— այդպիսիները մեզ հարկավոր չեն։ Այդ աշխատանքը կեղտոտ է, բայց այստեղ էլ պետք է անխախտ պահպանել կուսակցության հանդեպ պատասխանատվության գիտակցությունը,— դու ինձ հասկացիր ինչպես հարկն է...— նա շեշտեց այս ֆրազը.— պահպանել մարդկայնությունը։ Մենք անհրաժեշտությունից դրդված, ֆիզիկապես ոչնչացնում ենք կոնտրռևոլյուցիոներներին, բայց չի կարելի դա կրկես դարձնել։ Դու հասկանո՞ւմ ես ինձ։ Շա՛տ լավ։ Գնա, ընդունիր գործերը։

Հենց այդ գիշեր Բունչուկը տասնվեց կարմիրգվարդիականների մասնակցությամբ քաղաքից երկու-երեք վերստ հեռու գնդակահարեց հինգ մարդ, որոնք դատապարտված էին գնդակահարության։ Նրանցից երկուսը Գնիլովսկայա ստանիցայի կազակներ էին, մնացածները՝ Ռոստովի բնակիչներ։

Գրեթե ամեն օր, կեսգիշերին բեռնատար ավտոմոբիլներով քաղաքից դուրս էին տանում դատապարտվածներին, հապճեպ կերպով փոսեր էին փորում նրանց հորելու համար. այդ աշխատանքին մասնակցում էին թե մահապարտները և թե կարմիրգվարդիականների մի մասը։ Բունչուկը շարք էր կանգնեցնում կարմիրգվարդիականներին, արտասանում թուչի ձայնի պես խուլ հնչող խոսքերը.

— Ռևոլյուցիայի թշնամիների վրա...— ու թափահարում էր նագանը,— կրա՛կ...

Մի շաբաթում նա նիհարեց ու սևացավ, ասես հողով ծածկվեց։ Աչքերը փոս ընկան, ջղայնորեն ցնցվող կոպերը չէին սքողում դրանց տարտամ ու թախծոտ փայլը։ Աննան միայն գիշերներն էր նրան տեսնում։ Նա աշխատում էր Ռևկոմում, ուշ էր տուն գալիս, բայց միշտ էլ սպասում էր, մինչև որ Բունչուկը պատուհանի ծանոթ թխկոցով հայտներ իր գալու մասին։

Մի անգամ Բունչուկը, ինչպես և միշտ, վերադարձավ կեսգիշերին։ Աննան բացեց դուռը, հարցրեց.

— Ընթրելո՞ւ ես։

Բունչուկը չպատասխանեց. հարբածի պես ճոճվելով, անցավ իր սենյակը և առանց շինելը, սապոգներն ու փափախը հանելու ընկավ մահճակալին։ Աննան մոտեցավ նրան, նայեց դեմքին. Բունչուկի աչքերը կպել-կկոցվել էին, բաց արած, ամուր ատամների վրա պսպղում էր լորձը, տիֆից թափվող նոսր մազերի մի թաց փունջ կպել էր ճակատին։

Աննան նստեց նրա կողքին։ Կարեկցությունն ու ցավը շանգռում էին Աննայի սիրտը։ Շշնջալով հարցրեց.

— Դու քեզ վա՞տ ես զգում, Իլյա։

Բունչուկը սեղմեց նրա ձեռքը, չքչքացրեց ատամները, շուռ եկավ դեպի պատը։ Այդպես էլ քնեց առանց մի բառ ասելու, իսկ քնի մեջ ինչ-որ քրթմնջում էր անհասկանալի ու լալագին, ուժ էր անում վեր կենալու։ Աննան անբացատրելի երկյուղից ցնցվելով ու սարսափով նկատեց, որ նա քնել էր կիսախուփ աչքերով, կոպերի տակից հիվանդագին փայլում էր ուռուցիկ սպիտակուցների դեղնությունը։

— Հեռացի՛ր այնտեղից,— առավոտյան խնդրեց Աննան,— ավելի լավ է գնա ռազմաճակատ։ Դու բոլորովին հյուծվել ես, Իլյա։ Քեզ կկործանի այդ աշխատանքը։

— Լռի՛ր...— գոռաց Բունչուկը՝ թարթելով կատաղությունից սպիտակած աչքերը։

— Մի՛ գոռա։ Ես քեզ վիրավորեցի՞։

Բունչուկը միանգամից հանգավ, ասես գոռոցով դուրս էր թափել կրծքում հավաքված կատաղությունը։ Հոգնածորեն դիտելով իր ձեռները, ասաց.

— Մարդկային գարշանքը ոչնչացնելը կեղտոտ գործ է։ Գնդակահարելը, գիտե՞ս, վնասակար է առողջության և հոգու համար... Տե՛ս, է՛...— առաջին անգամ նա այլանդակ հայհոյանք թափեց Աննայի ներկայությամբ,— կեղտոտ աշխատանքի են գնում կամ հիմարներն ու գազանները, կամ ֆանատիկոսները։ Բոլորն էլ ուզում են քայլել ծաղկած այգում, բայց ախր, սատանան նրանց տանի, նախքան ծաղիկներ ու ծառեր տնկելը պետք է մաքրել կեղտը։ Պետք է պարարտացնե՛լ։ Պետք է աղտոտե՛լ ձեռները,— նա բարձրացրեց

ձայնը, չնայելով, որ Աննան դեմքը շուռ էր տվել ու լռում էր...— Պետք է ոչնչացնել կեղտը, իսկ այդ գործից զզվո՛ւմ են...— արդեն բղավում էր Բունչուկը՝ բռունցքները խփելով սեղանին, արագ-արագ թարթելով արյունակալած աչքերը։

Աննայի մայրը դռնից ներս նայեց, և Բունչուկը ուշքի գալով, խոսեց ավելի կամաց.

— Ես չեմ հեռանա այս աշխատանքից։ Ես տեսնում եմ, խորապես զգում, որ օգուտ եմ բերում։ Կմաքրեմ կեղտը, կպարարտացնեմ հողը, որ ավելի բերրի լինի, արգավանդ լինի։ Երբևէ նրա վրա կշրջեն երջանիկ մարդիկ... Գուցե նրա վրա քայլի իմ որդին, որը չկա...— Նա ծիծաղեց կերկերուն և անուրախ.— Քանի՞-քանի այդ տեսակ իժեր... տզեր եմ գընդակահարել... Տիզը մի միջատ է, որը կպչում է մարմնին... Մի տասնյակ սպանած կլինեմ հենց այս ձեռներովս...— Բունչուկը պարզեց սեղմված, սևամազոտ, ուրուրի ոտների պես ճանկավոր ձեռները. դրանք ծնկներին խփելով, կամացուկ ասաց.— Է՛հ, չհանե՛մ, վառվել այնպես, որ կայծեր թռչեն, և ոչ թե մխալ... Միայն թե ես, ճիշտ է, հոգնել եմ... Մի քիչ էլ կմնամ ու կգնամ ռազմաճակատ... Դու իրավացի ես...

Աննան, որ լուռ լսում էր նրան, կամացուկ ասաց.

— Գնա ռազմաճակատ կամ ուրիշ աշխատանքի... Թո՛ղ այդ գործը, Իլյա, այլապես դու... խելքդ կթռցնես։

Բունչուկը մեջքը դարձրեց Աննայի կողմը, մատով թրփ-թրփացրեց պատուհանին։

— Ո՛չ, ես պինդ եմ... Դու չկարծես, թե երկաթե մարդիկ կան։ Մենք բոլորս էլ միևնույն նյութից ենք ձուլված... Կյանքում չկան այնպիսիները, որոնք չեն վախենում կռվից, և այնպիսիները, որոնք սպանելով մարդկանց, բարոյապես ընկճված չլինեն... Բայց սիրտս չի ցավում նրանց, ուսադիրներ կրողների համար... Նրանք գիտակից մարդիկ են, ինչպես նաև ես ու դու։ Բայց ահա երեկ հարկավոր եղավ ինն հոգու թվում գնդակահարել երեք կազակ... աշխատավորներ էին... Սկսեցի արձակել մեկի կապանքը...— Բունչուկի ձայնը դառնում էր ավելի խուլ, անլսելի, ասես նա հեռզհետն հեռանում էր.— շոշափեցի նրա ձեռքը, որ կարծես կոշիկի ներբան լիներ... կոշտ էր... ամբողջովին կոշտուկներով էր ծածկված... Ձեռքը սև էր... քերծվածքներով էր... Բշտոտ... Դե՛հ, ես գնամ,— նա միանգամից ընդհատեց իր պատմածը և Աննայի համար աննկատելի կերպով մաքրեց ժանդ ջղակծկումով, ասես մազե օղաթոկով բռնված կոկորդը։

Նա հագավ ոտնամանները, մի բաժակ կաթ խմեց, գնաց։ Աննան միջանցքում հասավ նրան։ Իր ձեռների մեջ երկար պահեց նրա ծանր, մազոտ ձեռքը, հետո այն սեղմեց իր բորբ թշին ու դուրս վազեց։

Եղանակը տաքանում էր։ Գարունը Ազովից թափանցում էր Դոնի գետաբազուկները։ Մարտի վերջին սկսեցին Ռոստով ժամանել ուկրաինական կարմիրգվարդիական ջոկատները, որոնց նեղում էին հայդամակները և գերմանացիները։ Քաղաքում սկսվեցին սպանությունները, կողոպուտները, անկարգ բռնագրավումները։ Ռևկոմը ստիպված եղավ զինաթափել վերջնականապես բարոյալքված մի քանի ջոկատ։ Ընդհարումներն ու հրաձգությունները չէին դադարում։ Նովոչերկասկի մերձակայքում գլուխ էին բարձրացնում կազակները։ Մարտ ամսին ստանիցաներում բարդիների բողբոջների նման ուռճանում էին հակասությունները կազակների և ոչ կազակ գյուղացիների միջև, տեղ-տեղ ապստամբություններ էին բռնկվում, կոնտրռևոլյուցիոն դավադրություններ էին հայտաբերվում։ Իսկ Ռոստովն ապրում էր հորդառատ, լիարյուն կյանքով. երեկոները Բոլշայա Սադովայա փողոցում շրջում էին զինվորների, նավաստիների, բանվորների բազմությունները։ Միտինգներ էին անում, արևածաղկի սերմ շրթում, թքում մայթերի կողքից հոսող առվակների մեջ, զվարճանում կանանց հետ։ Առաջվա պես էլի աշխատում էին, ուտում, խմում, քնում, մեռնում, երեխա ունենում, սիրում, ատում, շնչում ծովից փչող շոռ քամին, ապրում մեծ ու փոքր կրքերով տարված։ Փոթորկով հղի օրերը հուպ մոտենում էին Ռոստովին։ Զգացվում էր հալչող սևահողի, մոտալուտ մարտերի արյան հոտը։

Պայծառ, արևաշող մի օր Բունչուկը սովորականից շուտ վերադարձավ տուն և զարմացավ, տեսնելով, որ Աննան տանն է։

— Դու հո միշտ էլ ուշ ես գալիս, իսկ այսօր ի՞նչ է պատահել։

— Ես մի քիչ հիվանդ եմ,— ասաց Աննան։

Նա Բունչուկի հետ մտավ վերջինիս սենյակը։ Բունչուկը հանեց վերարկուն, բերկրալի, դողդոջ ժպիտով ասաց.

— Անյա, այսօրվանից տրիբունալում չեմ աշխատում։

— Ի՞նչ ես ասո՞ւմ։ Հապա քեզ ո՞ւր են ուղարկում։

— Ռևկոմ։ Այսօր խոսեցի Կրիվոշլիկովի հետ։ Նա խոստանում է ինձ որևէ օկրուգ ուղարկել։

Նրանք միասին ընթրեցին։ Բունչուկը պառկեց քնելու։ Հուզված լինելով, նա երկար ժամանակ չէր կարողանում քուն մտնել, ծխում էր, շուռ էր գալիս կոշտ դոշակի վրա, բերկրանքով շունչ էր առնում։ Նա մեծ գոհունակությամբ էր հեռանում տրիբունալից, որովհետև զգում էր, որ եթե մի քիչ էլ մնար, չէր դիմանա, կքայքայվեր։ Նա չորրորդ ծխախոտն էր ծխում, երբ լսեց դռան թեթև ճռնչոցը։ Բարձրացրեց գլուխը, տեսավ Աննային։ Վերջինս ոտաբոբիկ, շապկանց ներս մտավ, հուշիկ մոտեցավ նրա մահճակալին։ Լուսնի աղոտ, կանաչավուն լույսը պատուհանի փեղկի ճեղքից ընկավ Աննայի մերկ ուսերին։ Աննան կռացավ, տաք ձեռքը դրեց Բունչուկի շուրթերին։

— Տեղ տուր։ Ցայն չհանես...

Պառկեց Բունչուկի կողքին, ճակատից անհամբերությամբ ետ տարավ խաղողի ողկույզի պես ծանր հերափունջը, աչքերը շողացին մշուշվող, կապտավուն կայծերով, նա մի փոքր կոպիտ, ճնշվելով շշնջաց.

— Վաղը-մյուս օրը ես կարող եմ զրկվել քեզնից... Ուզում եմ քեզ սիրել ամբողջ թափով,— ու ծանր ցնցվեց ի՛ր իսկ վճռականությունից,— դեհ, շո՛ւտ։

Բունչուկը համբուրում էր նրան ու սարսափով, իր գիտակցությունը հոշոտող մեծ ամոթով զգում, որ ուժ չունի։

Նրա գլուխը ցնցվում էր, տանջալից կերպով բորբոքվում էին այտերը։ Աննան ետ քաշվեց, բարկությամբ հրեց նրան, զզվանքով ու գարշանքով, արհամարհանքով ու շնչասպառ հարցրեց.

— Դու... դու անո՞ւժ ես, թե՞... հիվանդ ես... օ-օ՜-օ, որքա՜ն գարշելի է դա... Թո՜ղ ինձ։

Բունչուկն այնպես սեղմեց նրա մատները, որ դրանք թույլ ճքացին, իր հայացքը մեխեց նրա լայնացած, աղոտ կերպով սևին տվող, թշնամական աչքերին, ու կմկմալով, հիվանդագին ցնցելով գլուխը, հարցրեց.

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ես նախատում։ Այո, ամբողջովին հյուծվել եմ... այժմ նույնիսկ դրա համար էլ անընդունակ եմ... Հիվանդ չեմ... հասկացիր, հասկացիր, քայքայված եմ... է-է՜-է-հե՜...

Բունչուկը խուլ մռնչաց, վեր թռավ մահճակալից, ծխեց։ Ասես ծեծված, երկար կուչ եկավ պատուհանի մոտ։

Աննան վեր կացավ, լուռ գրկեց նրան ու հանգիստ, մոր պես համբուրեց ճակատը։

Իսկ մի շաբաթից հետո Աննան նրա թևի տակ թաքցնելով հրակարմիր իր դեմքը, խոստովանեց.—

—... Կարծում էի, թե առաջ վատնել ես ուժդ... Չգիտեի, որ աշխատանքը բոլորովին մաշել է քեզ։

Եվ այնուհետև Բունչուկը երկար ժամանակ իր վրա զգում էր սիրածի ոչ միայն փայփայանքը, այլև նրա ջերմ, ծայրեծայր լեցուն մայրական հոգատարությունը։

Նրան չուղարկեցին շրջանները։ Պոդտյոլկովի պահանջով նա մնաց Ռոստովում։ Այդ ժամանակ Դոնի ռևկոմում եռում էր աշխատանքը, նա պատրաստվում էր սովետների մարզային համագումարին, Դոնի մյուս կողմում աշխուժացող կոնտրռևոլյուցիայի դեմ ուղղված գոտեմարտին։

XXI

Գետափնյա ուռենիների մոտ աղմկալից կուկռում էին գորտերը։ Արևն անցնում էր բլրակի հետևը։ Իրիկնային զովն էր իջնում Սետրակով խուտորի վրա։ Ցոր ճանապարհի վրա տներից ահագին, շեղակի ստվերներ էին ընկնում։ Փոշի բարձրացնելով, տափաստանից գալիս էր նախիրը։ Կազակուհիները ճիպոտներով քշում կովերը, վերադառնում էին արոտավայրից, նորություններ պատմում։ Ոտաբոբիկ և արդեն արևից թուխ դույն առած կազակ տղաները փողոցներում աթուրմա էին թռչում։ Ծերուկները՝ լրջադեմ նստոտել էին տները շրջապատող հողաթմբերի վրա։

Խուտորը վերջացրել էր ցանքը։ Միայն տեղ-տեղ վերջին ցանքը,— կորեկի ու արևածաղկի ցանքն էին ավարտում։

Ծայրամասի մի տան մոտ, տապալված կաղնիների վրա նստել էին կազակները։ Տանտերը, չեչոտ դեմքով մի հրետանավոր, պատմում էր գերմանական պատերազմում եղած մի ինչ-որ դեպքի մասին։ Զրուցակիցները,— ծերունի հարևանը և սրա փեսան, երիտասարդ, գանգրահեր մի կազակ,— լուռ լսում էին։ Մուտքի սանդուղքից իջավ տանտիրուհին,— բարձրահասակ, գեղեցիկ ու մարմնեղ, բոյարի կնկա տեսքով մի կազակուհի։ Շրջազգեստի մեջ դրված նրա վարդագույն շապկի թևքերը քշտված էին մինչև արմունկները՝ մերկացնելով թուխ կոկլիկ թևերը։ Դույլը ձեռքին, միմիայն կազակուհիներին հատուկ ազատ, լայն ու նրբագեղ քայլվածքով գնաց կովանոց։ Կապույտ բոլորքով, սպիտակ լաչակի տակից դուրս էին թափվել մազերը (նա հենց նոր էր տարթեր դրել վառարանի մեջ՝ չորացնելու և մյուս օրը վառելու համար), բորիկ ոտներին հագած քոշերը քստքստում, փափլիկ ճմլում էին բակում փարթամ աճած, մատղաշ խոտաբույսերը։

Գերանների վրա նստոտած կազակները լսում էին, թե կաթի շիթերն ինչպես էին շրշալով հոսում դույլի մեջ։ Տանտիրուհին կթեց կովերը, քայլեց դեպի տուն. մի քիչ թեքված, կարապի տեսքով ձախ թևը ծռած, նա տարավ կաթով լիքը լցված դույլը։

— Այո՛մա, գնայիր հորթը փնտրելու,— զրնգուն ձայնով ասաց նա սանդուղքից։

— Բա Միտյաշկան ո՞րտեղ է,— արձագանքեց տանտերը։

— Ես ի՞նչ գիտեմ, չքվել է։

Տանտերը դանդաղ վեր կացավ, գնաց փողոց։ Ծերունին ու նրա փեսան նույնպես վեր կացան տուն գնալու։ Տանտերը փողոցից կանչեց նրանց.

— Դորոֆեյ Գավրիլիչ, արի այստեղ, մտիկ արա։

Ծերունին և իր փեսան մոտեցան տանտիրոջը։ Սա մատը լուռ տնկեց դեպի տափաստանը։ Ճանապարհով մեկ սահում էր փոշու գորշ մշուշը, դրա միջից գալիս էին հետևազորի շարքերը, գումակը, ձիավորները։

— Ոնց որ թե զորք է, հը՞,— պապին զարմանքով կկոցեց աչքերը ու ձեռքը դրեց սպիտակ հոնքերին։

— Այս ի՞նչ բան է, ի՞նչ մարդիկ են,— տարակուսեց տանտերը։

Դարբասից դուրս եկավ նրա կինը՝ կոֆտան ուսերին գցած։ Նա նայեց դեպի տափաստանը, շփոթված հառաչեց.

— Այդ ի՞նչ մարդիկ են, Հիսուս Քրիստոս, ինչքա՜ն շատ են։

— Երևում է, որ վատ մարդիկ են...

Ծերունին մի քիչ հետո գնաց իր տունը, բարկացկոտ ասաց փեսային.

— Գնա տուն, կարիք չկա նայելու։

Երեխաներն ու կանայք վազ էին տալիս դեպի փողոցի ծայրը, կազակները խումբ-խումբ գնում էին այնտեղ։ Տափաստանով, խուտորից մի վերստ հեռավորությամբ, ճանապարհին ձգվել էր զորասյունը. քամին մինչև տներն էր բերում ձայների անպարզ դժժոցը, ձիերի վրնջյունը, անիվների աղմուկը։

— Դրանք կազակներ չեն... մերոնցից չեն,— ասաց ամուսնուն մի կազակուհի։

Ամուսինը թոթվեց ուսերը։

— Իհարկե կազակներ չեն։ Չլինի՞ թե գերմանացիներ լինեն։ Չէ, ռուսներ են... Տես, կարմիր կտոր ունեն... Հը՛մ, ա՛յ թե ինչ...

Մոտեցավ Ատամանյան գնդի բարձրահասակ մի կազակ. ըստ երևույթին սա դողէրոցքով էր բռնված. դեմքը ավազագույն-դեղին էր, ասես նա դեղնախտով էր տառապում, մուշտակ ու թաղյակներ էր հագել։ Նա բարձրացրեց փրշոտ փափախը, ասաց.

— Տե՛ս թե ինչպիսի դրոշակ ունեն... Բոլշևիկներ են։

— Նրանք են։

Մի քանի ձիավորներ անջատվեցին շարասյունից։ Նրանք քառատրոփով սլացան դեպի խուտոր։ Կազակներն իրար նայելով սկսեցին լուռ ցրվել, աղջիկներն ու երեխաները դեռ ու դեռ փախան։ Հինգ րոպեից հետո նրբանցքն ամայացավ։ Ձիավորները խմբով մտան նրբանցքը, սրարշավ մոտեցան այն գերաններին, որոնց վրա քառորդ ժամ առաջ նստ-

տած էին կազակները։ Կազակ տանտերը կանգնել էր դարբասի կողքին։ Առջևի ձիավորը, որ ըստ երևույթին ավագն էր, թուխլիկ ձիով մոտեցավ դարբասին։ Նա Կուբանի փափախով էր, պաշտպանական գույնի վերնաշապկի վրա մարտական փոկեր և մի ահագին մետաքսե կարմիր բանտ էր կապել։

— Բարև, տանտեր, բաց արա դարբասը։

Հրետանավորի չեչոտ դեմքը սփրթնեց, նա հանեց գլխարկը։

— Իսկ դուք ի՞նչ մարդիկ եք։

— Բա՛ց արա դարբասը,— բղավեց կուբանյան փափախով զինվորը։

Թուխլիկ ձին ծռելով բարկացկոտ աչքը, փրփրուն բերանի մեջ խաղացնելով սանձի բերանոցը, առջևի ոտով խփեց գործած ցանկապատին։ Կազակը բացեց բակի դռնակը, ու ձիավորներն իրար հետևից մտան բակը։

Նա, որ կուբանյան փափախով էր, ճարպկությամբ թռավ ձիուց, ծուռ ոտներով արագ մոտեցավ տան մուտքին։ Մինչդեռ մյուսներն իջնում էին ձիերից, նա նստեց մուտքի սանդուղքին, հանեց ծխախոտատուփը։ Մխեց, տանտիրոջը ծխախոտ առաջարկեց։ Տանտերը հրաժարվեց։

— Չե՞ս ծխում։

— Շնորհակալ եմ։

— Այստեղ ձերոնք հնադավաններ չե՞ն։

— Չէ, ուղղափառներ են... Բա դուք ովքե՞ր եք,— թրթռված դեմքով էլի հարցրեց կազակը։

— Մե՞նք։ Սոցիալիստական երկրորդ բանակի կարմիրգվարդիականներն ենք։

Մնացածները ձիերից իջնելով, մոտենում էին սանդուղքին, ձիերը տանում էին սանձերից բռնած, դրանք կապում էին բազրիքին։ Մեկը,— ձիու բաշի նման ճակատին թափված քյաքուլով վիթխարի մի մարդ, թուրը ոտների մեջ գցելով գնաց ոչխարանոց։ Նա տիրաբար բացեց դուռը, կռանալով ներս մտավ ցածր դռնից, եղջյուրներից բռնած դուրս բերեց մի մեծ, ծանր դմակով կոտած ոչխար։

— Պետրիչենկո, արի օգնիր,— կտրուկ ձայնով բղավեց նա։

Ավստրիական կարճ շինել հագած մի զինվոր վազեվազ

մոտեցավ նրան։ Կազակ տանտերը շփում էր մորուքը, նայում շուրջը,— կարծես ուրիշի բակում լիներ։ Նա ոչինչ չասաց, ու միայն այն ժամանակ հոգոց հանելով քայլեց դեպի սանդուղքը, երբ թրով մորթած ոչխարը ցնցում էր բարակ ոտները։

Տանտիրոջ հետևից տուն մտան կուբանյան փափախով զինվորը ու էլի երկուսը. մեկը չինացի էր, մյուսը ռուս, որը կամշատկացու էր նման։

— Դու չնեղանաս, տանտեր,— շեմքից ներս մտնելով՝ աշխույժ ասաց կուբանցին,— մենք լավ կվճարենք։

Նա ձեռքը թփթփացրեց շալվարի գրպանին, քա՛հ-քա՛հ ծիծաղեց ու հանկարծակի կտրեց ծիծաղը՝ աչքերը հառելով տանտիրուհուն։ Վերջինս ատամներն իրար սեղմելով, կանգնել էր վառարանի մոտ, վախեցած աչքերով նայում էր նրան։

Կուբանցին աչքերի անհանգիստ արտահայտությամբ դարձավ դեպի չինացին.

— Դու, խոդյա, քեռու հետ, այս քեռու հետ,— նա մատով ցույց տվեց տանտիրոջը,— կամաց-կամաց գնա, նա խոտ կտա ձիերին... Վեր կաց գնա։ Լսո՞ւմ ես։ Մենք լավ կվճարենք։ Կարմիր գվարդիան թալան չի անում։ Գնա, տանտեր, դեհ, գնա,— կուբանցու ձայնը հրամայական տոնով էր հնչում։

Կազակը չինացու և մի ուրիշի ուղեկցությամբ դուրս գնաց խրճիթից։ Նա դեռ չէր իջել արտաքին սանդուղքից, երբ լսեց կնոջ լացակումած ձայնը։ Նա նետվեց հաշտը, ուժով քաշեց դուռը։ Թեթև կեռիկը դուրս թռավ օղակից։ Կուբանցին չաղ տանտիրուհու մերկ թևը արմունկից վեր բռնած, նրան քաշում էր դեպի կիսախավար օթախը։ Կազակուհին դիմադրում էր, հրում նրա կուրծքը։ Կուբանցին փորձեց նրան գրկել մեջքից, բարձրացնել ու տանել, բայց այդ ժամանակ դուռը բացվեց։ Կազակն արագ վրա հասավ, կնոջն անջատեց նրանից։ Նրա ձայնը զայրագին, բայց հանդարտ էր հնչում.

— Դու հյուր ես եկեք իմ տունը... ինչո՞ւ ես անպատվում կնկան։ Ի՞նչ ես անում, հը՞։ Չե՛ռ քաշիր, ես քո զենքից չեմ վախենում։ Վերցրու ինչ որ պետք է քեզ, թալանիր, բայց կնկան մի՛ մուտտառի։ Դու միայն իմ դիակի վրայից կմոտենաս նրան... Իսկ դու, Նյուրկա...— նա դողդոջ ոունդներով

դիմեց կնոջը,— գնա Դորոֆեյ քեռուդ մոտ։ Այստեղ գործ չունես։

Կուրանցին շտկելով իր զինվորական փոկերը, ծուռ ժպտաց.

— Ա՛մա թե հերսոտ մարդ ես, տանտեր... Բա հանաք է՞լ չի կարելի անել... Ես ամբողջ վաշտում հայտնի հանաքչի մարդ եմ... գիտե՞ս թե չէ... Ես սա դիտմամբ արեցի։ Ուզեցի մի քիչ վախեցնել կնկանդ, իսկ նա վժվժաց... խոտ տվի՞ր։ Չկա՞։ Բա ինչո՞ւ հարևաններից չվերցրիր։

Նա դուրս ելավ սուլելով, ուժգին թափահարելով մտրակը։ Շուտով ամբողջ ջոկատը մոտեցավ խուտորին։ Այն բաղկացած էր մոտ ութ հարյուր հետևակ ու հեծյալ մարդկանցից։ Կարմիրգվարդիականները, որոնց մի երրորդ մասը չինացիներ, լատիշներ և այլ օտարերկրացիներ էին, գիշերելու համար տեղավորվեցին խուտորի մոտ։ Ջոկատի հրամանատարը ըստ երևույթին չէր ուզում գիշերել խուտորում,— լիահույս չէր իր այլացեղ ու սանձարձակ զինվորների նկատմամբ։

Սոցիալիստական 2-րդ բանակի Տիրասպոլյան ջոկատը, որ զզզված էր հայդմակների և Ուկրաինայի վրայով անցնող գերմանացիների դեմ մղած մարտերում, կռվելով հասավ Դոն, Շեպտոխովկա կայարանում իջավ գնացքից, ու որովհետև առջևում արդեն գերմանացիներն էին, ուստի երթական կարգով շարժվեց Միգուլինսկայա ստանիցայի հողերով,— նրա նպատակն էր անցնել հյուսիս, Վորոնեժի նահանգը։ Ջոկատում մեծ թիվ կազմող քրեական տարրերի ազդեցությունից բարոյալքված կարմիրգվարդիականները ճանապարհին անկարգություններ էին անում։ Ապրիլի լույս 17-ի գիշերը Սետրակով խուտորի մոտ տեղավորվելով գիշերելու համար, չնայելով հրամանատարական կազմի սպառնալիքներին ու արգելքներին, նրանք խմբով գնացին խուտոր, սկսեցին ոչխարներ մորթել, խուտորի ծայրում բռնարարեցին երկու կազակուհու, հրապարակում անկարգ հրաձգություն բացեցին, վիրավորեցին իրենցից մեկին։ Գիշերը հարբեցին ուղեկալները (գումակի յուրաքանչյուր սայլի վրա սպիրտ կար)։ Իսկ այդ ժամանակ խուտորից ուղարկված երեք ձիավոր կազակները արդեն իրարանցում էին բարձրացնում շրջակա խուտորներում։

Կազակները գիշերով, մթության մեջ թամբում էին ձիերը, վերցնում հանդերձանքը, հապճեպորեն ջոկատներ կազմում ճակատայիններից ու ծերերից և խուտորներում ապրող սպաների, նույնիսկ վախմիստրների ղեկավարությամբ շարժվում էին դեպի Սետրակով, շրջապատում կարմիրգվարդիական ջոկատը, հավաքվում ձորակների մեջ ու բլրակների հետևում։ Գիշերով կիսահարյուրյակներ էին շարժվում Միգուլինսկայայից, Կոլոդյոզնուց, Բոգոմոլովից։ Ոտքի ելան վերխնեչիրիցիները, նապոլովցիները, կալինովցիները, եյացիները, կոլոդեզցիները։

Երկնքում մարում էին համաստեղությունները, խունանում ու մագաթափվում էր գիշերի խավոտ, սև մորթին։ Արշալույսին կազակական հեծյալ բազմությունները բոլոր կողմերից հարայ տալով նետվեցին կարմիրգվարդիականների վրա։ Գնդացիրը որոտաց ու լռեց, բռնկվեց ու դադարեց անկարգ, խառնափնթոր հրաձգությունը, գործի դրվեցին թրերը։

Մի ժամից հետո գործն ավարտված էր. ջոկատը գլխովին ջախջախվեց, ավելի քան երկու հարյուր մարդ թրատվեց ու գնդակահարվեց, մոտ հինգ հարյուր մարդ գերի բռնվեց։ Կազակները գրավեցին երկու մարտկոց չորսական թնդանոթով, քսանվեց գնդացիր, հազարավոր հրացաններ, մեծ քանակությամբ մարտական հանդերձանք։

Մեկ օրից հետո արդեն ամբողջ օկրուգով մեկ փողփոդում էին մեծ և փոքր ճանապարհներով թռչող ձիավոր սուրհանդակների կարմիր դրոշակները։ Թնդում էին ստանիցաներն ու խուտորները։ Սովետները տապալվում էին ու հապճեպորեն ատամաններ էին ընտրվում։ Կազանսկայա և Վեշենսկայա ստանիցաների հարյուրյակները ուշացումով գնում էին դեպի Միգուլինսկայա։

Ապրիլի քսանից մինչև վերջը Դոնեցի օկրուգի վերին ստանիցաները անջատվեցին։ Կազմեցին իրենց օկրուգը, որը կոչվեց Վերին Դոնի օկրուգ։ Օկրուգային կենտրոն ընտրվեց Վեշենսկայան, որ Միխայլովսկայայից հետո մարզում երկրորդ ստանիցան էր իր բազմամարդությամբ, մեծությամբ ու խուտորների թվով։ Առաջվա խուտորներից հապճեպորեն նոր ստանիցաներ էին կազմվում։ Կազմվեցին Շումիլինսկայա, Կարգինսկայա, Բոկովսկայա ստանիցաները։ Ու Վերին Դոնի

օկրուգը, որի մեջ մտան տասներկու ստանիցա և ուկրաինական մի վոլոստ, սկսեց ապրել կենտրոնից մեկուսացած կյանքով։ Վերին Դոնի օկրուգի մեջ մտան նախկին Դոնեցի օկրուգի հետևյալ ստանիցաները. Կազանսկայա, Միգուլինսկայա, Շումիլինսկայա, Վեշենսկայա, Ելանսկայա, Կարգինսկայա, Բոկովսկայա և Պոնոմարևսկայա վոլոստը. նախկին Ուստ-Մեդվեդիցկու օկրուգի Ուստ-Խոպերսկայա, Կրասնոկուտսկայա ստանիցաները և Խոպերյան օկրուգի Բուկանովսկայա, Սլաշչևսկայա, Ֆեդոսեևսկայա ստանիցաները։ Միահամուռ կերպով օկրուգային ատաման ընտրվեց Ելանսկայա ստանիցայի կազակ, ռազմական ակադեմիան ավարտած գեներալ Զախար Ակիմովիչ Ալֆերովը։ Ալֆերովի մասին ասում էին, որ նա եղել էր կազակական աննշան մի սպա, հետո իր կողակցի՝ եռանդուն ու խելոք կնոջ շնորհիվ նշանավոր մարդ էր դարձել. ասում էին, որ կինը քաշում էր իր անշնորհք ամուսնու ականջներից և հանգիստ չէր տալիս այնքան ժամանակ, մինչև որ ամուսինը երեք անգամ կտրվելով, չորրորդ անգամ այնուամենայնիվ քննություն էր բռնել ակադեմիա մտնելու համար։

Բայց այդ օրերին Ալֆերովի մասին եթե խոսում էին, ապա շատ քիչ էին խոսում։ Մտքերը ա՛յլ բանով էին զբաղված։

XXII

Հեղեղված ջուրը հենց նոր էր սկսում իջնել։ Մարգագետնում բանջարանոցների ցանկապատերի կողքին բացվել էր գորշ, տղմոտ հողը, նեղ շերտով փռվել ջրի բերած աղբը,— չոր եղեգնի կտորտանքները, ոստեր, բոշխ, նախորդ տարվա տերևներ, տիղմի մեջ թաղված ցախ ու ցուխ։ Հազիվ նկատելի կանաչին էին տալիս Դոնի առափնյա, հեղեղված անտառի ուռենիները, ճյուղերից կախվել էին վրձնանման փշփշուկները։ Բացվելու վրա էին բարդիների բզբոջները, խուտորի հենց տների մոտ հեղեղով շրջապատված կարմիր ուռի շյուղերը թեքվել էին ջրի վրա։ Դրա դեղին, բադի չփետրավորված ձագերին նմանվող բողբոջները սուզվել էին ալիքների մեջ, օրորվում էին քամուց։

Վայրի սագերը, ծովասագերը, բադերի երամները արշալույսին լողալով մոտենում էին բանջարանոցներին՝ կեր որոնելու համար։ Պղնձե ձայնով աղմկում էին սուզահավերը։ Կեսօրին էլ երևում էր, թե ինչպես հողմից ալեկոծվող Դոնի վրա ալիքները գգվում, փայփայում էին սպիտակափորիկ մրտիմներին։

Այդ տարի շատ էին չվող թռչունները։ Արշալույսին, երբ կաբմրավառ արևածագը արյունոտած ցոլք է տալիս ջրին, ձկնորս կազակները նավակների վրայից հաճախ կարապներ էլ էին տեսնում, որոնք հանգստանում էին անտառով պաշտպանված որևէ գետախորշում։ Բայց խուտորում չափազանց զարմանալի թվաց Խրիստոնյայի և Մատվեյ Կաշուլինի բերած նորությունը. նրանք գնացել էին պետական անտառը, որ երկուական կաղնի ծառ կտրեն տնտեսական կարիքների համար, ու անտառի միջով անցնելիս տեսան, թե ինչպես ձորակից փախավ մի վայրի այծ իր փոքրիկ ուլիկի հետ։ Թուխ-դեղնավուն, լղար այծը դուրս թռավ ուղտափշով ու մամխիով պատած ձորակից, մոտակա բլրակից մի քանի վայրկյան նայեց ծառ կտրողներին, լարվածությամբ շարժեց բարալիկ, նրբագեղ ոտները. նրա կողքին կուչ էր եկել ուլիկը։ Ու լսելով Խրիստոնյայի զարմանք արտահայտող բացականչությունը, այծը այնպես թռավ մատղաշ կաղնուտի միջով, որ կազակները հազիվ կարողացան տեսնել գորշ-կապտավուն, կոկլիկ կճղակները և ուղտի գույնի, կարճլիկ պոչը։

— Այդ ի՞նչ էր,— կացինը ձեռքից գցելով հարցրեց Մատվեյ Կաշուլինը։

Խրիստոնյան ոչնչով չբացատրվող ցնծությամբ դյութականորեն լռին անտառով մեկ գոռաց.

— Այծ է, հա՛-ա։ Վայրի այծ է այդ անտերը։ Դրա նմանը մենք տեսել ենք Կարպատներում։

— Ուրեմն պատերազմը այդ խեղճին քշել է մեր տափաստանն ե՞ը, հա՞։

Խրիստոնյան ստիպված էր համաձայնել։

— Դեհ, իհարկե։ Իսկ դու, պապի, տեսա՞ր ծունկը։ Փո՛ւ, ցավս տանի նրան։ Շուն շան որդի այծ, ինչքա՛ն սիրունիկն էր։ Ոնց որ թե երեխա լիներ։

Վերադարձի ամբողջ ճանապարհին նրանք խոսում էին

մարդում չտեսնված այդ վայրի կենդանու մասին։ Մատվեյ պապին ի վերջո կասկած հայտնեց։

— Կարելի է այծ չի, հը՞։

— Այծ է։ Խաչը վկա, այծ է և ուրիշ ոչինչ։

— Կարելի է... Բա որ այծ է, ինչո՞ւ պոզեր չունի։

— Ախր պոզերը քո ինչի՞ն են պետք, է՞։

— Ես այդ չեմ ասում։ Հարցնում եմ՝ թե որ նա այծերի ցեղից է... ինչո՞ւ այդ տեսակ տեսք ունի։ Դու անպոզ այծ տեսե՞լ ես։ Ըհը՛մ։ Կարելի է վայրի ոչխա՞ր է...

— Դու, Մատվեյ պապի, ուրեմն, խելքդ թոցրել ես,— նեղացավ Խրիստոնյան,— գնա Մելեխովների մոտ, մտիկ արա։ Նրանց Գրիշկայի մտրակը այծի ոտից է։ Ընդունո՞ւմ ես այդ, թե չէ։

Ու Մատվեյ պապին այդ օրը գնաց Մելեխովների մոտ։ Գրիգորիի մտրակի կոթը իսկապես որ ճարտարությամբ պատած էր վայրի այծի ոտի կաշիով. նույնիսկ փոքրիկ կճղակը անվնաս մնացել էր կոթի ծայրին և նույնպիսի ճարտարությամբ զարդարված էր պղնձե փոքրիկ պայտով։

Մեծ պասի վեցերորդ շաբաթում, չորեքշաբթի օրը Միշկա Կոշևոյը վաղ առավոտյան ձիով գնաց ստուգելու անտառի մոտ գտնվող ձկնորսական գործիքները։ Նա լուսաբացին դուրս եկավ տնից։ Առավոտյան ցրտից կուչ եկած գետինը տեղ-տեղ ծածկված էր բարակ սառույցով, ցեխը պնդացել էր։ Միշկան բամբակած կուրտկայով, քոշերով, շալվարի ծայրերը սպիտակ գուլպաների մեջ դրած, գնում էր գլխարկը ծոծրակին, շնչելով ցուրտ օդը, ջրի անալի խոնավության բույրը։ Նավակի երկար թիակը դրել էր ուսին։ Արձակելով նավակը, արագ ընթացավ դրա մեջ կանգնած, ուժեղ զոռ տալով թիակին։

Արագ ստուգեց ձկնորսական գործիքները, հանեց ձկները, իջեցրեց, շտկեց ուռկանի թևերը ու կամացուկ ետ գնալով, որոշեց ծխել։ Արշալույսը նոր էր բացվում։ Արևելքում մուգ կանաչավուն երկնքի վրա ասես վաթից վեր արյուն էր շաղ տրված։ Արյունը տարածվում էր հորիզոնի վրա, ոսկեփայլ, մուգ կարմիր գույն ստանում։ Միշկան հետամուտ եղավ սուզահավի դանդաղ թռիչքին, վառեց ծխախոտը։ Ծուխը տարածվելով ու կառչելով թփերից, ցնդում էր օդում։ Միշկան

դիտեց ձկները,— բռնել էր երեք սողոսկուկ, մոտ ութ ֆունտ ծածան, մի ամբողջ կուտակ սպիտակ ձուկ,— ու մտածեց.

«Պետք է մի մասը ծախել։ Շլդիկ Լուկեշկան կվերցնի, կփոխանակեմ չորացած տանձով,— մերթս մի օր խոշաբ կեփի»։

Մխելով գնաց դեպի նավակայանը։ Բանջարանոցների ցանկապատի մոտ, ուր նա կապում էր նավակը, մի մարդ էր նստած։

«Այդ ո՞վ կարող է լինել»,— մտածեց Միշկան՝ արագ քշելով նավակը, ճարպկությամբ բանեցնելով թիակը։

Ցանկապատի մոտ պպզել, կուչ էր եկել Վալետը։

Նա ծխում էր լրագրի թղթով փաթաթած մի ահագին գլանակ։

Ժանտաքիսի աչքերը հիշեցնող նրա սուր, փոքրիկ աչքերը քնկոտ, տարտամ փայլ էին արձակում, դեմքը պատած էր գորշ մազ ու մորուքով։

— Ի՞նչ ես անում,— բղավեց Միշկան։

Նրա բղավոցը դմբդմբաց, կլոր գնդի նման գլորվեց ջրի վրայով։

— Եկ, մոտեցիր։

— Ձուկ բռնելո՞ւ ես եկել։

— Ձուկն ինչի՞ս է պետք։

Վալետը սաստիկ հազաց, առատ թքեց ու դժկամ վեր կացավ։ Հասակին անհամապատասխան մեծ շինելը կախվել էր նրանից ինչպես կապանը բոստանի խրտվիլակից։ Գլխարկի կախ ընկած եզրերը ծածկել էին սուր, անլվա, ներսից կանաչ ականջակոնքերը։ Նա նոր էր եկել խուտոր, կարմիրգվարդիական «արատավոր» համբավ էր ձեռք բերել։ Կազակները հարցնում էին, թե զորացրումից հետո որտեղ էր եղել, բայց Վալետը խուսափուկ պատասխան էր տալիս, ի չիք էր դարձնում վտանգավոր խոսակցությունները։ Իվան Ալեքսեևիչին և Միշկա Կոշևոյին խոստովանել էր, որ չորս ամիս եղել էր կարմիրգվարդիական մի ջոկատում, Ուկրաինայում, գերի էր եղել հայդամակների մոտ, փախել էր, ընկել Սիվերսի ջոկատը, նրա հետ եղել Ռոստովի մերձակայքում և ինքն իրեն արձակուրդ էր տվել հանգստանալու և կազդուրվելու համար։

Վալետը հանեց գլխարկը, շփեց կոշտ մազերը. նայելով շուրջը, մոտենալով նավակին, խոպոտ ասաց.

— Վատ են գործերը... վատ են... Վերջացրու ձուկ բռնելդ, թե չէ դրանով կտարվենք ու ամեն բան կմոռանանք...

— Ի՞նչ նորություններ գիտես, ասա։

Միշկան ձկան լորձի հոտ արձակող իր ձեռքով սեղմեց Վալետի ոսկրոտ ձեռքը, ջերմ ժպտաց։ Նրանց կապում էր հին բարեկամությունը։

— Երեկ Միգուլինսկայայի մոտ ջարդեցին Կարմիր գվարդիան։ Մեր բուրդը գզում են, աղբերս...

— Ո՞ր գվարդիան։ Որտեղի՞ց էր եկել Մուգիլինսկայա։

— Գնում էին ստանիցայի միջով, կազակները հարձակվեցին նրանց վրա... Ահագին թվով գերիներ են քշել Կարգին։ Այնտեղ արդեն ռազմա-դաշտային դատարանն իր գործն է տեսնում։ Հիմի մեզ մոտ մոբիլիզացիա է։ Տես, հրե՛ն առավոտից զանգ են զարկում։

Կոշևոյը կապեց նավակը, ձկները լցրեց տոպրակի մեջ, գնաց՝ թիակի ծայրը լայն-լայն դնելով գետնին։ Վալետը քուռակի նման մանր քայլերով գնում էր նրա կողքից, վազելավազ առաջ անցնում՝ ծածկելով շինելի փեշերը, ազատորեն թափահարելով թևերը։

— Ինձ Իվան Ալեքսեևիչն ասաց։ Նա ինձ հենց նոր փոխեց հերթապահությունից, աղացը ամբողջ գիշերը դղրդում էր, շատ աղուն է կուտակվել։ Հա՛, նա էլ աղացատիրոջից է լսել։ Վեշենսկուց ինչ-որ սպա էր եկել Սերգեյ Պլատոնիչի մոտ։

— Հիմի ի՞նչ կլինի,— շփոթվածությունը սահեց Միշկայի դեմքով, որ առնացել ու գունատվել էր պատերազմի տարիներին. նա կողքից նայեց Վալետին, կրկնեց հարցը,— հիմի ո՞նց կլինի։

— Պետք է ճղել խուտորից։

— Ո՞ւր։

— Կամենսկայա։

— Այնտեղ կազակներն են։

— Գնալ ավելի ձախ։

— Ո՞ւր։

— Դեպի Օբլիվի։

— Ո՞նց կանցնես։

— Ուղենաս կանցնես, թե չէ,— մնա, գրողի ծոցը կգընաս,— հանկարծ չարացավ Վալետը։— «Ո՛ւր հա ուր, ոնց կլինի»,— ես ո՞րտեղից գիտենամ։ Որ նեղ տեղն ընկար, ինքդ կփնտրես ելքը, հոտ քաշելով կգտնես։

— Էլ ի՞նչ ես հերսոտում։ Վրադ պաղ ջուր ածա։ Բա Իվանն ինչ է ասում։

— Քո Իվանը մինչև տեղից շարժվի...

— Կամա՛ց, տո... հրե՛ն մի կնիկ է մտիկ անում։

Նրանք վախով, ծուռ նայեցին ջահել մի կնոջ, Փչան Ավդեիչի հարսին, որը բակից դուրս էր քշում կովերը։ Միշկան առաջին իսկ փողոցահատից ետ դարձավ։

— Ո՞ւր,— զարմացավ Վալետը։

Կոշևոյն առանց ետ նայելու փնթփնթաց.

— Գնում եմ ձկնորսական գործիքները վերցնելու։

— Ինչի՞ համար։

— Հո չպիտի՞ կորչեն։

— Ուրեմս, ճղո՞ւմ ենք,— ուրախացավ Վալետը։

Միշկան թափահարեց թիակը, հեռվից ասաց.

— Գնա Իվան Ալեքսեևիչի մոտ, իսկ ես գործիքները կտանեմ տուն ու հիմի կգամ։

Իվան Ալեքսեևիչը արդեն ծանուցել էր մերձավոր կազակներին։ Նրա որդին վազեց Մելեխովների մոտ, բերեց Գրիգորիին։ Խրիստոնյան ինքն եկավ, ասես զգացել էր վտանգը։ Շուտով վերադարձավ Կոշևոյը ու սկսվեց խորհրդակցությունը։ Բոլորն էլ խոսում էին միաժամանակ, շտապելով, և բոպե առ բոպե տագնապալից զանգահարություն էին սպասում։

— Պետք է իսկույն ևթ հեռանալ, հենց այսօր հավաքել փասա-փուսան ու հեռանալ,— հուզված ու տաքացած ասավ Վալետը։

— Դու մեզ, ուրեմս, հասկացրու, թե ինչո՞ւ պիտի գնանք,— հարցրեց Խրիստոնյան։

— Ո՞նց թե ինչու։ Կսկսվի մոբիլիզացիան, կարծում ես քեզ ձեռք չե՞ն տա։

— Չեմ գնա, պրծավ-գնաց։

— Կտանեն։

— Չէ՛, աղրեր։ Ես պոզերից չվան կապած եղ չեմ, որ քաշեն-տանեն։

Իվան Ալեքսեևիչը, որ խրճիթից դուրս էր արել իր շլդիկ կնկանը, բարկացկոտ վրա բերեց.

— Տանելը կտանեն... Վալետը ճիշտ է ասում։ Միայն թե ո՞ւր պիտի գնանք։ Ահա թե որն է դժվարությունը։

— Ես արդեն ասել եմ Վալետին,— շունչ առավ Միշկա Կոշևոյը։

— Ի՞նչ եք ասում, է՞, ինձ ավելի շա՞տ բան է հարկավոր, քանց ձեզ, հը՞։ Մենա՛կ կգնում, հա՛-ա։ Հոտ քաշողներ պետք չեն։ «Ո՞նց կլինի, ո՛ւր գնանք»... Ա՛յ, կտեսնեք, կճանկեն ձեզ, բոլշևիզմի համար բանտ կնստեցնեն... Հանա՞ք եք անում, ինչ է։ Բա չե՞ք տեսնում ինչպիսի ժամանակ է... Ամեն բան կարող է կորչել...

Գրիգորի Մելեխովը, որ լրջախոհ, մի ինչ-որ զուսպ ցասումով տնտղում էր պատից հանած մի ժանգոտ մեխ, սառն տոնով ընդհատեց Վալետին.

— Դու մի՛ դուրս տա։ Քեզ համար ի՞նչ կա որ, ոչ դարդ ունես, ոչ խելք,— վեր կացար ու գնացիր։ Իսկ մենք պետք է լավ մտածենք։ Հրե՛ն, ես կնիկ ու երկու երեխա ունեմ... Դու իմ չափ վառոդի հո՞տ ես քաշել, հը՞։— Գրիգորին փայլեցրեց սև, հանկարծակի չարացած աչքերը ու գիշատչաբար բաց անելով պինդ, ժանիքանման ատամները, գոռաց.— Հենց միայն լեզվիդ ես զոռ տալի, ախմախ։ Վալետ էիր, Վալետ է՛լ մնացիր։ Ունեցած-չունեցածդ մի պիջակ է, ուրիշ ոչինչ...

— Կարգին խոսա, տո՛։ Օֆիցերությո՞ւնդ ես ցույց տալի, հա՞։ Ինչի՞ ես բոռում։ Թքե՛լ եմ քո վրա,— բղավեց Վալետը։

Նրա ոգնու դունչը սփրթնեց կատաղությունից, անհանգիստ ու վայրենաբարո կերպով կայծկլտեցին նեղդիր, զայրացկոտ աչքերը, կարծես գորշ մազ ու մորուքն է՛լ շարժվեց։

Գրիգորին իր բարկությունը թափեց նրա վրա, այն պատճառով, որ վրդովել էին իր հանգիստը, այն հուզմունքի պատճառով, որ ապրել էր ինքը, երբ Իվան Ալեքսեևիչից լսել էր, որ կարմիրգվարդիական ջոկատները ներխուժել են իրենց օկրուգը։ Վալետի ճչոցը վերջնականապես կատաղեցրեց նրան։ Նա վեր թռավ խայթվածի նման, մոտեցավ տաբուրետի

վրա անհանգիստ նստած Վալետին, ու դժվարությամբ զրսպելով հարվածի համար քոր եկող ձեռքը, ասաց.

— Լռիր, օձի ճուտ, խլնքոտի մեկը, կրծոտված լեշ։ Ի՞նչ ես հրամաններ տալի։ Գնա՛, ո՞վ է քո փեշից բռնում։ Ջրքվիր, որ հոտդ կտրվի այստեղից։ Դե՛հ, դեհ, սսկվիր, թե չէ սֆաթդ ջարդուփշուր կանեմ...

— Թո՛ղ, Գրիգորի, դա լավ չէ,— մեջ մտավ Կոշևոյը՝ Վալետի կնճռոտված քթից դեն տանելով Գրիգորիի բռունցքը։

— Կազակական սովորությունները պետք է թողնել... Բա չե՞ս ամաչում... Հո ամաչում ես, Մելեխով, ամո՛թ է։

Վալետը վեր կացավ. իրեն անհարմար զգալով, թեթև հազալով, քայլեց դեպի դուռը։ Շեմքի մոտ չկարողացավ իրեն զսպել, շուռ եկավ, խայթեց չար ժպտացող Գրիգորիին.

— Դեռ կարմիր գվարդիայում է՛լ ես եղել... Ժանդարմերիա... Քեզ նմաններին մենք հազար կտոր ենք արել...

Գրիգորին նույնպես չհամբերեց... Վալետին հրելով դեպի հաշտը, կոխոտելով նրա զինվորի կոշիկների կրունկները, ահարկու ձայնով գոռաց.

— Ռադ եղիր, թե չէ ոտներդ ո...ցդ կպոկեմ։

— Ինչի՞ նման է դա։ Ձեր տունը շինվի, ոնց որ թե երեխաներ լինենք։

Իվան Ալեքսեևիչը կշտամբանքով օրորեց գլուխը, շեղակի ու թշնամաբար նայեց Գրիգորիին։ Միշկան լուռ կծոտում էր շրթունքները,— ըստ երևույթին զսպում էր լեզվի ծայրին եղած ցասկոտ խոսքը։

— Բա ինչո՞ւ է նա գլխից դուրս բաներ անում, ինչո՞ւ է չափն անցկացնում,— մի փոքր շփոթված արդարանում էր Գրիգորին. Խրիստոնյան համակրանքով էր նայում նրան և դրանից քաջալերված Գրիգորին ժպտաց պարզ, մանկական ժպիտով։— Քիչ մնաց քոթակեի նրան... Իմ ձեռքն էլ հո... մի անգամ զարկեի, արյունլվիկ կգլորվեր գետին։

— Դեհ, ի՞նչ եք ասում, պետք է գործ անել։

Իվան Ալեքսեևիչը շշկլվեց հարցը տվող Միշկա Կոշևոյի սևեռուն հայացքից, դժվարությամբ պատասխանեց.

— Ի՞նչ արած, Միխայիլ... Գրիգորին մասամբ իրավացի է. ո՞նց թե միանգամից հենց վեր կենանք ու թռչենք։ Մենք հո ընտանիքներ ունենք... Սպասիր, է՛... աճապարեց նա՝

նկատելով Միշկայի անհամբեր շարժումը.— Գուցե ոչինչ էլ չի լինի... ի՞նչ իմանաս։ Սետրակովի մոտ ջարդել են ջոկատը, իսկ մնացածները չեն խցկվի... Իսկ մենք մի քիչ կրսպասենք։ Տեսնենք ինչ կլինի։ Տեղն է ասել՝ ես է՛լ կնիկ ու երեխա ունեմ, շոր չկա նրանց հագին, ալյուր չկա... էլ ո՞նց կարելի է վեր կենալ ու գնալ։ Բա նրանց հալն ի՞նչ կլինի...

Միշկան ջղայնոտ խաղացրեց հոնքերը, հայացքը մեխեց հողե հատակին։

— Հեռանալու միտք չունե՞ք։

— Ես կարծում եմ, որ պետք է սպասել։ Հեռանալ, միշտ էլ կարելի է... դուք ի՞նչ կասեք, Գրիգորի Պանտելեև, դու էլ, Խրիստան...

— Ուրեմն, այդպես է... հետաձգենք։

Գրիգորին Իվան Ալեքսեևիչի և Խրիստոնյայի կողմից անսպասելի պաշտպանություն գտնելով, աշխուժացավ.

— Դե, իհարկե, ես էլ հենց այդ եմ ասում։ Հենց դրա համար էլ կռվեցի Վալետի հետ։ Ի՞նչ է դա, ծառից մի շիվ կտրելու պես հե՞շտ է, հա՞,— զարկիր, թոցրիր ու պրծավ-գնաց... Ասում եմ՝ պետք է մտածել... մտածե՛լ...

Զը՛նգ-զընգ-զընգ-զը՛նգ.— թռավ ղողանջը զանգակատնից ու ողողեց հրապարակը, փողոցները, նրբանցքները. ղողանջը հնչեց վարարած ջրերի գորշ մակերեսին, լեռան կավճոտ, չչորացած լանջերին, անտառում ոսպի պես մանր բեկորների բաժանվեց, հառաչելով լռեց։ Ու նորից,— արդեն անընդհատ ու տագնապալի,—

Զը՛նգ-զը՛նգ-զը՛նգ-զը՛նգ...

— Հրե՛ն, կանչում են։— Խրիստոնյան արագ թարթեց աչքերը։— Հիմի գնում եմ նավակ նստեմ։ Կանցնեմ Դոնի մյուս կողմը, անտառը։ Տեսնեմ ոնց կգտնեն ինձ։

— Ուրեմն ի՞նչ ենք անելու։— Կոշևոյը ծերունու պես ծանր վեր կացավ։

— Հիմի չենք գնա,— բոլորի կողմից պատասխանեց Գրիգորին։

Կոշևոյը մի անգամ էլ խաղացրեց հոնքերը, ճակատից ետ տարավ փարթամ խոպոպներից հյուսված ծանր, ոսկեհուր քյաքուլը։

— Մնաք բարով... Երևում է, որ բաժանվում են մեր ճանապարհները։

Իվան Ալեքսեևիչը ներողաբար ժպտաց.

— Ջահել ես դու, Միշատկա, տաքարյուն ես... Կարծում ես չե՞ն միանա։ Կմիա՛-նա-ա՛ն, հուսով եղիր...

Կոշևոյը հրաժեշտ տվեց, դուրս ելավ։ Բակի միջով անցավ հարևան կալը։ Առվի մոտ կուչ էր եկել Վալետը։ Նա ասես գիտեր, որ Միշկան այնտեղ է գալու. վեր կացավ, հարցրեց.

— Հը՞։

— Հրաժարվեցին։

— Ես առաջ էլ գիտեի։ Թույլ մարդիկ են... Բա Գրիշկա՛ն... սրիկա է նա, քո ընկերը։ Նա չգիտե իր չարն ու բարին։ Ինձ վիրավորեց նա, շան որդին։ Ուրախ է, որ ինձնից ավելի ուժեղ է... ձեռիս հրացան լիներ, կսպանեի...— կերկերաձայն ասաց Վալետը։

Քայլելով նրա կողքից, Միշկան նայեց նրա կոշտ, բիզբիզ մազ ու մորուքին, մտածեց՝ «Անպիտանը կսպաներ, հա՛-ա»։

Նրանք քայլում էին արագ, զանգի յուրաքանչյուր ղողանջը մտրակի հարվածի պես դաղում էր նրանց։

— Գնանք ինձ մոտ, ուտելիք վերցնենք ու հա՛յդա։ Ոտով կգնանք, ձիս կթողնեմ։ Դու ոչինչ չե՞ս վերցնելու։

— Ինչ որ ունեմ վրես է,— Վալետը ծուռ ժպտաց,— պալատներ չեմ ունեցել։ Կալվածքներ — նույնպես... Կես ամսվա ռոճիկս էլ չեմ ստացել։ Էհ, թող մեր ցնփորը, Սերգեյ Պլատոնովիչը կուլ տա։ Նա երևի ուրախությունից կպարի, որ ես հաշիվս չմաքրեցի։

Զանգահարությունը դադարեցրին։ Առավոտյան անդորրը, քնեած լռությունը ոչնչով չէր խախտվում։ Ճանապարհի մոտ, մոխրի մեջ հավերը քջուջ էին անում, ցանկապատի կողքին թրևում էին կանաչ խոտը կուշտ կերած հորթերը։ Միշկան ետ նայեց. կազակները շտապում էին դեպի հրապարակը, ժողովատեղը։ Ոմանք դուրս էին գալիս տներից, քայլելով կոճկում էին սերթուկներն ու համազգեստները։ Հրապարակով մի ձիավոր սլացավ։ Դպրոցի մոտ մարդիկ էին հավաքվել, սպի-

տակին էին տալիս կանանց լաչակներն ու շրջազգեստները, երևում էին կազակների սև մեջքերը։

Դուլլերը ձեռքին մի կին կանգ առավ, որ ճանապարհ տա Միշկային ու Վալետին. բարկացկոտ ասաց.

— Անցե՛ք, է՛, թե չէ ես կանցնեմ։

Միշկան բարևեց նրան, ու կինը կամար հոնքերի տակին ժպտալով՝ հարցրեց.

— Կազակները ժողովատեղ են գնում, բա դո՞ւք։ Ինչո՞ւ չես գնում այնտեղ, Միխայլա։

— Տանը գործ ունեմ։

Մոտեցան մի նրբանցքի։ Երևաց Միշկայի խրճիթի կտուրը, քամուց ճոճվող սարեկաբուլնը, որին բալենու մի չոր ճյուղ էր կապված։ Բլրակի վրա դանդաղ պտտվում էին հողմաղացի թևերը, դրանց խաչմերուկի վրա փողփողում էր քամու պոկած պարուսինը, խփում սրածայր կտուրի թիթեղին։

Ամպշող երկնքից արևը աղոտ լույս էր սփռում, բայց եղանակը տաք էր։ Դոնից սուրում էր զով զեփյուռը։ Փողոցի անկյունում, Արխիպ Բոգատիրյովի բակում կնանիքը զատկի առթիվ կավով ծեփում ու սպիտակեցնում էին մեծ, կլոր խրճիթը։ Արխիպ Բոգատիրյովը բարձրահասակ, հնավանի սովորույթներով մի ծերունի էր, մի ժամանակ ծառայել էր գվարդիական մի մարտկոցում։ Կանանցից մեկը շաղախում էր կավի ու գոմաղբի խառնուրդը։ Կոխոտում էր այն՝ շրջազգեստը վերև քշտած, դժվարությամբ շարժելով սպիտակ, շաղլիկ սրունքներով ոտները, որոնց մաշկի վրա երևում էին կարմիր շերտեր,— կապիչների հետքերը։ Նա մատների ծայրերով բռնել էր բարձրացրած շրջազգեստը, գործվածքեղեն կապիչները տարել ծնկներից վերև, դրանք պիրկ թաղվել էին մարմնի մեջ։

Նա շատ պճնասեր էր, ու չնայելով, որ արևը դեռ չէր բարձրացել, նա լաչակով ծածկել էր երեսը։ Մյուսները, երկու ջահել կին, Արխիպի հարսները, սանդուղքներով բարձրացել էին մինչև կտուրը, որը մախորկայի գույնի շքեղ ծածկով էր,— ու սպիտակացնում էին պատերը։ Սպիտակացնում էին ճիլոպե խոզանակներով, թևքերը քշտել էին մինչև արմունկները, մինչև աչքերը ծածկած դեմքերի վրա սպիտակ կաթիլներ էին թափվում։ Կնանիքը երգում էին միահամուռ, միմյանց ներդաշնակվող ձայներով։ Մեծ հարսը, այրի Մարիան, որ բացահայտ կերպով գնում էր Միշկա Կոշևոյի մոտ և որը պեպենոտ, բայց բարեկազմ մի կազակուհի էր, ամբողջ խուտորում հայտնի, ուժգնությամբ ու հնչեղությամբ համարյա արական, ցածր ձայնով սկսում էր երգը.

... Ո՞վ է այնպես դառն տանջվում...

Մնացածները ձայնակցում էին ու նրա հետ միասին եռաձայն, հմուտ կերպով երգում այդ դառն, նախշ ու լարագին կանացի երգը։

... Կովի դաշտում իմ սիրելին.
Թնդանոթը ինքն է լցնում,
Միտք է անում նա իմ մասին...

Միշկան ու Վալետը քայլում էին ցանկապատի կողքից, ունկնդրում երգին, ձիերի հնչեղ վրնջոցին, որ գալիս էր մարգագետնից։

... Նամակ եկավ, մի սև նամակ,
Թե՝ սիրածիս սպանեցին,
Օ՛յ, իմ սիրած ազիզ տղան
Ընկավ-մնաց թփի տակին...

Մարիան նայում էր շուրջը, լաչակի տակից շողում էին նրա գորշ, բորբ աչքերը, նա հետամտում էր անցնող Միշկային, ու ժպտալով, պայծառացնելով սպիտակ բծավորված երեսը, ցածր, սիրազեղ, կրծքային ձայնով երգում էր.

... Գանգուրները նրա շեկլիկ
Այնտեղ քամին էր օրորում,
Ու աչքերը, աչքերն անուշ
Սև ագռավն էր կոցահարում։

Միշկան փաղաքուշ ժպտաց նրան, ինչպես միշտ էլ նա այդ անում էր կանանց հանդիպելիս. տանտիրոջ աղջկան, կավը ոտներով տրորող Պելագեյային նա ասաց.

— Յուբկադ ավելի վերև քշտիր, թե չէ ցանկապատի վրայից բան չի երևում։

Պելագեյան կկոցեց աչքերը.

— Ուզենաս, այնպես էլ կտեսնես։

Մարիան կողքի կանգնել էր սանդուղքի վրա. նայելով այս ու այն կողմ, ձայնը երկարացնելով հարցրեց.

— Ո՞ւր էիր գնացել, ջանիկս։

— Զուկ էի բռնում։

— Չհեռանաս, գնանք ամբարում քնենք։

— Հրե՛ն, կեսարդ, անամոթ։

Մարիան շխկացրեց լեզուն, ու քրքջալով, թաց խոզանակը թափահարեց Միշկայի վրա։ Սպիտակ կաթիլները ողողեցին վերջինիս կուրտկան ու գլխարկը։

— Դու գոնե Վալետին տայիր մեզ։ Միշտ էլ կօգներ տունուտեղը կարգին պահելու,— հեռացողների հետևից գոչեց փոքր հարսը՝ ժպտալով ու բանալով շաքարափայլ ատամները։

Մարիան ցածր ձայնով ինչ-որ բան ասաց, կնանիքը քա՛հ-քա՛հ ծիծաղեցին։

— Անառա՛կ քած,— Վալետը մռայլվեց, արագացրեց քայլերը, բայց Միշկան տաղտկալի ու քնքշորեն ժպտալով, ուղղեց նրան.

— Ոչ թե անառակ, այլ ուրախ կնիկ է։ Կհեռանամ, անուշիկս կմնա այստեղ։ «Մնաս բարով, հոգուս արև»,— արտասանեց նա մի երգի խոսքերը՝ ներս մտնելով իր բակի դռնակից։

XXIII

Կոշևոյի հեռանալուց հետո կազակները միառժամանակ լուռ նստած էին։ Խուտորով մեկ շաչում էր ահազանգը, թույլ զրնգում էին խրճիթի պատուհանները։ Իվան Ալեքսեևիչը նայում էր պատուհանից։ Զարդախից առավոտյան նոսր ստվեր էր ընկել գետնին։ Ծածանվող, կանաչ դալարիքի վրա ճերմակ ցող էր նստել։ Ապակիների միջից վառ կապույտին էր տալիս երկինքը։ Իվան Ալեքսեևիչը նայեց փրշոտ գլուխը կախած Խրիստոնյային։

— Կարելի է գործը դրանով էլ կվերջանա՞, հը՞։ Միգուլինցիները ջարդեցին ու էլ քիթները չե՞ն խոթի...

— Չէ, աղբեր...— Գրիգորին ամբողջովին ցնցվեց,—

գործը որ սկսել են, հիմի էլ կանգ չեն առնի։ Դեհ, ի՞նչ արած, գնա՞նք հրապարակ։

Իվան Ալեքսեևիչը ձեռքը մեկնեց գլխարկին. փարատելով իր կասկածը, հարցրեց.

— Տղերք, իսկապես, մենք հո չե՞նք ժանգոտվել։ Միխայիլը տաքարյուն է, բայց գործունյա տղա է... Նա կոթեց մեզ։

Նրան ոչ ոք չպատասխանեց։ Լուռ դուրս եկան, քայլեցին դեպի հրապարակը։

Մտազբաղ նայելով իր ոտներին, քայլում էր Իվան Ալեքսեևիչը։ Նա տանջվում էր այն մտքից, որ կեղծել էր ու այնպես չէր վարվել, ինչպես թելադրում էր գիտակցությունը։ Իրավացիությունը Վալետի ու Կոշևոյի կողմն էր. հարկավոր էր հեռանալ և ոչ թե մտատանջության մեջ ընկնել։ Այն արդարացումները, որ նա հրամցնում էր ինքն իրեն, անհուսալի էին, ու ինչ-որ մեկի խեղամիտ, հեգնոտ ձայնը, որ հնչում էր նրա հոգու մեջ, ճզմում էր այդ արդարացումները ինչպես ձիու սմբակը — ջրափոսի բարակ տառցակեղևը։ Իվան Ալեքսեևիչը հաստատ որոշեց միայն մի բան,— առաջին իսկ ընդհարման դեպքում փախչել բոլշևիկների մոտ։ Այդ որոշումը նրա մեջ ձևավորվեց մինչև հրապարակ հասնելը, բայց Իվան Ալեքսեևիչն այդ մասին ոչինչ չասաց Գրիգորիին ու Խրիստոնյային, բնազդորեն հասկանալով, որ նրանք ինչ-որ այլ բան են ապրում, ու հոգու խորքում արդեն երկյուղ կրելով նրանցից։ Նրանք երեքով միասին մերժեցին Վալետի առաջարկը, չգնացին՝ պատճառ բերելով ընտանիքները, մինչդեռ նրանցից յուրաքանչյուրը գիտեր, որ այդ պատճառաբանությունը համոզիչ չէ ու չի կարող արդարացում լինել։ Այժմ նրանցից ամեն մեկը յուրովի էր անհարմարություն զգում մյուսների հանդեպ, ասես նրանք անմաքուր, ամոթալի գործ էին կատարել։ Իվան Ալեքսեևիչը չհանդուրժելով ցածր լռությունը, պատժելով ինքն իրեն և մյուսներին, Մոխովի տան դիմաց ասավ.

— Մեղքերս ի՞նչ թաքցնենք. ֆրոնտից եկել էինք իբրև բոլշևիկներ, իսկ հիմի ծակ ու ծուկ ենք մտնում։ Մեր տեղը ուրիշները պիտի կռվեն, իսկ մենք կարող ենք միայն կանանց դեմ կռվել...

— Ես կռվել եմ, թող ուրիշներն էլ փորձեն,— դեմքը շուռ տալով ասաց Գրիգորին։

— Հը՛մ, նրանք... ավազակություն են անում, իսկ մենք, ուրեմն, պիտի նրանց կո՞ղմն անցնենք։ Այդ ի՞նչ Կարմիր գվարդիա է, հը՞։ Բռնաբարում են կանանց, ուրիշի ունեցածը թալանում։ Այստեղ պետք է երկու աչքդ չորս անես։ Քոռ մարդը, ուրեմն, միշտ էլ գլուխը պատին կխփի։

— Դու այդ տեսե՞լ ես, Խրիստան,— ջղայնոտ հարցրեց Իվան Ալեքսեևիչը։

— Մարդիկ են ասում։

— Ա՜-ա... մարդի՛կ...

— Դեհ, հերիք է։ Գնանք, քանի դեռ մեզ այստեղ չեն տեսել։

Հրապարակը ճոխ պճնվել էր կազակական լամպասներով, գլխարկներով, երբեմն այստեղ ու այնտեղ սևին էր տալիս մի փոշոտ փափախ։ Հավաքվել էր ամբողջ խուտորը։ Կանայք չկային։ Եկել էին միայն ծերունիները և ռազմաճակատային հասակի ու ավելի փոքր կազակները։ Առջևում, հենակներին հենված, կանգնել էին ամենածեր մարդիկ,— պատվավոր դատավորները եկեղեցական խորհրդի անդամները, դպրոցների հոգաբարձուները, երեցփոխը։ Գրիգորին այս ու այն կողմ նայեց, փնտրեց հոր ալեխառն մորուքը։ Ծերունի Մելեխովը կանգնել էր իր խնամու, Միրոն Գրիգորևիչի կողքին։ Նրանց առջևում գորշ, շքեղ, շքանշաններ կպցրած համազգեստով Գրիշկա պապին հենվել էր ոստոտ հենակին։ Խնամու կողքին կանգնել էին խնձորի պես կարմիր Փչան Ավդեիչը, Մատվեյ Կաշուլինը, Արխիպ Բոգատիրյովը, կազակական գլխարկ դրած Ատեպին Յացան. ավելի հեռու անընդմեջ, կիսաշրջանաձև պատնեշ էին կազմել ծանոթ դեմքերը՝ երկարամորուք Եգոր Սինիլինը, Յակով Պոդկովան, Անդրեյ Կաշուլինը, Նիկոլայ Կոշևոյը, երկարահասակ Բորշչևը, Անիկուշկան, Մարտին Շամիլը, երկարասրունք աղացպան Գրոմովը, Յակով Կոլովեյցինը, Մերկուլովը, Ֆեդոտ Բոդովսկովը, Իվան Տամիլինը, Եպիֆան Մակսաևը, Զախար Կորոլյովը, Փչան Ավդեիչի որդի Անտիպը, որ կարճաքիթ, կարճահասակ մի կազակ էր։ Անցնելով մի կողմ, Գրիգորին իր եղբորը, Պետրոյին տեսավ բոլորակի հակադիր կողմում։ Պետրոն նարընջագույն-սև գեորգևյան ժապավեններով վերնաշապիկ հագած, խոսում-ծիծաղում էր թևը կտրած Ալյոշկա Շամիլի հետ։ Նրա

Ձախ կողմում կանաչին էին տալիս Միտկա Կորշունովի այքերը։ Սա ծխախոտի գլանակն էր վառում Պրոխոր Զիկովի գլանակից։ Պրոխորն օգնում էր,— չռելով հորթի իր աչքերը, ճպճպացնում էր շրթունքները,— հրահրում կրակը։ Հետևում խմբվել էին երիտասարդ կազակները. բոլորակի մեջտեղում, խախուտ սեղանի մոտ, որի չորս ոտները խրվել էին փոխոր, չչորացած գետնի մեջ, նստել էր խուտորի ռևկոմի նախագահ Նազարը, նրա կողքին, ձեռքով սեղանի երեսին հենված, կանգնել էր Գրիգորին անծանոթ մի հարյուրապետ՝ պաշտպանական գույնի գլխարկով, գլխարկանիշով, ուսադիրներ կպցրած կուրտկայով և նեղ, կանաչ-շագանակագույն գալիֆե շալվարով։ Ռևկոմի նախագահը, շփոթված, ինչ-որ բան էր ասում նրան, հարյուրապետը լսում էր մի քիչ կռացած, մեծ ու ցցուն ականջը նախագահի մորուքին թեքած։ Հրապարակը մեղվանոցի պես լեցուն էր մեղմ աղմուկով։ Կազակները խոսակցում, կատակում էին, բայց բոլորի դեմքերն էլ լարված էին։ Մեկը ձանձրացավ սպասելուց, երիտասարդական ձայնով գոչեց.

— Սկսեցեք, էլի՛, ինչո՞ւ եք սպասում, համարյա բոլորն էլ հավաքվել են։

Սպան անբռնադատ շտկվեց, հանեց գլխարկը ու պարզապես, ինչպես ընտանիքի մեջ, սկսեց իր խոսքը.

— Պարոնայք ծերունիներ, և դուք, ճակատային կազակ եղբայրներ, լսե՞լ եք, թե ինչ է կատարվել Սետրակով խուտորում։

— Ո՞վ է դա, ո՞րտեղացի է,— բամբ ձայնով հարցրեց Խրիստոնյան։

— Վեշենսկուց, Զյորնայա ռեչկայից է, Սալդատով թե ինչ...— պատասխանեց մեկը։

— Մոտ օրերս,— շարունակեց հարյուրապետը,— Սետրակով եկավ Կարմիր գվարդիայի մի ջոկատ։ Գերմանացիք գրավել էին Ուկրաինան ու շարժվելով դեպի Դոնի Զորաց մարզը, նրանց երկաթուղուց դեն էին քշել։ Նրանք էլ շարժվեցին Միգուլինսկու հողով։ Գրավելով խուտորը, սկսեցին թալանել կազակների գույքը, բռնաբարել կազակուհիներին, ապօրինի ձերբակալություններ կատարել և այլն։ Երբ դեպքի լուրը հասավ շրջակա խուտորները, կազակները զենքը ձեռ-

ներին հարձակվեցին կողոպտիչների վրա։ Ջոկատի կեսը ոչնչացավ, կեսն էլ գերի ընկավ։ Միգուլինցիները հսկայական քանակով ավար վերցրին։ Միգուլինսկայա և Կազանսկայա ստանիցաները թոթափեցին բոլշևիկյան իշխանության լուծը։ Կազակները մեծից մինչև փոքրը ոտքի ելան պաշտպանելու Խաղաղ Դոնը։ Վեշինսկայայում ռևկոմը տապալված է, ստանիցայի ատաման է ընտրված, խուտորների մեծ մասում՝ նույնպես։

Հարյուրապետի այս խոսքերի վրա ծերունիները սկսեցին կամացուկ փսփսալ. ռևկոմի նախագահը աթոռի վրա անհանգիստ շարժումներ արեց ինչպես թակարդ ընկած գայլը։

— Ամենուրեք ջոկատներ են կազմված։ Դուք էլ պետք է ճակատայիններից ջոկատ կազմեք, որպեսզի ստանիցան պաշտպանեք վայրենի, ավազակային հրոսակախմբերի նոր արշավանքից։ Մենք պետք է վերականգնե՞նք մեր վարչությունը։ Մեզ հարկավոր չէ կարմիր իշխանությունը,— նա միայն անբարոյականություն է բերում և ոչ թե ազատություն։ Մենք հո չե՞նք թույլ տա, որ մուժիկներն անպատվեն մեր կանանց ու քույրերին, որ նրանք ծաղր ու ծանակի ենթարկեն մեր ուղղափառ հավատը, անարգեն սուրբ տաճարները, թալանեն մեր գույքը և սեփականությունը... Այդպես չէ՞, պարոնայք ծերունիներ։

Հրապարակը տնքաց «ճի՛շտ է-է՞» միահամուռ գոռոցից։ Հարյուրապետը սկսեց կարդալ խմորատիպով տպված կոչը։ Նախագահը հեռացավ սեղանի մոտից՝ մոռանալով ինչ-որ թղթեր։ Ամբոխը լսում էր առանց մի բառ ասելու։ Հետևում ալարկոտությամբ խոսքեր էին փոխանակում ճակատայինները։

Հենց որ սպան սկսեց կարդալ, Գրիգորին ամբոխի միջից դուրս գնաց. դանդաղ քայլելով դեպի տուն, հասավ տեր-Վիսսարիոնի տան անկյունը։ Միրոն Գրիգորևիչը նկատեց նրա հեռանալը։ Արմունկով բոթեց Պանտելեյ Պրակոֆևիչի կողքը։

— Տե՛ս, է՛, փոքր տղեղ գնաց։

Պանտելեյ Պրակոֆևիչը կաղալով դուրս եկավ բազմության միջից, խնդրելու և հրամայելու տոնով կանչեց.

— Գրիգո՛ր։

Վերջինս շուռ եկավ կողքի, կանգնեց առանց ետ նայելու։

— Ե՞տ դառ, որդյակ։

— Ինչո՞ւ ես գնում, ե՞տ արի,— թնդացին ձայները ու բազմաթիվ դեմքեր դարձան Գրիգորիի կողմը։

— Հլա դեռ սպա է՛լ է դարձել։

— Քիթդ մի՛ շուռ տա, հա՛-ա։

— Նա բոլշևիկների մեջ է եղել։

— Նույնպես կազակի արյուն է խմել...

— Կարմրամո՛ւթ։

Ճչոցները հասնում էին Գրիգորիի ականջին։ Նա լսում էր ատամաններն իրար սեղմելով, ըստ երևույթին մաքառում էր ինքն իր հետ. թվում էր, որ մի բոպե ևս — ու նա կգնա առանց ետ նայելու։

Պանտելեյ Պրակոֆևիչն ու Պետրոն թեթևացած շունչ առան, երբ Գրիգորին ետ դարձավ ու գլխակոր քայլեց դեպի բազմությունը։

Ծերունիները թունդ եռանդ ցույց տվին։ Միրոն Գրիգորևիչ Կորշունովը արտառոց արագությամբ ատաման ընտրվեց։ Պեպենոտ, սպիտակավուն դեմքով նա անցավ բոլորակի մեջտեղը, նախկին ատամանի ձեռքից ամաչկոտությամբ ընդունեց իշխանության խորհրդանիշը՝ ատամանական գավազանը պղնձե գլխիկով։ Մինչ այդ նա երբեք ատաման չէր եղել. երբ ընտրում էին նրան, չեմ ու չում էր անում, հրաժարվում, առարկելով, թե ինքը արժանի չէ այդ պատվին և կիսագրագետ է, բայց ծերունիները համառորեն համոզում էին.

— Վերցրո՛ւ գավազանը, մի՛ հակառակի, Գրիգորիչ։

— Դու մեր խուտորում առաջին տնտեսատերն ես։

— Խուտորի բարիքը չե՞ս ուզի։

— Տես, խուտորի փայերը խմելով չվատնես սնց որ Սեմյոնը։

— Է-հե՛յ... սա կվատնի։

— Տունը լիքն է, տեղը կհանենք։

— Կքերթենք ոչխարի պես...

Այնքան արտասովոր էին հապճեպ ընտրությունները և ամբողջ կիսամարտական իրադրությունը, որ Միրոն Գրիգորևիչը համաձայնվեց առանց երկար խնդրանքների։ Ընտրեցին ո՛չ այնպես, ինչպես առաջ, երբ գալիս էր ստանիցայի ատա-

մանը, յուրաքանչյուր տասը տնից մի ներկայացուցիչ էր հրավիրվում, թեկնածուները քվեարկվում էին, իսկ այստեղ— հենց այնպես, էլի, հասարակ ձևով, վռազ-վռազ. «Ովքեր կողմնակից են Կորշունովին, խնդրեմ անցնեն աջ կողմը»։ Ամբողջ բազմությունը աճապարեց աջ կողմը, միայն փինաչի Զինովին, որը Կորշունովի դեմ ոխ ուներ, մնաց իր տեղում մեն-մենակ կանգնած, ինչպես վառված քոթուկը գետառում։

Քրտնած Միրոն Գրիգորևիչը դեռ աչքն էլ չէր թարթել, երբ գավազանը ճխտեցին նրա ձեռքը, հեռվից ու հենց նրա ականջին գոռացին.

— Մաղարիչը վրե՛դ է, հա՛-ա։

— Բոլորն էլ քեզ ձայն տվին։

— Թրջե՛լ է պետք։

— Ատամանին վեր-վե՛ր գցել։

Բայց հարյուրապետը ընդհատելով աղաղակները, հմուտ կերպով ժողովը տարավ հարցերի գործնական լուծման ուղղությամբ։ Նա հարց դրեց ջոկատի հրամանատար ընտրելու մասին և հավանորեն Վեշենսկայայում լսած լինելով Գրիգորիի մասին, շողոքորթելով նրան, շողոքորթեց նաև խուտորին.

— Ցանկալի կլիներ ունենալ մի սպա հրամանատար։ Դրանով գործը հաջող կգնա կովի դեպքում, կորուստներն էլ քիչ կլինեն։ Ձեր խուտորում էլ հերոսներ շատ կան։ Ես, կազակներ, չեմ կարող իմ կամքը փաթաթել ձեր վզին, բայց իմ կողմից առաջարկում եմ ընտրել խորունժի Մելեխովին։

— Ո՞ւմ։

— Նրանք երկուսն են։

Սպայի հայացքը սահեց բազմության վրայով ու կանգ առավ հետևից երևացող Գրիգորիի կորացած գլխի վրա. նա ժպտալով գոչեց.

— Գրիգորի Մելեխովին... Ի՞նչ եք կարծում, հը՞։

— Կարելի է։

— Խոնարհաբար խնդրում ենք։

— Գրիգորի Պանտելևիչ, գլուխդ չմեռնի, հա՛-ա։

— Արի՛ բոլորակի մեջտեղը, արի՛։

— Ծերունիներն ուզում են նայել քեզ։

Հետևից հրեցին Գրիգորիին, նա կարմրելով անցավ բոլորակ մեջտեղը, շփոթվելով նայեց շուրջը։

— Տա՛ր մեր տղաներին,— Մատվեյ Կաշուլինը հենակը խփեց գետնին ու եռանդով խաչակնքեց,— տա՛ր ու ղեկավարիր նրանց այնպես, որ մի սիրտ, մի հոգի լինեն, հնազանդ լինեն ոնց որ սագերը արու սագին։ Ոնց որ սա հսկում է իր երամը ու պաշտպանում լեշակեր գազանից ու մարդուց, այնպես էլ դու պաշտպանիր։ Աստված տա, որ էլի չորս խաչի արժանանաս։

— Պանտելեյ Պրակոֆևիչ, քո տղան...

— Ոսկի գլուխ ունի, հա՛-ա։ Խելքի ծով է...

— Թոփա՛լ գրողի՛ տարած, արաղը գալիս է, հա՛-ա։

— Օ-օ՛-օ... ո՛նց ենք խմելու...

— Պարոնայք ծերունիներ, կամաց։ Գուցե երկու-երեք ցուցակ կազմենք առանց որևէ կամավորության։ Կամավորներ կարող են լինել, կարող են և չլինել...

— Ուրեք տարի՛։

— Հի՛նգ։

— Ցանկացողների՛ն տանել։

— Ինքդ գնա, հայվան... ո՞վ է քեզ պահում։

Խուտորի վերին ծայրում ապրող չորս ծերունի մոտեցան հարյուրապետին, որը խոսում էր նոր ատամանի հետ։ Նրանցից մեկը, կարճահասակ, անատամ մի ծերունի, փողոցի կպցրած մականունով Սունկը, հայտնի էր նրանով, որ ամբողջ կյանքում սրա-նրա հետ կռիվ էր սարքում և այնքան հաճախ էր դատարան գնում, որ իր միակ, ճերմակ ձին կարգին ուսումնասիրել էր դատարանի ճանապարհը. բավական էր, որ նրա հարբած տերը ընկներ սայլին ու բարձր, ճռճռան իր ձայնով գոռար՝ «Դատարան»,— և ձին ինքը ճանապարհով գնում էր ստանիցա։ Սունկը ճմռթված գդակը քաշելով աչքերին, մոտեցավ հարյուրապետին։ Մնացած ծերունիները, որոնցից մեկը բոլորի կողմից հարգված, հիանալի տնտեսատեր Գերասիմ Բոլդիրևն էր, կանգ առան Սնկի կողքին։ Սունկը, որ իր բոլոր արժանիքներով հանդերձ նաև լեզվանի մարդ էր, առաջինը դիմեց հարյուրապետին.

— Ձերդ բարեծննդություն։

— Ի՞նչ եք ցանկանում, պարոնայք ծերունիներ,— հարյուրապետը քաղաքավարությամբ ծռվեց, մոտեցնելով մեծ, մսոտ բլթակ ունեցող ականջը։

— Ձերդ բարեծննդություն, դուք, ուրեմս, սխալ եք լսել մեր այդ խուտորցու մասին, որին հրամանատար եք նշանակել։ Իսկ մենք, ծերուկներս, բեկանում ենք ձեր այդ որոշումը, և մենք իրավազոր ենք դրա համար։ Մենք նրան հակառակ ենք։

— Ինչո՞ւ։ Ի՞նչ կա որ։

— Բա մենք ո՞նց վստահանանք նրան, երբ նա ինքը եղել է Կարմիր գվարդիայում, նրանց մոտ ծառայել իբրև հրամանատար ու միայն երկու ամիս առաջ այնտեղից վերադարձել վիրավորված լինելու պատճառով։

Հարյուրապետը շառագունեց։ Նրա ականջները կարծես ուռեցին արյունով լցվելուց։

— Չի՛ կարող պատահել։ Ես այդ մասին ոչինչ չեմ լսել... Ինձ ոչ ոք այդպիսի բան չի ասել...

— Ճիշտ է, բոլշևիկ է եղել,— խիստ տոնով վրա բերեց Գերասիմ Բոլդիրևը,— մենք նրան չենք հավատում։

— Փոխել նրան։ Հրե՛ն, տեսեք ինչ են ասում երիտասարդ կազակները. «Նա,— ասում են,— հենց առաջին կռվում մեզ կդավաճանի»։

— Պարոնա՛յք ծերուններ,— բղավեց հարյուրապետը՝ կանգնելով ոտների մատների վրա. նա ծերուններին էր դիմում խորամանկությամբ անտեսում էր ճակատայիններին.— Պարոնայք ծերուններ, մենք ջոկատի հրամանատար ընտրեցինք խորունժի Մելեխով Գրիգորիին, բայց արդյո՞ք արգելքներ չկան։ Հիմա ինձ հայտարարեցին, որ նա ձմռանը եղել է Կարմիր գվարդիայում։ Արդյո՞ք դուք կարող եք ձեր որդիներին ու թոռներին վստահել նրան։ Դուք էլ, ճակատային եղբայրներ, արդյո՞ք հանգիստ սրտով կգնաք այդպիսի հրամանատարի հետևից։

Կազակները շշմած լռում էին։ Միանգամից աղմուկ բարձրացավ. առանձին բացականչություններից ու բղավոցներից ոչ մի բառ չէր կարելի հասկանալ։ Հետո արդեն, երբ աղաղակները դադարեցին, փնջաձև հոնքերով ծերուկ Բոգատիրյովը անցավ բոլորակի մեջտեղը, ժողովի առաջ հանեց փափախը, նայեց շուրջը։

— Ես իմ կարճ խելքով կարծում եմ, որ մենք այդ պաշտոնը չենք տա Գրիգորի Պանտելևիչին։ Նա մեղք է գործել,

մենք բոլորս էլ լսել ենք դրա մասին։ Թող նա առաջուց արժանանա մեր հավատին, քավի իր մեղքը, իսկ հետո կտեսնենք։ Գիտենք, որ նա լավ կռվող է... ամա ամպի տակից արևն է՛լ չի երևա. մենք չենք տեսնում նրա արժանավորությունը, նրա բոլշևիկական ծառայությունը ծակում է մեր աչքերը։

— Թող նա շարքային լինի,— տաքացած գոչեց երիտասարդ Անդրեյ Կաշուլինը։

— Պետրո Մելեխովը թող հրամանատար լինի։

— Գրիշկային նախրի մեջ քայլելն է՛լ կսազի։

— Թե որ ընտրեինք, մեր գլխին փորձանք կբերեր։

— Դա ինչի՞ս է պետք, է՞։ Շա՛տ հարկավոր եք դուք ինձ,— լարվածությունից կարմրելով՝ հետևից գոռում էր Գրիգորին. նա թափահարեց թևը, կրկնեց.— Աղբեր, ես իսկի էլ հանձն չեմ առնի. դուք իմ ինչի՞ն եք պետք,— ու ձեռները խոթեց շալվարի խորունկ գրպանները. գլուխը կախած, կռունկի քայլերով գնաց դեպի տուն։

Ու նրա հետևից՝

— Է-հե՛յ, շատ մի փքվի...

— Մունդոիկի մեկը. ո՞նց է տնկել ծուռտիկ քիթը։

— Օ՜-օ։

— Դամարներումը թուրքի արյուն է, է՞։

— Ձենն է՛լ չի կտրում. դիրքերում սպանների առաջ լեզու էր բանեցնում. հիմի էլ այստեղ...

— Ետ դառ, է՛յ...

— Պա՛հ-պա՛հ...

— Թող կորի. է՛, թյո՛ւ, հա՛ւշտ, հա՛ւշտ, հա՛ւշտ...

— Էլ ի՞նչ եք քամակներդ ցույց տալի դրան, եկեք գատ անենք։

Կամաց-կամաց հանգստացան։ Թունդ վեճի պահին ինչոր մեկը հրեց մի ուրիշին, մեկը հարված կերավ ու քթից արյուն հոսեց, ջահելներից մեկն էլ անսպասելիորեն հարբստացավ աչքատակի ուռուցքով։ Ընդհանուր հաշտությունից հետո անցան ջոկատի հրամանատարի ընտրության։ Ընտրեցին Պետրո Մելեխովին, և սա թունդ կարմրեց հպարտությունից։ Բայց հենց այստեղ էլ հարյուրապետը դեմ առավ չնախատեսված մի խոչընդոտի, ինչպես կայտառ ձին դեմ է առ-

նում չափից դուրս բարձր արգելապատին. հասավ կամավոր գրվելու հերթը, իսկ կամավորներ չգտնվեցին։ Ճակատայինները, որոնք սառն էին վերաբերվում դեպի այն ամենը, ինչ որ կատարվում էր,— տատանվում էին, չէին ուզում ցուցակագրվել, կատակի էին տալիս։

— Հը՛, Անիկեյ, ինչո՞ւ չես գրվում։

Ու Անիկուշկան մոթմոթում էր.

— Ես հլա դեռ ջահել եմ... Ա՛յ, բեղեր է՛լ չունեմ...

— Դու հանաքը դեն թող, հա՛-ա։ Մեզ ձե՞ռ ես առնում,— նրա ականջի տակին բղավեց ծերունի Կաշուլինը։

Անիկեյը ձեռքը թափ էր տալիս, ասես մոծակներ էր քշում.

— Գնա՛ քո Անդրյուշկային գրի։

— Գրե՛լ եմ։

— Պրոխոր Զի՛կով,— կանչեցին սեղանից։

— Ե՛ս եմ։

— Գրե՞նք քեզ։

— Չգիտեմ...

— Գրեցինք։

Միտկա Կորշունովը լուրջ դեմքով մոտեցավ սեղանին, կարուկ հրամայեց.

— Գրի՛ր ինձ։

— Դեհ, էլ ո՞վ է ուզում... Բոդովսկով Ֆեդոտ... դո՞ւ։

— Ես գրիժա ունեմ, պարոնայք ծերունիներ...— քթի տակին մոթմոթաց Ֆեդոտը՝ ամաչկոտությամբ խոնարհելով ծուռ, կալմիկական աչքերը։

— Ճակատայինները փառ-փառ ծիծաղեցին՝ ձեռները տանելով կողերին. կատակասերները մեջտեղ եկան.

— Կնկանդ վերցրու քեզ հետ... թե որ աղիքներդ դուրս գան, տեղը կդնի։

— Հա՛-հա՛--հա՛-հա՛...— քրքջում էին հետևից՝ հազալով ու փայլեցնելով ատամներն ու ծիծաղից կկոցվող աչքերը։

Մի ուրիշ կողմից էլ թռչունի պես թռավ մի նոր կատակ.

— Մենք քեզ խոհարար կնշանակենք։ Թե որ մուտտառ բորշչ եփեցիր, այնքան կլցնենք վրեդ, մինչև որ մյուս կողմից գրիժաղ դուրս գա։

— Արագ չես վազի. քեզ նմանների հետ նահանջելը հաշիվ է։

Ծերունիները զայրանում էին, նախատում.

— Հերիք է, հերիք, խնդալու տեղը չի։

— Սարսաղությունների ժամանա՞կ եք գտել, ինչ է։

— Ամոթ է, տղերք,— խրատում էր մեկը,— բա աստվա՞ծ. հը՛մ, աստված թողություն չի տա։ Այնտեղ մարդիկ են մեռնում, իսկ դուք... բա աստված ի՞նչ կասի։

— Տամիլին Իվա՛ն,— հարյուրապետը շուռ եկավ, նայեց շուրջը։

— Ես հրետանավոր եմ,— պատասխանեց Տամիլինը։

— Գրվո՞ւմ ես։ Մեզ հրետանավորներ է՛լ են հարկավոր։

— Գրի՛... է-է՞-հե՛։

Զախար Կորոլյովը, Անիկուշկան ու էլի մի քանի մարդ ծաղրի առան հրետանավորին։

— Մենք քեզ համար ուռենուց թնդանոթ կշինենք։

— Արկերի փոխարեն դդումներ կարձակես, կարտեշի տեղ՝ կարտոլ։

Կատակներով ու ծիծաղով գրվեց վաթսուն կազակ։ Վերջինը մեջտեղ եկավ Խրիստոնյան։ Նա մոտեցավ սեղանին, բառերը շեշտելով ասաց.

— Դեհ, ուրեմս, ճզիր ինձ։ Միայն թե առաջուց ասում եմ, որ չեմ կռվելու։

— Բա էլ ինչո՞ւ ես ցուցակագրվում,— ջղայնոտ հարցրեց հարյուրապետը։

— Կտեսնեմ, էլի՛, պարոն սպա։ Ուզում եմ տեսնել, թե ինչ կլինի։

— Գրեցե՛ք դրան,— հարյուրապետը թոթվեց ուսերը։

Համարյա կեսօր էր, երբ ցրվեցին հրապարակից։ Որոշվեց հենց մյուս օրը մեկնել միգուլինցիներին օգնելու։

Հրապարակում առավոտյան վաթսուն կամավորներից հավաքվեց միայն մոտ քառասուն հոգի։ Պետրոն, որ զուգվել էր շինելով ու ճիտքերը բարձր սապոգներով, դիտեց կազակներին։ Շատերը նոր կպցրած, նախկին գնդերի համարներով նշված, կապույտ ուսադիրներով էին, ոմանք էլ առանց ուսադիրների։ Թամքերը ուռճացել էին երթական բեռերով, թամքերի փոկերի տակ ու մախաղների մեջ դրված էր ուտելիք,

սպիտակեղեն, ռազմաճակատից բերած փամփուշտներ։ Ոմանք հրացաններով էին, մեծամասնությունը՝ սառն զենքով։

Կանայք, աղջիկները, երեխաները, ծերունիները հավաքվել էին հրապարակում՝ ռազմիկներին ճանապարհելու։ Պետրոն հանգստացած, ձին նստած, շարք կանգնեցրեց իր կիսահարյուրյակը, դիտեց տարբեր գույնի ձիերը, հեծյալներին,— նրանցից ոմանք շինելներ էին հագել, ոմանք համազգեստներ, ոմանք անձրևից պաշտպանող բրեզենտե պլաշչներ,— ու ընթացքի հրաման տվեց։ Փոքրիկ ջոկատը քայլքով բարձրացավ բլուրը, կազակները մռայլադեմ նայում էին խուտորին, հետին շարքում մեկը գնդակ արձակեց։ Բլուրի վրա Պետրոն ձեռնոցներ հագավ, թիմարեց ցորնագույն բեղերը ու ձին դարձնելով այնպես, որ սա արագ քայլելով գնում էր ջոկատի կողքից,— բղավեց ժպտալով, ձախ ձեռքով գլխարկը պահած.

— Հա՜ր-յու-րյակ, լսիր իմ հրամանը... Վարգով մա՛րշ...

Կազակներն ասպանդակների վրա կանգնած, թափահարեցին մտրակները, սլացան վարգով։ Քամին խփում էր նրանց դեմքերին, թափահարում ձիերի պոչերն ու բաշերը, անձրև էր խոստանում։ Սկսվեցին խոսակցությունները, կատակները։ Խրիստոնյայի սևաթույր, փոքրիկ ձին սայթաքեց։ Տերը նրան գազեց մտրակով, հայհոյանք թափեց. ձին պտտելով պարանոցը, թռավ քառատրոփով, դուրս եկավ շարքից։

Մինչև Կարգինսկայա ստանիցան հասնելը կազակները ուրախ տրամադրության մեջ էին։ Գնում էին լիովին համոզված, որ ոչ մի պատերազմ չի լինի, որ Միգուլինսկայայի գործը բոլշևիկների պատահական մի հարձակում է կազակական տերիտորիայի վրա։

XXIV

Իրիկնադեմին ժամանեցին Կարգինսկայա։ Ստանիցայում ճակատայիններ չկային,— գնացել էին դեպի Միգուլինսկայա։ Հրապարակում, վաճառական Լևոչկինի խանութի մոտ ձիերից իջեցնելով իր ջոկատը, Պետրոն գնաց ստանիցայի ատամանի բնակարանը։ Նրան դիմավորեց բարձրահասակ, ամբակազմ, թխադեմ մի ծեր։ Սա հագել էր երկար, լայն

վերնաշապիկ առանց ուսադիրների, կապել կովկասյան գոտի, կազակական լամպասավոր շալվարի ծայրերը դրված էին սպիտակ, բրդե գուլպաների մեջ։ Բարակ շրթունքների անկյունից կախվել էր ծխամորճը։ Դարչնավուն, կայծկլտող աչքերի նայվածքը տարօրինակ էր, գաղտագողի։ Նա կանգնել էր արտաքին սանդուղքի վրա, ծխում էր, նայում մոտեցող Պետրոյին։ Նրա ամբողջ վիթխարի կերպարանքը, կրծքի ու թևերի մկանների ուռուցիկ, թուջի պես պինդ թմբերը, որոնք նշմարվում էին վերնաշապկի տակից, ցույց էին տալիս նրա արտասովոր ուժը։

— Դո՞ւք եք ստանիցայի ատամանը։

Սպան կախ ընկած բեղերի տակից քուլա-քուլա ծուխ արձակեց, բամբ ձայնով պատասխանեց.

— Այո, ես եմ ստանիցայի ատամանը։ Ո՞ւմ հետ խոսելու պատիվ ունեմ։

Պետրոն հայտնեց իր ով լինելը։ Սեղմելով նրա ձեռքը, ատամանը մի փոքր թեքեց գլուխը։

— Լիխովիդով Ֆյոդոր Դմիտրիևիչ։

Ֆյոդոր Լիխովիդովը, Գուսինո-Լիխովիդովսկի խուտորի կազակ, բնա՛վ սովորական մարդ չէր։ Նա սովորել էր յունկերների դպրոցում, ավարտելուց հետո երկար ժամանակով չքացել։ Մի քանի տարուց հետո հանկարծակի երևաց խուտորում, բարձրագույն իշխանությունների թույլտվությամբ սկսեց կամավորներ հավաքագրել իսկական ծառայությունն անցած կազակներից։ Այժմյան Կարգինսկայա ստանիցայի շրջանում հավաքեց հանդուգն, գլխից ձեռք վերցրած կազակների մի հարյուրյակ, տարավ Պարսկաստան։ Այնտեղ իր ջոկատով մնաց մի տարի՝ կատարելով շահի անձնական պահպանությունը։ Պարսկական հեղափոխության օրերին փախավ շահի հետ, կորցրեց ջոկատը ու նույնպես հանկարծակի երևաց Կարգինում. իր հետ բերեց կազակների մի մասը, շահի ախոռից վերցրած երեք զտարյուն արաբական նժույգ, բերեց հարուստ ավար,— թանկարժեք գորգեր, ամենահազվագյուտ զարդարանքներ, ամենագեղեցիկ գույներով մետաքսեղեն։ Նա մի ամիս քեֆ քաշեց, շալվարի գրպաններից մեծ քանակությամբ պարսկական ոսկեդրամ շպրտեց, ձյան պես սպիտակ, բարակ ոտներով, գլուխը կարապի նման պահող

ամենագեղեցիկ նժույգով թռչում էր խուտորից խուտոր, նրանով մտնում Լևոչկինի խանութը, որևէ մի բան էր գնում ու փողը վճարում առանց ձիուց իջնելու, և միջանցիկ դռնով դուրս էր գնում։ Ֆյոդոր Լիխովիդովը անհայտացավ նույնպես անսպասելի կերպով, ինչպես և ժամանել էր։ Նրա հետ միասին չքացավ նաև իր անբաժան ուղեկիցը՝ բանբերը, Գուսինո-Լիխովիդովսկու կազակ, պարասեր Պանտելյուշկան. չքացան թե ձիերը և թե այն ամենը, ինչ որ բերված էր Պարսկաստանից։

Կես տարուց հետո Լիխովիդովը երևան եկավ Ալբանիայում։ Այնտեղից, Դուրացցոյից, նրա ծանոթների անունով Կարգինում ստացվում էին բացիկներ՝ Ալբանիայի լեռնային կապույտ տեսարաններով, տարօրինակ դրոշմներով։ Հետո նա տեղափոխվեց Իտալիա, շրջեց Բալկանները, եղավ Ռումինիայում, Արևմտյան Եվրոպայում, համարյա թե Իսպանիա էլ հասավ։ Ֆյոդոր Դմիտրիևիչի անունը խորհրդավորության մշուշով էր պատած։ Խուտորներում նրա մասին ամեն տեսակ լուրեր ու ենթադրություններ էին պտտվում։ Միայն մի բան էր հայտնի,— որ նա մոտիկ էր միապետական շրջաններին, Պիտերում ծանոթություններ էր պահպանում բարձրաստիճան անձանց հետ, աչքի ընկնող տեղ էր գրավում ռուս ժողովրդի Միության[1] մեջ, բայց թե արտասահմանում ինչ միսիաներ էր կատարում, այդ մասին ոչ ոք ոչինչ չգիտեր։

Վերադառնալով արտասահմանից, Ֆյոդոր Լիխովիդովը տեղավորվեց Պենզայում, այնտեղի գեներալ-նահանգապետի մոտ։ Կարգինում ծանոթները տեսնում էին նրա լուսանկարը ու հետո երկար օրորում գլուխները, շվարած ծլթացնում լեզուները. «Օ-օ-օ... Ֆյոդոր Դմիտրիևիչը բարձրանում է հա բարձրանում»։ «Տեսե՛ք, թե ինչ մարդկանց հետ է գործ բռնում»։ Իսկ լուսանկարի վրա Ֆյոդոր Դիմիտրիևիչը, ժպտալով իր սապատաքիթ, թուխ, սերբի դեմքով, վերցրել է նահանգապետի կնոջ թևը, վերջինս լանդո[1] է նստում։ Նահանգապետն ինքը սիրալիր ժպտում է նրան ինչպես հարազատին, լայնաքամակ կառապանը պարզած ձեռներով հազիվ է պահում երասանները, ձիերը պատրաստ են իսկույն ևթ սլանալու՝ կծոտելով սանձի բերանոցները։ Ֆյոդոր Դմիտրիևիչի մի ձեռքը նրբորեն մեկնվել է դեպի փրչոտ փափախը, մյուսը բաժակի պես բռնել նահանգապետուհու արմունկը։

Մի քանի տարվա չքացումից հետո, արդեն 1917 թվականի վերջին Ֆյոդոր Լիխովիդովը ջրի երես ելավ Կարգինում, տեղավորվեց այնտեղ,— կարծես թե երկար ժամանակով։ Իր հետ բերեց ուկրաինուհի թե լեհուհի կնոջն ու երեխային. տեղավորվեց հրապարակում, չորս սենյակից բաղկացած մի փոքրիկ տնակում, ձմեռն անցկացրեց ինչ-որ անհայտ պլաններ կազմելով։ Ամբողջ ձմեռը (որը Դոնի համար արտասովոր կերպով ցուրտ էր) բաց էին նրա միափեղկ պատուհանները,— նա կոփում էր իրեն և ընտանիքը՝ արմանք-զարմանք պատճառելով կազակներին։

1918 թվականի գարնանը, Սետրակովի մոտ տեղի ունեցած մարտից հետո նրան ատաման ընտրեցին։ Հենց այստեղ էլ լայն ծավալվեցին Ֆյոդոր Լիխովիդովի անհատնում ընդունակությունները։ Ստանիցան այնպիսի կոշտ ձեռք ընկավ, որ մի շաբաթ անց նույնիսկ ծերունիներն էլ զարմանքից օրորում էին գլուխները։ Նա այնպես կարգապահ դարձրեց կազակներին, որ ստանիցայի ժողովում նրա ճառից հետո (Լիխովիդովը լավ էր խոսում. բնությունը նրան ոչ միայն ուժ, այլև խելք էր տվել) ծերունիները, ինչպես ամբողջովին բուղանեից բաղկացած նախիր, բոռում էին՝ «Հաջողություն, ձերդ բարեծնություն, խոնարհաբար խնդրում ենք»։ «Ճի՛շտ է»։

Շատ և շատ խիստ էր նոր ատամանը. հենց որ Կարգինսկայայում լսեցին Սետրակովի մարտի մասին, մյուս օրն ևթ ստանիցայի բոլոր ճակատայինները մեկնեցին այնտեղ։ Ոչ կազակ բնակիչները (որոնք ստանիցայի ավանում կազմում էին բնակիչների մեկ երրորդ մասը) սկզբում չէին ուզում գնալ, զինվորները, որ թունդ բոլշևիկներ էին, բողոքեցին, բայց Լիխովիդովը ժողովում իր ուզածն արավ, ծերունիները ստորագրեցին նրա առաջարկած որոշումը՝ արտաքսել բոլոր

1 «Ռուս ժողովրդի Միությունը» սև-հարյուրյակային, մոլեռանդ միապետական կազմակերպություն էր ցարական Ռուսաստանում։ Նա հակասեմիտական ագիտացիա էր մղում, հրեական ջարդեր, քաղաքական հակառակորդների սպանություններ էր կազմակերպում՝ կառավարությունից ստանալով հսկայական քանակությամբ դրամ։

1 Լանդո — քառատեղ կառք՝ բացվող վերին մասով։

«մուժիկներին», որոնք չեն մասնակցի Դոնի պաշտպանության։ Ու հենց մյուս օրը տասնյակ սայլեր, զինվորներով լեցուն, հարմոնի նվագով ու երգերով ձգվեցին դեպի Նապոլով, Չերնեցկայա գյուղը։ Ոչ կազակ բնակիչներից միայն մի քանի երիտասարդ զինվոր 1-ին գնդացրային գնդում ծառայած Վասիլի Ստորոժենկոյի առաջնորդությամբ փախան կարմիրգվարդիականների մոտ։

Ատամանը դեռ Պետրոյի քայլվածքից իմացել էր, որ վերջինս շարքային է եղել ու հետո սպա դարձել։ Նա Պետրոյին ներս չհրավիրեց, բարեսիրտ անպատկառության տոնով ասաց.

— Ո՛չ, սիրելիս, Միգուլինսկայայում դուք անելիք չունեք։ Առանց ձեզ էլ գործը գլուխ բերին,— երեկ երեկոյան հեռագիր ստացանք։ Ետ գնացեք ու հրամանի սպասեցեք։ Կազակներին մի լա՛վ խրատեցեք։ Այդքան մեծ խուտոր է ու քառասուն մարտի՞կ է տվել։ Դուք մի լավ կոթեցեք այդ սրիկաներին։ Չէ՞ որ խնդիրը նրանց կաշվին է վերաբերում։ Գնա՛ք բարով, հաջողություն։

Նա մտավ տուն՝ անսպասելի թեթևությամբ տանելով իր հուժկու մարմինը, քստքստացնելով հասարակ քոշերի ներբանները։ Պետրոն գնաց հրապարակ, կազակների մոտ։ Նրան հարցուփորձ արեցին.

— Հը՛, ո՞նց է։

— Ի՞նչ կա այնտեղ։

— Գնո՞ւմ ենք Միգուլին։

Պետրոն չթաքցնելով իր ուրախությունը, քմծիծաղ տվեց.

— Տո՛ւն ենք գնում։ Առանց մեզ էլ կատարել են գործը։

Կազակները ժպտացին, խումբ-խումբ քայլեցին դեպի ձիերը, որոնք կապված էին ցանկապատի մոտ։ Խրիստոնյան նույնիսկ թեթև շունչ առավ, կարծես ուսերից մի ծանր բեռ թոթափելով, թփթփացրեց Տամիլինի ուսին.

— Ուրեմս տուն ենք գնում, թոփչի։

— Կնանիքը հիմի մեզ կարոտած կլինեն։

— Հիմի ճամփա ենք ընկնում։

Խորհրդակցելով, որոշեցին չգիշերել, անմիջապես մեկնել։ Նստեցին ձիերին, ու արդեն անկարգ վիճում, խոնվելով դուրս եկան ստանիցայից։ Եթե դեպի Կարգինսկայա դրժ-

կամորեն էին գնում, դանդաղ քշելով ձիերը, ապա այնտեղից մտրակեցին դրանց, սլացան արագ թափով։ Տեղ-տեղ յորդա էին գնում. երաշտից կոշտացած գետինը խուլ քրթմնջում էր սմբակների տակ։ Հեռո՞ւ-հեռվում, Դոնի մյուս կողմում բլրաշարքերից դենը երբեմնակի ճառագայթում էր կայծակը։

Կեսգիշերին ժամանեցին խուտոր։ Բլրից իջնելիս Անիկուշկան կրակեց իր ավստրիական հրացանից, ապա որոտաց համազարկը՝ ծանուցելով վերադարձի մասին։ Ի պատասխան շները հաչոց բարձրացրին խուտորովը մեկ, ու զգալով տան մոտիկությունը, դողալով, խոպոտ վրնջաց մեկի ձին։ Խուտորում այս ու այն կողմ ցրվեցին։

Մարտին Շամիլը Պետրոյին հրաժեշտ տալով, թեթևացած ասավ.

— Կռվեցինք պրծանք։ Շատ լավ եղավ։

Պետրոն մթության մեջ ժպտաց, ձին քշեց տուն։

Պանտելեյ Պրակոֆևիչը դուրս ելավ ձին տեղավորելու։ Հանեց թամքը, ձին տարավ ախոռը։ Պետրոյի հետ մտավ տուն։

— Արշավանքը վերացրի՞ն։

— Ը՛հը՛մ։

— Էհ, փառք աստծու։ Երանի էլ երբեք չլսենք դրա մասին։

Քնի մեջ տաքացած Դարյան վեր կացավ։ Ամուսնուն ընթրիք բերեց։ Օթախից դուրս եկավ կիսամերկ Գրիգորին. քորելով սեամազ կուրծքը, հեգնանքով դիմեց եղբորը.

— Հաղթեցի՞ք, հը՞։

— Հրես, հաղթում եմ բորշչի մնացորդին։

— Դեհ, այդ ավելի հեշտ է։ Բորշչը մենք կհաղթահարենք, մանավանդ եթե ես քեզ օգնեմ։

Մինչև զատիկ պատերազմի մասին ոչ մի լուր չկար, իսկ ավագ շաբաթ օրը Վեշենսկայայից մի հատուկ սուրհանդակ եկավ, փրփրակալած ձին թողեց Կորշունովների դարբասի մոտ, ու շրխկացնելով կողքից կախած թուրը, վազեվազ բարձրացավ արտաքին սանդուղքով։

— Ի՞նչ լուրեր կան,— շեմքում նրան դիմավորեց Միրոն Գրիգորևիչը։

— Ինձ ատամանն է հարկավոր։ Դո՞ւք եք։

— Մենք հնք։

— Իսկույն եթ հավաքեցեք կազակներին, Պոդտյոլկովը Կարմիր գվարդիայով գալիս է Նագուլինսկայա վոլոստից։ Ահա հրամանը,— ու շուռ տալով գլխարկի քրտնակալած աստառը, հանեց մի ծրար։

Մոտեցավ Գրիշակա պապին՝ ակնոցը դնելով քթին. բակից մոտ վազեց Միտկան։ Միասին կարդացին օկրուգային ատամանի հրամանը։ Հատուկ սուրհանդակը քանդակավոր բազրիքին հենված, թևքով սրբում էր հողմահար դեմքին նստած փոշին։

Զատկի առաջին օրը, ուտիսի կերակուրներով կշտացած, կազակները մեկնեցին խուտորից։ Գեներալ Ալֆերովի հրամանը խիստ էր, սպառնում էր զրկել կազակական կոչումից, այս պատճառով էլ Պոդտյոլկովի դեմ էր գնում ոչ թե քառասուն մարդ, ինչպես այդ եղավ առաջին անգամ,— այլ հարյուր ութ մարդ, որոնց թվում կային նաև ծերունիներ,— նրանք համակված էին կարմիրների հետ զարկվելու ցանկությամբ։ Իր որդու հետ գնում էր կորաքիթ Մատվեյ Կաշուլինը։ Առջևի շարքերում իր անպետք զամբիկով աչքի էր ընկնում Փչան Ավդեիչը, որը ամբողջ ճանապարհին կազակներին զվարճացնում էր իր ամենաանհեթեթ ստերով. գնում էր ծերուկ Մակսաևը ու էլի մի քանի սպիտակամորուք մարդիկ... Երիտասարդներն ակամա էին գնում, ծերերը՝ բուռն ցանկությամբ։

Գրիգորի Մելեխովը անջրանցիկ պլաշչի վեղարը գլխին գցած, գնում էր հետին շարքում։ Մոայլ ամպերով պատած երկնքից անձրև էր մաղվում։ Շքեղ կանաչած տափաստանի վերևում սահում էին ամպերը։ Բա՜ռձր, հենց ամպերի տակին ճախրում էր արծիվը։ Դանդաղ թափահարելով թևերը, դրանք տարածելով, նա մաքառում էր քամու դեմ, և օդային հոսանքով տարված, ծռմռվելով, աղոտ փայլում էր դարչնավուն երանգով, թռչում դեպի արևելք, հետզհետե հեռանում ու փոքրանում։

Տափաստանը խոնավ էր, կանաչին էր տալիս։ Միայն տեղ-տեղ անտառի բացատների նման աչքի էր ընկնում նախորդ տարվա գնդածաղիկը, փռված էր կարմրավուն եղինջը, ու բլրաշարքի վրա ուրվագծվում էին գորշ-կապտավուն, բարձրադիր բլրակները։

Սարից դեպի Կարգինսկայա իջնելով, կազակները հանդիպեցին մի կազակ տղայի, որը եզներ էր տանում արածացնելու։ Նա քայլում էր բոբիկ ոտներով, սայթաքում էր, թափահարում մտրակը։ Տեսնելով ձիավորներին, կանգ առավ, ուշադրությամբ դիտեց նրանց ու ցեխոտված, պոչերը կապած ձիերը։

— Ո՞ւմ տղան ես,— հարցրեց Իվան Տամիլինը։

— Կարգինի,— սրտոտ պատասխանեց տղան՝ ժպտալով գլխին գցած կուրտկայի տակից։

— Ձեր կազակները գնացե՞լ են։

— Գնացել են։ Կարմիր գվարդիան ջարդելու են գնացել։ Քեռի՛ ջան, ձեզ մոտ թութուն չի՞ լինի։

— Թութո՞ւն ես ուզում,— Գրիգորին կանգնեցրեց ձին։

Տղան մոտեցավ նրան։ Նրա քշտած շալվարը թաց էր, լամպասները կարմրին էին տալիս։ Նա համարձակ նայում էր գրպանից ծխախոտատուպրակը հանող Գրիգորիին, ճկուն ու բարակ ձայնով ասում.

— Ա՛յ, հենց որ այստեղից իջնեք, կտեսնեք զարկվածներին։ Երեկ մեր կազակները գերի կարմիրներին քշեցին Վեշկի ու կոտորեցին... Ես, քեռի ջան, հրե՛ն այն Ավազոտ կուրգանի մոտ մտիկ էին տալի անասուններին, այնտեղից տեսա, թե ոնց նրանց թրատեցին։ Օ՛յ, սարսափելի էր։ Հենց որ մերոնք սկսեցին թրերը թափ տալ, նրանք այնպե՛ս բոռբոռացին, այնպե՛ս դես ու դեն ընկան... Հետո գնացի, մտիկ արի, ամենից շատը չինացիներ են։ Մեկին ուսից թրատեցին, սա այնպե՛ս է մղկտում, ու երևում է, թե ոնց է թպրտում արյունլվիկ սիրտը, թոքերն էլ կապո՛ւյտ գույն են առել... Սարսափելի՛ է,— կրկնեց տղան, զարմանալով, որ կազակները չեն զարմանում իր պատմածից, գոնե այսպես եզրակացրեց նա՝ դիտելով Գրիգորիի, Խրիստոնյայի ու Տամիլինի անտարբեր ու սառն դեմքերը։

Ծխախոտը վառելով, տղան նայեց Գրիգորիի ձիու թաց պարանոցին, շնորհակալություն հայտնեց ու վազեց դեպի եզները։

Ճանապարհի կողքին, գարնանային ջրերի փորփրած, ոչ խորունկ մի հեղեղատում, կավախառն հողով հաղիվ ծածկված, ընկել էին թրատված կարմիրգվարդիականների

գիակները։ Երևում էր Թուխ-կապտավուն, կապարե մի դեմք՝ շրթունքների վրա մակարդված արյունով, սևին էր տալիս բորիկ մի ոտք՝ բամբակած, կապույտ շալվարի թևով։

— Չեն է՛լ ծածկել... Սրիկանե՛ր,— խուլ շշնջաց Խրիստոնյան ու հանկարծ մտրակելով իր ձին, Գրիգորիից առաջ անցնելով, սլացավ դեպի ներքև։

— Հը՛մ, Դոնի հողում է՛լ արյուն թափվեց,— թուշը ցընցելով ժպտաց Տամիլինը։

XXV

Տատարսկի խուտորի կազակ Մաքսիմկա Գրյազնովը գնդացրորդ էր Բունչուկի մոտ։ Նա իր ձին կորցրեց Կուտեպովի ջոկատի դեմ մղված կռվում, այն ժամանակից սկսեց թունդ խմել, թղթախաղով տարվել։ Երբ նրա տակ սպանեցին ձին,—հանեց այն ձին, որն ուներ եզան տեսք, մեջքի երկայնքով արծաթավուն մի շերտ,— նա հանեց թամքը, շորս վերստ տարավ այն, ու տեսնելով, որ գլուխը չի պրծացնի կատաղաբար վրա տվող կամավորներից, պոկեց շքեղ կրծապանակը, վերցրեց սանձը և ինքնակամ հեռացավ մարտից։ Նա երևան եկավ արդեն Ռոստովում, շուտով «քսանմեկ» խաղալով տարվեց իր թրատած յասավուլի արծաթե թուրը, ձեռքին մնացած ձիասարքը, շալվարը, շևրո սապոգները ու տրկլոր գնաց Բունչուկի գնդացրային խումբը։ Բունչուկը նրան հագցրեց, խրատեց։ Մաքսիմկան գուցեև ուղղվեր, բայց ապրիլի 24-ին Ռոստովի մատույցներում սկսված մարտում գընդակը խփեց նրա գլխին, Մաքսիմկայի կապույտ աչքերը քնկան շապկի վրա, արյունը աղբյուրի պես հորդեց պահածոյի տուփի նման բացված գանգից։ Ասես աշխարհում չէր է՛լ եղել Վեշենսկայայի կազակ Գրյազնովը,— անցյալում ձիագողը ու հենց երեկվա մոլի հարբեցողը։

Բունչուկը տեսավ, թե հոգեվարքն ինչպես է ցնցում Մաքսիմկայի մարմինը, ու գնդացրի փողից հոգատարությամբ սրբեց արյունը, որ թափվել էր Մաքսիմկայի ծակված գլխից։

Հարկավոր էր անմիջապես նահանջել։ Բունչուկը քարշ տվեց գնդացիրը. Մաքսիմկան մնաց տաք գետնի վրա առ-

ջելու, արևի տակ մնաց նրա թխամեջք մարմինը՝ գլխին քաշած շապկով։ (Մեռնելիս շապիկը քաշում էր գլխին, տանջվում էր)։

Կարմիրգվարդիականների մի դասակ, որ ամբողջովին կազմված էր Թուրքական ռազմաճակատից վերադարձած զինվորներից, դիրք բռնեց առաջին իսկ փողոցահատում։ Ձմեռային մաշված փափախով մի զինվոր Բունչուկին օգնեց գնդացիրը տեղադրելու, մնացածները փողոցի լայնքով բարիկադի պես մի բան սարքեցին։

— Դե հիմի թող գան,— ժպտաց երկարամորուք մի զինվոր՝ նայելով հորիզոնի կիսաղեղին, որ բլուրի հետևից մութիկ էր երևում։

— Հիմի մենք նրանց կսխկենք։

— Ջարդիր, Սամա՛րա,— բղավում էին մի հաղթանդամ երիտասարդի, որը ցանկապատից տախտակներ էր պոկում։

— Հրե՛ն նրանք։ Այստեղ են գալի,— գոչեց մաշված փափախով զինվորը, որ բարձրացել էր օղու պահեստի կտուրի վրա։

Աննան պառկեց Բունչուկի կողքին։ Կարմիրգվարդիականները խիտ պառկեցին ժամանակավոր ամրության հետևում։

Այդ ժամանակ աջ կողմից, հարևան փողոցով, ինչպես արտամիջյան խոպանով անցնող կաքավներ, տասը կարմիրգվարդիական վազելով անցան անկյունի տան պատի հետևը։ Մեկը բղավեց.

— Վրա՛ են տալի, ճղեք։

Փողոցահատը մի ակնթարթում ամայացավ ու հանդարտվեց, իսկ մի րոպեից հետո, փոշու ամպից առաջ անցնելով, դուրս թռավ հեծյալ մի կազակ՝ գլխարկի վրա սպիտակ կապով, կարաբինը կողքին սեղմած։ Նա այնպիսի թափով շուռ տվեց ձին, որ վերջինը պպզեց ետին ոտների վրա։ Բունչուկը կարողացավ կրակել նագանից։ Կազակը ձիու պարանոցին կպչելով, դեպի ետ սլացավ։ Գնդացրի մոտ գտնվող զինվորները տատանման մեջ էին, երկուսը վազեցին ցանկապատի կողքից, պառկեցին դարբասի մոտ։

Նկատելի էր, որ հիմա կընկնեն ու կփախչեն։ Ծայրահեղորեն լարված լռությունը, շվարած հայացքները դիմադրու-

թյուն չէին խոստանում... Իսկ հետագա իրադարձությունից Բունչուկի հիշողության մեջ անջնջելիորեն ու վառ կերպով դրոշմվեց մի պահ։ Աննան, գլխակապը ծոծրակին, մազերը գդգզված, հուզմունքից սփրթնած ու անճանաչելի դարձած, վեր թռավ, հրացանն ուղղեց դեպի առաջ, նայեց շուրջը, ու ձեռքով ցույց տալով այն տունը, որի ետևում չքացել էր կազակը, նույնպես անճանաչելի, բեկվող ձայնով բղավեց՝ «Իմ ետևի՞ց»,— ու վազեց սայթաքելով, անհաստատ։

Բունչուկը ոտքի ելավ։ Նրա բերանը ծռմռվեց անասելի ճիչից։ Պոկեց մոտիկ զինվորի հրացանը, ու ոտների սարսափելի դող զգալով, շնչասպառ վազեց Աննայի ետևից՝ գոռալու, կանչելու, վերադարձնելու, անզոր լարվածությունից դեմքը սևացած։ Լսեց իրեն հետևող մի քանի մարդու հնոցը, ու իր ամբողջ էությամբ զգաց ինչ-որ մի սոսկալի, անուղղելի բան, ինչ-որ հրեշավոր վախճանի մոտեցումը։ Այդ ակնթարթում նա արդեն հասկացավ, որ Աննայի վարմունքն անզոր է մնացածներին առաջ մղելու, անիմաստ է, անմիտ, անհաջողության է դատապարտված։

Տան անկյունի մոտ դեմառդեմ հանդիպեց վրա տվող հեծյալ կազակներին։ Նրանց կողմից — անկանոն համազարկ։ Գնդակների սվսվոց։ Աննայի նապաստակային ողորմելի ճիչը։ Եվ ահա նա ընկնում է գետնին, ձեռները պարզած, աչքերը խելահեղ արտահայտություն ունեն։ Բունչուկը չտեսավ, թե ինչպես կազակները ետ դարձան, չտեսավ, թե ինչպես այն տասնութ զինվորները, որոնք իր գնդացրի մոտ էին, Աննայի պոռթկումով բորբոքված, քշում էին կազակներին։ Աննան, միայն Աննան էր նրա աչքերի առաջ, թպրտում էր նրա ոտների մոտ։ Անզգայացած ձեռներով նրան կողքի շուռ տվեց, որ վերցնի ու տանի, տեսավ ձախ կողից հոսող արյունը ու կապույտ կոֆտայի ծվենները, որ կախվել ու ճոճվում էին վերքի շուրջը,— հասկացավ, որ վերքը պայթող գնդակից է, հասկացավ, որ Աննան մեռնելու է, ու մահ տեսավ նրա մթնած աչքերում։

Մեկը նրան դեն հրեց։ Աննային տարան մոտակա բակը, պառկեցրին զով տեղում, մարագի ծածկի տակ։

Մաշված փափախով զինվորը բամբակի փաթիլներ էր խոթում վերքի մեջ ու դեն շպրտում, դրանք ուռճանում ու սևանում էին արյունից։ Ուշքի գալով, Բունչուկն արձակեց Աննայի կոֆտայի կոճակները, պատռեց իր շապիկը, ու կտավի կտորները սեղմելով վերքին, տեսնում էր, թե ինչպես արյունը պղպջակներ է արձակում անցքի մեջ թափանցող օդից, տեսնում էր, թե ինչպես է կապուտակել ու գունաթափվել Աննայի դեմքը ու ինչպես է տանջանքից դողում նրա սևացած բերանը։ Շուրթերը օդ էին կլանում, իսկ թոքերը շնչահեղձ լինում. օդը թափանցում էր բերանի ու վերքի միջով։ Բունչուկը պատռեց նրա շապիկը, չքաշվելով մերկացրեց մահացու քրտինքով պատած մարմինը։ Վերքը մի կերպ ծածկեցին տամպոնով։ Մի քանի րոպեից հետո վերադարձավ Աննայի գիտակցությունը։ Փոս ընկած աչքերը սև, ուռած կլորակների միջից նայեցին Իլյային ու ծածկվեցին դողդոջուն արտևանունքներով։

— Ջո՛ւր, այրվում եմ,— ճչաց Աննան ու թպրտաց, լացեց։— Ապրե՛լ, Ի՛լյա-ա-ա... սիրելիս... Աա՛աա։

Բունչուկն ուռած շուրթերը հպում էր նրա բորբոք այտերին, բաժակից ջուր էր լցնում կրծքին։ Ջուրը ծայրեծայր լցվում էր անրակների փոսերի մեջ, բոպեապես գոլորշիանում։ Մահացու տաքությունը կիզում էր Աննային։ Բունչուկը որքան էլ ջուր էր լցնում նրա կրծքին, նա թպրտում էր, գալարվում։

— Շո՛գ է... Կրա՛կ...

Ուժասպառ, հետզհետե սառելով, պարզ լսվող բառերով ասաց.

— Ի՛լյա, ինչո՞ւ, է՞։ Ա՛յ, տեսնում ես, թե ինչպես պարզ է ամեն ինչ... Տարօրինակ ես դու... Սարսափելի պարզ է... Ի՛լյա... Սիրելիս, դու մայրիկիս մի կերպ... Դու գիտես...— Նա կիսաբաց աչքերը, որոնք նեղացել էին ինչպես ծիծաղի ժամանակ, և փորձելով հաղթահարել ցավն ու սարսափը, խոսեց անհասկանալի, կարծես խեղդվելով.— Սկզբում զգում ես... ցնցում ու այրվածք... Այժմ վառվում է ամեն ինչ... Զգում եմ, որ մեռնում եմ...— ու կնճռոտվեց՝ տեսնելով Բունչուկի ձեռքով արված դառն, բացասական նշանը.— Թող, ներսս արյուն է լցվում... պլևրաս ուռել է արյունից... ծանր է... Ա՛խ, որքան ծանր է շնչել...

Մեջեմեջ խոսում էր արագ ու երկար, կարծես աշխատում էր արտահայտել այն ամենը, ինչ որ ճնշել էր իրեն։ Բունչուկն անհուն սարսափով նկատեց, որ նրա դեմքը սպիտակում է, դառնում թափանցիկ, քունքերի մոտ դեղնություն է առաջանում։ Նայեց ձեռներին, որոնք անկյանք ընկած էին մարմնի կողքին, տեսավ, որ եղունգները հասունացող դամբուլի նման կարմրակապույտ գույն են ստանում։

— Ջո՛ւր... Կրծքիս... Այրվում եմ։

Բունչուկը վազեց մոտակա տունը՝ ջուր բերելու։ Վերադառնալով, ծածկի տակ էլ չլսեց Աննայի հեծկլտոցը։ Ցածրացած արևը ընկել էր վերջին ջղաձգությունից փակված բերանին, վերջին սեղմված, դեռևս տաք, մոմագույն ձեռքին։ Դանդաղորեն իրար սեղմելով Աննայի ուսերը, Բունչուկը քիչ բարձրացրեց նրան, մի բոպե նայեց սրված քթին, քթարմատի սևացած, փոքրիկ պեպեններին, գզգզված, սև հոնքերին, տեսավ ակնաբիբերի մարող փայլը։ Անճարակորեն ետ ընկած գլուխը ավելի ու ավելի էր կախվում աղջկական բարակ պարանոցի վրա, կապույտ երակի մեջ երակազարկը վերջին զարկերն էր հաշվում։

Բունչուկը շուրթերը հպեց մեռնողի սև, կիսախուփ կոպին, կանչեց.

— Ընկե՛րս, Ա՛նյա,— ելավ, ու կտրուկ շուռ գալով, գնաց մարմնի անբնականորեն ուղիղ դիրքով, առանց շարժելու ազդրերին սեղմած ձեռները։

XXVI

Այդ օրերին նա ապրում էր ինչպես տիֆային զառանցանքում։ Քայլում էր, մի բան անում, ուտում, քնում, բայց այդ ամենը կատարվում էր կարծես կիսաքուն, թմրեցուցիչ ու շշմեցնող վիճակում։ Խելագար, ուռած աչքերով անտարբեր նայում էր շուրջը փռված աշխարհին, չէր ճանաչում ծանոթներին, նայում էր ինչպես թունդ հարբած կամ քայքայիչ հիվանդությունից հենց նոր ապաքինված մարդը։ Աննայի մահվան օրից նրա զգացումները առժամապես բթացել էին, ոչինչ չէր ուզում, ոչինչ չէր մտածում։

— Կեր, Բունչուկ,— առաջարկում էին ընկերները, և նա

ուտում էր՝ ծանր ու ծուլորեն շարժելով ծնոտները, բութ նայելով մի կետի։

Նրան հսկում էին, խոսում հիվանդանոց ուղարկելու մասին։

— Դու հիվա՞նդ ես,— հետևյալ օրը նրան հարցրեց գնդացրորդներից մեկը։

— Ո՛չ։

— Հապա ինչո՞ւ ես այդպես։ Տխրո՞ւմ ես։

— Ո՛չ։

— Լավ, ծխենք։ Նրան հիմա էլ ետ չես բերի, աղբևր։ Այդ բանի վրա ուժերդ մի՛ վատնի։

Գալիս էր քնելու ժամանակը, նրան ասում էին.

— Պառկիր քնելու։ Ժամանակն է։

Պառկում էր։

Չորս օր նա մնաց իրականությունից առժամապես հեռու այդ վիճակում։ Հինգերորդ օրը փողոցում նրան հանդիպեց Կրիվոշլիկովը, բռնեց նրա թևքից.

— Ըհը՛, ահա և դու, իսկ ես քեզ փնտրում եմ։— Կրիվոշլիկովը չգիտեր, թե ինչ էր պատահել Բունչուկին, ու բարեկամաբար թփթփացնելով նրա ուսին, անհանգիստ ժըպտաց։— Դու ինչո՞ւ ես այդպես։ Հո չե՞ս խմել։ Լսե՞լ ես, որ արշավախումբ է գնում հյուսիսային օկրուգները։ Իհարկե, ընտրված է հինգի հանձնաժողով։ Ֆյոդորն է տանում։ Հույսը միայն հյուսիսային կազակների վրա է։ Այլապես տանուլ կտանք։ Բանը վատ է։ Դու կգնա՞ս։ Մեզ ագիտատորներ են հարկավոր։ Կգնա՞ս, թե ինչ։

— Այո,— կարճ պատասխանեց Բունչուկը։

— Հիանալի է։ Վաղը ճանապարհվում ենք։ Անցիր Օլով պապի մոտ, նա մեզ մոտ աստղագետ է։

Լիակատար հոգեկան ընկճվածության նախկին վիճակում Բունչուկը պատրաստվեց ճանապարհվելու և հետևյալ օրը, մայիսի 1-ին մեկնեց արշավախմբի հետ։

Այդ ժամանակ Դոնի սովետական կառավարության համար հանգամանքները պարզապես սպառնական բնույթ էին ստանում։ Ուկրաինայից գալիս էին գերմանական օկուպացիոն զորքերը, ստորին ստանիցաներում և օկրուգներում ծայր էր առել կոնտրռևոլյուցիոն խռովությունը։

Զմեռանոցներում թրևում էր Պոպովը՝ այնտեղից սպառնալով Նովոչերկասկին։ Սովետների մարզային համագումարը, որ սկսվել էր ապրիլի սկզբին, Ռոստովում, հաճախակի ընդհատվում էր, որովհետև ապստամբած չերկասցիները մոտենում էին Ռոստովին ու գրավում նրա արվարձանները։ Միայն հյուսիսում, Խոպերի և Ուստ-Մեդվեդիցկի օկրուգներում էին վառվում ռևոլյուցիայի օջախները և հենց դեպի նրանց ջերմությանն էին ձգտում Պոդտյոլկովը ու մնացածները, որոնք կորցրել էին իրենց հավատը Դոնի ստորին ավազանի կազակության օգնության նկատմամբ։ Մոբիլիզացիան վիժեց, ու Պոդտյոլկովը, որ վերջերում ընտրվել էր Դոնի ժողկոմսովետի նախագահ, Լագուտինի նախաձեռնությամբ որոշեց մեկնել հյուսիս, որպեսզի այնտեղ ճակատայինների երեք-չորս գունդ հավաքեր և ուղարկեր գերմանացիների ու Դոնի ստորին ավազանի կոնտրռևոլյուցիայի դեմ։

Ստեղծեցին հինգի արտակարգ մոբիլիզացիոն հանձնաժողով՝ Պոդտյոլկովի գլխավորությամբ։ Ապրիլի 29-ին գանձարանից վերցրին տասը միլիոն ռուբլի ոսկով ու Նիկոլայի փողով՝ մոբիլիզացիայի կարիքների համար, դրամարկղը պահպանելու համար, հապճեպորեն մի ջոկատ կազմեցին՝ գլխավորապես Կամենսկու նախկին տեղական զորախմբի կազակներից, վերցրին մի քանի հոգի կազակ ագիտատորներ, ու մայիսի 1-ին, արդեն գերմանական սավառնակների ռմբակոծության տակ արշավախումբը ճանապարհվեց Կամենսկու ուղղությամբ։

Երկաթուղիները բռնված էին Ուկրաինայից նահանջող կարմիրգվարդիականների էշելոններով։ Ապստամբ կազակները պայթեցնում էին կամուրջները, գնացքների խորտակումներ էին կազմակերպում։ Ամեն առավոտ Նովոչերկասկ — Կամենսկայա երկաթգծի վրա երևում էին գերմանական սավառնակները, պտտվում էին ուրուրների երամի պես, ցածրանում. կարճ ճարճատում էին գնդացիրները, էշելոններից դուրս էին թափվում կարմիրգվարդիականները, հաճախակի ճայթում էին կրակոցները, կայարաններում խարամի հոտը խառնվում էր պատերազմի, ոչնչացման նեխահոտի հետ։ Սավառնակները աներևակայելի բարձրության էին հասնում, իսկ հրաձիգները դեռ երկար դատարկում էին փամփուշտների

արկղները, գնացքի կողքից քայլողների սապոգները մինչև կոճիկը թաղվում էին դատարկ պարկուճների մեջ։ Ավազը ծածկվում էր դրանցով, ինչպես ձորակը նոյեմբերին՝ կաղնու ոսկե սաղարթով։

Անչափ ավերածություն էր տիրում ամենուրեք. երկաթգծերի կողքին ածխացել էին վառված ու ջարդված վագոնները, հեռագրասյուների վրա շաքարի պես սպիտակին էին տալիս բաժակները, որոնք պատած էին կտրված հաղորդալարերով։ Շատ տներ քանդված էին, երկաթգծերի կողքի վահանակները ջարդված ու տարված էին,— ասես մրրիկն էր այդ արել...

Արշավախումբը հինգ օր մի կերպ գնում էր Միլլերովոյի ուղղությամբ։ Վեցերորդ օրվա առավոտյան Պոդտյոլկովը հանձնաժողովի անդամներին կանչեց իր վագոնը։

— Այսպես գնալու էլ ուժ չկա։ Եկեք թողնենք մեր բոլոր բեռները ու գնանք երթական կարգով։

— Ի՞նչ ես ասում,— բացականչեց զարմացած Լագուտինը,— մինչև երթական կարգով հասնես Ուստ-Մեդվեդիցա, սպիտակները մեր վրայով կանցնեն։

— Մի քիչ հեռու է,— կմկմաց նաև Մրիխինը։

Կրիվոշլիկովը, որ նոր էր հասել արշավախմբին, լռում էր, փաթաթվում շինելով, որի մերակները գունաթափվել էին։ Դողէրոցքը տանջում էր նրան, խինինից ղժժում էին ականջները, գլուխը ցավում էր, այրվում։ Նա չէր մասնակցում հարցի քննարկման, կորացած նստել էր շաքարով լցված պարկի վրա, ու դողէրոցքից մշուշված աչքերով շարացած նայում էր Զինկային,— Պոդտյոլկովի «քածին»,— սպիտակ, կրծքեղ, Ոեթևաբարո մի կնոջ, որին Պոդտյոլկովն իր հետ տանում էր «գթության քրոջ» անվան տակ։ Զինկան նույնպիսի հակակրանք էր առաջացրել նիհար Կրիվոշլիկովի մեջ. հաստ ոտները տարածած, թեյի արկղին թիկնած, Զինկան ծխում էր, փոքրիկ ու պինդ ատամներով ծամծմում պապիրոսը և զայրացուցիչ կերպով, լկտիաբար ժպտում։ Առաջին իսկ հանդիպման օրից նրանք միմյանց դեմ սուր հակակրանք զգացին։ Կրիվոշլիկովը հարմար պահի էր սպասում, որպեսզի նախատեր Պոդտյոլկովին և վագոնից դուրս շպրտեր այդ նողկանքը։

— Կրիվոշլիկով, լեզուդ հո չի՞ կապվել,— չոր տոնով

հարցրեց Պոդտյոլկովը՝ գլուխը չբարձրացնելով քարտեզից։

— Ի՞նչ ես ուզում։

— Չե՞ս լսում ինչի մասին ենք խոսում։ Պետք է երթական կարգով գնալ, թե չէ մեզանից առաջ կանցնեն, կկորչենք։ Դու ի՞նչ ես կարծում։ Դու մեզանից ավելի ուսումով ես, ասա։

— Երթական կարգով կարելի կլիներ, —բառերը շեշտելով խոսեց Կրիվոշլիկովը, բայց հանկարծ գայլի պես շխկշխկացրեց ատամները, ու դողէրոցքի մոլուցքով բռնված, թերն դողացրեց։— Կարելի կլիներ, եթե բեռը քիչ լիներ։ Միայն կանանց համար էլ տեղ չի լինի սայլերի վրա։ Թող կորչի՛ն, է՛։ Ես ահա հարց եմ բարձրացնում, որ նրանց դուրս գցենք։

— Թող, է՛, Միխայիլ,— շփոթված խնդրեց Պոդտյոլկովը։

— Ո՞նց թե «թող»,— շխկշխկացնելով ատամները ու նկատելով Լագուտինի մեղմ, խրախուսիչ ժպիտը, ասաց Կրիվոշլիկովը.— Կարիք չկա կանանց ման ածել այսպիսի մոմենտում։

Զինկան տեղից վեր թռավ։ Ասես ծուխ էր լցվել նրա կապույտ աչքերը։

— Քո փողով չեմ գնում, թոկից փախածի մեկը։ Գնա՛, սրթսրթա՛։

— Հապա՛, ձենդ կարի՛։

— Մե՛ծ բան ես, էլի, խչնքատ։ Քոռո՛տ ոչխարներ։

— Բավակա՛ն է,— խստորեն, ինչպես շարքում, գոռաց Պոդտյոլկովը և բռունցքը բարձրացրեց Զինկայի վրա.— լռիր, հա՛-ա, թե չէ մազերիցդ կբռնեմ դուրս կշպրտեմ։

Զինկան զայրույթից դողացնելով դունդները, լռեց։ Պոդտյոլկովը տաքացած դիմեց Լագուտինին։

— Իսկ դու մի ծպտա պոռնիկ կնկա պես։ Ի՞նչ ես ատամներդ բաց անում։ Դու ինձ մարդավարի ասա, թե ինչո՞ւ չի կարելի երթական կարգով գնալ։

Դռան մոտ բացեց մարդի քարտեզը։ Մրիխինը պահում էր դրա անկյունները։ Քարտեզը փոփոխում էր ամպամած արևմուտքից փչող քամուց, խշշալով պոկվում ձեռներից։

— Ա՛յ թե ոնց կգնանք, տե՛ս։— Պոդտյոլկովի մատը, որ դեղնել էր ծխախոտից, շեղակի սահեց քարտեզի վրա։—

Տեսնո՞ւմ ես մասշտաբը։ Հարյուր հիսուն վերստ, ամենաշատը երկու հարյուր։ Հը՞։

— Դե, ճի՛շտ է, էլի, գրողը տանի,— համաձայնեց Լագուտինը։

— Դու ի՞նչ կասես, Միխայիլ։

Կրիվոշլիկովը սրտնեղությամբ թոթվեց ուսերը։

— Ես չեմ առարկում։

— Հիմի կգնամ կազակներին կասեմ, որ իջնեն վագոններից։ Կարիք չկա ժամանակ կորցնել։

Մրիխինը սպասողաբար նայեց բոլորին ու առարկություն չլսելով, վագոնից դուրս թռավ։

Այն գնացքը, որով գնում էր Պոդտյոլկովի արշավախումբը, այդ մռայլ, անձրևոտ առավոտյան կանգնել էր Բելայա Կալիտվայի մերձակայքում։ Բունչուկը պառկած էր իր վագոնում, ամբողջովին ծածկվել էր շինելով։ Կազակները հենց այստեղ թեյ էին եռացնում, քրքջում, կատակներ անում։

Վայնկա Բոլդիրյովը,— Միգուլինսկու մի կազակ, մասխարա ու լեզվանի մի մարդ, ձեռ էր առնում իր գնդացրորդ ընկերոջը։

— Իգնատ, դու ո՞ր նահանգից ես,— հնչեց նրա խռպոտ, թութունից փչացած ձայնը։

— Տամբովի նահանգից,— մեղմ ու թավ ձայնով պատասխանեց հեզ Իգնատը։

— Երևի Մարշանսկից ես, հը՞։

— Չէ, Շացկից։

— Հը՛մ... շացկեցիները քաջ տղերք են. տուրուդմբոցի ժամանակ յոթ հոգին անվախ դուրս կգան մեկի դեմ։ Ձեր կյուղում չէ՞ր, որ մատաղ անելիս հորթը վարունգով մորթեցին։

— Դե լավ, հերիք է, էլի՛։

— Ա՛խ, չէ՛, ես մոռացա, այդ դեպքը ձեզ մոտ չի եղել։ Ձեզ մոտ, կարծեմ, եկեղեցու ծակ ու ծուկը բիշիով են ծածկել, հետո ուղեցել են սիսեռի վրա այն գլորել սարի տակ։ Այդպիսի բան եղե՞լ է։

Թեյամանը եռաց, և դա Իգնատին առժամ ազատեց Բոլդիրյովի կատակներից։ Բայց հենց որ նստեցին նախաճաշելու, Վայնկան էլի սկսեց.

— Իգնատ, դու խոզի միսը լավ չես ուտում։ Ձե՞ս սիրում, հը՞։

— Չէ՛, ոչինչ։

— Հրե՛ս, ա՛ռ քեզ խոզի պոչը։ Համով է։

Պայթեց ծիծաղը։ Մեկի խոշափոզի մեջ ուտեստի կտոր ընկավ ու նա երկար, ճռճռալի հազում էր։ Իրար անցան։ Ոտները խփում էին հատակին, իսկ մեկ րոպեից հետո լսվեց Իգնատի խեղդվող ու բարկացկոտ ձայնը։

— Ինքդ զխտվիր, սարսաղ։ Ջհաննամը գնա քո պոչը։

— Իմը չէ, խոզի պոչն է։

— Մեկ է, մուռտառ է։

Բոլդիրյովի անտարբեր, խռպոտ ձայնը վրա է բերում.

— Մուռտառ է-է՛-է։ Գժվե՞լ ես ինչ է։ Ջատկին օրհնել են սա։ Ասա, որ վախում ես պասդ բաց անել...

Բոլդիրյովի հայրենակիցը (նույն ստանիցայից), գեղեցիկ շեկլիկ մի կազակ, որ ստացել էր գեորգևյան բոլոր չորս խաչերը,— խրատում է.

— Ձե՛ռ քաշի, Իվան։ Մուժիկի գլխին փորձանք կբերես։ Պոչը կուտի ու մի ամբողջ խոզ կուզենա։ Այստեղ դա ո՞րտեղից գտնես։

Բունչուկը պառկել էր աչքերը փակած։ Նա չէր լսում խոսակցությունը և նախկին, կարծես նույնիսկ ուժեղացած ցավով ապրում էր իր վիշտը։ Փակ աչքերը պղտոր մուժում նրա առաջ պտտվում էր ձյունապատ տափաստանը՝ հեռավոր հորիզոնին կոթնած անտառների մթին լանջերով. նա ասես զգում էր սառը քամին ու իր կողքին տեսնում Աննային, նրա սև աչքերը, գողտրիկ բերանի քնքուշ ու կորովի գծերը, քթարմատի մանրիկ պեպենները, ճակատի խոհուն կնճիռը... Նա չէր լսում Աննայի շուրթերից պոկվող բառերը. դրանք անհասկանալի էին, ընդհատվում էին ինչ-որ մեկի օտար խոսքերով, ծիծաղով, բայց ակնարիբերի փայլից, կեռ արտանունքների դողից գլխի էր ընկնում, թե ինչի մասին է խոսում Աննան... Եվ ահա մի ուրիշ Աննա. կապուտակած ու դեղնած, այտերի վրա սառած արցունքների շերտերով, սրված քթով ու շուրթերի ահավոր-տանջալից ծալով։

Բունչուկը կռանում, համբուրում է սառած աչքերի սև խոռոչները։ Նա հեծկլտաց, ձեռքով փակեց բերանը, որ զսպի

հեկեկանքը։ Աննան ոչ մի րոպե չէր թողնում նրան։ Աննայի կերպարը չէր անհետանում, չէր աղոտում ժամանակի ընթացքում։ Նրա դեմքը, մարմինը, քայլվածքը, շարժումները, միմիկան, հոնքերի խաղը,— այս ամենը մաս-մաս վերամխավորվելով, կազմում էր ամբողջական, կենսաթրթիռ Աննան։ Բունչուկը վերհիշում էր սենտիմենտալ ռոմանտիզմով լեցուն նրա խոսքերը, այն ամենը, ինչ որ ապրել էր նրա հետ։ Եվ վերապատկերման այդ աշխուժությունից տասնապատկվում էին Բունչուկի տանջանքները։

Նրան արթնացրին, երբ լսվեց վագոններից իջնելու հրամանը։ Նա վեր կացավ, անտարբեր կերպով պատրաստվեց, իջավ։ Հետո օգնում էր իրերը բեռնաթափելու։ Նույնպիսի անտարբերությամբ սայլ նստեց, մեկնեց։

Անձրև էր մաղվում։ Թրջվել էին ճանապարհի կողքի ցածրիկ խոտարույսերը։

Տափաստան։ Բլրակների վրա ու ձորակներում — քամիների սանձարձակ արշավ։ Հեռու և մոտիկ խուտորներ, նորագյուղեր։ Հետևում — շոգեքարշերի ծուխ, կայարանային շենքերի կարմիր քառակուսիներ։ Բելայա Կալիտվայում վարձված ավելի քան քառասուն սայլերը ձգվել էին ճանապարհով։ Ձիերը դանդաղ էին գնում։ Կավախառն-սևահողային ճանապարհը անձրևից փափկած, դժվարացնում էր ընթացքը։ Ցեխը կպչում էր անիվներին, բամբակի սև փաթիլների նման փաթաթվում դրանց։ Առջևից ու ետևից խմբերով գնում էին Բելայա Կալիտվայի շրջանի հանքափորները։ Կազակական կամայականությունից դեպի արևելք էին փախչում։ Իրենց հետ տանում էին ընտանիքները, աղքատիկ իրեղենը։

Գրաչի կիսակայարանի մոտ Ռոմանովսկու և Շչադենկոյի կարմիրգվարդիականների քայքայված ջոկատները հասան նրանց։ Մարտիկների դեմքերը սփրթնած էին, մարտերից,— անքնությունից ու զրկանքներից տանջված։ Շչադենկոն մոտեցավ Պոդտյոլկովին։ Անգլիական ձևի կտրած բեղերով ու բարակ, կոկլիկ քթով նրա գեղեցիկ դեմքը հյուծված էր։ Բունչուկն անցավ նրանց կողքից, լսեց, թե ինչպես Շչադենկոն հոնքերը կիտելով, բարկացկոտ ու հոգնածորեն ասում էր.

— Ի՞նչ ես ասում ինձ։ Բա ես չե՞մ ճանաչում իմ տղե-

բանց։ Գործերը վատ են, գերմանացիներն էլ մեջտեղ եկան, անիծվե՛ն նրանք։ Հիմի ի՞նչ պիտի դուրս գա։

Նրա հետ խոսելուց հետո Պոդտյոլկովը մռայլված ու կարծես մի փոքր շփոթված, հասավ իր բրիչկային, սկսեց հուզված ինչ-որ բան ասել տեղից քիչ բարձրացած Կրիվոշլիկովին։ Հետամուտ լինելով նրանց, Բունչուկը տեսավ, թե ինչպես Կրիվոշլիկովը հենվելով արմունկին, թափահարեց ձեռքը, մի քանի խոսք ասաց, ու Պոդտյոլկովը զվարթացավ, թռավ բրիչկայի վրա, բրիչկայի կողքը ճքճքաց վեց փթանոց հրետանավորի տակին. կառապանը մտրակեց ձիերը, այս ու այն կողմ ցեխի կտորներ թռան։

— Քշի՛ր,— գոչեց Պոդտյոլկովն աչքերը կկոցած, քամու առաջ բանալով կաշվե կուրտկան։

XXVII

Արշավախումբը մի քանի օր գնում էր Դոնեցի օկրուգի խորքերը, դեպի Կրասնոկուտսկայա ստանիցան։ Ուկրաինական գյուղերի բնակչությունը միշտ էլ արտաքաց էր դիմավորում ջոկատին, հաճույքով վաճառում էր կենսամթերքներ, ձիերի կեր, ապաստան էր տալիս, բայց հենց որ հարց էր բարձրանում մինչև Կրասնոկուտսկայա ձիեր վարձելու մասին, ուկրաինացիները վարանում էին, քորում ծոծրակները ու կտրականապես հրաժարվում։

— Լավ փող ենք վճարում, էլ ինչո՞ւ ես քիթդ շուռ տալի,— հարցրեց Պոդտյոլկովը մի ուկրաինացու։

— Ի՞նչ անեմ, իսկ ինձ համար կյանքս հո փողից էժան չի՞։

— Մեր ինչի՞ն է պետք քո կյանքը, դու վարձով տուր քո ձիերն ու սայլը։

— Չէ, չեմ կարող։

— Ինչո՞ւ չես կարող։

— Դուք հո կազակների դե՞մ եք գնում։

— Էհ, ի՞նչ կա որ։

— Կարող է մի փորձանք պատահի, ես ի՞նչ գիտեմ էլ ինչ։ Բա ես ո՞նց չափսոսամ իմ անասուններին։ Ձիերս կկորչեն, հետո ես ի՞նչ անեմ։ Չէ՛, աղբեր, ինչ կուզես արա, չեմ տա։

Որքան մոտենում էին Կրասնոկուտսկի հոլին, այնքան անհանգիստ էին դառնում Պոդտյոլկովն ու մյուսները։ Բնակչության տրամադրության մեջ էլ որոշ փոփոխություն էր նկատվում. եթե առաջին գյուղերում բնակիչները ուրախությամբ և հյուրասիրությամբ էին ընդունում, ապա մյուս գյուղերում նրանք բացահայտ անբարյացակամությամբ ու թերահավատությամբ էին վերաբերվում արշավախմբին։ Դժկամորեն էին մթերք վաճառում, խուսափում էին հարցերին պատասխանելուց։ Գյուղի երիտասարդությունը խայտաբղետ խմբերով այլևս չէր շրջապատում արշավախմբի սայլերը, ինչպես այդ լինում էր սկզբում։ Բնակիչները մռայլ, հակակրական հայացքներով էին նայում պատուհաններից, շտապում էին դրանցից հեռանալ։

— Բա դուք քրիստոնյաներ չե՞ք, ա՛յ տնաշեններ,— վրդովված հարցնում էին արշավախմբի կազակները,— ի՞նչ եք գիլի պես մեզ նայում։

Իսկ Նագոլինսկու վոլոստի գյուղերից մեկում Վայնկա Բոլդիրյովը սառն ընդունելությունից հուսալքված, նայելով իր շուրջը, թե մեծերից մեկնումեկը հո չի՞ մոտենում, հրապարակում փափախը խփեց գետնին, խռպոտ գոռաց.

— Մարդի՞կ եք դուք թե սատանաներ։ Ի՞նչ եք սոկվել, ձեր հերն սնիծվի։ Ձեր իրավունքների համար արյուն ենք թափում, իսկ դուք աչքերիդ առաջ մեզ չեք տեսնում։ Ամոթ է, աղբեր, ձեռ քաշեք դրանից։ Հիմի, ընկերներ, հավասարություն է, էլ կազակներ ու խախոլներ չկան, նոթերը կիտելու կարիք էլ չկա։ Հենց հիմի հավ ու ձու բերեք, Նիկոլայի փող ենք վճարում։

Վեց հոգի ուկրաինացիներ, լսելով, թե ինչպես է զայրանում Բոլդիրյովը, կանգնել էին գլխիկոր, ինչպես գութանին լծված ձիեր։

Նրա տաք խոսքերին ոչ մի բառով չպատասխանեցին։

— Ոնց որ խախոլներ էիք, այնպես էլ մնացիք, անիծվածներ։ Այ կոտորվե՛ք դուք, գրոզի տարածներ։ Խոլերան էլ չի կպչում ձեզ, քոսոտ բուրժույներ։— Բոլդիրյովը մի անգամ էլ գետնին զարկեց իր կիսամաշ փափախը, շառագունեց անսահման արհամարհանքից։— Ջորհոգի մարդիկ եք, ձմռներ մի կտոր ձյուն էլ ուղեսլ չեք տա։

— Հերի՞ք վովոաս, է՛,— միայն այսքանն ասացին ուկրաինացիները՝ ցրվելով այս ու այն կողմ։

Այդ նույն գյուղում տարեց մի ուկրաինուհի հարցուփորձ էր անում կազակներից մեկին.

— Դրո՞ւստ է, որ դուք ամեն բան պիտի թալանեք ու բոլոր մարդկանց կոտորեք։

Կազակը իսկույն պատասխանեց.

— Դրուստ է։ Ոչ թե բոլորին, այլ բիձաներին կսխկենք։

— Օ՛յ, տեր աստված, ախր նրանք ձեր ինչին են պետք։

— Մենք նրանց կաշայով ենք ուտում. հիմի ոչխարը կանաչ է ուտում, միսը համով չի, իսկ երբ որ քավթառ մարդուն կաթսայի մեջ ես գցում, լավ կերակուր է դուրս գալի...

— Երևում է, որ դուք հանաք եք անում։

— Նա սուտ է ասում, քիքիր, փչում է,— մեջ մտավ Մրիխինը։

Ու դեմառդեմ չարաչար կոթեց կատակողին.

— Հասկացիր, թե ոնց և ում հետ պետք է հանաք անել։ Այդ տեսակ հանաքների համար Պոդտյոլկովը կշարդի քո մուրթը։ Ի՞նչ ես խառնակչություն գցում, հը՞։ Չէ՞ որ սա իսկապես լուր կտարածի, թե մենք կոտորում ենք ծերունիներին։

Պոդտյոլկովը երկար չէր կանգ առնում հանգստանալու և գիշերելու։ Անհանգստությամբ դեպի առաջ էր ձգտում։ Կրասնոկուտսկայա ստանիցայի հողը մտնելու նախօրյակին նա երկար խոսեց Լագուտինի հետ, մտքերի փոխանակություն ունեցավ.

— Մենք, Իվան, հեռու չպետք է գնանք։ Կհասնենք Ուստ-Խոպերսկայա ստանիցան, կանցնենք գործերին։ Զորահավաք կհայտարարենք, հարյուրական ռուբլի ռոճիկ կնշանակենք, բայց այն պայմանով, որ գան իրենց ձիերով ու հանդերձանքով,— չպետք է դես ու դեն շպրտել ժողովրդական փողը։ Ուստ-Խոպերից կգնանք վերև,— քո Բուկանովսկու, Սլաշչևսկու, Ֆեդոսեևսկու, Կումիլժենսկու, Գլազունովսկու, Սկուրիշենսկու վրայով։ Մինչև Միխայլովկա հասնենք, մ՝ դիվիզիա կունենանք։ Կհավաքե՞նք, հը՞։

— Հավաքելը կհավաքենք, եթե այնտեղ ամեն ինչ հանգիստ է։

— Դու կարծում ես այնտեղ է՞լ է սկսվել։

— Ի՞նչ իմանաս,— Լագուտինը թիմարեց փոքրիկ մորուքը, բարակ, կերկերուն ձայնով նվաց.

— Ուշացել ենք, է՛... Վախենում եմ ժամանակին չհասնենք, Ֆեդյա։ Սպաներն այնտեղ իրենց գործն են անում։ Պետք է շտապել։

— Առանց այդ էլ շտապում ենք։ Դու մի՛ վախենա։ Մենք չպետք է վախենանք,— Պոդտյոլկովի աչքերը խստացան,— այսքան մարդ ենք տանում, էլ վախս ո՞րն է։ Կանցնե՛նք, կհասնենք։ Երկու շաբաթից հետո սպիտակներին էլ կշարդեմ, գերմանացիներին էլ։ Վա՛յ նրանց օրին, երբ վրա տանք Դոնի հողից,— ու մի փոքր լռելով, ագահությամբ ծխելով պապիրոսը, արտահայտեց իր թաքուն միտքը.— Եթե ուշանանք, կկործանվենք թե մենք և թե Դոնի սովետական իշխանությունը։ Օ՛, երանի թե չուշանանք։ Եթե սպայական ապըստամբությունը մեզանից առաջ հասնի այնտեղ, ամեն ինչ կորած է։

Մյուս օրվա երեկոյան արշավախումբը մտավ Կրասնոկուտսկայա ստանիցայի հողը։ Պոդտյոլկովը, որ Լագուտինի ու Կրիվոշլիկովի հետ նստած էր առջևի սայլերից մեկին, դեռ Ալեքսեևսկի խուտորը չհասած, տեսավ տափաստանում արածող մի նախիր։

— Եկ հարցուփորձ անենք նախրապանին,— առաջարկեց նա Լագուտինին։

— Գնացե՛ք,— համաձայնեց Կրիվոշլիկովը։

Լագուտինն ու Պոդտյոլկովը իջան սայլից, քայլեցին դեպի նախիրը։ Արևից խանձված արոտավայրը ծածկված էր գորշ խոտաբույսերով։ Խոտը փարթամ չէր, տրորված էր սրմբակներով, միայն ճանապարհի մոտ դեղին, մանր թփեր էր արձակել կանճրակը ու շրշում էր խիտ, հյութալի խոպուկը։ Ձեռքի մեջ փշրելով խիստ չորացած բարձվենյակի գլխիկը, ներշնչելով նրա սուր, դառն հոտը, Պոդտյոլկովը մոտեցավ նախրապանին։

— Բարև, բիձա, ո՞նց ես։

— Փառք աստծու։

— Արածացնում ես, էլի՞։

— Արածացնում եմ։

Ներունին խոժոռվելով, նայում էր խիտ, սպիտակած հոնքերի տակից, ճոճում մահակը։

— Է՛հ, ո՞նց եք ապրում,— տվեց Պոդտյոլկովը տվորական հարցը։

— Ոչինչ, աստծո օգնությամբ ապրում ենք, էլի։

— Այստեղ ձեզ մոտ ի՞նչ նորություններ կան։

— Ոչինչ չենք լսել։ Իսկ դուք ի՞նչ մարդիկ եք։

— Զինվորականներ ենք, տուն ենք գնում։

— Ո՞րտեղացի եք։

— Ուստ-խոպերցի։

— Այն Պոդտյոլկինը ձեզ հետ չի՞։

— Մեզ հետ է։

Նախրապանը թունդ գունատվեց, երևի վախեցավ։

— Ինչո՞ւ վախեցար, բիձա։

— Բա ո՞նց, ձե՛զ մատաղ, ասում են, թե դուք կոտորում եք բոլոր ուղղափառներին։

— Սուտ է։ Ո՞վ է այդպիսի լուրեր տարածում։

— Երեկ չէ մյուս օրը ժողովում ատամանն ասաց։ Լսել էր թե թուղթ էր ստացել, որ Պոդտյոլկինը գալիս է կալմիկներով, բոլորին սրի են քաշում։

— Ձեզ մոտ արդեն ատամանն՞ը կան,— Լագուտինը հարևանցի նայեց Պոդտյոլկովին։

Սա իր դեղին ժանիքներով կծոտեց խոտի մի ցողունը։

— Անցած օրը ատաման ընտրեցին։ Սովետին վերջ տվին։

Լագուտինը ուզում էր էլի մի բան հարցնել, բայց քիչ հեռու ահագին, չալտիկ մի ցուլ թռավ կովի վրա, ճզմեց նրան։

— Կշարդի անիծվածը,— անհանգստացավ նախրապանը և իր հասակին անհամապատասխան աշխուժությամբ վազեց դեպի նախիրը՝ վազելիս գոռալով.— Նաստենկայի կովն է, հա՛-ա... Կշարդի... Ո՞ւր... Ո՞ւր ես քշում, անտեր...

Պոդտյոլկովը լայն թափահարելով թևերը, քայլեց դեպի սայլը։ Տնտեսարար Լագուտինը կանգ առավ, անհանգիստ նայեց լղարիկ կովին, որին ցուլը կորացրել էր մինչև գետին, ու այդ ակնթարթում ակամա մտածեց. «Ախր կշարդի, է՛, գուցե և ջարդել է։ Թյո՛ւ, չար սատանա»։

Միայն համոզվելով, որ կովը ցուլի տակից անվնաս դուրս

եկավ, նա գնաց դեպի սայլերը։ «Ի՞նչ ենք անելու, մի՞թե Դոնի մյուս կողմումն էլ մեջտեղ են եկել ատամանները»,— մտքում ինքն իրեն հարցրեց նա։ Բայց նրա ուշադրությունը դարձյալ մի րոպե գրավեց ճանապարհի մոտ կանգնած հիանալի, ազնվացեղ ցուլը։ Սա հոտ էր քաշում մի մեծ, լայնագավակ, սև կովից, շարժում էր լայն ճակատով գլուխը։ Նրա բոխաղը կախվել էր մինչև ծնկները, երկար, հուժկու և ամրապինդ մարմինը պրկված էր լարի նման։ Կարճ ոտները ցցերի պես խրվել էին փափուկ հողի մեջ, ու ակամա դիտելով ցեղային այդ ցուլը, աչքերով փաղաքշելով նրա կարմիր, դեղնաշիկավուն բծերով երանգավորված բուրդը, Լագուտինը անհանգիստ մտքերի պարսում հոգոց հանելով, կանգ առավ հետևյալ մտքի վրա. «Երանի մեր ստանիցայում այդպիսի մի բուղա լիներ։ Թե չէ մեր բուղաները մանր են»։ Այս միտքը կառչել էր նրա ուղեղից, երբ նա քայլում էր, բայց արդեն մոտենալով սայլին ու տեսնելով կազակների թթված դեմքերը, նա միտք էր անում, թե հիմա իրենք ինչ երթուղով պետք է գնան։

Տենդից հյուծված, երազող ու բանաստեղծ Կրիվոշլիկովը Պոդտյոլկովին ասաց.

— Մենք հեռանում ենք կոնտրռևոլյուցիոն ալիքից, ձգտում ենք նրա առաջը կտրել, իսկ նա արդեն անցնում է մեր վրայով։ Երևում է, որ նրանից առաջ չենք անցնի։ Գնում է արագ, ինչպես մակընթացությունը ցածրադիր տեղում։

Թվում է, որ հանձնաժողովի անդամներից միայն Պոդտյոլկովն էր հաշվի առնում ստեղծված իրադրության ամբողջ բարդությունը։ Նա նստել էր դեպի առաջ թեքված, ամեն րոպե բղավում էր կառապանի վրա.

— Արա՛գ քշիր։

Հետին սայլերի վրա երգեցին ու լռեցին։ Այնտեղից աղաղակ էր լսվում, անիվների երգից էլ բարձր հնչում էր ծիծաղը։

Նախրապանի հաղորդած տեղեկությունները հաստատվեցին։ Ճանապարհին արշավախմբին հանդիպեց ճակատային մի կազակ, որը իր կնոջ հետ գնում էր Սվեչնիկով խուտորը։ Նա ոսսադիրներով ու գլխարկանիշով էր։ Պոդտյոլկովը նրան հարցուփորձ արավ ու է՛լ ավելի մռայլվեց։

Անցան Ալեքսեևսկի խուտորից։ Անձրև էր մաղվում։ Երկինքը մթագնում էր։ Միայն արևելքում ամպերի արանքից երևում էր շեղակի արևով ողողված լազուր երկնքի մի կտոր։

Հենց որ մի բլրակից սկսեցին իջնել Ռուբաշկին՝ ուկրաինական գյուղը, այնտեղից մարդիկ վազ տվին հակադիր կողմը, արագ սլացավ մի քանի սայլ։

— Փախչում են։ Մեզանից վախենում են...— շփոթվելով ասաց Լագուտինը՝ նայելով մյուսներին։

Պոդտյոլկովը գոչեց.

— Վերադարձրե՛ք նրանց։ Ետ կանչեցեք, է՛, գրո՛ղը տանի։

Սայլերի վրա կազակները վեր էին թռչում, թափահարում գլխարկները։ Մեկը հնչեղ ձայնով գոռաց.

— է-հե՛յ... Ո՞ւր եք գնում... Սպասեցեք...

Արշավախմբի սայլերը արագ մտան գյուղ։ Լայն, ամայացած փողոցում սուրում էր քամին։ Բակերից մեկում մի պառավ ուկրաինուհի ճղճղալով, բարձեր էր գցում սայլի վրա։ Նրա ոտաբոբիկ, գլխաբաց ամուսինը բռնել էր ձիերի սանձը։

Ռուբաշկինում իմացան, որ իջևանատեղ գտնելու համար Պոդտյոլկովի ուղարկած մարդը գերվել է կազակական պարեկի կողմից ու տարվել բլրի մյուս կողմը։ Ըստ երևույթին կազակները հեռու չէին։ Կարճ խորհրդակցությունից հետո որոշվեց ետ գնալ։ Պոդտյոլկովը, որ սկզբում պնդում էր, թե պետք է առաջ գնալ, տատանվեց։

Կրիվոշլիկովը լռում էր, տենդը նորից սկսել էր ցնցել նրան։

— Գուցե առա՞ջ գնանք,— հարցրեց Պոդտյոլկովը Բունչուկին, որ ներկա էր խորհրդակցության։

Բունչուկը անտարբերությամբ թոթվեց ուսերը։ Նրա համար բոլորովին միևնույն էր,— առաջ գնալ թե ետ, միայն թե շարժվել, միայն թե ազատվեր իրեն կրնկակոխ հետապնդող վշտից։ Սայլի մոտ ետ ու առաջ քայլելով, Պոդտյոլկովը ասաց, թե ավելի լավ է ընթանալ դեպի Ուստ-Մեդվեդիցա։ Բայց կազակ ագիտատորներից մեկը կտրուկ ընդհատեց նրան.

— Գժվե՞լ ես, ինչ է։ Ո՞ւր ես տանելու մեզ։ Կոնտրռևոլյուցիոներների մո՞տ։ Հանաք չանես, հա՛-ա։ Ե՛տ կգնանք։

Չենք ուզում կորչել։ Այն ի՞նչ է, տեսնո՞ւմ ես,— նա ցույց տվեց բլուրը։

Բոլորը նայեցին այդ կողմը. մի փոքրիկ կուրգանի վրա պարզ ուրվագծվում էին երեք ձիավոր։

— Նրանց պարեկն է,— բացականչեց Լագուտինը։

— Հրեն, էլի ուրիշները։

Բլուրի վրա ձիավորներ էին շարժվում։ Նրանք խմբվում էին, ցրվում, շքանում բլուրի հետևում ու նորից երևում։ Պոդտյոլկովը ետ գնալու հրաման տվեց։ Անցան Ալեքսեևսկի խուտորը։ Այնտեղ էլ բնակչությունը, որին ակներևաբար նախազգուշացրել էին կազակները, տեսնելով արշավախմբի մոտեցող սայլերը, սկսեցին թաքնվել ու դես-դեն փախչել։

Իջնում էր մթնշաղը։ Տաղտկալի, մանր, ցուրտ անձրև էր գալիս։ Մարդիկ թրջվել ու դողում էին։ Քայլում էին սայլերի կողքից, հրացանները պատրաստ պահած։ Ճանապարհը անցնելով բլրալանջից, իջնում էր մի ձորահովիտ, ձգվում դրա միջով ու ոլորապտույտ բարձրանում բլրակի վրա։ Բարձրադիր տեղերում երևում ու շքանում էին կազակական պարեկները։ Նրանք ուղեկցում էին արշավախմբին՝ լարելով կազակների առանց այն էլ ջղային տրամադրությունը։

Ձորահովիտը լայնակի կտրող ձորակներից մեկի մոտ Պոդտյոլկովը թռավ սայլից, կարճ հրամայեց մյուսներին՝ պատրաստվե՛լ կրակելու, և իր հեծելազորային կարաբինի պահպանակը ետ անելով, քայլեց սայլի կողքից։ Ձորակում կապույտին էր տալիս ամբարտակին դեմ արած գարնանային ջուրը։ Լճակի ափերի տիղմը ծածկված էր ջրելու համար բերված անասունների հետքերով։ Փլված ամբարտակի լանջին աճել էր քոլախոտն ու պատատուկը, ներքևում, ջրի ափին— վտիտ բոշխը, անձրևի տակ շրշում էր սրատերև ձղկին։ Պոդտյոլկովը կարծում էր, որ կազակները դարանակալել են այստեղ, բայց դեպի առաջ ուղարկված հետախույզները ոչինչ չհայտնաբերեցին։

— Ֆյոդոր,— դու հիմա մի՛ սպասիր նրանց,— շշնջաց Կրիվոշլիկովը՝ սայլից կանչելով Պոդտյոլկովին,— հիմա նրանք չեն հարձակվի։ Գիշերը կհարձակվեն։

— Ես է՛լ եմ այդպես կարծում։

XXVIII

Արևմուտքում խտանում էին ամպերը։ Մթնում էր։ Հեռո՛ւ-հեռվում, Դոնի շրջակայքում գալարվում էր կայծակը, վիրավորված թռչունի թևի պես թպրտում նարնջաշող փայլակը։ Այն կողմում դալուկ փայլում էր հրացոլքը՝ ամպի սև փեշով կիսով չափ ծածկված։ Տափաստանը որպես մի բաժակ, որ ծայրեծայր լեցուն էր անդորրությամբ ու մեղմիկ խոնավությամբ, ձորակների ծալքերում թաքցրել էր ցերեկվա տխուր, անդրադարձ ցոլքերը։ Այդ երեկոն ինչ-որ մի բանով աշնանային երեկոներն էր հիշեցնում։ Անգամ խոտաբույսերը, որ դեռ չէին ծաղկել, թռչնածության աննկարագրելի, մեռելային բույր էին ճառագայթում։

Պոդտյոլկովը քայլելիս հոտոտում էր թրջված խոտաբույսերի բազմապիսի, անորոշ բուրմունքը։ Երբեմն-երբեմն նա կանգ էր առնում, մաքրում կրունկներին կպած ցեխը. շըտկվելով, ծանր ու հոգնածորեն տանում էր իր ահագին մարմինը, սվսվացնում առջևից բոլորովին բացված բաճկոնի թաց կաշին։

Արդեն գիշերով ժամանեցին Պոլյակովո-Նագոլինսկայա վոլոստի Կալաշնիկով խուտորը։ Թողնելով սայլերը, զորախմբի կազակները ցրվեցին խրճիթները՝ գիշերելու համար։ Հուզված Պոդտյոլկովը կարգադրեց ուղեկալներ կարգել, բայց կազակները դժկամորեն էին հավաքվում։ Երեք հոգի հրաժարվեցին դրանից։

— Դատե՛լ դրանց ընկերական դատով։ Մարտական հրամանը չկատարելու համար գնդակահարե՛լ,— տաքանում էր Կրիվոշլիկովը։

Անհանգստությունից հուսալքված, Պոդտյոլկովը դառնությամբ թափահարեց ձեռքը.

— Ճանապարհին բարոյալքվել են։ Ջե՛ն պաշտպանվի։ Կորանք մենք, Միշատկա...

Լագուտինը դժվարությամբ հավաքեց մի քանի հոգի, խուտորից դուրս դետքեր ուղարկեց։

— Ջքնեք, տղերք։ Կհարձակվեն մեզ վրա,— խրճիթից խրճիթ անցնելով, համոզում էր Պոդտյոլկովը իրեն ամենամոտիկ կազակներին։

Ամբողջ գիշեր նա նստեց սեղանի մոտ, գլուխը ձեռների վրա կախած, ծանր ու խոպոտ շնչելով, ինչպես հիվանդ կենդանին։ Լուսաբացից առաջ, մեծ գլուխը սեղանին դրած, մի քիչ քնեց, բայց նրան իսկույն արթնացրեց հարևան տնից եկած Ռոբերտ Ֆրաշենբրուդերը։ Սկսեցին պատրաստվել ճանապարհվելու։ Արդեն լուսանում էր։ Պոդտյոլկովը խրճիթից դուրս ելավ։ Հաշտում նրան հանդիպեց կովը կթող տանտիրուհին։

— Բլուրի վրա ձիավորներ են ման գալի,— անտարբեր ասաց տանտիրուհին։

— Ո՞րտեղ։

— Հրե՛ն, խուտորից դենը։

Պոդտյոլկովը դուրս թռավ. բլուրի վրա, խուտորը և ծառաստանները պատած մշուշի բարակ, սպիտակ վարագույրից դեն կազակների թվաշատ ջոկատներ էին երևում։ Նրանք շարժվում էին վարգելով ու թեթև քառատրոփով, շրջապատում խուտորը, պիրկ սեղմում օղակը։

Շուտով զորախմբի կազակները սկսեցին հավաքվել Պոդտյոլկովի սայլի մոտ, այն տան բակում, ուր նա կանգ էր առել։

Եկավ միգուլինցի Վասիլի Միրոշնիկովը՝ ամրակազմ, քյաքուլավոր մի կազակ։ Նա Պոդտյոլկովին մի կողմ կանչեց, հոնքերը կիտելով ասաց.

— Այ թե ինչ, ընկեր Պոդտյոլկով... Հիմի դելեգատներ եկան նրանց կողմից,— նա ձեռքով ցույց տվեց բլուրի կողմը,— հրամայեցին հայտնել քեզ, որ մենք իսկույն վար դնենք մեր զենքերը և անձնատուր լինենք։ Այլապես նրանք հարձակման են անցնում։

— Դո՛ւ... Շան որդի... Այդ ի՞նչ ես ասում ինձ,— Պոդտյոլկովը բռնեց Միրոշնիկովի շինելի ծայրերից, դեն շպրտեց նրան և վազեց դեպի սայլը. վերցրեց հրացանը, խոպոտ, կոշտացած ձայնով դիմեց կազակներին.

— Անձնատուր լինել, հա՞-ա... Կոնտրռևոլյուցիայի հետ ի՞նչ խոսակցություններ կարող են լինել։ Մենք պայքարում ենք նրանց դեմ։ Իմ հետևի՛ց։ Շղթա՛ կազմել։

Մարդիկ բակից դուրս թափվեցին։ Խմբով վազեցին խու-

տորի ծայրը։ Վերջին տների մոտ հանձնաժողովի անդամ Մրիխինը հասավ շնչասպառ Պոդտյոլկովին։

— Սա ի՞նչ խայտառակություն է, Պոդտյոլկով։ Մենք պետք է կռվե՞նք հենց մեր եղբայրների հետ, արյո՞ւն թափենք, հը՞։ Թո՛ղ, առանց դրան էլ համաձայնության կգանք։

Տեսնելով, որ զորախմբի միայն մի աննշան մասն է հետևում իրեն, խոհեմաբար հաշվի առնելով, որ կռվելու դեպքում պարտությունն անխուսափելի է, Պոդտյոլկովը լուռ դուրս գցեց հրացանի փակաղակը և թույլ թափահարեց գլխարկը.

— Թողնե՛լ, տղերք։ Ետ դարձեք, մտեք խուտոր...

Վերադարձան։ Ամբողջ ջոկատը հավաքվեց երեք կից բակերում։ Շուտով խուտորում երևացին կազակները։ Բլուրից իջավ քառասուն ձիավորից բաղկացած մի ջոկատ։

Միլյուտինսկու ծերունիների հրավերով Պոդտյոլկովը գնաց խուտորից դուրս, անձնատվության պայմանների մասին բանակցելու։ Հակառակորդի հիմնական ուժերը, որոնք շրջապատել էին խուտորը, չէին թողնում դիրքերը։ Ճանապարհին Բունչուկը հասավ Պոդտյոլկովին, կանգնեցրեց նրան.

— Անձնատո՞ւր ենք լինում։

— Անճարը կերել է բանջարը... Ի՞նչ... Դե, ի՞նչ կարող ես անել։

— Մեռնե՞լ ես ուզում,— Բունչուկն ամբողջովին ցընցվեց։

Ուշադրություն չդարձնելով Պոդտյոլկովին ուղեկցող ծերունիների վրա, նա բարձր, խուլ ձայնով գոչեց.

— Ասա, որ մենք զենքերը չենք հանձնի... Դու հիմա մեր պետը չես։ Ո՞ւմ հետ ես խորհրդակցել։ Ո՞ւմ համաձայնությամբ ես գնում մեզ մատնելու։— Բունչուկը կտրուկ շուռ եկավ ու, թափահարելով բռունցքի մեջ սեղմած նագանը, ետ դարձավ։

Վերադառնալով, փորձեց կազակներին համոզել, որ ճեղքեն հակառակորդի օղակը և կռվելով գնան դեպի երկաթուղին, բայց մեծամասնությունը պարզապես հաշտվողական տրամադրություն ուներ։ Ոմանք դեմքերը շուռ էին տալիս Բունչուկից, ոմանք էլ թշնամաբար հայտարարում էին.

— Գնա կռվիր, աղրեր, իսկ մենք մեր հարազատ եղբայրների հետ չենք կռվի։

— Մենք նրանց առանց զենքի է՛լ կվստահենք։

— Սուրբ զատիկն է, իսկ մենք արյո՞ւն թափենք, հը՞։

Բունչուկը մոտեցավ ամբարի մոտ կանգնած իր բրիչկային, շինելը փռեց դրա տակ, պառկեց՝ ձեռքից բաց չթողնելով ատրճանակի քյարթավոր կոթը։ Սկզբում նա մտածեց փախչել, բայց նրան զզվեցնում էր թաքուն հեռանալը, դասալքությունը, ու մտքում դրանից ձեռք քաշելով, սպասում էր Պոդտյոլկովի վերադարձին։

Երեք ժամից հետո Պոդտյոլկովը վերադարձավ։ Օտար կազակների մի հսկայական բազմություն նրա հետ մտավ խուտոր։ Ոմանք գալիս էին ձի նստած, մյուսները՝ ոտով, ձիերի սանձերը բռնած, ոմանք էլ գալիս էին առանց ձիերի, շրջապատելով Պոդտյոլկովին ու փոխ-յասավուլ Սպիրիդոնովին, որը առաջ նրա հետ ծառայել էր մի մարտկոցում, իսկ այժմ գլխավորում էր Պոդտյոլկովի արշավախումբը բռնող խառն ջոկատը։ Պոդտյոլկովը բարձր էր պահում գլուխը, քայլում էր ուղիղ և աշխույժ, կարծես չափից ավելի խմած լիներ։ Սպիրիդոնովը ինչ-որ բան էր ասում նրան, թեթև ու նենգաբար ժպտում։ Նրա հետևից գալիս էր ձիավոր մի կազակ, կրծքին սեղմելով լայն, սպիտակ դրոշակի կոթը, որ անփույթ կերպով էր ռանդած։

Փողոցը և բակերը, ուր կուտակված էին արշավախմբի սայլերը, լցվեցին վրա հասած կազակներով։ Աղմուկը միանգամից սաստկացավ։ Եկածներից շատերը ծառայել էին Պոդտյոլկովի զորախմբում գտնվող կազակների հետ։ Հնչեցին ուրախ բացականչությունները, ծիծաղը։

— Թյու, հայրենակից, այդ ո՞ր քամին բերեց քեզ։

— Բարև, է՛, բարև, Պրոխոր, ո՞նց ես։

— Փառք աստծո։

— Քիչ մնաց ես ու դու զարկվեինք։ Հիշո՞ւմ ես, թե Լվովի մոտ ոնց էինք քշում ավստրիացիներին։

— Քավո՛ր, Դանիլո, ա՛յ քավոր։ Քրիստոս հարյավ։

— Օրհնյալ է հարությունն Քրիստոսի,— լսվում էր համբույրի հնչուն չպպոցը. երկու կազակ բեղերը կոկելով, նայում էին միմյանց, ժպտում, թփթփացնում մեկմեկու ուսին։

Դրանց կողքին՝ մեկ այլ խոսակցություն.

— Մենք իսկի պասերս էլ չբացինք...

— Բայց ախր դուք բոլշևիկներ եք, ձեզ համար ի՞նչ պաստ

— Դե, շատ է՛լ բոլշևիկներ ենք, բայց հավատում ենք աստծուն։

— Պա՛հ, սուտ չե՞ս ասում։

— Աստված վկա։

— Իսկ խաչ ունե՞ս։

— Հրե՛ս, ա՛յ,— ու հաղթանդամ, լայնադեմ կարմիրգվարդիական կազակը շուրթերն ուռցնելով, արձակեց վերնաշապկի կոճակները, հանեց բրոնզե, մազոտ կրծքին կախված, խունացած պղնձե խաչը։

«Խռովարար Պոդտյոլկովին» բռնող ջոկատների հետ եկած ծերուկները, որոնք զինված էին եղաններով ու կացիններով, զարմացած նայում էին իրար.

— Բա ասում էին, թե դուք ձեռ եք քաշել քրիստոնեական հավատից։

— Միթամ դուք սատանային եք հանձնվել...

— Լուրեր կային, թե դուք թալանում եք եկեղեցիները ու ոչնչացնում տերտերներին։

— Սուտ բան է,— վստահորեն հերքում էր լայնադեմ կարմիրգվարդիականը,— ձեզ ստեր են կերցնում։ Ռոստովից գուրս գալուց առաջ ես եկեղեցի եմ գնացել ու ճաշակվել։

— Ա՛յ քեզ բա-ա-ան,— ուրախացած ծափ տվեց ինչ-որ լղարիկ մի ծերուկ, որը զինված էր կոթը կիսով չափ կտրված նիզակով։

Աշխույժ խոսակցությունները դժժում էին փողոցում ու բակերում։ Բայց կես ժամից հետո մի քանի կազակ, որոնցից մեկը Բոկովսկայա ստանիցայի վախմիստր էր, հոծ բազմության մեջ ճանապարհ բաց անելով, քայլում էին փողոցում։

— Ովքեր Պոդտյոլկովի ջոկատից են, հավաքվեցեք ստուգման,— բղավում էին նրանք։

Փոխ-յասավուլ Սպիրիդոնովը, որ պաշտպանական գույնի վերնաշապիկով ու նույն գույնի ուսադիրներով էր, հանեց գլխարկը՝ ջարդած շաքարի կտորի պես սպիտակին տվող սպայական գլխարկանիշով, ու դառնալով բոլոր կողմերը, բղավեց.

— Բոլորդ, ովքեր Պոդտյոլկովի ջոկատից եք, անցեք ձախ կողմը, ցանկապատի մոտ։ Մնացածները՝ աջ կողմը։ Մենք, ձեր ճակատային եղբայրները, ձեր դելեգացիայի հետ միասին որոշեցինք, որ դուք պետք է բոլոր զենքերը հանձնեք մեզ, որովհետև բնակչությունը վախենում է ձեզանից, երբ դուք զինված եք։ Հրացանները և մնացած զենքերը դարսեցեք ձեր սայլերի վրա, դրանք միասին կպահպանենք։ Մենք ձեր ջոկատը կուղարկենք Կրասնոկուտսկայա, այնտեղ, սովետում դուք լրիվ կստանաք ձեր զենքերը։

Կարմիրգվարդիական կազակների մեջ խուլ հուզմունք սկսվեց։ Բակից ճչոցներ էին լսվում։ Կումշատսկայա ստանիցայի կազակ Կորոտկովը գոռում է.

— Չե՛նք տա։

Խուլ, սուր դժժոց փողոցում, բակերում, որոնք լիքն են մարդկանցով։

Եկվոր կազակները անցան աջ կողմը, ու փողոցի մեջտեղում ցաք ու ցրիվ բազմությամբ մնացին Պոդտյոլկովի ջոկատի կարմիրգվարդիականները։ Կրիվոշլիկովը շինելը ուսերին գցած, շփոթված նայում էր շուրջը։ Լագուտինը ծրոմբոռում էր շրթունքները։ Տարակուսանքով լի խոսակցություններ սկսվեցին։

Բունչուկը, որ հաստատապես որոշել էր չհանձնել զենքը, հրացանը պատրաստ պահած՝ արագ մոտեցավ Պոդտյոլկովին։

— Զենքերը չենք հանձնի, լսո՞ւմ ես։

— Հիմա ուշ է... —շշնջաց Պոդտյոլկովը՝ ձեռքում շղաձգաբար ճմլելով ջոկատի ցուցակը։

Այդ ցուցակն անցավ Սպիրիդոնովի ձեռքը։ Վերջինս հարևանցիորեն այն կարդալով՝ հարցրեց.

— Այստեղ հարյուր քսանութ մարդ է գրված... Մնացածները ո՞րտեղ են։

— Ճանապարհին ետ են մնացել։

— Ը՛հմ, ա՛յ թե ինչ... էհ, լավ։ Հրամայիր, որ բերեն զենքերը։

Պոդտյոլկովն առաջինը արձակեց պատյանի մեջ դրված նագանը. հանձնելով զենքը, հազիվ լսելի ասաց.

— Թուրս և հրացանս սայլի վրա են։

Սկսվեց զինաթափումը։ Կարմիրգվարդիականները ծուլորեն բերում էին զենքերը, ատրճանակները շպրտում էին յանկապատից դենը, թաքցնում, անցնում բակերը։

— Բոլոր նրանց, ովքեր չեն հանձնի զենքերը, խուզարկելու ենք,— ուրախ-զվարթ ժպտալով՝ բղավեց Սպիրիդոնովը։

Կարմիրգվարդիականների մի մասը Բունչուկի գլխավորությամբ հրաժարվեց հրացանները հանձնելուց. նրանց ուժով զինաթափեցին։

Տագնապ առաջացրեց մի գնդացրորդ, որը խուտորից ձիով փախավ՝ տանելով գնդացրի փակաղակը։ Օգտվելով իրարանցումից, մի քանի հոգի անհայտացան։ Բայց Սպիրիդոնովն իսկույն պահակներ նշանակեց, շրջապատեց բոլոր մնացածներին, նաև Պոդտյոլկովին, խուզարկեց, փորձեց ցուցակով ստուգում կատարել։ Գերիները դժկամորեն էին պատասխանում, ոմանք ասում էին.

— Էլ ի՞նչ կարիք կա ստուգել, բոլորն էլ այստեղ են։

— Մեզ տարեք Կրասնոկուտսկայա։

— Ընկերներ, վերջացրեք գործը։

Կնքելով դրամարկղը և ուժեղ հսկողության տակ այն ուղարկելով Կարգինսկայա, Սպիրիդոնովը գերիներին շարք կանգնեցրեց ու, միանգամից փոխելով իր տոնն ու վարմունքը, հրաման տվեց.

— Երկշարք կանգ-նի՛ր։ Ձա՞խ դա՛րձ։ Աջ ուսն առաջ, քայլով մա՛րշ։ Լռե՛լ։

Կարմիրգվարդիականների շարքերից տրտունջ էր լսվում։ Քայլում էին անհամաչափ, կամաց, մի քիչ հետո խառնեցին շարքերը և արդեն խռնված էին գնում։

Պոդտյոլկովը, որ վերջում յուրայիններին խնդրում էր հանձնել զենքերը, հավանորեն դեռ հույս էր դրել ինչ-որ մի երջանիկ վախճանի վրա։ Բայց հենց որ գերիներին խուտորից դուրս տարան, ուղեկցող կազակները սկսեցին ձիերով նեղել կողքից գնացողներին։ Ներունի մի կազակ, որ վառ-շիկակարմիր մորուքով էր և հնությունից սևացած, ականջից կախված գինդով, մտրակով առանց պատճառի խփեց ձախ կողմից քայլող Բունչուկին։ Մտրակի ծայրը դաղեց Բունչուկի

թուշը։ Բունչուկը շուռ եկավ, սեղմեց բռունցքները, սակայն երկրորդ, է՛լ ավելի ուժեղ հարվածը, նրան ստիպեց նետվել բազմության մեջ։ Նա այդ արեց ակամա, ինքնապահպանության անասնական բնազդով, ու ընկերների խիտ բազմության մեջ նրանց մարմիններով պաշտպանված, Աննայի մահից հետո առաջին անգամ շրթունքները ծռմռեց թույլ քըմծիծաղով, զարմանալով, թե յուրաքանչյուրի մեջ որչափ վառ և ուժեղ է ապրելու ցանկությունը։

Սկսեցին ծեծել գերիներին։ Ներունիները անզեն թշնամիների դեմ գազանացած, ձիերը քշում էին նրանց վրա, կախվում թամքերից, խփում մտրակներով, թրերով։ Սեծի ենթարկվողներից յուրաքանչյուր մեկը ակամա աշխատում էր անցնել բազմության մեջտեղը. սկսվեց հրմշտոցը, աղմուկ բարձրացավ։

Դոնի ստորին ավազանի բարձրահասակ, կորովի մի կարմիրգվարդիական թափահարելով ձեռները,, գոչեց.

— Միանգամից սպանեցեք, էլի... ինչո՞ւ եք չարչարում։

— Բա ո՞ւր մնաց ձեր խոստումը,— զրնգուն ձայնով ասաց Կրիվոշլիկովը։

Ներունները զսպեցին իրենց։ Գերիներից մեկի այն հարցին, թե «Ո՞ւր եք մեզ տանում», ուղեկցորդներից մեկը, մի երիտասարդ ճակատային, որ ըստ երևույթին համակրում էր բոլշևիկներին, ցածրաձայն պատասխանեց.

— Հրամայված է տանել Պոնոմարյով խուտորը։ Մի՛ վախենաք, տղերք, ձեզ ոչ մի վատ բան չենք անի։

Հասան Պոնոմարյով խուտորը։

Սպիրիդոնովը երկու կազակի հետ կանգնեց խանութի դռան մոտ. գերիներին մեկ-մեկ ներս թողնելով, հարցնում էր.

— Անո՞ւնդ, ազգանո՞ւնդ։ Ո՞րտեղացի ես։— Պատասխանները գրանցում էր կեղտոտված դաշտային տետրի մեջ։

Հերթը հասավ Բունչուկին։

— Ազգանո՞ւնդ,— Սպիրիդոնովը մատիտի ծայրը մոտեցրեց թղթին, հարևանցիորեն նայեց կարմիրգվարդիականի մռայլ, լայնաճակատ դեմքին, ու տեսնելով, թե ինչպես են սեղմվում նրա շրթունքները, պատրաստվելով թքելու,— ամբողջ մարմինը ետ տվեց, գոռաց.

— Անցի՛ր, որդկա, առանց ապրանքներ էլ կստակես։

Թունչուկի օրենքով վարակված, չպատասխանեց նա ատամքսվելի Իգնատը։ Ինչ-որ մեկն էլ ուզեց մեռնել առանց ճանաչված լինելու,— լուռ անցավ շեմքից...

Սպիրիդոնովը կողպեքով փակեց դուռը։ Պահակ կարգեց։

Մինչդեռ խանութի մոտ բաժանում էին արշավախմբի ասյլերից վերցրած մթերքներն ու զենքերը, հարևան տներից մեկում տեղի էր ունենում հապճեպ կազմակերպված ռազմադաշտային դատարանի նիստը։ Դատարանը կազմվել էր Պոդտյելկովին բռնելուն մասնակցած խուտորնների նեբկալացուցիչներից։

Նախագահում էր թիկնավեստ, հոնքերը դեղնավուն մի յասավուլ,— Բակովսկայա ստանիցայի բնիկ Վասիլի Պոպովը։ Նա նստել էր սեղանի մոտ, հայելու տակ, որի վրա երեսուներեքներ էին կախված, արմունկները լայն դրել էր սեղանին, գլխարկը քշտել տափակ ծոծրակին։ Նրա դժգույն, բարեհոգություն ու միաժամանակ խստություն արտահայտող աչքերը դանդաղաբար նայում էին կազակների,— դատարանի անդամների դեմքերին։ Քննարկվում էր պատժի միջոցը։

— Ի՞նչ ենք անելու նրանց, պարոնայք ծերունիներ,— Պոպովը կրկնեց հարցը։

Թեքվելով, նա ինչ-որ շշնջաց իր կողքին նստած փոխյասավուլ Սենինին։ Վերջինս իսկույն ևեթ գլխով դրական նշան արեց։ Պոպովի ակնարիբերը նեղացան, աչքերի անկյուններից չքացան ուրախ շողիկները, ու աչքերը մի այլ, սառն ու մռայլ արտահայտություն ստացան, ծածկվեցին նոսր թարթիչներով։

— Ի՞նչ անենք հայրենի երկրի այն գավաճաններին, որոնք գալիս են թալանելու մեր տուն ու տեղը և ոչնչացնելու կազակությունը։

Տեղից վեր կացավ Միլյուտինսկայա ստանիցայի հնածես ծերուկ Ֆերապյոնը,— ասես զսպանակը նրան վերև գցեց։

— Գնդակահարե՛լ բոլորին։— Նա անհեթեթ կերպով թափահարեց գլուխը. մալուգար, խեթ հայացքը ուղղելով բոլորին, խեղդվելով լորձունքից, բղավեց.— չգիտք է գութ անել նրանց, այդ քրիստոսավաճառներին։ Նրանցից ովքեր որ չհուդներ են սպանե՛լ... Սպանե՛լ... Խաչե՛լ... Վառե՛լ դրանց...

Նրա նոսր մորուքը դողում էր, ալեզարդ, կարմրավուն երանգով բծավորված մազերը զզզված էին։ Նա նստեց շընչասպառ, մուգ-աղյուսագույն դեմքով, շրթունքները թքոտված։

— Աքսորել։ Թե՞ չէ...— տատանվելով առաջարկեց դատարանի անդամներից մեկը, Դյաչենկոն։

— Խփել, էլի՛։

— Մահվան պատի՛ժ տալ։

— Պաշտպանում եմ այդ կարծիքը։

— Բոլորին էլ կախել ժողովրդի աչքի առաջ։

— Մոլախոտը ոչնչացնել է պետք։

— Մահվա՛ն դատապարտել։

— Գնդակահարել, իհա՛րկե, էլ ի՞նչ խոսք,— ցասկոտեց Սպիրիդոնովը։

Յուրաքանչյուր ճչոցի վրա յասավուլ Պոպովի բերանի անկյունները ծռմռվելով, կորցնելով կուշտ, ինքն իրենից և շրջապատից գոհ մարդու քիչ առաջվա բարեհոգության արտահայտությունը, ասես կարծրանում էին, դաժան տեսք առնում։

— Գնդակահարե՛լ... Գրիր...— հրամայեց նա քարտուղարին, շեղակի նայելով նրան։

— Բա Պոդտյելկովին ու Կրիվոշլիկովին... այդ թշնամիներին նո՞ւյնպես գնդակահարել... Այդ քիչ է նրանց,— տաքացած բղավեց ամրակազմ, զառամյալ մի կազակ, որ նստել էր պատուհանի մոտ և անդադար բարձրացնում էր հանգչող լամպի պատրույգը։

— Նրանց, որպես պարագլուխների, պետք է կախել,— կարճ պատասխանեց Պոպովը և կրկնեց այդ, դիմեց քարտուղարին.— Գրիր՝ «Որոշում։ Մենք, ստորև ստորագրողներս...»

Քարտուղարը, որ նույնպես Պոպով էր, յասավուլի հեռավոր ազգականը, թեքելով բաց-շիկահեր, կոկիկ սանրված գլուխը, ճռճռացրեց գրիչը։

— Նավթը երևի չի հերիքի...— ափսոսանքով հոգոց հանեց մեկը։

Լամպը թարթում էր։ Պատրույգը ծուխ էր արձակում։

Լուիյան մեջ բզզում էր առաստաղի վրա սարդոստայնի մեջ ընկած մի ճանճ, գրիչը քերում էր թուղթը, ֆսսալով ու ծանր շնչում էր դատարանի անդամներից մեկը։

ՈՐՈՇՈՒՄ

1918 թվականի ապրիլի 27-ին (մայիսի 10-ին) Կարգինսկայա, Բոկովսկայա և Կրասնոկուտսկայա ստանիցաների խուտորների կողմից ընտրվածները,—

Վասիլևսկուց . . . . . Մակսան Ստեփանը,
Բուկովսկուց . . . . . Կրուժիլին Նիկոլայը,
Փոմինից . . . . . Կոմով Ֆյոդորը,
Վերխնե-Յաբլոնովսկուց . . . . Կուխտին Ալեքսանդրը,
Նիժնի-Դուլենսկուց . . . . . Ալեն Լևը,
Իլյինսկից . . . . . Վոլոցկով Սեմյոնը,
Կոնկովսկից . . . . . Գոպով Միխայիլը,
Վերխնե-Դուլենսկուց . . . . . Ռոդին Յակովը,
Սավոստյանովից . . . . . Ֆրոլով Ալեքսը,
Միլյուտինսկայա ստանիցայից . . Ֆերալյով Մաքսիմը,
Նիկոլաևից . . . . . Գրոշև Միխայիլը,
Կրասնոկուտսկայա ստ.-ից . . . . Ելանսկին Իլյան,
Գոնոմարյով խուտորից . . . . . Դյաչենկո Իվանը,
Օվլյանտև » . . . . . Կրիվով Նիկոլայը,
Մալախով » . . . . . Եմելյանով Լուկան,
Նովոզեմցևից . . . . . Կոնովալով Մատվեյը,
Գոպովից . . . . . Գոպով Միխայիլը,
Աստախովից . . . . . Շչեգոլյկով Վասիլին,
Օալովից . . . . . Ջեկունով Ֆյոդորը
Գլիմո-Ֆեոդորովսկից . . . . . Ջուկարին Ֆյոդորը

Վ. Ս. Գոպովի նախագահությամբ

ՈՐՈՇԵՑԻՆ

1 Բոլոր կողոպտիչներին և աշխատավոր ժողովրդին խաբողներին, որոնք հիշատակված են ստորև բերված ցուցակում, թվով ընդամենը 80 մարդ, ենթարկել մահվան պատժի,— գնդակահարման միջոցով, ըստ որում նրանցից երկուսի՝ Գոդոյոլկովի և Կրիվոշլիկովի նկատմամբ, որպես այդ խմբի պարագլուխները,— մահը գործադրել կախելու միջոցով։

2 Միխայլովսկի խուտորի կազակ Անտոն Կալիտվենցովին բավականաչափ ապացույցներ չլինելու պատճառով արդարացնել։

3. Գոդոյոլկովի ջոկատից փախած և Կրասնոկուտսկայա ստանիցայում ձերբակալված Կոնստանտին Մելնիկովին, Գավրիլ Մելնիկովին, Վասիլի Մելնիկովին, Ակսենովին ու Վերշինինին պատժի ենթարկել ըստ սույն որոշման առաջին կետի (մահվան պատիժ)։

4 Պատիժն ի կատար ածել վաղը, ապրիլի 28-ին (մայիսի 11-ին), առավոտյան ժամը 6-ին։

5 Ձերբակալվածներին հսկելու համար պահակապետ նշանակել փոխ-յասավուլ Սենինին, որի տնօրինության տակ այսօր երեկոյան ժամը 11-ին ուղարկել հրացաններով զինված երկուական կազակ. սույն կետը չկատարելու պատասխանատվությունը դրվում է դատարանի անդամների վրա. պատիժը պետք է ի կատար ածի յուրաքանչյուր խուտորից նշանակված պահակախումբը. գնդակահարման վայրն ուղարկել հինգական կազակ։

Իսկականը ստորագրեցին
Զինվորակ. բաժնի նախագահ՝ Վ. Ս. Գոպով
Քարտուղար՝ Ա. Ֆ. Գոպով

ՑՈՒՑԱԿ

Գոդոյոլկովի ջոկատի ծառայողների, որոնք հ. տ. 1918 թ. ապրիլի 27-ին ռազմա-դաշտային դատարանով դատապարտված են մահվան պատժի

№ №	Ստանիցաներ	Անուն և ազգանուն	Դատավճիռ
1	Ուստ-Խոպերսկայա	Ֆյոդոր Գոդոյոլկով	Կախել
2	Ելանսկայա	Միխայիլ Կրիվոշլիկով	»
3	Կազանսկայա	Ավրաամ Կակուրին	Գնդակահար.
4	Բուկանովսկայա	Իվան Լազուտին	»
5	Նիժն. Նովգոր. նահ.	Ալեքսեյ Իվ. Օալով	»
6	Նիժեգորոդսկ.	Եֆիմ Միխ. Վախտել	»
7	Ուստ-Բիստրյանսկ.	Գրիգորի Ֆետիսով	»
8	Միգուլինսկայա	Գավրիլ Տկաչև	»
9	Միգուլինսկայա	Պավել Ագաֆոնով	»
10	Միխայլովսկայա	Ալեքսանդր Բուբնով	»
11	Լուգանսկայա	Կալինին	»
12	Միգուլինսկայա	Կոնստանտին Մրիխին	»
13	Միգուլինսկայա	Անդրեյ Կոնովալով	»
14	Պոլտավայի նահ.	Կոնստանտին Կրիստա	»
15	Կոտովսկայա	Պավել Պոդնյակով	»

№ №	Ստանիցաներ	Անուն և ազգանուն	Դատավճիռ
16	Միգուլինսկայա	Իվան Բոլդիրյով	Գնդակահար.
17	Միգուլինսկայա	Տիմոֆեյ Կոլիչև	»
18	Ֆիլիմ.—Զելբ.	Դմիտրի Վոլոդարով	»
19	Զերնիշևսկայա	Գյորգի Կարպուշին	»
20	Ֆիլիմ.—Զելբ.	Իլյա Կալմիկով	»
21	Միգուլինսկայա	Սավելի Ռիբնիկով	»
22	Միգուլինսկայա	Պոլիկարպ Գուբով	»
23	Միգուլինսկայա	Բգնատ Զեմլյակով	»
24	Միգուլինսկայա	Իվան Կրավցով	»
25	Ռոստով	Նիկիֆոր Ֆլորովսկի	»
26	Ռոստով	Ալեքսանդր Կոնովալով	»
27	Միգուլինսկայա	Պյոտր Վիխլյանցև	»
28	Կրեցկայա	Իվան Զոտով	»
29	Միգուլինսկայա	Եվդոկիմ Բաբկին	»
30	Միխայլովսկայա	Պյոտր Սվինցով	»
31	Դոբրինսկայա	Իլլարիոն Զելոբիտսկիով	»
32	Կազանսկայա	Կլիմենտի Դրոնով	»
33	Իլովլինսկայա	Իվան Ավիլով	»
34	Կազանսկայա	Մատվեյ Սակմատով	»
35	Նիժնե-Կոտմոյարս.	Գյորգի Պուպկով	»
36	Տերնովսկայա	Միխայիլ Ֆերալլով	»
37	Խերսոնի նահ.	Վասիլի Պանտելեյմոնով	»
38	Կազանսկայա	Պարֆիրի Լյուբուխին	»
39	Կլեցկայա	Դմիտրի Շամով	»
40	Ֆիլոնովսկայա	Սաֆոն Շարոնով	»
41	Միգուլինսկայա	Իվան Գուբարյով	»
42	Միգուլինսկայա	Ֆյոդր Արակումով	»
43	Լուգանսկայա	Կուզմա Դարշկով	»
44	Գունդորովսկայա	Իվան Իզվարին	»
45	Գունդորովսկայա	Միրոն Կալինովցև	»
46	Միխայլովսկայա	Իվան Ֆարաֆոնով	»
47	Կոտովսկայա	Սերգեյ Գորբունով	»
48	Նիժնի-Ջիրսկայա	Պյոտր Ալան	»
49	Միգուլինսկայա	Պրակոպի Օռլով	»
50	Լուգանսկայա	Նիկիտա Շեին	»
51	Ստ. Մեխանիկ ՌՊՏՉ	Ալեքսանդր Ցասենսկի	»
52	Ռոստով	Միխայիլ Պոլյակով	»
53	Ռազդորսկայա	Դմիտրի Ռոգաչև	»
54	Ռոստով	Ռոբերտ Ֆրաշենբրուգեր	»
55	Ռոստով	Իվան Սիլենդեր	»

№ №	Ստանիցաներ	Անուն և ազգանուն	Դատավճիռ
56	Սամարայի նահ.	Կոնստանտին Եֆիմով	Գնդակահար.
57	Զերնիշևսկայա	Միխայիլ Օվչիննիկով	»
58	Սամարայի նահ.	Իվան Պիկալով	»
59	Իլովլինսկայա	Միխայիլ Կորեցկով	»
60	Կումշատսկայա	Իվան Կորոտկով	»
61	Ռոստով	Պյոտր Բիրյուկով	»
62	Մ. Ռազդորսկայա	Իվան Կաբակով	»
63	Լուկովսկայա	Տիխոն Մոլիտվինով	»
64	Միգուլինսկայա	Անդրեյ Շվեցով	»
65	Միգուլինսկայա	Ստեպան Անիկին	»
66	Կրեմենսկայա	Կուզմա Դիչկին	»
67	Բակլանովսկայա	Պյոտր Կաբանով	»
68	Միխայլովսկայա	Սերգեյ Սելիվանով	»
69	Ռոստով	Արտեմ Իվանչենկո	»
70	Միգուլինսկայա	Նիկոլայ Կոնովալով	»
71	Միխայլովսկայա	Դմիտրի Կոնովալով	»
72	Կրասնոկուտսկայա	Պյոտր Լիսիկով	»
73	Միգուլինսկայա	Վասիլի Միրոշնիկով	»
74	Միգուլինսկայա	Իվան Վոլոխով	»
75	Միգուլինսկայա	Յակով Գարդեն	

Նրանցից երեքը չեն հայտնել իրենց անձնավորության մասին։

Վերջացնելով դատապարտվածների ցուցակի արտագրությունը, քարտուղարը որոշման վերջում իրարից հեռու երկու կետ դրեց, գրիչը խոթեց կողքի նստածի ձեռքը.

— Ստորագրիր։

Նովո-Զեմցև խուտորի ներկայացուցիչ Կոնովալովը, գերմանական գորշ մահուդից կարված ու կարմիր ծալեր ունեցող օձիքով, տոնական կիտելը հագին, մեղավորի պես ժպտալով, կռացավ թղթի վրա։ Նրա հաստ, կոշտ, սևացած մատները առանց ծալվելու բռնել էին աշակերտական կեղտոտված գրչակոթը։

— Ես այնքան էլ գրագետ չեմ...— ասաց նա՝ ջանադրությամբ ճգելով «Կ» գլխատառը։

Նրանից հետո ստորագրեց Ռուդինը՝ նույնպես անվրդովտահորեն շարժելով գրչակոթը յարվածությունից քրտնելով,

կնճռոտելով դեմքը։ Մի ուրիշը նախապես թափ տալով գըրչակոթը, բարձրացնելով և իջեցնելով այն, ստորագրեց՝ ներս քաշելով ստորագրելու ժամանակ հանած լեզուն։ Պոպովը լայն-լայն, պոչավոր տառերով ստորագրեց իր ազգանունը, վեր կացավ, թաշկինակով սրբեց քրտնած դեմքը։

— Ցուցակը պետք է կցել որոշման,— հորանջելով ասաց նա։

— Կալեդինն այն աշխարհում մեզ շնորհակալություն կասի,— զվարթ ժպտաց Սենինը, տեսնելով, թե ինչպես քարտուղարը թանաքից թրջված թերթը սեղմում է սպիտակացրած պատին,— թանաքը չորացնելու համար։

Ոչ ոք չպատասխանեց կատակին։ Լուռ հեռացան խրճիթից։

— Տե՛ր Հիսուս...— դուրս գալով, խավար հաշտում հոգոց հանեց մեկը։

XXIX

Այդ գիշեր, որը ողողված էր դալուկ-դեղնավուն աստղերի աղոտ լույսով, մարդկանցով լեփ-լեցուն փոքրիկ խանութում համարյա ոչ ոք չքնեց։ Խոսակցությունները կարճ էին։ Ծանր օդն ու անհանգստությունը խեղդում էին մարդկանց։

Կարմիրգվարդիականներից մեկը իրիկվանից խնդրեց իրեն դուրս տանել՝ բնական կարիքը հոգալու։

— Բա՛ց արա, ընկեր։ Ուզում եմ դուրս գնալ, կարիքիս համար...

Նա կանգնել էր շալվարի միջից դուրս եկած բյազե շապկով, գզգզված մազերով, ոտաբոբիկ. կանգնել էր ու, սևացած դեմքը կպցնելով բանալու անցքին, կրկնում էր.

— Բաց արա, էլի, ընկեր։

— Քո ընկերը գելն է,— վերջապես պատասխանեց պահակներից մեկը։

— Բաց արա, աղբերս,— խնդրողը փոխեց դիմելու ձևը։

Պահակը հրացանը հենեց պատին, լսեց, թե ինչպես են թևերը շփշփացնում վայրի բադերը, որոնք թռչում էին գիշերային կեր որոնելու,— ու ծխելով փաթաթած ծխախոտը, շրթունքները մոտեցրեց բանալու անցքին։

— Միգիր տակդ, սիրելիս։ Գիշերս շալվարդ չի մաշվի,

իսկ առավոտյան թաց շալվարով էլ երկնային արքայություն կուղարկեն...

— Կորա՛նք, էլի՛,— հուսալքված ասաց կարմիրգվարդիականը՝ ետ քաշվելով դռնից։

Նստել էին մեկմեկու թիկնած։ Պոդտյոլկովը մի անկյունում փսփսալով ու մայր հայհոյելով, դատարկեց գրպանները, պատառոտեց մի կույտ թղթադրամ։ Այնուհետև հանեց ոտնամանները, հոտ քաշեց քրտինքի հոտ արձակող փաթաթաններից, բոթելով կողքին պառկած Կրիվոշլիկովին, ասաց.

— Պարզ է, մեզ խաբեցին։ Խաբեցին, ես դրանց մերը... Վրդովեցուցիչ է, Միխայլո։ Հիշում եմ, փոքր տղա էի, հորս հին հրացանով որսի էի գնում Դոնի մյուս կողմը, գնում էի անտառի միջով, անտառն էլ ոնց որ կանաչ շաղը... Մոտենում ես լճակին,— բադերն են նստել։ Պատահում էր, որ վրիպում էի, ու այնքան վրդովվում, որ քիչ էր մնում ճչայի։ Եվ ահա հիմի էլ եմ վրդովված,— վրիպել եմ, երանի թե Ռոստովից երեք օր առաջ դուրս գայինք, այդ դեպքում այստեղ շանսատակ չէինք լինի։ Ամբողջ կոնտրռևոլյուցիան ջարդուփշուր կանեինք։

Մթության մեջ դառն ժպտալով ու բանալով ատամները, Կրիվոշլիկովն ասաց.

— Ջհաննա՛մը, թող սպանեն։ Առայժմ մնոնելուց չեմ վախենում... «Միայն մի բանից եմ վախենում, որ այն աշխարհում մենք միմյանց չենք ճանաչի...» Այնտեղ, Ֆեդյա, կհանդիպենք ու մեկմեկու օտար կլինենք... Սարսափելի է...

— Թո՛ղ, է՛,— սրտնեղությամբ վրա բերեց Պոդտյոլկովը՝ տաք ձեռները դնելով հարևանի ուսերին,— բանն այդ չէ...

Լագուտինը մեկին պատմում էր հայրենի խուտորի մասին, պատմում էր, թե ինչպես պապը նրան «պոլոզ» էր անվանում իր երկար գլխի պատճառով և թե ինչպես հենց այդ պապը մտրակով թակեց իրեն, բռնելով ուրիշի բոստանում։

Զանազան խոսակցություններ էին տեղի ունենում այն գիշեր, դրանք անկապ ու կցկտուր էին։

Բունչուկը տեղավորվել էր հենց դռան մոտ, ագահությամբ ծծում էր դռան ճեղքից թափանցող զով օդը։ Պրպտելով իր ապրած կյանքը, նա հարևանցիորեն հիշեց մորը, ու այրող ցավով խոցված, դժվարությամբ վանեց մոր վերաբերյալ

միտքը, սկսեց վերհիշել Աննային, մոտիկ անցյալի օրերը... Դա մեծ, խաղաղարար-զվարթագին թեթևություն բերեց։ Մահվան միտքը ամենից քիչ էր վախեցնում նրան։ Հիմա այնպես չէր, ինչպես առաջ, երբ նա ողնաշարի պաղ սարսուռ և մաշող թախիծ էր զգում, մտածելով, որ կխլեն իր կյանքը։ Նա պատրաստվում էր մահվան, ինչպես հանգստանալու են պատրաստվում դառն ու տանջալից ճանապարհ անցնելուց հետո, երբ հոգնածությունն այնքան մեծ է, մարմինն այնքան է ջարդված, որ այլևս ոչինչ չի կարող հուզել։

Նրանից քիչ հեռու և՛ ուրախ, և՛ տխուր խոսում էին կանանց մասին, սիրո, մեծ ու փոքր բերկրանքների մասին, որ հուզել էին յուրաքանչյուր մեկի սիրտը։

Խոսում էին ընտանիքների հարազատների, մերձավորների մասին... Ասում էին, որ արտերը լավ են աճել. ագռավն արդեն կթաղվի ցորենի արտում ու չի երևա։ Ցավով էին խոսում արաղի, ազատության մասին, հայհոյում էին Պոդտյոլկովին։ Բայց քունն արդեն շատերին ծածկում էր իր սև թևերով. ֆիզիկապես ու բարոյապես տանջված մարդիկ քնում էին պառկած, նստած, կանգնած։

Արդեն բացվում էր արշալույսը, երբ մեկը,— արթմնի թե երազում,— աղիողորմ լաց եղավ. սարսափելի է, երբ լալիս են չափահաս, կոպիտ մարդիկ, որոնք մանկությունից մոռացել են արցունքների աղի համը։ Եվ իսկույն պատասխանվեց խորին լռությունը, մի քանիսը գոռացին.

— Ձենդ կտրիր, անիծված։

— Ոնց որ կնիկ լինի։

— Լռիր, թե չէ լեզուդ կպոկեմ...

— Ամո՛թ է, տո, ախմախ...

— Մարդիկ քնել են, իսկ նա... Բա դու խիղճ ունե՞ս։

Լացողը վեր քաշեց քիթը, խնչեց ու լռեց։

Քար լռություն։ Այստեղ ու այնտեղ առկայծում էին ծխախոտները, բայց մարդիկ չէին խոսում։ Զգացվում էր տղամարդու քրտնքի, կուտակված առողջ մարմինների, ծխախոտի հոտը և գիշերը նստած ցողի քաղցրավուն, հաճելի բույրը։

Խուտորում աքաղաղն ազդարարեց լուսաբացի մասին։ Լսվեցին քայլեր, երկաթի շաչյուն։

— Ո՞վ է,— ցածրաձայն հարցրեց պահակներից մեկը։

Հեռվից հազ լսվեց, երիտասարդական զվարթ մի ձայն պատասխանեց պահակին.

— Մերոնցից ենք։ Գնում ենք Պոդտյոլկովի մարդկանց համար գերեզման փորելու։

Խանութում բոլորն էլ միանգամից իրար անցան։

XXX

Տատարսկի կազակների մի ջոկատ խորունժի Պետրո Մելեխովի հրամանատարությամբ ապրիլի 28-ի լուսաբացին ժամանեց Պոնոմարյով խուտորը։

Խուտորում թրևում էին Ջիրի կազակները, ձիերը տանում էին ջրելու, խմբերով գնում խուտորի ծայրը։ Պետրոն ջոկատը կանգնեցրեց խուտորի կենտրոնում, հրամայեց իջնել ձիերից։ Մի քանի մարդ մոտեցան նրանց։

— Ո՞րտեղից եք գալի, տղերք,— հարցրեց մեկը։

— Տատարսկից։

— Ուշացել եք... Առանց ձեզ բռնել են Պոդտյոլկովին։

— Բա ո՞րտեղ են։ Այստեղից նրանց հո չե՞ն տարել։

— Հրե՛ն այնտեղ են,— կազակը ձեռքով ցույց տվեց խանութի թեք կտուրը, ծիծաղեց,— թառել են այնտեղ, ոնց որ հավերը հավանոցում։

Խրիստոնյան, Գրիգորի Մելեխովը ու էլի մի քանի մարդ վրա հասան։

— Ուրեմս ո՞ւր են ուղարկում նրանց,— հետաքրքրվեց Խրիստոնյան։

— Մեռելների մոտ։

— Ո՞նց թե... Ի՞նչ ես դուրս տալի,— Գրիգորին բռնեց կազակի շինելի փեշից։

— Դու ավելի լավ դուրս տուր, ձերդ բարեծննդություն,— հանդգնաբար պատասխանեց կազակը ու փեշը ազատեց Գրիգորիի պինդ մատներից.— հրեն, մտիկ արա, նրանց համար արդեն ճլորթի են սարքել,— նա ցույց տվեց կախաղանը, որ պատրաստված էր երկու վտիտ ուռենիների արանքում։

— Ձիերը տեղավորե՛լ բակում,— հրամայեց Պետրոն։

Ամպերը ծածկեցին երկինքը։ Խշշաց նոսր անձրևը։ Կազակներն ու կանայք հոծ խմբերով գնում էին խուտորի ծայրը։ Պոնոմարյովի բնակչությունը, որ իմացել էր ժամը 6-ին նշանակված մահապատժի մասին, հաճույքով գնում էր ասես հազվադեպ ուրախ մի բան տեսնելու։ Կազակուհիները զուգվել-զարդարվել էին, կարծես տոն լիներ. շատերն իրենց հետ տանում էին երեխաներին։ Ամբոխը շրջապատեց արոտատեղը, խռնվեց կախաղանի ու երկար, մոտ երկու արշին խորությամբ փոսի շուրջը։ Երեխաները վազվզում էին փոսի մի կողմում կուտակված կավախառն հողի վրա. կազակները խմբվում, աշխույժ կերպով զրուցում էին մոտալուտ մահապատժի մասին, կանայք տխուր փսփսում էին իրար մեջ։

Քնկոտ ու լուրջ դեմքով եկավ յասավուլ Պոպովը։ Նա ծխում էր, ծամծմում ծխախոտը՝ բաց անելով պինդ ատամները. խռպոտ հրամայեց պահակախմբի կազակներին.

— Ժողովրդին հեռացրեք փոսից, Սպիրիդոնովին հայտնեցեք, որ բերի առաջին խումբը։— Նայեց ժամացույցին ու անցավ մի կողմ, տեսնելով, թե ինչպես պահակներից նեղվող ամբոխը հեռանում է մահապատժի տեղից, միաձույլ, խայտարղետ բազմությամբ շրջապատում այն։

Սպիրիդոնովը մի խումբ կազակներով արագությամբ գնում էր դեպի խանութ։ Ճանապարհին Պետրո Մելեխովը հանդիպեց նրան։

— Ձեր խուտորից կամավորներ կա՞ն։

— Ի՞նչ կամավորներ։

— Որոնք ի կատար ածեն դատավճիռը։

— Չկան և չեն լինի,— կտրուկ պատասխանեց Պետրոն՝ շրջանցելով ճանապարհը փակած Սպիրիդոնովին։

Բայց կամավորներ գտնվեցին. Միտկա Կորշունովը հարթելով հովարի տակից դուրս թափված մազերը, օրորվելով մոտեցավ Պետրոյին, ու փայլեցնելով եղեգնի պես կանաչ, կկոցված աչքերը, ասաց.

— Ես կկրակեմ... Ինչո՞ւ ես ասում «չկան»։ Ես համաձայն եմ.— ու ժպտալով նայեց գետնին.— Փամփուշտներ տուր ինձ։ Ես միայն մի պահունակ փամփուշտ ունեմ։

Նա, Անդրեյ Կաշուլինը, որի դեմքը ամենաուժեղ, չոր լարվածություն էր արտահայտում, ու կալմիկանման Ֆեդոտ

Բոդովսկովը հանձն առան կրակել դատապարտվածների վրա։

Իրար գլխի հավաքված ահագին բազմության մեջ շշուկ ու դժժոց բարձրացավ, երբ խանութից դուրս եկավ դատապարտվածների առաջին խումբը՝ ուղեկցորդ կազակներով շրջապատված։

Առջևից գալիս էր Պոդտյոլկովը,— ոտաբոբիկ, սև մահուդե լայն գալիֆեով ու կոճակներն արձակած կաշվե բաճկոնով։ Նա մեծ, սպիտակ ոտներով վստահորեն քայլում էր ցեխի մեջ, սլկում էր, մի փոքր պարզում ձախ ձեռքը՝ պահպանելով հավասարակշռությունը։ Նրա կողքին ոտները հազիվ քարշ էր տալիս բոլորովին սփրթնած Կրիվոշլիկովը։ Սրա աչքերը աղոտ փայլում էին, բերանը տանջալից կերպով ցընցվում էր։ Շտկելով ուսերին գցած շինելը, Կրիվոշլիկովն այնպես էր կուչ գալիս, որ կարծես սարսափելի մրսում էր։ Հայտնի չէ ինչու նրանց հագուստը չէին հանել, իսկ մնացածները գալիս էին միայն սպիտակեղենով։ Լագուտինը մանր քայլերով գալիս էր ծանրաքայլ Բունչուկի կողքին։ Նրանք երկուսն էլ բորիկ էին։ Լագուտինի պատռված վարտիքի տակից երևում էր դեղնամաշկ, նոսր մազերով պատած սրունքը։ Նա ամոթխածությամբ ծածկում էր վարտիքի պատռված տեղը, դողացնում շուրթերը։ Բունչուկը ուղեկցորդների գլուխների վրայով գիտում էր գորշ, ամպամած հեռուն։ Նրա զգաստ, սառն աչքերը սպասողաբար, լարվածորեն թարթում էին, լայն ձեռքը սողում էր կոճակներն արձակած շապկի տակ՝ շփելով խիտ մազակալած կուրծքը։ Թվում էր, թե ինչ-որ անիրագործելի և ուրախալի բանի է սպասում... Ոմանք դեմքերի վրա արտաքին անտարբերության պես մի բան էին պահպանում. ալեհեր բոլշևիկ Օլովը աշխույժ թափահարում էր թևերը, թքում էր կազակների ոտների տակ, իսկ երկու թե երեք հոգու աչքերում այնքան խուլ թախիծ կար, այնպիսի անսահման սարսափ էր կաթում նրանց ծռմռված դեմքերից, որ նույնիսկ ուղեկցորդներն էլ երեսները շուռ էին տալիս նրանցից, երբ պատահմամբ նայում էին նրանց։

Գալիս են արագ։ Պոդտյոլկովը բարձրացնում է սայթաքած Կրիվոշլիկովին։ Մոտենում է ամբոխը՝ սպիտակին տվող լաչակներով, կարմիր ու կապույտ բոլորք ունեցող գլխարկներով։ Աչքի տակից նայելով ամբոխին, Պոդտյոլկովը բարձ-

բաձայն, այլանդակ հայհոյանք է թափում ու հանկարծ նկատելով, որ Լագուտինն իրեն է նայում, հարցնում է.

— Ի՞նչ ես նայում։

— Ճերմակել ես այս մի քանի օրում... Տե՛ս թե մազերդ ոնց են իրենց գույնը գցել...

— Իհարկե կճերմակես,— դժվարությամբ շունչ է առնում Պոդտյոլկովը՝ սրբելով նեղ ճակատի քրտինքը, ու կրկնում է՝ իհարկե կճերմակես այսպիսի վիճակից... Դերության մեջ գայլն է՛լ է ճերմակում, իսկ ես հո մարդ եմ։

Նրանք այլևս ոչ մի բառ չասացին։ Ամբոխը հուպ մոտենում է։ Աջ կողմից երևում է գերեզմանի երկարավուն փոսը, դեղին կավահողը։ Սպիրիդոնովը հրաման է տալիս.

— Կանգնե՛լ։

Ու Պոդտյոլկովն իսկույն մի քայլ է անում դեպի առաջ, հոգնածորեն մի հայացք նետում ժողովրդի առաջին շարքերի վրա. ամենից շատ են ալեհեր ու ալեխառն մորուքները։ Ճակատայինները կանգնած են հեռվում, հեռևում. նրանց տանջում է խիղճը։ Պոդտյոլկովը հազիվ շարժում է կախ ընկած բեղերը, խոսում է խուլ, բայց լսելի ձայնով.

— Ներումներ, թույլ տվեք ես ու Կրիվոշլիկովը նայենք, թե ինչպես են մեռնելու մեր ընկերները։ Հետո մեզ կկախենք, իսկ հիմի մենք կուզենայինք նայել մեր բարեկամ-ընկերներին, սիրտ տալ թույլերին։

Այնպիսի լռություն է, որ լսում ես, թե անձրևի կաթիլներն ինչպես են խփում գլխարկիդ...

Յասավուլ Պոպովը հեռվից, հետևից ժպտում է՝ ցույց տալով ծխախոտից դեղնած ատամները. նա դեմ չէ. ծերունիները անհարիր, առանձին-առանձին գոռում են.

— Թույլ ենք տալիս։

— Թող մտիկ տան։

— Դրանց հեռացրեք փոսից։

Կրիվոշլիկովն ու Պոդտյոլկովը քայլում են դեպի բազմությունը, նրանց առջև մարդիկ ետ-ետ են գնում, ճանապարհ են բաց անում։ Նրանք կանգնում են մոտիկում, բոլոր կողմերից մարդկանցով շրջապատված, հարյուրավոր հայացքներ նրանց են նայում. նրանք տեսնում են, որ կազակները չեն կարողանում կանոնավոր շարք կանգնեցնել մեջքերով դեպի փոսը կանգնեցրած կարմիրգվարդիականներին։ Պոդտյոլկովը լավ է տեսնում, իսկ Կրիվոշլիկովը ձգում է բարակ, շոափրած վիզը, կանգնում ոտների մատների վրա։

Ձախ կողմում վերջինը կանգնած է Բունչուկը։ Նա մի քիչ կորացած է, ծանր է շնչում, հայացքը հառել է գետնին։ Նրա կողքին Լագուտինը թեքվում, շապկի փեշը քաշում է պատռված վարտիքի վրա, երրորդը տամբովցի Իգնատն է, հետևյալը՝ Վասկա Բոլդիրյովը, որ անճանաչելիության չափ փոխվել է, առնվազն մի քսան տարով ծերացել։ Պոդտյոլկովը փորձում է տեսնել հինգերորդին. դժվարությամբ է ճանաչում Կազանսկայա ստանիցայի կազակ Մատվեյ Սակմատովին, որը Կամենսկուց մինչև այստեղ իր հետ ապրել էր բոլոր ձախորդություններն ու բերկրանքները։ Էլի երիտ հոգի մոտենում են փոսին, մեջքով դառնում դրա կողմը։ Պետրո Լիսիկովը վրդովեցուցիչ կերպով ու լկտիաբար ծիծաղում է, մայր է հայհոյում, կեղտոտ բառությամբ սպառնում լուռ ամբոխին։ Գորեցկովը լռում է։ Վերջինին քարշ տալով էին բերում։ Նա ետ էր ընկնում, կախվող ոտներով խազում գետինը, ու հրելով իրեն քարշ տվող կազակներին, ցնցելով արտասվալից դեմքը, աշխատում էր պոկվել, խոպոտ ճչում էր.

— Թողեք, տղերք ջան, թողեք, ի սեր աստծու։ Եղբայրներս, սիրելի եղբայրներ... ախր ի՞նչ եք անում, է՞։ Ես գերմանական պատերազմում չորս խաչ եմ ստացել... Երեխաներ ունեմ... Տեր աստված, ախր ես մեղավոր չեմ, է՛... Օ՛յ, ինչի՞ համար է սա...

Ատամանյան գնդի բարձրահասակ մի կազակ ծնկով խփեց նրա կրծքին, գցեց դեպի փոսը։ Պոդտյոլկովը միայն այստեղ ճանաչեց դիմադրողին և սարսափեց. դա ամենախիզախ կարմիրգվարդիականներից մեկն էր, Միգուլինսկու կազակ, 1910 թվականին երդում տված, գեորգևյան բոլոր չորս խաչերը ստացած, շեկլիկ բեղերով, գեղեցիկ մի երիտասարդ։ Նրան ոտքի կանգնեցրին, բայց նա դարձյալ ընկավ. սողում էր կազակների ոտներին տակ, ուռած շրթունքները հպում նրանց սապոգներին, այն սապոգներին, որոնք խփում էին նրա երեսին, խեղդվող, խոպոտ, զարհուրելի ձայնով ճչում էր.

— Մի՛ սպանեք, խիղճ ունեցեք, է՛... ես երեք երեխա ունեմ... աղջիկ ունեմ... աղաչում եմ, սիրելի եղբայրներ...

Նա գրկեց ատամանցու ծնկները, բայց վերջինս պոկվեց, ետ ցատկեց, թափ առավ ու երկաթած կրունկով խփեց նրա ականջին։ Մյուս ականջից առատորեն ցայտեց արյունը, հոսեց սպիտակ օձիքի տակ։

— Վե՛ր կացրեք դրան...— ցասկոտ գոռաց Սպիրիդոնովը։

Մի կերպ բարձրացրին, ոտքի կանգնեցրին, վաղելով հեռացան։ Հակադիր շարքում կամավորները պատրաստվեցին կրակելու։ Բազմությունը հոգոց հանեց ու քարացավ։

Բունչուկն ուզում էր էլի ու էլի նայել երկնքի գորշ մառախուղին, տխուր երկրին, որի վրա տառապել էր քսանինն տարի։ Բարձրացնելով գլուխը, տասնհինգ քայլ հեռավորությամբ տեսավ կազակների խիտ շարքը. մեկը, որ խոշոր մարմնով էր, կկոցված, կանաչ աչքերով, հովարի տակից սպիտակ, նեղ ճակատին ընկած քյաքուլով,— դեպի առաջ թեքված ու շրթունքները պինդ սեղմած, նշան էր բռնում նրա, Բունչուկի հենց կրծքին։ Դեռ մինչև կրակոցը Բունչուկի ականջին հասավ բարձրաձայն մի ճիչ. նա շուռ տվեց գլուխը. ցահել, պեպենոտ մի կին բազմության միջից դուրս պրծնելով, վազում է դեպի խուտորը, մի ձեռքով կրծքին է սեղմում երեխային, մյուսով ծածկում նրա աչքերը։

Անկանոն համազարկից հետո, երբ փոսի մոտ կանգնած ութ հոգին ընկան, կրակողները վազ տվին դեպի փոսը։

Տեսնելով, որ իր գնդակահարած կարմիրգվարդիականը թպրտում, ատամներով կրծոտում է ուսը, Միտկա Կորշունովը մի անգամ էլ կրակեց նրա վրա, շշնջաց Անդրեյ Կաշուլինի ականջին.

— Տե՛ս այդ սատանին, է՛, ուսը կծեց, արյունլվիկ արեց ու գիլի պես սուսուփուս մեռավ։

Տասը դատապարտվածներ հրացանակոթերի հարվածների տակ մոտեցան փոսին...

Երկրորդ համազարկից հետո կանայք աղիողորմ լաց ու կոծ բարձրացրին ու ամբոխի միջից դուրս պրծնելով, սայթաքելով, քարշ տալով երեխաներին, փախան։ Կազակները նույնպես սկսեցին ցրվել։ Ոչնչացման ամենանողկալի պատկերը, մեռնողների ճիչերն ու խռխռոցները, գնդակահարման հերթի սպասողների վայնասունը,— այս ամբողջ ցնցող, անսահման զարհուրելի տեսարանը փախցրեց մարդկանց։ Մնացին միայն ճակատայիններները, որոնք շատ անգամ էին մահ տեսել, մնացին նաև ամենագազազած ծերունիները։

Բերում էին ոտաբոբիկ ու մերկ կարմիրգվարդիականների նոր խմբեր, փոխվում էին կամավորները, թնդում համազարկերը, շոր ճայթում առանձին կրակոցները։ Վիրավորվածներին նորից խփում էին ու սպանում։

Պոդտյոլկովը և Կրիվոշլիկովը մոտենում էին հերթի սպասողներին, փորձում էին քաջալերել նրանց, սակայն բառերը չունեին երբեմնի նշանակությունը. այդ պահին ուրիշ մտքեր էին պաշարել այն մարդկանց, որոնք մի բոպեից պիտի զարկվեին ու ընկնեին ինչպես աշնանային թառամած տերևը։

Գրիգորի Մելեխովը անցնելով նոսրացած ամբոխի միջից, քայլեց դեպի խուտոր և դեռմադեմ հանդիպեց Պոդտյոլկովին։ Վերջինս ետ քաշվելով, կկոցեց աչքերը.

— Դու է՞լ ես այստեղ, Մելեխով։

Գրիգորիի այտերը պատեցին կապտավուն գունատությամբ, նա կանգ առավ։

— Այստեղ եմ։ Ինչպես տեսնում ես...

— Տեսնում եմ...— ծուռ ժպտաց Պոդտյոլկովը՝ բռնկված ատելությամբ նայելով նրա սփրթնած դեմքին։— Ի՞նչ է, գընդակահարո՞ւմ ես եղբայրներիդ։ Թա՞րս ես մանում, հը՞... Ա՛յ թե ինչ մարդ ես դու...— Պոդտյոլկովը մոտեցավ Գրիգորիին, շշնջաց.— Մերոնց էլ ես ծառայում, ձերոնց էլ, հա՞։ Ո՞վ ավելի շատ կտա։ Թյո՛ւ...

Գրիգորին բռնեց նրա թևքից, շնչասպառ հարցրեց.

— Մի՞տդ է Գլուբոկայայի կռիվը։ Մի՞տդ է, թե ոնց գնդակահարեցին սպաներին... Քո հրամանո՛վ գնդակահարեցին, չէ՞։ Հիմի հերթը քոնն է։ Է՛հ, դարդ մի անի։ Մենակ դու չես, որ այդ օրին ես հասել։ Քո գործը պրծել ես, Մոսկվայի ժողկոմսովետի նախագահ։ Դու, մունդռիկ, կազակներին ծախեցիր ջհուդներին։ Հասկանալի՞ է։ Էլի՞ ասեմ։

Խրիստոնյան գրկեց տարավ կատաղած Գրիգորիին։

— Գնանք, ուրեմս, մեր ձիերի մոտ։ Ե՛կ, ես ու դու այստեղ անելիք չունենք։ Տե՛ր աստված, ի՞նչ է կատարվում մարդկանց հետ...

Նրանք գնացին, հետո լսելով Պոդտյոլկովի ձայնը, կանգ

առան։ Ճակատայիններով ու ծերունիներով շրջապատված, Պոդտյոլկովը բարձր, ցասկոտ բղավում էր.

— Անգետ մարդիկ եք դուք... կո՛ւյր եք։ Կո՛ւյր եք դուք։ Սպաները ձեզ խաբեցին, ստիպեցին սպանել ձեր հարազատ եղբայրներին։ Դուք կարծում եք, որ եթե մեզ կոտորեք, դրանով բանը կվերջանա՞։ Ո՛չ։ Այսօր ուժը ձեր կողմն է, իսկ վաղը ձե՛զ պիտի գնդակահարեն։ Ամբողջ Ռուսաստանում սովետական իշխանություն կհաստատվի։ Ա՛յ, կհիշեք իմ խոսքերը։ Զո՛ւր եք թափում ուրիշի արյունը։ Հիմար եք։

— Քեզ նմանների հետ էլ մենք այսպես կվարվենք,— բազմության միջից դուրս թռավ մի ծերունի։

— Բոլորին գնդակահարել չեք կարող, ա՛յ պապի,— ժպտաց Պոդտյոլկովը։— Ամբողջ Ռուսաստանը կախաղան չես բարձրացնի։ Գլուխդ լա՛վ պահիր, հա՛-ա։ Հետո խելքի կգաս, բայց ուշ կլինի։

— Դու մեզ մի՛ սպառնա։

— Ես չեմ սպառնում։ Ձեզ ճանապարհ եմ ցույց տալիս։

— Դու ինքդ ես կույր, Պոդտյոլկով։ Մոսկվան փակել է քո աչքերը։

Գրիգորին մինչև վերջ չլսեց խոսակցությունը, գնաց, համարյա վազեց այն բակը, որտեղ կապված էր նրա ձին։ Գրիգորին ու Խրիստոնյան, առանց ետ նայելու, քառատրոփ դուրս թռան խուտորից։

Իսկ Պոնամարյովում դեռ ճայթում էին կրակոցները, Վեշենսկու, Կարգինի, Բոկովսկու, Կրասնոկուտսկու, Միլյուտինսկու կազակները գնդակահարում էին Կազանսկու, Միգուլինսկու, Ռազդորսկու, Կումշատսկու, Բակլանովսկու կազակներին...

Փոսը ծայրեծայր լցրին։ Ծածկեցին հողով։ Կոխոտեցին ոտներով։ Երկու սպա սև դիմակներ կապած, Պոդտյոլկովին ու Կրիվոշլիկովին տարան դեպի կախաղանը։

Պոդտյոլկովը արիաբար, գլուխը հպարտ բարձրացրած, ելավ տաբուրետի վրա, թուխ, հաստ պարանոցի վրա արձակեց շապկի կոճակը ու ոչ մի մկանը չդողացնելով, սապնած օղակն անցկացրեց վիզը։ Կրիվոշլիկովին մոտ բերին, սպաներից մեկը նրան օգնեց տաբուրետի վրա բարձրանալու, հենց նա էլ օղակը գցեց Կրիվոշլիկովի վիզը։

— Թույլ տվեք մեռնելուց առաջ վերջին խոսքս ասեմ,— խնդրեց Պոդտյոլկովը։

— Ասա։

— Խնդրում ենք,— բղավեցին ճակատայինները։

Պոդտյոլկովը ձեռքը տարավ դեպի նոսրացած ամբոխը.

— Նայեցեք, թե որքան քիչ մարդ է մնացել մեր մահը տեսնելու։ Խիղճը տանջում է։ Աշխատավոր ժողովրդի համար, նրա շահերի համար մենք կռվում էինք գեներալական ոհմակի դեմ, չխնայելով մեր կյանքը, ու հիմի մեռնում ենք ձեր ձեռքից։ Բայց մենք չենք անիծում... Դուք չարաչար խաբված եք։ Կհաստատվի ռևոլյուցիոն իշխանությունը, և կհասկանաք, թե ում կողմն է ճշմարտությունը։ Խաղաղ Դոնի լավագույն զավակներին դուք թաղեցիք այս փոսում...

Հետզհետե սաստկացող դժժոց բարձրացավ, Պոդտյոլկովի խոսքերը չէին լսվում։ Դրանից օգտվելով, սպաներից մեկը ճարպիկ հարվածով տաբուրետը դեն գցեց Պոդտյոլկովի ոտների տակից։ Պոդտյոլկովի ծանր, ահագին մարմինը ճոճվելով կախ ընկավ ու ոտները հասան գետնին։ Կոկորդը սեղմող օղակը խեղդում էր նրան, ստիպում վեր բարձրանալ։ Մի քիչ բարձրանալով, ոտների մատները հենելով թաց, պընդացած գետնին, օդ կուլ տվեց, ու ակնակապիճներից դուրս ընկած աչքերը ուղղելով քարացած ամբոխին, ցածրաձայն ասաց.

— Կախելը դեռ չեն սովորել... Եթե կախողը ես լինեի, քո ոտները, Սպիրիդոնով, գետին չէին հասնի...

Նրա բերանից լորձունք թափվեց։ Դիմակներ կապած սպաները ու կազակները իրար անցան, ուժասպառ ու ծանր մարմինը դժվարությամբ բարձրացրին տաբուրետի վրա։

Կրիվոշլիկովին թույլ չտվին վերջացնել իր խոսքը. տաբուրետը թռավ նրա ոտների տակից, զարկվեց ինչ-որ մեկի շպրտած բահին։ Բարակ, մկանեղ Կրիվոշլիկովը երկար ճոճվում էր, մերթ կծկվում, այնպես, որ ծալված ծնկները դիպչում էին կզակին, մերթ նորից ձգվում ջղաձգաբար... Նա դեռ ցնցվում էր, դեռ շարժում սև, մի կողմ ընկած լեզուն, երբ Պոդտյոլկովի ոտների տակից երկրորդ անգամ դեն գցեցին տաբուրետը։ Նրա մարմինը կրկին ծանր կախվեց ներքև, ուսի վրա կտրվեց կաշվե բաճկոնի կարը, ու դար-

ձյալ մատների ծայրերը հասան գետնին։ Կազակների բազմությունը լուռ հոգոց հանեց։ Ոմանք խաչակնքելով, սկսեցին ցրվել։ Այնքան մեծ էր վերահաս շփոթվածությունը, որ մի րոպե բոլորը կանգնել էին ասես կախարդված, վախենալով էին նայում Պոդտյոլկովի թջացած դեմքին։

Բայց նա լուռ էր, օդակը սեղմել էր կոկորդը։ Նա միայն աչքերն էր շարժում, որոնցից արցունքի առվակներ էին հոսում, ու ծամռելով բերանը, փորձելով թեթևացնել տանջանքները, ծանր ու զարհուրելի ճիգերով վերև էր ձգվում։

Մեկը գլխի ընկավ. սկսեց բահով փորել նրա ոտնատակի հողը։ Հապճեպորեն դեն շպրտեց հողակտորները, ու հետզհետե ավելի ուղիղ գծով էր կախվում Պոդտյոլկովի մարմինը, ավելի ու ավելի էր երկարում պարանոցը ու մի փոքր գանգրահեր գլուխը ընկնում էր մեջքին։ Պարանը հազիվ էր պահում վեց փութ ծանրությունը. շեղագերանի տակ ճքճքալով, կամացուկ ճոճվում էր, ու նրա ռիթմիկ շարժմանը հնազանդ, ճոճվում էր և Պոդտյոլկովը՝ շուռ գալով բոլոր կողմները, կարծես մարդասպաններին ցույց տալով իր սփրթնած դեմքը և լորձունքի շիթերով ողողված կուրծքը։

XXXI

Միշկա Կոշևոյը և Վալետը միայն երկրորդ գիշերը դուրս եկան Կարգինսկուց։ Մշուշը փռվում էր տափաստանի վրա, քուլա-քուլա իջնում ձորակները, կոթնում հեղեղատներին, լիզում զառիթափերի լանջերը։ Նրանով խավակալած, պարզ ուրվագծվում էին կուրգանները։ Մատղաշ խոտաբույսերի մեջ ճռվողում էին լորերը։

Երկնակամարում սահում էր լուսինը, կարծես շուշանի հասուն ծաղիկ լիներ բոշխով ու ձղկիով ծածկված լճակում։

Գնում էին մինչև լուսաբաց։ Արդեն դալկացել էին համաստեղությունները։ Ցող էր իջել։ Մոտենում էր Նիժնի-Յաբլոնովսկի խուտորը։ Եվ ահա հենց այստեղ, խուտորից երեք վերստ հեռավորությամբ, բլուրի կատարին կազակները հասան նրանց։ Վեց ձիավոր գնում էին նրանց հետքով։ Միշկան ու Վալետը փորձեցին մի կողմ փախչել, բայց խոտաբույսերը ցածր էին, լուսինը պայծառ էր... Բռնվեցին... Նրանց ետ

քշեցին։ Հարյուր սաժեն գնում էին լուռ։ Հետո կրակոց... Վալետը երերաքայլ գնաց կողքի ընկած, կողքի ընկած՝ ինչպես իր ստվերից վախեցած ձի։ Ու ոչ թե ընկավ, այլ մի տեսակ անհարմար պառկեց՝ դեմքը թաղելով բարձվենյակի կապտավուն թփի մեջ։

Միշկան քայլում էր հինգ րոպեի չափ, անզգայացած, ականջները ղժժում էին, ոտները թուլանում։ Հետո հարցրեց.

— Ինչո՞ւ չեք սպանում, շան որդիք։ Ինչո՞ւ եք չարչարում։

— Գնա, գնա՛։ Սուս արա,— սիրալիր ասաց կազակներից մեկը,— մուժիկին սպանեցինք, իսկ քեզ խղճացինք։ Դու եղե՞լ ես տասներկուերորդ գնդում, գերմանական կռվում։

— Եղել եմ։

— Էլի կծառայես տասներկուերորդում... Ջահել տղա ես։ Մի քիչ մոլորվել ես, ամա դա մեծ փորձանք չի։ Կրուժենք։

Երեք օրից հետո Կարգինսկայա ստանիցայում ռազմադաշտային դատարանը բուժեց Միշկային։ Այն օրերում դատարանը պատժի երկու միջոց էր գործադրում. գնդակահարություն և ծեծ։ Գնդակահարության դատապարտվածներին գիշերով քշում-տանում էին ստանիցայից դուրս, Ավազոտ կուրգանից դենը, իսկ այն մարդկանց, որոնց ուղղվելու համար հույս ունեին, հրապարակում, բնակչության ներկայությամբ ծեծի էին երթարկում։

Կիրակի օրվա առավոտյան, հենց որ հրապարակի մեջտեղում մի նստարան դրին, ժողովուրդը սկսեց հավաքվել։ Ամբողջ հրապարակը լցվեց, մարդիկ տեղավորվեցին պատերի տակ դրված նստարանների, մարագների մոտ դարսված տախտակների, տների ու խանութների կտուրների վրա։ Առաջինը թակեցին Ալեքսանդրովին՝ Գրաչևսկու տերտերի տղային։ Եռանդոտ բոլշևիկ էր, ըստ գործի էության գնդակահարվելու էր, բայց հայրը լավ, բոլորի կողմից հարգված տերտեր էր,— դատարանում որոշեցին ճիպոտի մի երկու տասնյակ հարված հասցնել տերտերի տղային։ Ալեքսանդրովի շալվարը հանեցին, մերկ հետույքով պառկեցրին նստարանի վրա, մի կազակ նստեց նրա ոտներին (ձեռները կապել էին նստարանի տակ), երկուսը ուռենու ճիպոտներով կանգնեցրին նրա կողքին։ Զարկեցին։ Ալեքսանդրովը վ՛ր

կացավ, ինքն իրեն թափ տվեց, ու վերցնելով շալվարը, գլուխ տվեց դեպի բոլոր կողմերը։ Մարդը շատ ուրախ էր, որ չգնդակահարեցին։

— Շնորհակալ եմ, պարոնայք ծերունիներ։

— Անուշ լինի,— պատասխանեց մեկը։

Եվ այնպիսի միահամուռ քրքիջ բարձրացավ հրապարակում, որ նույնիսկ կալանավորներն էլ ժպտացին. նրանք նստած էին մոտիկ տեղում, մարագում։

Դատավճռի համաձայն Միշկային էլ ճիպոտի քսան հարված տվին։ Բայց ամոթանքը ցավից ավելի շատ էր տանջում։ Ամբողջ ստանիցան, մեծից մինչև փոքրը, դիտում էր։ Միշկան վերցրեց շալվարը և համարյա թե լալով ասաց իրեն ձաղկող կազակին։

— Սա անկարգություն է։

— Ինչո՞ւ։

— Մեղավորը գլուխս է, ամա ո... է պատասխան տալի։ Ամբողջ կյանքումս խայտառակվեցի։

— Ոչինչ, ամոթանքը ծուխ չի, աչքդ չի քոռացնի,— մխիթարեց կազակը, ու ցանկանալով պատժվածի համար հաճելի մի բան անել, ասաց.— Ա՛մա թե պինդ ես, այ տղա. մի երկու անգամ ուժով խփեցի քեզ, ուզում էի բոռաս... տեսա՝ չէ, քեզանից ձեն-ծպտուն դուրս չի գալի։ Անցած օրը մեկին ձաղկեցինք, վայնասուն հանեց։ Ուրեմն թույլ էր մարդը։

Դատավճռի համաձայն, մյուս օրը Միշկային ուղարկեցին ռազմաճակատ։

Երկու օրից հետո թաղեցին Վալետին. Յաբլոնովսկի երկու կազակ, որոնց ուղարկել էր այդ խուտորի ատամանը, մի փոքրիկ գերեզման փորեցին, ոտները փոսի մեջ կախած՝ երկար նստեցին, ծխեցին։

— Այս հանդում հողը պինդ է, հա՛-ա։

— Ուղղակի երկաթ է։ Ախր երբեք չի հերկվել, վաղ ժամանակներից պնդացել է։

— Հըմ... այս տղան լավ հողի մեջ կպառկի, տեղը բարձր է... չոր է, արևոտ, քամի է փչում... Շուտ չի փտի։

Նրանք նայեցին խոտին սեղմված Վալետին, վեր կացան։

— Ոտնամանները հանե՞նք։

— Բա ո՛նց, դրա կոշիկները հլա դեռ լավն են։

Գերեզման դրին քրիստոնեաբար,— գլուխը դեպի արևմուտք. ծածկեցին պինդ սևահողով։

— Կոխկրտե՞նք,— հարցրեց ավելի ջահել կազակը, երբ գերեզմանը հավասարվել էր եզրերին։

— Հարկավոր չէ, թող այդպես մնա,— հոգոց հանեց մյուսը,— երբ հրեշտակները փչեն ահեղ դատաստանի փողը, նա հեշտությամբ ոտքի կելնի...

Կես ամսից հետո փոքրիկ թումբը ծածկվեց եզան լեզվով ու մատղաշ օշինդրով, վրան հասկավորվեց խոպուկը, կողքից փարթամ, դեղին ծաղկով ծաղկեց կանճրակը, փոքրիկ ծոպերը կախեց երեքնուկը, տարածվեց քոնդարի, գայլակաթնուկի և մակարդախոտի բույրը։ Շուտով եկավ մի ծերունի, գերեզմանի գլխակողմում մի փոքրիկ փոս փորեց, նոր ոանդած կաղնու հիմքի վրա մատուռ շինեց։ Դրա եռանկյուն ծածկի տակ, պլպլում էր աստվածամոր տխուր դեմքը, ներքևում, քիվի վրա սևին էր տալիս սլավոնական փրշոտ զարդագիրը.

Խռովության ու ցոփության օրերում
Մի՛ պարսավեք ձեր եղբորը, եղբայրնե՛ր։

Ծերունին գնաց, իսկ տափաստանում մատուռը մնաց, իր մշտապես տխուր տեսքով թախիծ պատճառելու անցորդներին։

Ու մի բան էլ. մայիսին մատուռի մոտ ծեծկվեցին արոտները, ճմռթեցին կապույտ բարձվենյակը, տրորեցին հասունացող սիզախոտի կանաչ փրերը. ծեծկվեցին էգի համար, ապրելու, սիրելու, բազմանալու համար։ Քիչ հետո էլ հենց այնտեղ, մատուռի կողքին, գուղձի տակ, օշինդրի փրշոտ ծածկոցի տակ էգ արոսը ինն հատ մուգ-կապտավուն, բծավոր ձու դրեց ու նստեց դրանց վրա, սկսեց դրանք տաքացնել իր մարմնի ջերմությամբ, պաշտպանել պսպղուն փետուրներ արձակած իր թևերով։

(Երկրորդ գրքի վերջը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Չորրորդ մաս 5

Հինգերորդ մաս 219

Միխայիլ Շոլոխով Խաղաղ Դոն, գիրք երկրորդ Шолохов Михаил Александрович. Тихий Дон. Книга вторая (на армянском языке), издательство „Советакан грох", Теряна, 91. Ереван, 1977. *Խմբագիր՝ Է. Բ. Թոռունյան. Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան, տեխ. խմբագիր՝ Կ. Դ. Սարգսյան, վերատեսող սրբագրիչ՝ Ն. Ն. Մինասյան։ Հանձնված է շարվածքի 2/XII 1976 թ., տպագրված է տպագրության՝ 17/III 1977 թ.։ Թուղթ № 1, 84 × 108 1/32, տպագր. 14,25 մամ. =23,94 պայմ. մամ., հրատ. 21,1 մամ., Գատվեր 1956, Տպաքանակ 50000։ Գինը 2 ռ. 06 կ.։ «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։*

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեզապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван—9, ул. Теряна, 91.